ԸՆԹԵՐՑԱՍԻՒՂ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ՅՃԱՐՈՒՆՔ ՍՒՐ ԳՐՈՑ


Բայաքննեալ երկասիրութիւն ոմն Ստեփաննոսի
Սարգսեան Ջգնոյ՝ Ընթերակոսի, և
Ընդհանրական Ջբայի Մխիթարեանց։

Եւ տպագրեալ յառաջնորդութենէ Նորա՝ Ինքնայօժար ծախիւք
աշխի և բարեպաշտ Կարնեցի Գէորգ Ազգայի Յակոբեան։

ՀԱՏՈՐ Ը.

ՏՈՒՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԱՅ.

A
1189



ՎԻՆՆԻՏԻՒ

ՏՊԱՒԱՆՍ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԱՅ

1819.

ՀԱՅԿԱԶՆ ԱԶԳԱՅԻՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ՀԱՅԿԱԶՆ ԱԶԳԱՅԻՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ընդ սկիզբն արարչական՝ ոտոգիչ ամենայն երեսաց երկրի, և գետ եդեմեան քառատաջեայ՝ գերօրինակ խորհրդով ճանաչի Աճաչունչ սքի Գիր հին և նոր Կտակարանաց, զովացուցիչ ոգւոց պատաքելոց յածգիտութեն և յածպաշտութեն, ածեցուցիչ յամենայն ճշմարիտ հաւատով և բարեաց գործովք, դալարացուցիչ և զուարթացուցիչ մտաց թմբրելոց, և կամաց լքելոց. ծաղկեցուցիչ և պտղաբերիչ բանաւոր անկոց՝ երկնաբերձ խորհրդովք և ճշահաճոյ առաքինութեքք: Եւ զի այս այսպէս, վասն որոյ չիք և չիք՝ի կենցաղումս գեղեցիկ և կարևոր գիտութեն՝ որպէս զճշդեղէն տաւից խելամտութեն՝ առաջնորդութեք հոգւոյն ճոյ, որ միայն է առաջին հեղինակ նոցին:

Եւ այս ոչ միայն ըստ վարդապետական պատգամաց, այլև նոյնպէս ըստ պատմական աւանդից. * Զի ամենայն գիրք ածողունչք և օգտակարք՝ ի վարդապետութեն են և ի յանդիմանութեն և յուղղութեն և ի խրատ արդարութեն. զի կատարեալ լիցի մարդն ոյ՝ յամենայն գործս բարութեն հատուցեալ։։ Բ. Տիմ. Գ. 16: և՝ * Որ ինչ գրեցաւն, ի մեր վարդապետութեն գրեցաւ. զի համբերութեք և մխիթարութեք գրոց զյոյսն ընկալցուք։։ Հռոմ. ժե. 4:

Արդ քանզի զվարդապետականն յամենայն գիրս հոգևորս սփռեալ և ըստսաբանեալ գտանեն՝ որք կամիցին, և գարձեալ յառանձին մեկնութեն մերս մերոյ յածտուր մատենից՝ եթէ՝ի լոյս ընծայեալս, և եթէ՝ի լոյս ընծայելիս աներամբ ըստ ժամանակին յազգի մերում; կամ՝ եղև ինձ զպատմականն ողջոյն՝ի մի վայր բովանդակել մեկնօրէն պարզաբանութեք և հարկաւոր քննութեք՝ յօգուտ հոգեսէր վերծանողաց. և այնչափ առաւել՝ որչափ զի պատմութենք ըստ ինքեան գիւրիմաց ընծային և հեշտալուր մեծի և փոքու, արանց և կանանց, ծերոց և տղայոց, և գիւրագոյնս գանձեալ յամէն խորհրդոց՝ յորդորաժիտ առնեն և յունկնդրութեն վարդապետականաց: Եւ որչափ ճշմարտեալ է այս՝ի նմանէ, նոյնչափ և ստոյգ գտանի (որ այն իսկ է նպատակ գործոյս՝ առաւել՝ի կարգի Հին Կտակարանին), թէ պատմա-

կանացն ասանդուքի թէպէտև ի վերին երեսս կարծի յայտնապատում ամենայնի՝ որ ընթեռնուցու զսկզբնապէրն, իբր անկասկած մեկնաբանութիւնք, բայց որք ի ժանգամ խորագոյնս նշմարեն՝ մանաւանդ ըստ ժամանակագրական զննութեանց՝ համեմատութիւն այլևայլ թարգմանաց և մեկնչաց, ոչ սակաւ գտանեն տեղիս՝ որք մեծապէս ոչ ունկնդին հետաքննութիւնք և մեկնութիւնք. որ պէս յայտ է և ի բազմավաստակ քրտանց երևելի երևելի վարդապետաց կաթողիկէ եկեղեցւոյ վասն սոցին երից յատկացն և ի յետին ժամանակս:

Այլ մեք առ չմնալոյ զանձինս և զընթերցողս մեր ի բազմապատիկ յոյզս դժուարինս, յոյս մեր գործ ի ժամանակի ծեքրութիւնք աշխատասիրեալ ի հոգևոր մխիթարութիւն մեր և այլոց՝ կալաք առանձին օրինակաւ զշաւիղ Կեսարոսի Կապինեայ ի յետեան կարգէ ածաբան վարդապետի. որ ընդ ամս յոլով մատիկր եղև աշխատասիրաբար ի մանրախոյզ քննութիւնք ածոյին գրոցն: ի պատմականս ուրեք ուրեք՝ երբ նա հարևանցի անցանէ, յաւելուք ինչ ինչ յատկաւել պարզաբանութիւնք՝ հարցաքննեալ զմեկնիչս. և ուրեք երբեք յատկաբեցաք, որ մեզ անկարևոր թուէին, և մեզ բուռն դիտաւորութիւնք ոչ յանկատուր: Բայց ի մասին ժամանակագրութիւնք անխոտոր զնորայն կալաք հաշիւ յամենայնի, տեսեալ զանհնարին անհամաձայնութիւնք արդեաց. մինչև յայնչափ բազմութիւնք միջև հազիւ երկուց կամ երից միաբանիլ ընդ միմեանս. բայց և նոքա ոչ յամենայնի: Արմատ այսչափ անհամաձայնութիւնք նոցա է անմիաբանութիւնն արտաքին մատենագրաց, որոց առքա զհետ երթան՝ ոմանք այսմ, և ոմանք այնմ. և իբրաքանչիւր զիւր մատենագիրն իբր անվրէպ դատեալ՝ գուն գործեն զածոյին գիրն ընդ իւրեանց մատենագրաց միաբանել:

Զայս գիտեալով, մեք ընդ կալնուսն ի բաց թողուաք յայժմուս զարտաքին մատենագիրս, ի միայն անխախտելի հինին ածոյին գրոյն ամրացեալ և հաստատեալ: Եւ զի չընթացս նորին ածաշունչ մատենի չիք կամ երևելի ընդ իմաստս բանից՝ մանաւանդ պատմականաց՝ առ որ և է թարգմանիչս, որպէս կայ կամ երևի ընդ ժամանակագրութիւնն՝ մանաւանդ մինչև ցաբրահամ, ըստ այլևայլ ընթերցուածոյ եբրայեցւոց, սամարացւոց, և եօթանասնից, խորհուրդ ի մեկ եդաք առ դիւրութիւն վերծանողաց՝ միանգամ ևս ի մուտս գործոյս նշանակել զտարբերութիւնս դիտից. կամ չընթացս պահել զիաւրինակ հաշիւ եբրայական, որ և հոչակ ժամանակագրաց. և զայն՝ որպէս ասացաք, ըստ հետոց նորին

նախատացեալ հելինական, յորմէ ոչ շատ տարբերին պետաւեան, կամ ովսերեան դրութինք երևելինք, թէպէտև աննմանք միմեանց։

Յոյակ թամանակագրութիւն Աքայական գրոց
ըստ այնմայլ օրինակաց։

Յարութեան աշխարհի.	Եբր. Սամար. Եօթանասն.
Ադամ 130, կամ 230 ամաց՝ ծնանի զսէթ.	130. 130. 230.
Սէթ 105, կամ 205 ամաց ծնանի զԷնոս.	105. 105. 205.
Էնոս 90, կամ 190 ամաց ծնանի զկայնան.	90. 90. 190.
Կայնան 70, կամ 170 ամաց ծնանի զմաղաղայէլ.	70. 70. 170.
Մաղաղայէլ 65, կամ 165 ամաց ծնանի զյարեդ.	65. 65. 165.
Յարեդ 162 ամաց ծնանի զԷնոք.	162. 62. 162.
Էնոք 65, կամ 165 ամաց ծնանի զմաթուսաղա.	65. 65. 165.
Մաթուսաղա 187, կամ 167, կամ 67, ամաց ծնանի զղամէք.	187. 67. 167, կամ 187.
Ղամէք 182, կամ 188, կամ 53 ամաց ծնանի զՆոյ.	182. 53. 188.
Նոյ 500 ամաց ծնաւ հետզհետէ զսէմ, զքամ, և զյաբեթ.	500. 500. 500.
Ի 600. ամի նոյի եղև ջրհեղեղ.	100. 100. 100.
Նոյ և որք ընդ նմա՝ մնացին ի տապանի տարի մի, և աւուրս տասն.	1. 1. 1.
	1657. 1308. 2243, կամ 2263.

Յետ Ջրհեղեղին.

Յերկրորդ ամի զկնի ջրհեղեղին և հարիւրամեայ ծնանի զարփաքսատ.	2. 2. 2.

Աբրահամ 35, կամ 135 ամաց ծնա-			
նի զաղա. (կամ զկայենան երկ-	35.	135.	135.
րորդ, որ 130 ամաց ծնանի			
զսաղա.)			(130).
Սաղա 30, կամ 130 ամաց ծնանի			
զեբեր.	30.	130.	130.
Եբեր 34, կամ 134 ամաց ծնանի			
զփաղէկ.	34.	134.	134.
Փաղէկ 30, կամ 130 ամաց ծնանի			
զրւագաւ.	30.	130.	130.
Ռագաւ 32, կամ 132 ամաց ծնանի			
զսերուք.	32.	132.	132.
Սերուք 30, կամ 130 ամաց ծնանի			
զնաքովր.	30.	130.	130.
Նաքովր 29, կամ 79 ամաց ծնանի			
զթարա.	29.	79.	79.
Թարա 70. ամաց ծնանի զաբրամ.	70.	70.	70.
Գումար ամաց՝ ի ջրհեղեղէ.	292.	942.	942. կամ 1072.
Գումար ամաց յարարչութէ			
աշխարհի. . . .	1657.	1308.	2243. կամ 2263.
Գումար բոլորին.	1949.	2250.	3185. կամ 3335.

Յայսմ հետէ միօրինակ ընթանան ամենայն հաշիւք. այլ թէ կայցէ դոյզն ինչ խտիր՝ ի գիրս դասաւորաց և թագաւորաց՝ յիւրում տեղւոջ տացուք զկարևոր տեղեկութէն:

՝ի ծննդենէ աբրահամու մինչև ցմպանել որդւոյն
իսրայէլի չերիէր աւետաց:

Աբրահամ հարիւրամեան ծնանի զիսահակ.	100.
Իսահակ վաթսնամեան ծնանի զյակոբ.	60.
Յակոբ մնանէ յեգիպտոս ամաց հարիւր և երեսնից.	130.
Բնակութէն որդւոց իսրայէլի յեգիպտոս սկսեալ՝ ի յովսէ-	
փայ եղև ը ամս ջրեքհարիւր և երեսուն: Ելից. ԺԲ. 40:	
և գաղատ. Ե. 17: Այլ սկսեալ՝ ի մահց յակոբայ հանդ	
դերձ համօրէն տամբ նորա եղև ընդ	
ամս ջրեքհարիւր: Ծնն. ԺԵ. 13: Գործ. Է. 6:	400.

Եւթ որդւոց Իսրայէլի յեգիպտոսէ , մինչ ցմտանել նոցա
յերկիրն աւետեաց ձգեցաւ ընդ ամս քառասուն։ 40։

730։

Ընդ նախընթացս գումարի։ 1949։ 2250։ 3185։ կամ 3335։

Ամին ամք։ 2679։ 2980։ 3915։ կամ 4065։

Յեւթ որդւոց Իսրայէլի յեգիպտոսէ մինչև զքինուորիցն
պաճարին սողոմոնի։

* Եւ եղև յամին չորեքհարիւրորդի և քառասներորդի , (ըստ
եօթան։ կամ ըստ եբր։ չորեքհարիւրորդի և ուրթաներորդի) ելից
նէլոյ որդւոց Իսրայէլի յեգիպտոսէ յամին չորրորդի յամսեանն
երկրորդի թագաւորելոյ արքայի սողոմոնի ՚ի վերայ Իսրայէլի
չինէր զտունն տեառն ‖։ գ։ թագ։ ձ։ 1։ 2։ 480։ կամ 440։

Ընդ նախընթացիւ։ 2679։ 2980։ 3915։ կամ 4065։

Ամին ամք։ 3159։ 3460։ 4395։ կամ 4545։

Ի զքինուորիցն պաճարին սողոմոնի մինչև ՚ի գերութիւնն
Յեքոնիայ կամ Յովակիմայ։

Սողոմոն թագաւորեաց ամս քառասուն։ յորմէ հանեալ
զչորս , որ վաղվ ՚ի նախընթաց հաշիւն , մնայ երեսուն
և վեց։ 36։

Ռոբովամ որդի և յաջորդ նորա թագաւորեաց ամս եօթն
և տասն։ 17։

Աբիա յաջորդ նորա թագաւորեաց ամս երիս։ 3։

Ասա յաջորդ նորա թագաւորեաց ամս քառասուն և մի։ 41։

Յովսափատ յաջորդ նորա թագաւորեաց ամս քսան և հինգ։ 25։

Յովրամ յաջորդ նորա թագաւորեաց ամս ութ։ 8։

Ոքոզիա յաջորդ նորա թագաւորեաց ընդ ամ մի , որ ոչ ար-
կանէ ՚ի թիւ։

Գոթողիա բռնակալեաց զթագաւորութիւնն յուդայ զամս վեց։ 6։

Յովաս յաջորդ նորա թագաւորեաց ամս քառասուն։ 40։

Ամասիա յաջորդ նորա թագաւորեաց ամս քսան և հինն։ 29։

Ազարիա՝ այսպէս կոչեցեալ ՚ի գ։ թագ։ ժե։ 8։ կ նա հինգն

Ղ	
որ ը. Ճնաց. խղ. 1. 3. կոչի Ոզնեաս, յաջորդ ամաւթեայ	
Թագաւորեաց ամն յիսուն և երկու.	52.
Յովաթամ յաջորդ նորա Թագաւորեաց ամն վեցտասան.	16.
Ահաղ յաջորդ նորա Թագաւորեաց նոյնպէս ամն վեց-	
տասան.	16.
Եզեկիա յաջորդ նորա Թագաւորեաց ամն քսան և ինն.	29.
Մանասէ յաջորդ նորա Թագաւորեաց ամն յիսուն և հինգ.	55.
Ամոն յաջորդ նորա Թագաւորեաց ամն երկու.	2.
Յովսիա յաջորդ նորա Թագաւորեաց ամն երեսուն և մի.	31.
Յովաքազ յաջորդ նորա Թագաւորեաց ամիսս երիս և եթ.	
զոր փարաւոն նեքաւով արքայ եգիպտացւոց կապեաց և	
տարաւ յեգիպտոս. և 'ի տեղի նորա կացոյց զեղիակիմ, և	
փոխեաց զանուն նորա յովակիմ: Սա Թագաւորեաց ամն	
մեռաւսան: ը. Ճնաց. ղխ. 5.	11.
Յեքոնիա յաջորդ նորա. զոր յետ ամիս երիս Թագաւորելոյ	
գալաւ զնա Նաբուքոդոնոսոր և տարաւ հանդերձ մարդն և	
բազմութիւն ժողովրդեան 'ի բաբելոն: ը. Ճնաց. ղխ. 9.	
և զկնի.	1.

418.

Ընդ նախընթացեցեալ	3159. 3460. 4395. և 4545.
Լինին ամք.	3577. 3878. 4813. և 4963.

Ասա սկսանի գերութիւնն բաբելոնի, զորմէ խօսեցան մարգարէք: Սոյա Նաբուքոդոնոսոր 'ի սկզբան Թագաւորութեանն իւրոյ եթող՝ զի Թագաւորեցեալ սեդեկիա յերուսաղէմ ամս մեռաւսան. ապա ապան զնա 'ի բաբելոն. ուր դարձեալ նոր դաղթական էած 'ի հրէից: Այլ այս մեռաւսան ամք սեդեկիայ հաշուին յամս գերութեանն:

'Ի գերութենէ ժողովրդեան հրէից 'ի բաբելոն մինչև 'ի տահ
Տէառն մերոյ 'ի գողգոթայ լերինն:

Գերութիւնն հրէից 'ի բաբելոն սկսեալ 'ի յեքոնիայէ երկարեցաւ ըստ ճշմարտին եօթանասուն ըստ մարգարէութեանն երեմիայի. որ յիշատակի յերկրորդ գլխս եզրի, և յայլ տեղիս. * Եւ ծառայեացեն ազգացն այնոցիկ (ըստ այլ Թարգմ. այս ամենայն ազգք) արքային բաբելացւոց զեօթանասուն ամ ||.

Ա յս ազատութեն ի գերութենէ եղև յառաջնում ամի կիւրո-
ս. թ. եղե. ա. ։ ա. և բ. ճնաց. էջ. 22. 23։ Յայսմ ամի
սկսանին եօթնեերորդք յայտնեալք դանիէլի. որ են եօթա-
նասուն եօթնեերորդք ամաց. այսինքն ամք չորեքհարիւր
ինիսուն։ Գիտասցես՝ ասէ ցնա հրեշտակն, և խելամուտ
լիցես. (այս յայտնութեն եղև առ դանիէլ յառաջնում ամի
գարեհի. մինչ առաւ և աւելի քան զնչլանել հրովարտակ
կին կիւրոսի ի շինել զերուսաղէմ.) Գիտասցես և խելա-
մուտ լիցես, յելից հրովարտակին զի շինեացի վերսանին
երուսաղէմ մինչև ի քրս, անցանիցեն եօթնեերորդք եօթն,
և եօթնեերորդք վաթսուն և երկու. այսինքն վաթսուն և ինն
եօթնեակք ամաց. և յետ այս վաթսուն և ինն եօթնեկաց
ամաց, սպանցի օծեալն. և սպանցի ի չորրորդ ամի յետ
այնց եօթնեերորդաց։ Դան". թ. 25. և զինի։ Զայս մար-
գարէութեն հանդերձեալ եմք յիւրում տեղւոջ ընդարձակ
պարզաբանել։ Ա՛ր այժմ շատ է ասել, թէ այս վաթսուն
եօթնեերորդք առնեն 490 ամս. յորոց հանեալ 3. որ է կէս
եօթնեերորդի. մնայ ցմահն քրի 487.

և ը նախասացեալ 70. ամաց. 557.

խակ զայգ ը նախընթաց հաշուի. 3577. 3878. 4813. կիս 4963.

լինի գումարն՝ 4134. 4435. 5370. կիս 5520.

Ուսոյն ըստ այսմ հաշուի, ենթադրեալ թէ վրկիչն մեր է-
կեաց ի վերայ երկրի ամս երեսուն և երիս ամբողջ՝ մտեալ յե-
րեաներորդ չորրորդ, ծնունդ նորա լինի յամի շն 4100. զոր
հասարակօրէն այլք ի ժամանակագրաց հարիւր ամօք պակաս
թուեն. խակ եօթանասունք բազմօք աւելի հաշուեն. որպէս յայտ
է ի նախանշանակեալ ցուցակէ։ Տես և ի քրոնիկոնն եւսեբի.
և ի պատմ. հյ։

Կանոն ի՛ն ևս ուշիւ ինդանալոյ ալՃոյին գիրս ի՛ն նիւրս ժամանակագրուրէ։

Կանոն • ա • Ըն պարտ մաթէմաթիկական Ճշտուրէ ան. նուր գիտելին • այլ հարկ է շատանալ բարոյական ստուգուրէ ; որ խնդրի ի՛ ս ովորական խօսս մարդկան • ըստ որոյ Ճշմարտուրէ ասեմք՝ թէ այս ոք է վաթսուն ամաց, թէպէտ և ամսօք լինչ ա. ւաւել էցէ կամ նուազ։ Սբ գիրն ուր խօսի գաման՝ ովոլութեար ոչ նշանակէ գամիս, կամ գաւուրս։ Ապա չէ մարթ առնել գհա շիւ լինչ այնպէս Ճիշտ, գի անվրէպ մաթէմաթիկական՝ մանա. ւանդ թէ և ոչ ֆիզիկականն՝ Ճշտուրէ գոցի խնդրեալ կէտն։ Ած կարօղ էր, այլ ոչ կամեցաւ տալ մեզ այնպէս մանրամասն հաշիւ • ապա պարտ է շատանալ ծանօթուրէքն, զոր ետ • գուցէ ոչ կամեցաւ տալ զառաւելն նաև վասն այնորիկ, գի նուաճեսցէ զաւելորդ հետաքննուրէն մեր։

Կանն • բ • Ի հաշուելն պարտ է ովոլութեար առնուլ գաման իբրև աւթողջ և լրացեալս։ Վասն գի ամենևին հաւանելի է, և իրօք խակ գոանի ի՛ սբ գիրս, գի ամք լինչ աւուրբք և ամօք առա. ւելուն, այլք նուազին • բայց քոլորն միանգամայն՝ լրացուցանեն գիմեանս, և այնպէս մի գումար ամբողջ ամաց կացուցանեն ; որով և ի՛ յայտ գայ Ճշմարիտ թիւն։ Եւ յորժամ կամ յայլմէ տեղ. ւոջէ բնագրին, և կամ ի բնական տրամաբանուրէէ ունիմք հին հաստատուն ածեցուցանել, կամ նուազեցուցանել զգումար լինչ, կարեմք Ճշմարտուրէքն խմաստասիրել, թէ այն ամք առաւելեալ են, կամ սակաւին չէն լրացեալ։

Կանն • գ • Յայնմանէ որ բացայայտ է, պարտ է առնուլ լոյս առ խմանալ գայն որ մթին է • և ոչ այնուհետև որ մթին է, աղաւաղել գայսոսին։ Ասան չէն գովելի նոքա, որք այլայլեն զյատկ ժամանակաց որք բացայայտ գտանին ի՛ սբ գիրս՝ առ ի՛ գնեա երթալ կանոնի պտղոմեայ, կամ պատմուրէն հերոդոտոսի, կամ քաեռոփոնի, կամ մնացորդ հաստուածոց բերոսոսի կամ կոե. սիայ, և կամ այլոց արտաքին պատմագրաց, յորժամ և նոքա չէն միաբան ընդ միմեանս • և մթին է յոյժ ընտրել թէ զո՞ր ար. ժան լցէ նախապատսել քան զընդհակերն • և անուանք անձանց առ ի՛ նոցանէ ի՛ կիր արկեալք այլազան են յանձանց՝ որ յսբ գիրս • և

գՀաւատքին է գտանել թէ որ անուն մեծ համեմատի, և ևս յանապատ և յանվաւեր յիշատակարանաց մուծանեն Թագաւորս, և Թիւ Թագաւորաց, որք թէ եկեն արդեօք երբեմն յաշխարհն՝ չէ մարթ գիտել, սակս բազմապատիկ յայտնի յայտնի սուտութեց և յոգնաթիւ բացայայտ սխալանաց, որք գտանին՝ ի մատենագրսն յայնոսիկ: Վասն որոյ լաւ է առանց ինչ վտիտ ունելոյ զարտաքին պատմագրաց, զյաւէտ ժամանակագրութենէ սքանչ գրոց հաստատեալ նովին ածոյին գրովք. և ապա՝ թէ կամիցի ոք հաւեմատել զայն ընդ ժամանակագրութենէ արտաքնոց, պարտ է նմա զարտաքինն ուղղել ածոյնովք. (որպէս քաջ գործէ Եւսեբիոս՝ ի ժամանակագրութենէ իւրում). և ոչ բռնաբարել զայս՝ ի ընդդէմ արտաքնոց:

Կանոն. Ը. Ա՛ւ ուղիղ նմանել զքննագիրս՝ որք Թուին հակառակք իրերաց, պարտ է քաջ գիտել թէ զինչ իրաց ծոսին. կամ ինչ կիսոյ ակամին, և ինչ կէտ առարտեն զյաւէտ իւրեանց: Եւ է պարտ գնել չափս անհատանականս և բռնականս, յորժամ մարթ եցէ տալ յարմար և բնական մեկնութիւնս:

Կանոն. Թ. Թիւն ոչ միշտ անկանի՝ ի վերայ վերջին անձին, կամ՝ ի վերայ վերջին իրաց՝ որ յիշատակի յանուանէ. այլ մերթ հաւաքական՝ ի վերայ բոլորին ամենայն անձանց, կամ ամենայն իրաց յատաջագոյն յիշատակելոց. և թէ զինարդ պարտի անկանիլ՝ քաղի յայլ տեղեաց գրոյն:

Կանոն. Ճ. Կարի կարևոր, զի յուշական է յոյժ: Ոչ այն ամենայն որ՝ ի սէ գիրս պատմին յատաջ, յատաջագոյն եղեն. և ոչ ամենայն որք յետոյ պատմին՝ յետոյ եղեն: Սէ գիրն առնէ կանխուն, որպէս առնեն այլ ամենայն պատմիչք. զի ունելով՝ ի ձեռին զկարգ մի պատմութենէ, զայն նախ վճարէ. ապա դառնայ յետս, և առնու՝ ի ձեռին զայլ կարգ պատմութենէ, զոր առ ժամին Թողեալ էր մեկուսի:

Կանոն. Ի. Ջամն նախնի նահապետաց, և որոց յետ նոցա՝ պարտ է առնուլ հաւասար մերոց երկոտասանամեայ արեգակնային ամաց: Վասն զի հաւասարի է, Թէ մովսէս՝ ի դրել զնախնի նահապետաց՝ իմանայր զամն այնպէս, որպէս վարէին առ իւրով ժամանակօք. և ոչ ուրեք ասէ՝ Թէ էին հաստատ քան զայն. և կարի իմն պատրուակական լինէր պատմութենէ նորա, եթէ յասել նոցա Թէ այն նահապետք կեցին ամս ութհարիւր, իննհարիւր և ապառաժ, ամ ասելով իմացեալ էր ամիսս, կամ եղանակս տարւոյ, և կամ այլ ինչ չափ հաստատ քան զայն՝ զոր յայնժամ վարէին երբեմն

եցէք, առ որս գրէր մովսէս: Յայտնի ընթեռնումք յաճախին գլուս, թէ երբայեցիք ի ժամանակս մովսիսի, և յետ նորա թուէին զամս ըստ ընթացից լուսնի. բայց ընդ ժամանակս ժամանակս ի ձեռն գիշերահաւասարից հարթէին զչափն. զի գոլով երբեմն երկայն, և երբեմն համառօտ քան զամս արեգակնայինս, մանաւանդ չըլլանօք հաւասարէին մերոց արեգակնային ամաց: Զաճն սկսանէին նոքա յառաջին ծննդենէ լուսնի՝ որ հուպ էր գիշերահաւասարին աշնայնոյ. ուստի և ունէին զերեքտասանեւորդ նահանջ ամիան. զոր կոչէին Վեպտ. այսինքն երեքտասաներորդ: Եւ այսպէս երկարուածն ամաց նոցա հաւասար էր մերոցն՝ չափելով զամս մեր ի զատկէ ի զատիկ յարուածէ. օրինակ ինն, յընթեռնուլ մեր թէ ադամ եկեաց ամս 930. ունիմք իմանալ այնպէս, որպէս այժմ ասեմք՝ թէ այս ոք եկեաց 930. զատիկս:

Կանոն. ը. Խօսելով զթագաւորաց, յորժամ սը գիրն ասէ թէ այս ոք սկսաւ թագաւորել, երբեմն իմանի թէ սկսաւ թագաւորել առ կենդանուածը հօրն, կի նաև հաւուն՝ ընդ հարը, և ընդ հաւուն: Իսկ յորժամ ասէ, զսկզբան ամն թագաւորեաց, իմանայ ոչ զամս զորս թագաւորեաց ընդ հարը, կի ընդ հաւուն, այլ զամս զոր ինքնին անկախ զնոցանէ թագաւորեաց: Թագաւորել ընդ հարը, էր լոկ անուն և պատիւ արքայական. միանդամայն և ապահովութիւն ի յաջորդութիւն թագաւորութեանն. այլ ոչ իշխանութիւն հանելոյ հրամանս. զի զսյն վարէր հայրն ցորչափ կենդանի էր: Եւ ի մեռանել նորա դադարէր կախումն. և յայնժամ սկսանէր երբեմն թագաւոր ինքնիշխան վարել զտէրական իշխանութիւն: Վասն այսորիկ յասել գրոյն՝ թէ այս ոք զսկզբան ամն թագաւորեաց, իսկ զամաց, յորս ինքնիշխանաբար թագաւորեաց. և այսու գեղեցիկ յարդարի կարգ ժամանակագրութեանն. ապա թէ ոչ՝ բազում անգամ դէպ լինէր թուել զամս միոյ թագաւորի, որ արդէն թուեալ է յամս նախորդի նորա. որով ոչ սակաւ չփոթութիւն լինէր ի ժամանակագրութեանն:


Կանոն. թ. Նշանակելի է և այս, զի է յաճախ: ի ծննդեանէ բանուն բազում անգամ գիրն ընդոստ անցանէ յանմիջական ծնունդենէ ի միջնորդականն, անցանելով ի հաւէն ի թոռն, նա՝ երբեմն և ի թոռնեայն, և ի սորագոյն ևս, առանց յիշելոյ զմիջնեան. և ստէպ որդիս կոչէ լայնաբար զթոռունս և զթոռնեայս, և հարս՝ զհաւս և զնախահաւս: Բայց չէ արժան մեզ առնուլ սա՝ թէ հաստատութիւն ասելոյ, թէ կոչեցեալքն ի սը գիրս՝ որդիք,


ելեն թուռուկք, և կոչեցեալքն հարք՝ ելեն հաւք, եթէ ոչ՝ յոր-
ժամ ունելցիմք հաւաստի հինն։

Կանոն. Ճ. Ըն պարտ երբեք գիմել առ կանոնս յայտսնիկ,
բայց միայն յորժամ այլ բնապէրք, այլ թարգմանուԹինք, և կամ
հինեալկան ինչ պատճառք ստիպելեն գիմել։ Վասն զի պարտ է
զՀբ գիրն թարգմանել և մեկնել ըստ ճառին և ըստ բնական տե-
սուԹե, յորժամ ջունելցիմք ծանր հինն ինչ զայլ մեկնուԹե խընդ-
րել. Թէ և երբեմն ի գործ արկեալ ելե ի գիրն, բայց ոչ այն-
պէս բնական և գիւրիմաց ըստ ճառին։

Եթէ հետամուտ ոք յուսուն ժամանակագրուԹե սբ գրոց՝
ունելցի սերտողաբար ի մեր զկանոնս զայտսնիկ, ինքնին լուծանէ
զբազում գժուարուԹինս, զորոց և ըստ տեղւոյն լելցի ի մեջ
յիշատակուԹե յընԹացս գործոյս։

* اگر مکتوب الیہ کا پتہ معلوم نہ ہو تو لفافہ پر صرف اتنا لکھنا کافی ہے کہ "بمقام ڈاک خانہ" اور اس کے نیچے ضلع، مگر جس ضلع میں ڈاک خانہ واقع ہو اس کا نام لکھنا ضروری نہیں۔





ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԲՆՈՒԹԻՒՆՔ ՍՒՐ ԳՐՈՑ

ԳԻՐՔ ԱՒԱՂԻՆ

ՈՐ Է ԾՆՈՒՆԴՔ

ԳԼ. Ա.

Ա ԷՅՕՔԵՅ ԱՐԱՐԼՈՒԵՔ ԱՂՕԱՓՂԷ ։

Ջոգենուագ հնչէ բարբառ Շնորհալի քեր-
թողին մերոյ ՚ի յայտնութեի աներկբայելի
Հմարտութեան . * Հանդուրժեալ՝ բնութեամբ
բարւոյն , ունել միայն՝ զանձաւ բարին . այլ սո՛տեղ-
ծեալ մարդ՝ յիւր պատկերին , ՚ի վեցերորդն՝ ա-
ռաւօտին ։ Որ այն իսկ է կենդանի նկարագրութի
և սեպհական նպատակ գրոյն ծննդոց , և համա-
րին Ա՛ծաշունչ տառից ։

Ա՛ան զի Որ էնն անեղական՝ անսկիզբն և ան-
կատարած , Ա՛ծ անպատում , համագոյ Երրորդու-
թիւն անբաժանելի , Հայր և Որդի և սո՛ք Հոգի ,
ինքնիշխան ամենատէր , ինքնաբուն երանութիւն ,
անմահ թագաւորութի , այն՝ որ ապհնիալ անկա-
րօտ բնութի է , և անսահման ծով ամենայն բա-
րեաց՝ մի միայն բարի , յիւրմէ ամենառատ բարե-
բարութի հաձեցաւ հաղորդել զլերլումն բարութի

իւրոյ յերկրացս բազմայեղանակ՝ յաղգս ազգս ա-
բարածոց, առհասարակ յանդոյից՝ ի գոյ ածելով
ամենահնար կարողութիւնք և ամենարուեստ իմաս-
տութիւնք իւրով՝ ի փառս մեծավայելչութեան իւրոյ։
Նա զայն՝ յերիս սեռս առիւծս բովանդակելով.
յիմանալիս պարզապէս՝ ի հոգեղէն և յանխիթա-
կան ասեմ գոյացութիւնս անմարմինս, որք հրեշ-
տակք վերածայնին, և են պաշտօնեայք ՚ի և պատ-
գամաւորք նորա առ մարդիկ. և ՚ի զգալիս նիւ-
թեղէնս, որ ՚ի պէտս և ՚ի ծառայութիւն մարդ-
կան. և ՚ի միջասահման երկոցունց՝ ՚ի բանական
կենդանիս, որ են մարդիկ, ըստ հոգւոյ հրեշտա-
կակերպ՝ ՚ի պատկեր և ՚ի նմանութիւն ՚ի, և ըստ
մարմնոյ՝ հողեղէն և զգալի, հրաշակերտ նորաս-
քանչ՝ ձեռագործ ՚ի ձայնեալ գեղեցիկ խորհրդով։

Ի սոցայս առաւել, իմա ՚ի մարդկան սեռի՝
արարչագործութիւն և յաձելութիւն և ՚ի անտեսութիւն
բերի բովանդակ պատմութիւն նախկին ՀՀառի հնգա-
մատեան գրոց Մովսեսի նախամարգարէի, գիր
Բարածոց, կամ Բարածք յորջորջեալ, որ և
գիրք Ննդոց, կամ Ննդք, և կամ Ընելու-
թիւն. յորմէ և մերս սկիզբն առնու քան և տեսու-
թիւն՝ պարզաբանիչ պատմական տեղեաց սքանչ գրոց։

Բդ՝ ամենատէրն, արարիչ ամենայն արարա-
ծոց՝ երևելեաց և աներևութից, այն՝ որ զամե-
նայն կարօղ էր ՚ի մի վայրկեան ժամանակի վՀառ
ըել, կամիլ՝ և առժամայն գոյանալ ամենայն արա-
րածոց, առ ՚ի ուսումն մեր՝ ՚ի գործս մեծամեծս
մի կարի շուտափոյթ լինել, այլ մանս առ մանս
յառաջատութիւնք կատարել, զգործ արարչութեան
աշխարհի ՚ի վեց աւուրս բաժանեաց։

Յառաջնումն աւուր ՚ի սկիզբն գործոց իւրոց՝
արար զերկինս հրեղէն, զոր սքանչ առաքեալն պաւղոս
կոչէ երրորդ երկին, ընդ նմա միանգամայն և
զՀրեշտակս. և զերկիրն, այսինքն զայս մեր Հողա-
գունտ. ընդ նոսին արար և սկիզբն ժամանակի.
և եղև այն օր առաջին։ Այս մեծամասնին գունտ
երկրի եդաւ ՚ի մէջն. և շուրջ զնովաւ ընդարձա-

կատարը զանգուած ջրոյ, որ պատեր զնա բովանդակ. և հոգի այլ չըջէր ՚ի վերայ ջրոյն. այսինքն դարմաներ և տածէր զջուրն՝ կենսական ջերմութեամբ ծննդարար ներգործելով ՚ի նմա. յորմէ յետոյ եղեն ամենայն լողակք և թռչունք։ Այս շուրջ զջրոյն եղ զօդն. և ՚ի վերայ օդոյ զհուր. զոր իբրև ամփոփեաց ՚ի մի կողմն հողագնդոյն, եղև լոյս յայն կողմն. իսկ ՚ի հակառակ կողմն խաւար։ Այսպէս եղ ՚ի ձեռանէ այլ առաջին տիւ և առաջին գիշեր, և եղև օր մի։ Արդեամբ ՚ի նախնի հարց այլազգ իմացան զայն առաջին լոյսն. իբր զի ասացին, թէ յառաջնումն աւուրն զոյգ ընդ երկնի և երկրի՝ արար Ած մարմին ինն լուսաւոր, ըստ օրինակի լուսեղէնն ամպոյն, որ առաջնորդեր իսրայելացւոց յանապատին. յորմէ ապա ՚ի չորրորդումն աւուր կազմեաց զարեգակն, և զլուսին և զաստեղս լուսաւորս երկնից։ Այլ չատք ևս յայս միտս են, թէ յօրն առաջին ՚ի հաստել այլ զերկինս, արար և զարեգակն և զլուսին միանգամայն, տպաւորեալ ՚ի նոսա զանկատար ինչ շարժումն օրական։ Այլ ՚ի չորրորդումն աւուր՝ ընդ օրական կանոնաւոր պարբերութեամբ՝ եա նոցա և զշարժումն ամսական և զտարեկանն, չափել զամիս և զտարիս, և դործել զչորեսին եղանակս տարւոյ. եա և զօրութեամբ և ազդեցութեամբ ներգործել յերկիր, ՚ի մարդիկ, և յանասունս և ՚ի բոյս։ Այս կարծիք ունի իւր հինն զբանն, զոր ասաց Ած ՚ի չորրորդումն աւուր. * Արդեօք լուսաւորք... մինչեւ ՚ի մէջ տունջեան և ՚ի մէջ գիշերոյ, և եղիցին ՚ի նշանս, և ՚ի ժամանակս, և յաւուրս, և ՚ի տարիս։ Եւ եղիցին ՚ի լուսաւորութիւն ՚ի հաստատութենէ երկնից ծագել յերկիր։ այսինքն լուսով իւրեանց ոչ միայն լուսաւորել զտեսանելիս, այլև ներգործել ՚ի նոսա. Ծննդ. ա. 14. 15։

Յերկրորդումն աւուր բաժանեաց Ած զհամատարած ջուրն. զմասն նորա ՚ի վեր ամբարձեալ, և եդեալ ՚ի ներքոյ զհաստատութենէն, առ ՚ի վեր ունել զջուրն վերին. միանգամայն ՚ի վերուստ ան-

տի նպաստել երկրի՝ գործակցելով երկնային լուսաւորաց ազդել զներգործութեիս նոցա ի սուրբինս։ Ամանք վերին ջուրքդ իմանան զանձրևայինս կամ զամպս։ Ցակայն տակաւին մնաց շուրջ գՀոգեառնով ջուր բաղում, որ ծածկէր զնա բովանդակ։

Յերրորդում աւուր հրամայեաւ ՚ի գետնի վիհք և խոռոչք մեծամեծք. յորոց ըստ ումանց՝ կազմեցան և բարձրացան լերինք. և ՚ի վիհս անդ հաւաքեալ ջրոցն, գործեցին զծովս. և յայլ կողմանս երևեցաւ ցամաքն. որ և ՚ի հրամանէն ՚ի՝ առաժամայն զարդարեալ պերձացաւ ազդի ազդի խոտովք, բանջարովք, ծառովք, և ամենատեսակ բուսականօք հանդերձ սերմամբք իւրեանց։ Յայսմ աւուր՝ ըստ նախագրեալ առաջնոյ կարծեաց, հուրն առաջին լուսատուէ երկրի՝ սիրեալ տարածեցաւ ՚ի վերայ օդոյ ծառայել յայլ պէտս, և զի մի մնասցէ աշխարհս ՚ի խաւարի։

՚Ի չորրորդում աւուր՝ ըստ այսմ կարծեաց՝ աբար ՚ած զարեգակն և զլուսին և զաստեղս. կամ ըստ երրորդ կարծեաց՝ ընդ օրական կանոնաւոր շարժման, ետ նոցա և զտարեկան շարժմունս, և զներգործութիս, ոչ միայն ՚ի լուսաւորել և ՚ի մեկնել ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարի. այլև յորոշումն ժամանակաց, ամանոց, տարեաց, և զանազան եղանակաց. և ևս զգէսպէս ազդեցութիս ՚ի սերմինս. որպէս յառաջ ասացաք։

՚Ի հինգերորդում աւուր՝ հրամայեաց ետ ՚ած ջուրց հանել կէտս մեծամեծս, և զոյլ բազմազգի ձկունս, և զթռչունս. և ամենատեսակ թռչունս թևաւորս, որով ջուրքդ և օդ լցան բնակչօք. և օրհնեաց զնոսա ՚ած՝ տուեալ նոցա ծննդական զօրութիւն, աճել և բազմանալ, ձկանց լնուլ զջուրս, և թռչնոց զօդս։

՚Ի վեցերորդ աւուր՝ հրամայեաց ետ ՚ած երկրի հանել շունչ կենդանի. այսինքն զամենայն տեսակս չորքոտանեաց՝ ընտանեաց և վայրենեաց. և զօձս և զամենայն սողունս ցամաքայինս։ Ուսուկ յետոյ

կինի ամենայն արարածոց՝ արար զմարդ. յայտ արարեալ, եթէ նա է գերագոյնն յամենայն երևելի գործս ամենակարողին. իսկ այլ ամենայն արարածք հասանելոք ի ծառայութիւն մարդոյ։ Օ՛ի և առ ՚ած ի կաւոյ երկրի, և ձևացոյց զայն մարմին. որ ըստ բնութեանէ իւրում ունէր լինել մահկանացու և եղծանելի, զոլով ի չորից հակառակ տարերաց բաղկացեալ. բայց ՚ած կարդեաց զնա ի վիճակ գերբնական և անմահական. վասն որոյ և փչեաց ի նա հոգի կենդանի բանական, և ի բնէ անապական և անմահ. որով կեայ, շարժի, գործէ, և խմանայ. և նա է Ա՛դամ, այս է Ա՛արդ առաջին՝ սկզբնահայր մարդկան ազգի։

Ա՛մենայն գործք ՚ոյ բարի էին և կատարեալ, բայց ինչ ի պակաս էր առ լրումն համօրէն երևելի գործոցն ՚ոյ. այսինքն կենաց կցորդ ազամայ, և օգնական նման նմա յաձուխն և ի բազմաւորութիւն մարդկան ի վերայ երկրի։ Ա՛ստ որոյ ետես ՚ած զամենայն չորքոտանիս երկրի, և զամենայն թռչունս երկնից առաջի ազամայ՝ հանդիպս առնել նոցա, և զնունել զբոյս բարուց նոցա, և ըստ այնմ տալ նոցա անուն յայտարար իւրաքանչիւր բնութեանէ։ Ա՛չ կոչեաց ազամ անուանս ամենայն առնասնոց և թռչնոց. և այն անուն ինչ նոցա սեպհական, բայց ազամայ ոչ գտաւ ընկեր՝ նման և համեմատ նմա։

Յայնմ աւուր փոխագրեաց ՚ած զազամ ի դրախան. որ էր պարտէզ փափկութե, ամենատեսակ գեղազեղ անուշահոտ ծաղկօք, և բիւրապտղի ծառովք քաղցր և գեղեցկատեսիլ պտղոց, և զանազան համեղաձաշակ բանջարովք պերճացեալ. զոր յերրորդ աւուր արարչութեանէ անկեաց ՚ած յեդեմ ընդ արևելս, ի յարաշուարճ բնակութե նախատեղծ մարդոյն, յորչափ կացցէ ինասցէ յառաջնում անմեղութե։ Ա՛նդ արկ ՚ած Թմբրութե ի վերայ ազամայ, և եմուտ նա ի քուն խորին, կամ բան ումանց՝ ի յափշտակութե մտաց. և առեալ զնի ի կողից նորա, եղեց ի տեղին ինա կենդանի, բան

ումանց՝ հանդերձ նոր կողեւ, և ձեւացոյց զայն՝ մարմին կնոջ, եդեալ ի նմա բանական հոգի կենդանի: Իբրեւ սթափեցաւ ադամ, և ետես առընթեր ղինքն համանման ինքեան, գիտաց ղի մսեան է ի մարմնոյ և յոսկերաց նորա. զի ի թմբրութենէ կամ ի յափշտակութենէ անդ ծանեաւ զոր ինչ արար ած. և իմացաւ զնմաստ խորհրդոյն. այսինքն զբնական ամուսնութենէ իւր ընդ եւային, վասն որոյ սիրեաց զնա իբրեւ զիւր ամուսին. և ազգեալ յոյ՝ ասաց. * Ոսկորք այր զկայր իւր և զմայր իւր, և երթիցի կնոջ իւրոյ. և եղիցին երկուքեան ի մարմին մի ||. ՅՆՆ. Բ. 24. որով ի դիմաց այ յայտ արար զանանձնատ միաւորութենէ առն և կնոջ. վասն այնր ըիկ և քո՝ այ ասայ զայս բան. Մատթ. ԺԹ. 5:

Այս այսու կատարեցան գործք արարչութենէ այ, ի վեցերորդ աւուր. և հանգեաւ ած յաւուր եօթներորդի. այսինքն դադարեցաւ ի ստեղծանելոյ զայլ նորանոր իրս ի տիեզերական կարգի. զի ա մինչայն ինչ էր կատարեալ ըստ իւրումն նպատակի: Այս օրհնեաց զօրն եօթներորդ. և սրբեաց և կարգեաց զայն օր ի պաշտօն իւր, դադարել ադամայ և սերնդոց նորա ի ծառայական գործոց յաւուր յայնմիկ ըստ իւրումն օրինակի. և պարապիլ յածայլին խոկմանս, ընդ միտ ածելով զբարերարութենէ արարչութեան իւրեանց և համարին աշխարհի՝ ի նմին աւուր լրացելոյ, և օրհնել և փառաբանել զարարիչն:

Ադամ ծանօթացաւ Եւայի հետ։ Եւա յղացաւ եւ ծնաւ զՔայէն։ Եւ յետոյ ծնաւ զեղբայրն նորա զՀաբէլ։ Եղեւ Հաբէլ հովիւ ոչխարաց, եւ Քայէն՝ երկրագործ։

Ամենեցունց ոչ յայտնեցաւ զինքնիշխան տէրութիւն իւր՝ ի վերայ աղամայ եւ եւայի, եւ նոցա իշխանութիւն ընդարձակ՝ ուտելոյ անխտիր յամենայն ծառոց դրախտին, բաց՝ ի միոյն, որ էր ծառն գիտութեան բարւոյ եւ չարի. յորմէ արգիլ ոճծ չուտել ընդ պատժոյ մահապարտութեան։ Իսկ եւայ այն ինչ ձեմ առեալ չքնէր զուարձացեալ՝ ի դրախտի անդ փափկութեան, չոքաւ մերձեցաւ՝ ի ծառն արգելեալ, թերեւս ըստ կանացի հետաքրքրոյ բաւ բուց. ուր խորամանկ բանսարկուն բունեալ՝ ի մարմնի՝ իւր համանման խորամանկ օձին՝ դարանէր նմա. խօսեցաւ ընդ նմա՝ ի բերանոյ օձին մարդկեղէն բարբառով, եթէ ընդէ՞ր չամենայն ծառոց դրախտին պատուիրեաց նոցա ոճծ չուտել։ Արկեալ մի էր հարցումն. արդեօք յամենեցունց, եթէ չո՞ մանց ևեթ. որպէս զի առեալ՝ ի բերանոյ եւայի զորոշումն պատուիրանին, բացցի ինքեան դուրս չարախօսելոյ զնա, և կործանելոց զեւայ. որպէս և եղև իսկ։ Վասն զի եւայ՝ ի տալն պատասխանի՝ ոչ շատացաւ ասել, թէ ոչ չամենայն ծառոց պատուիրեաց չուտել, այլ միայն՝ ի միոյ անտի, (առ որով թերևս կայր չայնժամ,) այլ՝ ի վերայ դէպ և զպատճառ, թէ ասաց ոճծ չուտել՝ ի միոյ անտի, զի մի մեռանիցիմք. որպէս թէ խմանալով, մի գուցէ մեռանիցիմք։ Որով ահա սկսաւ փորձութեն հնոցն. զի երկուանօք խօսի զդատաւկնքոյ մահուան. ուր ոճծ սահմանաբար ասաց, * յորում աւուր ուտիցիք՝ ի նմանէ՝ մահու մեռանիցիք ‖։ Այս միայն սատանայ լսել՝ ի հնոցէն. վասն զոր անդէն դէպ՝ ի

վերայ, մնոտի է երկիւղդ, զի պատուղ ծառոյդ աղնիւ է, քաղցր, և օգտակար ոչ միայն ՚ի մնունդ մարմնոյ, այլև մտաց. զի լսիկ ձայնակամբ՝ քանայ զաչս մտաց ՚ի ծանօթութիւն ամենայն էրաց, որով և լինիք յաճախման ամենագէտ. զոր գիտեալ պարտ է՝ արգել զձեզ չուտել ՚ի ծառոյ անտի: Առեալ եւայի զթիւնաթափ բանս բանսարկուին, թուլացաւ ՚ի խորհուրդս իւր. որով զօրացաւ փորձութիւնն. հայեցաւ ՚ի ծառն՝ ոչ այնուհետև պարզ հայեցիւք, որպէս յառաջն, այլ մտադիր զննութիւք. զմայլեցաւ ընդ գեղ պտղոյն, որով և նեբբին ախորժակին շարժեցաւ ՚ի համեղութիւն նորա. վասն որոյ աւր ՚ի պտղոյն և եկեր նախ ինքն միայն. և առեալ զձաշակ համեղութիւն նորա, ետ և ադամայ. որ կամ՚ի ձաշակել եւայի, եհաս ՚ի վերայ. և կամ հրապուրանօք կոչեցեալ յեւայէ՝ յորդորեցաւ առնուլ զձաշակ քաղցրութիւն արգելեալ պտղոյն. և նա առ չորտեցուցանելոյ զինն, առ և եկեր: Իւ բայան աչք նոցա. զի նոյն ժամայն զարթեաւ ՚ի նոսա ցանկութիւն ախտակիր ապստամբ ՚ի բանէն. որով ծանեան զանմթալի մերկութիւնն մարմնոյ, և նոաւա ՚ի միտ առին և զիմանալի մերկութինն հոգւոյ ՚ի պատմուճանէն սկզբնական արդարութիւն: Ապա որոյ առեալ տերեւս թզենւոյ, և կապեալ ընդ միմեանս, ածին զինքեանս ՚ի ծածկոյթ ծանակելի մերկութիւն:

Յետ պատուիրանազանցութիւն, գթացեալ՝ կոչեաց զնոսա յապաշխարութիւն, ձայնելով քաղցրութիւք զադամ յանուանէ: Ա՚ւլ նոքա փոխանակ ապաշխարելոյ, յաւելին մեղանչել. ադամ զկինն պատճառելով, և կինն զօձն. և երկոքին միանգամայն զրծծ: Ապա որոյ և գատակնիք գատաստանութիւն նոցա անդէն և անդ ՚ի վերայ ածաւ. ադամայ քրտամբ երեսաց և տաժանակիր աշխատութիւք ուտել զհաց յերկրէ՝ զրկելոյ վասն մերոց նորա յօրհնութիւն ինքնաբերական արգասաւորութիւն, որպէս էր ՚ի դրախտին. եւայի՝ ցաւօք երկանց և վշտօք ծնանել որդիս, և լինել ընդ առն իշխանու-

թէ. և երկոցունց մնհաւ մեռանիլ, և՛ ի հող դառնալ, ուստի աթաբան։ Օ՛ի մարմին նոցա ըստ ինքեան թէպէտ մնհկանացու էր և քակտելի՝ գոլով՛ի յոյից միանգամ հակառակ տարերաց բաղկացեալ, այլ՛ի հնարհմանէն ոյ եթէ՛ գերբնական ձրիւք, և եթէ՛ ի ձեռն պաղոյ ծառոյն կենաց ուզնէր լինել անմահ և անապական. զոր մեզանչելով կորուսին։ Ահա օձին՝ ի վերայ լանջից գետնաքարշ սողալ, և հող ուտել. զնահանն՝ ի պատիժ դարձուցեալ. և լինել յանէծս յամենայն անասնոց, զոլեալ և ինասակար կենդանեաց, և մանաւանդ մարդկան։ Ա՛յս պատիժ հայի և յօձն հին քանսարկուն՝ ի տարագրեալն յերկնաձեմ դրախտէն՝ ի տարին անդունդս, պարարիլ ամենատեսակ մեղաց գարշելութիւ, փոխանակ ոճախոհ հոգեպարար խորհրդոց. անհաշտ թշնամութիւ լինել ընդ մարդկան, յամենայնի սպասելոյ հարկանել զդարշապարս նոցա՛ի մեղս հրապուրեալ. և կնոջն կոխել զգլուխ նորա, նախ ապաշխարութիւ իւրով, և ապա՛ի ձեռն քրի, որ՛ի զաւակէ նորա հանդերձ ձեալ էր գալ՛ի սպառազուռ խորտակել զամենայն զօրութիւն նորա։

Այեա դատապարտելոյ զնոսա ոյ, արար նոցա՝ սպասաւորութիւ հրեշտակաց զգեստս մաշկեղէնս, և զգեցոյց նոցա. և առաժամայն էհան արտաքսեաց զնոսա՛ի դրախտէ անտի փոփոխութիւ՛ի աւերին, ուր ստեղծեալ էր զադամ, և անտի մուծեալ՛ի դրախտն. զի մի կերիցէ՛ի ծառոյն կենաց, և կեցցի յաւիտեան՛ի թշուառութիւ. յորմէ ոչ միայն չև էր ձաշակեալ, այլ գուցէ և զտեղին իսկ ոչ գիտէր. և ոչ եթէ որ՛ի ծառոց իցէ։ Այս հրամայեաց ածգերովքն սրաձև փայլմամբ բոցոյ պահել զմուտս դրախտին առաջի մարդկան։

Այսպէս միաբան են ամենայն վարդապետք մեկնիչք սբ գրոց, եթէ յաւուր յորում մեղան՝ արտաքսեցան՛ի դրախտէն։ Ա՛յլ ինդիր մեծ է, եթէ որ չափ ժամանակս կացին նոքա՛ի դրախտի անդ յառաջ քան զմեղանչել։ Ամենք գնեն ամն երեսուն

և երիս. ոմանք երեսուն. ոմանք երիս. այլք հա-
մառօտեն ՚ի քառասուն աւուրս. այլք ոմանք
յուղեն. կէսք ՚ի վեց, այլք յերիս. շատք և ՚ի մի
օր. իբր թէ ՚ի նմին աւուր յորում ստեղծան՝ փոր-
ձեցան ՚ի սատանայէ, մեղան, դատեցան, և տա-
րագրեցան ՚ի դրախտէն։ Զաջինքն կարի նեղու-
ղուիլ գնան, տարապայման յերկարաձգեալ զեր-
ջանկութենոցա, ընդ նմին և յայնչափ ժամանակս
յամեցուցեալ զզաւակագործուիլն նոցա. ուր ած
՚ի ստեղծանել զնոսա, ասաց ցնոսա, * Զեղջ
և բազմացարո՛ւք և լցէք զերկիր ։ քանզի յայտ է
թէ ՚ի դրախտին չէղև ինչ ծնունդ։ Իսկ վերջինքն
ընդ հակառակն՝ կարի փութացուցանեն զծնուա-
ուիլն նոցա։ Վանզի ըստ սոցա, հապիւ թէ ծա-
նեան զոմն և զինքեանս, մինչև էին աւեալ զձա-
շակ այնը երջանիկ կենցայ անմեղուիլ, մեղան և
զրկեցան յերջանիկ կենցայ անտի. չունելով երկո-
ցունց կարծեացս այլ ինչ հաւաստիս, բայց եթէ
բարեպաշտ խորհրդածուիլեիս, և յաբժարական գու-
շակուիլեիս, անբաւականս ածել ՚ի հաւանուիլն։
Վակայն և այնպէս՝ կարծիքն որ տայ նոցա գոնէ
տարի մի կալ ՚ի դրախտին, քաց յայլոց պատշաճ-
ղուիլեց, ունի և զայս. զի ըստ այսմ դիւրին լինի
մեկնել, թէ զիա՛րդ յետ մեղացն՝ պատրաստեաց
նոցա ած հանդերձս մաշկեղինս. առանց հարկա-
ւորելոյ ասել թէ նոր կենդանիս ստեղծ, կամ ՚ի
սկզբան անդ՝ բազումս ՚ի նոյն տեսակէ արար միան-
գամայն. ուր ՚ի գիրն զայս ևս ևս ընթեռնումք, թէ
արու և էգ արար զնոսա. որ ըստ Ճառին՝ յուցանէ
թէ մի մի զոյգ արար յիւրաքանչիւր տեսակէ։ Զայլ
չեն բաւական և այսպիսի պատճառք լուծանել
զայլ բազմապատիկ դժուարուիլեիս։ Յաքանչի՛ն սը-
գիրս չիք բնաւ նշան ինչ ժամանակի, յորմէ մարթի
իցէ գուշակել ինչ. վասն որոյ և մեք Թողումք
զայս ինդիր յիւրում անյայտուիլէ։

Իբրև արտաքսեցաւ ադամ՚ի դրախտէն, զկնի
ամի միոյ՝ ծնաւ զկայէն, իբր յերկրորդ ամի արար-
չուիլեն աշխարհի։ Զայս ծնաւ զհաբէլ. այլ վասն

ծննդեան նորա չէ մարթի հաշուել որոշ ժամանակ. քանզի իբր ընդ առ ի հարկ էր մերն դիեցուցա նել զկային, զի մի նորոգ յղութիւնք ապականեսցին կաթին մայրենի: Այլ ևս ոչ գիտեմք՝ թէ զկնի կայենի անմիջապէս հաբէիլ ծնաւ, եթէ դուստր. գիտեմք զի ագամ ծնաւ ուստերս և դստերս. ՃԻՆ. Է. Ի. բայց վասն դստերայ չունիմք, թէ երբ ծնեալ իցէն:

Հաբէլ էր հովիւ խաշանց. իսկ կային իբրև առաւել սկզբնակազմ և ուժեղ գործէր զերկիր: Երկոքին յագտանչ անտի ուսեալ զկարգ ածպաշտութեան՝ մատուցին պատարագ ՚ի. կային զաղջ զուն պտուղս երկրի. հաբէլ յանդրանկաց խաշանց իւրոց զընտիրս և զպարարտս: Հաճեցաւ ած՝ ընդ անկեղծ սիրտ հաբելի և ընդ պատարագ նորա. տուեալ նշան զգալի հաճութեան իւրոյ, ըստ հասեալ րակ կարծեաց, երկնաւաք հրով. իսկ ՚ի վերայ պատարագին կայենի չէղև այնպիսի ինչ նշան. ո րով ծանեաւ թէ պատարագ իւր չէղև ընդունելի. վասն որոյ լցաւ նախանձու բարկութեան. խոժռեցան անկան երեսք նորա. զորմ ՚ի յանդիմանել զնա ած Հայրական քաղցրութեամբ, նա ոչինչ շահեցաւ, այլ ևս առաւել մնեղնեալ, ած զեղբայր իւր հեռագոյն արտաքոյ բնակութեան ծնողացն ՚ի դաշտ ուրեք իբր զօսանաց աղագաւ, և յարեաւ ՚ի վերայ նորա, և սպան զնա: Երիւն անմեղին հեղեալ յերկիր, աղաղակեր յերկինս. կոչեաց ած զեղբայրասպանն՝ տալ զհամար վասն եղբօր իւրոյ. իսկ նա փոխանակ ՚ի զղջումն գալոյ և զողորմութեան խնդրելոյ, հատեալ ՚ի յուսոյ թողութեան՝ լըթնեալ յանդգնութեամբ պատասխանի արար, միթէ պահապան եցեմ ես եղբօր իմոյ. որով լցեալ զսուխ մեղայ իւրոյ, ընկալաւ զարժանահաս անէծս յոյ: Ասայ կամեցաւ ած՝ զի կեցցէ, լինել ողբմագին օրինակ որոց տեսանիցէն զնա. և անտի ՚ի միւս աւուրն զծանրութեամբ պատժոց ածայնին անիծից նահ ՚ի վերայ երկրի: Վասնզի եդ ած նշան ՚ի կային չսպանանել զնա. որ ըստ հասարակ կարծեաց

Տարցն՝ եր Հանապազորդ դողումն մարմնոյ, և անձուկք իմն զժնեհեսիլ խոժոռութեի երեսաց Հանգերձ սատանմամբ մտաց։

Յետ այնորիկ ծնաւ կայէն զԷնովք. Էնովք ծնաւ զԳայերիդադ. Գայերիդադ ծնաւ զմնժիել. մնժիել ծնաւ զմաթուսաղայ. մաթուսաղայ ծնաւ զղեամէք։ Ա՚ա զառաջինն ելոյծ զօրէնս միակնութեի զնախանշանակեալն ՚ի ՃՀՀ. Ը. 24. երկուս կանայս առեալ. որոց անուանք Ադդա և սելլա։ Ա՚դդա ծնաւ զյոբել, և զեղբայր նորա զյոբալ. սա Հնարեաց զերաժշտութեի և զնուագարանս։ Իսկ սելլա ծնաւ զԹոբէլ. որ եգիտ կամ գէթ զարդացոյց զարհեստ դարբնութեի գործել կամաւ երկաթի և պղնձի անօթս. և նոեմայ քոյր նորա ըստ կարծեաց ոմանց՝ եգիտ զոստայնանկութեի, այլք ասեն՝ զծարիքս և զդերձանս։ Կայէն շինեաց քաղաք. և եգ նմա անուն ոչ զիւրն, զի սաեղի եր այն ամենեցուն, այլ զանուն անդրանկան իւրոյ Էնովքայ. յորմէ երևի թէ երկար ապրեցաւ կայէն, և ետես զթոռանց թոռունս այնչափ բազմայեաւ, մինչև բաւական լինել քաղաք կացուցանել։ Ա՚յսչափ ինչ և եթէ յիշատակէն սը գիրք վասն կայենի. այլ յարտաքին գրոց երբայեցւոց և ՚ի հին աւանդութեէց նոցա աւանդին և այլ նշանաւոր իրք վասն կայենի. յորոց առեալ յովսեպոսի պատմ. գիրք. ա. Նախ. Ներ. գլ. 3. թէ հաստատեալ կայենի զտուն իւր ՚ի նայիդ, և շինեալ անդ քաղաք ինքեան և իւրոց ընտանեաց, փոխանակ յողջմտութեի գառնալոյ և ստրջանալոյ՝ ըստ որում պարտն եր ասէս աքսորեալ նաց պատժոյն, առաւել մեղկնեալ օր քան զօր յաւել ՚ի չարիս. և յամենայն ոձիրս մնաբերեալ, զամենայն ինչ վեր ՚ի վայր խառնակեաց։ Գտաւնդ աւազակաց ժողովեաց՝ եղեալ նոցա գլուխ. և ուսոյց նոցա գյափշտակութեի և զգողութեի ընդիւք ստարաց Հարստանալ։ Ո՚նախեղսկ հաւատարմութեի և զանկեղծ միամտութեի, որք ծաղկեին յերկրի, աղաւաղեաց. զնաքսութեի և զնենգութեի եմոյծ ՚ի տուրևառս. և չափ և կշիռ Հնարեաց.

և նա ինքն զառաջինն սահմանս եդ սպարապայ։

Ի նոյն հրեշական աւանդութենէ պատմի և մահ նորա զայս օրինակ դիպեալ։ Իբր ել դէպ եղև սահն զամեքայ, որ հինգ երորդ է ի սերնդոց կայենի՝ երթեալ յորս երեսոց ըստ սպրեցոյ պատանւոյ իւրոյ, որ ըստ ոմանց էր Թոբէլ որդի նորա. և զգացեալ պատանւոյն ի Թանձրախիտ մայրն անդ ըզշշուկն ոստոց և զշարժուն ինչ իբրև գնացս վայրն երկոյ, ազդ արար զամեքայ ձգել զնետ. իսկ նա առանց լաւ և զննելոյ, արձակեաց զնետ՝ երկար և սպան զկարծեցեալ երկ. իբրև չքաւ ի տեղին, եւտես զի ահա էր կայէն նախահայրն իւր. որ երեքեալ տատանեալ շրջելով՝ ըստ բերմանն արկածից անդ դիպաւ ի նմին պահու։

Ընդ այս պատահումն յանկնարին սրտմտութենէ բռնկեալ զամեքայ, երկար զպատանին ի հարուածս տատակս, յորմէ ոչ բարւոք դարմանեալ՝ մեռաւ։ Ապա երկեալ զամեքայ ի տուն, պատմեաց զիրսն կանանց իւրոց, ասելով. * Ալը սպանի ի վէրս ինձ ||, զկայէն նախահայրն իմ ի կարեւէրս խոցումն սրախս. * և երիտասարդ ի հարուածս ինձ ||, զպատանին կապարձակիրն իմ ի հարուածել իմում սակս խաբելոյ զիս, չունելով կամն սպանանել զինս։ Լե առ ի քաջալերել զկանայս իւր, և բառնալ ի սրտից նոցա զերկիւղ սպառնացեալ վրէժխնդրութենն վասն մահուն կայէնի, յաւել. * Լամէք եօթն անգամ վրէժք ինդրեցին ի կայենէ ||, այսինքն վասն մահուն կայենի. ապա նովին արդարութբ, * ի զամեքայ եօթանասնեկի եօթն ||. ծնն. ը. 24. այսինքն ծանրագոյն վրէժս լուծցի, որ զիս սպանանիցէ. քանզի իմ մեղք յանդգնաս և ակամայ գործեցան, և նոյնժամայն սրբեցաւ. իսկ մեղք սպանողին զիս լինին նման մեղաց կայենին, որ եկն ի սպանութենէ ի կամաւոր նախանձու չարութենէ, և փոխանակ ապաշաւելոյ՝ յաւել ի չարութիւն։

Այս պատմութենէ սպանութենէ կայենի ի զամեքայ բազումք ի սակի այլոց անստոյգ հրէական

աւանդութեց համարին. և զանն զոր խօսեցաւ զամէնք առ կանայս իւր յայլ իմաստ չըլլէն. քայց են և յոլովք՝ի մեկնչաց, որք ոչ ինչ դժուարութեի գտանեն հաւանուեի ընծայել՝ առ՝ի կարօղ լինել ըստ ձառին իմանալ և մեկնել զյառաջասացեալ բան՝ըն գրոց։

ԳԼ. Գ.

Ադամ Եվայ և այլոց նահապետաց ինչե՛ի ։ պա-
տուէր ։ ոչ առ նոյ ընել պապան վասն չբմեղեղին ։

Սկիզբն ծնաւ՝ըստ հասարակ ընթերցուածոյ երբայական օրինակին՝ յամին հարիւրորդի երեսներորդի կենաց ադամայ հօր իւրոյ, և արարչութե աշխարհի ։ Մարգմանութիւնն եօթանասնից դնէ զադամ ծնանել հարիւր ամք յետոյ. այսինքն յամի երկիւրորդի երեսներորդի կենաց իւրոց. և զայս կարդ հաստատուն պահէ գրեթէ յայլ առնայն նահապետս՝ յամեցուցանելով զծնունդ նոցա հարիւր ամք յետոյ զորօրինակ եղաք՝ի ցուցին, որ՝ի յառաջաբանի ։ Ծնանիլ անդ սկիզբ՝ մայր նորա հոգւով մարգարէութե գուշակեաց, թէ նա լցուսցէ զերկին հաբելի, նմանեալ նմին սրբութե ածպաշտութե ։ * Օ՛ի յարոյց ինձ ածայլ (ասէ) զաւակ՝ փոխանակ հաբելի, զոր սպան կայէն ։ ծնն. ք. 25 ։ Յետ ծնանելոյ սեթայ, յաւելու՝ըն գիրն թէ ադամ ծնաւ ուստերս և դստերս. զոր չէ պարտ այնպէս իմանալ, որպէս թէ զկնի հաբելի և յառաջ քան զսեթ չիցէ ծնեալ, այլ միայն զկնի նորա. այլ թէ բաց՝ի նմանի եղեն և այլ ծնունդք բազումք. զնոյն իմանալի է և վասն այլոց նահապետաց, քանզի ելք սովորական ինն է՝ըն գրոց զերեսուն յառաջագոյն՝պատմել յե-

տոյ։ Ալ ասն զի՝ որ գիրն ասէ ոչ աւանդէ մեզ ըզկարգ անդրանկաց, այլ դիւրացակ և զկարգ այնոցիկ, որք արժանացան մտանել՝ ի գասս նախահաւրացն քոյ. որպէս տեսանեմք յայտնապէս յաւետարանին սկզբն ղեւկասու յաւարտ երբորդ գլխոյն։ Ապա յայնց՝ որք ոչ մտին յայն գասակարգութիւն, զնոսա ևԷթ անուանել, որք նշանաւոր եղեն յիմիք կամ՝ ի բարի, կամ՝ ի չար։ Ալ ապա թէ ոչ՝ ևԷթ ասդամ սկսեալ էր ծնանել այլ ծնունդս միայն զկնի սեթայ, ուստի՞ ունէր կայէն այնպէս փութով առնուլ կին. և զիա՞րդ մարթ էր նմա այնպէս արագ գտանել ժողովուրդ առ՝ի շինել քաղաք որչափ և է փոքր։ Ապա՝ նախ՝ անմահութիւն՝ ոչ՝ ի սկզբանէ աշխարհի հոգացաւ այնպէս բաշխել զծնունդս արուաց և իգաց, զի ամենայն այր որ կամիցի ամուսնանալ՝ գտցէ կին. նոյնպէս և կինն գտցէ իւր այր։ Այլ չէ՛ մարթ ասել, եթէ նահապետք վասն լինելոյ երկարակեաց, ընդ երկար մնային տղայք անզօրք. զի որովհետև կամէր ած զի՝ ի ձեռն նոցա բազմացի ազգ մարդկան՝ ի վերայ երկրի, ոչ այր նոցա կարի երկար յապաղել զորդեծնութենէ։

Ալ ասն ենովսայ որդւոյ սեթայ ասէ՝ թէ գիրն, *Նա յուսացաւ կոչել զանուն տեն տր։ ծնն. ե. 26. ուր լատին թարգմանութիւնն ընթեռնու, * Նա սկսաւ կարդալ զանուն տեն։ իբր ոչ ևԷթ սէթ բարեպաշտ հայր նորա, և ադամ հաւ նորա չիցեն յաւաջագոյն կարդացեալ զած, յուսացեալ՝ ի նա, և պաշտեալ զնա. այլ ևԷթ ենովս սկիզբն արար հանդիսիս և արտաքին պաշտամամբ մատնաւոր ծիսիս, և յատուկ ձևով աղօթից պաշտել զած։ Այն և այս, որք հայեցեալ՝ ի լատին թարգմանութենէն՝ ասեն, թէ ենովս նախ առաջին սկսաւ կոչել զած տր. և ուսուցանել, թէ այսպէս պարտ է պաշտել զտր. այսպէս պատուիրէ տր ևս։ Այս առաւել Ալնովք որդի յարեդայ եղև նշանաւոր. զի յետ ծնանելոյ նորա զմաթուսաղայ՝ գոլով ամաց երեք հարիւր վաթսուն և հնգից, փոխեաց զնա ած կենդանւոյն. այլ թէ ո՞ւր, վայրապար է խուզր

զուԹ՚ը գՀետ սկզիլ. որով Հետև ՝ուծ ուչ կասկածաւ
յայտնել, որպես և ուչ զտեղին եղեալի: Ասանք՚ի
Հարց Համարեցան՚ի դրախտն փակուԹԻՆ փոխադ-
բեալ. այլ դրախտն փակեալ էր յայժամ աւաջիկ
մարդկան. և յետ այնորիկ խոպան անՀետացաւ
յաշխարՀակուաւ ջրՀեղեղին. զի՚ի դադարիլ մեզաք
նախահայրն՝ այնր վախձանի, այլ վասն անկեալ էր
զայն ՝ուծ, դադարեցաւ և պիտանուԹ՚ը նորա:

՚Նյնպէս և տասնեբորդն յայտնեալ նոյ որդի
զասիքայ՝ ոչ որ՚ի կայենէ, այլ որ յորդւոց սեԹայ,
նշանաւոր է՚ի կարգս նաՀապետաց. որոյ արդա-
րուԹ՚ը յայզաց յայզս պատմեսյն ցկատարած աչ-
խարՀի. որում՝ Հայր նորա Հոգւով մարգարէուԹ՚ը
եդ անուն ՚Նյ. որ Թարգմանի Հանգիստ, և մեկ-
ԹարուԹ՚ը, ասելով.* Այս Հանգուսցէ զմեզ՚ի գոր-
ծոց մերոց, և՚ի տրտմուԹեանց ձեռաց մերոց. և
յերկրէ զոր անէծ ՝ուծ ՚ն: ՃՆՆ. Է. 29: Որ զի
նոյ Հանդերձեալ էր առանձին իմն կերպիւ լինել
նախահաւ մեսիային Թագաւորի խաղաղուԹեան և
Հանգարիտ մեսիայական աշխարՀի. և օրինակ նորա՝
արդարուԹ՚ը իւրով, և խոչանձև տապանաւն, որով
սրբեցաւ աշխարՀ՚ի Հեղեղեալ մեզաց. և եղև
նախահայր նոր ժողովրդեան: Այն ևս, որք ասեն
ԹԷ նոյ զայս մարգարէուԹ՚ի ելից և ըստ ՝ուծն.
զի Հնարեաց զարօր և զայլ գործիս Հողագործու-
ԹեաՆ, որով ԹԵԹևացոյց զտաժանելի վաստակս
մշակուԹ՚ը, ի կիր արկեալ և զանասունս՝ի Հերկա-
գործուԹ՚ի. յորմէ կոչեցաւ,* Ա.ՄՐ Հողագործ ՚ն.
ՃՆՆ. Ե. 20: Այսիտ և զգինի, որ ուրախ առնէ
զսիրտ մարդկան և մեԹԹարէ: Այս ևս զինի ջրՀե-
ղեղին պատարագաւ իւրով Հաշտեցոյց զ՝ուծ, և
ընկալաւ զօրՀնուԹ՚ը նորա վասն արդասաւորու-
Թ՚ը երկրի, որ խոպան տապակեալ էր յերկարա-
տև ծովանալոյ ջրոյն՚ի վերայ երկրի:

՚Նյ գոլով ամաց հինգհարիւրոց՝ ծնաւ մեՒսանց
զկին՝ երիս որդիս. զսէմ, զքամ, և զյաՓէԹ:
Ա.ատ՚է գլ. Է. աւանդէ ՝ուծ գիրն զծննդաբանուԹ՚ի
նահապետաց մինչև ցջրՀեղեղ. և զի նոյ, սէմ,

քամ, և յաբեթ են վերջինք, նոքօք կնքէ զկարգ պատմութեն նոցա։ Յետ այնորիկ՝ ըստ սովորութե իւրում դառնայ յհետս, և՝ է՛լ։ ՁՃՆ։ պատմէ զվեղս որք սկսեալ՝ի կայենէ բազմօք յառաջ քան զնոյ, ապականեին զերկիր։ և օր քան զօր ըստ բազմանալոյ մարդկան՝ի վերայ երկրի, բազմացան և մեղք, յաձախեցին եղծմունք և ապականութիւնք կենցաղ առհասարակ յամ մարդկի։ որ և առաւել լակս ածէցեալ զօրացաւ՝ի գեղջ լբենի գատեցեալ կայենեան անիծեալ սերնդոց։ զորս ՚ի գիրք կոչեն դստերս մարդկան։ որոց ՚ի հարց իւրեանց ուսեալ զաբիս, խոտորեցուցին զսիրտս որդւոցն սեթայ՝ կռնեցելոց որդիս այ, սակս հայրենի ՁՃպաշտութե բարութե և առաքինութե։

Այսք՚ի գեղ նոցա պատրեալ, խառնակեցան ընդ նոսա, և ծնան զհսկայս մեծամեծս, ոչ այնչափ մարմնով հասակաւ, քան թէ անազդակ եղեռնապօծութիք։ զի ոչ թողին չարիս, զոր ոչ գործեցին։ չուայտիլ, անառակիլ, բռնանալ՚ի վերայ միմեանց, յափշտակել, գողանալ, կռփել զանազան. և միանգամայն ասել, այնպէս եղծեալ և թիւրեալ էին միտք և սիրտ նոցա, մինչև այնուհետև զչարն և զանկարգն ոչ ևս համարել չար։ որով և բռնադատեցին զերկայնմտութիւնն այ համայնապրկնք ջուրցն հեղեղաւ մաքրել և սրբել զերկիր յաշխարհէ զաղտութէ մարդկան, ջնջելով առհասարակ զմարդիկ և զանասունս յերկրէ։ և միայն նոյ, ՚ի յոգնահոյլ մարդկան միջի, գտաւ արդար և հաճոյ այ առաջի այ։ Այսպէս և այնպէս երկայնամիտն ՁՃ մինչև էր ածեալ զարժանահիշատ պատուհաս ՚ի վերայ երկրի՝ հարիւր քսան ամաք յառաջ յայտնեաց նոյի իւրում հաւատարիմ ծառայի զվերջինն վհիւ ողբմութէ իւրոյ՝ հնարհելոյ նոցա ժամանակ կենաց այլևս ամս հարիւր և քսան՝ դառնալ յոգջմտութէն և ապաշխարել։ ապա թէ ոչ՝ բառնալ՚ի նոցանէ զշունչ կենդանութէն։ * Այս ասէ ՁՃ, մի միասցէ ոգի իմ՚ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան (որպես թէ՝ ի յաւիտենի դարուս) վասն

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵՑՈՒՆԵՐԻ ՏՈՒՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

լինելոյ դոցա մարմին. և եղիցին աւուրք դոցա ամք հարիւր քսան ||. ծնն. գ. 3։

Յորժամ յայտնեաց Ած զայս նոյի, եր նա ա մաց յորեքհարիւր և ութանից. և՝ի հեռևեալ քսան ամ ծնաւ յաջորդաբար զերիս որդիս, զՍեմ, զՀամ, և զՅաբեթ։ Ապա՝ի հասանել նոյի յամս հինգհարիւր կենաց իւրոց, կամեցեալ Ած բնական Ձանասպարհաւ ասպրեցուցանել զնա հանդերձ կնաւն, և երիւք որդւովք և կանամբք նո ցա՝ընդ ամենայն ութ հոգիս՝ի հաստրակաց կորս տենէ, հրամայեաց նմա շինել տապան, ինքնին տուեալ զօրինակ նորա, ուսուցանելով և զարհեստ շինելոյն։ Այս էր տապանն նաւաձև շինուած մեծ յոյժ, գործեալ՝ի պատուական տաշեալ և յղկեալ փայտից, և ծեփեալ նաւթիւ ներքոյ և արտաքոյ. յերեքհարիւր կանգնոյ երկայնութեն նորա, և յիսուն կանգնոյ լայնութենն, և յերեսուն կանգնոյ բարձրութենն։ Ի ներքուստ էր յերիս յարկս բաժանեալ, ՚ի վերին, ՚ի միջին, և՚ի ստորին. և իւրաքանչիւր յարկք սքանչելագուեստ կարգաւ անջըրպետեալք՚ի բազմապատիկ խորշս և՚ի խշտիս, ՚ի հանգիստ նոյի և ընտանեաց նորա, և չորքոտանեաց և թռչնոց. և՚ի շուրմարանս համբարաց ինքեանց և ամենայն անասնոց բաւական ընդ ամ մի ողջոյն։

Այն մեծատարած շինուած ունէր մի միայն պատուհան փոքրիկ իբր մի քառակուսի կանգնաչափ. և դուռն բաւական մեծութեբ մտանելոյ ընդ այն անասնոց, և տանելոյ համբարս՚ի ներքս. և՚ի վերուստ յարկեալ ամրածածուկ. քանզի վերնակողմն նորա քաղելով գործեցաւ, ըստ պատուիրելոյ Ած։ * Վասղելով գործեսցես զտապանն. և՚ի մի կանգուն կատարեսցես զնա՚ի վերուստ ||. ծնն. գ. 15. որով ձեղունայարկ ձևացաւ, յամենայն կողմանց ամրափակեալ յերեսաց սահանահոս անձրևաց. գուցէ սակս այսորիկ տապան կոչեցաւ, և ոչ նաւ։

Իսկ Թէ ո՞րչափ ժամանակս ծախեաց նոյ՚ի շի-

նուէրն նորա, որ զիրք Թէպէտ յայտնի ոչ նշանաւ կէն, սակայն գտանեմք ինչ ինչ, որով յուցանէ ծախեալ ամն իբր հարիւր։ Եւ Թէպէտ կարօղ էր ինձ այլով բիւր Հանապարհաւ ապրեցուցանել զնա, այլ ոչ արար. զի կամէր Թէ և նա ինքն նոյ զոր ծակից լիցի իւրում փրկութեանն. յուսումն մեր, Թէ ինձ է որ յաջողէ գյաւիտենական փրկութեն մեր, այլ ոչ ժամանակացուք այնմ, եթէ և մեք ոչ լինջուք գործակից շնորհաց նորա։ Այս էր ամոց վեցհարիւրոց՝ յորժամ եմուտ ի տապանն, և ջրհեղեղ ջուրցն սկսաւ։ Իսկ ամք արարչութեն աշխարհի՝ ըստ ժամանակագրոց 1656. և ըստ եօթանասնից. 2242. կամ 2262։

ԳԼ. Գ.

ՋՐՀԵՂԵՂ։

Իբրև կատարեցաւ շինութեն տապանին, եմոյծ ինձ սպասաւորութեն հրեշտակաց, կամ գաղտնի մտմամբ՝ ի տապան անդր զամենայն տեսակս կատարեալ անասնոց, որք կամ կենդանի ծնանին յարգանդէ մոր իւրեանց, և կամ՝ ի ձուոյ թխսելոյ և տաճելոյ բարեխառն ջերմութեն։ Իսկ սողունք և այլ փոքրիկ և անկատար կենդանիք, որոց սերմանք և ձու պահին ի ջուրս, և՝ ի տունկս և՝ ի փտեալ մարմինս, ոչ մուծանն ի տապանն։ Զամենայն տեսակաց յանցեալ չորքոտանեաց և՝ ի թռչնոց մի մի զոյգ արու և էգ մուծանն՝ ի պահել զտեսակս իւրեանց. իսկ՝ ի՞նչ կենդանեաց, որք էին սահմանեալ ոչ միայն՝ ի պահել զտեսակս, այլև՝ ի զոհ ոչ, և՝ ի կերակուր մարդկան, եօթն եօթն զոյգք, ընդ ամենայն չորեքտասանք. յառանձին խնամոյն ոչ. զի՝ ի զոհել նմա՝ ի՞նչ կենդանեաց անտի, զոր արար նոյ առժամայն կեալանել իւրում՝ ի տապա-

նէին, մի՛ միասցին մարդիկ զուրկ ՚ի կարևոր անաւ նոց անտի։

Լսօթեն աւուրքը յառաջ քան զկսանիլ անձրևաց՝ ամենայն անասունք մոհին ՚ի տապանն. ապա եմուտ և նոյ և կին նորա, և երիք որդիք նորա և կանայք նոցա, կալ մնալ անդ՝ ցորվայր կամք իցեն ևն այ. և ամպափակեաց ած արտաքուստ զդուռն տապանին ծեփեալ նաւթիւ ներքոյ և արտաքոյ ՚ի ձեռն սպասաւորութեան հրեշտակաց. ընդ որ այնուհետև ոչ oք կարէր ակն ունել մուտ դառնալոյ ՚ի վարդապետութենէ մեզ, թէ զժամանակն պարտ է ՚ի կիր արկանել յիւրում դիպող ժամու. քանզի որ ոչ կամի մնանել յորժամ կարէ, դացէ ապա զդուռն փակեալ, և ոչ կարիցէ մնանել յորժամ կամիցէ։ Իբրև փակեցաւ դուռն տապանին, եղև յեզափաղծում ժամու հողմն մըրկեալ, և սասանութենէ երկրի զարհուրելի, որով պատառեցան անդունդք լեռնային ջրատարփակ շտեմարանաց. խորտակեցան դրունք գետոց, լճաց, և ծովուց սուհասարակ. և ջուրք զպրացեալ յորձեռանդն ՚ի վեր բղխեցին ընդ ամենայն տեղիս։ Եղիսպէս և ՚ի վերուստ այն համաճաւալ օդային ծոմն մեզ աներևոյթ կամ մրճնոլորտն, զի անօդ բեալ և սիրեալ կայ ընդ բովանդակ մեծամարմին շրջ իսլից շրջապատն, յայնժամ խտացեալ փոխեցաւ ՚ի յուղևիճահոս և ՚ի ջաղջ անձրևս։

Եւ ՚ի վերին և ստորին ջուրք միացեալք, ծածկեցին զամենայն երկիր. սակայն եթէ ուժք անբաւական երևիցին առ ՚ի հնազետասան կանչնաչափ բարձրանալ ՚ի վեր քան զամենայն բարձրագոյն լերինս հողագնտոյս, կարէ յաւելուլ քան նախնեայ և մնան մի՛ ՚ի վերին համաճաւաճած ջուրց անտի, զոր ՚ի սկիզբն արարչութենէ աշխարհի ամբարձ ած ՚ի վերոյ հաստատութենէ. ունելով իւր նպաստաւոր զօրս գերս, որ ասէ, * Սահանք երկնից բացան ։ Ծն. է. 11։ Եւ չէ մնրթ երկուանալ, թէ զկնի ջրհեղեղին զի՞ եղև այն ջուր. քանզի որոյ հրամանաւ էջ ՚ի վերուստ անտի, նոյնպէս կարաց նորին ակնաւք

կութիւք անգրէն ի տեղի իւր ամբառնալ, որպէս ամբարձաւ ի սկզբան արարչութէ, յորժամ անջրպետեաց ՚ած ի միջ ջրոյն՝ որ էր ի ներքոյ հաստատութէն, և ի միջ ջրոյն, որ ի վերոյ հաստատութէն. ծնն. ա. 7։

Այլ ևս կարօղ էր ՚ած խորել և ընդարձակել զծոց լայնածաւալ ովկիանոսի, և ընդլայնել զըսորերկրեայ խորափիսս ի հաւաքիլ ջուրց ի նոսա։ Վանզի խոստովանել պարտ է, թէ համաչխարհական ջրհեղեղն չեղև ըստ սովորական և կարգաւորեալ նախախնամութեն ՚ած, այլ արտաքոյ այնր. վասն որոյ ոչ մի կամ երկու, այլ բազմապատիկ աքանչելիք երևեին ի նմա։

Ջուն ջուրց, և հոսուն տեղատարափ անձրևաց ձգեցաւ զբառասուն տիւ և զբառասուն գիշեր անընդհատ. և ծածկեաց ջուրն զըսոլոր հողագունտն հնգետասան կանգնաւ ի վերոյ քան զըսարձրագոյն լերինս ամենայն երկրի. և մեռաւ ամենայն որ ունէր շունչ կենդանի, մարդ, և չորքոտանի, և թռչուն, և ամենայն սողուն. միայն միայն նոյ, և որք ընդ նմա էին ի տապանի անդ։ Այլ կայ ինաց ջուրն ի նմին բարձրութէ աւուրս հարիւր և յիսուն, թուելով ի նոսա և զաւուրս 40. անձրևաց. այսպէս դնեն բազումք. ապա թէ ոչ՝ բազում գժուարութէի ելանէ ի ժամանակագրութէ։ Այս երկարաձգութէի պատժոյ թերևս անվախձան երևիցի ոմանց, զի ի մեռանել ամենայն կենդանեաց, ոչ ևս գոյր այնուհետև ոք պատժելի։ Այլ արժանապէս խորհելով, եղև ի մեծագոյն գթութէ ՚ած, որպէս զի գիշք մարդկան և անասնոց սպառեսցին յերեսաց երկրի, ըստ մասին ի ձկանց կերեալք, և ըստ մասին ինքնին լուծեալք և փտեալք. ապա թէ ոչ՝ եթէ վաղվաղակի ցամաքեալ էին ջուրքն, թող զի կարի տխրագին եղեալ էր յաչս նոյի տեսիլ երկրի, այնչափ գիշք սփռեալք ի վերայ երկրի՝ որպէս արդեօք ապականեալ էին զոգն։

Յետ հարիւր և յիսուն աւուրց՝ եղ հողմ ցա-

մաքեցուցիչ, և սկսաւ նուաղիլ և իջանել ջուրն վարեալ և ծփեալ ի հողմոյ անտի հանդերձ տե-
ղատուէքն և մակընթացութէքն ջուրցն. որով և
բացան յետոյ ծոցք գետոց: Այս յաւարտ եօթ-
նեքորդ ամուոյն նոտաւն ի վերայ լերինն ա-
րարատեան նահանգի: Այլ կարի յամր զիջանէր
ջուրն. զի հազիւ ի տասնեքորդ ամսեան սկսան ե-
րևիլ գլուխք լերանց: Այս զկնի քառասուն ա-
ւուր, արձակեաց նոյ զառնուն լրտեսել զերկիր.
այլ նա գտեալ իւր ախորժական կերակուր ի մնա-
ցորդ դիականց, ոչ ևս դարձաւ ի տապան անդր
բերել պատասխանի: Այլ ոչ նոյնպէս աղաւնին,
զոր զկնի նորա արձակեաց. քանզի նա չգտեալ
հանգիստ ոտից իւրոց, եկն ծանուցանել նոյի, թէ
ջուրն դեռ պատեալ է զամենայն երեսս երկրի:
Յետ այնորիկ զկնի եօթն աւուրց դարձեալ արձա-
կեաց զՀաւատարիմ լրտես իւր զանգղ աղաւնին.
որ անդրէն դարձաւ առ նոյ, ունելով թարմ շիւղ
ձիթենւոյ ի բերանի իւրում. որով ծանեաւ նոյ
թէ ցամաքեալ են ջուրք յերեսաց երկրի: Այլ
դադարեաց աւուրս եօթն ևս, և վերստին արձա-
կեաց զաղաւնին, և ոչ ևս յաւել դառնալ, կալ
լեալ զաղատութէն իւր ի սրբեալ և ի նորոգեալ
երկրի:

Յայնժամ երից նոյ զձեղուն տապանին, և ե-
տես զերեսս երկրի ցամաքեալ. ապա և ՚ՁԾ քա-
ջեալ զդուռն տապանին, հրամայեաց նոյի, և ո-
րոյ ընդ նմա ելանել յաւարեցուցիչ արգելանէ ան-
տի, յետ կալոյ նոցա անդ ամենափակեալ ընդ ամ
մի և աւուրս տասն. և ել նախ նոյ և կին նորա և
որդիք նորա հանդերձ կանամբք իւրեանց. ապա
ամենայն անասունք զոյզ զոյգ անչփոթ կարգաւ:
Այլ նոյ առաքեալ սերսեղ ՚ՁՂ, եկեալ
՚ի վերայ նորա ողջակէզ յամենայն անասնոց սրբոց,
որք վասն այնր առաւել թուով քան զամենայն պա-
հեցան ՚ի տապանի անդ, ՚ի գոհութէն մեծի բարե-
բարութէն ՚ՁՂ, որ պահեաց զնոսա ՚ի համաշ-

խարհական կորստեանէ։ Հաձեցաւ ՚ած ընդ պատա-
րագ նորա, և օրհնեաց զնա՝ իբրև երկրորդ հայր
ազգի մարդկան, և զորդիս նորա՝ աՀել և բազմա-
նալ ՚ի վերայ երկրի. և նորոգեաց զառաջինն իչխա-
նալեթն ՚ի վերայ ամենայն անասնոց, զոր տուեալ
էր ադամայ. հրաման ետ ուտել և ՚ի մսոյ նոցա
անխտիր իբրև զբանջար խոտոյ. բայց ոչ նոյնպէս
զարիւն նոցա, կամ զմիս արեամբ, այսինքն հեղ-
ձուցելոյ. զոր խստիւ արգելոյ, առ խորշեցուցա-
նելոյ սաեն մեկնիչք, յարեհնէ մարդկան.* Հրա-
ժարեցուցանել կամեցաւ (ասէ մեկնաբանս) յարեհնէ
անասնոց, զի մի ՚ի ծարաւ արեան մարդոյ Ձանա-
պարհ բացցի։ Յս խոստացաւ ՚ած ոչ ևս նոյն
օրինակ հանրական ջրհեղեղաւ պատուհասել զաշ-
խարհ. կարգելով նշան հաստատուԹեՀ խոստմանն
զծիածանն, որ յառաջ ևս ձևանայր յօդս, յոր-
ժամ ՁառագայԹ արեգական՝ համեմատ դրիւք
ձգիւր ՚ի հանդիպակաց ամպն ՚ի ժամ ցօղագին
մանրամասղ անձրևոյ. զայն կացոյց ՚ած նշան անա-
ղարտելի ուխտի իւրոյ ՚ի քաջալերուԹեՀ մարդկան,
եԹԷ ոչ ևս եղիցի համաչարհական ջրհեղեղ։
Յս այսպէս զկնի 1657 ամանց արարչուԹեՀ, դար-
ձեալ անապատացաւ երկիր ՚ի բնակչաց, բայ ՚ի սա-
կաւուց անտի, որք պահեցան ՚ի տապանի. այսու
ևԷԹ զանազանուԹեՀ յառաջնոյն, զի յայնժամ ՚ի
միոյ առնէ և ՚ի միոյ հինոջէ սկսաւ աՀելուԹիւն
մարդկան. իսկ յերկրորդումն ՚ի ջրից արանց՝ և ՚ի
նոյնչափ կանանց, իբրև ՚ի ջրից բեղմնաւոր ծա-
ռոյ նոր պտուղք մարդկան անդրէն լցին զերկիր
բնակչօք։

Ույ զկնի մատուցանելոյ ՚ած զպատարագ գո-
հուԹեՀ, անդ ՚ի հայաստան առ ոտս մասիս լերինն
՚ի նահանգին այրարատու՝ հաստատեաց իւր, և որդ-
ւոց իւրոց բնակուԹեՀ. և գոլով այր հողագործ,
սկսաւ անդ գործել զերկիր. տնկեաց այգի. յոր-
մէ յետոյ գԺպատեհուԹեՀ ինն առԹեցաւ նմա։
ՎՒանզի կամ անփորձ գոլով գինւոյ, և կամ ան-
տեղեակ զօրուԹեՀ գինւոյն, զոր բերէ տեղին այն,

էարբ յանդիստս, և արքեցաւ. և մինչ ՚ի տան իւրում անկեալ ննջէր անծածկոյթ, քամ որդի նորա անպատկառ հայեցիւք տեսեալ զմերկութիւն նորա, փոխանակ ծածկելոյ, չոքաւ պատմեաց ա նամնթաբար եղբարց իւրոց սեմայ և յաբեթի. որք պատկառեալ, առին հանդերձս ՚ի վերայ թիկանց, և յետս յետս գնալով, ծածկեցին զմերկութիւն հօր իւրեանց առանց տեսանելոյ. որով և արժանացան հայրական օրհնութեան։ Քանզի իբրև սթափեցաւ նոյ, և գիտաց զկրտսն, օրհնեաց զնոսա. իսկ քամ արժանի էր անիծից, այլ ըստ ա սելոյ ոմանց՝ գութն հայրական չէթող անիծանել զնա, որ բաղում ամաք յառաջ օրհնեցաւ յոյ կեղն ՚ի տապանէն։ Քայց զի մի՛ յանցանքն անպա տիժ միասցեն՝ յօրինակ այլոց՝ ղկնեաց զանէծս ՚ի քանան որդի քամայ. իբր զի ըստ Թէոդորետոսի, առաւել ծանր և վշտագին էր հօրն՝ Թշուառութիւն որդւոյն, քան անձին իւրոյ. իսկ ըստ այլոց՝ զի քա նան մնուկ ստահակ մեղսակից եղև, կամ լաւ ևս ասել՝ պատճառ հօրն յանցանաց. զի նախ նորա տեսեալ զմերկութիւն հաւրն, ծիծաղեալով ծանոյց հօր իւրոյ. իսկ նա փոխանակ սաստելոյ լիրբ մնա կանն, ինքն ևս անպատկառ գտաւ քան զմնուկն, և ծաղրելով պատմեաց եղբարց։ Քայս կարծիք ունի իւր հինն գլխոյն Թարգմանութիւն ինչ, ուր ՚է ձեռն. Ը. 22. ասի. * Քտես քամ ՚ի ձեռն քանա նոյ զմերկութիւն հօրն ։

Քայց անկնճռ նոյն տիրապէս խօսելով՝ չեզև չարամանգլութիւն, այլ մորգարկութիւն, որ կամ դարուց բազմաց հանդերձեալ էր ՚ի գլուխ ելանել ՚ի սերունդս քանանու, յորժամ եբրայեցիք որդիք սեմայ նուաձեցին զնոսա ՚ի սարկութիւն իւրեանց։ Քստի նախագուշակութիւնս ՚ի փոքր ցաւ էր սրտի ոչ միայն քամայ, այլև քանանու։ Քյս դիպուած բազմիցս յետոյ պատահեաց. բայց յոր գիրն ըստ իւրում սովորութեան կանխէ, զի կամի վշարել զպատմութիւն նոյի. ուր և զվախճան կենաց նորա աւանդէ. որ յայտ է թէ եղև երեք հարիւր և վեհան

ամաք գնի ջրհեղեղին, յամի սարարչութեանն աշխարհի ըստ ժամանակագրաց 2006։ Եւ ըստ այսմ հաշուի՝ նոյ եաւս զտասներորդ կամ զմեատասաներորդ ծնունդ իւր զաբրահամ, որ էր յիսուն և եօթն ամաց, յորժամ մեռաւ հայր ծերունին. այլ ըստ եօթանասնից՝ քաղմաք յառաջ եղև մահ նոցա, այսինքն յաւուրս եբերայ՝ թառհինն թառհին իւրոյ։

ԳԼՈՒԽ Ժ.

Ասէ Աբրահամ. Այնան. և Աղայ։

Ասէ ըստ աւանդելոյ հօր գրոց. ՃՆՆ. ՃԾ. 10. էր ամաց հարիւրոց, յորժամ ծնաւ զարփաքսադ յերկրորդ ամի յետ ջրհեղեղին։ Յայսմանէ ոմանք պատճառս առնուն զսեմ դնել կրսեր յորդիսն նոյի. զոր ցուցանեն այսու, զի թէ առաջին էր ասեն և երէց, ՚ի ծննդեան արփաքսադայ՝ պարտ էր լինել հարիւր և երկուց ամաց։ Եւ ՚ի հաստատութեան կարծեաց իւրեանց առնուն զայս բան ՃՆՆ. Ճ. 21. * Եւ ծնան սեմայ որդիք, և նա է հայր ամենայն որդւոցն եբերայ. եղբօրն յաբեթի երիցագոյն ‖. ահա ասէն՝ ասա յաբեթ կոչի երէց եղբայրն սեմայ. իսկ առաջին դասել զնա յայլ տեղիս, է ՚ի պատիւ վասն լինելոյ նորա ՚ի դասակարգութենէ նախահարցն քոնի։ Վասկայն այլք ոչ հաւանին ընդ այն. և առ լուծումն առաջնոյն բերեն զսովորութեն զոր գրոց, որ ուրեք ուրեք զամբողջական կամ զսովորական թիւն ՚ի կիր առնու փակելով ՚ի նմա և զմնականն. ըստ այսմ փոխանակ ասելոյ ըզսեմ հարիւր և երկուց ամաց, ասէ հարիւրեմեակն։ Իսկ առ երկրորդն ասեն, չէ մարթ ՚ի բանէ անտի գրոյն հաստատել զերիցագութենէ յաբեթի, զի երեքդանուն անդ միապէս անկանի ՚ի վերայ սեմայ, որ-

պես և յաբեթի. մանաւանդ թէ առաւել՝ի վերայ սեմայ. զոր և յայլ թարգմանութենէ չէ մարթ հաւաստել, զի և՝ի նոսա անորոշ դնի: Այժմ ըստ երբայեցւոց եկեալ ընդ ժամանակս երկուց մեծաց հարուածոց, որով հեղ ՚ած գցաւսուն բարկութեանն իւրոյ՝ի վերայ մեղաւորաց. եւ ես զքէհեղէնն, յորմէ ապրեցաւ՝ի ձեռն տապանին. կայր կենդանի և՝ի ժամանակս հրկիզութենէ սոդոմայ. զորոյ դուցէ լուաւ՝ի հայաստան զգոյժն զարհուրելի:

Աբրահամ ըստ եօթանասնից թարգմանութեանն՝ էր հարիւր երեսուն և հինգ ամաց, և ծնաւ զկայնան. և կայնան հարիւր և երեսուն ամաց՝ ծնաւ զսաղայ. ծն. ժ. 12. 13: Իսկ երբայականն, որպէս և լատին վուլկատային զամս արփաքսադայ մինչ և՝ի ծնունդ սաղայի, որպէս և զամն յառաջ քան զորդեծնութենէն այլոց նահապետաց որ գկին, նուաւ զեղուկեանն յոյժ: Օ՛ի զարփաքսադ դնեն ամաց երեսուն և հնգից, յորժամ ծնաւ զսաղայ. իսկ գկայնան քնաւ ոչ ընթեռնուն. որ կայ յօրինակս հինչ եօթանասնից, և մեր. և՛ս առաւել՝է ա. հաց. ա. 18. ուր ասի. *Աբրիաքսադ ծնաւ զկայնան. կայնան ծնաւ զսաղայ||: Այս տարբերութենէ երբայականին դժուարութենէ մեծ բերէ մեկնչաց՝ի պատճառս կայնանայ՝ ոչ միայն սակս վկայութենէ եօթանասնից, այլ առաւելապէս, զի և սքէն ղուկաս դնէ գկայնան՝ի կարգս նախահարց քոյ. գլ. ե. 36. *Որ կայնանայն, որ արփաքսադայն, որ սեմայն||:

Արդիւնք՝ զի գրոց՝ի լուծանել զդժուարութիս, այլընդ այլոց շարէր կալան: Ոմանք համարեցան՝ի գրչաց յաւելեալ՝ի թարգմանութենէ եօթանասնից. զի տեսեալ ասէն գկայնան՝ի ծննդեանութենէ սեթայ յառաջ քան զքէհեղէլ, անխորհրդաբար յաւելին և աստ զայլ ոմն ինքնաստեղծ կայնան: Այլք ընդ հակառակն՝ համարին՝ի հրէից բարձեալ լարամտութենէ յերբայական բնագրէ, առ նուազելոյ գյարգ եօթանասնից, և զաւետարանին սքէնն ղուկասու: Ոմանք գկայնանդ անուն

համարին մնկանուն սաղայի, զոր Հօթանասունքն
սահն յաւելին ՚ի բացայայտութիւն. ուստի ըստ սո-
ցա կարծեաց կայնան և սաղայ նոյն են: Այն ևս
որք ասեն, թէ մինչեռ խորհրդով ՚ի բաց Հթողլ
զկայնան, կամեցեալ զԼիւ տան աղգաց կամ ծննդ
դոց պահել ՚ի նոյէ մինչև յաբրահամ փաղաւուս
թիւ, որպէս յադամայ մինչև ՚ի նոյ. զորօրինակ
սահն սունէ մնաթեղոս աւետարանիչ ՚ի ծննդաբա-
նութեան քրիս. զի առ ՚ի պահել միապէս զԼիւ չո-
րեքտասան ազգաց յաբրահամէ մինչև ՚ի դաւիթ,
՚ի դաւիթ մինչև ՚ի գերութիւն բաբելացւոց, և ՚ի
գերութենէն մինչև ՚ի քրս, ՚ի բաց Թողլս զմինսս ՚ի
նախահարց:

Այս ամենայն կարծիք և մեկնութիւնք ոչ
Հթէ լուծանէն, այլ յաւելուն զդժուարութիւնն՝
պատճառս տալով զանազան անտեղութեց: Ա
ման որոյ այլք պահելով զյարգ անցիւիւր Թարգմանու-
Թեանց, ասէն Թէ Հբրայականն՝ որպէս և լատին
վուլկադայն՝ ըստ յաՀաէ սովորութեան Հբ գրոց,
աստէն ՚ի հաւայն ընդոստ անցանէն ՚ի Թոռն,
լռելով զորդին. ուստի և տան մեզ ոչ զանգիջա-
կան, այլ զմիջնորդական ծնունդ արփաքսադայ:
Այ զի մի այլայլեսցի ժամանակագրութիւն Հբրայա-
կանին և լատին վուլկադային, որք դնեն զարփաք-
սագ Հրեսուն և հինգ ամաց՝ յորժամ ծնաւ զսա-
ղայ, մարթ է ասել՝ Թէ արփաքսագ Հլով ուԼև-
տան ամաց՝ ծնեալ Հցէ զկայնան. և կայնան ՀօԹն
և տան ամաց ծնեալ զսաղայ. և մեռեալ կայնա-
նայ՝ մինչդեռ մատաղ մանուկ Հր սաղայ, արփաք-
սագ հաւ նորա մնուցեալ Հցէ զսաղայն ՚ի տեղի
անմիջական հօր նորա: Այս խորհրդածութիւն Հրևի
համաձայն բնական կարգի առանց բռնաբարելոյ
գոր գիրս, և առանց բերելոյ Հրևելի անտեղու-
Թիւն ինչ: Ասկայն և այնպէս ոմանք դժուարահա-
ւան են այնմ՝ սակս կարի վաղվաղելոյ զորդեծնու-
Թեանց արփաքսադայ և կայնանայ: Այլ փոքր է այդ,
քան ասել Թէ Հօթանասունքն, և առաւել Թէ
սՀն զուկաս զմն սուտանուն մուծեալ Հցէ ՚ի կարգ

նախահարց քսի ։ Այլ ժամանակագրութիւնն եօթանասնից բառնայ և զայդ կարծեցեալ անտեղութիւն, տալով արիաքսադայ ամն կենաց Հարիւր երեսուն և հինգ՝ յորժամ ծնաւ զկայնան ։

Յետքս վասն այսոցիսի դժուարութեանց՝ մի ոմն արդի մատենագիր անանուն քաջուժ աշխատութիւն նոր գրութիւն ժամանակագրութեան հնարեալ, յոգածմոյ մինչև ՚ի ջրհեղեղ զկետ երեքայ իւրեանց լատին թարգմանութեանն ՚ի հարիւրամեայ կենացն նահապետաց, Իսկ զկնի ջրհեղեղին մինչև ցաբրահամ՝ թողեալ զլատինն, առնու ՚ի ձեռին զթարգմանութիւնն եօթանասնից, յորմէնայն ազգս և ՚ի ծնունդս ամն հարիւր յաւելեալ. և կայնանայ տայ ամն հարիւր և երեսուն յառաջ քան զծնունդ սաղային ։ Նոյնպէս ՚ի ջրհեղեղ մինչև ՚ի ծնունդ աբրահամու յաւելու ութ հարիւր և երեսուն ամն ՚ի թիւ ամաց աշխարհի ՚ի վերայ ամաց լատին թարգմանութեանն ։ Սակայն որպէս ՚ի բանից նորա իմաստասիրի կաղինոս, բովանդակ կամ գլխաւոր պատճառն թողլոյ նորա զիւրեանց թարգմանութենէն և զհետ երթալոյ յայսմ մասին եօթանասնից՝ այս է, զի թերեւս նմա՝ թէ ամք նահապետաց ըստ տայ նոցա լատին թարգմանն, կարի սակաւ են առ հաւանմանութիւն ոչ եօթանասնից՝ զորմէ չէ այնչափ փոյթ նմա. քանզի այլուր համարձակ ՚ի բաց թողու, այլ արտաքին մատենագրաց, և մանաւանդ հեթոդոտոսի, առ որ յաբեալ է յոյժ ։ Այլ ինքն գովելով ուղղափառ՝ զի մի երևեսցի հակամէծար առնել զվկայութիւն առն հեթանոսի՝ քան զիւրեանց լատին թարգմանութիւն զհաստատեալն ՚ի սըկ եկեղեցւոյ, նոր իմն հնարէ. ասելով թէ առ իւրաքանչիւր թիւ ներգործութիւն նշանակեալ ՚ի լատին թարգմանութեանէ, պարտ է միշտ իմանալ հաւրիւրեակ մի յառաջ, այսպէս. Աւրիաքսադ գոլով ամաց երեսուն և հնգից, այսինքն հարիւր երեսուն և հնգից, ծնաւ զսաղա ։ Սաղա գոլով ամաց երեսնից՝ այսինքն հարիւր և երեսնից ։ Այս այսմ իմա-

Նալի է և՝ ի յաջորդս։ Այլ եթէ հարցանիցես, թէ ընդէ՞ր այսպէս պարտ է իմանալ, տայ պատասխանի. վասն զի հարիւրն եղաւ՝ ի սկզբան անդ՝ ուր ասացաւ վասն սեմայ. * Կիմ հարիւրեակեան էր, յորժամ ծնաւ զարփաքսագ ։ Այլ սա՝ ի տալ վճռանականութէն ինն այսմ բռնական մեկնութեան իւրում, բերէ օրինակ զսովորական եղանակ խօսելոյ և գրելոյ մերդկան. զի եգեալ միանգամ զբոլորական թիւն, յետ այնորիկ չընթացաս բանին ոչ ևս կրկնեն զայն՝ ի ձանձրոյթ. այլ ենթադրեն կիճ զօրութէ իմանան։ Օրինակ ինն, յասելն թէ յամի տեառն 1813. այս ինչ պատերազմ սկսաւ. ՝ի վերջն առաւ այս ինչ քաղաք. ՝ի տասն եղև հաշտութէն. հազար ութ հարիւրն միշտ զօրութէ իմանի, թէպէտ և չդնիցի ներգործութէ ։ Այլ այդ եղանակ հաշուի օտար է գլխովին յածային գրոյն. զի ոչ ուրեք գտանեմք զմանական թիւն դնել ներգործութէ, և զբոլորականն թողուլ զօրութէ. այլ ընդ հակառակն՝ զբոլորականն դնել ներգործութէ, և զմանականն թողուլ իմանալ. որպէս փոխանակ ասելոյ հարիւր և մի, հարիւր և երկու, զհարիւրն դնէ. իսկ զմի, կամ զերկու թողու. որ իմանի՝ ի պարագայիցդ ։ Օրինակն է՝ ի վերայ միոյ գործողութէ չարունակելոյ՝ ի միում թուականի. իսկ բան գրոյն՝ ի վերայ հասակաց զատանան անձանց ։ Այժմ գրութէան կամ կարծեաց բաժնէք ընդդիմաբանել կաղինոս իբր բռնաբարողի ճշմարիտ գրոյն, ՝ի ընորս արտաքին մատենագրաց ։ Այլ անաչառ խոսելով՝ ոչ այնչափ արտաքին մատենագիրք երևին պատճառ այսմ, որչափ օրինակ ստմարացուց, որ միաբանի ընդ եօթանասնից՝ ի հաշիւ ամաց ծննդոցն յետ ջրհեղեղի ։

ԳԼ. Ը.

Բաժանումն մարդկան. Աշխարհակալութիւնք. և Տէրապետութիւնք նեբրովէայ։

Յետ ջրհեղեղին՝ ի բազմանալ մարդկան՝ ի հայաստան աշխարհի, մինչև ջաւելոյ երկրին այնչափ բազմութիք՝ ի միասին բնակելոյ, ստիպեցան ելանել սփռիլ յայլևայլ կողմանս աշխարհի՝ խնդրել ինքեանց տեղի բնակութիք։ Այն որք համարին, թէ այն չոս նոցա եղև՝ ի հրամանէն ՚ով. զի չէ ասէն հաւանելի այնչափ բազմութիք մարդկան ինքնահաճած կամակար ազատասահման լինել՝ ի քրիկ հայրենեաց։ Այլ չգտանեմք՝ ի ՚ով գիրս հինն, կամ նորն լինչ այդպիսի հրամանի. և չէր իսկ հարկ, քանզի այս պայման է մարդկային հետաքրքրող բնութիք, ի ընկէն աշխարհաց ելանել, և փոխագրել զբնակութիքն անդ, ուր լաւ և կարիցեն հայթհայթել զգարման կենաց։ Այլ և այս անձկութիք երկրին ինքնին բռնադատէ՝ ի բաժանումն. որ գիտէ բազում անգամ և զհարազատ եղբարս հեռացուցանել՝ ի միմեանց. որպէս տեսանեմք յաքրահամ և ՚ի ղովտ, որք առ չջաւելոյ երկրին բնակելոյ նոցա ՚ի միասին, սակս բազմութիք անասնոց իւրեանց, մեկնեցան ՚ի միմեանց։ Օրնոյն ընթերնումբ գիպեալ և յետ այնորիկ բազում անգամ. որպէս ահա հնոք, և գութք առ անձկութիք տեղւոյ առաջինն բնակութիք իւրեանց, գաղթեալ բազմութիքն՝ կալան զայլևայլ տեղիս. և ՚ի գերմանացւոց վասն նորին պատճառի հատուածեալք գիմեցին ՚ի գաղղիա, և ՚ի կղզիս բրիտանիոյ։ Այս պատճառք՝ առանց նոր հրամանի՝ բաւական եղեն ցրուել զմարդիկ զկնի ջրհեղեղին յայլևայլ կողմանս աշխարհի։

Այս բաժանումն եղև յաւուրս ծննդեանն փա-

ղեկայ. որպէս յայտնապէս քաղի 'ի գրոյն. ուր խօսելով վասն փաղեկայ, որ ծնաւ յայնմ ամի՝ ասէ. Թէ եբեր հայր նորա եդ նմա անուն փաղէկ, որ նշանակէ բաժանումն. * Օ ի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր ||. ԾՆՆ. ՃԼ. 25: Այսպա այս բաժանումն եղև մինչ նորածին էր փաղէկ. յոր սակս այս անուն եդաւ նմա: Սակ Թէ աստ խօսի գիրն վասն բաժանման մարդկան, և ոչ լոկ երկրի, յայտ անտի է, զի ասէ. * Ի սոցանէ մեհենեցան կղզիք ազգաց յերկրին իւրեանց: Չէտ այնորիկ սփռեցան ազգք քանանացւոց: Ի սոցանէ սփռեցան կղզիք ազգաց 'ի վերայ երկրի յետ ջրհեղեղին ||: Այսպէս պատմէ 'ի տասներորդ գլուխ ծննդոց, ուր ասաց. * զի յաւուրս նորա բաժանեցաւ երկիր ||: Այլ անմիջապէս 'ի յաջորդ գլուխն, ընթեռնումք, * Այս էր ամենայն երկիր՝ լեզու մի և բարբառ մի ամենեցուն ||. յայտ է Թէ ոչ բնական երկիրն, այլ մարդիկ երկրի: Այսպա բաժանումն եղեալ յաւուրս փաղեկայ՝ եղև բաժանումն մարդկան, և ոչ միայն երկրի:

Այլն բազմութիւն մարդկան 'ի հայաստանեայ միաբանութեամբ և միախորհուրդ՝ կանամբք, և որդովք և անանունովք իւրեանց, և դիմեցին ընդ արևմտեան հարաւ. առանց դնելոյ 'ի մտի 'ի սահմանեալ տեղւոջ ուրեք զտեղի առնուլ. զոր և կարէին իսկ ոչ, քանզի յետ բնաւ տեղեկութեան վասն հանգամանաց երկրի յետ ջրհեղեղին յայլ կերպարան փոխելոյ. այլ խաղալ յաւուրս ընդ ամայի անբնակ ընդարձակութեան վայրաց, և զտեղի առնուլ ուր ուրեք հաճոյ թուեսցի: Այս հասեալ 'ի լայնածաւալ դաշտս սենաարայ, անդ զտեղի առին. * Այս գտին (ասէ՝ որ գիրն) դաշտ մի յերկրին սենաար, և բնակեցան անդ ||. ԾՆՆ. ՃԼ. 2: Այս բնակութեան յոմանս եղև խորհրդով անդ մնալոյ. իսկ յայլս՝ յաւուրս խաղալ ապա անտի ըստ բերելոյ պատեհութեան:

Այլ յաւուրս քան զբաժանիլ 'ի միմեանց, հաստատեցին Թողուլ յաչխարհի նշանակ մեծի կարգ

զուԹԵ, զոր ունէին, մինչդեռ միացեալ էին։ Այս խորհեցան շինել անդ քաղաք և աշտարակ երկնաբերձ, կամ քաղաք բարձրաբերձ աշտարակօք։ * Այսպէս (ասեն) շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ, որոյ լինիցի գլուխ մինչև յերկինս. և արասցուք մեզ անուն, յառաջ քան զսփռիլ ի վերայ երեսաց ամենայն երկրի ։ ծնն. ժա։ 4։ Այսպէս զակի ձեռն ի գործ արարին Թրծել աղիւս առ ի չգոյէ քարի ի կոզմանս յայնոսիկ. և կուզը, զոր բերէ երկիրն, փոխանակ կրոյ։ Այլ այն ինչ բազում չարաղուԹԵ և արպուԹԵ գործեն յառաջադիմել լինելը, ղն մի լեզու էր և մի բարբառ ամենեցուն, և մի խորհուրդ, յանկարծակի ինն շփոԹեաց ահ ի միտս նոցա զնահանի տեսակս և զգաղափարս բառից. որով ոչ ևս իմանային զբարբառ միմեանց։ Այս շփոԹումն և խառնակուԹԵ լեզուաց, յորմէ և տեղին անուանեցաւ Բաբէլն, բաւական եղև ցրուել զընդունայն խորհուրդ նոցա, և զգործն յիմարուԹԵ խափանել, միանգամայն և ուսուցանել մեզ, Թէ բազմուԹիւն ոչ երբեք կարող է ի գլուխ հանել զգործ ինչ մեծ՝ եԹէ չկեցեն համաձայն և միախորհուրդ։

Այլ ի խառնակիլ անդ լեզուացն, ոչ եԹէ իւրաքանչիւր մնաց նոր լեզու ստացաւ. ապա Թէ ոչ էր հնար նոցա միաբանիլ յիւրաքանչիւր տոհմն. այլ խառնակուԹիւնն եղև հանդարտական, և ապա սկիզբն նորանոր լեզուախօսուԹԵ ըստ տոհմից. որպէս յուցանէ ՚ի գիրն ՚ի գլ. ժ. ուր խօսելով վասն բաժանմանն մարդկան և երկրի, * Այսոցանէ (ասէ) մեհնեցան կղզիք ազգաց ... իւրաքանչիւր ըստ լեզուս յազգս իւրեանց, յաշխարհս իւրեանց, և ՚ի տոհմն իւրեանց։ Այս * սոքա են որդիք սեմայ, յազգս իւրեանց, ըստ լեզուս իւրեանց, յաշխարհս իւրեանց, և ՚ի տոհմն իւրեանց։ Յորոց յայտնի երևի՝ Թէ այլայլուԹԵ լեզուաց եղև առաւել ըստ տոհմից նոցա։ Այն որք ասեն, Թէ ՚ի բաբելական խառնակուԹԵ անտի եօԹանասունն և երկու լեզուք ծնան յաշխարհի, ըստ եօԹանասնից և

երկուհասկեւտաց կիմանձանց, զորս յիշէ՝ ըզ գիրն
՚ի գլ. ՟ժ. ՟ծՆն. խօսելով վասն բաժանման մարդ-
կան։ Ա՚յլ յուսնիմք ՚ի ըզ գրոց՝ թէ նոյ և որդիք
նորա սեմ, քամ, և յաբեթ մեկնեալ էցեն յերկրէ
առաջնոյ բնակութենէ իւրեանց. և ոչ կամիմք հա-
ւանութիւն ընծայել հեղինակին առասպելաց,
որք զնոյ անուամբ կռնոսի, և զյաւան զորդի յա-
բեթայ՝ անուամբ յանոսի ածեն յերօպիա. և տան
յաւանայ երկուս երեսս. և զնոյ յայն յետին սով
հասուցանեն՝ մինչև ուտել զորդիս իւր։

Ա՚յն զի յայտնի ևս երևի, թէ և այլք բազումք
՚ի ծառանց նոցա մնային անդ ընդ նոսա. ուստի
և ոչ գտան անդ ՚ի չինուեցեն աշտարակին. վասն
որոյ և բնիկ լեզուս նոցա մնաց անխառն. որ ըստ
առաքելոյ հաւանելի պատճառաց էր լեզուն հայկա-
կան. ՚ի սոյն միտս է բաց ՚ի մերոց, նաև կեսար
կաղինոս ՚ի կարգէ չորեքանց՝ ՚ի գիրս իւր կոչեցեալ
Պարատուին պատմական և ժամանակագրական
հին կտակարանաց, գէր՟. ՟Բ. գլ. ՟ի։ Ա՚յս ևս բազումք
՚ի սերնդոց անտի նոյին, որք յիշատակին ՚ի գլ ՟ժ.
ծՆնդոց, ՚ի ժամանակի բաժանման չէին ծնեալ.
ուստի նոքա ոչ բազմայուսին զլեզուս, այլ ուսան
զլեզուս հարց իւրեանց։ Ա՚ան որոյ չէ հարկ և
ոչ օգուտ անպատճառ բազմայուսանել զթիւ մայր
լեզուաց. զի և այժմ իսկ զինի այնչափ դարուց,
եթէ չնաւիւ քննեսցուք, և ոչ կիսով չափ գտանեմք
մայր լեզու. իսկ այլք առհասարակ ոչ այլ ինչ են,
եթէ ոչ ածանցմունք բազմապատիկ խառնուեցեալ
՚ի նախնի մայր կիմ սկզբնական լեզուաց անտի։

Վ՚ասն և առաջնորդ անմիտ առաջարկուեցեալ շի-
նուեցեալ բաբելական աշտարակին էր նեբրովթ որդի
քուշայ Թոռն քամայ, այլ ս՚այաձև՝ խրոխտ և ամ-
բարտաւան, զորմէ ասեն ՚ըզ գիրքք, * Ա՚ր սկայ որ-
սորդ առաջի տեառն այ։ ՟ծՆն. ՟ժ. ՟ց. այսոհետև այլ
քաջամարտիկ վարժեալ ՚ի մեմռնս ընդդէմ երկոց.
զի ցայն վայր ոչ գոյր մարտ ընդ մարդոյ. կամ ըստ
ոմանց աւազակ բռնամարտիկ, որ բռնութեամբ և
խաբէութեամբ որսացեալ զմարդիկ, հօրդևաց ինքեան

Ձանապարհ բռնակալել՝ի վերայ նոցա. որով գնախ նի հայրական և տնտեսական կառավարութիւն փո խեաց՝ի միապետութիւն, հաստատեալ զաթոռ իւր անդ՝ի բաբելոն. և շինեաց անդ զերիս քաղաքս, զարեդ, զաքադ, և զբաղանէ՝ի վերայ եփրատ գետոյ, որպէս և զբաբելոն յեզը այնը գետոյ։ Օ սա արտաքին պատմիչք կոչեն զնմ, նախահայր նինոսի՝ ասորեստանեայց ինքնակալի, և սկզբնա պատճառ կռապաշտութեան. զորմէ բազում ինչ առասպելեն ազգքիք եբրայեցւոց. այլ մեզ չէն կամք յայնպիսիս պատաղիլ։

Աստանօր ըստ եբրայական ընթերցուածոյ, և ըստ կարծեաց այնոցիկ՝որք զբել դնեն պարզապէս հայր նինոսի, ընդառաջ ելանէ դժուարութիւն ծանր, թէ զիարդ սակաւ ամօք զկնի ջրհեղեղի կա րացին մարդիկ այնչափ բազմանալ, մինչև հիմնել սղգս և ազինս՝ի զանազան կողմանս երկրի, և առ նինոսիս և շամիրամաւ մինել պատերազմունս մեծամեծ բանակօք բիւրաւոր զօրաց մինչև՝ի հընդիկս։ Օ այս կնձիռն համարին լուծանել պետա ւիոս և կաղինոս այլովքն հանդերձ՝ դնելով զսե ռունդ որդւոց մարդկան՝ի ժամանակին յայմիկ՝ի վեր քան զտովորականն։ Այլ բառնայ զամենայն դժուարութիւն՝ օրինակն սամարացւոց և Թարգմա նութիւն եօթանասնից, ըստ որոց ընդարձակ է յոյժ միջոցն՝ի ջրհեղեղէ մինչև՝ի նինոս և յաբրահամ։ զնոյն հաստատէ և աբիւդենեան աւանդութիւն՝ի մէջ արտաքնոց, թէ նինոս ոչ էր որդի բելայ, այլ Թուն Թուանց բելայ։

Գ. Լ. Լ.

Ծննդեան Աբրահամու։

Ի վերայ ժամանակիկ ծննդեան աբրահամու յերկու կարծիս բաժանեալ են մեկնիչք ածաղուսէ որք գրոց։ Այլ գիրն ի ծննդոց գլ. ժա. 26. ասէ. * Եւ եկեաց Թարայ զամն եօթանասուն, և ծնաւ զաբրամ, զնաքովը, և զառան ։ Այս բառք ի բնական և ի դիւրիմաց միտս առեալ՝ նշանակեն, թէ Թարայ դոլով ամաց եօթանասնից, ծնաւ զաբրահամ, ապա յայնժորդաբար զնաքովը, և զառան։ Հաղումք յայս բան հիմնեալ՝ պնդեն, թէ աբրահամ ծնաւ յամի եօթանասներորդի կենաց հօր իւրոյ. և յամի արարչութեն աշխարհի 1949։

Իսկ այլք նոյնպէս բաղումք՝ 60. ամաք յետոյ դնեն ծննդեանդ աբրահամու. այսինքն յամի կենաց Թարայի հարիւրորդի և երեսներորդի. առեալ ինքեանց օժանդակ զբան սիրն Ստեփաննոսի. որ յառեղաբանել իւրում առաջի քահանայապետին, ասէ վասն աբրահամու. * Յայնժամ ելեալ յերկրէն քաղդէացւոց՝ բնակեցաւ ի խառան. և անտի յետ մեռանելոյ հօր նորա, փոխեաց և պանդ խտեցոյց զնա յերկիրս յայսմիկ, յորում դուք այժմ բնակեալ էք ։ գործ. է. 4։ Այսպս ըստ այսմ բանի, աբրահամ էլ ի խառանէ պանդխտիլ յերկիրն քանանացւոց յետ մահուան հօր իւրոյ. և ինքն էր յայնժամ եօթանասուն և հինգ ամաց. որպէս յայտ է ի ծնն. ժէ. 4. իսկ Թարայ եկեաց ամս երկերիւր և հինգ. յորմէ հանեալ 75. մնայ 130. ապա Թարայ էր ամաց հարիւր և երեսնից, յորժամ ծնաւ զաբրահամ։ Այս այս չէ ինչ ընդդէմ ասէն նախապարգեալ բանից գրոյն. զի անդ ոչ եթէ սահմանաբար դնէ մովսէս զամն Թարայի ի ծնանել նորա զաբրահամ, այլ զայս ևեթ կամի ասել, Թէ յոր-

ժամակաւ Թարայ ծնանել զորդիս՝ եր ամաց եօ-
Թանասնից. վասն որոյ ինայ միշտ ձգմարիտ բան
ՅԵ գրոց, Թէև Հարիւրեւհան ծնալ էր Թարայի
զնոսա։

Ա. ՈՐ պատասխանեն պաշտպանք առաջին
կարծեաց՝ 'Ալա' այդ եզանակ խօսից անդէպ է
ամենևին. որպէս Թէ ասէաք. այս որ էր քան
ամաց՝ յորժամ ամուսնացաւ. Թէպէտ քառաս-
նամեան ամուսնացեալ իցէ։ Աբրահամ՝ աղաւա-
ղի ժամանակագրութիւն ՅԵ գրոց. որ ընդ ք-
վանդակ կարգ նահապետաց յատամայ մինչև գյակոբ,
ժամանակագրութիւն իւր դնէ 'ի ծնանելոյ Հարց
զորդիս. Ա. կեաց և ծնաւ։ և դարձեալ էկեաց և
ծնաւ։ Ա. յս է չափ ամաց և ժամանակի նահապե-
տաց։ Ա. պա Թէ Համարիցիմք պահել զայսպիսի
չափս, Թէպէտ և Հարք ծնեալ իցեն զորդիս բա-
զում ամՅք յետոյ քան զամն նշանակեալս 'ի ՅԵ
գիրս, ոչ ևս մնայ մեզ այնուհետև Հաւաստի ինչ
կէտ իմանալոյ զչափ ժամանակագրութեանահապե-
տաց, չունելով 'ի գիրս զայլ հինն։

Ա. ԱԿ առ բացատրութեի բանին ՅԵրն ստեփաննո-
սի պատասխանեն։ Աբրկիցս եղև յոյն պատուէր առ
աբրահամ. նախ ելանել յերկրէ և յազգատոհմէ
իւրմէ. երկրորդ՝ զնոի բազում ամաց՝ ելանել և 'ի
տանէ Հօր իւրոյ։ Ա. ռաջին պատուէր եղև առ նա,
մինչդեռ յերկրին քաղդէացւոց էր՝ յայնմ մնալոյ,
որ 'ի ժամանակս սՅն ստեփաննոսի միջագետք
կոչիւր։ Ո. այս պատուէր ոչ յիշէ մովսէս, այլ պատ-
մէ միայն զգործագրութիւն. բայց յիշէ ստեփան-
նոս լուսաւորեալ 'ի Հոգւոյն Ա., ասելով. * Ա. Ն
փառաց երևեցաւ Հօր մերում աբրահամու, մինչ-
դեռ 'ի միջագետս էր, մինչև բնակեցեալ էր
զնա 'ի խառան. և ասէ ցնա. Ել յերկրէ քումմէ
և յազգէ քումմէ. և Ել յերկրէ զոր ցուցից քեզ ‖.
գործ. Ը. 2. 3։ Ա. ստէն երկու լինչ նկատելի են.
որով այս առաջին պատուէր զանազանի յերկրոր-
դէն՝ որ յետոյ տուաւ։ Ա. ռաջին պատուէրս այս
տուաւ նմա յերկրէն քաղդէացւոց յառաջ քան

զընակել նորա ՚ի խառան . իսկ երկրորդն տուաւ նմա անդ ՚ի խառան ։ Յառաջնումն հրամայէ նմա ելանել յերկրէ և յազգէ իւրմէ . իսկ յերկրորդումն հրամայէ ելանել միայնել և ՚ի հօրէն ։ Զդ՝ առեալ աբրահամու զառաջինն պատուէրը յերկրէն քաղդէացւոց , վազվազակի եդ ՚ի գործ . * Յայնժամ (ասէ ստեփաննոս) ելեալ յերկրէն քաղդէացւոց , բնակեցաւ ՚ի խառան ։ Զայս պատուէրը թէ լեալ իցէ և առ թարայ հայր նորա , չէ յայտ . բայց յայտնի է , թէ նա կամ վասն այսր հրամանի , և կամ վասն չժուժելոյ բաժանիլ յորդւոյ իւրմէ , գնաց ընդ նմա . ածեալ ընդ իւր և զղովա զթոռն իւր զորդի առանայ արդէն վախճանելոյ ։ * Զոր ետու (ասէ մովսէս) թարայ զաբրամ զորդի իւր , և զնաքովր զորդի իւր , և զղովա զորդի առանայ որդւոյ իւրոյ . և զսարայ զնու իւր զկին աբրամու որդւոյ իւրոյ , և եհան զնոսա յաշխարհէն քաղդէացւոց երթալ յերկիրն քանանացւոց . և եկին մինչև ցխառան , և բնակեցան անդ ։ ԾՆՆ . ԻԲ . 31 ։

Այնչափ ցաստ ստեփաննոս և մովսէս միաբան են . եթէ ոչ՝ զի յերն ստեփաննոս նշանակէ զպատուէրն այ առ աբրահամ , զոր մովսէս լուէ . և մովսէս նշանակէ զերթ թարայի և զղովայ ընդ աբրահամու ՚ի խառան , զոր ստեփաննոս զանց առնէ . որով մին լուսաւորէ զմիւսն , և ոչ մթացուցանէ ։ Զդ՝ եկեալ նոցա ՚ի խառան , յայտ է թէ ընդերկար ժամանակ կացին անդ . զի ասէ յերն զերն , * Զոր բնակեցան անդ ։ այսինքն անդ հաստատեցին զընակութիւն իւրեանց ։ Այնչափեւ բնակէը աբրահամ ՚ի խառան ընդ հօր իւրում , եղև առ նա երկրորդ անգամ պատուէր յայ ելանել հեռանալ և ՚ի հօրէն . * Զոր ասէ ած ցաբրամ . Էլ դու յերկրէ քումմէ , և յազգէ քումմէ , և ՚ի տանէ հօր քոյ . և Էկ յերկիրը , զոր ցուցից քեզ ։ ԾՆՆ . ԻԲ . 1 ։ Խառան եղև տեղի բնակութիւն աբրահամու . ուստի և հայրենիք նորա . վասն այն ասէ՝ յերկրէ քումմէ , և յազգէ քումմէ . այսինքն յեր-

քարոյ և յերեսորդւոյ, ոլք անդ ծնեալ էին, և՛ի տանէ հօր քոյ. քանզի կամէր ՅԱԾ՝ զի և՛ի հօրէն բաժանեսցի։

Հնազանդեցաւ աբրահամ, գոլով յայնժամ եօ թանասուն և հինգ ամոց, որպես ասէ Ըբր գիրն. և գնաց պանդխտեցաւ յերկիրն քանանացւոց. ապա յեգիպտոս. անտի վերստին ՚ի քանան, որպէս ընդ արձակ պատմի ՚ի գիրս ծննդոց ՚ի ՃԵ. և ՚ի ՃՁ գլխոյս։ Իսկ այն ժամանակս ծնան աբրահամու որդիք և մեծացան. և հարստացաւ աբրահամ ընդ ջիւք. և հուսկ ուրեմն մեռաւ Թարայ հայր նորա ամաց երկերիւր և հնգից։ Իսկ աբրահամ հաստա տեաց զընակուԹի իւր յերկիրն քանանացւոց յա նապատան, ուր էր խորան նորա զառաջինն ընդ բե Թել և ընդ անգիէ։ Իբդ՝ լուիցուք սկիզն ստե փանոսի. * Իսկ անտի յետ մեռանելոյ հօր նորա, փոխեաց և պանդխտեցոյց զնա յերկիրս յայսմիկ, յորում դուք այժմ բնակեալ էք ‖։ Իստ գիտել պարտ է, զի մակբայդ Ա անդ՝ ոչ է լոկ տեղա կան, այլև ժամանակական. որպէս է տեսանել և ՚ի գործ. ՃՁ. 21. ուր ասէ Ըբն պօղոս. * Իսկ անտի յառաջ խնդրեցին Թագաւոր ‖, յայտ է Թէ յետ այնորիկ։ Իայն որոյ և աստ չէ պարտ առնուլ զնոյն մակբայն իբր տեղական, որպէս Թէ ասել, յայմ տեղւոջէ. այսինքն ՚ի խառանէ, այլ իբր ժամանակական, այսինքն զվերն այնորիկ։ Իրով կամ ասել, Թէ յետ մեռանելոյ հօր նորա, փո խեաց զնա ՅԱԾ յայս տեղի։ Իսկ յիրաւի մարԹ է ասել՝ Թէ յայնժամ փոխադրեալ էր աբրահամ անդ. վասն զի յայնժամ միայն հաստատուԹիւն հիմ նեաց աբրահամ զընակուԹի իւր յերկիրն քանա նացւոց։ Յորմէ յայտնի տեսանի Թէ աբրահամ Թէպետ ղ ամաց էր, յորժամ մեկնեցաւ ՚ի խա ռանէ. այլ յորժամ մեռաւ հայր նորա, էր ամաց հարիւր երեսուն և հնգից։

Իմանք այլազգ ևս իմանան զնախագրեալ բան սբզն ստեփանոսի։ Իսէն, Թէ աբրահամ գոլով եօԹանասուն և հինգ ամոց, որպէս զնի ՚ի ծննդ.

ձէ. 4. Եւ՚ի խառանէ և՚ի տանէ հօր իւրոյ, և գնաց պանդխտեցաւ յերկիրն քանանացւոց։ Ա՚պա զկնի բազում ամաց լուեալ զհօրեղբայրէ հօր իւրոյ, դարձաւ անդրէն՚ի խառան ինքնին առանց ընտա-նեաց, լինել առ նմա՚ի վերջին աւուրս նորա, և թաղել զնա, և առնուլ զժառանգութիւն իւր։ Այս յետ մեռանելոյ հօրն, եւ անտի երկրորդ անգամ, ոչ ևս եօթանասուն և հինգ ամաց, որպէս յառաջ-նումն, զորմէ խօսի մովսէս. այլ հարիւր երեսուն և հինգ ամաց։ Զայսմանէ երկրորդ էլից աբրա-համու սահն խօսի աստէն սկսեալ ստեփաննոս։

Ա՚յլ ընդդէմ դնեն հակառակորդք զբան սրբոյն ստեփաննոսի, զոր ասէ՚ի նախագրեալ տեղւոջ.* Այս ոչ էտ նմա ժառանգութիւն՚ի սմա, և ոչ քայլ մի ոտին. և խոստացաւ տալ նմա զսա՚ի բնակութիւն, և զաւակի նորա յետ նորա. մինչ ոչ գոյր նորա որ-դի ‖ գործ. է. 5։ Ա՚պա յորժամ պանդխտեցոյց գնա՝ ած յերկիրն, զորմէ խօսի սրբն ստեփաննոս, սբբրահամ չունէր որդիս. ուրեմն զայս պանդխ-տութիւն պարտ է իմանալ բազում ամաք յառաջ։

Պատասխանեն այլք, բանդ * ինչ ոչ գոյր նորա որ-դի ‖, ոչ անկանի՚ի վերայ բայիդ պանդխտեցոյց. այլ՚ի վերայ բայիդ խոստացաւ, որպէս յայտնի է, որոց միտ դնեն ընթերցուածոյն. զի ած ոչ միանգամ, այլ բազում անգամ խոստացաւ աբբրահամու զեր-կիրն զայն, յորժամ չէաւս ունէր որդիս. որպէս է տեսանել՚ի գիրս ծննդոց։ Այլ չէ ինչ այն, զի էլք աբբրահամու՚ի խառանէ պատմի զկնի մնհու հօր նորա. քանզի յայտնի է սովորութիւն՝ զի զրոյ՝ վճարել նախ զպատմութիւն միոյ անձին, և ապա՚ի ձեռին առնուլ զայլ. որով բազում ինչ պատմի գա-ռաջնոյն, որք յոլով ամաք յետոյ եղեն. որպէս տե-սաք՚ի վեր անդր՚ի վերայ նոյի. զորոյ զմահ հա-րիւրաւոր ամաք յառաջ պատմի։ Նոյնպէս և աստ վճարեալ զպատմութիւն թարայի, դառնայ յետս, և սկսանի զկարգ պատմութեն աբբրահամու։ Ա՚պա յայսմ առնչեալ յայտ է, թէ ժամանակ ծննդեան աբբրահամու հաստատեալ է յեօթանասնեւրորդ ամի

կենաց Թարայի. քանզի ՚ըզ գիրն ըստ Ճառին և ըստ բնական տեսութեանէ այսպէս ցուցանէ ։

Պաշտպանեք երկրորդ կարծեաց՝ ՚ի հաստատուածն Թէ դրուածէ իւրեանց, միանգամայն՝ զի և մարդ Թասցին զկեսքա զդուստր առանայ եղբօր աբրահամու տալ նմա ՚ի կնութիւն, զոր համարին նոյն ընդ սարայի, քանզի զանդրանկութեան յաբրահամ՝ դնելով զնա կրսեր ՚ի մէջ երից որդւոց Թա. րայի ։ Պատ Թէ ոչ՝ եթէ աբրահամ էր (ասեն) անդրանիկ, և տայն տմբ և եթ երից քան զկին իւր. որպէս յայտ է ՚ի ծննդ. ԺԷ. 17. զհետ գայր Թէ առան կրսեր եղբայր նորա ուրեմն կամ իննա մեան ծնեալ լիցի զկեսքայ. հնարադրեալ Թէ կեսքայ լիցի սարայ կին աբրահամու ։

Այլ՝ այնպէս հնարադրեն ըստ անհնին դրուածէ իւրեանց. քայց ոչ ցուցանեն, և ոչ երբեք կարելիցեն ցուցանել. զի ՚ի բովանդակ ածային գիրս ըստ ամենայն Թարգմանութեց, ուր բազում անգամ յիշատակի կինն աբրահամու, ոչ ուրեք երբեք կոչի կեսքայ. այլ սարայ, և դարձեալ սարայ, և միշտ սարայ ։ Պատ չգիտեմք Թէ որով հիմամբ մարթի լիցի զկեսքայ նոյնացուցանել ընդ սարայի ։ Ուրեմն՝ ըզ գրոյն, Թէ զիարդ զանազանէ զսոսա ՚ի միմեանց. * Եւ առին (ասէ) աբրահամ և նաքովր իւրեանց կանայս. և անուն կնոջ աբրահամու սարայ. և անուն կնոջն նաքովրայ մեղքայ դուստր առանայ, հօր մեղքայ և հօր կեսքայ ։ ծն. ԺԱ. 19. այսինքն աբրահամ էառ կին, և անուն կնոջ նորա սարայ. նաքովր էառ կին, և անուն կնոջ նորա մեղքայ, դուստր առանայ, որ ունէր միւս ևս դուստր կոչեցեալ կեսքայ ։ Պատ անմիջապէս դառնայ առ կինն աբրահամու, և ասէ. * Եւ սարայ էր ամուլ, և ոչ ծնանէր ։ Վկէթ ասացեալ էր, և կեսքայ էր ամուլ. այլ կեսքայ ոչ ևս բնաւ յիշատակի ուրեք ։

Ասէ Թէ որ դուստր էր սարայ, լուիցուք աբրահամու առն նորա. որ հաստատելով զասացեալն իւր յառաջագոյն, Թէ սարայ է քոյր իւր, ասէ

առաջի Թագաւորին գերարացւոց. * Կայց արդարև քոյը իմէ՝ ի հօրէ, և ոչ ի մօրէ. և եղև ինձ կին ‖ : Պա ոչ յերկօրէ, ուստի և ոչ յեբայեցի. այլ ի հօրէ իմմէ՝ ասէ, բայց ոչ ի մօրէ. վասն որոյ ոչ գոյը ի նոսա կատարեալ հարազատութեն համահայր և համամայր :

Սակս հակառակորդք : Օ խաղդ մարթ էր առնուլ աբրահամու կին զքոյը իւր, թէպէտ և ոչ ի մօրէ. որովհետև է ընդդէմ բնական օրինաց :

Յայտնէին ցուցանել, թէ այդպիսի ամուսնութեն էին ընդդէմ բնական օրինաց գէթ առաջնոց. որ միշտ և յամենայն ժամանակի անխզանելի է : Պա թէ ոչ՝ եթէ յառաջնոց անտի բնական օրինաց էր, ի ստեղծանել այդ զմարդ՝ պարտ էր երկու այր և երկու կին ստեղծանել. զի մի առաջին որդիք ադամայ ամուսնացին քոյրս առաջին բնական օրինս, առեալ ի հնութեն զհարազատ քոյրս իւրեանց : Արդարև ի գիրս զևտացւոց արգելու ՚ած եբրայեցւոց զայդպիսի ամուսնութեն. * Օ առականս քեռ քոյ՝ թէ առ ի հօրէ էիր, կամ ի մօրէ, ի տան ծնեալ, կամ արտաքոյ, մի յայտնեսցես զառականս նորա ‖. ղ. ծբ. 9 : Կայց այս եղև դրական ՚ածային օրինք, եդեալ յայ չորեքհարիւր ամաք զկնի մահու աբրահամու : Ստ նմին օրինակի արգելու անդ ՚ած առնուլ ի հնութեն զերկու հարազատ քորս միանգամայն առ կենդանութեն իւրեանց. * կին առ քեռըք իւրով մի առնուցուս նա, խանձրնդեմ յայտնել զառականս նորա առ նովաւ կենդանւոյն ‖. անդ. ՚է 18: Այս սակայն ահա յակոբ նահապետն յորժամ չև էր եղեալ այդ զայս օրինս, էառ զերկու քորս միանգամայն՝ զլիայ և զՀռաքէլ առ կենդանութեն իւրեանց :

Կայց եդեալ, այլ ոչ ընկալեալ, թէ սարայ չէր բուն քոյր աբրահամու, որմէ հիմնմբ հետեւեցուցանի, թէ ուրեմն էր գուստր առանայ եղբօր նորա. և ընդեր ոչ քոյր հօր նորա, կամ թոռն միւոմ ի հաւուց նորա. զի չէք առելի պատճառ առաջնոյն՝ քան երկրորդիս. այն զի զերկրորդս զայս

պնեալով, ոչ բռնադատին բառնալ զանդրանկութի՛ւն աբրահամու, և ոչ զծնունդ նորա յամեցուցանել մինչև ց130 ամ կենաց հօր նորա· որով և պահի անսայլայլելի կարգ և բնական իմաստ քննաքննից· * Եւ եկեաց Թարայ ամն եօթանասուն, և ծնաւ զաբրամ, զնաքովը, և զառան ||, սուղ միջոցաւ ժամանակի զկնի միմեանց։ Այս այսպէս իմանան Պետերբուրգոս, Բուլեցին, Պերերիոս, Կուռնելիոս ալափիտ· Լիւբինոս, Պետաւիոս, և այլք բազումք, յորոց համառօտեցան նախագրեալ պատճառք։

ԳԼՈՒԽ Ը·

Աբրահամ երկայ չերկիրն Խանանացւոց· և զովա եղբօրն իւր նորա ընդ նմա։ Պատ զովա մինչ՛ն ի նմանէ· և փնայ բնակի՛ն ի սոդոմ։ Որ վերն ի գերուելի, և աբրահամ ազատէ զնա։

Յամի արարչութե՛ն աշխարհի ըստ ժամանակագրաց 2024· և զկնի ջրհեղեղին 368· գոլով աբրահամ եօթանասուն և հինգ ամաց, ըստ հրամանի տեառն այ, ել ի խառանէ և յաղգէ և ի տանէ հօր իւրոյ· և անկաւ ի ձանապարհ առանց գիտելոյ, թէ յո՛ երթայցէ, և ուր գտցէ առնուցու· ըստ այմ ԵԲր· ԺԱ· 8· * Ել և գնաց (աբրահամ), և ոչ գիտէր՝ յո՛ երթիցէ ||· որպէս և յելանել նորա զառաջինն հանդերձ հարցն յերկրէն քաղդէացւոց· զի ՚ած յայնժամ ոչ յայտնեաց նմա, այլ եթող յայտնել յայլում դիպող ժամանակի։ Այս եր, որ առաւել մեծացոյց, և յարդոյ և հաճոյական ընծայեցոյց այ զմիամիտ զանկեղծ հնազանդութի՛ն նորա։ Այն զի ոչ երթայր նա միայն, կամ թեթև ընկերակցութի՛ւ սակաւաթիւ ծառայից, այլ ածէր

ընդ իւր և զսարայ զկին իւր, և զղսվա եղբօրորդի իւր, և զամենայն ընդ ծննդեան, և զծառայս, և զաղախնայս, և զամենայն ստացուածս՝ զհաշխինս, զարջառս, զուղտս և այլն, զորս ստացաւ ինքն և զղսվա եղբօրորդի նորա։ Ա.Հնարէս էհաս էր յայնժամ աշխարհս մարդաշատ, որպէս կատոյ եղև. վասն որոյ կային ի կողմանս յայնոսիկ դաշտք և անապատք ընդարձակք և անտերունչք. զորս ոմն և իցէ կարօղ էր ի պետս իւր ի կիր առնուլ, առանց անիրաւելոյ ումեք։

Ա.Յապիսի բազմամբոխ ուղեկցութիւն չուեալ աբրահամու ի խառանէ, դնաց յերկիրն քանանացւոց. ուր իբրև եհաս, երևեցաւ նմա Տէր, և խոստացաւ տալ զերկիրն զայն ի ժառանգութիւն զաւակի նորա։ Ա.Ան որոյ շինեաց անդ աբրահամ սեղան տեառն, Ա.ի յիշատակ երևելոյ նմա անդ տեառն այդ։ Ա.Ւ ելեալ շրջեցաւ անդ ընդ զանազան կողմանս նորա։ Ա.պա ի պատճառս մեծի սովուն, որ եհաս յերկիրն քանանացւոց, ստիպեցաւ ամենայն ստացուածով իւրով անցանել յեգիպտոս. ուր սովորաբար լինէին և սակս արգասաւորութեանն հողոյն ուռգելոյ ողողանօք ի կանոնաւոր առաւօտեայ նեղոսի, թէպէտ և արտաքոյ՝ նուազութեան իցէ և սով։ Ա.ի մերձենալ աբրահամու յեգիպտոս, երբ ինքեան մեծ անկաւ ի սիրտ նորա, թէ գուցէ պայծառ գեղ երեսաց սարայի՝ լոյծ նմա վտանգ կենաց, եթէ ոք յիշխանաց անտի եգիպտացւոց հաբեալ ի սէր նորա՝ կամիցի առնուլ զնա կին։ Ա.ան որոյ աղաչեաց զնա ծածկել զինեալ նորա կին. այլ ձևանալ իբրև քոյր նորա՝ որպէս և էր. և այնպէս ասել՝ եթէ ոք հարցանիցէ. զի մի վտանգ կեսցի կենանք նորա. և ինքն գացէ ընդունելութեան առաջի եգիպտացւոց ի հնորհս նորա։

Ա.մանք ստգտանեն յայսմ ճշգ նահապետն վասն երկուց. մի՝ զի ստել ուսոյց կնոջն. և երկրորդ՝ զի արկ ի վտանգ զպարկեշտութեան նորա։ Ա.յլ ի զուր են ստգտանգդ. քանզի յայտ է՝ թէ սարայ էր քոյր աբրահամու, և միանգամայն կին նորա. զա-

առաքինին ուսոյց յայտնել. իսկ զերկրորդն լռել, զոր չէր պարտական աշխարհալուր առնել. ուստի ոչ գոյր անդ և ոչ ի ինչ ստուգութիւն: Իսկ առ երկրորդն ասելն է, թէ երկու չարիք կային յայնժամ առաջի սբրահամու: Ի տանգ կենաց իւրոց, և վտանգ պարկեշտութեանն կնոջին. յորոց ոչ կարելով միանգամ մայն զերծանիլ, խոհական խորհրդով ընտրեաց զփոքրն, զի ի մեծագունէն ազատեսցի. այսինքն ի մահուանէ, որ իբր հաւաստի էր. այլ ոչ նոյնպէս վտանգն պարկեշտութեանն կնոջին: Վասնզի քաջ գիտակ էր սբրահամ առաքինութեան սբքասէր կնոջն. վասն որոյ և վստահ էր, զի թէպէտ և բռնաբարեսցի, սակայն կամք նորա հեռի գտցի ի հաւանութենէ. ուստի և գոլով ակամայ ի կողմանէ սբրահամու և սարայի, ոչ լինէր նոցա ոչ ի մեղս, և ոչ ի նախատինս: Այս ևս քաջայոյս էր սբրահամ, թէ ած որ հրամայեաց նմա զայն ճանապարհորդութիւն, անշուշտ պահեսցէ զնա յամենայն աղտեղութենէ. որպէս և եղև:

Վասնզի յառնուլ փարաւոնի զաթոյ յապտանս իւր առ ի ածել զնա յիւր կնութիւն, վաղվաղակի եհաս ի վերայ նորա, և ի վերայ համբոյնն տան նորա հարուած սաստիկ ի տեառնէ. եռացուցեալ ի նոսա կեղտ և խաղաւարտս կսկծագինս և մոլմոլեցուցիչս, որք մռայլացուցին զամուսնութենէն: Ամացաւ փարաւոն, կամ ի մոգուց իւրոց՝ որպէս համարին ոմանք, եթէ սարայ առնակին է. կամ լաւ ևս՝ ի նոյն իսկ ի սարայէ, որոյ գուցէ տեսեալ զթագաւորն ի պատուհասէ անտի խոնարհեալ և նուաձեալ, ժամ դիպոյ համարելով զայն անարատ կերծանիլ ի նմանէ, յայտնեալ իցէ զձշմարտութենէն. և կամ ըստ ոսկեբերանին, Թագաւորն ինքնին լուսաւորեալ չոյ՝ ծանեաւ զպատճառ նորատեսակ հարուածոցն: Վասն որոյ նոյն հետայն կոչեաց զաբրահամ. և մեղմով ինն կշտամբեալ զնա սակս ծածկելոյ ի նմանէ զձշմարտութիւնն, գարձոյց նմա անարատ զկին իւր: Այլ միանգամայն և զվրէժ կամելով առնուլ ի նմանէ,

եհան զնա յերկրէ յիւրմէ . թէպէտ և պատուով առանց և ոչ մի ինչ վնասու ընչից և ստացուածոց նորա , զոր ունէը յառաջագոյն , և զոր անդ ստացեալ էր : Լ.ւ զի մի զձանապարհային ձախողակ ինչ կրեսցէ յեգիպտացւոց, պատուէր ետ արանց իւրոց յուզարկել զնա զգուշութիւն մինչև ցերզ սահմանաց եգիպտոսի : Լ.հա այսպէս գիտէ՝ ամէ փրկել զաճապաշտս, և պահել անվնաս յամենայն վտանգս, յորս ի՛ կամաւ կամ յանձնապատաս յանդգնութիւն անկանիմք :

Վարձ արար աբրահամ անդրէն յերկիրն քանաանացւոց ամենայն ստացուածովք իւրովք . զի էր մեծատուն յոյժ՝ անասնով , և արծաթով և ոսկւով . որպէս և զվա եղբօրորդի նորա , որ էր ընդ նմա . որոյ նոյնպէս էին ստացուածք բազում . և եհաը զնոսա ի մէջ երկուց փոքրիկ քաղաքաց բեթելայ և անգեայ ՚ի տեղի սեղանոյն , զոր կանգնեաց անդ զաւաղինն : Լ.նակիւք երկրին խաղաղութիւն էին ընդ նմա , այլ ՚ի տան նորա յաբեաւ խռովութիւն . քանզի անձուկ գոլով երկրին առ հասեմատութիւն բազմութեան անասնոց նոցա , հովիւք աբրահամու մարտնչէին ընդ հովուացն զոլտայ . իսկ աբրահամ երկուցեալ թէ կռիւն անցանիցէ և ՚ի տեարս՝ ՚ի թեկն ածել իւրաքանչիւր իւրում հովուի , և զմնաւ ածեալ թէ միշտ լաւ է խաղաղական և բարեկամական բաժանումն՝ քան զմիութիւնն լի դառնութիւն երկպառակութիւն , եդ առաջի զոլտայ զդժուարութիւնն կալոյ նոցա ՚ի միաբն խաղաղութիւն . և եթող ՚ի կամն նորա ընտրել , այսինքն կամ մեկնիլ անտի , և կամ եթէ կամիցի անդ մնալ , ինքն աբրահամ փոխեսցի յայլ տեղի : Տեսեալ էր զոլտայ զամենայն կողմանս սոդոմայ առ յորդանանաւ ջրարբի և յուռթի յոյժ իբրև զդրախտ ՚ած . և անդ դաշտս ընդարձակս անտեղունէս և անգործս , զոր կարէր ՚ի կիր առնուլ ՚ի դարմանն անասնոց իւրոց , առանց ուրուք դիմադրութեան . վասն որոյ յանձն էառ մեկնիլ յաբրահամ , և ընտրեաց ինքեան տեղի բնակութեան զսոդոմ

քաղաք։ Իբրև մեկնեցաւ զովա, ՚ած վերստին նո-
րոգեաց առ աբրահամ զխոստումն իւր՝ վասն տա-
լոց նմա և զաւակի նորա զամենայն զերկիրն, յոր
՚ի տեղւոջէն՝ ուր կայր՝ կարիցէ հասանել տեսու-
թիւն աչաց ընդ չորեսին կողմանս աշխարհի. և հրա-
մայեաց ՚ած աբրահամու ելանել չորիւք ընդ երկայ-
նութիւն երկրին. զոր նոյն ժամայն ՚ի գործ եդ աբ-
րահամ, և եկեալ քնակեցաւ առ կաղնեաւն մամ-
բրէի։

Զ ոմն հաձեալ էր ընդ ընտրութիւն զոր արար.
այլ ոչ երկարեաց ուրախութիւն նորա. քանզի զո-
դողագոմիր արքայ եղամայ նիզակակցութիւն այլոց
երից թագաւորաց եւ մարտիւ ՚ի վերայ արքային
սոդոմայոց։ Եւ նա վաղվաղակի գումարեալ
ընդ իւր զորս սահմանակից թագաւորս, ձակա-
տեցաւ ընդ թշնամիս. և ՚ի տկարանալ կողմանն սո-
դոմայոց, արքայն սոդոմայ և արքայն գոմորայ
փախստեամբ ապրեցան. այլ ՚ի զօրաց նոցա զաւ-
զումն կոտորեցին թշնամիք. մինչ և ՚ի սոդոմ և
յաւարի առին զքաղաքն, և զընակիչս նորա գերի
վարեցին, ընդ որս և զղովտ ամենայն ստացուա-
ծովք իւրովք։

Յայս դիպուած երևեցոյց աբրահամ զհայրա-
խնամ սէր իւր ՚ի վերայ եղբօրորդւոյ իւրոյ. զի իբրև
ազդ եղև նմա, թէ զղովտ գերի վարեցաւ, նոյն
հետայն գումարեալ զծառայս և զընդծինս իւր,
երեքհարիւր և ութետասն ոգիս, (ըստ համարոյ
հարց որ ժողովոյն նիկիոյ, որպէս նշանակեն հին
վարդապետք), և սպառազինեալ զամենեսին, պըն-
գեցաւ զհետ գերեվարաց. յուսացեալ յօգնութիւն
տեառն ՚ած՝ սակաւաթիւ արամբք խորտակել զպըն-
դակազմ բանակ չորից թագաւորաց յաղթանակո-
ղաց, և փրկել զեղբօրորդին։ Օ՛ի ՚ած որ առաջ-
նորդէր նմա, մանաւանդ վստահութիւն ինն ազդեալ
էր ՚ի սիրտ նորա, ուստի և փութայր իբրև աբ-
դէն ՚ի ձեռին ունելով զյաղթութիւն։ Այնպես գի-
շերային յեզակարծ ժամու ՚ի վերայ քանակի թշնա-
մեաց, մինչդեռ նոքա յանհոգս կային, և զբաղումն

կոտորեալ, և զայլս առհասարակ ՚ի փախուստ դարձուցեալ, էառ զգերիս և զանճնայն աւարն, և զղօվտ եղբօրորդի իւր ամենայն ստացուածովք իւրովք, և դարձաւ շքեղ և բազմաշրջիւն յաղթանակ ՚ի սոդոմ։

Այլեւն ընդառաջ նորա բազում պատուասիրու. Թէ Թագաւորն սոդոմայ, և մելքիսեդեկ արքայ Շաղեմայ՝ որ էր և քահանայ ՚ից բարձրելոյն։ Խօսեաւ թագաւորն սոդոմացւոց մատոյց աբրահամու զանճնայն աւարն, զոր դարձոյց. շատացեալ ունել միայն զգերեալ ժողովուրդ իւր։ Ասէ աբրահամ ամբարձեալ զձեռն առ ՚ած, որ էր նշան երդման, ոչինչ քնաւ էառ յաւարէ անտի սոդոմացւոց. զի մի յետոյ Թագաւորն սոդոմայ տեսեալ զնա մեծացեալ, պարծեսցի և ՚ի դէմս ածիցէ նմա, Թէ ինքն մեծացոյց զաբրահամ, և միշտ երախտապարտ ունիցի զնա։ Ասէ յիրաւանց ճանապայ, եաբողայ և մամբրէի երից քաջագոյն մարտակցաց իւրոց ոչ հրաժարեցաւ. որոց կամեցաւ զի տացին արժանաւոր վարձք իւրեանց։

Նոյն մելքիսեդեկ մատոյց նմա հաց և գինի. զիմն ինչ նախ նուիրեալ ՚ից՝ ՚ի գոհութիւն պարգեւողոյ յաղթութեան. և զինացեալն բաշխեաց արանց աբրահամու ՚ի զուարճութիւն և ՚ի հանդիստ յաշխատութէ պատերազմի, և յերկար ձանապարհէ։ Նկալաւ աբրահամ մատուցիւր զնորհրդական նուէրն նորա իբրև յից. ըստ որում և նա իբրև նա խատիպ օրինակ քրիստոսի մատոյց զայն նուէր ՚ի նշանակ ահաւոր խորհրդոյն, որ հանդերձեալ էր կատարիլ յիւրում ժամանակի։ Ասա ՚ից գիրն յաւելու ասել. * Դու ես նման տասանորդս յամենայնի։ Նայեա կարծի քանս առ երբայեցիս, Թէ ո՞ւմ ես զտասանորդս. արդեօք մելքիսեդեկ աբրահամու, եթէ աբրահամ մելքիսեդեկի. բայց սքն պօղոս որոշէ զինդիրն, յասէն. * Որում (այսինքն մելքիսեդեկի) և տասանորդս յամենայնէ ես աբրահամ... յաւարէ անտի։ եբր. է. 2։ Յայսմանէ յայտ է Թէ աբրահամ Թէպէտ հրաժարեցաւ

առնուլ ինչ յաւարէ սոդոմայեցոց, բայց ոչ նոյնպէս յաւարէ Թէշամեաց որոց յաղթեաց. զի էառ զայն, և սմանի ըստ սկզբն պօղոսի, էառ տասանորդս մեկնի. սեդեկի. ընկալեալ ՚ի նմանէ փոխարէն զօրհնուԹէի իբրև ՚ի լաւագունէ քան զինքն։

ԳԼ. ԼԹ.

Ա՚բրահամ առնու երիրորդ կին զագար զաղախին սարրայի, ձնանի ՚ի նմանէ զիսմայէլ։ Յոսեփանայ ամ տալ նմա որդի և ՚ի սարայէ որ ամուլ էր։ Հիւրընկալէ զերիս հրեշտակս։ Մորոմ և փոմոր և այլ երեք հաղար երիվարաբեղաց հրով հրնչէին։

Յետ այսր ամի զոլոր մնաց ՚ի սոդոմ. խակ աբրահամ դարձաւ ՚ի ձորն իւր առ կաղնեաւն մամբրէ։ Ա՚նդ երրորդ անգամ նորոգեաց ամ զխոստումն իւր առ աբրահամ տալ զերկիրն զայն ՚ի ժառանգուԹի զաւակի նորա. որ այնչափ նորա-նշան ինն կարէր երևիլ նմա, որչափ զի ինքն օր քան զօր ՚ի ծերուԹի երԹայր, չունելով բնաւ զաւակ, և ոչ խակ յուսալով այնուհետև ունել։ Ա՚ման որոյ կամէր որդեգրել ինքեան զեղիազար՝ զոր սիրէր, զորգի մասեկայ ընդօծնի իւրոյ. այլ ամ ոչ եԹող առնել զայն, խոստանալով տալ նմա զաւակ յերաս նաց նորա, և բազմացուցանել զնա իբրև զաստեղս երկնից։ Հաւատաց աբրահամ ամ։ և մատոյց զոհս, ընդ որ հաձեցաւ ամ. և ընդ երեկս արկ զնոսա ԹմրուԹի և յափշտակուԹիւն մնաց. և յայնժամ յայտնեաց նմա բազում ինչ, որք առ յապայն հանդերձեալ էին հասանել ՚ի վերայ Թոռանց նորա ընդ բազում դարս։ Հաւանական դատին ոմանք, Թէ յայնժամ յայտնեալ իցէ նմա ամ և զԹոյլտուուն բազմահնուԹ. մինչև խոստացեալ մեսիայն

եկեալ՝ դարձուսցէ զամուսնութիւնն յառաջինն ածա-
դիր վճռակ իւր, միոյ առն մի կին։ Կանգնի ատա-
անվիճապէս յարկ ըզ գիրն վասն սարայի, թէ զա-
գար եգիպտացի զաղախին իւր՝ ետ երկրորդ կին
աբրահամու առն իւրում. յորմէ ծնաւ իսմայել.
իսկ յառաջ քան զայս չիք ուրեք յիշատակ՝ թէ ոք ի
նահապետաց առեալ իցէ իւր կին երկրորդ. բայց
ի զանգեայ, զոր ամենեքեան ստգտանեն իբր լու-
ծիչ ածադիրը օրինաց ամուսնութեան։

Կ.գար էր եգիպտացի՝ աղախին սարայի, և սի-
րելի յաչս նորա. այլ իբրև յղացաւ, բարձրացաւ
սիրտ նորա, մինչև արհամարհել և զտիկինն իւր.
ակնունելով թէ որդին իւր ժառանգեսցէ զաբրա-
համ։ Ցնծալ սարայի զյանդգնութեն նորա, սկսաւ
այնուհետև խոստութեբ գնալ ընդ նմա. ընդ որ
հաճեալ էր և աբրահամ. զի թեպետ էառ գնա
ի կնութիւն, բայց կամէր զի կացցէ որպէս յա-
ռաջն ի կարգ աղախնոյ ընդ ձեռամբ սարայի։
Սակ ագար ոչ խոնարհեալ և ոչ անսալով տիկնոջ
իւրում, եւ ի տանէն և փախեաւ յանապատն ի
կողմն եգիպտոսի. և մինչ կայր առ աղբերբբ ջուրց
յանապատի անդ, երևեցաւ նմա հրեշտակ տեառն.
և քաջալերեաց գնա, և խրատեաց դառնալ և հնա-
զանդիլ ընդ ձեռամբ սարայի։ Նա գուշակեաց ագա-
մեծ և զօրաւոր ելանել ի նմանէ. յայտնեաց և
զպատերազմունս զոր հանդերձեալ էին առնել սե-
բունդք մանկանն զոր կրեր յարգանդի. որ մինչ-
չև էր ծնեալ, հրամայեաց կոչել զանուն նորա իս-
մայել։ Նա աբրահամ ամաց ութսուն և վեցից,
յորժամ ծնաւ իսմայել. ուստի ծնունդ նորա լինի
յամի աշխարհի 2055. մետասան ամաք զկնի ելանե-
լոյ աբրահամու ի խառանայ և ի տանէ հօր իւրոյ։

Կ.հա այսպէս երիցս անգամ խոստացաւ տէր աբ-
րահամու տալ զերկիրն քանանացւոց զաւակի նո-
րա յառաջ քան զծնանիլ իսմայէլ. թեպետ և ոչ
սա ընտրեալ էր լինել ժառանգ խոստմանցն նոյ։
Կ.րդ՝ տեսանեմք յայտնապէս եթէ քանի՞ իրաւամբ
ասաց սբն ստեփաննոս, թէ * Կ.ծ ոչ ետ նմա

(աբրահամու) ժառանգութե՛ն ՚ի սմա (՚ի քանան), և խոստացաւ տալ նմա զսա ՚ի բնակութե՛ն և զսերկի նորա յետ նորա. մինչ ոչ գոյր նորա որդի՝. գործ. է. 5։

Այր իմանալ սմաց երեքտասանից, և աբրահամ ինանուն և ինուանց, յորժամ դարձեալ երևեցաւ նմա ՚ած, և հաստատեաց զուխտն զիոստացեալն բազում անգամ։ Այլ զի մի՛ ոք ծերունին կարծիցէ, թէ այն ամենայն խոստմունք կատարեսցին յիս. մանել, յայտնեաց նմա թէ յամի որ զկնի՝ սարայ թէպտ ինանամեան՝ ունիցի որդի. և կոչեսցէ զանուն նորա իսահակ. ընդ որում հաստատեսցէ զուխտ իւր յուխտ յաւիտենական, և ընդ զսեռ կի նորա։ Այլ և իմանալ եղիցի յազգ մեծ, հայր երկոտասան աղգաց. օրհնեսցի և բազմասցի յոյժ յոյժ։ Յայնժամ յաւել ՚ած տառ մի յանունն աբրամու, կոչելով զնա աբրաամ, որ և աբրահամ. նոյնպէս յանունն սարայի ՚ի նշան բազմանալոյ սերնդոց նոցա՝ կոչելով սարրա կամ սառա։ Այսմ նախ ՚ի նմին ժամանակի ետ զօրէնս թլփատու թե՛, հրամայեալ աբրահամու թլփատել զմարմին անթլփատութե՛ն իւրոյ, և զնմանէ զորդի իւր, և զամենայն ընդոծինս և զարծաթագնիս իւր, և զամենայն արու որ ՚ի տան նորա իցեն, ՚ի նշան ուխտին ՚ած որ ընդ նմա. որ և ընդ բազում դարս ժամանակաց հանդերձեալ էր լինել նշան որոշիչ ժողովրդեան ՚ած յայլոց աղգաց։

Այնչափ այսոքիկ իրագործելին առ կաղնեաւն մամբրէի, ղովտ բնակէր ՚ի սոդոմ, զուարձացեալ ընդ արգաւանդ մարմնոյս դաշտացն սոդոմայ, պահելով անարատ և ՚ած զանձն ՚ի մէջ եղեռնական աղճապիղծ բնակչաց քաղաքին. որոց լքեալ զնոսփ անօրէնութե՛ց փութացուցին զկորուստ իւրեանց։ Այլ ահա մինչդեռ նստէր աբրահամ առ դուռս խորանի իւրոյ ՚ի միջօրէի, ետես զի գային երեք հրեշտակք ՚ի մարդկային կերպարանս, առաքեալք ՚ի գործադրութե՛ն արդարութե՛ն ՚ած ՚ի վերայ սոդոմացոց։ Այլ ընդ առաջ նոցա, և բազում պատ-

ուսուիրուԹՔ հիւրընկալեալ զնոսա ի խորանի անդ իւրում, եդ առաջի նոցա սեղան. իբրև կերին, երկու ի նոցանէ կալան զձանապարհ իւրեանց. իսկ երրորդն, որ գլխաւորն էր ի նոսա, մնաց անդ. և յայտնեաց աբրահամու զնորհուրդ գալստեան իւրեանց: Յայնժամ՝ որ ծերունին անկեալ յերեսս ի գետին, աղաչէր բարեխօսէր վասն առնարժան քաղաքին. և զկնի բազում խօսից, յայս պայմանագրուԹԵ եկին, զի ԹԷ ի հինգ քաղաքէն յայնոսիկ գտցին գկԹ տասն արդարք, Թողցէ ամենեցուն վասն տասնեցն. այլ քանզի ոչ գտան և ոչ տասն արդարք, վասն այնորիկ արդարուԹԵնն արար զոր արժանն էր:

Ա՛սէին երկու երիտասարդակերպ հրեշտակք ընդ երեկս ի սոդոմ. և զովք եղբօրորդի աբրահամու բազում մեծարանօք բռնադատեալ զնոսա առ նմա ագանիլ զայն գիշեր. արար նոցա ընԹրիս. և մինչև եկն ի քուն մտեալ, ահա արք քաղաքին ի ծերոց մինչև ցերիտասարդս անառակք պղծագործք պատեցին զտունն, և խնդրէին զնոսա ի գործ պղծուԹԵ:

Ել առ նոսա զովք արտաքս, և խրատէր և յորդորէր զնոսա ի բաց կալ յեղեռնաւոր գործոյ անԹի. և ի մերժել նոցա զնա, պաշարեցաւ զովք ի կնճռեան անլուծանելի: Ա՛նել զչարագործան էր կարօղ. մնանել զհիւրան չար կամաց նոցա, զորս այնչափ մեծարանօք ի բևեռեցոյց ի տան իւրում, անօրէնուԹԵն աննեբերելի համարէր: Ա՛ստն որոյ ի նեղ անկեալ զովտայ ընտրեաց զփոքրագոյն չարն՝ խոստանալով հանել առ նոսա զերկու դստերս իւր, որ զայր ոչ գիտէին. ԹԷպէտ և այն չէր փոքր չար: Բայց հրեշտակքն արագ լուծին զկնճռեան. զի իբրև բռնադատեին նոքա զզովմ յոյժ, և մերձ էին զդուռն խորտակել, ձգեալ հրեշտակացդ զզովմ յինքեանս ի տուն անդր, փակէցին զդուռն. և զարան չարագործս հարին կուրուԹԵ, մինչ զի ոչ ևս կարացին գտանել զդուրսն. և այնպէս մեկնեցան անտի: Ա՛ւ զայն ոչ գիտէին ԹԷ նոքա էն դա-

տաւորք իւրեանց և գործադրիչք արդարութեան սպառնալոցն կորուսանել զնոսա ։

Լրկու դատեցք զովտայ էին խօսեցեալք արանց, և հրեշտակք ի չորս զովտայ՝ կամէին ապրեցուցանել և զիեսայս նորս ի վերայոյս հրակիզմանէ։ Խօսեցաւ ընդ նոսա զովտ, և ասիպէր ելանել ընդ նմա ի վատանուն քաղաքէ անտի, քանզի հասեալ է ասէր կործանումն նորա. այլ նոքա ընդ կատակս առեալ զբան նորա՝ ծաղր առնէին զնա, և ոչ կամեցան ելանել. զի և նոցա վախձան հասեալ էր ։ Եւ զովտայ ծանր թուէր մեկնիլ յապիրատ քաղաքէ անտի. այլ հրեշտակք բռնեն հարեալ զձեռանէ նորա, և զձեռանէ կնոջն, և երկուց դրստերաց, (զի մի և նոքա կորիցեն ընդ փեսայացուս իւրեանց,) հանին զնոսա անտի քաղցրութիւ, այլ շտապաւ. և խօսիւ պատուիրեցին չորեցունց փութալ երագել զձնասպարէն իւրեանց, և մի ուրեք ի սահմանս յայնոսիկ զկայ առնուլ, և մի քնաւ դառնալ և հայիլ յետս կայս ։ Իսկ զովտ զարհուրեալ, միանգամայն և հայեցեալ ի տկարութիւն կանանց, կասկածէր թէ չզօրիցեն փութով կարի հեռանալ ի սահմանաց անտի սոդոմայ. խնդրեաց և ընկալաւ ի հրեշտակաց պատսպարիլ առ Ժաննի ի մծտակայ քաղաք անդր ի սեգովը. որ և այն կործանելի էր, այլ ի չորս զովտայ թողաւ անշնաս. սակայն ասի թէ յետոյ և այն կործանեցաւ, գոլով ի հինգ քաղաքաց անտի, որք երկնատեղաց հուրբ դատեցան ։ Ի ծագել արեգական՝ զովտ հանդերձ ընտանեօք իւրովք եմուտ ի սեգովը. և նոյնժամայն տեղաց յերկիր ծծումբ և հուր, և յաձիւն դարձոյց զսոդոմ, զգոմոր, զաժմա, և զսեբոյիմ, և զբովանդակ շրջակայ սահմանս նոցա կիզեալ աղաւտեաց, մինչև այնուհետև ոչ ինչ դեղդալարի բուսուցանել։ Յայսչափ բազմամեայ ժողովրդենէ՝ այր մի, և երեք կանայք և եօթ ապրեցան. բայց և ի նոցանէ միոջ՝ այսինքն կնոջ զովտայ, որ ապրեցաւ ի հրոյն, կորեաւ ի պատճառս կանայիք ապաժոյժ հետաքրքիր բարուց. կիս ի կարեկցութիւ

կորսեաւն սոդոմացւոց. և կամ ըստ ոմանց՝ ի պա-
կասութէ հաւատոյ դարձաւ և հայեցաւ յետս ընդ-
դէմ ածային հրամանի, տեսանել թէ այնպէս
լինիցի, որպէս հրեշտակքն սպառնացան, և առ-
ժամայն մեռաւ՝ յարձան աղի մածեալ։ Ոմն զուտ
և երկա դատերզը նորա աշիւ մեծաւ պաշարեալ,
և ոչ՝ի սեգուվը համարեցան զանձինս յապահովի.
վասն որոյ ելին անտի՝ի լեառն, և բնակեցան անդ
յայրի միում։ Ոնդ երկու անգամ արբեցաւ զուտ
առանց ինչ իւրոց յանցանաց, հնարագրութէ զըս-
տերաց իւրոց. որք գուցէ անյաղթելի տգիտութէ
համարեցան՝ թէ օրէն էցէ ինքեանց յայն պարա-
գայս, յորում կարծէին անմարդացեալ զաշխարհս
որպէս առ նոյիւ, գործել զայն գործ. և ոչ յան-
զուսպ ցանկութէ գըգռեալ. ապա թէ ոչ՝ միայն
ոչ շատանային, որպէս սովորութիւն է ապարատան
ախտից։ Ոյլ որպէս և իցէ, յոր ծերունին առանց
գիտելոյ ինչ նորա՝ի ննջելն և՝ի յառնել՝ եղև հայր
երկուց որդւոց. զի երէց դուստր նորա յղացաւ՝ի
նմանէ, և ծնաւ որդի. և կոչեաց զանուն նորա մո-
վաբ. յորմէ մովաբացիք։ Ոյնպէս և կրտսերն
ծնաւ որդի, զոր անուանեաց ամմին. որ եղև նա-
խահայր ամմնացւոց։ Ոյսպէս կատարէ՝ որ գիւրն
զպատմութիւն կենաց սքէ նահապետին զուտայ,
գնելով զնա մեր առաջի յօրինակ և՝ի խրատ ար-
քունն զգաստութեան. զի որ՝ի մէջ անառակ և
պղծալից քաղաքին՝ որ և անարատ պահեաց զանձն
յամենայն աղտեղութէ, և ըստ ասից՝ որպէն պետ-
րոսի՝ * օրբատօրէ զիւր՝ որ ոգիսն նորա անօրէնն
գնացիւքն տանջէր ‖. ա. պէտ. բ. 8. յետոյ ուրեմն
յանապատի անդ երկիցս զղազրալին զայն գործ
գործեաց, թէև յանգէտս. յերկիւղ և՝ի զգաս-
տութիւն ամենեցուն. բայց յաւէտ հրաժարելոյն
յաշխարհէ, զի ուր և իցէ՝ միշտ զմարմին իւ-
րեանց ընդ ինքեանս ունին. ուստի և միշտ կան՝ի
վտանգ մեղաց և կորսեաւն՝ առանց ածային ընդ-
հայ, զոր արտասուօք խնդրել հարկ է յարաժամ.
և զմարմին մեղաց ձնշել հանապազորդ ձգնութիւ-

Օ կնի հրկիզուէ սոդոմայ և գոմորայ և ամենայն սահմանաց նոցա , զորոյ զգոյ ՚ի հեռուստ տեսանէր աբրահամ ելանել իբրև ծխոյ հնոցի , յաբեաւ ՚ի ձորոյն մամբրէի , և չուեաց յերկիրն հարաւոյ , որպէս հրամայեալ էր նմա ՚Ի նոյն գնաց ՚ի գերարա . ուր դարձեալ անկաւ ՚ի նոյն վտանգ յոր յառաջագոյն անկեալ էր յեգիպտոս , ՚ի պատճառս գեղոյ երեսաց սարրայի , որ Թէպէտ ինննամեան էր , սակայն տակաւին պահէր զչքնաղ վայելչութէն երեսացն , Թերևս սակս ամուլութէն ։ Իբրև եհաս յականջս աբիմելէքայ արքային գերարացւոց համբաւ գեղոյ սարրայի , կարծելով զնա քոյր արքահամու , զի այնպէս ասել պատուիրեալ էր աբրահամ սարրայի , առաքեաց ածել զնա յապարանս իւր՝ կամելով առնուլ յիւր կնութէն ։ Իր աբիմելէք երկիւղած ՚ի Տէն . վասն որոյ խնայեաց ՚ի նա Տ , և չեթող մեղանչել նմա ։ Օ ի երևեալ նմա ՚ի տեսլեան գիշերոյ , սպառնացաւ սաստկութէ՛ վասն սարրայի , յայտնելով Թէ առնակին է ։ Աբագաւարն անբասիր արար զանձն առաջի ՚ոյ , ասելով Թէ սրբուՀէ՛ սրտի արար զայն . զի համարՙէր զնա քոյր աբրահամու , որպէս ասացին ։ Ընկալաւ Տ զանկեղծ խոստովանութէն նորա , և յայտնեաց նմա Թէ վասն սրբուՀէ՛ սրտի նորա ինքն պահեաց զնա , և չեթող մեղանչել յՏ . և հրամայեաց դարձուցանել զկինն յայր իւր ։ Աբագաւարն զարհուրեալ կանխեաց ընդ առաւօտն , և կոչեալ ա պաժամու զամենայն արքունի պաշտօնեայս իւր՝ պատմեաց նոցա զտեսիլն . ընդ որ զարհի հարան ամենեքեան ։ Եւ կոչեալ զաբրահամ քաղցրութէ՛ և իբր դանդատելով յանդիմանեաց զնա վասն քոյր իւր կոչելոյ զսարրայ , որով ինքն կայն վտանգ անկաւ . և դարձոյց նմա զկինն անարատ ։ Ո՛չ ոչ հրամայեաց նմա ելանել յերկրէ իւրմէ . որպէս տեսաք ՚ի վերոյ , զի արար արքային եգիպտացւոց ։ Եւ ՚ի տալն զսարրայ , եաւ ընդ նմա և արքատ և ոչխար , և ծառայս և աղախնայս ՚ի վկայութէ՛ իւրումն անկեղծ բարեսիրութէ՛ ։ Եւ և հազար սա

տէր արծաթոյ գնել վասն սարբայի գլխաշուք մեծագին, կրել զայն ի պատիւ և ի ծածկոյթ երեսաց. մեղմով ինն խրատեալ և զսարբայ, զի այնուհետև առաւել աջողեալ չըլլայր, զի մի միւսոյն գամ յայնպիսի վտանգ անկցի։

Յառաջնոյ օրէ անտի, յորում սարբայ մուծաւ յարքունիս, առաքեաց ՚ած յաբխազիք, և յամենայն պաշտօնեայս նորա յանկարծ թուլութիւն ինն և լուծումն մարմնոյ իւրեւ բազմանեան զառամեալ ծերոյ ի ծագկեալ երիտասարդական հասակի նորա. որով ոչ ոք ի նոցանէ կարէր այնուհետև ակն ունել ծննդագործութեան։ Այսպէս և արգանդ կանանց նոցա փակեցաւ. զի ոչ ևս կարէին ծնանել։ Այս պատիժ ինաց ի նոսա, յորչափ սարբայ եկաց յարքունիս. ուր երևի թէ յամեաց. քանզի եթէ մի, կամ երկու աւուրս կացեալ էր, կարէին արգելօք համարել զայն իբր պատահական ինն այլայլութիւն, և ոչ իբր պատիժ. որ յայտ անտի է, զի իբրև դարձուցաւ սարբայ առ այր իւր, նոյն ժամայն բժշկեցան ամենեքեան, և կանայք որոց հասեալ էր ժամանակ, ծնան աղօթիւք սբրահամու։ Այս աբխազիք եւս ընդարձակ հրամանն սբրահամու քնակել ի սահմանս թագաւորութեան իւրոյ, ուր և հաճոյ թուիցի նմա. խոկ նա ընտրեաց զտեղին, որ յետոյ անուանեալ կոչեցաւ թերսաբէ։

Ծնունդ Իսահակայ : Աբրահամ ՚ի քաջ հասն ՚ի պանծ Իսա-
հակ պապարտ պետուն . այլ պատրաստ ելանել ի լեառն
զի անդ զոհեսցէ զնա ըստ հրամանի Աստուծոյ :

Յետ այնորիկ այլ արար Աստուած սարբայի , որ յղացաւ , ըստ որում խոստացեալ էր նմա Աստուած , և ծնաւ որդի . զոր աբրահամ հայր նորա կոչեաց Իսահակ . էր յայնժամ աբրահամ հարիւրեմեան . իսկ սարբայ ննսունն ամաց . ուստի ծնունդ Իսահակայ լինի յամի աշխարհի 2049 : Յաւուր ութե-ըորդի թլփատեաց զնա աբրահամ. և յորժամ հա-տուցաւ ՚ի տանէն , արար ուրախութիւն մեծ . և այնուհետև ըստ ամէն մանկանն հասակաւ , նոյն-չափ առաւելոյր և ուրախութիւն աբրահամու ՚ի վե-րայ ամենայն զաւակի իւրոյ : Աւելորդ ոչ սա-կաւ աղմկեցաւ խնդութիւն նորա : Վասն որոյ ետես սարբայ զնամայել , որ էր ծիծ , կամ իբր ծիծ ամաց , և Իսահակ իբր երից ամաց , խաղալ ընդ Իսահա-կայ , և նեղել զնա , որպէս սովորութիւն է եղբարց յայնպիսի հասակի , գուցէ և անպատեհս ինչ գոր-ծել . միանգամայն և ընդ անդրանկութի իւր յանդգ-նեալ , պարծիլ բաժանել զժառանգութիւնն աբ-րահամու . զի բառդ խաղալ ՚ի նբ գիրս ՚ի պէսպէս միտս առեալ լինի . այսինքն կռասպաշտել , մրցիլ , կատակել , անամօթանալ . վասն որոյ մեկնիչքն ոմանք յայս , և ոմանք յայն միտս առնուն ասա զխաղալ իսմայելի ընդ Իսահակայ . այլ այս յայտնի է , զի խաղն այն նեղացուցիչ ինն էր Իսահակայ . զոր սքեն պօղոս Հալածումն կոչէ . գաղ . դ . 29 : Օ այս՝ ասեմ, տեսեալ սարբայի , միանգամայն և զմնաւ ածեալ , թէ կալով իսմայելի միշտ ՚ի տան

անդ, հաւասարապէս ընդ իսահակայ մտեղ ի ժա-
ռանգութիւն աբրահամու, բռնադատեաց զնա ի
քաց հանել հեռացուցանել յիւրմէ զիսմայել զոյգ
ընդ մօր իւրում ագարայ, զի մի ասէ ժառանգե-
ցէ որդի աղախնոյդ ընդ որդւոյ իմում իսահա-
կայ։

Դիւրին էր սորբայի պնդել զոյգ վասն իսմայե-
լի, զի ոչ էր մայր նորա. քայց աբրահամու ծանր
էր, զի հայր էր իսմայելի տիրապէս որպէս իսա-
հակայ. նոյնպէս ագար՝ թէպէտ ի կարգի աղախ-
նոյ էր, քայց ընդ նմին էր օրհնաւոր ամուսին նո-
րա, զոր սիրէր սիրով պատկի. ուստի խիստ թուէր
նմա զրկել զորդին ի ժառանգութէ, և զերկոսին
միանգամայն վտարել ի տանէ իւրմէ։ Ոչ եմուտ
ի մէջ, և խաղաղացոյց զաբրահամ, պատուիրե-
լով նմա անսալ սորբայի, յոյժ արարեալ՝ թէ կամք
իւր այն է, զի իսահակ և ևթ ժառանգեսցէ զնա.
և նովաւ կոչեսցի նմա զաւակ. այսինքն է՝ զի ոչ
միայն ծնունդք իսահակայ և ևթ, և ոչ իսմայելի,
կոչեսցին տիրապէս որդիք աբրահամու, այլև յիսա-
հակայ ծնունդոց անտի ծագեսցի զաւակն օրհնութէ,
յորում օրհնեսցին ամենայն ազինք. այլ յայսը ամե-
նայնի վերայ ոչ անինամ թողից ասէ զիսմայէլ. զի
և զնա հանդերձեալ էր մեծացուցանել և բազմա-
ցուցանել յոյժ՝ վասն սիրոյ նորին աբրահամու։

Հնազանդեցաւ աբրահամ. և առեալ հաց և
ջուր տկով, եդ յուս ագարայ՝ որչափ ինչ կարօղ
էր բառնալ. ետ նմա և զիսմայէլ, և արձակեաց
զնոսա։ Ոչ յա բաժանումն թուի թէ չէզև այնչափ
ինչ գառն և վշտագին ագարայ և իսմայելի. զի
գիտէին թէ այն է կամք Ա՛ստ. ուստի և քաջայոյս
էին, թէ ոչ լքանիցէ զնոսա ի խնամոց. քանզի
չէ նոցա ոչ էր պատիժ, այլ Հանապարհ ի բարձ-
րութէ մանկանն, ըստ որում խոստացեալ էր Ա՛ծ։
Ոչ դրժաբարեալ նոցա ի տանէն աբրահամու,
գիմեցին ի կողմն եգիպտոսի. և վրիպեալ յուղղ,
շրջելին մոլորական յանապատին բերսաբեայ. մինչև
սպառիլ ջրոյն ի տկէ անտի, ուստի և տադնապելին

'ի ծարաւոյ. առաւելապէս խմայիել, զի էր պատանեակ ջերմ, որ առ սաստիկ պաղոյ ծարաւոյն յուժեալ նուաղեալ յոգիս ապստամն էր: Իսկ մայրն 'ի գիոյ աղէտից որդւոյն խռովեալ, մուռացաւ զխոստումն ՚ի որ վասն մանկանն. և ինայր ժամ 'ի ժամ պակասիլ որդւոյն 'ի կենաց. վասն որոյ ձեռն ետ նմա ընկոյզմանիլ ընդ հովանեաւ ծառոյ միոյ. և ինքն մեկնեցաւ անտի, զի մի տեսցէ զմահ որդւոյն. բայց ոչ ժուժելով խոպառ լքանել զնա, երթեալ նստաւ յանդիման նորա իբրև միով վաստանաւ 'ի բացեայ, ուստի կարէր տեսանել զնա. և ձայն բարձեալ լայր դառնապէս, և աղաչէր զՅԾ 'ի սրտի իւրում վասն որդւոյն. նոյնպէս և խմայիել լայր մեծակական: Ուստ ՚ՅԾ ձայնի աղաչանաց նոցա, և առաքեաց հրեշտակ միխթարել զվշտագին մայրն. որում ցուցեալ հրեշտակին մատ անդր ջրհոր ջրոյ կենդանւոյ, և վերստին նորոգեալ զխոստումն՝ որ վասն խմայելի՝ մեծացուցանել զնա և բազմացուցանել, եղև աներևոյթ: Իսկ՝ զուարճացեալ նոցա բարեհամ ջրով և զօրացեալ, յառաջ խաղացին զհանապարհ իւրեանց, և բնակեցան 'ի դաշտին փառանուռ առ սահմանօք եգիպտոսի: Իբրև յարբունս եհաս խմայիել, էառ նմա մայր նորա կին եգիպտացի. և յայնմհետէ ինքնացեալ յառաջադէմ լինէր խմայիել սրով իւրով և աղեղամբ. զառաջինն ետ զանձն յորսորդութիւն, և եղև քաջ քաւարժ որսորդ. ապա իշխան բազում գաւառաց յետոյ հայր ազգաց բազմաց, ըստ որում խոստացեալ էր նմա ՚ՅԾ վասն սիրոյ աբրահամու:

Ո՛չնի մեկնելոյ խմայելի՝ խաղաղացաւ աբրահամ. քանզի սարբայ ոչ ևս անհանգիստ առնէր զնա 'ի պատճառս խմայելի. սակայն այլևս նոր ինն վիշտ եհաս նմա: Վանզի ծառայք աբիմելեքայ բռնի առին 'ի նմանէ զջրհորն, զոր նորա իսկ փորեալ էր շատաջուր և պատուական՝ կարևոր նմա մեծապէս 'ի պետս խաշանց, և արջառոց, և տան իւրում: Ապրող էր աբրահամ իբրաւամբ՝ զինու զօրութեբ անդրէն յինքն ձգել զջրհորն, զոր անիրա-

տեԹԵ յափշտակեցին ՚ի նմանէ . այլ ոչ արար : ՚Ի նմին ժամանակի եկն Թագաւորն աբիմելէք , և ընդ նմա ոքոզալԹ տաՃարապետ նորա , և փիքող տաՃարապետ զօրաց նորա առ աբրահամ յայցելուԹեն նմա . և ՚ի բողոքել աբրահամու առ նա վասն զըրկանացն , զոր արարին նմա ծառայք նորա՝ հանելով բռնի ՚ի նմանէ զՋրհորն , նա արդարացոյց զանձն , իբր զի ոչինչ գիտէր զայնմանէ , մինչչև էր լուեալ ՚ի բերանոյ աբրահամու , և առ ժամուն դարձոյց անդրէն զՋրհորն առնա : Իսկ աբրահամ ետ նմա եօԹն ոչխս ընտիրս , ՚ի վկայուԹիւն , ԹէՃ ինքն փո րեալ է զՋրհորն . միանգամայն և ՚ի գին տեղւոյն , զի էր ՚ի սահմանս աբիմելէքայ : Ընդ եդին ուխտ ընդ միմեանս մինչդեռևաւոր հաշտուԹեՃ հանդերձ երդմամբ աբրահամ և աբիմելէք . վասն որոյ կոչեաց աբրահամ զտեղին՝ Ջրհոր երդման : Վասնզի տեսեալ աբիմելէքայ , զի ՃԾ էր ընդ աբրահամու , որով օր քան զօր մեծանայր և զօրանայր հարստուԹիՃ և բազմուԹիՃ ծառայից , երկեաւ , ԹէՃ գուցէ ժամանակաւ և զիՃաւորուԹիւն իւր հանցէ ՚ի նմանէ , կամ յորդւոց իւրոց , նորին աղաչաւ փոյԹ կալաւ անքակ յօդիւ երդման կապել զնա յիւր բառ ըեկամուԹիՃ :

Ընդ ինչդեռ կայր աբրահամ ՚ի խաղաղուԹիՃ անդորրացեալ ամենայն իրօք , և գուարձացեալ ՚ի միակ սիրեցեալ որդին իւր Իսահակ , և ՚ի յաջողուԹիս իւրոց իւրոց , մինչև առն Թագաւորի խնդրել զաբրեկամուԹիՃ նորա և զդաշնակցուԹիւն , ահա յերազակածումն եկն առ նա ձայն յերկնից , որ խնդրէր ՚ի մահ զսիրելի զորդի նորա զիսահակ . և որ յաւէտ քաւեցեալին է , զի ինքն հայրական ձեռամբ իւրով զնուցու զնա . * Ընդ դու ասէ , զորդիդ քո զսիրելի , զոր սիրեցեր զիսահակ . և գնա դու յերկիր բարձր . և հանցես զդա անդ յողջակէզ ՚ի վերայ միոյ լերանց , յորոց ասացից քեզ ‖ . ՃՆԱ . ԷԲ . 2 : Վասն աբրահամ եԹէ հրաման տեառն է . զի ՃԾ յորժամ խօսի , տայ խմանալ զձայն իւր , մինչ չԹողուլ քնաւ տեղի երկուանայ . բայց էւրաքան-

չիւր բառը եթէ և մի մի ալաք ընդմոանէին ի սիրտ աբրահամու, և վէրս ցաւագինս գործէին ի նմա։ Վասղի զինչ գառնագոյն, կամ սաստկակիծ պատուէր, քան թէ հրամայել հօր ինքնին զեհնուլ զորդի իւր. և զայնպիսի որդի, որոյ յղութիւն և ծնունդն սքանչելի. որ և հանդերձեալ էր ժառանգել զաբրահամ, և զամուն նորա մշտնջենաւորել յերկրի, լինելով օրհնութիւն ժողովրդեան, և հայր աղգի հզօրի և սիրելւոյ Ցի։

Դժարւն մեծ էր փորձութիւնս այս, քան զոր մեծագոյն չէր հնար լինել. այլ մեծ էր և պատրաստութիւն կամաց աբրահամու ի հնազանդութիւնն ձայնի նոյ։ Կարէր խոնարհ հպատակութիւն առաջի առնել զամենազոր ինի դժուարութեն. կարէր յիշեցուցանել Ցի զխոստմունս իւր. կամ գոնէ խնդրել, թէ ոչ իցէ լեառն, զոր ունէր թանալ արեամբ որդւոյն. որպէս զի ընդ կարձոյ ձանապարհ հասեալ անդր, վաղագոյն բարձցի առարկայն ցաւագին ի միջոյ, որ էր անընդհատ փուշ յաչս նորա։ Զինչ յայսպիսեաց ասաց աբրահամ կամ բնաւ իսկ ընդ միտ էած։ ԴԼռ յառնուլ անդ զհրամանն ձեն, նոյն ժամայն պատրաստեցաւ, և վաղ քաջ ըզ արշալոյսն եւ ի ձանապարհ առեալ ընդ իւր զորգին, և զերկուս ի ծառայից իւրոց, և զփայտ ի պէտս ողջակիզին։ Ցի գիրք ոչ յիշեն բնաւ զսաբրայ. յորմէ երևի թէ ոչ յայտնեաց նմա աբրահամ զիրսն. և յիրաւի. ապա թէ ոչ, զիա՞րդ կարէր հաւանեցուցանել զնա, թէ հրամայն ձեն է, և լռեցուցանել զղջութիւնն և զկական նորա։

Գնաց աբրահամ երից աւուրց ձանապարհ, յաբաժամ տանջեալ տեսութիւն քաղցրիկ որդւոյն։ Ցւ յաւուր երրորդի եցոյց նմա ձեռ զգլուխ լերինն ի բացուստ. զորմէ ասեն ոմանք, թէ էր լեառն գողգոթայ. ուր իբրև հասին, եթող զծառայս առոտս լերին հանդերձ իշոյն. և զփայտն եդեալ յուս իսահակայ, ինքն հաւ ի ձեռին զհուր և զսուր. և զձանապարհին՝ միմեանց ելանէին ի լեառն, եհարց իսահակ զհայրն, թէ ո՞ւր իցէ ոչ-

խարն յողջակիզ։ Այս հարցումն աղէկտուր արար զգորովական հայրն, այլ զի մի երևեցուսցէ նմա զներքին աղէտ սրտին, համառօտիւ պատասխանի արար, Թէ ահա ինքնին հոգայ, և պատրաստեալ իսկ է իւր ոչխար յողջակիզ։ Իբրև հասին ի տեղին, շինեաց անդ աբրահամ սեղան, և եդ ի վերայ զփայտն։ Ել կամեցաւ ահա յայտնել մեզ ի սք գիրս Թէ զինչ խօսեցաւ յայնժամ արիասիրտ հայրն առ որդին, և զինչ որդին առ հայրն դորովական. և երկոսին արիական յոժարամիտ հնազանդութեամբ անձնատուր եղև ի կամն Հօրն՝ կապել և դնել զնա ի վերայ փայտակուտին յայրումն։

Օ այս ամենայն պատրաստութիւն վճարեալ աբրահամ, իբրև վերացոյց զսուրն զնուել զորդին, ահա ևին առ նա ձայն յերկնից ի հրեշտակին, խօսելով ի դիմաց ՝ա։ Աբրահամ է աբրահամ, բանական է ցայդ վայր. ընդունելի եղև պատարագ քո. կեցցէ խահակ, և նուաւ բազմասցին զաւակք քո իբրև զաստեղս երկնից, և իբր զաւազ առ ափն ծովու։ Յանձն իմ երդուայ՝ ասէ ՝ա, փոխանակ զի ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ, այո՝ օրհնելով օրհնեցից զքեզ, և զխահակ, որ կամակար յոժարութիւն նուիրեաց զանձն ի զենուին վասն իմ. ի զաւակէ նորա ծնցի նա, որով օրհնեսցին ամենայն ազգք երկրի։ Ընդ ի լերինն պատրաստեաց ՝ա յայ ի, զոր տեսեալ աբրահամ ակնեաւ զոստոց ծառոյն սաբեկայ զեղջերացն, առ. և մատոյց զնա ողջակիզ փոխանակ խահակայ. և կոչեաց զանուն տեղւոյն՝ ՝ա երես, զի անդ երևեցաւ նմա հրեշտակն ի դիմաց ՝ա։ Ել զինի շրջանաց դարուց՝ ոչ հրեշտակ, այլ ինքն ՝ա հրեշտակաց երևեցաւ մարմնով անդ ի գլուխ գողգոթայ լերին ի վերայ սեղանոյ խաչին, որոյ նախատիպ օրինակ հանդիսացաւ խահակ կամակար ընծայելով զանձն պատարագ հաճոյից ՝ա։

Ալ յորում ամի կենաց խահակայ եղև այսպէս փիլոնական յիշատակաց արժանի մեծագործութիւն,

կամ Թէ քանի՞ ամաց էր յայնժամ Իսահակ, ոչ ինչ նշանակէն զի գիրքը. վասն որոյ մեկնիչք զանազան կարծիս կալան. ոմանք դնեն զնա քսան և հինգ ամաց. այլք երեսնից. են և այս որք բարեպաշտ խորհրդածուԹիք, որպէս զի ձնգրտագոյնս նկատեսցէ զքն, համարին լեալ յայնժամ երեսուն և երից ամաց լցացեալց: Այս հասակ ոչ հակառակի կարգի պատմուԹեանն, զոր ունիմք'ի ՀԳ գիրս. քանզի յայտնի ինն է, Թէ Իսահակ էր յայնժամ մանուկ, այլ պատանի կամ երիտասարդ ուժեղ, առ'ի կարօղ լինել յուս իւր բառնալ զիայտ ողջակիզին, և հանել'ի լեառն. և ոչ երևի, Թէ յետ այնորիկ անցեալ իցեն ամք բազմք մինչև ցամահ սարբայի մօր նորա: Սահն դնէ մովսէս զծննդաբանուԹիւն որդւոց նաքովրայ եղբօր աբրահամու. յայտ է Թէ'ի չնորհս ռեբեկայ, որ էր դուստր բաԹուէլի Թոռն նաքովրայ. որ վասն իւրոց բարեբաստուԹեց՝ արժանացաւ'ի կնուԹիւն այսպիսի մեծի առն, յորմէ երկոտասան նահապետք. յորոց և փրկիչն ըստ մարմնոյ:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Ա՛հ սարբայէ: Ա՛ռաքեաւ Իսահակայ ընդ ռեբեկայ: Ա՛բրահամ ըստ ՁՃայնին աղաչեցաւ առնու կին ղքնքուրա: Ա՛հ աբրահամու:

Յետ այնորիկ զկնի ամաց ինչ մեռաւ սարբայ հարիւր քսան և եօԹն ամաց, յամի աշխարհի 2086. և աբրահամ սուգ առեալ'ի վերայ նորա զաւուրս ինչ ըստ սովորուԹեանն ժամանակին, ապա խօսեցաւ ընդ որդիս քետայ. և գնեաց յեփրոնէ որդւոյ սահառայ քետացւոյ զքարանձաւ կրկին, 'ի գերեզման սարբայի և ինքեան, հանդերձ շրջակայ

ագաբակաւ և ծառատնկօք. տուեալ ՚ի գին չորեք հարիւր սատեր ընտիր արծաթոյ անթերի կշռով. որ էր սովորական դրամ ժամանակին յածեալ ՚ի ձեռս վաճառականաց. և անդ թաղեաց զսաբբայ պատուով: Այս միայն է ՚ի կանայս, զորոյ զամն կեցոյց, զմահ, և զթաղումն յիշատակեն ՚ի սբ գիրք. և յիրաւի. զի որպէս որդի նորա խոհակ օրինակ էր քոյ, նոյնպէս և մայրն գեղեցիկ՝ օրինակ նորոյ սիրոյ՝ քրիստոնէական եկեղեցւոյ. որպէս նշանաւկ ՚ի ՚ի սբն պօղոս առ գաղատ. ճ. 22. 23. որ և գրէ լով առ եբրայեցիս գձ. 11. գովի զՀաւատ նորա. զի ամենևին ոչ ոք ընդունի հասակ ծերութեան կատարման խոստմանն ՚ի առ նա. Հաւատով գոլով, թէ որ խոստացաւ, նոյն և կատարէսցէ զխոստումն: Որպէս և վերին հաւատոյ առանձին գովութիւն յիշատակի զնա յօրինակ առաքինութեան, յասելն. առ. պետր. ճ. 6. * Որպէս և սարրայ զի հնազանդ էր աբրահամու, և ՚ի իւր կոչէր զնա. որոյ եղերութիւն դուք որդիք. բարեգործք եղիս, և ոչ կասկածելին և ո՛չ ՚ի միջոյ ինչ երկիւղէ ||:

Յերկրէ մեռաւ սարրայ, աբրահամ արդէն ծերացեալ՝ գոլով ամաց հարիւր և քառասնից, սկսաւ խորհիլ վասն ամուսնութեան խահակայ, առնուլ նմա կին բարի: Հներ ծառայ մի իմաստուն հանձարեղ և հաւատարիմ, ծնեալ ՚ի տան իւրում, որ և ՚ի բազում ժամանակաց էր անտես տան իւրոյ, և հաղարապետ ամենայն ընչից նորա, որ կոչիւր եղիազար. զոր և այնչափ սիրէր, մինչ խորհէր որդեգրել զնա, և ժառանգ կացուցանել ինքեան, յորժամ չև և էր ստացեալ որդի: Զսա վասն իւրոյ հաւատարմութեան, ծածպաշտութեան և խոհական հանձարոյ, նախ երդմնեցուցեալ, ընտրեաց առաքել ՚ի միջագետս ասորւոց ՚ի տուն նաքովրայ եղբօր իւրոյ, առնուլ անտի կին որդւոյ իւրում խահակայ. զի ոչ կամէր քնաւ, թէ ՚ի դստերաց անտի քանանացւոց առցէ: Յատ նմա աբրահամ տանն ուղղս, և ծառայս. և ոսկի և արծաթի զարդս և հանդերձս բազումս յօժիս հարսինն ընտրելոյ:

Ի. Յոպիսի շքեղ հանդերձանօք եւ եղիազար ՚ի
Ջանասպարհ. և հասեալ ՚ի քաղաքն նաքովրայ,
ՈՒսաց հանդերձ ուղտուք արտաքոյ քաղաքին առ
ջրհորով ընդ երեկս, յորժամ դստերք բնակչաց
քաղաքին ելանէին հանել ջուր։ Ի. յղի եղիազար ոչ
վստահացեալ յբնտրութեի իւր, յանձն արար զիրան
՚ի խնամն ՚ոյ ջերմ աղօթիւք խնդրելով ցուցանել
նմա յաղջկանց անտի զարժանաւորն ՚ին իւրում,
ըստ նշանաց՝ զոր խնդրեաց ՚ի նմանէ։ Իսկ ահա
մինչդեռ նա զայս խորհէր, եհաս անդ ռեբեկայ
դուստր բաթուէլի Թոռն նաքովրայ եղբօր աբրա
համու, ունելով սափոր յուս իւր. զոր իբրև ետես
եղիազար, հաձեցաւ յոյժ ընդ նա, եդեալ ՚ի մտի,
թէ չէր մարթ լաւագոյն քան զնա գտանել։
Գնաց ընդ առաջ նորա, և կամեցեալ զիրան առ
նուլ նշանացն՝ զոր խնդրեալ էր յ՚ոյ, խնդրեաց ՚ի
նմանէ սակաւ մի ջուր ըմպել ՚ի սափորոյն։ Իսկ
նա անդէն և անդ արդիւնացոյց զամենայն զնշանս,
երևեցուցեալ զբարեշնորհութի ոգւոյն, զհանդարտու
թի, զքաղցրութի, զժրաջան աշխատասիրութի.
զի ինքնայօրդոր փոյթ ընդ փոյթ արբոյց նմա, և
ուղտուց նորա տասանց։ Ո այս ամենայն տեսեալ
եղիազարու, հաստատեր ՚ի մտի իւրում, եթէ
յաջողեաց ՚ուծ զձանապարհ իւր. զի թէ դա այս
չափ մարդասիրութի ցուցանէ առ այր մի օտարա
կան և անծանօթ, զի՞նչ ոչ արասցէ առն իւրում.
կամ զոր խնամարկութիս ոչ ցուցցէ ՚ի վերայ ըն
տանեաց իւրոց։ Վասն որոյ իբրև դադարեցին
ուղտքն յբմպելոյ, եդ գինտս ոսկիս յականջս նո
րա, և ապարանջանս ոսկիս ՚ի դաստակս նորա.
որոյ կշիռ ընդ ամենայն էր վեց ունկի (որ ըստ
կաղինոսի է 200 սկուտի պողնիայի)։

Իբրև ետես լաբան եղբայր ռեբեկայ զդինտս
յականջս, և զապարանջանս ՚ի ձեռս քոյր իւրոյ,
և ծանեաւ ՚ի նմանէ որ ինչ անցեալ էր ընդ նա
և ընդ եղիազար, վազվազակի ընթացաւ, և ած
զնա ՚ի տուն հանդերձ ուղտուք և արամբք որ ընդ
նմա. և յառաջ քան զուտել, յայտնեաց նոցա եղիա.

զար զմիտս իւր, վասն որոյ եկեալն էր. պատմե-
լով զանձնէ՝ Թէ ոմն էիցէ. և զմեծութիւնն աբրա-
համու և զիսահակայ, և զերդումն յոր երդմնե-
ցոյց զնա աբրահամ. և զիրսն, որք եղեն ընդ ո-
բեկայ առ ջրհորովն։ Ընդեղէն սկսեալ երկար բա-
նից, կամ երկար խոչընդոտութեամբ. քանզի՝ ի լսել
նոցա զնոսն աբրահամու և իսահակայ, առ ժա-
մայն ետուն գՀաւանութեամբ, և կատարեցաւ քանն
հարմանախօսութեամբ։ Յայնժամ հանեալ եղիազարու
անօթս ոսկւոյ և արծաթոյ և հանդերձս մեծա-
գինս, եւ օդերձ հարսին. նոյնպէս և մօր նորա և
եղբարց ընծայեաց ընծայս վայելչականս։ Նա՛ ի
վաղորդայն փութացաւ յուղղ անկանիլ. զի Թէ-
պէտ և նոքա կամէին, զի կացցէ առ իւրեանս
աղ ջնկին աւուրս տասն ըստ սովորութեան հարսա-
նեաց, այլ եղիազար ոչ ինչ անսաց նոցա. ուստի
առեալ զոեբեկայ, և զնաժ իշոս նորա, որք տուան
նմա յօժիլ՝ ի տանէ ծնողաց նորա, եւ՝ ի ձանա-
պարհ։

Ընդ այն ժամանակս մինչ եղիազար էր՝ ի միջա-
գետս, երևի Թէ խսահակ գՀաւս և զանդեայս իւր
տարեալ էր՝ ի կողմանս ջրհորոյն տեսլեան. որ
յայս անուն կոչեցաւ յագարայ, յորժամ երևեցաւ
նմա անդ հրեշտակն այ. որպէս պատմի՝ ի ծննդ. ԺԶ.
ւԿ։ Նա՛ ի դառնալ իւրում անտի՝ ի բերսաբէ, այս-
ինքն՝ ի ջրհորն երդմանն՝ յերկիրն փղշտացւոց, ո-
ր էր ինչ կարի բացագոյն՝ ի ջրհորոյ անտի երդմանն,
եւ ընդ երեկս՝ ի դաշտ անդր՝ զբօսանացս և սեթա-
փութեամբ աղագաւ. ըստ ոմանց՝ ի գնալն աստե-
ղաց, իսկ ըստ այլոց՝ ի խոկումն ածայնոց և զբօս-
նուլ հոգւով։ Նա՛ տեսեալ՝ ի բացուստ ղուղտս՝ գլի
գայլն, սկսաւ մեղմաքայլ երթալ ընդ առաջ նոցա.
նոյնպէս և ռեբեկայ տեսեալ զնա, զի գայր, եհարց
ցեղիազար, Թէ ո՞վ էցէ արդ. և յասեալ նորա՝ Թէ
իսահակ է, էջ վաղվաղակի յուղտէ անտի՝ առ՝ ի
պատիւ առն, և առեալ զվերարկուն՝ ծածկեաց
զանձն համեստութեամբ և պատկառանաց աղագաւ։
Իբրև հասին՝ ի տուն, էառ իսահակ զռեբեկայ, և

եմայծ ՚ի սենեակ սարբայի մօր իւրոյ. որ իբր երեք ամաք յառաջ մեռեալ էր. և մխիթարեցաւ վասն մահուն նորա. զի ուբեմկայ էլից զտեղին նորա. որ և սիրելի եղև յոյժ իսահակայ և աբրահամու, և ա մենայն տան նոցա, ըստ որում արժանի իսկ էր. քանզի որպէս գեղեցիկ էր մարմնով, նոյնպէս և առաւել չքնաղ հոգւով, համբերն առաքինութիւք ժրագլուխ կինոջ պերճացեալ, իբրև պատուղ աղօթից պատրաստեալ առ յիշ վասն այնպիսի առն մեծի և սիրելւոյ ՚ի տեառ։

Ընդ այն ժամանակս խորհեցաւ աբրահամ ըստ շնծային աղեղութե դարձեալ առնուլ իւր կին ՚ի ծաւալել զսերունդս իւր և յայլ աղգս, և բազմացուցանել զանաղան ժողովուրդս ըստ ընդարձակ խոստմանցն ոյ լինել նմա հայր աղգաց բազմաց. միանգամայն զի ՚ի ծերութե իւրում ունիցի ին քեան խնամածու։ Ուղարկեաղ ած զաբրահամ թե բաժանեսցի ժառանգութե իւր, զոր ի միայն իսահակայ խոստացեալ էր և տուեալ իսկ էր, էառ կին ՚ի ստորին կարգէ. ըստ կարծեաց ոմանց՝ զի յաղախնեաց իւրոց՝ քետուրա անուանեալ. զի որ դիք նորա լեցին ՚ի կարգի մօրն, և ոչ հօր։ Ուր յայնժամ աբրահամ հարիւր քառասուն ամաց. և եկեաց այլևս ամս երեսուն և հինգ. և ծնաւ վեց որդիս ՚ի քետուրայ. որ աբանչելի ին թուի յայն հասակ ծերութե, այնչափ ծնանել որդիս. առ որ ասէ սբն օգոստինոս, գուցէ աբանչելիք եղև, զի պարգև բեղմնաւորութե պահեսցի ՚ի նմա մինչև ցայն հասակ։ Ամենք համարին թե բազմք յառաջ, այսինքն յետ արձակելոյ զագար, առեալ ևս աբրահամ զքետուրա առ կենդանութե սարբայի. զոր մինչև աստ արտաքոյ բնիկ տեղւոյն պատմէ։ Ուղիղ այս յետին կարծիք ինքնաստեղծ ին երևի՝ չունելով բնաւ հիմն ՚ի նբ գիրս։

Յետ այնորիկ կամեցեալ աբրահամու, մինչդեռ կենդանի էր՝ զիրս իւր զամենայն կարգել և տնօրինել, զի մի զկնի մահուան իւրոյ վիճ և կռիւ ծագեսցի յորդիս իւր, ըստ սահմանելոյն ոյ՝ կացոյց

զմի միայն խաչակ ժառանգ և որ ամենայն ընչից իւրոց՝ ոչ միայն չարժականաց, այլև իրաւանցն, զոր ըստ խոստմանն ոյ ստացեալ ունէր ՚ի վերայ ամենայն երկրին քանանացւոց. և ս և անուան իւրոյ ածանցիլ ՚ի զաւակս խաչակայ, կոչիլ նոցա որդիք աբրահամու. ըստ որում կանխաւ ասացեալ էր նմա ած. * Խաչակաւ կոչեսցի քեզ զաւակ ||: Խոկ խմայելի որդւոյ ազատայ, և որդւոցն քեռւոյ իւրոյ ևս պարգևս առատս ըստ արժանեաց իւրոյ ընծռւթե, և զատուցեալ զնոսա յիսահակայ, արձակեաց ՚ի կողմանս արևելից, անդ բազմանալ, և նոր ազգս և ժողովուրդս և թագաւորութիւս կազմանել. յորոց սակի գտաւ և ազգն պարթևաց ՚ի մէջ պարսից և հայոց: Ա՛ր այսպէս խնաստութիւք և խոհական հանճարով անօրինեալ զտուն իւր ՚ի նահապետն, առանց վերահաս բռնական և ծանր խօթութիւն լսել նուազմանէ ոգւոյն ՚ի խորին ծերութիւն, ննջեաց սրբութիւք ՚ի բարւոք ծերութիւն, լի աւուրբք և հաւատով՝ առաց հարիւր եօթանասուն և հնգից. յամի աշխարհի ըստ ժամանակագրաց 2124: Ա՛ր խաչակ և խմայել որդիք նորա շքեղ յուշարկաւորութիւք եդին պատուով զմարմին նորա յայրի անդ ՚ի կրկնում. ուր երեսուն և ութ ամաք յառաջ թաղեաց աբրահամ զսարրայ զկին իւր: Այսվայր վանն աբրահամու՝ մեծի նահապետին և հօրն հաւատոց. արդ ժամ է դառնալ ՚ի կարգ պատմութիւն որդւոյ նորա խաչակայ, և որդւոց նորա:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ասէ ցնոսա զառակս զայս, եթէ Նման է արքայութիւն երկնից մարդոյ տնտեսի, որ ել ընդ առաւօտս վարձս կալնուլ ի գործաւորս առ այգին։ Եւ ուխտեաց ընդ գործաւորսն դահեկանաւ մի յաւր, եւ առաքեաց զնոսա յայգին։ Եւ ել ընդ երրորդ ժամ, եւ ետես զայլս կայս ի հրապարակի պարապս։ Եւ ասէ ցնոսա, երթայք եւ դուք յայգին, եւ զոր արժան իցէ տացեմ ձեզ։ Եւ գնացին։ Դարձեալ ել ընդ վեցերորդ եւ ընդ իններորդ ժամ, եւ արար նոյնպէս։ Իսկ ընդ տասնումէկերորդ ժամ ել, եւ գտանէ այլս կայս, եւ ասէ ցնոսա, ընդէ՞ր կայք աստ զամենայն աւր պարապս։ Ասեն ցնա, զի մարդ մի ոչ վարձեաց զմեզ։ Ասէ ցնոսա, երթայք եւ դուք յայգին։

Իսկ յերեկոյին ասէ տէր այգւոյն տնտեսին իւրում, կոչեա զգործաւորսն, եւ տո՛ւր նոցա զվարձս, սկսեալ յետնոցն մինչեւ ցառաջինսն։ Եւ եկին որ ընդ իններորդ ժամ ել, եւ առին դահեկանաւ մի մի։ Եկին եւ առաջինքն, եւ համարեցան եթէ աւելի առնուցուն, եւ առին եւ նոքա դահեկանաւ մի մի։ Եւ առեալ տանջէին զտնտեսին, ասելով, եթէ զայսոսիկ յետինսդ մի ժամ արարին, եւ հաւասար արարեր զնոսա մեզ, որ տարաք զբեռն աւուրն եւ զերկնեցուցանելն։ Եւ նա պատասխանի ետ ասելով ցմի ի նոցանէ, ո՛վ ընկեր, ոչ զբաս ինչ ապականեմ զքեզ։ Ո՞չ դահեկանաւ մի հաւանեցար ընդ իս։ Առ զքո եւ երթ։ Կամիմ եւ ես զայսմ յետնումս տալ որպէս եւ քեզ։ Ո՞չ իշխանութիւն է ինձ առնել զոր կամիմ ես ընդ իմս։ Եթէ չարութեամբ նայիս դու, զի ես բարի եմ։ Նոյնպէս լինիցին յետինքն առաջինք, եւ առաջինքն յետինք։ Զի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք ընտրեալք։

Եւ ելանէր Յիսուս յԵրուսաղէմ, եւ առ զերկոտասանսն առանձինս ի ճանապարհին, եւ ասէ ցնոսա, ահա ելանեմք յԵրուսաղէմ, եւ որդի մարդոյ մատնեսցի քահանայապետացն եւ դպրացն, եւ դատապարտեսցեն զնա մահու, եւ մատնեսցեն զնա հեթանոսաց, ծաղր առնել եւ հարկանել եւ խաչել, եւ յերրորդում աւուր յարիցէ։

Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ ընդ որդիսն իւրեանս, երկիր պագանէր եւ խնդրէր ինչ ի նմանէ։ Եւ ասէ ցնա Յիսուս, զի՞ կամիս։ Ասէ ցնա, ասա զի նստցին երկու որդիք իմ սոքա, մի ընդ աջմէ քումմէ եւ մի ընդ ձախմէ քումմէ յարքայութեան քում։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ, ոչ գիտէք զինչ խնդրէք։ Կարէ՞ք արբուցանել զբաժակն զոր ես արբուցանեմ։ Ասեն ցնա, կարեմք։ Ասէ ցնոսա, զբաժակն իմ արբուցանիցէք, բայց նստանել յաջմէ իմմէ եւ յահեկէ իմմէ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեցաւ հաւր իմոյ։

Եւ լուեալ տասնիցն, բարկացան ի վերայ երկուց եղբարցն։ Եւ Յիսուս կոչեալ զնոսա ասէ, գիտէք եթէ իշխանքն հեթանոսաց տիրեն նոցա, եւ մեծքն հպատակեն նոցա։ Այլ ոչ այսպէս իցէ ի ձեզ, այլ որ կամիցի մեծ լինել ի ձեզ, եղիցի ձեր սպասաւոր։ Եւ որ կամիցի ի ձեզ առաջին լինել, եղիցի ձեր ծառայ։ Որպէս եւ որդի մարդոյ ոչ եկն որ ծառայեսցի նմա, այլ ծառայեսցէ եւ տացէ զանձն իւր փրկանս վասն բազմաց։

Եւ ելանելոցն նոցա յԵրիքովայ, հետեւեցաւ նմա բազում ժողովուրդ։ Եւ ահա երկու կուրք նստեալք առ ճանապարհաւ, եւ լուեալ եթէ Յիսուս անցանէ, աղաղակեցին ասելով, ո՛ողորմեա մեզ, տէր, որդի Դաւթի։ Եւ ժողովուրդն նզովէին զնոսա, զի լռեսցեն։ Եւ նոքա առաւել աղաղակէին ասելով, ո՛ողորմեա մեզ, տէր, որդի Դաւթի։ Եւ կացեալ Յիսուս կոչեաց զնոսա, եւ ասէ, զի՞ կամիք արարից ձեզ։ Ասեն ցնա, տէր, զի բացցին աչք մեր։ Եւ գթացեալ Յիսուս, մատեաւ եւ շօշափեաց զաչս նոցա, եւ անդէն տեսին աչք նոցա, եւ գնացին զհետ նորա։

քին, եսաւ ըստ քնածքին վայրենաբեր բարուց իւրոց՝ եւ զանձն ի գործ որսորդութեանն վայրի երեւոյ. իսկ յակոբ հեզաբարոյ և ընդհասուն՝ միտ դնէր առանձին գործառնութեանց, և հովուութեան։

Յաւուր միում եկեալ եսաւ յորսորդութենէ՝ վաստակեալ և նքթեալ, և տեսեալ ի ձեռս յակոբայ ոսպնաթան կազմեալ և պատրաստեալ, խընդրեաց ժառելով ի թանէ անտի, զի թուէր նմա մեռանիլ ի քաղցոյ. տալով փոխարէն զանդրանկութիւն իւր նմա, երդմամբ հրաժարեալ յիրաւանց իւրոց. քանզի և յակոբ զայն խնդրեաց ի նմանէ ի գին ոսպնաթանի իւրոյ։ Ի.րագ վաճառեաց եսաւ. զի կամ անմտութեամբ թէ և ինչ դրեաց զանդրանկութիւնն. և կամ եթէ դիտէր զյարգ նորա, գուցէ ունէր ի մտի, թէ իրաւունք անդրանկութեանն էր իր անվաճառելի, որովհետև վճիտ էր թայ ծննդեան. կամ թէ սակս անհամեմատ նուաստութեան գնոյն՝ անվաւեր և ունայն իցէ վաճառումն. և կամ թերևս յայնժամ իսկ եղեալ էր ի մտի, թէ զոր իրաւամբ կորոյս, կարօղ է բռնութեամբ զինուց ունել և պահել։ Այս ևս մարթի է ասել, թէ եսաւ առ ժամն խնդրեր միայն ընուլ զորովայնի իւր և յագենալ. ուստի և անդիմադարձ անսաց յակոբայ, յուսալով թէ հայրն ապահով առնիցէ զայն դաշնագրութեամբ. զի գիտէր թէ ինքն սիրելի է յայս հօրն առաւել քան զյակոբ. իբր զի ստիպ բերէր նմա որսս վայրենիս ի կերակուր, որք առիժելի էին խաճակայ։ Ի.յր զիարդ և իցէ, մեղաւ յայմ եսաւ, զի անարգեաց զանդրանկութենէն, որ էր տուրք ՚ի՝ բազմապատիկ բարեաց պատճառք գիտողին վարել նովաւ ըստ կարգաւորութենէն ՚ի. որպէս ահա յակոբ՝ որ գնեաց զայն, կարգեցաւ լինել նախահայր փրկչին աշխարհի։

Ի.նդ այն ժամանակս եղև սով յերկրին քանաանացւոց. և խաճակ խորհեր չուել յեգիպտոս հասանելոյն ընտանեօք և ընչիւք։ Ի.յր ՚ած երևեալ նմա, արգել զնա. միանգամայն օրհնեաց զնա. և նորոգեաց զիսոստումն արարեալ առ աբրահամ, զեր-

լինէին զայն ամենայն տալ նմա, և զաւակի նորա. և բազմացուցանել զնա իբրև զաստեղս երկնից։ Ասաց որպէս չտաւ իսահակ առ աբիմելէք զբաժակ փղշտացւոց՝ ի գերեզման։ Այն որք համարին, թէ այս այն աբիմելէք էր, ընդ որում ուխտ խաղաղութեան եդ աբրահամ. իսկ այլք կարծեն զդէպ նոր քան համանունութիւն հօրն. զի գուցէ և առ գերեզմանս սովորական անուն թագաւորաց էր աբիմելէք. որպէս փարաւոնդ անուն առ եգիպտացիս։ Այս անհամաձայնութեանդ կարծեաց ծագի յանհամաձայնութենէ ժամանակագրութեանդ. զի ոմանք դնեն սմա քառասուն ընդ միջ երթալոյ աբրահամու և իսահակայ՝ ի գերեզման, ուստի և անհաւատալի համարին թէ այնչափ ապրեալ էր առաջինն աբիմելէք։

Ընդ՝ առ ժամն բնակեցաւ իսահակ՝ ի միջ գերեզմանացոյց. ուր գրեթէ նոյն դիպուած ընդ առաջ եկնման՝ ի պատճառս ռեբեկայ կնոջ նորա, որ ինչ յառաջագոյն հօր իւրում աբրահամու սակս սարրայի։ Վասն զի և իսահակ երկուցեալ թէ գուցէ վասն գեղոյ կնոջն սպանցի յարանց տեղւոյն, քոյր իւր ասաց զնա։ Այլ ապա իբրև ստուգութիւն՝ ի վերայ եհաս աբիմելէք, եթէ կին նորա է, գիժգիհեալ մեղադիր եղև նմա յաղագս հանձոյն բանիցն, որով՝ ի վտանգ մեղաց և ծանր պատժոց արկ զնա, կամ զայլ ոք յիւրոց պատճառել ից։ Ասատի և պատուիրէ ետ ժողովրդեան իւրում՝ ընդ գլխապարտութեանէ յանցաւորութիւն չմերձենալ ումեք՝ ի նոսա, և չընտրել ինչ նոցա։ Վասն ծառայիցն նորա ոչ ինչ միտ եդեալ սպառնալից հրամանաց նորա, առ նախանձու յաջողուածոց նորա՝ որով օրհնեաց զնա ած, խոկին զամենայն ջրհորս՝ զորս ունէր ծառանդութենէ՝ ի հօրէ իւրմէ յաբրահամ։ Այս այն միտս էր յոյժ իսահակայ յանդրդի լերկրին յայնմիկ, առ՝ ի չգտանելոյ ջուր բաւական այնչափ բազմութենէ անասնոց իւրոց։ Քանզի սակս ստիպեցաւ դարձեալ բանալ և նորոգել զջրհորս հօր իւրոյ զլցեալս՝ ի փղշտացւոց անտի. այլև նորա և փորել՝ ի ձորն գերեզմանոց յայլևայլ տեղիս. բայց

իբրև կատարէր, անդրէն ի վերայ յարձակեալ փղշտացւոց՝ յափշտակէին և զայնս ի ձեռաց նոցա, պնդելով թէ իւրեանց է։

Այս ամենայն զրկանաց տանէր իսահակ երկայնամիտ համբերութեամբ. վասն որոյ և ՚ի օրհնել զնա, և մեծացուցանէր ստացուածովք, և բարձրացուցանէր յոյժ յոյժ. մինչև նորին իսկ աբիմելէքայ խրհել ընդ այնչափ հարստութեան նորա և զօրութեան։ Ասացեալ զի երկիւղած էր և իրաւասէր, ո՛չ բռնացաւ նմա, և ո՛չ իւիք իրօք հարստահարեաց զնա. այլ միայն խաղաղական պատգամաք ազդ արար նմա, մեկնիլ յերկրէ իւրմէ հանդերձ ամենայն ընչիւք. պարզմտութեամբ խոստովանելով զկատած իւր, թէ չէ խոհեմութեամբ ունել յերկրի իւրում զայր օտար, որ քան զինքն հզօրագոյն էր։ Այս պատգամ առեալ իսահակայ, այն ինչ հանդերձիւր ՚ի չուի, ահա եհաս առ նա ՚ի գերեզայ աբիմելէք, և ընդ նմա ոքոգալէթ առաջարպետ նորա, և փիքոզ սպարապետ զօրաց նորա. և խնդրեաց ուխտ խաղաղութեան կնքել ընդ նմա. որպէս յառաջագոյն էին արարեալ ընդ հօր նորա աբրահամու։

Իսկ իսահակ վշտացեալ ընդ այնչափ վիրաս, զոր թոյլ ետուն նորա հովուաց իւրեանց՝ անպատիժ հասուցանել նմա, ասէ ցնոսա, զի՞ եկիք առ իս, զի դուք ատեցիք զիս, և հալածեցիք ՚ի ձէնջ։ Ապակայն և այնպէս զիջեալ ՚ի բանս նոցա, արար նոցա նախ խրախուճէթ. ապա ՚ի վաղիւ անդր հասատեալ ընդ նոսա երդմամբ զուխտն, արձակեաց գնոսա երթալ ողջուճէթ։ Այնու ինքն չուեաց անտի ՚ի ջրհորն երդմանն. ուր ծառայքն նորա փորեցին, և գտին ջուր առատ. զոր կոչեաց իսահակ երդումն. յորմէ և քաղաքն որ առ նովաւ՝ կոչեցաւ ջրհոր երդմանն. կամ որ նոյն է՝ բերսաբէէ։ Այնդ ՚ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա ած, և վերստին հաստատեաց զուխտն, զոր եդ ընդ աբրահամու հօր նորա։ Այնու չինեաց անդ իսահակ սեղան, և կարդաց զանուն տեառն. ուր և եհար վրանն իւր։

Այսպա իբրև ծերացաւ իսահակ և տկարացաւ,

ընդ նմին կացին և աչք նորա ի տեսանելոյ, զո
լով ամաց հարիւր երեսուն և եօթանաց. և համն
բելով զնա մերձեալ ի կատարած կենաց, կամե
ցաւ տալ զվերջին օրհնութիւն անդրանկութե և
ըեց որդւոյ իւրում Եսաւայ։ Ոմն որոյ կոչեաց
զնա, և պատուիրեաց երթալ յորս. և յորոյ ան
տի առնել նմա խորտիկս ըստ իւրոց ախորժակաց.
զի կերիցէ, և օրհնեսցէ զնա։ Լսեալ ՚ած տէր ա
մենայնի, յորոյ անուն երդուաւ Եսաւ՚ի վաճառելն
զանդրանկութե իւր յակոբայ, կամեցաւ զի անդէղ
լի կացցէ վաճառումն այն։ Որ գիտելով ռեբե
կայ, քանզի անչինչ ունէր՚ի մոլի զպատգամտեաւն՝
որ ասացաւ նմա, թէ երիցն կրսերոյն ծառայեսցէ,
հանճարեղ հնարիւք ինն դարձոյց զօրհնութե
անդրանկութե՚ի յակոբ՚ի կրսեր որդի իւր՝ զոր
սիրեր։ Վասնզի էր յակոբայ բերել՚ի դաշտէ եր
կու ուլս փափուկս և ընտիրս. և արար անտի խոր
տիկս ըստ ախորժակացն իսահակայ. և ապա զդե
ցոյց յակոբայ զհոտաւետ պատմուճանն եսաւայ, և
զուլենիս ադոյց՚ի բազուկս և՚ի պարանոց նորա.
զի ամենայնիւ բերիցէ զնմանութե եսաւայ, որ
թաւամորթ էր։ Այսպէս՝ մինչեւ էր նա դար
ձեալ յորոյ, էտ յակոբայ զխորտիկն մատուցա
նել հօր իւրում. իսկ իսահակայ առ վատութե ա
չաց մէջ իմացեալ զդաւն, ընդ հայրական օրհնու
թե էտ յակոբայ և զիրաւունս անդրանկութե. զի
այն էր կամք տեառն ՚ած։ Իբրև դարձաւ եսաւ,
և ծանեաւ զիրն, լի եղև բարկութե. յաւելուա
և սխութե նորա ընդ յակոբ, մինչեւ հաստատեալ՚ի
մտի սպանանել զնա. մինչեր միայն մահուան հօրն։

Օգայն իբրև ծանեաւ ռեբեկա, կամեցեալ առ
ժամանակ մի հեռացուցանել՚ի տանէ զյակոբ,
մինչեւ անցցէ սրտմտութե եսաւայ, խօսեցաւ առ
իսահակ՝ պատճառելով զանբերելն վիշտս, զոր կր
ելեր յերկուց նուոց իւրոց քետացւոց, զորս անխոր
հրդեաբար առեալ էր եսաւ՚ի կնութե բազում ա
մաք յառաջ։ Ասպա զի մի և յակոբ՚ի նոցանէ առ
նուցցէ իւր կին, և յաւելցին տառապանք իւր,

մինչև ընտրել իւր զմահ քան զայն կեանս, ասաց արձակել զյակոբ ՚ի միջագետս ասորւոց ՚ի տուն բաթուէլի հօր իւրոյ. և անտի առնուլ կին ՚ի դստերաց լաբանու եղբօր իւրոյ: Ընդ որ հասեալ նեալ իսահակայ, կոչեաց զյակոբ. և օրհնեալ զնա, և պատուիրեալ նմա ըստ բանիցն ռեբեկայ՝ երթալ առ լաբան, և առնուլ կին ՚ի դստերաց նորա, արձակեաց զնա երթալ խաղաղութիւ: Ընդ քին դառն էր ռեբեկայ՝ թողուլ լիւրմէ զսիրելին իւր զորդի, որ էր մի միայն նորա մխիթար և սրտի դիւր. և ամաչ ընդ առն ծերացելոյ և զայրացուել, և ընդ որդւոյ առելոյ, և ընդ նուռց անխրատից և դառնացուցչաց: Ասայ առ հեռացուցանելոյ զվերտանգ կորուսանելոյ զզաւակն սիրեցեալ, ինքն եղև առաջին խորհրդատու մեկնելոյ նորա. և այն աչ առանց տանեսութե երկնից. որպէս տեսցի յառաջիկայդ:

ԳԼՈՒԽ ԻԹ.

Յակոբ երթայ ՚ի միջագետս ասորւոց առ լաբան մօրեղբայր էր: Ընդ առնուս էր ՚ի ինուէնէ գլխէ և գառաւէլ զդուռնբս լաբանու, և զերկու նաճիղսն նորա. որ ծնան նմա անդ ութասան որդիս, և դուստր մի:

Ընդ որ յակոբայ զօրհնութիւն և զպատուէրն հօր իւրոյ իսահակայ, եւ ՚ի ձանապարհ. եր նա յայնժամ ամաց իբր եօթանասնից: Եւ հասեալ ՚ի տեղի մի ՚ի մուտս արեգական, առ ՚ի քարանց անտի տեղւոյն, և եդեալ ընդ մարս, ննջեաց. և եահս յայնմ գիշերի տեսիլ աքանչելի: Եանդուխք հաստատեալ յերկրի, որոյ գլուխ հասանէր յերկինս. ընդ որ հրեշտակք ՚ոյ ելանէին և իջանէին. և ՚որ ՚ած կայր հաստատեալ ՚ի գագաթան սանդ-

դխոց ։ Այս տեսիլ մեծամեծ և խորին խորհրդոց էր գուշակ. այլ ըստ գրոյն՝ ցուցանէր զառաջնիկայ և զՀանդերձեալ անցս և զվիճակ յակոբայ. Եջք հրեշտակաց ցուցակ էր իջանելոց նորա ի միջա գետս, հետիոտս՝ առանց ինչ Հանդերձանաց լոկ ցոլով միով. իսկ ելք նոցա ցուցանէր զդարձ նորա անտի բազմահարուստ՝ կանամբք և որդովք, ծառայիւք և աղախնովք և բազմութիւն անասնոց։ Օձոյն ակնարկէ և խոստումն ՚ի նմին տեսլեան Եղեալ առ նա. լինել ընդ նմա, և պահել զնա յամենայն ճանապարհս նորա. և դարձուցանել յերկիրն յայն, և մեծացուցանել զնա և բազմացուցանել զզաւակս նորա։ Իբրև զարթեաւ յակոբ ՚ի քնոյ, ՚ի պատճառս տեսլեան Համարելով զտեղին զայն՝ ուր ննջեաց՝ որպէս ՚ի բնէ նուիրական ՚ոյ, ուստի և իբրև սրբազան ինն, զհի հարաւ, և ասէ, ահեղ ինն է տեղիս այս. և ոչ է սա, եթէ ոչ տուն ՚ոյ։ Այս առեալ զվիմն յորոյ վերայ ննջեաց՝ կանգնեաց արձան, արկեալ իւղ ՚ի գլուխս նորա. և կոչեաց զանուն տեղւոյն բեթէլ. այն է՝ տուն ՚ոյ. յայս անուն կոչեցաւ և քաղաքն, որ յետոյ շինեցաւ անդ։

Յարուցեալ անտի յակոբայ՝ ջոքաւ ՚ի խառան. անդ առ ջրհորով միով, ուր խաշնարածք տեղւոյն արբուցանէին զխաշինս իւրեանց, Հանդիպեալ ոա քելայ կրտսեր դստերն լաբանու մօրեղբօր իւրոյ, որ արածէր զխաշինս Հօրն, պատմեաց նմա վասն անձին՝ թէ ահ եկէ։ Իսկ նա ընդհացաւ պատմեաց Հօր իւրում լաբանայ. զոր լուեալ նորա՝ գնաց վաղվաղակի խնդալից ընդառաջ յակոբայ. և գիրկս արկեալ նմա՝ համբուրեաց զնա. և բազում մնալ դասիրութիւն ընկալաւ զնա ՚ի տուն իւր։ Այլ յետ կալոյ յակոբայ առ նմա ամսօրեայ մի ժամանակ, ասաց լաբան՝ յայտնել զվարձս վասն ծառայութեանն իւրոյ. զի ոչ կամիմ ասէ, թէ ձրի ծառայեացես ինձ։ Իսկ յակոբ խնդրեաց ՚ի վարձ եօթնամեան ծառայութեանն՝ զաքէլ զկրսեր դուստր նորա իւր ՚ի կնութիւն. քանզի յառաջնումն անդ՝ ՚ի տեսանել նո

րա գնա, յարեցաւ սիրտ նորա ՚ի նա. հաձեցաւ և լաբան մնալ իւր ընդ ինդիրն։

Ընդ այն ժամանակս անկեալ նուագեալ էր յոյժ տուն լաբանու առ յոգի տնտեսութեն իւրոյ. որով բատ առաւել մասին վաստակալ էր ոչ միայն գինւոյ իւր, այլև զօժիտս գտեալոց իւրոց զկնի մահուան հօր իւրոյ բանեւելի։ Ա.ՀՂ երբև եմուտ յակոբ ՚ի ծառայութիւն նորա, օրհնեաց Ա.Ծ յոտին նորա գտուն լաբանու. և բազմացան յոյժ ստացուածք նորա։ Ա.պա ՚ի լսանալ եօթն ամաց ծառայութեն նորա, խնդրեաց յակոբ զկինն իւր. այլ լաբան ստեաց նմա. զի փոխանակ ոսքելոյ՝ եմոյծ գիշեր. բայն յառագաստ առ յակոբ գլխա զերեց գուստր իւր. ժամ գիտող թերևս առեալ զայն, թէթև օժտիւ, աղախնաւ միով ևեթ՝ ամուսնացուցանել գնա։ Ա.ռանգի գոլով լիայ արատաւոր յաչս, գժուարին էր առանց ծանր վարձանաց գտանել նմա այր. կամ զի գուցէ ոչ կամէր գառնացուցանել զերկին, տալով առն գկրսերն՝ յառաջ քան գնա. և կամ զի առ սաստիկ սիրոյն յակոբայ առ ոսքել, ակնուներ զկնի նմա առնուլ և գլխա, միայն զի մի զրկեսցի ՚ի ոսքելոյ. և ինքն թէթևաբեռն գեաեղեսցի զերկու գտեբս միանգամայն. որպէս և եղև իսկ։

Ա.ռանգի երբև յայտնեցաւ խաբէութենն, նա արդարացոյց զանձն մնոտի պատճառանօք սովորութե երկրին, ջտալ նախ գկրսերն՝ քան զերկից։ Ա.պա զկնի եօթն աւուրց ետ նմա և զոսքել հանդերձ միով աղախնաւ. բայց այսու պայմանաւ, զի ծառայեսցէ նմա եօթն ամ ևս վասն նորա։ Ընդ այսպէս երկու նաժշտօք ևեթ՝ ամուսնացոյց զերկու գտեբս իւր. լեայի տուեալ նաժիշտ զգերլիա, իսկ ոսքելի զբալլա. զորս հաձութե, մանաւանդ թէ ՚ի խնդրոյ սիկնայ իւրոյ՝ առ յակոբ ՚ի կնութե. որք ընդ այն չորեքտասան ամն ծառայութեան նորա՝ ծնան նմա վեցտասան ուստեր, և գուստր մի։ Լիա ծնաւ զռուբէնն, զշմաւոն, զղեւի, զյուդա, զիսաքար, զզաբուղոն, և զդինա գուստր։ Բալլա նաժիշտ ոսքելոյ՝ ծնաւ

զգան, և զնեփթաղիմ։ Օ՜ելիա նաժիշտ լիայ՝ զգադ, և զասեր։ Ա՜պա անագան ուրեմն ծնաւ և առաքել զյովսէփ, պատուղ բազում սաղթից. զի ա մաւ էր առաքել։ Ջորեքին որդիք երկուց նաժշտաց անդէն՝ ի ծնանիլ որդեգրեցան՝ ի տիկնոց իւրեանց. վասն այնորիկ ընդ որդիս նոցա կալան և տգբա իրա ւունս, և միապ՜ս ընդ նոսա մնին՝ ի ժառանգու թիւն ամենայն ընչից և անասն յակոբայ հօր իւ րեանց։

Յետ ծննդեան յովսեփայ՝ ի կատարիլ չորեք տասան ամաց ծառայութեն, յորում բազմացան յոյժ ստացուածք լաբանու և մեծացաւ տուն նո րա, կամէր յակոբ դարձ առնել անդրէն յերկիր իւր։ Այլ լաբան, որ ակներև տեսանէր, եթէ քանի՞ շահաւոր եղև նմա յակոբ, ո՛չ ետ թոյլ մեկ նել ևիւրմէ. և առ հաձելացուցանել զնա ինալ առ իւր, ասաց բաժանորդ զնա ամենայն անասնոց իւ րոց զայս օրինակ։ Օ՜ի ըստ առաջարկութե՛ն յոր հրամայ՝ որոշեալ զատոյց զամենայն խայտախարիւս և զալխակս խաշանց և այծից և արջառոց, և ետ զնոսա բաժին յակոբայ։ Իսկ զհամակ միագոյնս ետ՝ ի ձեռս որդւոց իւրոց. և հեռացոյց զնոսա՝ ի յակոբայ երից աւուրց ճանապարհաւ։ Այ ապա զի մի կասկած լինէ՝ ի մտի դնիցէ լաբան վասն յա կոբայ, եթէ զիւրսն յափշտակեալ իցէ, դաշնադիր ելեն ընդ միմեանս, զի ամենայն ծնեալք խայտք և նշանաւորք լինցին յակոբայ, թէ և՝ ի բաժնի անդ լաբանու ծնանիցին. և ամենայն համակ միա գոյնք և աննշանք՝ լինցին լաբանու, թէ և՝ ի բաժ նի յակոբայ ծնանիցին։ Ողով ոչ ևս ձեայր տեղի կասկածանաց. զի շատ էր լուկ հայեցուած մի աչաց բառնալ զամենայն տարակոյս և զվէձ։

Այս ընկերութե՛ն ձգեցաւ ընդ ամն վեց. բայց փոփոխութե՛ն ինն. քանզի յատաչմամբ տի տեսեալ լաբանու, զի պիտակք և գործակայքը բազմանային յոյժ յոյժ, փոխեաց զդաշնադրութե՛ն, և կամե ցաւ, զի այնուհետև խայտախարիւք լինցին իւր. իսկ միագոյնք յակոբայ։ Օ՜ի յակոբ հնարս ինձ

խորհեցաւ. առեալ գաւազան ընկուզի և սօսեղ, և քերծեալ ուրեք ուրեք զկեղևն, որով լինէր խայտաձամուկ, դնէր յաւազան ջրոյն. զոր տեսեալ խաչանց մինչ դայլն ըմպել ջուր, զկնի'ի խառնան, և յղանային և ծնանէին գորշախայտս և պիտակս։ Ապա առաւել քան զայս՝ ած եր, որ յաջողէր յակոբայ, և ամէնուսանէր զաճխն նորա ըստ արժանի վաստակոց նորա. որ յայտ առ է, զի յետ այնորիկ առանց այսպիսի հնարիցն՝ սպիտակք և աննշանք յաձախէին ծնանիլ. որով խաչինք, այծք և արջառք նորա և ուղտք ամէնեքին և բազմացան յոյժ յոյժ։

Ի վերայ այսոցիկ յաւել յակոբ իւրով ձաղտարութե՝ առնել և առանձին առ և տուրս, մանաւանդ գերեաց, ըստ սովորութե երկրին գնելով գերիս. զոր աբ գիրք թէպետ ոչ յիշեն յայտնապես, բայց յասեղն թէ եղեն նորա ծառայք և աղախնայք, զնոյն ակնարկեն. որպես և չբ նոքա մեծ, որով դարձաւ'ի քանան. ուր'ի պահպանեալ և յառաջնորդութիւն այնչափ բազմութե անասնոց՝ պէտք եին և բազմութե ծառայից։

Ետ այսորիկ տեսեալ լաբանու զբազում հարստութե յակոբայ, զոր ընդ այն վերջամուտ ժամանակս ստացաւ, զառաջին սէր իւր փոխեաց յաւելութե և'ի նախանձ ընդդէմ յակոբայ. զոր և յերեսս իսկ ցուցանէր. որպէս և որդիք նորա յայտնի քրթմնջէին, եթէ յընչից հօր իւրեանց արար իւր յակոբ զայն ամենայն փառս. մանաւանդ եալ զվաստակս նորա, որով այնչափ առեցոյց զինչս նոցա, և զանկեալ և զանչքացեալ ոտն նոցա կանգնեաց և մեծացոյց։ Օգն տեսեալ և լուեալ յակոբայ, որոյ առեալ էր զիմօք յերկայրն իւր յեսաւ՝ թէ չարութե նախանձու ցիր վայր կարէր ժամանել, խորհէր իւրոյ տալ վախտաժամ յերեսաց լաբանու. և դառնալ յերկիրն ծննդեան իւրոյ ամենայն ստացուածովք իւրովք։ Այլ վտանգ մեծ կայր նմա առաջի, նախ'ի գողմանէ լաբանու՝ հասանել զկնի նորա, և չարիս գործել

նմա. զի գոլով ինքն ծանրացեալ կամօքն և մանկամբք և բազմութեամբ անասնոց և ծառայից և աղախնեաց, հարկ էր նմա ծանրաքայլ շարժիլ. Եւ երկրորդ՝ ի կողմանէ եղբօր իւրոյ եսաւայ յերկրի իւրում, ուր դէմ եդեալ էր երթալ. զի չէր հաւատալ, թէ ընդ քսանամեայ ժամանակս յայնոսիկ լեալ արդեօք եսաւ ի կատաղի սրտմտութենէ իւրմէ: Եւ այլ ևս հրամայեաց նմա չուել. և խոստանալով լինել ընդ նմա, եթարձ զամենայն կասկած նորա:

Յայս չոր առաւել ևս քաջալերեցաւ յակոբ, յորժամ յայտնեալ զիրան կանանց իւրոց ռաքելայ և լիայ՝ եդիտ զնոսա համախոհս ընդ ինքեան, մինաւանդ թէ պատրաստագոյն. քանզի զրեթէ առաւել քան զյակոբ՝ վշտացեալ էին նոքա ընդ տմարդութենէ հօր իւրեանց. որ յետ ուսելոյ զօժիտ իւրեանց, և վաճառելոյ զնոսա առն անօժիտ իւրև գերիս, այնուհետեւ ունէր զնոսա իբր օտարոտիս ոմանս: Վասն որոյ ասէն ցյակոբ. ամենայն մեծութենէ և փառք զոր եհան ած ի հօրէ մերմէ, մեզ եղեալ՝ և որդւոց մերոց. արդ՝ զոր ինչ ասաց քեզ ած՝ արա՛:

Եւ պա մեղմով ինն ի կարգի եդեալ յակոբայ զամենայն իրս իւր, և ի ձահ առեալ զկին ժամ, մինչ լաբան երթեալ էր ի կտուրս խաշանց իւրոց, զոր բազմօրեայ իրախաճանութենէ կատարէին, եհան յօրդոս զկանայս և զմանկունս իւր, և առեալ զնաշխինս և զարջառս իւր և զամենայն ստացուածս, մինչև չթողուլ և ոչ կձղակ մի, եւ գաղտաբար ի ձանապարհ: Եւ սա ինչ մի անակնկալեալ և վտանգաւոր գործեաց ռաքէլ, զի ընդ կարասեաց իւրոց՝ գողացաւ և զկուռս լաբանու հօր իւրոյ. զոր ոմանք համարին արարեալ ի փոխարինումն վարձանաց իւրոց, զոր վատնեաց հայր նորա. քանզի կարծեն զկին կուռս լինել յարծաթոյ, կամ յոսկւոյ, և կամ յայլ ինչ մեծագին նիւթոյ: Եւայց զի չուենիք ինչ վասն այսր ի գիրս, վասն որոյ պիտի ընտրեն ասել, թէ արարեալ էին նորա զայն ըստ

նախանձու, առ՝ի բառնալ՝ի տանէ հօր իւրոյ ըզպատճառս կռապաշտութեանն։ Օ երկաքանչիւր կարծիս նշանակէ և վարդան՝ի մէկնութեանէ արարածոց՝ի բանից սըկզբն եղելոյն և սկզբն եփրեմի՝ այսպէս. *Վաղագայս հնազանդել զկուռս հօր իւրոյ զսակեղէնս և զարծաթեղէնս, ոչ զի պատուեսցէ, այլ զի՝ի դէպ ժամու ապականեսցէ։ Խորհուրդ եկեղեցւոյ է հնազանդել, որ կոչի գառն՝ հովուին մեծի, որ բառնայ զկուռս՝ի տանէ հօր իւրոյ յաշխարհէ։ Այլ սակայն այս գործ ռաքելայ խռովութեի մեծ յարոյց զչանապարհայն։

Վանգի յետ երից աւուրց իբրև ազդ եղև լաբանու փախստական յակոբայ, խռովեցաւ յոյժ, և առեալ ընդ իւր բազմութեի արանց՝ սնդեցաւ զկնի նորա. և յետ եօթն աւուրց ձանապարհի՝ եհաս նմա՝ի լերինն գաղաադու, ուր էր հարեալ յակոբայ զվաորան իւր։ Վ.ժուարին էր թէ լաբան գազանացեալ առանց կռուոյ և սրոյ վճարեալ էր զիրան ընդ յակոբայ, եթէ ոչ երևեալ նմա՝ի տես. լեան գիշերոյ՝ էր սաստեալ նմա չառնել ինչ չար յակոբայ։ Վ.յսն այնորիկ յարձակեցաւ՝ի վերայ նորա ոչ զինուք, այլ լոկ բանիւ յանդիմանութեի, սակս գազտագնաց լինելոյ՝ի նմանէ, մինչև չառ նմա ժամ գէթ զյետին համբոյր հրաժարական տալ գստերաց և թոռանց իւրոց. բայց առաւել ինն սրտցաւութեի գոլէր և խիզախէր վասն յափրշտակութեի կռոց իւրոց. յորմէ ոմանք իրաւամբք գուշակեն՝ի մեծագին նիւթոյ լինել. զի՝ի վերայ այնպիսի ընչաքաղց օգտածաւրաւ առնն՝ չերևի ասեն այնչափ ջերմեռանդն պաշտօնասիրութիւն առ կուռս, մինչ լոկ սակս պաշտամանն այնպէս խռովիլ։

Լոկ յակոբ որ քնաւ ոչ կարէր այնպիսի ինչ կարծել վասն ռաքելայ, համարձակ ետ զվճիռ մնհու, առ որում գացին աստուածքն։ Վ.ւ առժամայն բացան առնոյն ծրարք, յուզեցան խորանք յակոբայ, լիայ, և երկուց հարձից. և ոչ ինչ գտաւ։ Վանգի որ գիտաց գողանալ, գիտաց և թագուց-

ցանել. զի 'ի լսել նորա զառաջինն որոտաձայն բաբ-
բառ հօր իւրոյ, որ կայծակունս սպառնայր, թա-
գոյց վաղվաղակի ընդ պատառաւ ուղտոյն իւրոյ
'ի խորանն անդ իւրում. և նստեալ 'ի վերայ նոցա,
իբրև եմուտ հայրն 'ի խորան անդր, խօսեցաւ առ
նա վայելուչ իմն մեծարանօք հայցելով նեբրուճ,
վասն ոչ զօրելոյ յոտն յառնել առաջի նորա, զի
'ի կանանց օրէնս եմ ասէ, և ոչ կարեմ շարժել.
վասն որոյ և լաբան ոչ քննադատեաց զնա, և ոչ
իսկ այնչափ ձչտիւ հետախոյզ արար զառաքաւոր
նորա, չունելով այնպիսի ինչ կասկած 'ի վերայ
նորա. և այսպէս գոլոհն մնաց անյայտ։

Յայնժամ յակոբ սկսաւ բարձրացուցանել ըզ-
բարբառ իւր սակս զրպարտութեն, միանգամայն
և 'ի դէմն ածելով նմա զվաստակս իւր զոր վաստա-
կեցաւ վասն նորա, և զնորին տմարդութիւնն.
Տայր լեռոյ զիջեալ երկոցուն՝ հաշտեցան. և ուխտ
խաղաղութեն հանդերձ երդմամբ եդին ընդ մի-
մեանս, առ որոյ հաստատութեն և 'ի վկայութիւն
կանգնեցին վէմ արձան. և կուտեցին առ նովաւ
քարինս, և արարին բլուր. զոր կոչեցին կարկառ
վկայութեն, կամ կարկառ վկայ։ Այս ետ յակոբ
լաբանու և ամենայն արանց նորա մեծահայց ընթ-
ծիս. ապա 'ի վաղիւ անդր յարուցեալ լաբանու,
համբուրեաց զդստերս և զթոռունս իւր, և դար-
ձաւ 'ի տեղի իւր։

ԳԼՈՒԽ ԺԴ։

Յակոբ գառնայ ի հանան։ Ընդ որ անցին ընդ նա զհաւատացեալսն ընդ եսաւայ եղբօր իւրոյ։ Գործեմարտութիւնն նորա ընդ հրեշտակին։

Յետ հրաժարելոյ ի լաբանայ յակոբ կալաւ զառաջիկայ ձանապարհ իւր յերկիրն քանանու. և թէպէտ զերծաւ խաղաղութեամբ ի ձեռաց լաբանու, բայց յահ եղեալ իւրոյ եսաւայ տագնապէր յաւ բաժամ՝ի սրտի։ Այլև առ նա անդ տեսիլ աքան չելի, զի եռես զհրեշտակս զինեալ և կարգեալ ի քանակ զօրին պատերազմական զօրաց եհիւալ նմա ընդ առաջ. որով ոչ սակաւ քաջալերես ընկալաւ։ Այլոյց քանզի առ յաջողութեամբ իրաց մերոց՝ կամի ած, զի և մեք զինատուր մեր հանձնեմք ի կիր արկանիցեմք, խորհեցաւ յակոբ յառաջ քան զինքն առաքել հրեշտակս առ եսաւ եղբայր իւր՝ի սեիր, եդեալ քան՝ի բերան նոցա խօսել առ նա զայս օ. րինակ։ Օ՜առաւ քո յակոբ առաքեաց յայտ առ. նել տնդ մերում, թէ որպէս եկաց և յամեաց մինչև ցայժմ՝ի միջոցեաս ընդ լաբանու. և ստացաւ անդ արջառ և ոչխար և էշ, և ծառայս և աղախ նայս, և ասծուքեի բազում. և զայս հրեշտակութեի արձակեաց յողջոյն ձեր, ցանկանալով գտանել շնորհս առաջի տնդ մերում, և զեղբայրական սէր և զմտերմութեի նորոգել։

Յայսմ հրեշտակութեէ զանազան խորհուրդս ե. լեի ունել յակոբ՝ի մտի. յորոց գնահ մինն ոչ թուեր նմա՝ի գերև ելանել։ Այս՝ զի սոված բառ նայր զպատճառս գժգոհութեան եսաւայ, եթէ գիտիցէ ոչ ծանոյց նմա յառաջագոյն զվիճակ իւր. կամ որպէս կանխաւ՝ի մեհիլ իւրում գէթ ողջունի միոյ չարար գնա արժանի, զոր իբր արհամարհութեան իմն ունէր եսաւ համարել անձին։

Երկրորդ՝ սովաւ ցուցանէր զբարեմտութիւն իւր առ նա, թէ չունի ինչ կասկած թշնամութեան՝ ի վերայ նորա. վասն այնորիկ պարզմտութիւն իւր ախորժա. լուր առեալ ինն եղբօրն՝ ազգ առնէ նմա զգաւ լուստ իւր։ Երրորդ՝ առ որսալ զհաճութիւն նորա, կամ գէթ ցածուցանել զբարկութիւնն նորա ծա. ռայաբար խոնարհելով առաջի նորա. որով ցուցա նէր թէ չունի ինչ վիճ ընդ նմա սակս անդրան կութեան։ Եւ ևս՝ եթէ զայլ ինչ ոչ շահէր աստի, գնահատեաւ էր, թէ՝ ի ձեռն հրեշտակութեան իմանայր զմտս նորա. զոր հարկաւ յերեսս և՝ ի բանս իւր երևեցուցանէր եսաւ. և ինքն ըստ այնմ անօրինէր զկրս իւր զգուշութիւն առ՝ ի խուսել՝ ի մեսուց։

Յաքան հրեշտակք. այլ թէ զինչ խօսեցաւ առ նոսա եսաւ, չէ յայտ. և յերևի իսկ աստցեալ բան ինչ հաճոյական, բայց գի՝ գամ անձամբ տե. տանել զնա. որ էր զոյց խիթալի. զի և որք դար. ձանն՝ զայս և եթ պատմէցին յակոբայ, եթէ եսաւ գայ անձամբ ընդ առաջ քո, և չորեք հարիւր այր ընդ նմա. որ ոչ բարեկամութեամբ, այլ պատերազմի տայր նշանակ։ Եւ արդարև գժուարին է գուշա. կել, թէ առ ինչ այնչափ արամբք գնեալ գայր եսաւ։ Լմն՝ ի հարկանել զերկայրն ասիցես, չէ հաւատալի. քանզի եթէ՝ ի սկզբան անդ՝ մինչ ջերմ էր և վառեալ նախանձն ոխակալութեան, ոչ մեռաց ձեռն՝ ի յակոբ լոկ՝ ի պատիւ երեսաց հօրն. զիա՞րդ ապա զկնի քանի ամաց, յորում թէ ոչ բոլորովին չիջեալ, գէթ ցածուցեալ էր ոչ սակաւ բարկու. թիւն նորա, զայդ առնէր. որովհետև խահակ հայր նոցա զերեսս կենդանի էր։ Այսպա երևի թէ կա. մէր ահ եւեթ արկանել յակոբայ՝ առանց մեռանելոյ ինչ նմա. որ և տեսակ իմն վրէժխնդրութիւն. զոր սովոր են առնել երբեմն մեծամեծք՝ առ՝ ի ցոյց կա. րողութեան իւրեանց. որպէս զի երևեսցի, թէ չինդրեալ նոցա զվրէժ՝ ոչ է առ ակարութիւն, այլ առ ներողամիտ քաղցրութիւն։ Այսմ որ առաւել հաւանելի թուի, եկն նա ընդ առաջ եղբօրն այն-

պիսի շքով բազմութիւնե արանց՝ լոկ առ անսփառու-
թիւնե. կամելով ցուցանել նմա, թէ առանց ծա-
ռայելոյ ի միջոցս, և առանց հայրենի ընչից,
իւրով ևեթ աշխատութիւնե և հանձարով արար զայն
ամենայն հարստութիւն։

Այլ թէ այս, կամ այն եղեալ իցէ վախճան
եսասէր, յակոբ զայն ոչ դիտէր, վասն այնորիկ
զահի հարաւ։ Այլ առ ապահովելոյ զիւրս իւր, զե-
բիս հնարս խորհեցաւ. նա՛ւ՝ զատոյց առաջանչն
զժողովուրդ իւր՝ և զարջառ և զոչխար և զուլտս
յերկուս բանակս կամ կարաւանս, կրկին վախճա-
նաւ. մի՝ զի այնպէս բաժանեալ՝ առաւել բազմա-
թիւ երևիէին. որով թէ կամիր եսաւ չար ինչ
առնել, փոքր մի զկոյ առնոյր, կասկածելով թէ
զինի երկրորդ բանակին կարիր և երրորդն և չոր-
րորդն յաջորդել։ Այլ միւս ևս՝ զի թէ զառաջինն
հարկանիցէ, երկրորդն ունիցի ժամանակ խոյս տա-
լոյ։ Յառաջնում կարաւանին եդ զերկուս աղախ-
նայսն, և զորդիս նոցա. դուցէ՛ ի քաջալերութէի
ծառայից իւրոց՝ հզօրագոյնս մարտնչիլ վ՚ա կանանց
և որդւոց ձոն իւրեանց։ Յերկրորդումն զլիա և
զորդիս նորա. իսկ զառաքել հանդերձ յոտեփաս,
առ որս առաւել կաճ ոգին էր, պահեաց ընդ վեր-
ջապահս երկրորդ բանակին։ Երկրորդ հնարքն է-
զև դիմել նորա ջերմ պաղատանօք առ Աած. որ
հզօրագոյն է քան զայլ ամենայն զինս, յորժամ
առնեմք և մեք, զոր ինչ կարեմք ի մեր կողմանէ։
Իսկ երրորդն եզև առաքումն ընծայից, որք զօրա-
ւոր են որսալ զսիրտս մարդկան։

Այս որպէս զի մեծ և չքեղագոյն երևեսցին ըն-
ծայք իւր, բաժանեաց զնոսա ի հինգ հօտս կամ
փոքրիկ կարաւանս. և տուեալ ի ձեռս ծառայից
իւրոց՝ պատուիրեաց երթալ յառաջ քան զինքն
բացագոյն ի միմեանց՝ այնչափ զի ոչ տեսանիցէ իւ-
րաքանչիւրն զնախընթացն իւր. որպէս զի իւրա-
քանչիւր հօտ առանձինն ժամանեալ, նորանոր և
բազմապատկեալ ախորժական տպաւորութէի արաս-
յեն՝ ի սիրտ եղբօրն։ Յառաջնում կարաւանին էին

այծք երկերիւր, և քաղք քսան. յերկրորդումն մաքիք երկերիւր, և խոյք քսան. յերրորդումն՝ ուղտք ծնեալք երեսուն հանդերձ կողոմաքք. ՚ի չորրորդումն՝ կովք քառասուն, և ցուլք տասն. իսկ ՚ի հինգերորդին էշք քսան, և մորուկք տասն: Այս առ իւրաքանչիւր հօտ կարգեալ էին ծառայք ըստ պիտոյից, և մի մի գլխաւոր ՚ի վերայ նոցա. որք ունէին պատուէր երթալ ուղղորդ ընդ ձա-նապարհ իւրեանց. և ՚ի պատահիլ նոցա և հարցա-նել, Թէ որ ծառայք են, և յո՞ դիմեալ երթան, և որ են հօտք, որք առաջի երթան, ասացեն. * Ծառայի քո Յակոբայ պատարագք են, զոր ա-ռաքեաց ՚ինն իւրում Եսաւայ. և ինքն զկնի մեր գայ: Այս պատգամ եդ Յակոբ ՚ի բերան գլխա-ւորի իւրաքանչիւր հօտի. զոր հինգ անգամ լուեալ Եսաւայ՝ յառաջ քան զտեսանել զնա, հարկաւ քաղց-րանայր սիրտ նորա, և զարթնոյր ՚ի նմա փափաք տեսանելոյ զհարազատ եղբայր իւր:

Եղե՝ արձակեալ Յակոբայ զնոսա ընդ երեկս, ինքն հանդերձ երկու բանակաւն մնաց անդէն. և ՚ի նմին գիշերի յարուցեալ, առ զկանայս և զմե-տասան որդիս իւր, և զամենայն ինչ որ իւր էր, և անցոյց ընդ հեղն յաբոկայ, (ըստ ոմանց՝ Յակո-բայ), խմի ընդ յորդանան: Այս ինքն մեկուսացաւ առանձինն հայցել վերստին օգնութիւն ՚ի ՚ինէ: Այս ահա հրեշտակ մի ՚ի կերպարանս մարդոյ եկն պա-տեհուեալ ընդ նմա. ծանեաւ վաղվաղակի Յակոբ զնա լինել երկնային՝ երևեալ ղգալն տեսլեամբ. կալաւ զնա ձեռամբ պնդապէս՝ խնդրելով մնալ ընդ նմա և պաշտպանել նմա յայն առաջիկայ խե-թալի վիճակ. այս պաշտպանութիւն է օրհնութիւն, զոր խնդրէր Յակոբ: Հրեշտակն զուռն առնէր թափել զանձն ՚ի ձեռաց նորա. իսկ նա առաւել քան զհրեշտակն ջանայր պինդ ունել զնա: Այս բռնադատութիւն երկոցուն՝ միոյն ՚ի մեկնիլ, և միւ-սոյն ՚ի չթողուլ, է մարտն ասացեալ ՚ի գիր: Այլ զի հրեշտակն կամէր լինել յաղթեալ, վասն այնորիկ այնպէս չափաւորէր զզօրութիւն իւր, զի

զօրասցի՛ւ վերայ նորա յակոբ. ուստի և իբր պատեալ՝ինամանէ, աղաչէր զնա՝ զի արձակեսցէ ։ Ո՛պա տեսեալ զի և աղաչանօք չկարէ ինչ շահել, բուռն եհար զամրլջէն զըստի նորա, և ընդարմացոյց. որպէս զի գեթ՛ի ցաւոյն ստիպեալ, թողցէ զնա. բայց և ո՛չ այնու եթող։ Յետոյ եցոյց նմա հրեշտակն զայգաստեալ աւուրս, որպէս զի թողեալ զնա՝ երթիցէ միտ դնել իրաց իւրոց, և հանել՛ի Յաբաղարկ զԺողովուրդ իւր, մինչեւ լցէ բարձրացեալ արեւս ։ Վակայն և ո՛չ այս, որպէս և ո՛չ աբնուէլին գրեթէ ընդ գիշերն ողջոյն, և ո՛չ վաստակն, և ո՛չ ցաւ զըստին բաւական եղեն բըռնադատեալ զնա՝ զի արձակեսցէ. մինչեւ ո՛չ ընկալաբ՛ինամանէ զինդրեալ օրհնութիւն ։

Վասկ հրեշտակն՝ որում Հաճոյական էր տեսանել՛ի յակոբ զայնպիսի արիական հաստատութիւն, հուսկ ուրեմն օրհնեաց զնա. զի փոխելով զանուն նորա, կոչեաց զնա Իսրայէլ, այն է՝ Յաղթատես. և ասաց նմա բարէյոյս լինել, զի որովհետեւ զօրացաւ ժուժկալել ընդ երկնաւորին, լինիցի զօրաւոր և ընդ ամենայն մարդկան ։ Եւ կոչեաց յակոբ զանուն տեղւոյն այնորիկ՝ տեսիլ Այ. զի տեսի ասէ զԱծ դէմ յանդիման. և ապրեցաւ անձն իմ։ Եւ սկսաւ այնուհետեւ կաղալ՛ի շօշափմանէ հրեշտակական ձեռաց. զի յամենայն քայլս իւր յուշ լինի նմա բարերարութիւնն այն մեծ ։

Իբրև էանց տեսիլն, այն ինչ յարոյց՛ի Յանուպարհ զկարաւանն իւր, ծագեաց նմա արեւ. և գայր՛ի վեր ամբարձեալ ետես, զի ահա գայր եւսաւ եղբայր իւր, և ընդ նմա արք չորեքհարիւր. և ինքն Թողեալ զանակս իւր, անց յառաջ, և եօթն անգամ երկիր եպագ՝ մինչեւ մերձեցաւ առնա ։ Վայնժամ և եսաւ ընթացաւ ընդ առաջ նորա, և գիրկս արկեալ նմա, համբուրեաց զնա. և անկեալ զպարանոցաւ նորա, լացին երկոքեան ։ Եւ տեսեալ եսաւայ զկանայս և զմանկունս նորա, ասէ նոյնպէս ա՛ի ա՛ստուծոյ և երկիրպագին նմա, եւ հարց վասն նոցա. որպէս և վասն հօտից արք զի-

պեցան նմա զձանապարհայն. և յասել յակոբայ, Թէ նմա ՚ի մեծարանս առաքեցան, նա զառաջինն հրաժարեցաւ ընդունել, Թերևս զի մի երևեսցի զլարեսիրութիւն իւր առ եղբայրն՝ վաճառել ընդ պարգևաց. այլ յետոյ յաղաչել և ՚ի տիպել յա կոբայ՝ ընկալաւ յօժարութիւն առ ՚ի սէր եղբօրն։ Եւ յառաւել ապացոյց մաերմութեն իւրոյ առ նա՝ կամէր ուղեկից լինել նմա, կամ Թողուլ առ նա յարանց իւրոց յընկերութեն նմա ՚ի ձանապարհի. այլ յակոբ չէառ յանձն և ոչ զմին. պատճառելով զմտաղ մանկունս իւր, և զնորոգ ծնունդ խաշանց և արջառոց. զորս ոչ կարէր տիպով վարել։ Ա՝ան որոյ եսաւ հանդերձ արամբք իւրովք դարձաւ ՚ի տեղն իւր ՚ի սեիր. և անդ հաստատեալ զընակութեն իւր, մեծացաւ յոյժ, և ընդարձակ կեաց զսահմանս իւր, և տիրեաց միապետական իշխանութեն. և եղև նախահայր բազում փոքրիկ Թագաւորաց և իշխանաց, որք միմեանց զկնի տիրեցին։ Որպէս գոյ տեսանել՚ի գլ. լշ. ծՃՃ։

ԳԼ. ԺԱ.

Ա՝ահ էահակայ. բառնաբարուն՚ե զինայե զաբեր յակոբայ, հոգւոյն սիկիմացւոց։ Ա՝ահ ասուէլայ։

Եսկ յակոբ չուեաց ամենայն ստացուածովք իւրովք ՚ի խորանս, այն է՝ սոքովքն յերկրին քանանացւոց. և արար անդ իւր տունս, և անասունս իւրոց գազարս. և եկաց անդ ընդ ամն ինչ, կացեալ միշտ խաղաղական սիրով ընդ եսաւայ եղբօր իւրոյ զամենայն աւուրս կենաց իւրեանց. որք և՚ի միասին Թաղեցին պատուով զհսահակ զհայր իւրեանց. որ մեռաւ ՚ի քեբրոն ամաց հարիւր և ութանից, ոչ այնջան ՚ի խօՃութենէ, որչափ ՚ի ծանրու-

թէ ծերութէ պակասեալ. յամի աշխարհի 2229։ Լայ զմահ ռեբեկայ հինջ իսահակայ ոչ պատմեն ըզ գիրք. որ երևի թէ մեռեալ էր, մինչ յակոբ ի միջահասս էր. զի զհնի գարձի նորա ընթեռնումք, թէ * եկն յակոբ առ իսահակ հայր իւր ի մամբրէ ։ և չիք յիշատակ հինչ վասն մերն։ Այս ամ անտի յակոբ յարուարձանս սաղեմայ սիկէմ մտացաւ. ուր տուեալ հարիւր ոչխար, (ըստ ոմանց հարիւր արծաթի դրամ, որ ունէր զպատակեր ոչխարի կամ գառին, վասն այնորիկ կոչիւր ոչխար, կամ գառն,) գնեաց յեմովրայ հօրէ սիքեմայ դաշտ ընդարձակ բաւական անանոյ իւրոյ. և անդ եհար զխորան իւր մերձ առ սիքեմ քաղաք։

Այսժամ դինա դուստր յակոբայ եղ անդրանկութէ ի զհնի աղջկանց քաղաքին՝ մանաւանդ ըզդեստուց և զարդուց նոցա ըստ կանացի հետաքրքրութեան. զոր տեսեալ սիքեմայ որդւոյ եմմորայ իշխանի քաղաքին, սիրեաց զնա, և կալեալ բռնի ննջեաց ընդ նմա, և տառապեցոյց զնա։ Այն էր խայտառակութիւն՝ զոր արար տանն յակոբայ. որում ոչ գոյր այլազգ հատուցումն, բայց առնուլ զաղջկին ի կնութէ. և տալ վարձանս նմա ի պատիւ երեսաց, և ծնողաց նորա։ Երկոսին մտադիւր յանձն էառ սիքեմ. զի հարեալ էր յոյժ ի սէր աղջկանն. և հինքն և հայր նորա եմմոր խոստացան տալ զամենայն լուր՝ որչափ հինչ կամիցի յակոբ և որդիք նորա ի վճարումն յանցանացդ երիտասարդին։

Թէպէտ ընդ յակոբայ միայնոյ էր քանն, ամենայն հինչ թերևս վճարիւր խաղաղութէ, առանց այնչափ աղմկայ և կատրածի. բայց որդիք նորա երիտասարդք եառնդնոսք և յանդգնք, որք չէնէին զնօրն խոհեմութէն և բարեպաշտութէն կատարել, առ երեսս ցուցին հաւանութիւն ընդ խնդիր նոցա նենգութէ. բայց այսու պայմանաւ, զի յառաջ քան զամուսնութէնն՝ սիքեմ և հայր նորա, և ամենայն արու որ ի տան նոցա լինէն, որպէս և համբրէն քաղաքացիք՝ թլփատեսցին. զի

ընդ արանց անթափանց չէ օրէն մեզ ասեն՝ առ-
նել խնամութեի։ Այլ յայնժամ ասա * զդստերս
մեր տացուք ձեզ. և՝ի դստերաց ձերոց առցուք
մեզ կանայս»։ Խիստ էր պայմանն, սակայն և այն-
պէս յօժարամիտ ընդունելի եղև առ մելեզին սի-
րոյ աղջկան միոյ. ուստի և՝ի միում աւուր թլփա-
տեցաւ ամենայն արու քաղաքին։ Ապա յաւուր եր-
րորդի, յորժամ առաւելապէս սաստկանայ ցաւն
հատման, շնաւան և զևի համամայր եղբարք դի-
նայի, ժամ դիպող առեալ զգայն, մտին ընդ ծա-
ռայիցն յակոբայ վառեալ զինու՝ի քաղաք անդր,
և յապաղանս եմռլոյ. և մինչ նա, և որդի նորա
և եղկելի քաղաքացիք վստահացեալ՝ի բան դաշ-
նադրութեն նոցա, կային՝ի ցաւս՝ անկարօղ պաշտ-
պանել անձանց, ամենեքեան առհասարակ ան-
խնայաբար՝ի սուր սուսերի կոտորէցան. ընդ որս
և սիւքեմ և եմռլոր հայր նորա. և այնպէս՝ի բաց
առաւ դինա՝ի տանէ նոցա։ Ապա եկին և այլ եղ-
բարք նոցա. և առին յաւարի զքաղաքն ողջոյն, և
զկանայս և զմանկունս նոցա գերեցին. և զամե-
նայն անասունս նոցա, և զամենայն որ ինչ էր՝ի
քաղաքին՝ և որ ինչ՝ի տունս, յափշտակեցին։

Ապաքէն արտաքոյ օրինաւոր կարգի վրէժխնդ-
րութեե էր գործն. և սակայն երանելին յուդիթ
՝ի ցեղէ շնաւանի բազում ամօք զկնի եկեալ յաշ-
խարհ, զայս վրէժխնդրութեե շնաւանի իբր նախան
ձաւորութեե ոք յառաջ բերել յաղօթս իւր։ Այլ
յայտ է թէ զպատճառս վրէժխնդրութեէն իմա-
նայ, որ էր սրբել զնախատինս՝ի տանէն յակոբայ,
և ոչ զեղջանակն գործոյն, որում ոչինչ իւիք
հնար է արդարանալ։ Զի՝ զի յակոբ թէպէտ
ունէր իրաւունս թագաւորական իշխանութեան
տուեալ նմա յայ, որ ինր է ամենայնի. զոր կարօղ
էր վարել՝ի վերայ իւրոց հպատակաց, մինչ և՝ի
մահ դատակնքել ըստ յանցանացն արժանեաց.
իսկ՝ի վերայ օտարաց արդար և օրինաւոր պատե-
րազմաւ։ Այլ որդիքն նորա գոլով տակաւին ընդ
հրամանատարութեե հօրն, չունէին զնոյն իշխանու-

Թէ՝ Յերկրորդ՝ Թէպէտ և օրինաւոր Թագաւոր լի-
նէին, սակայն և այնպէս ոչ կարէին իրաւամբ ըզ-
քաղաք մի ողջոյն կոտորել և եղծանել, յորժամ
Թէ՛ յանցաւորն և Թէ՛ քաղաքացիքն խոստացան
զվճարումն առաւելապատիկ քան զինաս յանցա-
նացն. զոր և հատուցին իսկ իրօք. և նոքա հաւա-
նեալ ընկալան զխոստումն, Թէպէտ նենգուԹէ.
և ապա ստեցին դաշին՝ ընդ յանցաւորին և զան-
միզս կոտորեցուք: Ոմանք այնորիկ յակոբ անիրա-
ւուԹէն կոչէ զվնէժինդրուԹէն նոցա, և դառնա-
ցեալ ոգւով կշտամբէ զդործ նոցա. որով առնէր
արարիք զիս ասէ, անզգամ երևեցուցեալ ամե-
նայն բնակչաց երկրին քանանացւոց և փերեզաց-
ւոց. որպէս և՝ի վտանգ սպառսպռուռ կորստեան
եդին զտուն նորա: Նա յիրաւի, զի կայր նա անդ
յայնպիսում վտանգի, յորմէ միայն զօրու-
Թէ՛ չէր հնար նմին ողջանդամ ձողոպրել, եԹէ
չէր ոյ առանձին նախախնամուԹէ, զոր ունէր՝ի
վերայ տանն յակոբայ, ահ արկեալ՝ի վերայ շրջա-
կայ բնակչաց, չէլանել՝ի վերայ նոցա:

Նա չէն լինչ զարմանք. քանզի յակոբ Թէպէտ
ոչ էր, սիրելի և հաճոյ ոյ, այլ ոչ նոյնպէս և
որդիք նորա յերիտասարդուԹէ իւրեանց, բայ՝ի
յովսեփայ և՝ի բենիամինէ. որպէս յայտ է՝ի ուս-
բէն, ի յուդա, և յամենեսեան՝ յանօրէնն վաճառման
անդ եղբօրն իւրեանց: Նայց յետոյ ըստ հասարակ
վարդապետուԹէ ոչ հարց, և մեհենից՝ սրբեցին
ապաշխարուԹէ զանձինս իւրեանց: Նա Թէպէտ
յակոբ զկնի բազում ամաց՝ ի պարգևել յովսեփայ
առանձինն զսիկիմ, ասէ առեալ զայն սրով իւրով
և աղեղամբ. իբր ոչ եԹէ զի և ինքն գործակից
կամ գէԹ կամակից եղեալ էր գործոյն. զոր յետ
լինելոյն ծանեաւ, յորժամ ոչ ևս կարէր խափա-
նել. այլ զի որդիք նորա յորժամ առին զքաղաքն,
էին ընդ իշխանուԹիւ հօր իւրեանց. նոյնպէս և
ծառայքն, զոր գործակից իւրեանց առին նոքա,
էին յակոբայ. վասն որոյ ըստ իրաւանց սեպհական
յակոբայ համարիւր քաղաքն այն:

Յետ այնորիկ հրամայեաց ՅԾ յակոբայ ելանել յերկիրն անտի ամենայն տամբ և ստացուածովք իւրովք, և անցանել բնակութիւնն ՚ի բեթէլ: Յայնժամ հրամայեաց յակոբ ընտանեաց իւրոց, և ա մենեցուն, որք ընդ նմա էին, բերել առաջի իւր զկուռս, զորս յափշտակեցին ՚ի սիկիմացւոց· որպես և զկուռս լաբանու զդաղտցեալս ՚ի ռաքելայ· ընդ որս և զդինդս, թերևս զի էին նուիրեալ ՚ի զարդ կուռց· զորս առեալ թաղեաց ՚ի ներքոյ բևեհկնի ծառոյ միոյ· և խոպառ անհետ արար զնոսա, զի մի լեցին ՚ի գայթակղութիւն տան իւրոյ: Ապա մայր պատուէր ետ նոցա ամենեցուն փոխել զպատմուճանս և սրբել զանձինս ՚ի պատիւ տեղւոյն· ուր երևեցաւ նմա ՅԾ ՚ի փախչիլ նորա յերեսաց եսաւայ: Եւ հասեալ անդ՝ չինեաց սեղան, և մատոյց պատարագ ՅՀ իւրոյ: Ընդ մեռաւ դէբովրա, դայեակ ռեբեկայ· զոր թաղեաց յակոբ ընդ կաղնեաւ· և կոչեաց զանունն նորա կաղնի սգոյ:

Ընդ վերստին երևեցաւ նմա ՅԾ, և օրհնեաց զնա, և դարձեալ հաստատեաց զնոսատմունս, զոր ալարեալ էր նմա, մեծացուցանել զնա, և ընդարձակել զզաւակս նորա· և առնել զնա հայր ազգաց և ժողովրդոց, և թագաւորաց բաղմաց: Ընդ ՚ի չուել յակոբայ ՚ի բեթէլայ, մինչև էր հասեալ յեփրաթա, ըմբռնեցաւ ռաքել զձանապարհայն ՚ի ցաւս երկանց ծննդեան անհնարինս, և ծնաւ որդի· զոր կոչեաց նա որդի վշտաց իմոց· իսկ հայրն կոչեաց զնա բենիամին· այլ կեանք մանկանն եղև մինչբեր մերն· զի մեռաւ նա լի արդեամբք, բայց թերի հասակաւ· և թաղեցաւ ՚ի բեթղահէմ· ուր զկնի բազմամեան ժամանակաց ծնաւ ՅԾ բանն մարդ եղեալ ՚ի փրկութիւն աշխարհի: Եւ կանգնեաց յակոբ արձան ՚ի վերայ շիրմին հաւքելի· որոյ յիշատակն միշտ յարգի եղև առ քնակիչս բեթղեհէմի, որպես և ՚ի բովանդակ տանին իսրայելի· որպես և երջանիկ մանկունքն բեթղե-

հեմի կոչին որդիք Հաւաքելի իբրև նախամօր իւր. եանց թաղելոց ՚ի քաղաքի իւրեանց։

ԳԼՒ. ԺԹ.

Յովնէի վճառի յերէարց ի-բոյ յեգիպտոս։ Ող-ջ և ծը-նունդ ֆարեսի և զարայի որդւոց յոռդայ ՚ի Բաճարայ։ Պէսպէս անցք՝ որ անցին ընդ յովնէի ՚ի գան պեղա-ե բէայ։

Յետ սակաւուց՝ զկնի մահուան ռաքելի, ե-հաս սէր նահապետին յակոբայ այլ ինն սուգ մեծա-գոյն յոյժ քան զառաջինն, ընդ կորուստ յովսե-փայ. որ էր նորա որդի ծերութեանն, գեղեցիկ տես-լեամբ, և բարեհամբոյր բարուք. ուսան և սիրելի և անձկալի հօրն քան զայլ ամենայն որդիս. որում արժանաւոր իսկ էր։ Վասն այսպիսի առանձնա-կան սէր հարց առ մի յորդւոց իւրեանց՝ միշտ ձեռս ի սիրեցելոյն. զի բառնայ զկարևոր սէր եղբարց ՚ի նմանե, և գրգռէ զնոսա ՚ի նախանձ և յատե-լութիւն ընդդէմ նորա. և սրբւոյ յաձախեն արտա-քին նշանք առանձնական սիրոյ, այնչափ զօրանայ և նախանձ նոցա։ Յակոբ յառաւելութիւն սիրոյն առ յովսէփ, ոչ շատացեալ տեսանել զնա զդեցեալ իբրև զայլս, արար նմա պատմուձան ծաղկեներկ. որ ևս առաւել բորբոքեաց զնախանձ և զատելու-թիւն եղբարցն, մինչ զի չկանդուրժէին տեսանել զնա, կամ խօսել ինչ ընդ նմա խաղաղութիւն։

՚Ի վերայ այսր՝ և նա ինքն արդարամիտ պա-տանեակն յովսէփ յաւել զնախանձ նոցա, պարզ-մտութիւն պատմելով առաջի նոցա զերազս իւր, որք էին չնմարիտ յայտնութիւնք և մարգարէութիւնք հան-դերձեալ մեծութեան նորա. և սէ ածէր զմտաս, թէ նոքա պատճառս առնուին անտի չարեաց։ Ուարմանք ասէ ցեղբարս իւր՝ զերազն զոր տեսի.

Թուէր եթէ մեք ամենեքեան որպ կապէաք ՚ի գաշտի միում. և կանգնեցաւ որպէս իմ եկաց ուղղորդ. և գարձան որպէքն ձեր, և պագին երկիր իմում որպէսն։ Վարձեալ պատմեաց նոցա միւս ևս երազ. յորում ետես, զի արեգակն և լուսին և մետասան աստեղք երկիր պագանէին նմա։ Յայնժամ խոհական հայրն սաստեաց նմա լռել. գիտելով եթէ յո՞ ունկն յանկիլ քանք նորա։ Ասէ նա եթէ պիտ լռեաց և ոչ ևս խօսեցաւ ինչ վասն այնպիսի սեաց, սակայն խօսեցեալքն բաւական եղեն այնչափ վառել զատելութիւն նոցա, մինչև հաստատել նոցա ՚ի մտի բառնալ զնա ՚ի կենաց։

Ել յամեաց առիթն ՚ի կատարումն անօրէն խորհրդոյ նոցա. քանզի ՚ի նոյն աւուրս առաքեցաւ Յովսէփ ՚ի հօրէ իւրմէ առ եղբարս իւր ՚ի գաւառն Թայիմ, ուր արածէին նոքա զխաշինս իւրեանց՝ բերել զրոյց նմա զողջունէ նոցա, և զխաշանց։ Նոքա իբրև տեսին զնա հեռւ ՚ի տանէ, և միայն ընդ միայն, խորհուրդ ՚ի մէջ առին անդէն և անդ սպանանել զնա։ Ասուբէն երիցագոյն ՚ի նոսա՝ չէր հաւան ՚ի սրտի իւրում ընդ խորհուրդ նոցա. բայց ոչ իշխեալով յայնմ ընդդէմ կալ նոցա, խրատ ետ չմխել զձեռս յարիւն եղբօր իւրեանց, այլ ընկենուլ զնա ՚ի գուբ մի ցամաք՝ որ կայր անդ. զի ինքնին սուալլուկ մեռցի անդ։ Որով առ երեսս ցուցանէր զանձն կամակից սպանութեանն նորա, զեզանակն ևեթ սպանմանն փոխելով. այլ ՚ի սրտի իւրում ունէր ապրեցուցանել զպատանեակն, և ողջանդամ հասուցանել զնա առ հայր իւր։ Հասանեցան ընդ խորհուրդ նորա, վասն որոյ մերկացին ՚ի նմանէ զգեղեցիկ պատմուճանն ծաղկեայ, և ընկեցին զնա ՚ի գուբ անդր՝ որպէս կենդանւոյն Թաղելով ՚ի գերեզման. և ինքեանք նստան ուտել զՀաց։ Ասէ ռուբէն ոչ նստաւ ընդ նոսա, այլ վաղվաղակի մեկնեցաւ անտի, առ ՚ի շարժել և զայլսն փութով եղանել և երթալ ՚ի գործ իւրեանց. որպէս զի յետոյ ինքն միայն եկեալ հանցէ զպատանեակն։

Այլ նաճ որ կամէր բարձրացուցանել զյովսէփ՝ ոչ անդ յերկրին քանանացւոց, այլ յայլ կողմն աշխարհի, սնօրինեաց՝ զի՛ նախ ժամուբ անցանիցեն ընդ այն վաճառականսն խամայէլացիք, որք երթային իջուցանել զվաճառս իւրեանց յեգիպտոս։ Յերրորդ տեսին սոքա զնոսա՝ ի հեռուստ՝ զի դայիին, գումթ լինի անկաւ՛ ի սերտ յոգւոյն՛ ի վերայ յովսեփայ. յորմէ շարժեալ՝ խորհուրդ եղ ի գերեզմանէ իւրոց վաճառել զնա խամայէլացւոց՛ ի գերութիւն, և մի՛ ձեռամբ իւրեանց սպանանել. զի եղբայր և մարմին մեր է ասէ։ Չձեցան ամենեքեան ընդ խորհուրդն, ոչ առանց վերին տնտեսութեանն. որ նովին ձանապարհաւ կամէր բարձրացուցանել զյովսեփ, արդիւնացուցանելով զերազս նորա։ Այսպէս որոյ վաղվաղակի հանեալ զնա՛ ի գոյն անտի, վաճառեցին նոցա քսան դահեկանի. որք և տարան զնա ընդ ինքեանս յեգիպտոս։ Օյնկի սակաւուց դարձաւ ռուբէն՛ ի գուբ անդր գազատաբար՝ ուրախ՛ ի չտեսանել անդ զեղբարսն, ակնուռնելով անարգել՛ ի գլուխ տանել զնորդուրդ իւր։ Այլ երբեմն եկն, և հայեցեալ՛ ի գուբն՝ ոչ եգիտ անդ զորն խնդրէր, ոչ ևս զբերաց ծածկել զկնիճ սրտի իւրոյ. պատառեաց զհանդերձս, և դառնացեալ ոգուլ եկն առ եղբարսն, և պատմեաց նոցա զիրսն։ Ասէ նոքա լռեցուցին զնա՝ պատմելով զոր գործեցինն, և հաւանեցուցին չայտանել զայն քնաւ յաջանջս հօր իւրեանց, ապա թէ ոչ՝ ասէն ամենքեան յանցաւոր լինիմք առաջի նորա զամենայն աւուրս կենաց նորա։ Այր զարմանալ արժան է, թէ զիա՞րդ տասն երիտասարդք գիտացին գաղտնի պահել զգեղեցն ընդ ամն քսան և երիս՝ ըստ հասարակ հաշուոյ մեկնչաց։

Այսպս զկնին ուղ մի, և զծաղկեալ պատմուձանն յովսեփայ թաթաւեալ յարեան նորա, յղեցին առ հայր իւրեանց ասել ցնա՝ եթէ ըստ գիպաց իմն գտաք զայդ՛ ի դաշտի։ Օյն իբրև եւտես յակոբ, ծանեաւ զի էր պատմուձանն որդւոյ իւրոյ. և հաւատաց եթէ գազան չար եկեր զնա.

պատառեաց զՀանդերձս իւր, և քուրձ զգեցաւ. և սգայր զիա անբերելի ցաւով աւուրս բազումս։ Ա՛ աձնառումն յովսեփայ եղև յամի արարչութեա՛ն աշխարհի 2209. ՚ի նմին ի՛սկ ամի, յորում Հաստատեաց ՅՈՎ յակոբայ զնոստումն արարեալ առ աբրահամ և առ իսահակ առնել զնա հայր ժողովրդոց և Թագաւորաց։ Ի՛սկ յովսէփ էր յայնժամ ԼՈՒՆԱՏԱՆԱՄԱՅ։

Ո՛ կնի վաձառմանն յովսեփայ պատմեն՝ թէ դիւրք աստանօր ՚ի ՃԼ. ԼԷ. զծննդաբանութիւնն յուդայի, եթէ առ նա իւր կին զշաւա դուստր իրասայ առն քանանացւոյ. յորմէ ծնան նմա երեք որդիք. Էր, ՕՆԱՆ, և ՍԵԼՈՒՄ. և առ յուդա զԹամար ՚ի կին էրայ որդւոյ իւրում անդրանկի ՚ի Թերակատար հասակի նորա, Թերևս առ ՚ի յաղուրդ անժոյժ և զեղծ բարուց նորա. այլ իբրև ամուսնացաւ, վաղվաղակի եհար զնա ՅԱԾ վասն անօրինութեից նորա, և մեռաւ։ Ի՛պա էառ յուդա զԹամար ՚ի կնութի՛ն երկրորդ որդւոյ իւրում ՕՆԱՆԱՅ. բայց այսպիսի պայմամբ, զի զաւակը ծնեալը ՚ի նմանէ համարեսցին որդիք էրայ, և ժառանգեսցեն զիւրաւունս անդրանկութեան նորա իբրև օրինական հօր իւրեանց. և ՚ի նորին անուն անուանեսցին։ Ի՛սկ ՕՆԱՆԱՅ՝ որ ոչ կամէր կորուսանել զիրաւունս իւր, զի ՚ի մեռանել եղբօրն անզաւակ՝ ինքեան անկ էր յաջորդել յիրաւունս անդրանկութե՛ն, Թէպէտ ամուսնացաւ ընդ Թամարայ, բայց խափանէր զծննդաժողովութի՛ն. ընդ որ մեծապէս սրտմտեալ ՅՈՒ՝ եհար և զնա և եբարձ ՚ի կենաց։ Ի՛սկ յուդայ համարելով զմահ սոցա պատճառեալ յամուսնութե՛ն յանկատար հասակի՝ էև ևս յարբունս հասեալ և զօրացեալ, նմին իբրև ոչ կամեցաւ և զերրորդ որդի իւր կրսերագոյն ՚ի նոյն վտանգ արկանել՝ վաղաժամ ամուսնացուցանելով։ Ա՛յսու որոյ սասց ցնու իւր Թամար կրկին այրիացեալ, երթալ նստիլ այրի ՚ի տան հօր իւրոյ, մինչև սելումի ժամանիցէ ՚ի չափ կատարեալ հասակի. և ապա տացէ զնա նմա կին։

Յետ այնորիկ զկնի ամաց ինչ՝ մեռաւ շաւա կին Յուդայ. մեծացաւ և սերսէմ. և տեսեալ Թամա-
րայ, զի յամս յուդա զնոստուհին իւր կատարել, խորամանկ հնարագ իտուէթ լինի լարեաց սակս-
առն իւրոյ որոգայթ, յորում և ըմբռնեցաւ նա՝ յանգետս անկեալ ընդ նուռս իւրում: Յետ երից
ամաց իբրև ազդ եղև յուդայի յղութիւն նուռս իւ-
րոյ, ոչ գիտեալ Թէ լիւքմ իցէ, վաղվաղակի
հրամայեաց ետ հանել զնա արտաքս և ի հուր այրել:
Այսոքիկ կինն խորագէտ, որոյ առեալ էր ի նմանէ
զմատանի նորա, և զգինան, և զգաւազանն իբրև
գրաւական, մինչև հասուցանիցէ նմա զվարձս զոր
խոստացեալ էր, (զոր և յաղագս այնր ժամու
զգուշութեամբ պահեալ էր առ իւր,) առաքեաց
զայնոսիկ առ յուդա՝ ձանձրացեալ նորօք զհայր մանն
կանն, զոր կրէր յարգանդի: Այն իբրև հասես
յուդա, անդրէն և անդ ընկալաւ բորբոքումն սրտմտու-
թէ նորա. դատարեցաւ վճիռն մահու. և արդա-
րացաւ Թամար քան զդատաւորն իւր. որպէս ինքնին
խոստովան եղև յուդա: Այսպա ըստ ժամանակին
ծնաւ Թամար երկուորեակս զփարէս և զզարա:

Այսկ իսմայելացիքն ելուցին զյովսէփ յեգիպ-
տոս. զոր գնեաց անդ պետափրէս դահճապետ,
այսինքն սպարապետ առանին զօրացն փարաւոնի.
որ ի սակաւ աւուրս ծանուցեալ զբարեզգեաց բարս
նորա, զհաւատարմութիւն և զխոհեմութիւնն նորա,
յերս իրս անտեսութեան տան իւրոյ սկսաւ ի կիր
արկանել զնա: Այսպա փորձիւ տեսեալ, եթէ ածն
նորա ընդ նմա էր, և զամենայն ինչ յոր ձեռն ար-
կանէր, յաջողէր նմա ի բարի, այնուհետև արար
զնա ընդհանուր տնտես ի վերայ տան իւրոյ, զմա-
տակարարութիւն ամենայն ընչից իւրոց ի ձեռս նո-
րա հաւատացեալ. այնչափ՝ մինչև ըստ ոմանց զգ
գրոյ խօսելով չգիտէր նմա զամենայն որ ինչ կայր
ի տան իւրում, բայց միայն զհացն զոր ուտէր:
Այլ այս բարեկրօնութիւն յովսեփայ ոչ յաճեաց ընդ-
երկար. քանզի տիկին նորա յիմարեալ ընդ վայե-
լուչ գեղ երեսաց աքանչելի պատանւոյն, և մեռա.

ցեալ զՀամբոստութեի և զամբանական հաւատոյ մութեի իւր, պնդեալ էր զՀետ նորա. բայց ամենայն հրապուրանք նորա չզօրեցին տալ սրբասէր պատանւոյն մոռանալ զնծն իւր, և զպարտս հաւատոյիմ ծառայի։ Իպա յաւուրս միում մեռեալ յովսեփայ վանն գոլծոյ ինչ 'ի տուն՝ ուր ոչ գոյր ոք յընտանեաց, 'ի ձայ առեալ զայն ժամ վաւաշ տիկնոջն իւրոյ կամոյ կատարման, բուռն եՀար զվերարկուէ նորա, և ստիպէր զնա 'ի գործ պղծութեե. իսկ նա թողեալ զվերարկուն 'ի ձեռս նորա, փախեաւ եւ արտաքս։ Իայս արիական մերժումն անամթեի կնոջն, եւ նմա զտուփական սէրն փոխել 'ի կատաղի բարկութե. ամբաստան եղև զյովսեփայ առ այրն իւր, իբր թէ նա կամեցեալ իցէ բռնութե առնել նմա. և 'ի հաւատարմութեի անօրէնն զրպարտութեանն՝ զվերարկու նորա ցուցանէր նմա։ Հաւատաց այրն անխորհուրդ մտօք բանից կնոջն, և սրտմտեալ սրկ զարդարն 'ի բանտ, ուր արքունի կալանաւորք կապեալ կային։

Իսակաւ աւուրս անյապաղ եգիտ յովսէփ ընորՀս առաջի բանտապետի. զի ոՀ ՀԱծ էր ընդ նմա. և այնուՀետեւ կայր անդ՝ ոչ իբր կալանաւոր, այլ իբրև Հրամանատար 'ի վերայ կապանաւորացն. զի բանտապետն զամենայն ինչ ետ 'ի ձեռս նորա։ Իայն աւուրս բարկացեալ փարաւոնի վասն իրաց ինչ ընդ տակառապետ իւր և ընդ մատակարարն, սրկ գնոսա 'ի նմին բանտի ուր էր յովսէփ. և զկնի աւուրց ինչ տեսին երկոքեան երազ, և խռովեցան. որով և յաւելաւ տրտմութիւն նոցա. քանզի նշմարէին յանսովոր երազի անդ խորհուրդս, այլ ոչ կարէին Հասու լինել։ Իընդ առաւօտն տեսեալ յովսեփայ տրտմեալս զնոսա առաւել քան զայլ աւուրս, եՀարց զպատճառսն. և լուեալ 'ի նոցա նէ զերազս՝ ծանեաւ վաղվաղակի տերամբ, եԹէ չեն սոսկ գիշերային ցնորք երևակայութե, այլ գուշակութիւնք 'ի Աստց Հրեշտակաց ազգեալք 'ի միտս նոցա. ընդ նմին խմացաւ վերնապարգև լուսով և զմեկնութե նոցա։

Տակառապետն պատմէր, Թէ տեսի յերազի՝ որպէս Թէ կայր առաջի իմ որթ մի, և՝ ի նմա երեք ուռք կանաչք յոյժ. և յուռն երեք ողկոյզք հասեալ խաղողոյ. զորս Թուէր ինձ՝ Թէ առնուի և ածիլեի՝ ի բաժակն, և մատուցանէի փարաւոնի: Ասէ ցնա Յովսէփ. զկնի երից աւուրց դարձցես անդրէն՝ ի նոյն պաշտօն քո և՝ ի ընծրՀս արքայի, և տացես զբաժակն՝ ի ձեռս փարաւոնի: Այլ յիշեացես զիս յայնժամ, և արասցես ինձ ողորմութիւն. աղաչեալով զփարաւոն՝ զի հանցէ զիս՝ ի բանտէ տասի, ուր մատնեցայ առանց ինչ իմոց յանցանաց: Լսեալ մատակարարն պատմեաց, Թէ տեսի՝ որպէս Թէ ունեի՝ ի վերայ գլխոյ իմոյ երիս խանձ հաշՀոյ. և՝ ի վերնում խանձին էին պէսպէս կերականդակք գործ մատակարարաց սովորականք՝ ի սեղանն փարաւոնի, զոր Թռչունք երկնից ուտէին՝ ի խանձ անտի: Ասէ ցնա Յովսէփ. յետ երից աւուրց բարձցէ փարաւոն զգլուխ քո՝ ի քէն, և կախեսցէ զքեզ զփայտ. և կերիցեն Թռչունք երկնից զմսովին քո: Որ ինչ միանգամ գուշակեաց նոցա Յովսէփ՝ կատարեցաւ ամենայնն զկնի երից աւուրց. մին կախեցաւ զփայտ, իսկ միւսն կոչեցաւ անդրէն յառաջին իշխանութիւնն իւր: Այրևէր Թէ յաղատիլ սորա, առաջին փոյթն լինէր նմա ժամ դիպօղ խնդրել աղաւէտ և զբարերարն իւր զյովսէփ. այլ յաջողութիւն իւր երթայ՝ ի յուշոյնոսա զԱշուառուԹիւն բարեկամին, և ոչ ևս յիշեացն զնա: Այլ և այս ոչ առանց կանխակարգ ուսուցմանէ Վերնոյն, առ պանծագոյն շքեղութիւն յաւետեփայ. որպէս զի՝ ի գնալ ժամու՝ ի ցածութիւն և յանարգութիւն բանտին՝ իբր ընդոստ աշխարհաւեր յանկարծ ամբարձցի՝ ի գահ արքայապատիւ փառաց:

ԳԼՈՒԽ ԺԱ՛

Յովնէ էլաւ ի քաղաք. ձկին չքերաը փարաւոնի. կացոյցանի ի փարաւոնէ գոհարեայ ի վերայ հմայութեան եգիպտոսի: Ապերթ պարէն վանն եօթնամեան առնու: Վանն պատնէչին եղբարց նորա սա վանն յորենոյ, և յովնէ օծարանայ ի նոցանէ:

Ապա յետ երկուց ամաց՝ ուր ուրեմն նորոգեցաւ ի միոս տաճառապետին յիշատակ երազահանի իւրոյ, ի պատճառս այլոց երկուց երազոց փարաւոնի: Ոչանգի եղև տեսանել փարաւոնի յերազի՝ որպես թէ կայր յեզնեղոս գետոյ, ուսոի ելանէին եօթն երինջք գեղեցիկք՝ պարարտք և ընտիրք մսովք, և արածէին ի խաղի անդ յեզր գետոյն: Նոյնպէս յետ նոցա ելանէին ի գետոյ անտի այլ եօթն երինջք զպիրք տեսլեամբ և վտիտք մսովք. որք թէպէտ արածէին և նոքա անդ, սակայն այնու ոչ շատանային, ուստիև և զեօթն պարարտ և զընտիր երինջս: Օ արթեաւ փարաւոն, և զկնի սակաւուց անդրէն ի քուն եմուտ. և տեսս երկրորդ երազ. թուէր նմա թէ ելանէին եօթն հասկք ի մի ծղօտ, ընտիրք և գեղեցիկք. այլ զկնի նոցա ելանէին այլևս եօթն հասկք ոսկիք աղաղունք և խոշորակաճարք, որք կլանէին զեօթն հասկս առաջս և զընտիրս:

Օ արհուրեալ փարաւոնի ընդ տեսիլ երազոյն, կոչեաց վաղվաղակի զամենայն երազահանս եգիպտոսի, և զամենայն իմաստունս նորա. պատմեաց նոցա զերազ իւր. այլ ոչ ոք ի նոցանէ գիտաց մեկնել: Յայնժամ տակառապետ նորա յիշեաց զյովնէի. և պատմեալ առաջի արքային զդիպուածն՝ որ պատահեաց ինքեան և եղկելի ընկերի իւրում, եցոյց թէ նա և եթէ կարող է մեկնել զերազն արքայի: Ոչ ան որոյ ըստ հրամանի փարաւոնի նոյն

ժամայն հանաւ յովսէփ ՚ի բանտէ. և փոքրեալ
զՏէրս նորա, որ յերկար բանտարկութէ առնեցեալ
էր, և զգեցուցեալ նմա հանդերձս արժանաւորս
երևելի նովաւ առաջի փարաւոնի՝ այսպէս ածին
կացուցին զնա յանդիման արքային։ Իբր յովսէփ ա-
մաց երեսնից, յորժամ ընծայեցաւ առաջի փարա-
ւոնի արքային եգիպտացւոց. իսկ ամք արարչութէ
աշխարհի 2223։ Ընդ որ ասաի կամէր սկիզբն առ-
նել փառաւորելոյ զյովսէփ, յայտնեաց նմա զնոր-
հուրդ երազոցն. և նա պատմեաց առաջի փարա-
ւոնի և առաջի ամենայն աւագանւոյ նորա և ասէ.
երազք փարաւոնի մի են. և գուշակեն ընդ ամ
եօթն անընդհատ լինել յորդառատ լիութէ ամե-
նայն արգեանց յերկրին եգիպտացւոց. և ապա
զՏետ եկեսցեն այլ եօթն ամք սաստիկ սովոյ յոյժ,
մինչև մոռանալ մարդ կան զառաջին առատութէն։
Ընդ ապա ետ խորհուրդ արքային կացուցանել ՚ի վերայ
ամենայն երկրին եգիպտացւոց այր խմաստուն և
խորհրդական, որ զաւելորդն ամացն առատութէ
ամբարեալ պահեսցէ ՚ի պէտս կարեաց վատնդ ի
կարօտութէեան եօթնամեան սովուն, զի մի կորիցէ
երկիրն ՚ի սովոյ։

Հաւանեցաւ փարաւոն և ամենայն աւագանի նո-
րա մեկնութէ երազոցն, միանգամայն և մեծապէս
հաճոյ եղև նոցա ամենեցուն յառաջաբանս խոր-
հուրդ նորա. որով և մեծացաւ յոյժ ՚ի միտս ար-
քային և ամենայն աւագանւոյ նորա. մինչև կացու-
ցանել զնա փարաւոնի իբր հետզհետէ և փոխարք-
քայ, և զամենայն ժողովուրդ ՚ի հնազանդութիւն
նմա կարգել. միայն աթոռոյն ասէ ՚ի վերոյ եղէց
ես քան զքեզ։ Ընդ հանեալ զմատանին ՚ի ձեռա-
նէ իւրմէ, որ էր կնիք թագաւորութէ իւրոյ, եդ
՚ի ձեռն յովսէփայ. և զգեցոյց նմա պատմուճան
քհեղեայ՝ նշանագործ ետ հանմատ իշխանութէեան
նորա. և արկ մանեակ ոսկի ՚ի պարանոց նորա։
Ընդ ապա հանեալ զնա յերկրորդ կառս իւր, ետ
քարոզ կարգալ առաջի նորա՝ ճանաչել և պատուել
զնա ամենայն ժողովրդեան փոխարքայ և երկրորդ

թագաւորութեանն նորա։ Այլ փոխեալ զանուն նո-
ցա, կոչեաց զնա փսոմթոմփանէք. որ թարգմանի
յայտնիչ գաղտնեաց կամ երազացոյց. իսկ ըստ
ոմանց փսոթոիմ փանէք ՚ի լեզու զիտեաց, որ զծա-
գումն իւր ունի ՚ի բարբառոյ եգիպտացւոց, նշա-
նակէ փրկիչ աշխարհի։

Այսպէս փառաւորեալ զնա փարաւոնի բարձրա-
գոյն իշխանութենէ, եւս նմա ՚ի կնութենէ զասանէթ
օրիորդ բարեզգեաց դուստր պետափրեայ ուրուհն
երկրորդի, որ էր քուրմ արեգական, կամ քրմա-
պետ հեղհելոպօլոյ, այն է՝ արեգ քաղաքի։ Այս
արձակեաց զնա ելանել յերկիր ՚ի զնին ամենայն տե-
ղեաց Համարկն եգիպտոսի. և տալ շինել շուրմա-
նոս մեծամեծս յամենայն քաղաքս և յատանս՝
ամբարել ՚ի նոսա համբարս ցորենոյ և այլ ամե-
նայն արմտեաց. և առնել և զայլ պատրաստու-
թիս, որ ինչ միանգամ կարեւոր թուիցի իմաստութենէ
նորա։ Ամբոխ յոլովիփ զամենայն. և հրամայեաց, զի
յամենայն բարեաց եօթն ամաց առաւտութենէ հին-
գերորդ մասն տացի յարքունիս, ամբարել յորքու-
նի շուրմանոս կարգեալս յիւրաքանչիւր տեղիս։
Իսկ յաւելեալն եղիցի ՚ի պէտս իւրաքանչիւր
տեարց, ծախել կամ շուրմարանել որպէս և կամի-
ցին։ Այնգուշակեալ առաւտութենն. որպէս թուի՝
ոչ անմիջապէս ՚ի հետեւեալ ամի զինի մեկնելոյ
յոլովիփ զերազս փարաւոնի. զի առ ՚ի գլուխ երա-
նել ամենայն իրագործութեանց, որք պատմին ՚ի կա-
գլ. ծնն. յառաջ քան զսկսանել ամաց լիութենէ, պի-
տոյ էր ժամանակ։ Որոյ եւս այնորիկ սկսան եօթն
ամք սովոյն. չունիմք ՚ի ձեռ գիրս թէ առաւտութենն
եղեալ իցէ և արտաքոյ եգիպտոսի. բայց վասն
սովոյն ասէ, * Այս էր սով ՚ի վերայ երեսաց ամե-
նայն երկրի ‖. ուստի և ՚ի քանան և ընդ Համարկն
պաղեստին։

Յառաջնում ամի սովոյն՝ յակոբ չունէր պէտս
ինդրել արտաքուստ պարէնս. բայց յերկրորդում
ամի տեսեալ զի երաշտն երկարէր, և լուեալ թէ
յեգիպտոս վաճառի ցորեան, ոչ միայ խոհական

հայրն ցվերջին կարօտութեի ժամանել։ Այլ կանխել առաքեաց զտասնեսին որդիս իւր, որք յայնժամ ամենեքին կանամբի էին, և հայրը զատակաց բազմաց։ Այլին նոքա ի ձանապարհ ամենայն պատրաստութեք գրաստուց և դրամոց, բայց ի քենիամինէ կրսեր որդւոյ յակոբայ. զոր ոչ արձակեաց ընդ նոսա հայրն, երկնչեալ թէ գուցէ հիւանդութեի պատահիցէ նմա ճանապարհայն. զի նա էր նոքա մի միայն սրտի դիւր՝ յետ կորուսանելոյն զյովսէփ։

Հասեալ նոցա յեգիպտոս, և մտեալ առ յովսէփ փոխարքայ եգիպտոսի խնդրել ցորեան, երկիր պագին առաջի նորա. որով և կատարեցաւ տեսիլ երազոյ նորա։ Յովսէփ նոյն հետայն ծանեաւ զնոսա. բայց նոքա ոչ ճանեան զնա. զի և ոչ իսկ ընդ միտս նոցա կարէր անկանիլ, թէ նա զոր յայնպիսի պատիւ փառաց և իշխանութեի տեսանէին՝ իցէ եղբայրն իւրեանց, զոր ինքեանք ի ծառայութեի վաճառեցին։ Այլ անուշն իսկ ոչ կարէր յերկբայս արկանել զնոսա վասն նորա. զի բազում ամաք յառաջ փոխեալ էր փարաւոն զանուն նորա։ Այլ ոչ ի դիմաց պատկերի կարէին ճանաչել զնա. քանզի մինչ վաճառեցաք, էր պատանեակ եօթնեւտասն ամաց անմորուս. իսկ յայնժամ անցեալ էր զքառասնամեայիւք. ոստի աւելի քան քսան ամք էին, յորմէ հետէ չէր նոցա տեսեալ զնա. Թովղ զտարազ զգեստուց, և զիշխանական վեհանձնութեին և զեղանակ վարելոյ և խօսելոյ, որք մեծապէս փոփոխեն զմարդ։

Յերև ետես յովսէփ, զի քենիամին համամայր եղբայրն իւր էր ընդ նոսա, կասկած մեծ անկաւ ի սիրտ նորա, թէ գուցէ զնոյնպիսի անցս անցուցեալ էցեն և ընդ նա, զոր ինչ արարին նմա։ Վասն որոյ եհայր սրտիւ, և կամէր հասու լինել սուտգուվերթք իրացն. այլ եթէ ծանօթս տայր նոցա, կարէին նոքա ստայօդել ինչ, և չայտանել նմա զչմարտութեին. իսկ եթէ յանծանօթս խօսեր ընդ նոսա, ոչ կարեր ցուցանել թէ գիտէ ուստի նոքա

և զայլ եղբայր . ուսոսի և ոչխակ կարէր հարցանել
ինչ նոցա յաղագս նորա : Խորհեցաւ զերկու հնարս,
առն ունելով նոքօք որսալ ինչ ի բերանոյ նոցա :
Ի՝ ձևացուցանել զանձն ոչ գիտել զլեզու եբ-
բայական . որպէս զի համարեալով նոցա թէ ոչ իմա-
նայ զբարբառ իւրեանց , գուցէ խօսիցին ի մէջ
իւրեանց առաջի իւր ինչ ինչ , յորմէ առնուցու
զծանօթութիւն ինչ . յայն սակս թարգմանաւ խօսէր
ընդ նոսա : Երկրորդ՝ վարիլ ընդ նոսա խաւու-
թիւբ լինի իբր ընդ կասկածաւոր արանց եկելոց ի
լրտեսել զերկիրն . որպէս զի նոքա կամեցեալ ար-
դարացուցանել զանձինս , պատմեսցեն յաղագս ան-
ձանց և տան իւրեանց . և տայցեն նմա պատճառս
հարցփորձի . որով թերևս առնուցու լիագոյն տե-
ղեկութիւն վասն եղբօրն և հօրն :

Հնարք նորա չելին ի գերև . քանզի իբրև
ասաց նոցա թարգմանաւ , Թէ լրտես էք դուք՝
եկեալ ի գնալ զերկրամաւտ աշխարհիս , նոքա ան-
դէն վազվազակի սկսան պատմել պարզմտութիւբ
զանձանց . Ոչ աեր , ասեն , էմք լրտեսք . ամենե-
քեան մեք որդիք եմք միոյ հօր . և ոչ խորհուրդ պա-
տերազմի կամ արշաւանաց մղեաց զմեզ ատ , այլ
լոկ կարօտութենէն կերակրոյ : Ոչ , ասէ յովսէփ .
այլ եկեալ էք գիտել զանցիկն և զակարագոյն կող-
մանս երկրիս : Երկոտասան եղբարք
եմք , որպիք առն միոյ յերկրէն քանանացւոց . ասա
տան եմք . կրտսերն է ի տան առ հօր իւրում ի
մխիթարութիւն նորա . և միւսն չէ ի միջի : Յայն-
ժամ յովսէփ բարձրացուցեալ զբարբառ իւր , ասէ .
դովին իսկ յայտ արարիք՝ եթէ լրտես էք դուք .
այլ գոից ես հնարս հասու լինել ձշմարտութենն .
երդուեալ յարևն փարաւոնի (այսինքն ի կեանս
Փափաւորին) , Թէ ոչ ելանիցէք ատի , մինչև
եկեսցէ եղբայր ձեր կրտսեր , զորմէ ասացիք Թէ
կայ ի տան առ հօր իւրում . և արդ՝ որոշեցիք
զմիմ ի ձէնջ երթալ և ածել այսր զեղբայր ձեր
զկրտսեր . և դուք կացջիք ի կալանս : Ոչ առ ի
յուցանել՝ Թէ հաստատութիւբ խօսի , միանգամայն

զի մի երկար ուշեալով զնոսա առաջի, ի փղձկել զթոյ սրտին յարտասուս լուծանիցի, հրամայեաց բառնալ զնոսա յառաջոյ, և տանել ի բանտ։

Ապա յաւուր երրորդի կոչեաց զնոսա զառաջեաւ. և ցուցանելով զանձն փոքր մի մեղմացեալ յառաջին խստութենէ, ասէ. Չապա եկայք արարէք զոր ասեմ, և ապրիք, զի և ես յոյ երկիւղած եմ, և չեմ անգութ. շատ է ինձ, զի միգ ի ձէնջ կայցէ սատ ի բանտի որպէս պատանդ. իսկ դուք առեալ զվաճառ ցորենոյդ՝ երթիջիք ի տուն ձեր. և փութով ածէք այսր առ իս զեղբայր ձեր զկրտսեր. որով հաւատարմացուցեալ զբան ձեր, տաջիք ինձ գիտել թէ արք խաղաղութենէ էք և անկեղծք. ապա թէ ոչ՝ մեռանիք։ Յետ այսց բանից՝ ըստ ակնարկութենէն յովսեփայ՝ էլ արտաքս թարգմանեն. և նոցա մնալով միայն, և կարծելով ջմնռանալ յովսեփայ զլաբբաւ իւրեանց, սկսան խօսել ընդ միմեանս և ասել. Յիրաւի կրեմք զայս ամենայն վասն չարեացն, զոր անցուցաք ընդ եղբայր մեր. տեսաք զտագնապ ոգւոյ նորա՝ յորժամ աղաչէրն զմեզ, և ոչ գթացաք ի նա, այլ արհամարհեցաք զնեղութենէ նորա. արդ արժանի եմք և մեք չհանդիպիլ նեղութենէ։ Ռուբէն ասէ. Ոչ խօսեցայ ընդ ձեզ, ասէ, մի մեղանչէք մանկանդ. և ոչ լուայք ինձ. ահա արդ արիւն նորա խնդրի ի մէնջ։ Յովսեփ որ լսէր զամենայն, և գիտէր թէ ինքն է միջնորդն զորմէ խօսէին, ոչ ևս ժուժելով արգելուլ զարտասուաց բղխմանցն, մեկուսացաւ յայլ սենեակ, և անդ յառանձնութեան արձակեալ զարտասուս՝ եկաց, մինչև սթափեցաւ։

Ապա եկեալ միւսանգամ առ նոսա՝ նովին առեւտրոյթ խստութեբ ետ կապել զշմաւն առաջի նոցա. և ի լեզու եգիպտական, զոր նոքա ոչ իմանային, հրամայեն ետ հազարապետի իւրում՝ ընուլ զբուրձս նոցա ցորենով. և դնել ի նոսա զարծաթեն իւրաքանչիւր ի քրձի իւրում. և ևս տալ նոցա պաշար լիով որչափ բաւական իցէ ի ճանապարհ։ Եւ այսպէս ցորենով և առատ ռճձիօք

յանգէտս ինամեալք և լեացեալք եղբայրական գթով ՚ի յովսեփայ, գնացին անտի խռովեալք սակս առ լրտեսս կասկածաւորս ունելոյ զնոսա փոխարքային։ Եւ զձանապարհային լուծեալ միոյ ՚ի նոցանէ յիջևանին զքուրձ իւր՝ առ ՚ի տալ կերակուր գրաստոյ իւրում, և տեսեալ զծրար արծաթոյն իւրոյ ՚ի բերան քրձոյն, պատմեաց հիացմամբ այլոց. ընդ որ ամենեքին զարմացան, բայց չէղև փոյթ նոցա զնոսել զքուրձս իւրեանց. կամ զի համարէին զայն վրիպմամբ հանդիպեալ, և կամ զի թերևս արտաքոյ այնց քրձոյ՝ ուր կայր արծաթն, ունէին յայլ ամանս կերակուր բաւական գրաստուց իւրեանց։

Հասեալ ապա ՚ի տուն առ յակոբ հայր իւրեանց յերկիրն քանանու, իբրև Թափէին զբեռինս իւրեանց, տեսին և ահա ծրար արծաթոյ կայր իւրաքանչիւր ՚ի քրձի իւրում, ընդ որ երկեան ամենեքին։ Եւ պատմեցին հօր իւրեանց մի առ մի զամենայն անցս, որք անցին ընդ նոսա յեգիպտոս. և նա լսեր հանդարտութեբ։ Այլ իբրև հասին յայն բան դառնագին, Թէ շմաւոն կայ ՚ի բանտի, և ոչ արձակեսցի անտի, մինչև փոխադրեսցի ՚ի տեւ ցի զբենիամին աջոք առաջի իւր, յայնժամ հայրն գորովադէտ ՚ի սիրտ և ՚ի հոգի խոցեցաւ. տեսեալ զանձն զուրկ յերկուց որդւոց. արդ և զերրորդն՝ որ յաւէտ սիրելին էր նորա, խնդրեին բառնալ ՚ի նմանէ։ Այսան որով ասէր ողբագին. * Ո՛ իս անորդի արարիք. յովսէփ՝ չկ՚ ՚ի միջի. շմաւոն՝ չկ՚ ՚ի միջի. և զբենիամին և սա առնուցուք։ Եւ Թէպէտ էրաշխաւոր լինէր վասն նորա ռուբէն, և խոստանայր ինքնին տանել խնամով, և անդրէն ողջանդամ դարձուցանել զնա, Թողուլով ընդ նորա զերկու որդիս իւր ՚ի պատանդ, բայց և այնպէս ոչ զիջանէր յակոբ. * Ոչ իջանէ ասէ որդի իմ ընդ ձեզ։ ոչ որպէս Թէ մանուկ փոքրիկ էր բենիամին, անկարօդ առանել վշտաց այնչափ երկար ձա նապարհի. քանզի անցեալ էր նա յայնժամ զքսան, և չորսամենեքեան, այլ զի զնոքին կորուսանելոյ գյով-

ակի՝ նա միայն մնացեալ էր նմա որդի ծերութեանէ ի ռաքելոյ։ Այսպէս հուսկ ուրեմն քահանայապետեալ ի կարօտութենէ, ձիջաւ արձակեալ զնա։

ԳԼՈՒԽ ԺԲ։

Վարչեալ առաւել յակոբ զերդիս էր ի գիշերոջ առ յովնէի ման ցորենոյ. ընդ որս ախամոյ կամօք արչակէ և ընդենուաղին։ Այս անդամ յայսմնէ յովնէի զանձն եղէրբոյ էրոյ. և հրաման պայ ածել զհայրն հանդերձ ամենայն ընտանեօք և սպացուածովք էրեանց։

Վանգի սոքա և քան զևս սաստկանայր, և պարէնն՝ զոր բերին՝ մերձ էր ի սպառումն. և չգոյր այլ հնար ապրեցուցանել զայնչափ մեծ և բազմամարդ դերդաստան, բայց երթալ միսանգամ յեգիպտոս, հայրն ի նոյն ստիպէր զորդիս. իսկ նոքա սկզբին մերժանիլ՝ քան առանց բենիամինի երևիլ միսանգամ առաջի փոխադրչին։ Այսպա յուդա առնայր յերաշխի զեղբայրն՝ պարտաւորելով զանձն հաստատութիւն անդրկէն ածել զնա և կացուցանել առաջի հօրն. և այնպէս ելին ի միասին ի ձանապարհ տասն եղբարք՝ գտանել յեգիպտոս զվերատասանեւորդն ի քանտի. ոչ ակնուանելով թէ ունին գտանել անդ և զերկոտասանեւորդն ի բարձրագահ իշխանութենէ։ Եւ ըստ հրամանի հօր իւրեանց՝ առին ընդ ինքեանս, բայց ի պարգևաց յարդեանց երկրին՝ գտանել նոքօք ընտրհս առաջի իշխանին յորմէ երկնչէին, և բաց յարծաթոյն գնելոյ միսանգամ յորեան, նաև զարծաթն որ դարձուցաւ նոցա յառաջնում նուագի. որպէս զի թէ ոք երբէք անդէն նոր զրպարտութիւնս յարուսցէ ի վերայ նոցա ի պատճառս այնր արծա-

թոյ, արդարացուսցէն զանձինս, յուցեալ նովաւ զանկեղծութիւն և զանմեղութիւն իւրեանց։

Իսկ հասանել նոցա յԵգիպտոս՝ ի սկիզբն երբորդ ամի սովոյն սաստկութեանն, եւտես զնոսա յովսէփ ընդ պատուհանն՝ յառաջ քան զընդունիլ զնոսա առաջի իւր. և վաղվաղակի պատուիրեաց հազարապետի իւրում տանել զնոսա ի տուն, և պատրաստել սեղան. զի յայնմ աւուր կամէր առ իւր ունել զնոսա ի ճաշ։ Իբրև մուծան արքն ի տուն յովսեփայ, երկիւղ մեծ անկաւ ի սիրտ նոցա, թէ ի պատճառս արծաթոյն, որ դարձաւ յամենս իւրեանց, զպատրաստութիւնս կրեսցեն։ Վասն որոյ առանց ուրուք լինչ հարցանելոյ՝ լինքեանք սկսան վաղվաղակի անդ առ դրանն պատմել զիրսն ստուգութիւն ցհազարապետ տանն յովսեփայ։ Իսկ նա զուարթ դիմօք ողջունեալ զնոսա, եւտ պատասխանի թէ չունին լինչ պարտս. ՚ձեր ասէ եղ ձեզ զգանձս յամենս ձեր. և նոյնժամայն եհան առ նոսա զսմանն. բերին և ջուր լուանալ զոտս նոցա. և եւտուն կերակուր դրատուց նոցա։

Իսկ ահա ի միջօրէի եկն յովսէփ ի տուն. իսկ նոքա առեալ զընծայս ի ձեռս՝ երկիր պագին նմա ի վերայ երեսաց իւրեանց յերկիր։ Յովսէփ ոչ ևս զայրագին ըստ առաջնումն օրինակի, այլ լի քաղցրութիւն ողջունէ զնոսա, և հարցանէ յաղագս ծերունի հօր իւրեանց, եթէ ո՞ղջ է։ Ապա դարձուցեալ զաչս ի վերայ սիրելւոյն իւրոյ բենիամինի, ասէ. այդ է եղբայր ձեր կրսեր, զորմ ասէիքն ցիս. և դարձեալ առ բենիամին՝ ասէ. ՚ած ողորմեսցի քեզ որդեակ։ Ոչ այս ասացեալ՝ ոչ ևս զօրեաց խօսել՝ ի փղձկիլ դթոյն. վասն որոյ խոյս եհ՝ ի սենեակ իւր, և անդ արձակեալ զերկու աղբիւրս արտասուաց՝ ելոյ անտես ի մարդկանէ. ապա լուացեալ զերեսս՝ պնդեաց զանձն, եւ արտաքս, և ասաց արկանել հաց։

Ապա ի տան անդ պատրաստեալ երկու սեղանք մեծամեծք. ի միում նստաւ յովսէփ ընդ այլ եւ դիպտացիս հրաւիրեալս ի նմանէ. իսկ ի միւսն

նստան եղբարք նորա ըստ կարգի երիցութեանէ իւրեանց։ Այս բաժանումն սեղանոյ՝ ոչ էր առ մեծամտութեան, որպէս թէ յովսէփ արժան չհամարէր սեղանակից իւր ունել զեղբարսն, այլ արար զայս առ ի յարմարել զանձն խարանաց եգիպտացւոց. որք պղծութեան համարէին ինքեանց ուտել հաց ի մի սեղան ընդ եբրայեցիս խաշնարածս։ Այս յովսէփ ըստ սովորութեան երկրին՝ ինքնին բաշխէր յամենայն կերակրոց զբաժինն իւրաքանչիւրոց ուրոյն, առաքելով ի սեղանոյ իւրմէ. բայց զբաժինն բենիամենի միշտ ի լաւագունից հանէր՝ և հնգապատիկ առաւելութիւն քան զբաժին այլոց։ Իբրեւ և արբին ուրախութեամբ՝ հանդերձ զարմացմամբ ի միտս իւրեանց ընդ նորատեսիլ անակնկալ հիւրասիրութիւն իշխանին։

Այսպա ըստ հրամանին յովսէփայ՝ լցան ամանք նոցա ցորենով որչափ և կարէին տանել. ընդ նմին և արծաթն զոր վճարեալ էին ի գին ցորենոյ, եդաւ գաղտաբար ի բերան իւրաքանչիւր ամանոյ. իսկ ի քրձի բենիամինի եդաւ և արծաթի բաժակն յովսէփայ։ Զայս խաղ՝ որպէս թաւի, հնարեցաւ յովսէփ վասն երկուց. մի՝ առ ի պահել առ իւր զբենիամին՝ առ երեսս իբր յանցաւոր ըմբռնեալ ի գողութեանէ, բայց իրօք իբրև զհամամայր հարազատ իւր սիրելի. երկրորդ՝ առ խմանալոյ սատգութեանէ զսիրտ եղբարցն առ նա. գուցէ և ի սեղանին անդ յայս միտս յաւելցուր զբաժին բենիամինի, տեսանել թէ նախանձիցէն ընդ նա։ Զի թէ տեսին զնա ի սրտի, թերեւս տային դարձուցանել զնա առ իշխանն՝ ի պատճառս կարծեցեալ գողութեան. իսկ եթէ սիրէին, ամենեքեան՝ կամ գէթ ոմանք դառնային ընդ նմա առ ի անբաժիր առնել զնա ի զբաղարտութենէ անտի։ Զայս միտս խմանայ աբեն օգոստինոս զայս ամենայն գործողութիւնս յովսէփայ։

Արդ՝ մինչդեռ մետասան եղբարքն ուրախութեամբ երթային զճանապարհ իւրեանց, չունելով ինչ կասկած չարի ի մտի. մինչև եր նոցա կարի հեռա-

ցեալ ՚ի քաղաքէ, ահա հասանէ ՚ի Թիկանց նոցա Հաղարապետն յովսեփայ հանդերձ արամբք. և ըստ խրատու նորա իւրոյ ՚ի միջ առեալ զնոսա՝ յարձակի ՚ի կշտամբանս, ապաշնորհս կոչելով զնոսա. որք չետ այնչափ բարիս ընդունելոյ ՚ի նմանէ իւրմէ, զողացան և զարծաթի բաժակ նորա, որով նա ինքն սովոր էր ըմպել և հմայել, այսինքն գուշակել և մաղթել բարեյաջողութիւնս սեղանակցաց իւրոց։ (Զմանր զբառդ հմայել, առեալ փոխանակ դիւթական գուշակութեան, ասեն՝ խօսել աստ յովսեփայ ըստ կարծեաց եգիպտացւոց. որք և զյովսէփ իբրև զմի յնմանտնոց և ՚ի դիւթից իւրեանց ունէին լով, կարծելին թէ նովին բաժակաւ խեղտմուտ լինի երազոց, և գուշակէ զապագայս։ Այլոց ստոյգն այն է, զի յայս կարծիս լեալ էին արդէն եղբարքն յովսեփայ, որպէս թէ իշխանն հմայելով բաժակաւն՝ զոր բախէր մատամբ, նստուցանէր զինքեանս ըստ աւագութեան և կրսերութեան, և առաւել քան. ժինս հանէր քեննիամինի։)

Այլ զնարդ և իղէ, հիացեալ նոցա ընդ անակն կալ ամբաստանութեին, չունելով ընաւ կասկած զանձանց և զիրերաց, համարձակ հատին վճիռ, թէ առ որումն գտցի գողնն՝ մեռցի, և ինքեանք ՚ի ծառայութեի գրաւեսցին։ Հաւանեցաւ հայրապետն ընդ վճիռ նոցա, բայց մեղմելով հանդերձ, թէ յանցաւորն միայն առցի, և այն՝ ոչ ՚ի մահ, այլ ՚ի ծառայութեի. իսկ այլք երթիցեն խաղաղութեամբ։ Յուզեցան ամենայն բեռինք նոցա ըստ եալ յերկիւղէն. և ահա դտաւ բաժակն յամանի բենիամինի։ Որ տեսեալ այլոց՝ առհասարակ շուարեցան, պատառեցին ամենեքին զհանդերձս, և հատաւ բան ՚ի բերանոյ նոցա։ Վասն և այնպէս ամենեցուն զարձին պաշտպան լինել զպարտեալ եղբօրն, թէև մահ հասանիցէ ինքեանց։ Վասն որոյ նոյնհետայն հանեալ զբեռինս անդրէն ՚ի վերայ գրաստուց իւրեանց, դարձան ՚ի քաղաքն։ Եւ մնեալ ամենեցուն առ յովսեփ՝ ունելով առաջնորդ զյուդա, տարածեցան ՚ի գետնի առաջի նորա ան.

ձայն և անբարբառ։ Այե՛ ի յանդիմանել զնոսա Յովսեփայ վասն բաժակին, յարուցեալ յուդայ՝ ասէ. Ո՞ ինչ ասացուք պատասխանի, կամ զի՞ր իրաւունս յուցանիցեմք. այլ անդամ մեղաք, և այժմ պատժէ զմեզ Աստ, ո՛չ յաղագս այսր գողանալ, յորմէ անմեղ եմք, այլ վասն յանցանացն՝ զոր յայլում ժամանակի գործեցաք։ Այդ՝ զինչ ունիմք ասել, բայց եթէ մեք և առ որում գտաւ բաժակն՝ եղիցուք ծառայք Տեդ մերում։

Այ՛ս յովսէփ. քաջ լինիս առնել զիրդ զայդ, զոր ոչ տան իրաւունք. կացցե՛ս առ իս յանցաւորն և եթե. իսկ դուք դարձջի՛ք ողջութե՛ի տուն առ հայր ձեր։ Ո՞ այս ասաց յովսէփ քաղցր և համբոյր բանիւք. յորմէ համարձակութի՛ առեալ յուդայի, խօսել սկսաւ և ասել։ Այ՛ղաչեմ տէր, ներե՛ա ծառային քումդ՝ բան մի համառօտ խօսել առաջի քո. և մի՛ անարժան համարեսցիս բարձրութե՛դ, որ ես յետ փարաւոնի տէր, ունի՛ն դնել բանից նուաստ ծառայի քո։ Այ՛ս տէր յանցեալ ամի մինչ կացաք առաջի քո՝ հարցեր ցծառայս քո, եթէ կայցե՛ ձեր հայր և եղբայր. և մեք պատասխանի արարաք, թէ կայ մեր հայր ծերացեալ, և եղբայր մի կրտսեր որդի ծերութե՛ն հօր մերոյ. զոր սիրէ նա յոյժ. զինա միայն ձեաց նմա՛ի մօրէն վախճանելոյ. քանզի և եղբայր նորա համամայր մեռաւ։ Այ՛ս դուք տէր ասացեր ցծառայս քո՝ ածել զմանուկն առ քեզ. իսկ մեք ասացաք, առնուլ զնա՛ի հօրէ իւրմ՝ այնպէս է, որպէս կորզել՛ի քաց զսիրտ նորա և սպանանել զնա։ Այ՛ս դու ասացեր, առանց նորա չերևել մեզ քնաւ առաջի աչաց քոց։

Այ՛րդ՝ ի՛ դառնալ մեր՛ ի տուն առ հայր մեր՝ պատմեցաք նմա զամենայն. և յորժամ հրամայեաց մեզ գալ և գնել միւսանգամ կերակուր աստի, մեք ասացաք՝ է՛ թէ ոչ կարե՛մք երթալ, եթէ եղբայրդ մեր կրտսեր ոչ գայցէ ընդ մեզ. զի առանց նորա ոչ իշխե՛մք երևիլ առաջի՛ն մերում։ Այ՛նժամ յոգւոց եղեալ ասէ ցմեզ. դուք լինքնին գիտէք, զի երկու որդիս ծնաւ ինձ կինն իմ, որ արդ մե-

ձեալ է. մին՝ եւ յինէն, և ասացիք Թէ գաղանա-
կուբ եղև. և ոչ ևս տեսանեմ զնա մինչև ցայժմ։
Արդ՝ եթէ զսա ևս առնուցուք յերեսաց իմոց, և
պատահիցէ սմա հիւանդութիւն՝ ի ձանապարհի, ես
ցաւով և տրտմութիւն մեռանիմ։ Այժ արդ տէր,
եթէ երթայցեմք առ ծառայ քո հայր մեր առանց
տղոյ, և նա ոչ տեսանիցէ զսա ընդ մեզ, տեսանել
ցեմք զվշտագին ծերունին մեռանիլ առաջի աչաց
մերոց չարչարանօք հանդերձ։ Ամէն զի ես ծառայ
քո առաւել յանձնառու գտանիմ. զի իմ յերաշխի
առեալ է զպատանեակդ՝ ի հօրէ իւրմէ, ասելով.
եթէ ոչ ածից զդա առ քեզ, և կացուցից առաջի
քո, յանցաւոր եղէց առ հայր իմ զամենայն աւուրս։
Արդ՝ կացից ես՝ ի կապանս քո փոխանակ ման-
կանդ, և ծառայեցից որպէս ծառայն այլք՝ ի
տարկացդ. և Թող զբեհնիամին դառնալ՝ ի ծոց հօր
իւրոյ ընդ եղբարս իւր. զի առանց նորա չիք հնար
լինձ դառնալ. զի մի եղէց ականատես արկածից
չարեաց հօր իմոյ։

Այնչև ցայս վայր ժուժեաց յովսէփ, և այն՝ բա-
զում դժուարութիւն. ապա ոչ ևս զօրեալ արգե-
լուլ զհասուն ծովացեալ արտասուաց՝ ի ներքս
կուտակելոց, հրամայեաց հանել արտաքս զամե-
նայն եգիպտացիս, որք չուրջ զնովաւ կային. և՝ ի
մնալ միայն ընդ եղբարսն, արձակեաց զերկուս սա-
հանս աչաց, ելայց մեծաձայն հեկեկանօք, մինչ
լսելի լինել և եգիպտացւոց՝ որք կային արտաքոյ.
լու եղև և յարքունիս փարաւոնի։ Այնժամ ետ
ծանօթս յովսէփ եղբարց իւրոց։ Ահա եմ, ասէ,
յովսէփ եղբայր ձեր. արդարև տակաւին կենդա-
նի է հայր իմ։ Ոսկ նորա շուարեալ և զարհու-
րեալ՝ ոչ իշխէին բան մի հանել՝ ի բերանոյ. նա
քաղցր և գորովալից զթով ասէ ցեղբարսն, մծա
եկայք առ իս. ես եմ յովսէփ եղբայր ձեր, զոր
դուք վաճառեցիք. այլ մի երկնչիք. և մի խիսա
Թուեսցի ձեզ՝ զի վաճառեցիք զնս այսր։ Ընծ ա-
ռաքեաց զնս առաջի ձեր՝ ի փրկութիւն ձեզ. զի
ահա յերկուց ամաց հետէ տանջէ սովն զերկիր. և

ինայ այլ ևս ընդ ամն հինգ. ահա առաքեաց զիս յառաջագոյն առ ի պահպանութիւն կենցայ ձերոց՝ կերակրել զձեզ և զզաւակս ձեր ի կարիս մեծի սովոյս։ Եւ արդ՝ չեմ ես աստ ձերովդ կամաք, այլ կանխատես կամաքն ՅԻ, որ արար զիս Հայր փարաւոնի, և տէր ամենայն տան նորա, և իշխան ամենայն երկրիս։

Երդ՝ փութացեալ երթ՛ք առ Հայրն իմ, և ասաց՛ք ցնա. այսպէս ասէ որդին քո յովսէփ. Ահա արար զիս տէր ամենայն երկրիս եգիպտացւոց. արդ՝ եկ ի ինձ առ իս անյապաղ, և բնակեսցես յերկրիս գեսեմ. և եղիցիս մօտ առ իս դու և որդիք քո, և թոռունք քո, և ոչխար քո և արջառ քո և որ ինչ քո իցէ։ Հաւասիկ եղբարք իմ սիբեղիք, աչք ձեր, և աչք բենիամինի եղբօր իմոյ տեսանեն, զի ես եմ որ խօսիմ ընդ ձեզ. պատմեցի՛ք հօր իմոյ զփառս իմ, և միթէ արեցի՛ք զնա՝ պատմելով որչափ ինչ տեսիք յեգիպտոս. և փութացեալ իջուցի՛ք զնա այսր առ իս։

Օայսպ ասացեալ անկաւ զպարանոցաւ բենիամինի, և անպատմելի դթով համբուրեալ զմիմեանս, լացին երկոքեան. և ապա դարձեալ առ եղբարսն՝ մի մի ողջագուրեաց զնոսա, և ելոյց ի վերայ նոցա։ Ապա ինչև ցայն վայր կային անմտանչ և անբարբառ. յետ այնորիկ փոքր մի ոգի առեալ, խօսեցան ընդ ինչ կարէին ասել առ ետեղ։

Հաս լուր յականջս փարաւոնի, եթէ եկին եղբարքն յովսեփայ. ասա երևեցաւ անկեղծաւորս սէր հասարակաց ի վերայ յովսեփայ. զոր կարի ինն գժուարին է տեսանել յայրքունիս՝ ինդալ ի սրտ ընդ յաջողութիւն և ընդ փառաւորութիւն միոյ ուրուք ի պաշտօնէից արքայի, մանաւանդ եթէ օտարազգի ոք իցէ. որպէս տեսաւ աստ։ Օի նա ինքն փարաւոն արքայ, և պաշտօնատարքն նորա, որպէս և ժողովուրդն առ հասարակ, ուրախ եղեն յոյժ։ Եւ փարաւոն ետ հրամանն յովսեփայ՝ լի ամենայն բարեօք եգիպտոսի արձակել զեղբարսն դառնալ յերկիր քանանացւոց, զի առեալ անտի

զծերունի հայր իւրեանց՝ և զընտանիս, և զամե-
նայն ստացուածս՝ ածգեն յեգիպտոս, խոստանա-
լով տալ նոցա անդ առատ եկամուտս յամենայն
բարեաց երկրին։ Եւ ևս պատուիրեաց տալ նոցա
և սայլս՝ ի պէտս կանանց և մանկանց նոցա, և
կահուց և կարասեաց իւրեանց։ Պատարեցաւ ա-
մենայն, որպէս և հրամայեաց փարաւոն։

Յոկ յովսէփ յաւել միւսմ պարգևել միոյ միոյ
ընդ ամենեցունց երկու պատմուճանս ազնիւս. և
բենիամինի ետ հինգ պատմուճանս փոխանակաւ.
յոր յաւել և երեք հարիւր դահեկան։ Ոչնոյնպէս
և հօր իւրում՝ ետ տանել հինգ պատմուճանս, և
նոյնչափ գրամս, և տամն իշոյ բեռինս յամենայն
բարութենէ եգիպտացւոց. և տամն ջորի նպաստ
կաւոր պաշար ճանապարհի։ Այս եղև յերրորդ
ամի սովոյն. յորում ամի, կամ՝ ի սկիզբն չորրոր-
դին, ըստ հասարակ կարծեաց բազմաց մեկնչաց,
եմուտ յակոբ յեգիպտոս. Թէպէտ են և որք իբր
տասն միով յետոյ ձգեն զմուտ նորա, այսինքն՝ ի
հինգերորդ ամի։ Այլ զայսմանէ լուսաբոյն ասաց-
ցուք զկնի։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Յակոբ ելանէ յեգիպտոս։ Ի վերջին ծերութեանէ իւրմէ
օրհնէ զերկոսա որդիս յովսեփայ զմանասէ և զեփրեմ, նա-
խադասելով մարգարէաբար զիրսեփրեմ երիցոնն։

Հասեալ որդւոցն իսրայէլի՝ ի տուն, և տու-
եալ հօր իւրեանց զանակնկալ զուրախարար աւե-
տիս, եթէ յովսէփ որդի քո կենդանի է, և նա է
տէր ամենայն երկրին եգիպտացւոց, զարմացեալ՝ ի
միտս իւր՝ թէ ծերունին՝ այլ յայլմէ եղև. և ոչ կա-
րէր հաւատալ։ Այլ երբև հետես զսայլս, զգրաստս,

զպարգևս, և զայլ ամենայն կազմածս, զոր ա-
ռաքեաց յովսեփ, արծաթեցաւ ոգի նորա իբր ՚ի
մանկուելն նորոդեալ. և յառաւելութիւն խնդութեան
սրտին՝ գոչեաց ասելով. * Ա՛ծ է ինձ, եթէ ար-
դարև տակաւին կենդանի իցէ որդի իմ յովսեփ.
երթայց տեսից զնա՝ մինչև մեռեալ իցեմ ||:

Եթէ կամեցեալ էր յակոբ անսալ բորբոքեալ
տենչից իւրոց, նոյնժամայն յուղի անկանէր. եր-
թայց ասէ տեսից զնա, մինչև մեռեալ իցեմ: Այլ
հանդամանք առաջնակայ իրացն յայղեցին բռնու-
թիւն փափաքանաց սրտին: Վասն զի քաջ տեառնէր
խոհական ծերունին՝ եթէ առ փոխադրել յերկիրը
հեռաւոր զտուն իւր բովանդակ հանդերձ ամենայն
ստացուածովք, զոր ստացաւ յերկրին քանանաց-
ւոց, և այնչափ բազմութիւն որդւոց և թոռանց,
և կանանց, քաղցր խոհեմութիւն և ժամնակին
պէտք էին: Վասն զի որք ունէին յայնժամ իջանել
ընդ նմա յեգիպտոս ընդ մեծ և ընդ փոքր եղեալք
յերանաց նորա, բաց ՚ի կանանց որդւոցն իւրոց,
էին ոգիք վաթսուն և վեց. Թոռ զծառայս, զա-
ղախնայս, և զհովիւս, որք բազում էին յոյժ: Ա-
թեպէտ ՚ի սոյն գլ. ԽԶ. դնէն զոր գիրքն անվիճասէն՝
լինել մտելոց յեգիպտոս ընդ յակոբայ, եօթանասուն
և հինգ. այլ գայս երևեալ ընդդիմութիւն հանդեր-
ձեալ եմք լուծանել ՚ի կարգիս: Այսն որոյ բա-
զումք այսմ պատրաստութեանն, միանգամայն և
ձանապարհորդութիւն յակոբայ՝ տան այն իբր եր-
կուս: Զոր՝ եկեալ յակոբայ հանդերձ այլովք ա-
մենեքումբք որ ընդ նմա ՚ի բերսաբեէ ՚ի ջրհորն
երդմանն, մատոյց անդ պատարագ ՚ի. ուր երև-
եալ նմա ՚ած, քաջալերեաց զնա իջանել յեգիպ-
տոս, խոստանալով անդ խնամարկել նմա. և յով-
սեփայ կափուցանել զաչս նորա ՚ի վախճանել իւ-
րում, ըստ սովորութեան այնր ժամանակի. զի որդիք
կափուցանէին զաչս ծնողաց, և բարեկամք բարե-
կամաց. և եթէ ոք վրիպեալ գտանէր աստի,
դժբախտութիւն մեծ համարիւր նմա:

Հասեալ յակոբայ ՚ի սահմանս եգիպտոսի, ա-

ռաքեաց յառաջագոյն զյուդա հրեշտակ՝ ազդ առ-
նել յովսեփայ զգալուստ իւր. և աղաչել զի գայ-
ցէ նմա ընդ առաջ ՚ի ռամեսա, այն է՝ երկիրն
գեսեմ։ Օ՞ր իբրև լուաւ յովսէփ, ետ վազվաղա-
կի կազմել զկառս իւր, և գնաց յանդիման եղե-
ւոր իւրոյ իսրայէլի ՚ի գեսեմ. և անդ փառեալ
զպարանոցաւ նորա, և լայց յոյժ։ Իսկ հայրն գոր-
ւական, որ ընդ ամն քսան և չորս, կամ ըստ ոմանց
երեսունն՝ աչխարեաց զորդին իբրև մեռեալ, արդ
տեսեալ զնա կենդանի, մեծ ինչ է՝ զի յառաւե-
լութէ ցնծութեե սրտին չեղև ընչասպառ։ Ա՛պա
իբրև սփոփեալ հանդարտեցան, խրատ ետ յովսէփ
եղբարց իւրոց, զի ՚ի կոչել զնոսա փարաւոնի, և
՚ի հարցանել թէ զինչ իցէ գործ նոցա, ասասցեն՝
թէ հովիւք են խաշնագործմանք. որպէս զի երկիրն
գեսեմ տացի նոցա ՚ի բնակութէ. մի՝ զի երկիրն
այն լաւագոյն էր և արգաւանդաւոր. և երկրորդ
զի հեռի լինիցին ՚ի բնակութէ եգիպտացւոց. որք
խորշէին ՚ի հովուաց ոչխարաց. և՛ զի գարմանեն
զոչխարս, զորս՝ ըստ թէոդորետեայ՝ համօրէն
եգիպտոս պաշտէր. այլ զի զհնուխն զնոսա և զո-
հէին, և ուտէին զկարծեցեալ աստուածս իւ-
րեանց։ Եւ թէպէտ գարմանեին և ինքեանք ոչ-
խարս, բայց ոչ վասն ուտելոյ կամ զոհելոյ, այլ
վասն կաթին և ասրոյ, որ շահ բազում բերէր նոցա։

Ա՛պա առեալ յովսեփայ ընդ իւր սակս հինգ
եղբարց իւրոց, չորաւ պատմեաց փարաւոնի զգա-
լուստ հօր իւրոյ ամենայն տամբ և ստացուածովք.
և ՚ի հարցանել փարաւոնի զեղբարս նորա, եթէ
զինչ գործ է ձեր, նոքա ետուն պատասխանի՝ որ-
պէս յառաջագոյն խրատեալ էին ՚ի յովսեփայ։
Ուստի և ըստ յանձնելոյ փարաւոնի՝ բնակեցոյց
զնոսա յովսէփ ՚ի պատուական երկրին գեսեմ. և
տայր ռոճիկս հօրն և եղբարց իւրոց և ամենայն
տան հօր իւրոյ ցորեան բաւական ըստ թուոյ նո-
ցա։ Եւմպ յովսէփ առաջի փարաւոնի և զհայրն
իւր, որ էր յամենայն ամաց հարիւր և երեսնից.
և օրհնեաց յակոբ զփարաւոն։

Լայց սոքա տակաւին սաստկանայր ընդ ամենայն եղիստոս, և յերկրին քանանացւոց, մինչև սպառիլ արծաթոյ յերկրէ իւրեանց. զի զամենայն արծաթ գտեալ առ նոսա էառնն յովսեփայ ի գին ցորենոյ. զոր նա դանձէր ի տուն փարաւոնի: Ո՛կնի արծաթոյ վաճառեցին և զանասունս իւրեանց. և ապա երբեմն չքնաց այլ ևս ինչ ի ձեռս նոցա, բայց միայն երկիր և անձինք նոցա, հուսկ ուրեմն էառն և զերկիր իւրեանց, և զանձինս ի ծառայութիւն փարաւոնի: Լո՛ւ սաստկաւ յովսէփ զամենայն երկիրն ի սահմանացն եգիպտոսի մինչև ի ծագս նորուն՝ փարաւոնի, և զժողովուրդն ի սաստիկ նորա: Լո՛ւ ետ նոցա սերմանիս սերմանել սովին պայմանաւ, զի հինգերորդ մասն արդեանց լեցի փարաւոնի. իսկ չորք մասունքն եղիցին նոցա ի սերմն և ի կերակուր: Լո՛ւ այս ինչ յօրինս առ եգիպտացիս, հինգերորդել թագաւորաց զամենայն արդիւնս երկրի. բայց յերկրէ քրմաց, զոր ոչ վաճառեցին նոքա. քանզի փարաւոն կերակրէր զնոսա յարքունուստ. վասն որոյ և ոչ հինգերորդէին զերեսս երկրի իւրեանց: Լրեալ թէ այս սահման վերջին եօթնեերորդ ամ սովին. յորում սկսեալ լինն վարել զերկիրն, զի ի հեռանալ ամի կարիցեն հնձել. վասն որոյ բաց ի ցորենոյ՝ որ էր ի կերակուր նոցա, խնդրեցին այս անգամ ի յովսեփայ և սերմն ի սերմանել. զոր յառաջ քան զայս ոչ ուրեք ընծեռնումք. յորմէ յայտ է թէ ցայնվայր ոչ վար և ոչ հունձք եղեն. ըստ որում ասաց յաւաքագոյն յովսէփ:

Չետ մնանէլոյ յակոբայ յեգիպտոս, եկեաց այլեւս ամն եօթնեւտասն, քնակեալ յերկրին գեսեմ. ուր աձեցին և բազմացան յոյժ զաւակք նոցա: Լ՛ապա հասեալ ի հարիւր և քառասուն և եօթներորդ ամ կենաց իւրոց, իբրև ետես զի մերձեցան աւուրք վախճանի իւրոց, կոչեաց զյովսէփ. և ետ նմա երդնուլ՝ չթաղել զնա յեգիպտոս, այլ ի շիրմի հարց իւրոց յերկրին քանանացւոց: Լոկ օրինակ երդմանն, որով երդուաւղն զնէր զձեռն ընդ

Էրանօք Երդմնեցուցանողին, զի նստցի ՚ի վերայ նորա, Էր խորհրդական, և նշանակ մեծումն իրացն. և ոչ իբր լոկ սովորութիւն ինն առ եբրայեցիս ՚ի կիր արկեալ ցարդ ինչ և իցէ պատճառս։ Վասնզի ընդ բովանդակ ածաշունչ սքր գիրս յերկուս և եթե տեղիս ընծեռնումք արարեալ ՚ի խորհուրդ մեծի խիք, և երկուց մեծամեծ և նախապատիւ նահապետաց աբրահամու և յակոբայ. որք ըստ սքց հարց՝ սովին գործողութիք կամ֊ին նշանակել զգա լուստ մեսիային, որ ՚ի գալակէ նոցին հանդերձեալ էր ծնանիլ. ուստի և ՚ի նորուն անուն պահանջէին զերդումն. որպէս և ըստ այլոց՝ ակնարկէին յուխտ թլփատութեն, որ եղաւ յոյ յորոշումն աբրահամեան տոհմին։

Վասն իբրև երդուաւ յովսէփ կատարել զպատուէր նորա, երկիր եգիպ յակոբ ՚ի վերայ գլխոյ գաւազանի իւրոյ։ Այս բան յայլևայլ միտս առնուն մեկնիչք ՚ի պատճառս այլևայլ թարգմանութեց։ Կայց հարք յունաց, որպէս և այլք, որք զհետ երթան թարգմանութեն եօթանասնից, ըստ գրոյն ընթերցեալ, ասեն թէ խորագոյնս խոնարհեցաւ առաջի գաւազանին յովսեփայ, զոր կրէր նա ՚ի նշան իշխանութեն իւրոյ։ Այս այսպէս լսելոյց զմարգարէական երգն յովսեփայ. զոր նա ինքն յակոբ մեկնեալ էր ՚ի վերայ երկրպագութեն՝ զոր հանդերձեալ էր տալ որդւոյ իւրում։ Կան ևս՝ որք ասեն, թէ երկիր եգիպ ՚ի, յեցեալ ՚ի գլուխ գաւազանի իւրոյ, կամ ՚ի գլուխ գաւազանին յովսեփայ։ Յաւելու վարդան ընդ այլս ՚ի հարց, թէ էր *նստեալ ՚ի մահ (՚ի մահիճն), գաւազան ունելով ՚ի ձեռն. նշանակելով զերկրպագելն փայտն փրկութեն։

Յետ այսորիկ լուեալ յովսեփայ՝ եթէ յակոբ հայր նորա մերձ ՚ի վախճան հասեալ կայ, եկն վաղվաղակի առ նա, ունելով ընդ իւր զերկուս որդիս իւր զմնասեհ և զեփրեմ. զոր ծնաւ նմա ասանէթ կին նորա, մինչև եկեալ էր յակոբ յԵգիպտոս։ Յայնժամ զօրացեալ յակոբայ ՚ի խնդու-

Թէ սրտին, նստաւ ի մահիճն. և զի աչք նորա ծանրացեալ էին ի ծերութենէն, և ոչ կարէր հա մարձակ տեսանել, ասաց ցյովսէփ մատուցանել առ ինքն զերկուս որդիս իւր. զորս առեալ ի գիրկս և համբուրեալ, որդեգրեաց զնոսա և սեպհականեաց ինքեան՝ դասեալ ի կարգս որդւոցն իւրոց՝ ռուբենի, շմաւոնի և այլոց. և երբէք եհան զնոսա յոլսէփ ի գրկաց հօրն, նոքա երկիրպագին նմա ի վերայ երեսաց իւրեանց։

Ապա առեալ յովսէփայ զեփրեմ զկրասեր յաջակողմն իւր ի ձախմէ յակոբայ, և զմնասէ մանդրանիկ ի ձախակողմն իւր յաջմէ յակոբայ, մատոյց առ հայրն՝ զի օրհնեսցէ զնոսա։ Իսկ յակոբ տարածեալ զձեռս խոտորնակի խաչաձև՝ հոգւով մարգարէական, եդ զաջ իւր ի վերայ գլխոյ եփրեմի՝ որ էր ի ձախմէ իւրմէ. իսկ զդ ձախոյ ձեռն ի վերայ գլխոյ մանասէի, որ էր յաջակողմն իւր. և օրհնեաց զնոսա մարգարէական բարեմաղթութիւք։ Յովսէփ համարեալով թէ ըստ հանդիպմանն, կամ առ չտեսանելոյ արար այնպէս հայրն նորա, ազդ արար նմա և օգնեաց ձեռն հօրն հանել զնա ի գլխոյն եփրեմի և դնել ի վերայ գլխոյ մանասէի. զի սա է՝ ասէ անդրանիկ. այլ նա ոչ կամեցաւ առնել։ Յովսէփ խօսի ասա և կարգէ զորդիսն ըստ իւրոց մեծաց. իսկ յակոբ մարգարէութիւք գործէ. զոր լեալ և եղեւ իրացն հաւաստեցեալն։ Քանզի ցեղն եփրեմի եղև միշտ ի մեծագոյն և ի զօրաւորագոյն ցեղից որդւոց խորայէլի. այն զի եղև ևս երբեմն, զի զառաջինն տեղին կալաւ ի թագաւորութէ տասն ցեղից։ Իսկ խորհրդական իմաստ այսր մարգարէական գործոյ յակոբայ՝ ըստ նախնի հարց սքց՝ ցուցանէ զվիճակ հին և նոր եկեղեցւոյ. և խաչաձև տարածումն ձեռաց յակոբայ՝ զնաջն քան. որով նա ինքն փրկիչն ստացաւ իւր ժողովուրդ սեպհական զնորս եկեղեցի, նա խաչածար առնելով զնա քան զհինն։

Ապա գուշակէ յակոբ զդարձ որդւոց իւրոց յերկիրն քանանացւոց, զոր խոստացեալ էր Ած

ան՝ Հարց նոցա. ուստի և պարգևէ յովսեփայ իբրև մեպհիական կալուած արտաքոյ եղբարց իւրոց զսիկիմ, զոր ասէ առեալ՝ ի ձեռաց ամմաւրհացւոց սրով և աղեղամբ. զորմէ՝ ի վեր անդր՝ է գԼ. ՃԵ. խօսեցաք։ Ասայ և աստ արժան համարիմք յաւելուլ ինչ. քանզի էն, որոց կամեցեալ իսպառ հեռացուցանել զյակոբ յանօրէնն գործոյ անտի, զոր գործեցին որդիքն նորա՝ ի սիկիմ, ասեն՝ Թէ յակոբ յետ այնր գործոյ՝ երկուցեալ՝ ի վրէժխնդրու. Թէ չըջակայ քանանացւոց, խոյս ետ անտի այլուր, Թողեալ զվիճակ անդին կամ զագարակն, զոր գնեալ էր յեմմորայ հօրէ սիւքեմայ։ Ասպա զկնի ժամանակաց՝ ի նոյն գարձ արարեալ տեղի, եառ սրով իւրով զագարակն՝ վանեալ անտի զամմաւրհայեայս, որք գրաւեալ էին զտեղին։ Ահա այս է ասէն՝ զորմէ ասէ յակոբ սրով իւրով և աղեղամբ առեալ. զոր և աստ տայ յովսեփայ։ Այս մեկնութիւն՝ թէ ապաքէն գեղեցիկ էր, և բառնայր զամենայն գժուարութիւն՝ հայեցեալ՝ ի լատին Թարգմանութիւնն, որ աստ փոխանակ անուանդ Ակէմ, զոր ունէին եօթանասունք, ընթերցուս Տան գ, այսպէս. * Տամ քեզ մանն մի արտաքոյ եղբարց քոց, զոր առի՝ ի ձեռաց ամմաւրհացւոց սրով իմով և աղեղամբ ‖։ Վասդեղիկ էր ասեմ, եթէ մարթ էր գտանել ուրեք՝ ի սէ գիրս գէթ փոքր ինչ նշան՝ ի հաստատութիւն իւր. այլ չընթերցումք ուրեք Թէ յակոբ էցէ գարձեալ՝ ի սիկիմ, և առեալ զվինոյ զվիճակն իւր։

ՅԱԿՈԲ ՀԱՍԵԱԼ ՉԷՐ ՀԱՐՍՆՈՑ՝ ՈՅՍ ՊՂԵՐԸՆ ՄԱՐԳԱՐԷԱՆԱՆ ՕՐՀՆՈՒԵՑ ՈՐԴՈՑ ԻՐՈՑ ։ ԱՅՍ ՊԱՏՄԵՑԱ ԼԱՒԱՆԻՆ ՊՂԱՏԻՆ ԻՄ ԵՍ Ի ՀԱՐՍՆՈՑՈՑ ։

Պղեալ յակոբայ առ ինքն զամենայն որդիս իւր, եւ նոցա զվերջին օրհնուածին, միանգամայն և մարգարէական հոգւով յայտնեաց որ ինչ հանդերձեալ էր պատահել որդւոց նոցա զկնի ժամանակաց։ Այս օրհնութիւն էր իբր կտակ ինն նահապետաց առ որդիս և առ ընտանիս իւրեանց. որ և՛ յարգի էր յոյժ առ նոսա, հաւատալով վերջին բանից նոցա լինել մարգարէութիւն յաճախին հոգւոյն ազգեալ։ Օր ընթերցուածք արարեալ և խոսկայ, և մովսէս, յեսուայ, սամուէլի, դաւթի և տոքնեթայ։ Այսպէս և արտաքոյ նմանապէս գրոց՝ գտանի մտածեան աւանդութիւք եկեալ և՛ նախնեաց, անուանեալ Պակ երիսոսան նախապետ. ուր յառաջ բերին վերջին բանք երկոտասան որդւոցն յակոբայ. բայց այն չէ ընկալեալ յեկեղեցւոյ և՛ կարգ վկայեալ գրոց։

Առդ՝ յակոբ ըստ կարգի երիցութեան որդւոց իւրոց սկսեալ զմարգարէական բանս օրհնութեց, նախ խօսի առ ռուբէն, որ գոլով անդրանիկ, նոքա ցեղին անկ էր լինել առաջին և նախասլաւաթիւ և՛ մէջ այլոց փառաց, իշխանութեաբ, բազմութեաբ և զօրութեաբ։ Այլ զի անօրինեցաւ առ հայրն՝ պղծելով զանկողին նորա, յայտ առնէ նմա, թէ յայսմ ամենայնիւ հուսալեալ եղիցի ցեղ նորա. և ի բաւանդ անդրանկութեաբ, որում ըստ օրինաց՝ անկանէր կրկին բաժին ժառանգութեան, զրկեսցի. որպէս և եղեւ. զի անդրանկութիւնն նորա առաւ յեղբն յովսեփայ. որպէս յայտ է՛ ի ա. ճառ. ե. ։

Հ մաւոն և ղևի՝ որպես եղբարք հաւատացք էին քնութեամբ, նոյնպէս և համաբարոյք գոան սրտմտութիւք՝ ոխութիւք և անգթութիւք. զոր անի ծանել յակոբ։ Ա.յլ այն անձք մարդաբնական՝ էր ժամանակաւոր և թնական. այսինքն եթէ զգործն զայն անօրինութիւն նոր արդարագործութիւք ոչ քա ւեացին. իսկ ցերկն ղևեայ քաւեաց ի ձեռն ոճծա սէր նախանձու մովսէսի, ահարոնի, և այլոց ղև տացւոց ի կոտորել նոցա զոյնոսիկ, որք երկիր պագին որթայն ոսկւոյ. այլև ի ձեռն փենհէսի, որ քնահանդիր եղև ոչ, սպանեալ զայրն եբրայե ցի ի պոռնկիլ նորա ընդ կնոջ մադիամացւոյ։ Այլ ի ցերկն շմաւոնի ինաց անէծքն վասն պոռնկութիւն և կռապաշտութիւն զամբրեայ. որ էր իշխան տան աղգի որդւոցն շմաւոնի։ Այ սան այնորիկ յերկոտա սան ցերկից խորայելի շմաւոն և եթ զրկեցաւ յօրհ նութիւն մովսէսի. Է. օրինաց. լԴ։

Օ օրհնութիւն յուդայի սկսանի յանուանէ նո բա, զոր մայրն եղ նմա, կոչելով զնա յուդա, այն է՝ գոհութիւն ոչ, կամ խոստովանութիւն. զի ծնըն դեամբ իւրով եհաս նմ պատճառս միանգամ գոհա նալ զնոսէ. յոր այժմ հայրն այլ պատճառ յաւելու գոհութիւն և օրհնութիւն. այսինքն զհանդերձեալ ծնունդ մեսիային ի ցերկ նորա. ուր տայ և զնչան ժամանակին գալստեան. այսինքն յորժամ բարձցի գաւազան իշխանութիւն ի ցերկ նորա. միանգամ մայն և այլազանեալով նկարագրէ և զայլ հանգամ մանս հանդերձեալ մեսիային. զորս եկք իրացն անվրէպ ճշգրտեցին։

Օ աբուղմի գուշակէ զվիճակ քնակութիւն ցեր կի նորա յերկրին աւետեաց առ միջերկրեայ կամ մեծ ծովու՝ ի միոյ կողմանէ. իսկ ի միւս կողմանէ առ ծովակին գալիլեայ. ունելով ի զանազան տե ղիս նաւահանգիստս անբոյնս և պատրաստս։ Ա.տաքարայ ասէ, թէ քնակեցան ի մէջ վիճակաց այլոց ցերկից հեռի ի ծովէ. վասն այնորիկ գործ նորա եղիցի մշակութիւն երկրի. որ թէպէտ խիստ է և տաժանելի, այլ անզբաղ և անքոյթ ի քաղա

քական չիոնթուեանց, միանգամայն և արդիւ-
նաբար։

Վասն զանազ ասէ զատել զժողովուրդ իւր, զուշակելով զսամիսոն՝ որ ’ի ցեղէ նորա զատեաց ղնասրայէլ։ Կոչէ զնա օձ զարանակալ. զի խորամանկ հնարիւք բազում էարիս հասոյց փղշտացւոց. որ պէս յայտ է յերեքհարիւր աղուէսս, և ’ի խորտակումն երկուց սեանց. որով զժողովեալս անդ յոգնախտն բազմութիւն՝ մեռոյց. Թող զհարուածն ծնօթիւ իշոյ։ Այս թէպէտ այսչափ քաջագործու-
թիւք հանդոյց զնասրայէլ, բայց առ սուղ ինչ ժա-
մանակ և եթէ։ Վասն այնորիկ յաւելոյ՝ * ինալ
փրկութիւն նմա ։ այսինքն գալստեան մեսիային.
որոյ հանդիսան եղիցի հաստատ և յաւէժական։
Այս գուշակութիւն՝ ըստ հարց բազմաց, ակնարկէ
և ’ի նեռն, որ գալոց է ’ի ցեղէն դանայ. որ զա-
մենայն չարահնար որոգայթս լարեսցէ հաւատա-
ցելոց. և ոչ միասցեն չարիք, զոր ոչ գործեսցէ ’ի
նոսա. այլ քան ընդ հուպ սատակեսցէ զնա։

Գադ, ըստ անուան իւրոյ, որ թարգմանի գո-
տեպնդ, եղիցի քաջ պատերազմող. որ առաւե-
լապէս երևեսցա, յորժամ ցեղն նորա զինեալ էլ
զօրու իւրով առաջի այլոց ցեղից իբր իշխան առաջ-
նորդ, և անցուցեալ զնոսա ընդ յորդանան, ած
վերինըն քանանացւոց. և անդ սպառեալ զկետ
թհնամեաց, զարձաւ ’ի տեղի իւր յայսկոյս յոր-
դանանու բազում աւարաւ։ Ոմն զինուորական
քաջութիւն եցոյց ցեղն գադայ և առ յեփթայեաւ
որ էր ’ի ցեղէ սասի. յորժամ խորտակեաց զոր-
դիս սամինայ. դաս. ճ։

Սերայ գուշակէ յակոբ զարգաւանդ և զպա-
րարտ երկիր, որ վինակեսցի ցեղն նորա յերկրին
քանանու. մինչ զի բերքք նորա առ պատուականու-
թիւն ’ի սեղանս իշխանաց ելցեն։ Ոնեփթալիմ
կոչէ ծառ բարձրացեալ աձեցուցանել զպտուղս.
որով գուշակէ զաճումն ցեղին նորա ’ի մեծ բազմու-
թիւն. զի նեփթալիմ յորժամ եմուտ ընդ Հօր իւ-
րում յերկիրսն, էրս և եթ որդիս ունէր. իսկ

զինի երկերիւր և իբրև հնգետասան ամաց ցեղ նորա այնչափ բազմացեալ էր, զի լոկ երիտասարդք ՚ի քսանամենից և ՚ի վեր որք կարօղ էին զէն առնուլ, և մտանել ՚ի մարտ, գտան չիսուն և երեք հազար և չորեքհարիւր։

Իսկ տեսեալ յակոբայ յօրհնութիւնս իւր առ յովսէփ, յառատութէ սիրոյ սրտին՝ առատացուցանէ և զբանս օրհնութէ առ նա։ Ասէ զյովսէփ աձեցեալ. զի բաց յայլոց բարեմասնութեանց նորա, եղև նա գլուխ երկուց նահապետութէց և ցեղից ըստ երկուց որդւոց իւրոց եփրեմի և մանասէի. յետոյ ՚ի մէջ բերեալ զանցս նորա զնախորդս և զյաջորդս, առատագեղ օրհնութէ վճարէ զբան իւր առ նա։

Իսուսէ ուրեմն գայ առ բենիամին. զոր գայլ յափշտակօղ կոչէ, ցուցանելով զկատաղութիւնն և զզօրութէ ցեղին բենիամինի. որ յայտ եղև ՚ի պատերազմին գաբաայ. դպ. է. ամենք տարածեն և ՚ի վերայ սաուղայ, եսթերայ և մուրթքէի, որք ՚ի ցեղէն բենիամինի էին։ Ալ բազումք ՚ի հարց զայս մարգարէութէ մեկնեն ՚ի վերայ երբ առաքելոյն պօղոսի. որ զայգունն՝ դեռևս ՚ի հրէութէան անդ ուտէր՝ կատաղաբար հալածելով զհաւատաց ցեալս. և առ երեկս՝ զինի գարձի իւրոյ՝ ելից ա ւարաւ, զոր աւարեաց ՚ի հեթանոսաց՝ զեկեղեցի քէն, բաշխելով նոցա զՀոգևորն կերակուր բանիւ քարոզութէ, և գրով ՝ածուսոյց վարդապետութէ չորեքտասան թղթոց իւրոց, զոր եթող յեկեղեցի գանձ անսպառ։

Ալդ՝ վճարեալ յակոբայ զմարգարէական բանս օրհնութէ առ երկոտասան որդիս իւր, յորոց ելին և անուանեցան երկոտասան ազգք իսրայելի. և պատուիրեալ վասն մարմնոյ իւրոյ՝ թաղել յայրն անդ յագարակին, զոր ստացաւ աբրահամ յեփրոն հետացւոյ յերկրին քանանացւոց, ուր թաղեցաւ և նա ինքն աբրահամ և սարրա կին նորա, և իսահակ, և ռեբեկայ, որպէս և կին իւր լիա. նըստ ջեաց խաղաղութէ ՚ի ներ, իբր քաղցր ՚ի քուն մտա-

նելով, ամայ հարիւր և քառասուն և եօթանց. յամի արարչութե՛ աշխարհի 2256. ամն եօթնուտասն կեցեալ Լեգիպտոս, յորդոյ առաջի փարաւոնի արքայի, սիրելի իշխանաց և ժողովրդեան եգիպտացւոց, և պատուեալ և մեծարեալ յորդւոց իւրոց: Այսպէս ահա կնքեաց՝ թէ նահապետն յակոբ զվշտագին և զաւարժանաւոր կեանս իւր. որ էր ձգրիտ տարացոյց արդարոց և ամենայն նախասահմանելոց: Ի նա յամենայն կեանս իւր եղև միշտ ճշմարիտ ածապաշտ, հնազանդ հաւատարիմ և լի հաւատով և յուսով առ Ած. վասն որոյ և սիրելի ՚ի, և այնչափ սիրելի, մինչև ինքնին վկայել թէ սիրեաց զնա առաւել քան զեսաւ յաւագ քան զծնանիլ նոցա: Այլ և այնպէս կեանք նորա լի եղև վշտօք և տառապանօք. որպէս տեսաք ցայսվայր: Իբէ թէպէտ զկնի մտանելոյ Լեգիպտոս, երեւի հանգուցեալ և երջանկացեալ, տեսեալ զսիրելին զիւր որդի զյովսէփ յայնչափ բարձրացեալ փառս իշխանութե՛ պատուեալ, և զտուն իւր ՚ի պարարտ և յարգաւանդ երկրի հաստատեալ. սակայն եկաց նա անդ միշտ իբրև օտար և պանդուխտ. զի ոչ փառք որդւոյն, և ոչ հանգիստ տանն էտուն նմա մոռանալ զերկիրն խոստացեալ նմա, և հարց իւրոց: Այն որոյ յապացոյց մեծի յուսոյն, ոչ կամեցաւ զի մարմին իւր թաղեսցի Լեգիպտոս, այլ ՚ի խոստացեալ երկրի: Այսպէս ամենայն ընտրեալք և նախասահմանեալք կան յաշխարհի աստ իբրև ՚ի պանդխտութե՛ վայրի, ուստեղով միշտ զսիրտս իւրեանց ուղղեալ և հաստատեալ ՚ի գաւառն երկնային ՚ի խոստացեալ հայրենիս իւրեանց:

ԳԼՈՒԽ ԻԸ

Յովսէփ ներկայացաւ փարաւոնի առաջի, եւ խնդրեաց ի նմանէ, զի ոչ ոք իշխեսցէ նահանջել ի հրամանէ նորա։ Ապա հաստատեաց զնա իւր իշխան ամենայն երկրին Եգիպտոսի։ Եւ ասաց փարաւոն ցՅովսէփ. Ես եմ փարաւոն, եւ առանց քո ոչ ոք իշխեսցէ ձեռն կամ ոտն շարժել յամենայն երկրին Եգիպտոսի։ Եւ կոչեաց փարաւոն զանուն Յովսէփայ Փանեայ Կոմնիայ, եւ ետ նմա զԱսենաթ դուստր Փետափրեայ քահանայապետի Եղիոպոլսի կնութեան։ Եւ ելանէր Յովսէփ ընդ ամենայն երկիրն Եգիպտոսի։

Եւ էր Յովսէփ երեսնից ամաց, յորժամ կայր առաջի փարաւոնի թագաւորի Եգիպտոսի։ Եւ ելեալ Յովսէփ յերեսաց փարաւոնի, շրջեցաւ ընդ ամենայն երկիրն Եգիպտոսի։ Եւ յամի առաջնում յորում եկն Յովսէփ, ետ երկիր բերել առատ։ Եւ ժողովեաց զամենայն պտուղս երկրին յամին յայնմիկ, եւ եդ զպտուղսն ի քաղաքս։ Զպտուղ արտի քաղաքին, որ շրջակայ էր նմա, եդ ի մէջ նմին քաղաքի։ Եւ ժողովեաց Յովսէփ զհացս ամենայն երկրին իբրեւ զաւազ ծովու բազում յոյժ, մինչեւ դադարեաց համարել, զի անհամար էր։

Եւ յետ երից ամաց սկսան գալ սովք։ Եւ էր սով յամենայն երկրի, եւ ի միում ամենայն երկրի Եգիպտոսի էր հաց։ Եւ սկսաւ ամենայն ազգ երկրին Եգիպտոսի լալ առաջի փարաւոնի հացի համար։ Եւ ասէ փարաւոն ցամենայն Եգիպտացիսն. Երթայք առ Յովսէփ, զոր ինչ ասիցէ ձեզ, արարէք։ Եւ սով էր յամենայն երկրի։ Եւ բացեալ Յովսէփ զամենայն հանդերձս հացի, ետ ծախել Եգիպտացւոցն, զի զօրացաւ սով յերկրին Եգիպտոսի։ Եւ ամենայն աշխարհք գային Եգիպտոս առնուլ հաց ի Յովսէփայ, զի զօրացաւ սով յամենայն երկրի։

Եւ ասէ Յակոբ ցորդիսն իւր. Ընդէ՞ր ակնարկէք միմեանց։ Ահա լուայ, զի հաց է ի Եգիպտոս, իջէք անդր եւ առէք մեզ հաց անտի, զի կեցցուք եւ ոչ մեռանիմք։ Եւ իջին եղբարքն Յովսէփայ առնուլ հաց ի Եգիպտոս։ Եւ Յակոբ զԲենիամին ոչ առաքեաց ընդ եղբարսն իւր, զի ասաց. Գուցէ դիպեսցի նմա ինչ չարիք ընդ ճանապարհին։ Եւ եկին որդիքն Իսրայելի առնուլ հաց ի մէջ այլոց, որ գային։ Եւ Յովսէփ էր իշխան երկրին, եւ նա էր որ ծախէր ցամենայն ազգս երկրին։ Եւ եկեալ եղբարքն Յովսէփայ, երկրպագին նմա երեսօք մինչեւ ցերկիր։ Եւ ետես Յովսէփ զեղբարսն իւր, եւ ճանաչեաց զնոսա, եւ ինքն ոչ ճանաչեցաւ նոցա։ Եւ յիշեաց Յովսէփ զերազսն զոր ետես, եւ ասէ ցնոսա. Լրտեսք էք դուք, եկէք տեսանել զանդամս երկրին։ Եւ ասեն ցնա. Ոչ տէր, այլ ծառայք քո եկեալ են առնուլ հաց։ Ամենեքին որդիք մի այրոյ եմուք, ազնիւք եմք, ոչ լրտեսք են ծառայք քո։ Եւ ասէ ցնոսա. Ոչ այդպէս է, այլ տեսանել զանդամս երկրին եկեալ էք։ Եւ ասեն. Տասն եւ երկու եղբարք եմք ծառայք քո, որդիք մի այրոյ Եբրայեցւոյ, որ բնակեալ է ի Քանանացւոց, եւ ահա կրտսերն է ընդ հարսն մեր, եւ մի ոչ կայ։ Եւ ասէ ցնոսա Յովսէփ. Ոչ այդպէս է, այլ տեսանել զանդամս երկրին եկեալ էք։ Եւ ասեն

առ հասարակ, և զկառս և զհեծեալս. որք եղեն բանակ մեծ յոյժ: Եւ հասեալ ՚ի կալն ատադայ ՚ի սահմանս քանանացւոց, կոծեցան զնա անդ աւուրս եօթն կոծ մեծ և սաստիկ յոյժ, մինչև հնչել ընդ ամենայն շրջակայ սահմանս քանանացւոց. որք զարմացեալ՝ ասացին, սուգ մեծ է եգիպտացւոց. վասն այնորիկ զսնուն տեղւոյն կոչեցին սուգ եգիպտոսի: Ապա բարձեալ անտի զմնբմին յակոբայ՝ որ և խոբայէլ, տարան և թաղեցին զնա յայրին կրկնուհ յանդիման մամբրէի, զոր ստացաւ աբրահամ. որպէս պատուիրեալ էր նոցա: Եւ դարձաւ յովսէփ յեգիպտոս ինքն և եղբարք նորա, և ամենեքին որ ելեալ էին ընդ նմա:

Յետ այնորիկ իբրև տեսին եղբարքն յովսէփայ՝ զի մեռաւ հայր իւրեանց, երկոցեալ թէ գուցէ ոխս ունիցի ընդ նոսա յովսէփ, և խնդրեսցէ զվրէժ չարեացն, զոր անցուցին ընդ նա, ղայս ինչ խորհեցան առ ՚ի ապահովացուցանել զանձինս. զի եկին առ նա, որպէս թէ պատուէր ընկալեալ էին ՚ի հօրէ իւրեանց՝ ասել ցնա. Թողուլ ինքեանց զմեղս իւրեանց, զոր գործեցին նմա. յոր և ինքեանք յաւելին խնդրել զներումն, անկեալ առաջի նորա ՚ի վերայ երեսաց իւրեանց: Ասէ յովսէփ՝ յորմէ հեռի էր այնպիսի խորհուրդ վրէժխնդրութեանէ, իբրև լուաւ զբանս նոցա զոր խօսեցան, ելաց ՚ի ցաւոց սրտին. զի յետ այնչափ սիրոյ և խնամոյ զոր եցոյց ՚ի նոսա, տակաւին կասկածելին ՚ի վերայ գթութեանէ, հեզութեանէ, և անսխալութեանէ իւրոյ: Ապա որպ առ քառնալոյ ՚ի սրտից նոցա զամենայն կասկած, զգործն յորմէ նոքա երկնչէին, ածային անաեսութեանէ վերագրէ. և խոստանալով հերակրել զնոսա, և զտուն նոցա, միխթարէ քաջալերէ և սփոփէ զնոսա, չունելէ բնաւ հասկած ինչ զնմանէ: Եւ քնակեաց յովսէփ յեգիպտոս՝ կեցեալ յետ մնհուան հօր իւրոյ յակոբայ ամն քառասուն և եօթն: Ապա ՚ի մերձենալ վախճանի կենաց իւրոց՝ խօսեցաւ ընդ եղբարս իւր, յայտ արարեալ նոցա զնոսուսումն ոչ՝ տալ նոցա զերկիրն

քանանացւոց. վասն որոյ երդմնեցոյց զնոսա, և զորդիս նոցա, յերկանել իւրեանց յեգիպտոսէ՝ հաներել և զիւր ասկերս և տանել ընդ ինքեանս: Եւ վախճանեցաւ յովսէփ ամաց հարիւր և տասանց. յամի արարչութեանն աշխարհի 2303. և զմարեալ և պատեալ զմնարմին նորա՝ ըստ օրինի թագաւորացյ, եդին ի տապանի:

Յովսէփ նահապետ եղև մի ի մեծասքանչ արանց անտի, զորս ընդ ժամանակս ժամանակս յարուցանէ Տէր ի հանդէս մեծութեանէ ողորմութեանէ իւրոյ, ի յայտնութիւն աքանչելեաց կարողութեանէ իւրոյ, և ի գործադրութիւն խորհրդոց անհասս իմաստութեանէ իւրոյ: Զիրք բնութեան և ձիրք շնորհաց, եթէ այսպէս արժան իցէ ասել՝ երևելին եղեալ զիմաստն արարեալ ի նմա, երկոցունց և ս քնաղ արգասեաց Տէրն և գերազանց գտեալ: Ի վարս նորա լուսափայլէ գերագոյն արարչապետին նախախնամական խնամք առ մարդիկ, ցանգ պատրաստ և մտադիւր ի դարմանել զամենեսեան քաղցրութեանէ, և ի ընուլ զկարիս կարօտելոց, որք յոսով դիմեն առ նա: Կարժան էր ամենայն արքունի պաշտօնէից, որք վարեն իշխանութեանէ ի վերայ ժողովրդեան՝ զկեանս նորա ունել ինքեանց յառաջադիմ օրինակ վարուց գնացից: Կա ի կիր էարկ զմեծ և զընդարձակ իշխանութեանէ իւր, ոչ ի ձնշել և ի նուաստացուցանել զնախանձորդս իւր. և ոչ ի քննախնդիր լինել իւրոց չարարարաց, այլ ի վարձատրել և ի բարեբաստցուցանել զարժանաւորս:

Մեծութեանէ նորա ոչ էտ նմա մոռանալ զպարտս իւր. զի ընդ այնչափ իշխանութեանէ և փառաց՝ եղև միշտ ըզև երկիւղած Յեր. պատուադիր ծնողի իւրոյմ. գորովագութիւն առ եղբարս. խնամարկ, քաղցր, հեզ և զթասէր առ ամենեսին: Ոխացոյց զտուն իւր, այլ ոչ անիրաւութեանէ և արտաստօք այլոց: Կղև պաշտօնեայ մեծի ինքնակալի, այլ վարեաց զսպաստաւորութեանէ իւր՝ գնելով ի մտի լինել հայր ժողովրդեան մեծի, և ոչ ձնշող և հարստահարող: Կձեցոյց զեկամուտ ձեն իւրոյ արքայի, այլ համեստ

և չափաւոր հարկադրութիւնք, զի մի յաւելուած արքունի գանձուց՝ լինի կողոպտելով և կեղեքելով ժողովուրդն. քանզի քաջ գիտէր զայս ճշմարտութիւն, զի յորժամ ժողովուրդն այնչափ նիհարասցի, մինչև չունել այլ արիւն յերակս՝ ի կենդանութիւն ինքեանց, չայտ է՝ թէ այնուհետեւ և ոչ արքունի երակաց ունիցին մատակարարել։

Ա՛ւ զնաչխարհիկ քաղաքավարութիւնք իւրոյ՝ միշտ չարգոյ և մեծարու եղև չաչս փարաւոնի, և ամենայն պաշտօնէից նորա և մեծամեծաց եգիպտացւոց. և սիրելի համբոյն ժողովրդեան, որք առ կենդանութիւնք նորա՝ ի պատուի ունէին զնա իբրև հայր հասարակաց. և զկնի մահուն ըստ սմանց՝ ի պաշտօն առին զնա՝ ի կարգս դից իւրեանց կարգելով անուամբ սերապիսի, կամ սերապիոն. իբր զի ասէն սերապիոնն այն էր ժամանակակից յովսեփայ, և զի ապրեցոյց զերկիր նոցա՝ ի սովու մեծի. և զի՝ ի ձև արջառոյ պաշտէին զնա. որ էր նշանակ երկրագործութիւնք և պտղաբերութիւնք. և ևս զի նկարէին զնա պատանի հասակաչափ, ունելով՝ ի վերայ գլխոյն գրիւ և կողով. որք նոյնպէս նշանակ են արմտեաց և պտղոց. և զի ասէին զնա բազմաչեայ, ՝ի դէպ եկեալ արթնութիւնք և աչալուրջ խոհեմութիւնք և նախախնամութիւնք յովսեփայ. որպէս և այլ նախընթաց նշանակք։ Սակայն այսոքիկ չէն բաւական ապացոյցք՝ ի հաստատութիւն կարծեաց նոցա։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Լուծանէ գծուածքութիւնն որ ի *առաւանէրդրդ վէցէրդրդ գլուխս ծննդոց ընդ առաջ ելանէ ի վէրայ ընտրոյ անչանց՝ որ ընդ յակոբայ մտին յեգիպտոս։

Ի վախճան գրոցս ծննդոց կարևւոր համարեցաք յաւելուլ բանս ինչ՝ ի բացայայտութիւն գժուարութեանն, որ երևի ծագիլ՝ ի բանից՝ որ գրոց՝ ի վերայ թուոյ անձանց, որք ընդ յակոբայ մտին յեգիպտոս։ Օ՛ի՛ ի գլ. խշ. համար 26. ասի, * Ամենայն ոգիք որ մտին ընդ յակոբայ յեգիպտոս, որ ելեալ էին յերանաց նորա, առանց կանանց որդւոցն յակոբայ, ամենայն ոգիք վաթսուն և վեց ‖։ Ապա՝ ի յաջորդ համարն անմիջապէս զկնի ասի։ * Իսկ ամենայն ոգիք տանն յակոբու որ մտին յեգիպտոս՝ եօթանասուն և հինգ։ ‖ Այսպէս ընթերցանուն եօթանասուն Թարգմանիչքն ասեն, և ելեէ. ա. 5։ Ալյնպէս և ք. օրինաց. գլ. ժ. 22. բազմաւք յօրինակաց նոցա պահեն զնոյն թիւ. Թոզ զմտնես, որք անդ ընթերցուն եօթանասուն. յօրոց երևի և մերս Թարգմանեալ. զի և մերն անդ ունի եօթանասուն։ Ալյնպէս և սուրբն ստեփաննոս. գործոց է. 14. զնոյն թիւ յիշէ. * Ընտաքեաց ասէ յովսէփ և կոչեաց զյակոբ զհայր իւր, և զամենայն ազգատոհմն ոգիս եօթանասուն և հինգ ‖։ Իսկ բնագիրն եբրայեցւոց, որպէս և վուլկատայն լատինացւոց, Թէպէտ՝ ի Թիւն վաթսուն և վեց համաձայն են ընդ եօթանասնից, բայց յերկրորդն ոչ նոյնպէս. զի նոքա եօթանասուն հատ ունին։ Այսպիսի զանազանութեց բազումք՝ ի մեզնէցւոց ասեն, Թէ՝ որ գիրն ոչ ճշմարիտ՝ ի Թիւ արկանէ զանձինս սերեալ՝ ի ծննդոց յակոբայ՝ որք մտին ընդ նմա յեգիպտոս. այլ զեւս եւեւիս միայն և զնշանաւորս՝ որք կային յամենամ.

և որք ծնան յետոյ յեգիպտոս առ կենդանութիւն յակոբայ, և ըստ ամանց՝ նաև առ կենդանութիւն յովսեփայ։ Ականն ուշադիր ընթերցողն գտանէ ոչ զերևելիս ևեթ, այլ զանհնային ազգաատիմ յա կոբայ պարզ և յայտնի մի առ մի՝ի թիւս արկեալ. որպէս ահա երևի՝ի ցուցակի աստ՝ զոր առնումք՝ի ներքոյ գրոց։

Ա.որդի՝ Թողեալ՝ի բաց զկանայս որդւոցն յակո. բայ, և զաղամութիւն ծառայից, որք ոչ մտանէն՝ի համար, սկիզբն արասցուք՝ի յակոբայ ուստի սկսա նի և որք գիրն։ ա. Յակոբ։ բ. Ռուբէն. գ. Ս. Նոք. դ. Վաղղուս. ե. Ասրոն. զ. Կարմի. է. Մասուն. ը. Յամուէլ. թ. Յամին. ժ. Ա.Հուդ. ժա. Յաքին. ժբ. Սահառ. ժգ. Սաւուղ. ժդ. Ղ ևի. ժե. Դանեթսոն. ժզ. Կահաթ. ժէ. Աերա րի. ժը. Յուդա. (ժԹ. Ար. ի. Աշեռ.) իա. Ա. ևլոմ. իբ. Փարես. իգ. Օարա. իդ. Ասրոմ. իե. Յամուէլ. իզ. Ասաքար. իէ. Զաբուղոն. իը. Փսաճ. իթ. Յասուբ. ի. Օամամ. իա. Օա բուղոն. իբ. Աերեդ. իգ. Ա.դղոն. իդ. Ասել. իե. Ա.ինա գուսար լիայ։ Ասկ Ար, և Աշեռն որդիք յուդայ մեռան՝ի քանան, յառաջ քան զերևանել իսրայէլի յերկիրն անտի. սակայն և այսպէս գնին՝ի ցուցակի աստ. որպէս զի՝ի միտ առցուք Ար զօնէ և Յամուէլ որդիք փարեսի՝ Թառունք յու դայ՝ փոխանակեցին զառնլ նոցա յետադարձութիւն իմն իրաւանց՝ որպէս ասի. որք չև ևս էին ծնեալ։ Ա ման որոյ Թէպէտ յիշատակին՝ի շարս անուանց, այլ ոչ գնին՝ի համար. որ յայտ անտի է, զի՞ զգիրն յետ Թուելոյ զսոսա՝ գնէ զգումարն նոցա միանգամայն, ասելով.* Ասքա են որդիք լիայ, զոր ծնաւ յակոբ՝ի միջազեաս.... ոգիք երեսուն և երեք։ ուր յայտ է Թէ՝ի բաց Թողու զԱր, և զԱշեռն. ապա Թէ ոչ լինէին երեսուն և հինգ. որպէս աւելացաք։

Ա.պա վերստին շարունակեալ, Թուէ և զմնա ցեալս. Ար. Կադ. լե. Ասիմն. լգ. Ա.Հեդես. լէ. Ասնիա. լը. Ասաւոքամ. լթ. Ա.յեդես. ճ.

Աբրահամ. Իսահակ. Աբեղիմելէք. Իսեր. Իսդ. Յեմնա. Իսդ. Յեսուա. Իսե. Յեսուէ. Իսղ. Խարխա. Իսէ. Ասրա քսրը նոցա. Իսը. Վոքսը. Իսթ. Աեղքիսկէ. Ճ. Յովսէփ. Ճա. Մանասէ. Ճբ. Եփրեմ. Ճգ. Մաքիր. Ճդ. Գաղաադ. Ճե. Սուտղամ. Ճզ. Տաման. Ճէ. Եդեմ. Ճը. Աենիսամին. Ճթ. Բաղա. Հ. Խոքսը. Կա. Իսբեկ. Կբ. Գեհբրա. Կգ. Աիմման. Կդ. Ինաքիս. Կե. Իովս. Կզ. Մամիիմ. Կէ. Ափիսին. Կը. Օարագ. Կթ. Գան. Կ. Իսամ. Կա. Աեփեթաղիմ. Կբ. Իսիկ. Կգ. Գոմիսի. Կդ. Իատաբ. Կե. Աիսկ. սաքա. Մանասէ և Եփրեմ. որոց փոքր գոլով յայնժամ, չէրեն տարեալ ընդ յովսեփայ ընդ ա-

ռաջ հաւու իւրեանց. ուստի և ո՛չ մնին ընդ նմա։ Լսրուին և Յամուէլ իրական որդիք փարիսի. և օրինական կամ քաղաքական որդիք հօրեղբօրց իւրեանց Լ՚ւրայ և Ո՚ինանայ. որք Թէպէտ չև կին ծնեալ, նակային յետագարձուԹ՚ի իրաւանց՝ որպէս ասացաք, կալան զտեղի նոցա։ Լ՚ւ հինգ Թոռունք յովսեփայ յետոյ ծնեալք. Ո՚աքիր. Գաղաադ. Ասուտաղամ. Տասամ. և Լ՚դեմ. ընդ ամենայն ո դիք լինն. զորս յաւելեալ՚ի վաԹսուն և վեցն. լինն եօԹանասունն և հինգ։ Ո՚մանք՝ի Թուոյ ասի ՚ի բաց հանեն զԳ՚ւինա, և զՈ՚արա դստերս յակոբայ. որք Թէպէտ մնին ընդ նմա, բայց չունելով գիրաւունս արանց, ո՛չ կացուցանէին զմանաւորս նահապետուԹ՚ի տան խորայելի. վասն որոյ առ՚ի լրացուցանել զնախագրեալ Թիւն, յաւելուն այլ երկու ոգիս՝ի Թոռունս յովսեփայ։ Ասկ ընդ իմն եբրայեցւոց, որպէս և վուլկատայն լատինացւոց եօԹանասունն Թուէ, որպէս ասացաք՝ի վերոյ, Թողեալ՚ի բաց զհինգ Թոռունս յովսեփայ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԵԼԻՑ։

ԳԼ. Ա.

Անունդ Աւվսէսէ, և անունդ նորա և դասախաբակուածէ յարդունս ֆարաւոնի եգիպտացւոյ արդայէ։

Յետ մեռանելոյ յակոբայ և յովսեփայ և եօթանասուն և հինգ նահապետաց, որք հիմնեցին յեգիպտոս զազգատոհմ իսրայէլի, որդիք նոցա աձեցին և բազմացան յոյժ յոյժ. մինչև լինել ժողովուրդ մեծ և զօրաւոր յանթիւ բազմութիւն յաձախեալ. որպէս թէ երկիրն ինքնին բուսուցանէր զնոսա և աձեցուցանէր։ Այլ չէին ինչ զարմանք. քանզի ունէին և յարտաքին գրոց, եթէ յեգիպտոս, և յայլ շրջակայ գաւառս իբր անհատատալի ինն ե բեղմնաւորութիւն կանանց. մինչև ոչ միայն երկուորեակս, կամ եռուորեակս, այլև քառուորեակս բերել նոցա առ մի ծնունդ։ Սակայն սքեն օգոստինոս զայս տարապայման աձումն որդւոյն իսրայէլի համարի գերբնական ՚ձծայնի օրհնութե գործ. մննաւանդ ՚ի ժամանակս սարկութեան նոցա. յորժամ յայնպիսի անբերելի տանջանս և ՚ի տառապանս կային, մինչև հազիւ զշունչ կենդանութեան պահել յանձինս զօրեին, թէզ թէ աձել սերնդեամբ։

Ընդ այն ժամանակս տերութիւնն եգիպտոսի՝ կոչեցեալն ութհուտասանեորդ հարստութիւն, զկնի հարստութեանն հովսեայ՝ այսինքն յովսեփեանց, կամ բարեկամաց տանն յովսեփայ, էր ՚ի ձեռս օտար ցեղի դիսպողիտացւոց. յորոց կարգի եղև և

այն փարաւոն, որ ըստ Եւսեբեայ և Յովսեպոսի՝ ոչ էր ի տանէ կամ յորդւոց փարաւոնի որ բարձ-
րացոյց զՅովսէփ. ուստի և էր անծանօթ մեծամեծ
բարեաց և անթիւ երախտեաց, զոր արար Յովսէփ
յերկրին Եգիպտացւոց. Յայր սակս համբերէն տուհն
խորայելի էր խնամեալ և պաշտպանեալ ի նախորդաց իւրոց, և սիրելի ամենայն ժողովրդեան։
Ա. Յամ կարծեաց նպաստակ և ոչ դիւրն, զի ասէ.
* Ընկաց այլ (այսինքն օտար) թագաւոր, որ ոչ
գիտէր զՅովսէփ ։ Ելից. ա. 8։ Այս տեսեալ զազգ-
մանալ որդւոցն իսրայելի և զղօրանալ նոցա, կաս-
կած ինն ապստամբութեանէ զնոցանէ եգ ի մտի. ուս-
տի խորհելով հնարս խափանելոյ զաճումն նոցա,
կոչեաց զսեփորա և զփուա զծնուցիչս կանանց եբ-
րայեցւոց, և պատուէր ետ նոցա գաղտաբար, զի
զամենայն արուս եբրայեցւոց անդէն ի ծնանիլ
նոցա հեղձուցանիցեն, զեգս ևեթ ապրեցուցանել-
լով։ Ա. յր նոքա երկուցեալ Ք՜ոյ, ոչ իշխեցին բնաւ
զպյն գազանային գործ անգթութեանէ գործել։ Այլ
ի հշտամբել փարաւոնի զնոսա սակս չանսալոյ նո-
ցա հրամանաց իւրոց, նոքա առ անքաւիր առնելոյ
զանձինս՝ ետուն պատասխանի, թէ կանայք եբ-
րայեցւոց զօրաւոր էն, վասն որոյ և դիւրածին և
իբր անկարօտ ծնուցչաց. ուստի մինչև ի մտեալ
առ նոսա մանկաբարձաց, նոքա ծնանին։ Ա. յս բան
նոցա բազում մասամբ ի վերայ աշխատաւորս կա-
նանց եբրայեցւոց Ճշմարիտ էր. զի սակաւ պետս
ունէին նոքա մանկաբարձաց. որպէս պատմի և
վասն կանանց եթովպացւոց, և քաղդէացւոց և
այլոց ջերմագին սահմանացն արևելեայց։ Ապա-
և այնպէս չէ մարթ բնաւին անպարտ կացուցանել
զնոսա ի ստախօսութենէ. զի թէպէտև բարի առնէր
նոցա Ած վասն այնր գործոյ, տալով նոցա ստաց-
ուածս և զաւակս և յաջողութեն իրաց իւրեանց,
այլ՝ ասէ օգոստինոս. * Ի արձատրեցաւ մարդասի-
բութենն, և ոչ խաբէութենն. բարեյօժարութենն
մտաց, և ոչ անօրէնութենէ ստախօսին ։

Իբրև եհաս փարաւոն, զի այսու խորհուրդ

իւր ոչ յաջողեցաւ, նոր պատուէր Եհան՝ ոչինչ ընդհատ չար և անողորմ քան զառաջինն. զի ամէն նայն արուն՝ որ ծնանիցի երբայեցւոց, ի գետ ընկեցէք: Վերայ այսոցիկ յաւել և ծանր և անհնարին աշխատանօք տանջել և ձնչել զնոսա, կալ մեցեալ իսպառ նկուն և ջլակոտոր առնել զնոսա. զի մի երբեք կարիցեն գլուխ ամբառնալ, և բրածնոյթամբ բանալ ինքեանց ձանապարհ ելանելոյ յերկրէ անտի. զոր նա ոչ կամէր. քանզի կարի սիրանի էին նմա երբայեցիք ի գործս ծառայութիւն, յորս անվարձ ծառայեցուցանէր զնոսա: Այս նաւանդ զի գոյր ևս համբաւ, թէ հանդերձեալ են նոքա ելանել յերկրէ անտի. զոր յովսէփ մինչեւ էր մեռեալ՝ յայտնեալ էր նոցա, և պատուիրեալ հանել ընդ ինքեանս և զիւր ոսկերս: Այս թերևս և առ եգիպտացիս հնչեալ էր. նմին իրի առաւելապէս փոյթ առնէր փարատեն նուաճել զնոսա: Այսոյգ ի վերայ նոցա գործավարս ժանտս և տմարդիս՝ կալ յարաժամ ի վերայ գլխոց նոցա, և չտալ քնաւ դուլ և դադար ի գործոյ: Իսկ գործ նոցա ըստ նշանակելոյ մեկնչաց, էր կաւս պատրաստել, աղիւսս արկանել և թրծել. վիմս հատանել և կոփել, քաղաքս և ամրոցս շինել. թումբս ընդդէմ ջուրցն նեղոսի կառուցանել. խրամս բանալ՝ ի բաշխել զջուրս յոռոգումն դաշտոց. բեռինս բառնալ փոխանակ գրաստուց. հերկագործել և մշակել զանդաստանս նոցա: Այսպէս անողորմ գերութիւն կացին նոքա ամս ութսուն և վեց. ըստ ոմանց ինսնսուն և չորս, կամ հարիւր քառասուն և չորս՝ մինչև ցելոն յերիսոսէ:

Ընդ այն ժամանակս շինեցին նոքա զվիթոն, որ այն ինքն է վաթումոս. զոր հերոդոտոս դնէ առ սահմանօք արաբիոյ՝ ոչինչ կարի բացագոյն ի կարմիր ծովէ. զԱմաստ. որ ըստ տարգմանի երուսաղէմացւոյ է Պէլուսիոն քաղաք. և զԱյն. այլ այս երրորդ քաղաք ոչ ի ընագրի երբայեցւոյ, և ոչ յայլ թարգմանութիւնս երևի, զոր եօթանասունքն և եթ ունին. զոր և նոյնացուցանեն ընդ

Հեղուպօլսոյ կամ Աբեգ քաղաքի. որ կայը յա-
ռաջ. բայց գուցէ եբբայեցիք յաւելլին ինձմս պա-
բիսպս և զայլ նոր ամրութիս. ըստ որում և ոք
գիրք ասեն, թէ շինեցին քաղաքս ամենայն փարա-
սանի. Ինձին ժամանակի շինեցին և զհռչակաւոր
բերդսնս եգիպտոսի. որպէս հաստատէ գրոտիոս,
և այլք ոմանք. Յայսպիսի և յայլ սոցին սակի
խիստ գործս վարեին զնոսս բռնութիք, և կեղեքին
զհետնս նոցա, մինչև յոգիս ապաստան լինել նո-
ցա. սակայն և այնպէս՝ որչափ չնչէին զնոսս ե-
գիպտացիք, այնչափ բազմանային նոքա և զօրա-
նային. Օձայս գերութիէ եբբայեցւոց ոք գիրք՝ի
զանազան տեղիս ընդ երկաբեղէն կոչին, յայտ արա-
րեալ զանհնարին դառնութիէն.

Յայնմ դառնագիտ ժամանակի վասն եբբայե-
ւոց, մինչ սաստկանայր հրամանն գերնկից առ-
նելոյ զարու մանկունս եբբայեցւոց, ծնաւ Յովս-
սէս. անուն հօր նորա Ամրամ, որդի կամ թոռն
կահաթու՝ի ցեղէն ղևեայ. և մօրն Յովքաբեթ
դուստր հօրեղբօր ամրամայ. որ ծնաւ զմարիամ,
և զահարոն երեք ամօք յառաջ քան զծնունդ մով-
սիսի, այս է՝ մինչև էր ելեալ նահապետալ անօ-
րէն հրամանն գերընկերութիէ. զի ահարոն մնաւ
անվտանգ՝ի տան ծնողաց իւրոց: Ապա ծնաւ մով-
սէս. զոր վերագրին մայրն թաքոյց՝ի տան ամիսս
երիս. այլ յայնմհետէ ոչ ևս այլ կարէր թաքուց-
ցանել, քանզի կարգեալ կային՝ի փարաւոնէ սպա-
սաւորք, որք թերևս յերիս ամիսս միանգամ չըր-
ջէին՝ի տունս եբբայեցւոց՝ի քննութիէ: Արդ՝ զի
մի անկեալ մանուկն՝ի ձեռս անգութ բարբարո-
սացն, հաստատեաց՝ի մոր ինքնին իւրով ձեռամբ
գնել զնա՝ի նեղուս գետ, զի թերևս վարեալ յայլ
տեղիս՝ գացի՝ի վերայ ջուրց և ապրեսցի: Ի սոսն
որոյ արար տապանակ պրտուեայ նաւահաձև, և
քաջ ծեփեալ արտաքուստ կաւրաձիւթով, զի մի
մուտ գտցէ ջուրն՝ի նմա, եդ զմանուկն՝ի նմա:
Այս թերևս խորհրդով գիտեայ և զժամանակին.
քանզի գիտէր նա, թէ գուսաը փարաւոնի սովոր

էր երբեք երբեք երթալ և լուանալ ի նեղոս ի սահմանեալ ինն տեղի. և մինչ նա լուանայր, նա ժիշտք նորա ձեմչին զափամբք գետոյն։ Իսկ իբրև ժամ դիպող կալեալ՝ փոքր մի յառաջ քան զժամ մանել անդ դստեր փարաւոնի, եդ զտապանակն յեղեգնաշամբս առ ափն նեղոսի. և ինքն մեկնեցաւ անտի, թողեալ անդ փոքր մի ի բացեայ ըզդուստր իւր զմարիամ, ի դիտել զելս յետին հնար բազործուքեն իւրոյ. և ի յաջողել իրացն ըստ ո րում ակն ունէր, խօսել առ դուստր փարաւոնի որպէս խրատեալ էր ի նմանէ։

Իսպհուրդ գորովական մօրն անշուշտ ազդեալ ի նմանէ՝ եւ ի գլուխ անվրէպ. քանզի եկն դուստր փարաւոնի, ետես զտապանակն, առաքեաց զնա ժիշտն քերել առաջի իւր, եբաց և ետես զմանուկն հրեշտակատիպ կայտառ և գեղեցիկ՝ ղի լայր. ի գուրթ հարաւ խանգաղատեցաւ զնովաւ. և դարձաւ առ նաժիշտս իւր, և ասէ կարեւոր քար. սա ի մանկանց եբրայեցւոց է։ Այսմհետ պա հու եհաս անդ մարիամ քոյր մանկանն. և առանց տալոյ կարծիս ինչ զանձնէ, ասէ ցնա. կամիս զի կոչեցից կին մի յեբրայեցւոց անտի, որ սնուցանիցէ քեզ զմանուկդ։ Իսկ՝ ասէ, երթ. և նա գնաց կոչեաց վաղվաղակի զյովքաբեթ զմայր մանկանն. որ անձկալի յոյսով բարի կատարածի կայր ձեայր ոչինչ կարի բացագոյն ի տեղւոջէն։ Իսկ ինն փութանակի կինն, ո՛չ յայտնելով զանձն լինել մայր մանկանն։ Իսկ ցնա դուստր փարաւոնի, առ զմանուկդ, և սնո՛ զդա ինձ իբրև զիմ որդի. և ես տաց քեզ վարձս քո։ Իսառ կինն զմանուկն, և սնոյց զնա մայրենի խնամով. և իբրև հաստատեցաւ, ած զնա առ դուստր փարաւոնի. և նա կալաւ զնա առ իւր յորդեունիս. որդեգրեաց ինքեան, և եդ նմա անուն Մովսէս. որ ի բարբառ եգիպտացւոց նշանակի ի ջրոյ հանեալ։

Մնաւ մանկէս և դաստիարակեցաւ ընդ խնամս մարկուղիոսի մայրագրի իւրոյ յապարանս փարաւոնի իբրև զմի յորդւոց արքայի. և ուսաւ զամենայն

գիտութեի՛ւ և զիմաստութեի՛ւ եգիպտացւոց. և եղև երիտասարդ առոյգ, պերճ և զօրաւոր ՚ի բանս, և արի և քաջ ՚ի գործ զինուց. որպէս վկայէ գնմա՛ն նե՛ սո՛ւրբն ստեփաննոս.* «Եւ վարժեցաւ ասէ մովսէս ամենայն իմաստութե՛ւ եգիպտացւոցն. և էր զօրաւոր բանիւք և գործովք իւրովք» . գործ. է. 22։ Երդ եկաց մովսէս յարքունիս անդ՝ պատուեալ և փառաւորեալ, անկցորդ տառապանաց ազգին իւրոյ մինչև ցգառամներորդ ամ հասակի իւրոյ։ Ապա յաւուր միում շարժեալ ՚ի բնաբոյս գթոյ առ վշտահար ժողովուրդ իւր, եւ ինքնին միայն շրջիլ յայցելութե՛ն նոցա. և եահս, զի ահա այր մի անօրէն եգիպտացի յարձակեալ ՚ի վերայ տառապեալ եբրայեցւոյ միոյ, հարկանէր զնա ՚ի հարուածս մահու։ Երդ այս իրաւամբք ծանրացաւսուն եղև մովսէս և վրէժխնդիր. քանզի եբրայեցիք էին յեգիպտոս ո՛չ սարուկք՝ գերեալք և նուաճեալք պատերազմաւ, այլ ազատ հասարակութե՛ն բնակեալ անդ կամօք և հաւանութե՛ւ թագաւորին, առանց ինչս ինչ հասուցանելոյ տերութե՛ն նոցա, կամ ումե՛ք ՚ի ժողովրդենէ։ Երինչ զի թէպէտև ՚ի ժամանակին, առ չունելոյ նոցա կարողութի՛ւն ՚ի պաշտպանել զիրաւունս իւրեանց՝ կային քունութե՛ն նուաճեալ և իբր գերեալ, քայց ունէին և իրաւունս պաշտպանելոյ անձին և եղբօրն, զոր կարօղ էին իրաւամբ և արդարութե՛ւ ՚ի կիր արկանել ընդդէմ անիրաւ հարստահարողաց. որպէս լինի յօրինաւոր կռուի, յորժամ առանց ինչ յանցանաց միոյ կողմն՝ միւս կողմն ՚ի վերայ յարձակիցէ ընդդէմ բնական և ազգային օրինաց։ Օ՚սոյն գայս իրաւունս առ ՚ի ձեռին մովսէս յայս գիպուած. գործ մեծի սիրոյ դառնալով ապրեցուցանել զանմեղն բարձմամբ կենաց անիրաւ յարձակողին, յորժամ ոչ գոյր այլ հնար ազատելոյ զնա։

Օայս առաջին գործ պաշտպանութե՛ւ արար մովսէս, կամեցեալ խմացուցանել ժողովրդեան իւրոյ զներքին յայտնութե՛ն լինելոյ իւրոյ ընտրեալ յոյ առաջնորդ և փրկիչ նոցա։ Եւ զայս խմանալո՛ւ

'ի բանից սըկսեալ ստեփաննոսի, որ ասէ վասն մովսէսի. * Օ մեռաւ ածէը՝ Թէ խմասցին եղբարք նորա, զի ասձ'ի ձեռն նորա տալոց էր զփրկութիւն նոցա ||. գործ. Ը. 25: Ա.յսմ բանի երևի նպաստել և առձէն սըկսեալ պօղոսի: * Հաւատով մովսէս՝ իբրև աձեաց, ուրացաւ կոչիլ որդի դստերն փարաւոնի. լաւ համարեցաւ չարչարիլ ընդ ժողովրդեանն աստ, քան առ ժամանակ մի վայելել'ի մեղս ||. ԷԲր. ԺԱ. 25: Յորմէ յայտ է Թէ ոչ էլ նա յայնժամ վայրապար կամ ըստ դիպոց ինն տեսանել զաւրացս բանս եղբարց իւրոց, այլ'ի ներքին ազդեցութէ և'ի յայտնութէն սըկ կարգելոց զնա փրկիչ ժողովրդեան իւրոց: Իստի մովսէս վարեցաւ'ի ժամն ըստ այսց երից գլխոց կամ իրաւանց, այսինքն արդար պատերազմի, անմեղադրելի պաշտպանութէ, և իրաւամբ իշխանութէ որ առաւ նմա. յորոց իւրաքանչիւրն բաւական էր առնել օրինաւոր զգործն զոր արար. զի հայեցեալ շուրջանակի յայս կոյս և յայն կոյս, և տեսեալ զի չէր ոք ուրեք, որ տեսանէր զնա, եհար զեգիպտացին՝ և սպան զնա. և ծածկեաց ընդ աւազով:

Ա.յսմ գործոյ ոչ գոյր այլ վկայ, բայց եղկելին այն երբայեցի, զոր փրկեաց մովսէս'ի մահուանէ. վասն որոյ պարտ էր՝ զի ամենևին'ի ծածուկ ձեասցէ: Ապակայն նա պատմեաց զնորա Թերևս յոմնկանէ միւմ ուրեք'ի հաւատարիմ ծանօթից իւրոց. և նա նոյնպէս նոցին ծածկութէ պատմեաց այլոմ. և այսպէս բերան'ի բերանոյ անցեալ՝ առ օրին հրատարակեցաւ գործն նախ'ի մէջ իսրայէլացւոց. զոր յերկրորդումն աւուր մովսէս ինքնին լուաւ մեծաւ զարմացմամբ'ի գիմն ածել նմա, մինչ կամէր խաղաղութէ արկանել'ի մէջ երկուց երբայեցւոց՝ որք կագէին ընդ միմեանս: Օ'ի նա՝ որ յաղթահարէր զընկերն, դարձեալ առ մովսէս՝ ասէ զայրացմամբ: * Ո՞ կացոյց զքեզ այր իշխան և դատաւոր'ի վերայ մեր. Եթէ սպանանել զիս կամիցիս, որպէս երէկ սպաներ զեգիպտացին ||. ելից. Բ. 14: Ա.յս բան այնչափ հռչակե-

ցաւ, մինչև տարածեցաւ և'ի մէջ եգիպտացւոց, եհաս և յականջս փարաւոնի. որ և յառաջնմէ իսկ չէր ինչ հաճ ընդ մովսէս, սակս լինելոյ նորա յազգէ ոմանէ, զոր նա ատեայր մահուամբ, քայց վասն սիրոյ գստերն լռէր. իսկ յայնժամ զայն գիպօղ առիթ գտեալ՝ խնդրէր իբր պարտաւոր մահու կոբուսանել զնա։ Այլ ո՛չ գիտեր, թէ այ ընտրեալ էր զնա փրկիչ ժողովրդեան իւրոյ. որ և աքանչելի նախախնամութեամբ անօրինեաց նմա դաստիարակիլ յարքունիս թշնամւոյ իւրոյ ընդ մեծամեծս. և վարժել ո՛չ միայն 'ի քնական իմաստասիրութիւնս եգիպտացւոց, այլև 'ի քաղաքական կարևոր գործառնութիւնս, ստանալ միտս և խորհուրդ իշխանական. և վարժութիւն 'ի գործ կառավարութենէ և զինուց, զի լինիցի իմաստուն և քաջ հրամանատար։ Այսն որոյ և նա ինքն ոչն ապրեցոյց զնա 'ի ձեռաց փարաւոնի. և կամեցաւ՝ զի այլևս ամն քառասուն կեցցէ մովսէս 'ի հալածանս և'ի ցածուն կեանս. որպէս զի զիտոր ձառեալ ամենայնի՝ գիտասցէ կարեկցիլ թշուառութեան այլոց։ Ոչ ա. ռանց այնպիսի կարեկցութեան՝ իշխանութիւն բազում անգամ փոխի 'ի բռնակալութիւն. կամ ոչ երբեք լինի հայրաբար կառավարել. որ ե կնիք անշուշտ օրինաւոր իշխանի։

Ո՞վհետև ֆախէէ յերէէը մարէահոս։ Լ՚ընդ փէասյանայ
չրին կամ էշլանէին մարէանացոց։ Լրէթէ նմա հրեշտակ պա
՚է ինջոյ էոցաէայլ մոջենոց. և առաւէ զնա հանել զոջրէս
էսրայէէ՚է ծառայութենէ եգիպտացոց։

Ա՚ոջդ՝ մովսէս իջրև իրազէկ եղև, զի փարաւ
ոն խնդրէ զնա սպանանել, փախուցեալ գնաց
գաղթական յերկիրն մադիամու։ Լ՚ուր իջրև եհաս
անդր, ետես առ ջրհորով միով, զի հալիւք ոմանք
բռնացեալք՝ մերժեցին՚է քաց զգաստերս հուագուե-
լայ քրմին մադիանացւոց, ոջք կամէին արբուցա
նել խաչանց իւրեանց։ Յարեաւ մովսէս՚է վերայ
հովուացն, և վանեալ զնոսա, եհան ջուր, և ար
բոյց զնաչինս աղջկանցն. և այնպէս յառաջ քան
զառաջորական ժամն դարձան նոքա՚է տուն։ Լ՚ընդ որ
զարմացեալ հուագուելայ հօր նոցա, և հարցեալ
զպատճառն վաղագոյն դառնալոց, իջրև լուաւ՚է
նոցանէ զիրսն՝ որ պատահեաց առ ջրհորին, հրա
մայեաց կոչել վաղվաղակի զայրն բարերար. զոր
և ընկալաւ բազում մարդասիրութիւ։ Հուագուել,
որ կոչէր և յոթոր, (թ՚ող զի ոմանք և այլ ան
ուանս տան նմա, զոր չէ տեղւոյս քննել,) հաձեալ
ընդ խոհեմութիւն, ընդ քաղցրութիւն և ընդ ազ
նուական բարս մովսէսի. և կամեցեալ ունել զնա
առ իւր միշտ, փեսայացոյց զնա, տուեալ նմա կին
զսեփորա զմի՚է գաստերաց իւրոց. և էր ինքն իշ
խան մադիամ՝ քաղաքին՝ միանգամայն և քուրմ։

Լ՚նակեցաւ մովսէս ընդ աներոյ իւրում՝ ամն
քառասուն. որպէս ուսանիմք՚է սրջն ստեփաննո
սէ, գործ. է. 30. ուր և ծնան նմա երկու որդիք.
յորոց զանդրանիկին կոչեաց գերսամ, իսկ զկրսերն
եղիազար։ Լ՚ի վախճան ամացն քառասնից՝ մեռաւ
փարաւոն գաղտնամիտ հալածիչն եբրայեցւոց.

քայց այնու չէզև վախձան չարչարանաց որդւոցն իսրայէլի. այլ յաւէտ սաստկացաւ ի ձեռն յաջողելի նորա, որ չար ևս էր քան զնախորդ իւր. այնպէս զի աղաղակ և ողբք հեծութեանէ վչտահար որդւոցն իսրայէլի պատառեցին զերկինս, և հասին առաջի աթոռոյ ողորմութեանէ բարձրելոյն։ Ա.յս էր ժամանակն՝ առ որ պահեաց Ած զմովսէս արտաքոյ աբքունեաց եգիպտացւոց, ի հարուածել նոցա զանօրէնութենէն նոցա։ Այլ մովսէս կարգեալ վերակացու խաշանց անէրոյ իւրոյ, և յաւուր միում մինչ արածէր զնոսա ի ներքսագոյն կողմն անապատին, ամբարձեալ զաչս ի վեր ի մրթամկայ լեառն քորէբ՝ նշմարեաց տեսիլ նորահրաշ. և մերձեցեալ փոքր մի՝ եաես զի ի գլուխ լերինն Թուփ մի մրբենւոյ վառէր մեծաբոց, այլ մրբենին անծախ մնայր ի մէջ բորբոքեալ բոցոյն։ Ա.սէ ընդ միտս իւր, անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ. և իբրև սկսաւ մտա ևս մտածել ի տեղին, կոչեաց զնա Ած սպասաւորութեանէ հրեշտակի ի միջոյ մրբենւոյն, մովսէս մովսէս՝ հանն զկօշկիս յոտից քոց, և մերկ ոտիւք խոնարհութեանէ և պատկառանաւք մտիր յառաջ, զի տեղիդ յորում կաս՝ երկիր սրբ է։

Ա.յնժ յայտնեաց նմա Ած զկամն իւր, եթէ ընտրեալ է զնա առաքել առ փարաւոն՝ հանել ի դառն ծառայութենէ նորա զժողովուրդ իւր, զոր վառեալ մրբենեաւն նշանակեաց. զի կային յամբերելի տանջանս իբր ի քոց հնոյն, այլ անկէզ մնային. մանաւանդ թէ ևս քան զևս պայծառանային, աճէին և զօրանային։ Այլ ի հաստատութենէ իւրոյ ածայնն առաքմանս, եթ նմա նշան զանշուշտ կատարումն մեծի և զժուարակիր գործոյն։ Այսն որոյ իբր ամենայն իրօք հաւաստի՝ այժմէն պատուիրէ մովսէսի, զի ի հանել զժողովուրդ իւր յեգիպտոսէ, զոհս մատուցցեն նմա ի վերայ լերինն այնրիկ, ուր խօսէր յայնժամ ընդ նմա։ Ա.յլ յառաջ քան զերևիլ իւր առաջի փարաւոնի, ասաց նմա ժողովել զծերակոյտ որդւոցն իսրայէլի. և յայտնել նոցա զառաքումն իւր յայ, վասն աղաւաղել

զնոսա ՚ի չարչարանաց եգիպտացւոց, և տանելոյ յերկիրն աւետեաց, որ բղխէ զկաթն և զմեղր. ըստ որում խոստացեալ է աբրահամու, իսահակ և յակոբայ: Եւ ՚ի հարցանել նոցա զնոսն ՚ով առաքչի նորա, ասիցէ, Յեհովան՝ այսինքն է Ե է, կամ Ես եմ՝ առաքեաց զիս. այս է՝ նա որ է ՚ի ճշմ յաւիտենական ինքնագոյ հաւէս անփոփոխ, առաքեաց զիս ՚ի փրկել զձեզ. և կամի՝ զի անփոփոխ կացցեն միասցեն և խոստմունք իւր: Եւ ապա առեալ ընդ իւր զծերս որդւոց իսրայէլի, մտցէ առ փարաւոն արքայ եգիպտացւոց. և ասիցէ ցնա, Թէ ՚ի ճշմ եբրայեցւոց կոչէ զժողովուրդ իւր առ ինքն երթալ երից աւուրց ՚ճանապարհ յանապատ, զոհել ՚ին ՚ով իւրեանց: Եւ գիտեմ, ասէ ՚ճշմ, զի նա ոչ թողուցու զձեզ. այլ արարից ես զքանչելիս, խորտակեցից զկոստումն սրտի նորա, և արձակեսցէ զձեզ: Եւ յելանել ձեր անտի, տարջիք ընդ ձեզ զՀարստումն եգիպտացւոց. զի ես տաց ձեզ շնորհս առաջի նոցա, որպէս զի տայցեն ձեզ յանօթի զամենայն, զոր ինչ խնդրիցիք ՚ի նոցանէ. և արարից՝ զի այն ամենայն առ ձեզ ճշմասցեն յարդար փոխարինութեի այնչափ վաստակոց ձերոց:

Ա.յս են հրահանգք, զորս ետ ՚ճշմ առ ՚ի յիւրմէ ընտրեալ և կարգեալ պաշտօնէին իւրոյ մովսիսի. ոչ զքաղաքական միանգամայն աւանդեալ, այլ ՚ի զանազան նուագս ընդ աւուրս ինչ: Մովսէս կայր և մնախորհ լինէր ՚ի սրտի իւրում ՚ի վերայ այսպիսի հրեշտակութեի իւրոյ. և որչափ առաւել խորհէր, այնչափ աւելի գժուարութիւք ընդ առաջ ելանէին նմա: Ասէ անձին իւրոյ չունէր ինչ կասկած վտանգի, զի յայտնեալ էր նմա ՚ճշմ, եթէ մեռեալ էն, որք խնդրէին զանձն նորա. այլ վասն ժողովրդեան իւրոյ կասկած մեծ ունէր չհաւատալ նմա, թէ իցէ առ չոյ առաքեալ. չունելով ՚ի ձեռին վկայութիւն ինչ ՚ի հաւանեցուցանել զնոսա: Ասէ որոյ ասէ առ ՚ճշմ. Տէր, եթէ ոչ հաւատայցեն ինձ, թէ երևեցար ինձ և խօսեցար առ իս,

զինչ ասացից ցնոսա։ Չարչանէ՞ ած ցնա, զի՞նչ է այդ որ ի ձեռին քումի՞. ասէ Մովսէս, զաւազան. ասէ ած. ընկեա զդա ի գետին. ընկեց և եհաս գնա փոխեալ յօձ զարհուրելի. յորմէ ահաբեկ կեալ՝ փախեաւ։ Այլեւայ գնա ած և ասէ. կալ զօձդ զտանէ, և առ ի վեր. լուաւ Մովսէս, և բուռն եղեալ գնմանէ, և ահա օձն ահագին դարձաւ ի ձեռին նորա՝ և եղև առաջին փայտեղէն գաւազանն իւր։ Այլ ասէ ած. արկ զձեռն քո ի ծոց քո. էարկ Մովսէս, և եհան գնա ի ծոցոյն լի բորոտութիւբ. դարձեալ ասէ. արկ գնա անդրէն ի ծոց քո. էարկ և եհան սրբեալ իսպառ և ողջացեալ ամենևին ի գոյն մարմնոյ։ Այս փոփոխութիւբ գաւազանին և ձեռին Մովսիսի էին նշանակ փոփոխութեն, զոր ած առնելոց էր ի կամն և ի սիրտս ժողովրդեան իւրոյ։ Այլ զի ած որ արար զմարդն անձնիշխան, ոչ կամի բռնութիւբ ածել գնա ի հաւանութիւն, վասն այնու բիւր ետ նշանս բաւականս ի հաւանեցուցանել. ապա եթէ ոչ հաւատացեն (ասէ) երկոցունց նշանացդ այդոցիկ, յաւել և զերրորդն։ Այդեաս ջուր ի գետոյ, և հեղցես ի ցամաքի առաջի աչաց նոյա. և այն ամենայն ջուր զոր հաներ ի գետոյ անտի՝ նոյնհետայն դարձցի յարիւն։

Մովսէս չունելով յայսմ մասին այլ ևս պատճառս ինչ յառաջ բերել, դառնայ ցուցանել զանբաւականութիւն իւր առ այսպիսի մեծ և ծանրակիր սպասաւորութիւն. որպէս թէ յերիկն և յեռանդէ, այսինքն յանցեալ աւուրց՝ յորմէ հետէ խօսեցաւ ընդ նմա ած, յահէ փառաց ածութեանն պակուցեալ, ծանրացաւ լեզու նորա, մինչև չզօրել այնու հետև անսայթաք և համարձակ խօսել և առնել բանել, ըստ որում բերէ հրեշտակութիւն այն։ Այլ որ եւս նմա ած պատասխանի, թէ ինքն բացցէ զբերան նորա. և խելամուտ արացէ զնա, զոր պարտ իցէ խօսել։ Յետեալ Մովսիսի՝ զի ամենայն պատճառք իւր ի դերև ելին, որով հնարեր առնել զանձն ի պաշտամանէ անտի, դարձոյց

զբանս իւր յաշերս. * Ա՛ղաչեմ զքեզ ՝ի՛ր, ասէ, առ քեզ ՝ի ձեռն զայլ ոք զօրաւոր՝ զոր առաքի-
ցես ||։

Հրաժեշտ տալ ՝ի փառաւոր պաշտօնատարու-
թէ՛, առ որ հրաւիրէի ոք ՝ի մեծաւորէ իւրմէ, մին-
չև ցասմնաւոր իմն կէտ, համեստ է և վայե-
լուչ, և անփառասէր ոգւոյ ցուցակ. բայց առա-
ւել քան զայսփն պնդել՝ ոչ է ՝ի պատիւ պատուա-
ղին իւրոյ վերագունի։ Այսին իրի եցոյց ՝ի՛ր բար-
կանալ ընդ այնչափ ընդդիմութէ՛ մովսէսի. այլ
յայսոր ամենայնի վերայ հաձեցոյց և մեսամբ իւիք
ջնառայն իւր, գիտելով զնորին խոնարհութէ՛ն
հոգւոյ նորա, յորմէ յառաջ գայր այն հրաժեշտ.
իբր զի եա նմա օգնական և ընկեր զահարոն զեղ-
բայր նորա՝ բաժանել ՝ի մէջ իւրեանց զգործ պաշ-
տամանն։ Օ՛ի ահարոն ուսեալ և վարդապետեալ
՝ի մովսիսէ, խօսեսցի ընդ ժողովրդեան. իսկ մով-
սէս ընկալեալ յահարոնէ զպատասխանի ժողո-
վրդեան՝ տարցի առ ՝ած. և ՝ի նմանէ առնուցու
հրահանգ, թէ զինչ պարտ իցէ նոցա առնել։ Պա
ասաց ՝ած ցմովսէս առնուլ զգաւազանն զարձեալն
յօձ. որ եղեցի ՝ի ձեռին նորա հզօր գաւազան էչ-
խանութէ՛ ՝ի դողացուցանել զամենայն եգիպտոս։
Այսպէս կատարեցաւ ընտանի խորհրդակցու-
թիս այ ընդ ծառայի իւրում մովսիսի։

Ա՛րդ՝ առեալ մովսիսի զայս հրաման ՝ի ՝ոնէ,
գնաց առ յոթրո սներ իւր, և հրաժարեալ ՝ի
նմանէ՝ եւ ՝ի ձանապարհ երթալ յեգիպտոս առ
ժողովուրդն եբրայեցւոց, ունելով ընդ իւր զկինն
և զերկու մանկունս իւր։ Այլ յերթալ նոցա,
իբրև հասին յիջևանս, ահա եկն եկաց հրեշտակ
՝ոն, և կամէր սպանանել զնա. իմն ըստ ոմանց
զմովսէս. իսկ ըստ այլոց՝ զեղիազար զկրտսեր որ-
դի նորա, որ չև ևս եր թլփատեալ. Թերևս զի
նորածին էր մանուկն, ուստի երկուցեալ մովսէ-
սի, Թէ ՝ի նեղուԹէ՛ ձանապարհի ՛ինաս լինչ դի-
պեսցի մանկանն նորոգ թլփատելոյ, յապաղեաց
թլփատել զնա։ Տեսեալ սեփորայ զսպառնալիս

հրեշտակին, և իմացեալ զպատճառն յոճախին յայտնութենէ, կամ՝ ի հրեշտակէ անտի, աձապարեաց աւր վճիռ գալոխազ զոր եգիտ անդ՝ ի գետնի, և թվփատեաց զանթվփատութենէ որդւոյ իւրոյ։ և անկեալ առ ոտս հրեշտակին, ասէ. ահա եկաց արիւն թվփատութենէ մանկան իմոյ. իբր թէ ասել՝ ահա կատարեցաւ պատուէր նոյն. վասն այնորիկ թողեալ զնա հրեշտակն գնաց։ Յորմէ ի ժամ դարձոյց մովսէս զվիճակ իւր հանդերձ մանկամբքն առ յոթորոյ անեղ իւր. զի մի խոչընդոտն լինիցին նմա՝ ի բազմավիշտ պաշտաման իւրում։ Զորս կետոյ նա ինքն յոթորոյ ած առ մովսէս յանապատն։ Ելից. ԺԸ. 5։

Ապա մինչդեռ յառաջ խաղայր մովսէս զճանապարհ իւր, ահա ահարոն եղբայր նորա՝ հրամանն ընկալեալ՝ ի նմանէ, եկն ընդ առաջ նմա՝ ի լերինն քորեբայ. և անդ յետ համբուրելոյ զմիմեանս, պատմեաց մովսէս ահարոնի զամենայն պատգամն, յորոց՝ ի կատարումն առաքեաց զնա ած։ Նա երկոքին՝ ի միասին գնացեալ ժողովեցին զծերակոյտ որդւոցն իսրայէլի. և ահարոն անդ սկսաւ զպաշտօն թարգմանչի՝ ի կիր արկանել յայտնելով ժողովրդեան զամենայն պատգամն նմա, զոր լուեալ էր՝ ի մովսիսէ. և մովսէս արար անդ առաջի ժողովրդեան զնախադրեալ երիս նշանս։ Զառաջինն, զի ամենեքին, խոստովան եղեն, և խոնարհեալ երկիր պագին ամենակարօղ և ամենողորմ ձեռնին այ, զի հայեցաւ՝ ի նեղութենէն իւրեանց։ Նայց ոչ նոյնպէս նովին դիւրութեամբ հաւատացին փարաւոն և խորհրդականք նորա. քանզի ոգիք ամբարտաւանք յորչափ՝ ի մեծութենէ և յերջանկութենէ են՝ ծանրալուր են պատուիրանաց նոյն, մինչև անձամբ առնուցուն զփորձ ամենակարօղ զօրութենէ նորա. որպէս էառ փարաւոն և ամենայն եգիպտացիք ընդ նմա։

Տանեկաւ հարուածոյ աճեալ չայ ի ֆեան մովսէսի և ածաբանի ի վերայ եգիպտացոց վասն խաղաղութեանն ֆարաւոնի արքայի նոցա ։

Մովսէս և ահարոն չետ խօսելոյ ընդ ժողովրդեան իւրեանց, մինչ ըստ հրամանի տեն առ փարաւոն նորոգ թագաւոր՝ կոչեցեալ ըստ եւսեբեայ Ամենոփիս, կամ Նքեռսես։ Նա էր յայնժամ միավէս ամաց ութանից. իսկ ահարոն ութսուն և երից. որք և զեկուցին փարաւոնի զպատուէր այ բարձրելոյ, որ կոչի Որէն, և Տէր, արձակել զորդիս իսրայէլի, զի երթեալ չանապատն ամենեքեան միահաղոյն ապրասցեն առ տեն՝ զոհս և ողջակիզս մատուցանելով նմա։ Իսկ փարաւոն ոչ միայն ախտիւ ամբարտաւանսլեաց կոյր գտաւ, այլև ի քաղաքական անտեսութենէ անբաժ. ապա թէ ոչ՝ երթ գնդ դուշնաքեայ ինչ չմոուեթէ ի կառավարութէ ուներ, բարեբաստութէ մեծ պարտ էր համարել ինքեան և թագաւորութէ իւրոյ, զի ժողովուրդ օտար աշխեցեալ և բազմացեալ այնչափ՝ մինչև ի կասկած երկիւղի արկանել զարքունիս եգիպտացոցն, ինքնակամ լնդրկ ելանել յերկրէ անտի իւրմէ. որ և չետ այնչափ հարստահարութէից, և դժնդակ ծառայութէից՝ շատացեալ է խաղաղութէ առանց զէն վերացուցանելոյ մեկնիլ։ Ալաքէն եաես և գիտաց, զի ամենայն հնարք և արուեստք նախորդին իւրոյ ի նուազել գնոսա՝ ունայնացան. զի ընդ հակառակն՝ նոքա այնչափ բազմացան և զօրացան, մինչ թէ կամէին բռնի թօթափել զլուծ նոցա, կային ի մէջ նոցա կազմ և պատրաստ վէց հարիւր հազար արք զօրաւորք՝ ամենեքեան կարօղք զէն առնուլ։ Ընդ՝ (ուսնէր ասել) սոքա այսպիսիք

ինքնաշարժ կամին ելանել, ելցէն խաղաղութիւն. և ազատեսցի եգիպտոս ՚ի վտանգէ կատածանաց։ Այլ ո՛չ փարաւոն, և ո՛չ խորհրդականք նորա գիտացին խորհել զարժանն. Թերևս կուրացեալք ՚ի շահասիրութիւն, զոր ունէին յորդւոցն իսրայէլի անվարձ ծառայեցուցանելով զնոսա. կամ լաւ և ասել՝ զի մերձեալ էր ՚ի լցանել յետին չափն անօրէնութեանց նորա, և նորայոցն։ Այսպէս այնորիկ եհաս թէ զիարդ պատասխանի հրեշտակութեանն՝ * Այ՞լ է նա, որում լուայց ձայնի նորա, արձակել զորդիս իսրայէլի. ո՛չ գիտեմ զՏէրն, և զիսրայէլ ո՛չ արձակեմ՝։ Ելէկ. Ե. 2։

Այլ ՚ի կրկնել մովսիսի և ահարոնի զպատգամն Տեառն, նա փոխանակ հնազանդելոյ՝ և ևս ծանրացուցանէ զբեռն աշխատանաց ՚ի վերայ ժողովրդեանն, պատուիրելով գործավարաց մի՛ և ևս տալ նոցա յարդս ընդհատ յարդ յաղիւսարկութիւն, որպէս տային յառաջ. այլ ինքեանք ժողովեսցեն. և զսակ աղիւսաթուին ՁՀիւ պահանջել ՚ի նոցանէ։ Այսպէս նորիկ և գործավարքն գաղանամիտք՝ անխնայաբար տանջէին զտառապեալ ժողովուրդն. ահաւադիկ սպառնալեօք, դառն կշտամբութիւք, և հարուածով գաւազանի բռնադատէին զնոսա բովանդակել զգործ աղիւսոց բուն հանապազորդ սակին։ Ընդ նոսին խոշտանգէին հարուածով և զերբայեցի դպիրս, որոց գործ էր զհաշիւ օրըստօրէից աղիւսոց նշանակել։ Ողոք կալան նոքա առ փարաւոն զգործավարաց նորա։ Այսկ նա ժանտ քան զգործավարս իւր, փոխանակ գիւրելոյ նոցա, նաև խաւտ զնոսա՝ գործատեաց և դատարկապորտս կոչելով. և զսակ աղիւսաթուին ՁՀիւ պահանջէ ՚ի նոցանէ առանց տալոյ նոցա զյարդ։ Ցեսեալ դպրաց որդւոցն իսրայէլի զանձինս յանբերելի չարչարանս մատնեալ, սկսան քրթմնջել ընդդէմ մովսիսի և ահարոնի. երբ թէ նոքա պատճառս եղեն նոր յաւելուածոյ տանջանաց ՚ի վերայ եւեթ։

Այսկ մովսէս աղեկիզեալ ընդ տառապանս նո-

ցա, գարձաւ առ Տէր ազերս արկանել, և խնդրել զկամս նորա, թէ զինչ պարտ իցէ առնել։ Ասէ ցնա Տէր, այժմ տեսցես՝ թէ զինչ արարից ես։ Ահա ետուս զքեզ աստուած փարաւոնի՝ իշխան և Տէր գլխահարնման, երկնչել ի քէն ծառայաբար, և աղաչել զքեզ խոնարհութիւն թեթևացուցանել ի նմանէ և յերկրէ իւրմէ զհարուածս զոր ես ածից ի վերայ նոցա։ Մնաւ դուռ և ահարոն անդրէն առ փարաւոն, զի ժամ է արդ սկիզբն առնելոյ նշանացդ։ Ասէ Տէր նորա, և ըստ հրամանի Տեառն ընկեց ահարոն զմխսեան հրաշագործ գաւազանն ի գետին առաջի փարաւոնի, և ծառայից նորա, և ահա նոյնհետայն սկսաւ սողալ և չքել՝ փոխել ի վիշապ օձ։ Կոչ նշան ահաւոր ոչ մեծ ինչ թուեցաւ փարաւոնի. քանզի և դիւթահայն արուեստի հնարաւոր զայն գրեր. սմին իրի ետ կոչել զկախարդս և զգէտս եգիպտացւոց. որոց գլխաւորք անուանեալ կոչէին Յանէս և Յամբրէս, որպէս ուսանիմք յառաքելոյն. Բ. Տիմ. Գ. 8։ Լնկեալ յին և նորա զգաւազանս իւրեանց յերկիր. և՝ կախարդական արուեստիւ երևեցուցին զնոսա տեսողաց նոյնպէսի վիշապս։ Այլ կատարած նոցա եղև նշան չարագուշակ վասն փարաւոնի. զի առաջին սչաց նորա եկուլ զնոսա քովանդակ օձն մովսիսի. զոր ասպ ի վեր առեալ նորա՝ եցոյց առնինին, զի եղև ի ձեռին նորա գաւազան, որպէս յառաջն. իսկ կախարդք ամենայնիւ անցուալ մեհենեցաց անտի։ Կս առաջին հրաշք եղև իբր չառաչիւն ինն գաւազանի, որ ապառնայ առանց ցաւեցուցանելոյ. այլ ի նուաճմունն խստասրտութեն փարաւոնի կարևոր էին հարուածք ցաւեցուցիչք. զոր ած ըստ իւրումն անսահման ողորմութեն յառաջագոյն ազդ առնէր նմա, ցուցանէր և սպառնայր ի ձեռն մովսիսի. որպէս զի հնազանդեալ հրամանաց իւրոց ի բաց դարձուսցէ յանձնէ և յերկրէ իւրմէ զցասումն բարկութեն այ։ Այլ ի զուր. քանզի եկաց միաց նա միշտ քարացեալ ի խստութեն իւրում։

Այսպէս որոյ ի վաղիւ անդր ընդ առաւօտն՝

մինչ փարաւոն ելեալ զբղէզ գետոյն նեղոսի, ասաց ցմովսէս՝ հարկանել զերաշագործ գաւազանն, որ էր ի ձեռին ահարոնի, ի վերայ գետոյն. զոր եբրև արար նա, առ ժամայն առաջի աչաց փարաւոնի ջուր գետոյն եղև արիւն. ընդ նմին և ամենայն լիճք, և ջրակիցք եգիպտոսի յարիւն փոխեցան. և ձկունք յանեալ զնուազեցան համաբնական տարր, սատակեցան առ հասարակ. և լցաւ երկիրն ժահահոտութեբ ի չար նեխոյ նոցա. ոչ միայն անդ ոչ ջրհոր, ոչ գոյր ջրալից ի տունս, որ ոչ գարձաւ յարիւն։ Ա ման որոյ նեղեալ եգիպտացւոց ի պատքոյ, փորէին առ գետովն գուբս գուբս գտանել ջուր ըմպելոյ. բայց Թագաւորն, որում չէր լինչ փոյթ ածեցուցանել զմահաբեր զայս հարուած, միայն Թէ մարթասցի խափք իրօք զչար կամն իւր յառաջ ի գլուխ տանել, կոչեաց զկախարդս իւր, և ետ նոցա կախարդութբ զնոյն առնել. Թերևս զջուրս նորոգ փորեալ գտոյ, կամ զայն, զոր բեբրին յերկրէն գետեմ, ի գոյն արեան փոխարկեալ։ Այս հարուած եկաց մինչ աւուրս եօթն. յորս համօրէն եգիպտոս անջուր տապալեալ, չունելով այլ ինչ ի զովացումն, բայց զժահր նեխեալ արեան։ Սակայն և այնպէս խստասրտեաց Թէ փարաւոնի ոչ յաղԹեցաւ։

Ա մին իրի յետ եօթն աւուրց՝ ի պարզիլ ջուրց, և ի գառնալ յառաջին համաբնական տարր իւրեանց, ձգեաց ահարոն ըստ հրամանի Տեն զգաւազանն, և ահա ընդ ամենայն տեղիս բղխեալ եռացին գորտք, և ծածկեցին զերկիրն։ Սակ գաւազանեալ բռնաւորն, որ միշտ ինքնին կրկնապատկեր զպատուհասն ի ձեռն հմայութեբ իւրոց կախարդաց, ետ և նոցա զնոյն առնել, որով յաբէրզվիշտս ինքեան և ժողովրդեան իւրում. զի գորտքն զազրեբք ոչ միայն ի փողոցս և ի հրապարակս խըբեալ զիմիամբք ոստոստէին, այլև ի տունս, ի նեբքին սենեակս, ի մահիճս, մինչ և ի սեղան Թագաւորին։ Ա ստ խոնարհեալ փարաւոնի, աղաչէ զմովսէս և զահարոն աղօԹս առնել առ Տր,

զի բարձցի պատուհան. քայց և ՚ի խոնարհումէ անդ իւրում պահէր զյամառ յոյսն իւր. յոյր սակս ոչ առժամայն ՚ի նմին աւուր ասաց աղօթել, այլ ժամագիր եղև առ վաղիւ. ակնունելով Թէ ՚ի բնաւ կան պատձառաց, կամ հմայութէ իւրոց կախարդաց բարձցին գորտք։ Եւ զայն ոչ գիտեր ջուա ուականն, զի Թոյլ տայր ՚ձ կախարդաց յաւելուլ գՀարուածս. այլ ոչ բառնալ, կամ Թեթևացուցանել։ Ոյն այնորիկ ասաց ցնա Մովսէս, որպէս ասացեր՝ Եղիցի. զի գիտասցես, Թէ չիք այլ ոք բաց յՅՒՆ Մերմ, որ կարող իցէ բառնալ ՚ի քէն և ՚ի ծառայից քոց զդորտդ։ Եւ եղև որպէս ասաց Մովսէս. զի ՚ի վաղիւ անդր սատակեցան գորտք, որք լի էին ՚ի տունս, և ՚ի քաղաքս և յանդս և ընդ ամենայն տեղիս. այնչափ՝ զի Հարկ եղև ՚ի կոյտս կոյտս ժողովել, և բարձեալ ՚ի սայլս և ՚ի վերայ գրաստուց՝ տանել և դիզել ՚ի բլուրս բլուրս արտաքոյ քնակութէց. ուր և նեխեալ՝ լցին զերկիր ժահահոտութէբ։

Ոյետ այսորիկ առ ժամանակ մի գադարեցին Հարուածքն։ Իբրև եռես փարաւոն, զի եղև դիւրութիւն, և առաւել խստացեալ՝ ոչ արձակեաց զիսրայէլ։ Ոյմին իբրև անդրէն գրգռեցաւ մարտն, և եհան ամենակալն ՚ի հողոյ երկրի նոր սպառաւ զկնս. զի ՚ի Հարկանել ահարնի գմուխսեան գաւազանն ՚ի գետին, ահա փոշին երկրի յամենայն սահմանս եգիպտոսի կենդանութէն զգեցեալ՝ փոխեցաւ ՚ի մուն անբաւ բազմութէբ. որք իբր ամպ թանձր էլեալ յօդս՝ լցին զամենայն տունս և զամենայն եգիպտոս. և սլաքաւ զինուս իւրեանց Հարկանէին զմարդ և զանասուն ՚ի խայթուածս կսկծալինս։ Ոյնոյն և կախարդք ջանայնոյր եղեն առնել. այլ ամենայն կախարդասար արուեստք նոցա, և Հմայութիւք, և կոչմունք սատանայականք ընդունայն եղեն. մինչև բռնադատեցան խոստովան լինել, եթէ մատն ՚ձ է այն։ Ոյակայն և այնպէս ոչինչ կակղացաւ քարացեալ սիրտ փարաւոնի։

Այն սակս զկնի մնոյ, Եհաս դժնդակագոյն քանակն չանաճանձից. որք զօրէն խուռնեբամ առ պատակաւորաց լցան զեղան ընդ ամենայն երկիրն Եգիպտացւոց, մինչ կալան իջևանս և՛ տունս մինչև՛ ի նեբքին սենեակս, և նախիրս անհնարինս գոգձէին՛ ի մարդ և յանասունս։ Այլ յայս ամենայն հարուածոց միշտ ազատ գտաւ երկիրն գեսեմ, ուր էին որդիքն Իսրայէլի. զոր Թէպէտ ասա ոչ նշանակէն ՚ըզ գիրք, այլ ունիմք իմանալ ՚ի գրոց իմաստուԹէ. գլ. ԺԲ. համաբ. 5. և պնիե։ Այս ազատուԹիւն ժողովրդեան ՚այ ՚ի ցայս վայր նշանակեալ հարուածոց՝ էև եր իմացեալ փարաւոնի. վասն այնորիկ յորժամ սպառնացաւ նմա ՚ած առաքել զչանաճանձ, յայտնի ծանոյց նմա, Թէ և ոչ մի ՚ի չանաճանձից անտի մոցե յերկիրն գեսեմ, որպէս զի գիտասցէ, և՛ ի երկնապատակեալ աքանչելեաց անտի ՚ի միտ առցէ զզուԹիւն ՚այ։ Յայնժամ առ փոքր մի կակղացեալ փարաւոնի՝ կոչեաց զմովսէս և զահարոն, և ետ նոցա հրաման երԹալ զոհել ՚այ իւրեանց, բայց ո՛չ արտաքոյ եգիպտոսի։ Այլ մովսէս արար պատասխանի, Թէ չի՛ մարԹ այդմ լինել, զի քարկոծ առնեն զմեզ ասէ եգիպտացիք, եԹէ առաջի նոցա զնուագումբ զոչխարս և զարջառս, զոր նոքա պաշտեն. ուստի պիղծ է առնոսա և յանցանք մեծ զնուագն ոչխարի կամ արջառոյ։ Պա զինքեան փարաւոն տալ հրաման ելանել յանապատ և անդ զոհել. բայց ո՛չ կարի ՚ի բացեայ յեգիպտոսի։ Այլ սակայն ՚ի վաղիւ անդր իբրև եգև փարատիլ չանաճանձից ազօԹիւք մովսիսի՝ մինչև չմնալ և ոչ միոյ յերկրի անդ, սակաւ փարաւոն խոստման իւրում, և ոչ կամեցաւ արձակել զժողովրդն։

Ընդ այսմ ծանրանայր խստասրտուԹիւն փարաւոնի, նոյնպէս և ած ծանրացուցանէր զհարուածն ՚ի վերայ նորա և ՚ի վերայ ժողովրդեան նորա։ Որ ինչ հարուածք ցարդ եղեն՝ Թէպէտ վշտացնէին զնոսա մեծապէս, այլ ոչ բառնային ինչ ՚ի նոցանէ։ Այնուհետև առաքէ ած մահ զարհուրելի յա-

նասունս եգիպտացւոց՝ ի խաչինս, յարքառս, ի ձիս, ի՛շս, և յոլովս, որք գտանէին յամենայն սահմանս եգիպտացւոց. քայց յերկրէն գեսեմ, ուր էին որդիքն իսրայէլի. որոց և ոչ կէզակ մի ոչխարի կամ արջառոյ ծախեցաւ: Ո՞ր իբրև ծանեաւ փարաւոն, և առաւել կատաղեալ խտտացաւ չարձակել զնոսա: Այլ եղև՝ ի դադարիլ սահմանն անանոյ՝ փութացան եգիպտացիք ընտրել զպահասունն նոցա, գնելով այլս ի շրջակայ գաւառաց. զի հարուստ էին ընչիւք, գոլով վաճառականութեամբ միշտ ծաղկեալ յաշխարհի իւրեանց: Այսպա կարևոր էր՝ զի հարուածք սկսանիցին մերձենալ և ի մարմինս մարդկան:

Այո մինչև ընդ ահարոնի բռամբ ջուխ մինիր հնոցի, և գնացեալ յանդիման եղեն փարաւոնի. զոր գտեալ յամառ ի խստութեամբ իւրում, ցանեաց մինչև առաջի նորա զմինիրն յօդս. որ նոյնժամ մայն սիւեալ տարածեցաւ ընդ ամենայն երկիրն եգիպտացւոց իբրև փոշի թիւնաւոր ապականիչ օդոյ. յորմէ ելին եւացին ի մարդիկ և յանասունս կեղք և խաղաւարտք կսկծեցուցիչք, որք խղխղեալ փոսեին ի խոց զայրացեալս: Այլ և ոչ այսու զինքն յամառութեն փարաւոնի. վասն որոյ հարկ եղև վհատութեն խստութեաբ վանել:

Այրին վասն դարձեալ առաքեաց ՅՀԾ զմինիսկս առ փարաւոն՝ մեծագոյն սպառնալեօք ազդ առնել նմա, թէ ի վաղիւ տեղասցէ ՅՀԾ յերկինից կարկուտ ահարկու, որպիսի ոչ եղև երբեք յեգիպտոս. և մարդ և անասուն, որ գտցի ի դաշտի կամ ուրեք ի բացի, և ոչ մտցէ ընդ յարկաւ, սատակեսցի ի հարուածոց կարկտի: Այրք միանգամ էրկեան ի բանէ ՅՀԾ, ժողովեցին զծառայս և զանասունս իւրեանց ի տուն: Իսկ որք ոչ հաւատացին, և մնացին արտաքոյ, մեռան հարեալ ի կարկտէ մարդ և անասուն. զի ելհար կարկուտն զամենայն որ ինչ էր ի դաշտի: Ցարէն զի հասկ արձակեալ էր, և կտաւատն զի ծաղկեալ էր և ի սերմն եկեալ, հարան խոպան. այլ ցորեանն և հա-

ձաը ոչ վնասեցան, զի չէ էին արձակեալ ծղօտս։ Լակ որթեք և ամենայն ծառք պտղաբերեք և անպտուղք առ հասարակ ջարդեալ մնացին. միայն դեսեմ անմերձ մնաց յահէդ հարուածոց սատի։ Եւ որ առաւել սասանեցոյց զփարաւոն և զամենայն եգիպտացիս, էին հրաւառ փայլատակմունքը և ահեղաձայն որոտմունքը, և բռնկունքը շանթից զարհուրելիք։ Յորոց զահի հարեալ փարաւոնի, մինչ տակաւին որոտային ի բկինք, և հուրն ցոլցնայր, և կարկուտք մեծամեծք թօթափէին, առաքեաց տագնապաւ և կոչեաց զմովսէս և զահարոն, և առաջի նոցա խոնարհեալ, խոստովան եղև՝ եթէ մեղաւ ինքն, և ամբ աթ է և արդար յամենայնի։ Նա միայն ասէ՝ և ժողովուրդ իմ, անօրէն և ամպարիշտ։ Նմ աղաչեաց զնոսա՝ աղօթս առնել առ նր, զի դադարեսցեն ամբոխմունքը երկնից. խոստանալով արձակել զնոսա և զժողովուրդ նոցա յերկրէ անտի իւրմէ։ Մովսէս անվեհեր ետ նմա պատասխանի, բայց որպէս թէ ըստ սմանց՝ թողեալ զնա ի մէջ յուռոյ և երկիւղ. իբրև ելից ի քաղաքէն ասէ, յայժմ ամբարձից զձեռս իմ առ ամբ, և պարզեսցին երկինք. ուր ոչ կամեցաւ զնել անվրէպ ջուխ ժամանակի, գիտելով զի չէ ևս էր խորտակեալ խստութիւն սրտի նորա։ Վասն և այնպէս այլն հեզամիտ եղեալ ըստ քաղաքին փութանակի տարածեաց զձեռս յերկինս առ ամբ. և նոյն ժամայն լռեցին ամպրոպք։ Եւ ի դադարիլ ամպրոպաց՝ զդյդ ընդ նմին ունայնացաւ և խոստումն փարաւոնի. զի և այս անզամ ստեաց, և ոչ արձակեաց զժողխն իսրայէլի։

Յետ այսր հարուածոյ՝ քանզի էանց փոքր ինչ ժամանակ ի վերայ, այն ինչ սկսեալ էին գաշտք գալարանալ, և Թուփք կանաչիլ, և ծառք ընձիւղս արձակել, ահա վերստին երկու պատգամաւորք ամ մամսէս և ահարոն եկին կացին առաջի փարաւոնի. և ազդ արարին նմա ի գիմոյ ամ՝ հանառօտ՝ այլ ահարկու բանիւ, ասելով. ընտրեա զմի յերկուց ասի. կամ մեզ ելանել հանդերձ հա-

մերկն ժողովրդեամբ մերով, և կամ մտանել այսր յերկիրը ՝որուն քո այնպիսի բանակի մարախոյ, որ ծածկեսցէ զամենայն երեսս երկրիդ, և սպառեսցէ զամենայն դալար զոր եթող ձեզ կարկուտն, և զոր յետ այնորիկ բուսեալ իցէ։ Օ այս ասացեալ՝ դարձուցին զերիկունս, և ելին յերեսաց նորա, ոչ ինալով առնուլ պատասխանի։ Յայնժամ խոր-հրդականք փարաւոնի, և պաշտօնեայք դառնա-ցեալք յայնկալ հարուածոյն, խօսեցան առ նա նեղեալ սրտիւ և իբր զայրագին, ժամ է ա՛րքայ ասեն վախճան տալ խստութեանդ, և արձակել միան-գամ զժողովուրդդ, զի երթեալ պաշտեսցեն զՏէր ՚ի-ւրեանց, մինչև յերբ լիցին խոչընդոտ. գիտիցես արդեօք, զի կորեաւ եգիպտոս։ Եւակ Թա-գաւորն ՚ի բանից անտի նոցա ստիպեալ, հրաման ետ դարձուցանել զմովսէս և զահարոն. և ետ նո-ցա հրաման երթալ. այլ յաւել հարցանել ցմով-սէս, թէ ո՞յք իցեն որք երթայցեն. և ՚ի պատաս-խանել մովսիսի, թէ ամենեքին ծերք և տղայք, արք և կանայք առ հասարակ հանդերձ ամենայն ստացուածովք իւրեանց. ասէ փարաւոն հէնդնե-լով. եղիցի այդպէս. ՚որ ընդ ձեզ. արձակեմ զձեզ. իբր թէ ասել, մի՛ ակնկալիք այդմ լինել, արձակել լինի զձեզ զամենեսին. այլ երթայցեն արք և երթ։ Եւ հանին զնոսա յերեսաց փարա-ւոնի։

Յայնժամ մովսէս ըստ հրամանի ՚ետն ամբարձ զձեռն յերկինս, և եղ վաղվաղակի հողմ հարաւոյ ջերմագին, որ չնչեաց զտիւն զայն և զգիշերն ողջոյն. և ընդ առաւօտն ահա տեսան ամենայն երեսք երկրին եգիպտացւոց, և ապարանք թագա-ւորին, և ամենայն տունք բնակչաց համօրէն երկ-րին ծածկեալ ՚ի մարախոյ. որք կերեալ սպառե-ցին զամենայն դեղ դալար. և եղծեալ ապականե-ցին իսպառ զերկիրն։ Վասնզի այնպէս սաստիկ էր մարախն, որոյ նման ո՛չ եղև յեգիպտոս՝ ո՛չ յա-ռաջ, և ո՛չ յետ այնորիկ։ ՚Ի հարուածոյ սաստի վերստին ՚ի զեղջ եկեալ փարաւոնի, կոչեաց փո-

Թանակի զմռսիչս և զարհարոն, և ներուճն հայցեցուք այժմ ևս յանցանաց իւրոց՝ աղաչեաց խնդրել ՚ի նմանէ, զի փարատեսցի մորեխն յերկրէ իւրմէ. զոր իբրև արար մռսիչս, եւ յարևմտից հողմ սաստիկ, և առեալ զմարեխն տանաց ՚ի ծովն կարմիր. մինչև չինալ և ոչ միոյ յերկրի անդ եգիպտացւոց։ Այլ կարի կարձառեալ եղև զերջ փարաւոնի, ձիշդ գրիտ տարացոյց գտեալ մեղաւորաց ՚ի մեղս ինչ սովորելոց. զի իբրև փոքր մի ոգի հառ, անդրէն յառաջինն ընդաբոյս յամառութեն իւր դարձաւ։

Ապա այնօրիկ և մռսիչս զարձեալ ձգեաց զձեռն իւր յերկինս, ըստ որում հրամայն առեալ էր ՚ի նմանէ, և եղև խաւար զարհուրելի զերիս աւուրս ընդ ամենայն երկիրն եգիպտացւոց։ Օ՛ պատեաց մեզ և մնառախուղ մթագին՝ խիտ և թանձրամած, ոչ միայն արտաքոյ, այլև ՚ի ներքինն սենեակս տանց, մինչև ձեռամբ իսկ լինել չշաւիղն։ Այն երիս աւուրս ոչ ոք շարժեցաւ ՚ի տեղւոյն՝ ուր էր. զի ՚ի յանկարծահաս խաւարաբոյր մթութենէ անտի՝ կորուսին զամենայն տեսակս ՚ի մտաց, մինչև չգիտել թէ ուր իցեն, ՚ի տան, եթէ արտաքոյ. զի այր իբրաքանչիւր երկնչէր՝ զի մի ընդ առնուլ քայլ մի ոտին՝ ՚ի խոր անդունդս սուզեսցի. և ոչ ոք տեսանէր զընկերն, թէպէտև մերձ առ իւր կայր. և ոչ հուր կամ ձրագ լուցանել դոյր հնար, սակս սաստիկ թանձրութեն և խտութեն օդոյն։ Այլ ՚ի վերայ այսր ամենայնի՝ յաւելան նոցա ՚ի մթան անդ և երևոյթք զարհուրելիք, և ցնորք խոժոռադիմոյ. և բոմբիւնք ահաւորք, և փայլատակմունք խաւարամած. զգժոխոցն բէբեղով կերպարան, ուր անլոյս քոցով տանջին դատապարտեալք։ Օ՛ այսոսիկ ունէին ՚ի գրոց իմաստութեն. գլ. ժէ. համար. կ. և պիտ։ ՚Ի մէջ այսպիսի տխրագին երկայնագիչեր խաւարի՝ լոյս պայծառ փայլէր յամենայն տեղիս, ուր էին որդիքն իսրայէլի. բայց այնպէս, զի և ոչ ընդ աղօտ նշոյլ ինչ լուսոյ հաղորդեր եգիպտացւոց. որ էր աքան չելիք ՚ի մէջ աքանչելեաց։

Յահեղ պատուհասն ասաի զարհուրեալ փարաւոնի՝ երևեցաւ փոքր մի մեղմացեալ յառաջին խստութենէն. զի հաձեցաւ Թոյլ տալ որդւոցն իսրայէլի մեծի և փոքուն հանդերձ աղախնիւք իւրեանց ելանել երթալ պաշտել զՅՈՐ ՆՈՑ իւրեանց. բայց զոչխարս և զարջառս իւրեանց Թողուլ անդ՝ ի դրաւական դալոյն իւրեանց։ Այս պատասխանի մտաւ սէս, ոչ այդպէս. չէ մարթի այդմ լինել. ոչ միասցէ յեգիպտոս յանասնոց մերոց և ոչ կձղակ մի. Նա՝ դու ևս տացես մեզ ոչխար և արջառ՝ ի զոհս։ Այսո զայրացեալ փարաւոնն՝ արտաքսեաց զնա յերեսաց իւրոց, պատուիրեալ ընդ գլխապարտութիւն՝ մի ևս երևիլ առաջի նորա։ Այս մովսէս, այդպէս եղիցի, ոչ ևս երևեցայց երեսաց քոց. բայց ահա ազգ առնեմ քեզ արքայ յանուն ՅՈՒ ԽՄՒ, զի գՀաւասարակ գիշերաւ յառաջիկայ գիշերի՝ յանդրանկանէ քումմէ, որ ունիս նստել յաթոռ քո, մինչև ցանդրանիկ աղախնոյն՝ որ գատապարտեալ իցէ առ երկանս աղօրեայ, և մինչև ցանդրանիկ ամենայն անասնոց, սատակեսցին միանգամայն։ Այս լուիցես յայսմ գիշերի աղաղակ և խռովութիւն մեծ յամենայն երկրիդ եգիպտացւոց. որոյ նման ոչ երբէք խռովեցոյց, և ոչ ևս յաւելուցու խռովել զերկիրդ։ Իսկ ի ժողովրդենէն իմմէ ոչ կորիցէ և ոչ մի, և ոչ իսկ շուն մի կոնչեսցէ լեզուաւ իւրով. և ամենայն ծառայքդ քո այդոքիկ իջցեն առ իս, և երկիր պագցեն ինձ, և աղաչելով աղաչեսցեն զիս՝ փութանակի հանել զժողովուրդդ իմ յերկրէդ։ Օ այս ասացեալ՝ եղ մովսէս ի փարաւոնէ լի բարկութիւն ընդ այնչափ խստասրտութենէ և ապստամբութենէ նորա։

Այս եկեալ առ ժողովուրդ իւր, կոչեաց զամենայն ծերակոյտ նոցա, և խօսեցաւ առ նոսա ի ծածուկ, ինդրել յանօթի յեգիպտացւոց անօթս ոսկեղէնս և անօթս արծաթեղէնս, և հանդերձս ապիհս ի պէտս տօնի զոհիցն՝ զոր հանդերձեալ էին առնել յանապատին։ Իսկ եգիպտացիք ետուն յօժարութիւն զամենայն՝ զոր ինչ և խնդրեցին ի

Նոցանէ. քանզի ած ետ Տէրն ժողովրդեան իւրում առաջի նոցա։ Եւ այսպէս երբայեցիք զանձ բազում Տանին Եգիպտացւոց. ուր անիրաւ յափշտակեալ էք, այլ արդար իրաւամբ պարգեւատրեան այ. որ գոլով ինքնիշխան ամենայնի, փոխադրեաց առ երբայեցիս զտէրութիւն այնց գանձուց, ի պատիժ անօրինութեան եգիպտացւոց, սակս անպարտ խոշտանգելոց զերբայեցիս. միանգամայն և ի վճարումն բազմամեան ծանր ծանր և դժնդակ աշխատութեանց նոցա, յորս անվարձ ծառայեցուցին զնոսա եգիպտացիք. առ որով կարի սակաւ էր զոր առին ի նոցանէ։ Օ՜այս ակնարկէ և խնաստուն՝ յասելն. Խոսէ. Ե. 17. և 20. * Հատոյց սէգ զվարձս վաստակոց նոցա ... Երդարձ կողոպտեցին զամպարիշտս ||. կամ ըստ այլ թարգմանութեան՝ * Երդարձ առին զառաւ ամպարշտաց ||. որով զկողոպտուսն զայն ցուցանէ իբրև առաւ՝ օրինաւոր պատեհապահմամբ առեալ յեգիպտացւոց. որք անհաշտ ընդդիմ ոչ և ժողովրդեան նորա։ Եւ ասպա պատուիրեաց մովսէս որդւոցն իսրայէլի զենուլ վաղվաղակի ոչխար ըստ իւրաքանչիւր ազգս, և յարբենալ նորա սրսկել զբաւարաւ դրանց տան իւրեանց, և զերկոքումբք սեմսվքն. որպէս զի հրեշտակն սատակիչ անդրանկացն եգիպտացւոց՝ տեսեալ զարիւնն ի վերայ բարաւարի դրանց երբայեցւոց՝ մի մտցէ ի տունս նոցա։ Եւ զայս զենուսն օրէն հանդիսաւոր պատուիրէ առնել նոցա ամի ամի, ի յիշատակ մեծի բարերարութեանն, զոր արար նոցա ած հանելով զնոսա ի դառն ծառայութենէ եգիպտացւոց։

Եւ ահա ի հասարակ գիշերի եւ հրեշտակն սատակիչ, և եհար սատակեաց զամենայն անդրանիկս յերկրին եգիպտացւոց, յանդրանկանէ անաի փարաւանի՝ մինչև ցանդրանիկ յետին գերւոյ. որպէս և զամենայն անդրանիկ անասնոց։ Եւ երբեք եղև յեգիպտոս գիշեր այնպէս գոյժաբեր. ուր ոչ գոյր տուն, յորում ոչ գոյր մեռեալ. ձայն ողբոց, և գոչիւն լալոց եղեալ զամենայն երկիրն։ Փարաւոն

ընտուցեալ ՚ի խառնաչփոթ ողբաձայն աղաղակէ քնակեաց քաղաքին, և տեսեալ զանդրանիկն իւր մեռեալ, միանգամայն գուժէ և ՚ի սպառնալեաց ժողովրդեան իւրոյ զարհուրեալ, ոչ ինաց լուսա նալոյ առաւօտուն. այլ գիշերային առաքեալ շտապ տագնապալ կոչեաց զմովսէս և զահարոն. և խնդա հեալ ՚ի բիւրս ամբարտաւանութենէն, ոչ միայն լիա լիր հրաման ետ նոցա մեկնելոյ, այլև ինքնին ա ղաչէր զնոսա երանել երթալ ամենայն ստացուա ծովք՝ ՚ի պաշտել զիր ՅԱՀ իւրեանց. խնդրելով զօրհնութենէն նոցա վասն անձին։ Ո՛նոյն առնէր և ժողովուրդն առ հասարակ, առաւել քան զթագա ւորն՝ բռնադատեալով զերբայեցիս փութանակի ե լանել յերկրէ անտի. քանզի զահի հարեալ էին, եթէ ՚ի յամել նոցա անդ և ևս՝ ամենեքեան սպառ սպուռ կորնչէին. վասն այնորիկ ետուն նոցա զամե նայն զոր ինչ և խնդրեցին. միայն թէ մի ևս յա պաղեսցեն անդ։ Ո՛րդ՝ յայսպիսի սաստիկ խուճա պանաց եգիպտացւոց՝ տիպեցան որդիքն իսրայէլի ՚ի նմին աւուր անպատրաստ և առանց ՚ի կարգի գնելոյ զիրս իւրեանց՝ ուղեւոյ լինել. զի և զգան գուածն պատրաստեալ վասն հացի, մինչչև էր խմորեալ, բռնադատեցան ծրարել ՚ի կտաւս, և բառնալ յուս իւրեանց։ Ո՛չին ՚ի նոսա վեց հարիւր հազար արք զօրաւորք, կաթողք զին առնուլ. յորս յաւելեալ զծերս, զմանկունս, զկանայս, զգերիս, զազգախնայս, և զբազմութիւն խառնիճաղանճ եգիպ տացւոց, որք յայնչափ աքանչելեաց դարձեալ ՚ի հաւատ միոյն ՅԱՀ Ճշմարտի՝ յարեցան առ եբրայեցիս, և ընդ նոսին ելին յեգիպտոսէ ՚ի հայրենի երկիրն իւրեանց, կացուցանելին չոս մեծ յոյժ. որոյ ըստ հաշուի ամանց չէր մարթի լինել պակաս յերկու մի լիոնէ. թերի զանեթիս հօտս խաշանց նոցա, և զանգ գեայս արջառոց. և զամենայն հարստութիւնն իւ րեանց, և զորս կողոպտեցին յեգիպտացւոց անտի։ Ո՛վ զգանչելի մեծագործութիւնք քո ՅԱՀ ամենակալ. այսչափ ժողովուրդ ՚ի միում աւուր յուղի անկաւ, և առանց նաւուց հանդերձեալ ՚ի անցանել ընդ

Ծոյին կարմիր. և յանքեր անասատին ուր չիք և ոչինչ՝ կերակրել՝ի քէն ընդ ամն քառասուն։

ԳԼՒ. Գ.

Ամանակ ամաց պանդխտութիւնէ որդոցն Իսրայէլի յԵգիպտոս։

Եւ ասեցաւ ցհծ առ աբրահամ յերկրին քանանացւոց, և ասէ. * Վախեալով գիտասջիր, զի պանդուխտ եղիցի զաւակ քո յերկիրը, որ ոչ իւր իցէ, և ծառայեցուսցեն զնոսա և չարչարեսցեն և տառապեցուսցեն ամն չորեք հարիւր ... և յետ այնորիկ ելցեն այսր քառովք մատուցածովք. ... և՝ի չորրորդում ազգի դարձցին այսրէնն։ ծնն. ժէ. 13. և 16։ Ասէ՝ի գիրս ելից. գլ ժէ. 40. ասէ. * Եւ բնակութիւն որդւոցն Իսրայէլի, զոր բնակեցան յերկրին եգիպտացւոց, և յերկրին քանանացւոց ինքեանք և հարք իւրեանց, ամք չորեքհարիւր և երեսուն։ Այս երկու վկայութիւնք՝ի նոյն չանկին՝ երեսուն ամաց և երեք զանազանութիւնք. որ՝ի յայտնութիւնէ աբրահամու զնոյ արարաւ, նշանակեալ միայն զամբողջական թիւն։ Այլ խնդիր մեծ է, թէ ուստի պարտ էիցէ սկիզբն առնել թուելոյ զչորեք հարիւր ամն՝ի վերայ այսր խնդրոյ, թողեալ զկարծիքն որ սկսանի թուելն՝ի մտից յակոբայ յեգիպտոս՝ երբ անչիմն, երկու կարծիք էին՝ի հնումն, որպէս և այժմ։ Ոմն, ոմանք զչորեքհարիւր երեսուն ամն զնշանակեալս՝ի մտելսիս՝ի գիրս ելից, սկսանին թուելն՝ի մտից աբրահամու յեգիպտոս, ուր գնաց յետ սակաւուց գնոյն ելանելոյ նորա՝ի խաւանէ, ՝ի պատճառս զօրանալոյ սովոյ յերկրին քանանացւոց։ Այս զի անտի մինչև ցհաստատել և ցընդարձակել իսահակայ՝ անցին ամք

իբրև երեսուն, վասն այնորիկ ասաի առնուն սկիզբն Թուելոյ զբոլոր հարիւր ամն, զոր յայտնեաց Աստ աբրահամու. ՚ի միջ առեալ և զամն, յորս աբրահամ, իսահակ, և յակոբ և նորա որդիք բնակեցան ՚ի քանան։

Ա.ըդ՝ այսպէս բաշխեալով զժամանակն, հետևեցուցանէն, թէ որդիքն իսրայէլի տիրապէս խօսելով՝ բնակեցան յԵգիպտոս, ամն երկերիւր և հնգետասան, և ոչ աւելի. իսկ զայլ երկերիւր հնգետասան ամն հարք նոցա անցուցին յերկրին քանանացւոց։ Այլ այս մեկնութիւն բռնական երևի. յոր սակս և ոչ սակաւ դժուարութիւնս կրէ. Թմղ զայն, զի բնակիլ երթայեցւոց, որպէս և վուլկատայն լատինացւոց ՚ի քանն ելից. ՃԲ. ԿՕ. ոչ յիշեն ոչ զՀարս իբրեանց, և ոչ զերկիր քանանացւոց, այլ լոկ զբնակութիւն որդւոցն իսրայէլի յԵգիպտոս. այսպէս ունելով. * Եւ բնակութիւն որդւոցն իսրայէլի, զոր ինայեին յԵգիպտոս, եղև չորեք հարիւր երեսուն ամ։ Ա ամն այսորիկ բազումք չեն հաւան ընդ այս կարծիս. նախ՝ զի ասէն, Աստ ասաց ցաբրահամ, Թէ զաւակ նորա պանդուխտ եղիցի * յերկիր որ ոչ իւր իցէ ։ ամն չորեք հարիւր. իսկ զերկիրն քանանացւոց կոչէ Աստ երկիր աբրահամու և իսահակայ. զի նոցա եթէ զտիրական իրաւունս երկրին այնորիկ, և ուխտիւ խոստացաւ տալ զնա ՚ի ժառանգութիւն զաւակի նոցա։ Ա ամն որոյ յորժամ հրամայեաց յակոբայ դառնալ ՚ի միջագետաց ՚ի քանան, ասաց ցնա. * Վարձիր յերկիր հօր քո։ Ա.պա ըստ բանին այ՝ իսահակ եր յայնժամ յերկրի իւրում, գոլով ՚ի քանան. ապա բնակութիւն իսահակայ ՚ի քանան՝ չէր փաւկեալ ՚ի չորեք հարիւր ամն. յորս զաւակաք աբրահամու հանդերձեալ էին պանդխտիլ յերկիրս որ ոչ իւրեանց իցէ։

Ա.երկրորդ՝ այս դուշակութիւն եղև առ աբրահամ մինչ բնակիլ յերկրին քանանացւոց. ուր ասաց նմա Աստ, Թէ զաւակ քո պանդուխտ եղիցի յերկիրս՝ որ ոչ իւր իցէ, ամն չորեքհարիւր. և ՚ի չորրորդում

ազգի դարձցին այսրէն։ Այս տեղին՝ ուր խօսքը
ՅԱԾ, և ուր զաւակք աբրահամու ունէին դառնալ
զհնի չորեք հարիւր ամաց պանդխտութէ, ոչ էր
այն, ուր պանդխտէլոց էին։ Այս քնակութիւն
յերկրին քանանացւոց ոչ մնան՝ի չորեք հարիւր
ամին՝ զոր յայտնեաց ՅԱԾ աբրահամու։

Երրորդ՝ ըստ հակառակ կարծեաց ոչ ձշմար-
տի, թէ զաւակք աբրահամու յազգ չորրորդ դառ-
նայցեն՝ի քանան, եթէ ոչ աք՝ի չորրորդ ազգէ
անտի իցէ կենդանի՝ի դարձի անդ։ Այլ ոչ լինէր
ուղղութիւն ասել, թէ ազգ մի նշանակի զայսչափ
թիւ ամաց, յորժամ ոչ աք յազգէ անտի իցէ կեն-
դանի յայն ամ։ Երդ սկսանելով զթիւ ամաց՝ի
մահց աբրահամու յերկիսասս, առաջին ազգ կամ
ծնունդ է իսահակ. երկրորդ յակոբ. երրորդ որ-
դիք յակոբայ. իսկ չորրորդ անմիջական որդիք
որդւոց նորա։ Երդ յայտ է թէ այս չորրորդ ազգ
ոչ եթէ դարձաւ՝ի քանան, այլ եւ յերկրին քա-
նանու, և էհնուտ ընդ յակոբայ հաւու իւրում յե-
գիպտոս. իսկ այս ամենայն առաջին թոռունք յա-
կոբայ վաղու ևս մեռեալ էին, յորժամ որդիքն
իսրայէլի եկին յեգիպտոսէ և դարձան՝ի քանան։
Այս ընդ հակառակն, գնեալ առաջին ազգ զնո-
սա, որք ծնան յեգիպտոս, գտանեմք զի՝ի չոր-
րորդ ազգէ բազումք կենդանի էին, յորժամ դար-
ձան՝ի քանան։ Ի յեղէկն յոզադ փարէս ծնաւ յե-
գիպտոս զեսրոն. եսրոն ծնաւ զարամ. արամ
ծնաւ զամինադաբ. ամինադաբ ծնաւ զնաասոն։
Այս նաասոն չորրորդ ազգ ծնեալ յեգիպտոս,
եղև մի յիշխանաց կամ՝ի նահապետաց, որք գտան
յանապատին. Թուոց. ա. 7։ Ամենայնէս եթէ՝ի
մէջ կահաթու և ամրամայ դիցին մի, կամ երկու
ազգք, որպէս ցուցցուք ստորև՝ թէ հարկ է գնել,
ահարոն և մովսէս կամ սորիքն նոցա, որք ելին
ընդ այլոց յեգիպտոսէ, էն ազգ չորրորդ. նոյն-
պէս և կորէ, կամ որդիքն նորա։ Այլ աստի հետևե-
ցուցանեն, զի բազումք էին հինգերորդ, վեցե-
րորդ, և եօթնեերորդ ազգ. սակայն և՝ի չորրորդ

աղգէ կային տակաւին բազումք՝ ի ծնելոց յեգիպտոս. կամ գէթ հաւաստի է, թէ չորրորդ աղգն չէր սպառեալ։

Չորրորդ՝ աբրահամ եմուտ յեգիպտոս՝ ի պատճառս սովոյն իբր հարևանցի. և սակս գիպուածոյ կնոջն, զոր՝ ի վեր անդր յիւրում տեղւոջ պատմեցաք, վաղվաղակի ստիպեցաւ մեկնիլ անտի։ Ասի բնակութիւն նորա յեգիպտոս երկու քանի ամիսս և է՛թ. և այնուհետև ոչ ևս գարձաւ անդր. իսկ իսահակ բնաւ ոչ կոխեաց յեգիպտոս. միայն յակոբ զկնի երկերիւր և իբր հնգետասան ամաց եմուտ անդր։ Ապա անդէպ ինձ երևի զայն սահմանել զգերեզմանս աբրահամու յեգիպտոս առնուլ և գնել՝ ի համար չորեք հարիւր ամացն. թո՛ղ զի անդ ոչ ասացաւ, թէ ինքն աբրահամ եղիցի պանդուխտ յերկրի՝ որ ո՛չ իւր էր, այլ զաւակ նորա։

Ա՛ման այսց պատճառաց բազումք՝ ի վերջին ժամանակի մեկնեցաց և ժամանակագրաց, որք Հնդետասան գոյնս քննեցին զայսոսիկ, որպէս և ոմանք՝ ի նախնեացդ, զնախագրեալ չորեք հարիւր երեսուն ամն սկսանին թուել՝ ի վաճառականէն յովսեփայ յեգիպտոս։ Այլ և այս կարծիք ունի զերկու գժուարութի՛ւն. մի՝ զի դնե զյովսէփ վաճառեալ յեգիպտոս երեսուն ամաք յառաջ քան զմեռ յակոբայ անդր. ուր՝ ի նոր գրոց երևի թէ քսան և չորս ամաք և է՛թ յառաջ եղև վաճառումն յովսեփայ։ Երկրորդ գժուարութիւնն ծագի յանգաբանութենէ հաշուոյ, ամիսայ, և մովսիսի։ Այս երկու գժուարութիւնք եթէ լուծանիցին, կարծիք սոցա գեղեցիկ մեկնէ զամենայն ըստ գրոյն, առանց բնաւ բռնաբարելոյ ուրեք զնո՛ գիրս։

Ա՛րդ՝ զառաջին գժուարութիւնն որ վասն մտից յովսեփայ յեգիպտոս, այսպէս լուծանեն։ Յովսէփ յորժամ վաճառեցաւ, էր ԺԷ ամեանց՝ սկսեալ և ոչ լցացեալ. եկաց յեգիպտոս ամն չորեքտասան, մինչև ընծայեցաւ առաջի փարաւոնի. զի էր յայնժամ երեսնամեայ։ Ո՛չնի մեկնելոց նո-

քա զերազս փարաւոնի մինչև ցսկսանիլ ամացն
լուսնի, դնեն ամն իբր երիս. և զայս ոչ ըստ
քանց կամ ըստ հաճոյից, այլ ունելով հինն ի ձեռ
գիրս։ Այլ թերևս ասաց յովսէփ՝ թէ փուռնասցի
նոճ առնել գնա, այսինքն ոչ յաւելցուսցէ առաքել
զամն լուսնի. բայց ոչ ասաց՝ թէ զկնի միոյ ամի
կամ երկուց գայցէ։ Այն զի ի նոյն կա. գլուխ
ծննդոց ինչ ինչ պատմին, առ որոց կատարումն
ժամանակաց պէտք էին։ Վասնզի յառաջ քան
զսկսանիլ ամացն լուսնի՝ յովսէփ ընկալաւ լինիլ
յաղքատնիս փարաւոնի ի դասս նախարարացն որոց.
կացուցանի փոխադրեայ. առնու իշխանութեն ան.
պայման ի վերայ համօրէն թագաւորութեն եգիպ.
տոսի։ Այդ՝ ասեն, համաբնական իմն երևի, թէ
յառաջ քան զառ նմա զայնպիսի ընդարձակ իշ.
խանութեն, յայլ գործս արքունիս ցուցեալ էցէ
յովսէփ արքայի զհաւատարմութեն իւր և զիմաս.
տութեն. զի էր հաւանելի, թէ լոկ վասն միմիայն
թէ երազոց տուեալ էցեն նմա այն իշխանութեն։
Յետ այնորիկ չըջեցաւ յովսէփ ընդ քովանդակ եր.
կիրն եգիպտոսի, ոչ վեր ի վերոյ իբրև զբօսանաց
աղագաւ, որպէս առնեն որք լոկ ի զինն քաղա.
քաց չըջին, այլ իբրև իշխան անտես և քննիչ տե.
սանել զամենայն տեղիս, խօսել ընդ քաղաքապետս
և ընդ իշխանս քաղաքաց, լսել զբանս ժողովրդեան.
կարգել և առնել պատրաստութեն յաղագս մեծ.
մեծ համքարանոցաց ի զանազան տեղիս, որք բա.
ւական էցեն ընդ եօթն ամն սովոյ ոչ միայն ամե.
նայն բնակչաց եգիպտոսի, այլև չըջակայ սահմա.
նաց։ Այդ՝ առ ի զայս ամենայն ի գլուխ տանել
թէ ոչ աւելի, գէթ ամք երեք հարկաւոր էն։
Ա այս եգեալ, այսինքն զայս երիս ամն յաւելեալ
ի վերայ յառաջ նշանակեալ չորեքտասանեան, լինի
17. ի սա յաւելեալ վեցեն ամն լուսնի, լինի 24.
և ամ ևս ամեգեալ ի մէջ լուսնի և սովոյ, զի ամ
լինիցի յանկարծ անցանել ծագէ ի ծագ, կից
ընդ նախընթաց քսան և չորս թուոյ՝ լինի 25։

Ընդեալ էին երկու ամք սովոյ, և սկսեալ եր.

ըորդն, յորժամ յովսեփ յայտնեաց զանձն եղբարց իւրոց. և մնային այլևս հինգ ամք անլցայեալք: Յայմ երրորդ ամի դարձան եղբարքը յովսեփայ 'ի քանան՝ առնելով չորեք հարիւր մղոն և աւելի ձա- նապարհ՝ ծանրաբեռն գրաստուք. զոր ոչ կարէին վճարել 'ի սակաւ աւուրս: Եւ ոչ իսկ յակոբ յառ- նուլ զաւետիս կենդանութեան որգւոյ իւրոյ յով- սեփայ, նոյն հետայն մարթացաւ ուղղոյ լինել: Վասն առ 'ի շարժել զայնպիսի մեծ և բազմա- թիւ գերդաստան, յորում էին այնչափ կանայք, և մանկունք մեծ և փոքր, որպէս և ոմանք նորածինք, և ոմանք յարդանտի. և 'ի տանել միանգամայն զա- մենայն կարասիս և զամենայն ստացուածս իւր- եանց զսրճքառ և զոչխար, և զեզ, և ուլս և գա- ռիս. հոգալով և սոցա ամենեցուն պաշար վասն այնչափ երկար ձանապարհորդութեանն ընդ ամայի անդ- բեր անապատ. ապաքէն ամսօրեայ ժամանակաց պէտք էին, դնել 'ի կարգի զամենայն պատրաս- տութիւնս կարևորս առ այսպիսի մեծ չուս: Վասն պէս և ձանապարհորդութեանն նոցա հարկ էր լինել կարի յամրաշարժ և դանդաղաքայլ՝ սակս ոտա- ցեալ պարագայիցդ. և բազում ուրեք հանդիստ առնուլ, գուցէ ուրեք ուրեք և խոտորիլ յուղղոյ 'ի գիտ ջրոյ լինքեանց և այնչափ անասնոց:

Այս ամենայն պարագայք, ասէ կաղինոս յետեան, որ ջատագով է այսմ կարծեաց, յամենուցին զմեզ- յակոբայ յերկիսպատս՝ ցհինգ երորդ ամ սովոյն: Ուր որոյ հաստատութիւն առնու զբան քառասներորդ եօթնեներորդ գլխոյ ծննդոց. ուր մովսէս զկնի պատմելոյ զգալուստ յակոբայ՝ պատմէ վասն երկ- տասնից, թէ յետ ծախելոյ նոցա զամենայն ար- ծաթ՝ զոր ունէին, վասն գնելոյ զկերակուր, եւտուն և զանասունս իւրեանց: Ապա յարէ զկնի, և ասէ. *Յակին առ յովսէփ յերկրորդ ամին, և ասէն ցնա. գուցէ սատակիցիմք 'ի սով մեծմ. եթէ արծաթ էր՝ պակասեաց, և եթէ խաչինք և ստացուածք՝ առ քեզ են ահ. և չէ ինչ մնացեալ մեր առաջի տն, բայց միայն անձինք և երկիրս

մեր ։ Ա՛րդ՝ զի մի մեռանիցիմք առաջի քո և մեք, և երկիրս աւերեսցի, ստացիր զմեզ, և զերկիրս մեր փոխանակ հացի . . . և տուր սերմն՝ զի սերմանեսցուք ։ Ասէ յովսէփ վէմարեալ ընդ նոսա զգաշնադրութիւն , տայ նոցա սերմն՝ ասէլով . Ա՛ռէք ձեզ սերմանս , և սերմանեցէք զերկիրդ ։ Ա՛րժան է ասել կաղենոս , ուշիւ քննել զայս գաղափարս թէ , * Ա՛կն յերկրորդ ամին ։ Այլ մարթ ասել , թէ իցէ երկրորդ անգամ գալ նոցա առ յովսէփ . քանզի յառաջագոյն եկեալ և դարձեալ էին՝ մինչև սպառեցին զարծաթ զոր ունէին . յետ այնորիկ ետուն և զանասունս իւրեանց ։ Այլ և երկրորդ ամ սովոյ . քանզի չայտ է թէ այն ամ էր եօթնեւերորդն , յորժամ ժողովուրդն խնդրեաց ’ի յովսեփայ սերմն ’ի սերմանել . զի չառաջ ոչ վար լինէր և ոչ հունձք ։ Ա՛պա առանց բանաբարելոյ զայդ գիրս , յուսիմք գտանել այլ առաջինն ամ կանխեալ քան զայս երկրորդս , եթէ ոչ զմուտն չակոբայ յեգիպտոս ։ Ասաի մովսէս զայս մուտ չակոբայ դնէ իբր նոր թուական համաձայն չորեքհարիւր ամաց , զոր չայտնեաց Ա՛ստ աբրահամու ։ Ա՛պա եթէ երկրորդ ամ մտից չակոբայ յեգիպտոս էր եօթնեւորդ ամ սովոյն , չայտ է թէ մուտ նորա անդ եղև չաւարտ հինգերորդին ։ Ա՛ման որոյ ըստ այսմ կարծեաց ’ի չայտնութէ չովսէփայ զանձն եղբարց իւրոց , մինչև ցմուտ չակոբայ , անցին ամք երեք . չոր չաւելեալ և զերկու նախընթաց ամն սովոյ , չորս եղբարքն նորա երկիցս եկին յեգիպտոս և դարձան , լինին ամք հինգ . զոր եդեալ ’ի վերայ չառաջագրեալ 25 ամաց , լինի 30 ։ Ա՛պա յովսէփ երեսուն ամաք չառաջ քան զմուտն չակոբայ վաճառեցաւ յեգիպտոս ։

Օ երկրորդ դժուարութէին՝ որ չայազգս ծննդաբանութեան կահաթու , այսպէս լուծանեն ։ Օ ի ասեն , կահաթ ոչ էր հայր ամրամայ , այլ հաւ նորա կամ նախահաւ . զոր հաստատեն ’ի հաւասարակ սովորութէ՝ եթէ գրոց՝ ընդոստ անցանել ընդ միջանկեալ ծնունդս , և զթոռունս և զթոռնեայս

կոչել որդիս ։ Եւ՝ եթէ սովորական է այս ի ձեռ գիրս , ընդէր խղճիցեմք զնոյն հատատել վասն կահաձուս ի կարգի առ ամրամ. ունելով ծանր պատճառ՝ առ ի զգափ ժամանակին նշանակելոյ ի ձեռ գիրս լրացուցանել . ապա թէ ոչ , ստիպիմք քառնական մեհենութիւն տալ , զոր ոչ տանի ձեռ գիրն ։ Եւ նախ՝ եթէ դիպի կահաձ հայր ամրամայ , նոր վինն իրաւամբ հարկ է դնել և զյուդա հայր քարմեայ . զի է ա. ԹԱԳ. ը. 1. գրեալ է . * Որդիքդ յուդայ փարեա , եսրոմ , և քարմի ‖ : Եւ է նոյն ա. ԹԱԳ. ԻԵ. 7. ասի , * Որդի քարմեայ՝ աքար խանգամբիւ իսրայէլի ‖ : Այն այս աքար գտաւ յերիքով յորժամ էառ զնա յեսու քառասուն ամաք զվնի անցանելոյ որդւոցն իսրայէլի ընդ ծովն կարմիր ։ Այս քառասուն ամն եդեալ ի վերայ 215. ամաց , յորս ըստ առաջնոյ կարծեաց բնակեցան որդիքն իսրայէլի յեգիպտոս , լինի 255 : Իսկ աքար ոչ կարեր յայնժամ ունել աւելի քան զվաթսուն ամն . ապա թէ ոչ մեռեալ էր յանապատի անդ ընդ այլոց , եթէ անցեալ էր զքսանամենիւք , յորժամ անցին ընդ ծովն կարմիր ։ Եւ՝ հաշուեսցեն և գուսմբեսցեն զատաղովք առաջնոյ կարծեաց զամն . և գացեն՝ զի բռնադատին և ևս նուազեցուցանել յայժ ժամանակ բնակութեան որդւոցն իսրայէլի յեգիպտոս ։ Ապա զի մի ի նոյն ստիպեսցին , բռնադատին ասել թէ քարմի ասի որդի յուդայ՝ իբր ոչ եթէ զի անմիջական որդի էր նորա , այլ զի էր մի ի թոռնեայց նորա , և եսրովմ ասի որդի յուդայ , զի էր թոռն նորա , որդի փարիսի որդւոյ յուդայ . յես. է. 18 : Ղեւտ. ա. 3 : Ոնոյն ունիմք տեսանել յայլ անհամար տեղիս , ուր ձեռ գիրք ի հաւուց ընդօստ անցանեն ի թոռունս և ի թոռնեայս , և որդիս կոչեն զնոսա :

Խնդրելի է և այն , թէ քանի ամք անցին ի մահէ յակոբայ յեգիպտոս մինչև ցծնունդ եսրովմայ որդւոյ փարիսի : Մինեքեան միաբան պատասխանեն , թէ նուազ քան զեօթնեւտասան . զի սա ի թիւս արկանի ի մէջ առաջնոյ նահապետաց մտելոյ

ընդ յակոբայ յեգիպտոս փոխանակ երայ և ոչնա-
նայ որդւոց յուդայի որք մեռան ՚ի քանան ։ Լ.ըդ՝
՚ի գիրս ա. Թագ. Ը. 18. գտանեմք գրեալ այս-
պէս. * Լ.ւ քաղեբ որդի եսրովմայ առ զաղջեբա
կին իւր. և ծնաւ զերիմոթ . . . և մեռաւ ազա-
բա. և առ իւր (կին) քաղեբ զեփրաթ . . . Ցետ
այսորիկ (միտ դիր բանիցս) եմուտ եսրովմ առ
դաւսար մաքիրայ հօրն գաղաադայ, և առ զնա. և
ինքն էր ամաց վաթսուն, և ծնաւ նմա զսեգուբ ։
Վ.աղեբ առեալ էր կին, որ ծնաւ նմա որդիս. և
՚ի մեռանել առաջնոյ կնոջ, անցեալ էր յերկրորդ
ամուսնութիւն, յորժամ հայր նորա էր վաթսուն
ամաց. քանզի զկնի երկրորդ ամուսնութեն որդ-
ւոյն՝ էանց և ինքն յայլ ամուսնութիւն ՚ի վաթսուն
մեան հասակի ։ Լ.պա յորժամ ծնաւ քաղեբ, էս-
րովմ հայր նորա ոչ կարէր լինել աւելի քան քա-
ռասուն ամաց. ապա թէ ոչ, որդի նորա ոչ կա-
րէր ունել զառաջասացեալ երկու կանայս միմ-
եանց զկնի, և որդիս յառաջ քան զժամանել հօր
նորա յվաթսուն ամն կենաց. իսկ քաղեբ յորժամ
եւ յեգիպտոսէ՝ էր քառասնամեայ. յես. ծ։. 7 ։
Լ.ըդ՝ գումարեսցուք զհաշիւն ։

Յակոբ եկեաց յեգիպտոս ամս.	17.
Լ.սրովմ ՚ի ծնանել զքաղեբ էր ամաց.	40.
Վ.աղեբ յելանել յեգիպտոսէ էր ամաց.	40.
	97.

Լ.պա որդիքն իսրայէլի ընակեցան յեգիպտոս՝ միայն
ամն ինսուն և եօթն ։

Լ.յլ ակնարկեսցուք և ևս ՚ի նախագրեալ տեղի
ինացորդաց. * Ցետ այսորիկ եմուտ եսրովմ առ
դաւսար մաքիրայ . . . որ ծնաւ նմա զսեգուբ. և
սեգուբ ծնաւ զյայիր. և էին նորա քսան և երեք
քաղաքք ՚ի գաղաադ ։ Լ.սրովմ ոչ եմուտ յերկիրն
աւետեաց ։ Լ.պա հարկ էր սեգուբայ կեալ զամն
երեք հարիւր և աւելի՝ նախ քան զծնանել զյայիր.

որ երեք հարիւր ամաք յետոյ էր քան զելս յերկիր-
տոսէ։ Այլ զի հաւասար է առ ամենեսին՝ թէ ընդ
այն ժամանակս՝ ի համառօտիլ կենաց մարդկան,
մեծ ինչ էր անցանել ումեք զհարիւրամենիւք,
ապա հարկ է ասել թէ եսրովմ որդի փարիսի ոչ
էր հայր, այլ հաւ քաղեբայ. նոյնպէս և սեգուբ
ոչ էր հայր, այլ նախահաւ յայիրայ։ Այսպա վասն
էր առանց այնչափ բռնաբարութեան առնելոյ զբ
գրոց, ոչ ասիցեմք նովին համարձակութեաբ, թէ
ամենամ կոչի որդի կահաթու՝ ոչ էթէ զի անմիջա-
կան որդի էր նորա, այլ զի էր մի՝ ի թոռանց
նորա։

Այլ չէն ինչ զարմանք, զի զբ գիրն գրեթէ յա-
մենայն տեղիս այսպէս խօսի. քանզի այլազգ գրէ
սոսկական ոք զձիւզագրութեաբ կամ զազգաբանու-
թեաբ առանձին տան իւրոյ. և այլազգ պատմաբանն,
որ գրէ զպատմութեաբ։ Յառաջինն գրէ մանրապա-
տում. և քանզի մանաւանդ յաւելուլ, քան թէ՝ ի
քաց թողուլ զմի՝ ի նախորդաց իւրոց. զի նորա
փոյթ է բազմացուցանել զշարադասութեաբ նախնեաց
իւրոց, առ՝ ի ցուցանել զհնութեաբ ազգատոհմի իւ-
րոյ։ Իսկ պատմաբանն յորժամ դէպ լինի նմա
գրել յաղագս առանձին տան կամ ազգատոհմի ու-
րուք՝ զերևելիս և եթ, կամ զայնոսիկ որք հար-
կաւոր են՝ ի տարօրոշել զոք յայլմէ՝ նշանակէ յա-
նուանէ. զի չէ՝ ի ձահ նմա ձանձրալի երկարաբա-
նութեաբ մի առ մի նշանակել զնախորդս, որք ձեւա-
ցուցանեն զծառ ձիւզագրութեաբ տան միոյ։ Այդ՝
եթէ այս հասարակ սովորութեաբ է պատմագրաց,
ևս առաւել պարտ էր լինել երբայեցւոց. որով-
հետև յատկութեաբ լեզուի նոցա այնպէս բերէ. որ-
պէս տեսանեմք՝ ի բբ գիրս յամենայն տեղիս։

Այլ արդ լուծեալ զկրկին դժուարութիս զայ-
սոսիկ առանց բռնաբարելոյ զոք գիրս, այսինքն
թէ յովսէփ երեսուն ամաք յառաջ քան զմուտ հօր
նորա յակոբայ յեգիպտոս՝ վաձառեցաւ, և թէ
ամրամ կոչի որդի կահաթու, իբր զի է թոռն նո-
նա կամ թոռնեայ, ոչ ևս ինայ այլ ինչ դժուա-

բութիւն ՚ի հաստատել, թէ բնակութիւն որդւոցն իսրայէլի լեգիսատոս եղև ամն չորեքհարիւր և եբեսունն՝ սկսեալ ՚ի վաճառականէն յովսեփայ. և ամն չորեքհարիւր՝ սկսեալ ՚ի մնիցն յակոբայ։ Այս այսպէս գեղեցիկ և առանց բռնաբարութեան մեկնին չորեքհարիւրը ամք յայտնեալք աբրահամու. և չորեքհարիւր երեսուն ամքն նշանակեալք ՚ի գիրս ելից. գԼ. ՃԵ. 40. ուր գրեալ կայ. * Այս բնակութիւն որդւոցն իսրայէլի, զոր բնակեցին յերկրին եգիպտացւոց՝ ամք չորեքհարիւր և երեսուն ‖. ուր եօթանասունքն յաւելուն, * և յերկրին քանանացւոց՝ ընդեանք և հարք իւրեանց ‖. զոր այսպէս պարտ է իմանալ. այսինքն թէ ժողովուրդ եբրայեցւոց սկսեալ ՚ի հարց իւրեանց՝ բնակեցան յեգիպտոս ընդ ամն 430։ Օ ի որովհետև ՚ի նոքա ժամանակի, մինչ երեք նահապետք, այսինքն նախ յովսէփ, և ապա երկու որդիք նորա եփրեմ և մանասէ՝ էին լեգիպտոս, այլք բնակէին ՚ի քանան, ուստի զբնակութիւն ՚ի քանան և լեգիպտոս չէ պարտ իմանալ յաջորդաբար, այլ միանգամայն։ Այս թէ այս իցէ ձշմարիտ և հարազատ իմաստ եօթանասնից՝ հարկ է իմանալ զորդիս յակոբայ, յայտնի երևի ՚ի բանից սբ. ստեփաննոսի, որ ըստ եօթանասնից թարգմանութեն վարէր. յասէլն, * Այս լուեալ յակոբայ, թէ գտանի կերակուր լեգիպտոս, առաքեաց զհարսն մեր յառաջագոյն ‖. գործ. Է. 12։ Այս գեղեցիկ համաձայնի ասելն զնոսա մեր, ընդ վերոգրեալ աստուածային հոգւոյ էութեանդ։ Այս քանզի այսպէս է՝ թէ ոչ աստ, և ոչ ՚ի բանն ելից իմանի աբրահամ կամ իսահակ, որք յայլ տեղիս հարք կոչին, այլ լոկ որդիք յակոբայ. զի նոքա առաքեցան լեգիպտոս գնել կերակուր։ Աստ այսմ մեկնի զայս բան եօթանասնից և սբն կիւրեղ (ըստ յառաջ բերելոյ լիպոմանոսի ՚ի ժողովածու մեկնութեանէ ելից). զի ասէ. * Այս ՚ի ծնունդս գրեալ է, յետ չորեքհարիւրը ամաց դարձցին որդիքն իսրայէլի, զամն և եթ զորս լեգիպտոս կեցին՝ թուէ. իսկ մինչ աստ ասի՝ ամք չորեքհարիւր և երեսուն,

առնու և զայն ամն, զորս կեցին յերկրին քանա-
նացւոց ՚ի միասին ընդ յակոբայ զնիսի դառնալոյն նո-
ցա ՚ի միջագետս ‖ . այսինքն երեսուն ամքն այն
են՝ յորս յակոբ ընդ երկուց որդւոց իւրոց էր
յեգիպտոս, Թէպէտ և եղբարքն նորա՝ որք եղեն
հարք և նահապետք ցեղից, բնակէին յերկրին քա-
նանացւոց:

Օ սոյն զայս հաստատէ և առաքեալն, յասել
անդ. գաղ. գ. 17. * Բայց զայս ասեմ, զկտակն
յառաջագոյն հաստատեալ յԱ՛ստուծոյ, օրէնքն, որ յետ
չորեքհարիւր և երեսուն ամի եղեան ‖. և այլն:
Որ զչորեքհարիւր երեսուն ամն սկսանի ՚ի մտից
յակոբեփայ յեգիպտոս: Բիւրեան հաստատեն ժա-
մանակագիրք, Թէ ծնունդ բենիամինի, և մահն
առաքելայ մեր նորա եղև ՚ի նմին ամի, յորում յով-
սէփ վաճառեցաւ յեգիպտոս: Եւ գտանեմք ՚ի ծե.
գիրս ծննդ. ԺԵ. 10. զի ՚ի նմին ամի երևեցաւ և ետ
յակոբայ, և փոխեաց զանուն նորա յիսրայէլ.
* Ո՛չ ևս կոչեսցի յակոբ, այլ իսրայէլ եղիցի ա-
նուն քո ‖: Եւ յաւել ասել. * Ես եմ Ա՛ստուծ քո բազա-
կան. աճեսջիր, և բազմասջիր. ազգք և ժողո-
վուրդք ազգաց եղիցին ՚ի քէն. և թագաւորք յե-
րանաց քոց ելցեն. և զերկիրդ զոր ետու աբրա-
համու և իսահակայ, քեզ տայ զդա. քեզ եղիցի.
և զաւակի քումբ յետ քո տայ զերկիրդ զայդ ‖:
Տե՛ս զի զկտակն, զոր արար Ա՛ստուծ երբեմն առ աբրա-
համ և առ իսահակ, այժմ ստա հաստատէ առ յա-
կոբ: Իսկ օրէնքն տուան Յ՛ոյ յայնմ ամի, յորում
եւ ժողովուրդն իսրայէլի յեգիպտոսէ: Ո՛պա խոր-
հրդով ասէ առաքեալն, Թէ ՚ի հաստատելոյ Ա՛յ՝ և
ո՛չ ՚ի տալոյ զկտակն, մինչև ցառլ զօրէնս, անցին
ամք չորեքհարիւր և երեսուն:

Իսկ յասել նորին առաքելոյ, գործ. զէ. 17.
* Ո՛ՀԱ ժողովրդեանս այսորիկ իսրայէլի ընտրեաց
զՏէրսն մեր, և զժողովուրդն բարձրացոյց ՚ի
պանդխտութենէ յերկրին եգիպտացւոց. և ՚ի բա-
զուկ բարձր եհան զնոսա անտի. և իբրև քառաս-
նամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի.

և քակեալ ազգս եօթն յերկրին քանանու, ժա-
ռանգեցոյց նոցա զերկիր նոցա իբրև ամն յորեք-
հարիւր և յիսուն ։ Ա.սա ցուցանէ առաքեալն,
թէ սկսանի Թուել զամն ոչ ի մուից յովսեփայ, զի
յայնժամ ոչ բաձրացաւ նա, այլ նուաստացաւ. և
ոչ ի բարձրութիւն յովսեփայ. վասն զի խօսի յա-
ղագս բարձրացուցման ամենեցուն, * զժողովուրդ
իւր ասէ բարձրացոյց ։ Սակ այս բարձրացումն
ամենեցուն՝ եղև ի մտանել յերկիրսս հանդերձն
տանն յակոբայ, յորժամ ի ընդրկս յովսեփայ փա-
րաւոն արքայ եգիպտացւոց փուռաւորեաց զնոսա,
և ձոխացոյց ամենայն բարիօք։ Ա.պա հաշուեալ
զյորեքհարիւր ամն, զոր կացին նոքա յերկիրսս,
զոչ ընդ քառասուն ամն անապատի, և ընդ եօթն
ամն պատերազմին յերսուայ, զկնի որոյ վիճակաւ
բաժանեցաւ երկիրն, իրաւամբ ասէ՝ Թէ անցին
ամք իբրև չորեքհարիւր և յիսուն. վասն զի իրօք
եղեն հայ. երիւք և եթ պակաս. յոյր սակս յա-
ւել զԷբեր։ Ա.պա յայսմ ամենայնի յայտ է Թէ
որդիքն իսրայէլի ամենեքեան միահամուռ պանդխ-
տեցան յերկիրսս՝ ամն չորեքհարիւր. ըստ որում
յայտնեաց ած աբրահամու. Թոռդ ձերեսուն ամն
յովսեփայ ։

Սակ չարչարանք և ձնշումն նոցա ձգեցաւ ընդ
ամն չհ. փոքր ինչ աւելի կամ պակաս ։ Ա.յն
ձնշումն որդւոյն սկսեալ՝ հասեալ էր ի հրամանն
գետահեղձ առնելոյ զարու մանկունս եբրայեցւոց,
յորժամ ամրամ ած իւր կին զյոքաբեթ. որպէս
ցուցանէ գիրն ելից. Ը. ։ * Ա.ւ էր անդ այր ոմն որ
ած իւր կին ։ ուր լատինն ընթեռնու, * Ա.յլ այր
յերկրէ այսոցիկ ։ այսինքն յերկրէ նախընթաց խոշ-
տանկանաց ։ Ա.պա ըստ բնական և գրաւոր տեսու-
Թեան գրոյն՝ էին անցեալ գերծ ամք չորք. զի
սկսեալ էր ձնշումն ։ ՅուԹամեաւորդ ամին մովսէ
սկսի կալ ձնշումն ։ Ի ծննդեան մովսիսի մարիամ
համահայր և համամայր քոյր նորա էր իբր տասն
ամաց, որպէս ցուցանէ խոհեմութիւն և ձառ-
տարուԹիւն նորա օգնել եղբօրն և խօսել ընդ

դատերն փարաւոնի : Ա.րդ՝ գումարեսցուք զայսոսիկ ամս.

Յառաջքան զամուսնութիւն ամրամայ ամք	4.
Ամք մարիամայ քեռւ մովսիսի	10.
Ամք մովսիսի	80.
Գումար ամաց	94.

ԳԼ. Ե.

Եւ ոչ երբեմն իսրայէլ չեգիպտոսէ : Այլ նոցա ընդ ծոցն կարդէր. և ծովահեղձոյց երեսաց փարաւոնի և զբաց նորա :

Յետ հարկանելոյ նոցն զանդրանիկս եգիպտացւոց, ուր ուրեմն խոնարհեալ փարաւոնի՝ արձակեաց զորդիս իսրայէլի ՚ի լքանալ յորեքհարիւր ամացն պանդխտութենէ նոցա, ըստ յայտնութենն որ եղև յայր առ աբրահամ: Այսուհետև և յամենայն առաջնում, այն է նիսան ամիս եբրայեցւոց, որ յայնժամ սահմանեցաւ տարեգլուխ, կամ առաջին ամիս սրբազան տարւոյ նոցա, ՚ի հնգետասաներորդ աւուր նորին ամսոյ՝ համարէն ժողովրդք իսրայէլի, որք էին սփռեալ ընդ եգիպտոս, ժողովեցան ՚ի յատաւեսակ. որ և յայն սակս ասի առաջին բանակեցեալ կամ իջևան նոցա յելս յեգիպտոսէ : Այս այնպէս ամենեքին միահամուռ հանդերձ ամենայն ստացուածովք իւրեանց յուեալ անտի, յոգան հարսին զնորաստս իւրեանց ՚ի դաշտին սոկքովթայ : Ա.նդ՝ զանգուածս ալեր, զոր ՚ի տախպէղոյ գնոսա եգիպտացւոց ձեռով ելանել, բարձին ընդ ինքեանս և ևս խմորեալ, եփեցին և արարին բաղարջ, զի ոչ ժամանեցին առնել հաց խմորուն ՚ի

պաշար ճանապարհի : Այլ անտի ըստ հրամանի նո
եղև խոտորիլ նոցա յուղիղ ճանապարհէ , քանզի
ոչ կամեցաւ ածէ ածել զնոսա ընդ կարճոյ ճանա-
պարհ ընդ երկիրս փղշտացւոց . զի մի յեղանել ի-
բեանց յեգիպտոսէ՝ եւ եւ պատերազմեցոյց պա-
տահեսցին . զի փղշտացիք կարի պատերազմական
եկին . յորմէ ահաբեկեալ՝ յետս դառնայցեն : Ա ան
որոյ պատեալ նոցա ընդ անապատ ի հարաւ կոյս ,
քանակեցան ի յոթիմ առ անապատին , կամ որ-
պէս ասի ի գիրս Թուոց՝ ի բովճան , որ է նոյն .
և անտի ամբարձեալ՝ եկին դէմ յանդիման հան-
գրուանին , որ Խուց . Ը . 7 . կոչի բերան եպիրով-
Թայ . և քանակեցան առ ափն կարմիր ծովուն ,
ընդ մադդովղ , և ընդ ծովն , հանդիպ լեհեղսե-
փոնայ :

Յետ արձակելոյ զնոսա փարաւոնի այնպիսի
լինելիր հրամանաւ , մինչև լինքնին՝ որպէս և համո-
զեն պաշտօնեից նորա՝ տիպել զնոսա փութանակի
ելանել մեկնիլ անտի , երևեր Թէ չունեին այնու-
հետև որդիքն իսրայէլի խոչընդոտս ինչ գտանել
յեգիպտացւոց : Այլ զի լցեր փարաւոն զչափ մե-
ղաց իւրոց , որպէս զի յետ այնչափ հարուածոց՝ ո-
րովք ոչ զգաստացաւ , ընկալցի և զվերջինն պա-
տուհաս խստասրտութեն իւրոյ , երբև ծանեաւ զը-
հանգամանս ելիցն երբայեցւոց , որով ցուցին ոչ
եւս երբեք դարձ առնել անդրէն , վերստին խստա-
ցաւ սիրտ նորա , և սորջացաւ՝ զի արձակեաց զնո-
սա : Ա ան որոյ փութացաւ հանդերձեաց զկառս
իւր ընտիրս վեցհարիւր . ընդ նոսին առեալ և
զայլ ամենայն պատերազմական կառս եգիպտոսի
զինեալս ամենայն կարևոր զինուք , և զամենայն
երիվարս եգիպտացւոց , և հեծեալս սպառազինս
ի վերայ ամենեցուն , պնդեցաւ զհետ որդւոցն իս-
րայէլի . ակնունելով գտանել զնոսա անդէն և ան-
պատսպար պատեալս և պաշարեալս ընդ միջ լե-
րանց և կարմիր ծովուն : Ասով և համարիր հա-
ւաստեաւ ի ձեռին ունել զյաղթութիւնն . և իբրև
ոչխարս անզէնս դարձուցանել զնոսա անդրէն յիւր

տարկուածէ. կամ անդէն կոտորել, եթէ դիմաց դարձ լինիցին նմա. և զամենայն գանձս զոր առնուն յեգիպտացւոց, հանել՝ի նոցանէ: Եւ զայն ոչ ածէր զմտաս լուառականն, թէ չէն լինչ պէտք զինուց և հեծելոց, որոց մարտակից է և զօրագլուխ ամենակարօղն:

Եակ որդիքն իսրայէլի երբեմն տեսին զայն ահեղ բանակ Ձեպղնեցւոց գալ՝ի Թիկանց իւրեանց, և մերձենալ առ նոսա, զահի հարան յոյժ, մինչև մոռանալ զաքանչելի խնամն տեառն՝ որ զոր ակներև առ ծէր գնոքօք. և հառեալ զյոյս իւրեանց՝ի նմանէ՝ բողոք բարձին ընդդէմ մովսիսի, զի ետհան գնոսա յեգիպտոսէ, և ած յանմխիթարի անապատի անդ սպանանել գնոսա. իբրև թէ ոչ գոյին սահն գերեզմանք յերկրին եգիպտացւոց: Յայնժամ մովսէս զկնի ջերմ աղերսանաց՝ զոր արար՝ի սրտի իւրում առ ած վասն նոցա, յորմէ և լուսաւորեալ, և խնայեալ գնոսա տէն, սկսաւ քաջալերել գնոսա չերկնչել չվհատիլ. զի զոր օրինակ ասէ տեսիք զեգիպտացիս այսօր, ոչ ևս յաւելուցուք տեսանել գնոսա յաւիտեանս ժամանակաց. զի տէր տայ պատերազմ ընդ ձեր: Ապա ըստ հրամանի տէն՝ ամբարձեալ զձեռն եհար գաւազանաւն զծովն. և նոյն ժամայն եղ հողմ սաստիկ, և բաժանեաց ըզծովն. որով և յերզակարծուքն պահու բացաւ՝ի ծով անդր ցամաք ձանապարհ աւազայատակ լայն և արահետ, ունելով զջուրսն պարսպաձև ամբարձեալ աստ և անտ: Երբև այն լինչ որդիքն իսրայէլի ըստ հրամանին մովսիսի՝ սկսան խուժել խուժել յաւազ խաղալ՝ի ծովակողմն, հրեշտակն՝ որ էր յառաջընթաց ուղեցոյց իսրայէլացւոց, սեամբ ամպոյ՝ի տուէ հովանի լինելով նոցա՝ի բացակէզ շողոյ արեգական, և՝ի գիշերի հովին ամպով լուսաւորելով զձանապարհ գնացից նոցա, գարձաւ յետ կոյս, և եղև վերջապահ կացեալ՝ի Թիկանց բանակի իսրայէլացւոց ընդդէմ բանակին եգիպտացւոց. որոց արար գիշեր խաւարամած. իսկ՝ի կողմն իսրայէլացւոց էր լոյս պայծառ գցայգ և զը-

ցերեկ։ Եւ այսպէս նախ յառաջապահ բանակ խա-
րսիլացաւոց, և ապա զինի նորա համօրէն ժողո-
վուրդն միահամուռ հանդերձ ամենայն անասնովք
և աղխիւք իւրեանց կալեալ զգայն նորահրաշ ցա-
մաք ճանապարհն ի մէջ ծովուն, անցին խաղաղու-
թեամբ յայնկոյս։

Եւ մինչ փարաւոն մեծաւ տագնապաւ սրտի
ծայր լուսանալոյ երկայն գիշերոյն այնմիկ, զի
յարձակեսցի ի վերայ իսրայելացւոց, եբարձ հը-
րեշտակն՝ի դիպող ժամու զնաւարն. և ետես փա-
րաւոն զվերջապահ յետնորդ խումբ իսրայելաց-
ւոց, զի գեռ ևս երթայր ընդ այն ճանապարհն,
զոր ոչինչ չնչաւոր յարարածոյս երբէք կոխեաց,
բայ՝ի ձկանց։ Եւ յասլիսի մեծ ակներև սքանչելիք
շատ եկին արդեօք անդէն կաշկանդել զփարաւոն
չշարժիլ՝ի տեղւոջէն, և չարկանել զանձն և զիւրան
յայն վտանգ յայտնի կորստեան։ Եւ յիւր արմատա-
եալ ախտ ինչ, կամ գազանացեալ կիրք՝ յորժամ
տիրէ՝ի վերայ սրտի, այնպէս կուրացուցանէ ըզ-
մարդ, մինչ կամակոր յանձն առնուլ զամենայն
թշուառութիւն, միայն թէ մարթասցի զկամս իւր
՝ի գլուխ տանել։ Եւ զայս՝ի ժամուն եղոյց փարա-
ւոն յանձն իւր. քանզի նախ ինքն՝ի գլուխ զո-
րաց իւրոց նահատակեալ՝ յարձակեցաւ եմուտ յայն
սարսափելի ճանապարհն. և տեսեալ զօրաց նորա՝
զի ծովն կայր ինայր անչարժ, մտին և նոքա ամե-
նեքեան առհասարակ զկնի նորա։

Եւ այն ինչ մերձենային՝ի վերջապահ խումբ
եբրայեցւոց, հրեշտակն՝որ կայր՝ի սիւն ամպոյն,
արկ՝ի նոսա արշաւիրս ահագինս. յորմէ խռովեաւ
և խառնեալ՝ զիմեամբք եւևելս առնէին, և ոչ
կարելով ոչ յաջ և ոչ յահեակ շարժիլ, սկսան ա-
ղաղակել, փախիցո՛ւք յերեսաց իսրայէլի, զի՝ եր
պատերազմի վասն նոցա. բայց անագան, քանզի
իբրև վերջապահ բանակ իսրայելացւոց եւ յայն-
կոյս՝ի ցամաք ամենայն ստացուածովք իւրեանց,
ընդ ձգել մէկնիկի ըստ հրամանի՝ն զգաւազանն
՝ի վերայ ծովուն, նոյնժամայն ջուրքն լեռնացեալք

աստի և անտի՝ անդրէն ՚ի համաքնական տեղի իւրեանց ահեղաստաստ յորձանօք գարձ արարեալ, ծածկեցին զեգիպտացիս առհասարակ. մինչև յանթիւ բազմութենէ անտի նոցա չինալ և ոչ միոյ ՚ի դուժեալ յեգիպտոս գկորուստ նոցա։ Իսկ ահա վազվազակի տեսան յերեսս ծովուն դիակունք երիվարաց, և սպառազինեալ զօրաց, և անթաւ կարասիք պատերազմի. զորս հոգմ և ալիք ջուրց վարեալ յայն կոյս, ուր որդիքն իսրայէլի կային տաղաւարեալ, տարան ետուն ՚ի ձեռս նոցա զամենայն առաւար եգիպտացւոց։ Իսկ այսպէս գնիք և փողք և ամենայն կազմութիւք պատերազմի զօրաց նոցա, գնեցին զանգիտն զօրս իսրայէլացւոց։ Յայսմ ևս երևեցան աքանչելիք զօրութեանն. զի մարմինք հեղձեալք ՚ի ջուր, բնապէս՝ զաւուրս ինչ ինան ՚ի նմա, ևս առաւել եթէ զգեստուք և գինուք իցեն ծանրացեալ. և ապա ուռուցեալ վարին յափն կոյս. իսկ աստ հակառակին գործեցաւ. զի առ օրին երևեցան ՚ի վերայ ծովուն ոչ միայն մարդիկ գինեալք, այլև երիվարք հանդերձ կազմածովք իւրեանց։

Յայնժամ երգեաց մովսէս և ամենայն ժողովուրդն ընդ նմա գերգս յաղթական օրհնութենէ և գոհաբանութենէ ՚ի, փառաւորելով զանհաս մեծութիւն և գզօրութենէ նորա, և գոհանալով յաղագս աքանչելի փրկութենէ ժողովրդեան իւրոյ, և յաղագս անսպառ գթութենէն խնամոյ, զոր ունի ՚ի վերայ նոցա։ Երգաբանութենէ անդ յաւելու մովսէս մարգարէանալ զոր ինչ անցք անցանելոց էին ընդ որպիսին իսրայէլի յընթացս ճանապարհորդութենէ նոցա, մինչև մտանել յերկիրն աւետեաց, զոր կոչէ *լեառն ժառանգութենէ, և պատրաստութենէ ՚ի՝ ‖։ ՚Ի վերայ այսր օրհնութենէ, ասէ. Խաչաւ. Ջ. 21. Եւ յայնժամ * Խնաստութենէ երեաց զբերանս համրոց, և զլեզուս տղայոց եդ պարզախօսս ‖։ Յայտ արարեալ թէ յանթիւ յանհամար բազմութենէ անդ ոչ գտաւ ոք այր կամ կին, ծեր կամ մանուկ, որ ոչ ջանացաւ ըստ իւրում կարի ցուցանել նշան գո-

հուրեն առ ինձ և ցնծութեանէ սրտի վասն այսը հրա-
շալի փրկութեանէ։ Ասասի և մարիամ քոյր մովսիսի
պարագլուխ ամենայն կանանց երթայեցւոց՝ ընդ
կօք և պարուք երգիր ընդ նոսա զօրհնութեան այ
առեալ ի մովսիսէ։

ԳԼՈՒԽ Ը.

Ա՛ռնէս ղերսեա ֆարաւն թագաւորանէ զբոն
ի ձեռաց։ Ա՛ն ընդ լրբամարթոյ պայ ծողովրդեան երթա
յերկիդ հայ հրաշեան պահանայ։ Ա՛ռնէս հրաշագործ գա
ւազանաւն զոր յորդոյոյ էղևեցոյանէ յագաւոյ վիմ։
Ա՛ճաղէկ ելեալ տարեր ընդդէմ երայելէ՝ երթայիկ բաղէա
պարաճ աղօթեր ի մովսէսէ։ Յորոր աներ մովսէսէ գայ առ նա
ածելա ընդ երբ գիմն մովսէսէ և ղերկու որդիս նորա։ Ա՛ռն
աես զոր երթասու աներոյ երբոյ կացուցանէ պաշտօնեայս օգ
նական անձին ի փոխսուրէ ծողովրդեան։

Յետ այնորիկ ելեալ որդւոցն իսրայելի ի կար-
միր ծովէ, և երկբօրեայ ձանապարհ գնացեալ
ընդ անջրդի անապատն սուր, եկին ի մեռա. ուր
թէպէտ գտին ջուր, այլ ոչ կարէին ըմպել, զի
դառն էր. յորմէ և զտեղին անուանեցին դառ-
նութիւն։ Եւ վաղվաղակի մուսացեալ զքաջնէլիս
կարմիր ծովուն, սկսան արտնջել ընդդէմ մովսէ
սի, և ըստ անմիտ մանկանց՝ ստիպեալ խնդրել
ջուր ի նմանէ։ Եւ ակ մովսէս առեալ գչերտ խոր-
հրդաւոր փայտի, զոր ած երոյց նմա, արկ ի ջուրս
անդր. և քաղցրացաւ ջուրն։ Ընդ սակաւ ած ըզ-
տեսակ ինն հասարակապատութեանէ մուծանել ի ժո-
ղովուրդն իսրայելացւոց, տալով նոցա համառօտ
ինչ օրէնս, ի փորձել զհաւատարմութիւն նոցա և
զհնազանդութեանէ պատուիրանաց իւրոց։ Ա՛պա ան-
տի չուեալ եկին յեղիմ. ուր էին երկոտասան աղ-

բիւրը ջուրց, և եօթանասուն արմաւենիք. և անդ բանակեցան առ ջրովքն: Եւ նոքա եղեալ և դիմեալ ընդ հարաւ՝ եկին բանակեցան զափամբ կարմիր ծովուն: Ոչ այս իջևան զանց առնէ աստ մովսէս յիշէ. զի նշանաւոր ինչ իրը ոչ պատահէցան անդ. բայց լիշէ յետոյ. Թուոց. լգ. 10: Եւ անտի ամենայն ժողովուրդն իսրայէլի չուեալ եկին յանապատն՝ի սին. որ է ընդ միջ կարմիր ծովուն և սինայ լերին: Եւ սա՝ի սինա անապատ, որ կոչի և կադէս. Թուոց. է. 1:

Եւ ստանօր յետ երեսուն, կամ ըստ ոմանց՝ քառասուն և հինգ ուրց՝ զկնի անցանելոյ որգւոց իսրայէլի զծովն կարմիր, պակասեաց նոցա ալիւրն, զոր բարձին յեգիպտոսէ. և ամենայն ժողովուրդն դարձաւ՝ի սովորական ժիգոհութիւն և՝ի տրտունջ զայրագին զմովսէսէ և զահարոնէ. և առհասարակ մոռացեալ զանբերելի նեղութիւնս, զոր կրեին յեգիպտոս, յիշել սկսան կարօտանօք զկաթսայ մսոյն, առ որով նստէաք սահն, և ուտէաք հաց ցյագ: Իսիստ Թուեցաւ առաջի նմա այս տրտունջ ապա ընդ ժողովրդեանն. սակայն և այնպէս զկայրականն խնամն իւր ոչ՝ի բացեայ արար՝ի նոցանէ: Եւ այց ցմովսէս՝ ազդ առնել նոցա, Թէ ընդ երեկոյս կերիցեն միս, և յառաւօտու հացիս յագեսցին: Եւ ահա ընդ երեկս եղ հոտին հարաւոյ. սաղմ. հէ. 26. 27. և աճ զլորամարգի՝ի բանակ անդր նոցա իբրև զհող, և իբրև զաւազ ծովու: Սակ ընդ առաւօտն էտ նոցա զմանանայ, իջուցանելով յերկնից շրջապատիւս զբանակաւ նոցա ընդ դաշտն հաստատեալ՝ ցօղ յորդառատ իբրև զեղեամն Թանձրացեալ, և՝ի սառնորակ մանրիկ հատս սպիտակս գնտակացեալ որպէս զսերմն գնձոյ. Համ նորա քաղցր իբրև զխորիսխ մեղու. որ էր նորա համն բնական. զոր առնուին ամենեքեան որք ձաշակէին. իսկ եթէ ոք բաց՝ի քաղցրութենէ անտի, այլ ինչ համոյ ցանկայր, առնայր և զայն. և այս էր հրաշական. որպէս յայտնի ցուցանի այս՝ի գիրս իմաստութեան. ԺԶ. 20.* Ոչ պատուական հացն յերկնից

ետուր նոցա առանց ջանալոյ, առ ամենայն ցան-
կութիւն բաւական, և առ ամենայն հանդերձանս
ձաշակաց ||։

Այս աքանչելի հաց երկնային տուաւ նոցա զօր
ամենայն ընդ ամս քառասուն, մինչև հասին ՚ի
մուտս երկրին աւետեաց։ Որ ըստ հրամանի տեն՝
այգուն այգուն քաղէին. զի ՚ի ծագել արեւուս՝ լու-
ծեալ հալէր. չափով ժողովէին որչափ հինչ բաւա-
կան էր միոյ աւուր, և ոչ աւելի. զի թէ թողուին
հինչ անտի մինչև ցերկրորդ օր, նեխէր և եռայր
՚ի նմա որդն։ Բայց միայն յաւուր ուրբաթու ու-
նէին հրաման ժողովել կրկին չափով վասն յաջորդ
աւուր շաբաթու. յորում հրամայեաց նոցա ՚ած գալ
տարկանաչ յամենայն ծառայական գործոց. վասն
որոյ ՚ի նմին աւուր ոչ իջանէր մանանայն։ Որ
հուրդ ընդ առաւօտն քաղէլոյ զմանանայն՝ գեղե-
ցիկ ցուցանէ իմաստունն. Ծ. 27. 28. * Որ ՚ի որ ՚ի
հրոյն ոչ ապականէր, վայրապար ՚ի դոյզն ձառա-
գայթից արեգականն ջեռեալ հալէր։ Պարտ զի
յայտ լիցի, թէ պարտ է կանխել նախ քան զարե-
գակն ՚ի գովութիւն քո, և յառաջ քան զծագել լու-
սոյ յանդիման լինել քեզ||։ Այս ևս աքանչելիք
էին ՚ի մանանայն. զի որք աւելի քան զպէտս իւ-
րեանց ժողովէին, ոչ երբէք յաւելոյր ինչ. նոյն-
պէս որք սակաւ ժողովէին, ոչ քնաւ պակասէր
նոցա բաւականն, որպէս թէ առաւելագունի կա-
րօտիլ։ Յայնժամ ըստ հրամանի տեն՝ չինեաց ահա-
րոն բանիւ մովսիսի սափոր ոսկի, և եդ ՚ի նմա մա-
նանայ լի չափով. և պահեաց ՚ի խորանին վկայու-
թիւն, մինչև շինեցաւ տաղտանակ տեն. և այնուհետև
անդ պահեցաւ ընդ դարս յոլովս ՚ի յիշատակ աքան-
չելի բարերարութեանն, որով ընդ ամս քառասուն
կերակրեաց զժողովուրդ իւր յանշէն անապատի.
յօրինակ հրաշալի խորհրդոյ կենդանարար մարմ-
նոյն քոյ. որով կերակրէ զհաւատացեալ նոր ժո-
ղովուրդ իւր յանապատի աստ կենցաղոյս, մինչև
հասուցանել զնոսա յերկիրն կենդանեաց յերա-
նելին յաւիտեան։

Լ. պա չուեալ ՚ի սին անապատէ, և արարեալ Երկուս իջևանս ՚ի հռափա, և յելիմ, որք նշանակին ՚ի գիրս Թուոց. Լ. 12. 13. եկին բանակեցան յառափիդիմ. ուր առ ՚ի չգոյէ ջրոյ ժողովուրդն երախտամոռաց՝ որպէս Թէ չէր տեսեալ բաղում անգամ սքանչելի նշանս զՀայրական նախախնամ մուԹեանն ՚ի վերայ իւրեանց, անդրէն ՚ի տրտունջ և ՚ի բամբասանս ընդդէմ մովսիսի յարձակեցան. և կուտեալ ՚ի վերայ նորա զայրացմամբ՝ սպառնային և խրոխտային, մինչ փոքր միւս ևս քարկոծ առնել զնա, Թէ ընդ֊ունէր եհան զնոսա յԵգիպտոսէ՝ կոտորել յանջրդի անապատի զնոսա և զորդիս և զխաշինս իւրեանց ՚ի ծարաւոյ. և խընդրէին տագնապալ ջուր ՚ի նմանէ։ Իսկ մովսէս զկնի բողոքելոց առ Ած, առեալ ըստ հրամանի նորա զմանն ՚ի ծերոց ժողովրդեան, գնաց ՚ի ցուցեալ տեղին, և եհար նշանագործ գաւազանաւն զժայռ միառ ոստս քորեբ լերին. և ահա նոյն ժամայն բղխեաց ջուր յորդառատ ՚ի ժայռէ անտի. որ արբոյց զնոսա ոչ միայն յայնժամ առ տեղեաւն ևԷթ, այլև յետ այնորիկ ընդ բաղում ժամանակս ՚ի գնացս Ճանապարհորդութե նոցա։ Վանզի որպէս ասեն բաղումք ՚ի մեկնչաց, զայն ջուր վիմահոս խաղացոյց Ած գետօրէն հոսմամբ զկետ խորայլեացոց ՚ի Ճանապարհ անջրդի անապատին, ընդ որ չուէին նոքա, ընդ ամն իջբրու քառասուն։ Այր և յայտ անտի է, զի այնուհետև ոչ ևս ընթեռնումք՝ Թէ կրեալ իցեն նոքա ուրեք զպակասութիւն ջրոյ՝ մինչև ՚ի կադէս. ուր հասին ՚ի քառասներորդ ամի զկնի ելից իւրեանց յԵգիպտոսէ։ Ո. սոյն զայս ասէ. արկէ սաղմոն ՀԷ. 16. յասելն, * Եան զջուրսն ՚ի վիմէն, և հոսեաց որպէս զգետս զջուրսն ։ Լե ՃԲ. 41. յայտնապէս ևս ասէ. * Լհար զվէմն, և բղխեցին ջուրք. և գնացին գետք ընդ անջրդիս ։ Զայս միտս մեկնեն բազումք և զբան առաքելոյն. ա. Կորնթ. Ժ. 4. ուր ասէ. * Ո ի ըմպէին ՚ի հոգևոր վիմէն, որ երթայր զկետ նոցա ։ այսինքն ՚ի ջրոյն բղխելոյ ՚ի վիմէն, որ գետահետաւ երթ-

Թայր զՀետ նոցա։ Այլ զայսմանէ տէս ՚ի մեկ-
նութիւն Թղթոյն պօղոսի ՚ի նշանակեալ տեղին։ Այն
որք զայս աքանչելիքս ՚ի վերայ ջրոյ միացուցանէն
ընդ այնմ, որ եղև ՚ի կապէս. իսկ այլք գնեն, Թէ
որ գիրն յայտնապէս որոշէ զնոսա ՚ի միմեանց տե-
ղեաւ, ժամանակաւ, և այլովք պէսպէս հանգա-
մանօք. որպէս ուսիմք տեսանել ՚ի գիրս Թուոց.
գԼ. է. համար. 2. գնչև ՚ի 13։

Այնչափ չուեալ էր որդւոց իսրայէլ յառաքե-
լիմայ, եւ ին ամաղեկացիք զօրու ծանու ընդ ա-
նաջ նոցա։ Այանգի ամաղէկ, յորմէ և ամաղե-
կացիք, Թուն եսաւայ, որդի որդւոյ նոցա եղի-
փազու, զոր ծնաւ նմա Թամար, կամ ըստ այլ
Թարգմանութեց՝ Թամիա հարճ նորա. ծնն. լԶ. 12.
՚ի սկզբան անդ ՚ի բաժանիլ յերզարդ իւրոց, և
կեալ հաստատեաց զընակութիւն իւր առ սահմանօք
եգիպտոսի։ Այր զկնի ժամանակաց բազմացեալ և
զօրացեալ որդւոց նորա՝ եղեն ազգ մեծ զօրաւոր
և ահարկու։ Այրդ՝ սոքա Թէպէտ և համարիւն ընդ
որդւոցն իսրայէլի ՚ի ձեռն իսահակայ նախահաւտ
իւրեանց, սակայն արիւնն այն, որ կայր զեռևս
յերեակս նոցա, չէզև բաւական կարձել զնոսա ՚ի
Թշնամութենէ ընդդէմ որդւոցն իսրայէլի։ Ոչ
Թերևս նախագուշակութիւնն եղեալ ՚ի ետնէ առ
ռեբեկա, Թէ երկուց կրտսերոյն ծառայեսցէ, այս-
ինքն որդիք եսաւայ՝ որդւոց յակոբայ, աւանդու-
Թէ գայր առ նոսա։ Ոչայն սակս կամեցեալ զօրու-
Թէ զնոսա նանրացուցանել զգուշակութիւնն, և
պահել զազատութիւն իւրեանց, իբրև ծանեան ըզ-
մերձենալ որդւոց իսրայէլի ՚ի սահմանս իւրեանց,
առաքեցին արշաւել հասանել ՚ի վերայ նոցա. և
յանձուկս լերանցն ռափիդիմայ փակել զնոսա, զի
կամ յետս դառնալ ստիպեսցին, և կամ եԹէ ՚ի
մարտ միսիլ իշխեսցեն, անդէն կոտորել զնոսա.
գիտելով զի նորոգ էին զերծեալ ՚ի բազմամեայ
ծանր գերուԹէ. ուստի և անփորձ և անկիրԹ ՚ի
գործ պատերազմի. միանգամայն և աշխատեալ և
պարտասեալ ՚ի ծանրուէ երկար ճանապարհորդուէ։

Իսայ մովսէս առաւել քան զնոսա արթուն և նախատես՝ հետ նոցա ժամանակ գալ հառանել՝ի վերայ ինքեանց։ Հրամայեաց յեսուայ վաղվաղակի զօրընտիր լինել՝ի ժողովրդենէն անտի, որչափ բաւական համարեսցի, և առ վաղիւ ելանել ձա կատիլ ընդդէմ ամաղեկայ. զոր և արար նա ան յապաղ։ Իսկ մովսէսի առեալ՝ի ձեռին գնչանա գործ գաւազանն, և զահարոն և զովր ընդ ինքեան, եւ՝ի լեառն. ուր կացին արձանացեալք եր եքին հզօր ախոյեանք իսրայէլի՝ի գլուխ լերին, ուստի կարէին տեսանել զպատերազմին։ Իսկզբան անդ մնալոյն երկոքին քանակք զօրէն ալեաց ծո վու՝ելանէին և իջանէին, մերթ միոյ, և մերթ միւսոյ կողմանն զօրանալով. ահարոն և ովր ուշ եդեալ տեսին, զի յորժամ մովսէս ունէր տարա ծեալ զբաղուկս իւր՝ի վեր առ ՚ած, զօրանայր իսրայէլ՝ի վերայ թշնամւոյն. իսկ մինչ վաստա կեալ յերկար տարածմանէ՝ իջուցանէր՝ի վայր, ընդ նմին և իսրայէլ իջանէր և տկարանայր. և թշնամին զօրանայր։ Այնժամ՝ի միտ առին նո քա, թէ մովսէս ոչ լոկ պաղատանօք լեզուին և սրտին, այլ նաև ամբարձմամբ ձեռացն զօրացու ցանէր և յաղթականս գործէր զիւրսն։ Վասն այնորիկ առին վէմ մի մեծ և եդին ընդ նովաւ, և նստաւ մովսէս՝ի վերայ. և ինքեանք աստի և անտի կալեալ՝ի վեր ունէին զբազուկս նորա մինչև՝ի մթանել արեգական։ Եւ չեղև խոկ հարկ և ևս երկարելոյ բազկատարածութեանէ մովսիսի. քանզի հարաւ ամաղեկ իսպառ կոտորմամբ սրոյն յեսուայ սրելոյ աղօթիւք, և համբարձմամբ ձեռաց մովսիսի։ Հետ այնորիկ հրաման ետ ՚ած մովսիսի՝ի գիր յիշատակի գրել, և աւանդել յեսուայ՝ի յիշատակ անմոռաց, եթէ հանդերձեալ է սպառապուռ ջընջել յերկրէ զանուն ամաղեկայ. փոխանակ զի է՛ղև առաջին, որ եկ պատերազմաւ ընդդէմ ժո ղովրդեան իւրում, որում ինքնին առաջնորդեր. որ և կատարեցաւ՝ի ժամանակս սաւուղայ, յոր ժամ հրամայեաց նմա ՚ած ջնջել զամաղեկ։

Ընդ այն ժամանակս լուեալ յոթորայ իշխանի Մադիամու աներոյ մովսիսի զմեծամեծս՝ զոր արար Աճ ընդ մովսէս փեսայն իւր, և ընդ ժողովուրդն իսրայէլի, հանելով զնոսա հզօր ձեռամբ՝ ի դառն ծառայութէ՛ եգիպտացւոց, ա՛ռ զսեփորա զկին մովսիսի, և զերկու որդիս նորա զգերսամ և զէ-ղիազար. զորս՝ մինչ երթայր մովսէս նոքօք հան-դերձ յեգիպտոս՝ ազատել զորդիան իսրայէլի, դարձ եղեալ առ աներ իւր՝ յառաջին իջևանէ անտի. որպէս նշանակեցաք՝ ի վեր անդր. թ երեւս՝ ի հրա-մանէ հրեշտակին, որ երևեցաւ նոցա անդ. զի մի լինիցին նմա խոչընդոտն՝ ի ծանր գործառնութէն առ որ առաքիւր՝ ի նմանէ։ Եւ՝ ընդ յոթոր ընդ իւր ու-նելով զնոսա, եկն յանապատ անդր յայելութէ փեսայի իւրոյ։ Իբրև ազդ եղև մովսիսի գալուստ նորա, և կնոջ և որդւոց իւրոց, եւ վաղվաղակի և գնաց ընդառաջ ընդառաջ աներոյ իւրոյ. և ողջունեալ զմիմեանս համբուրեալ սիրոյ, ա՛ռ տարաւ զնա՝ ի խորանն. և պատմեաց նմա զամենայն, զոր արար ՚ի ընդ փարաւոն և ընդ եգիպտացիսն վասն որդւոցն իսրայէլի. և զբանէրելիս, որք գործեցան զձանապարհին, մինչև հասանել նոցա անդր։ Լսեալ յոթոր իշխան մադիամու, որ երբեմն քուրմ, այլ զկնի հաւատացեալ՝ ի Աստուածն Աճ, լուեալ զայն ամենայն՝ մատոյց զոհս և ողջակէզս ՚ի, ՚ի գոհու-թէ աբանէրելի խնամոյ և բարեբարութէից զոր ա-րար նոցա։ Եւ նոքա ապա և ահարոն, և ընդ նմա ծերքն իսրայէլի յողջոյն և՝ ի յարգութէ յոթորայ. և նստան ամենեքեան՝ ի միասին ընդ մովսիսի, և ընդ աներոյ իւրոյ ուտել հաց՝ ի խորանի անդ։

Եւ կաց յոթոր՝ ի բանակի անդ ընդ փեսայի իւ-րում զաւուրս ինչ. որում և օգնեաց ոչ սակաւ խոհական խորհրդովս այսուհետ։ Քանզի տեսեալ նորա, զի զամենայն վիշտն և զկսկառակութէիս և զդատաստանս յոգնաթիւ ժողովրդեանն լինքնին անձամբ լեալ վճարէր մովսէս. որ անհնարին աշ-խատութէ էր նմա և տանջանք, նոյնպէս և ժո-ղովրդեան վիշտ անբերելի, յայդուհետ մինչև ցերե-

կոյ կալ ինալ՝ մինչև առնուցուն պատասխանի, ոչ բարւոք Թուեցաւ բանն յայս յոմեցոցայ։ Այսուհետև Թէպետև մարգարէ՝ լուսաւորեալ չիլ, և լի իմաստութեամբ, սակայն և այնպես չէզև ցայն վայր մտադիր հնարս ինչ կամ դարմանն առնել ի Թեմեանուհին այսմ անտանելի ծանրութեանէ։ Այլ ետ ասէ այսմ, զի ի միտ առցեն մարդիկ, և մանաւանդ առաջնորդք և իշխանք, Թէ պարտ է մարդոյ՝ Թէպէտ և մեծ իցէ և իմաստուն, խորհուրդ առնուլ ի մարդոյ. զի ոչ կամի ասէ միշտ ինքնին անվիջապէս լուսաւորել. կամի՝ զի իշխանք լսիցեն յուսաւորեալ, քայց ի ձեռն խորհրդականաց իւրեանց։ Այս յոմեցոց ցմովսէս. ոչ ուղիղ է բանդ, անլսնտ ըողոքեքը մնալել զկեանսդ դժնդակ աշխատանօքդ. զոր լաւ էր առ փոքր մի Թեթևացուցանել ի քէն։ Այլ արդ լուր ինձ և խրատ տայ քեզ. եղիցիս դու ժողովրդեանդ առ ասէ դեսպան, առնուլ ի նմանէ զպատուէրս, և տանել ծանուցանել ժողովրդեան. և ցուցանել նոցա զձանապարհս յորս գնայցեն, և զգործս զոր գործիցեն։ Այլ ընտրեա ցես քեզ ի ժողովրդենէդ պաշտօնեայս արս զօրաւորս անկարօտս, զի մի չընչաքաղցութեանէ սակս վաճառականացն զարդարութեանն. ասէ ապաշտս, զի սիրով և երկիւղածութեամբ վարեսցին ընդ եղբարս իւրեանց. արդարակորով, զի ուղիղ դատեսցին զիրաւունս. և խոնարհամիտ՝ որ ատիցեն զկալարտութեանէ, զի մի բռնակալեսցեն։ Այս ապա ի նեբբոյ նոցա յիւրաքանչիւր ցեղէ կացուսցես հազարապետս, հարիւրապետս, յինանապետս, և տասնապետս։ Այս այսպէս փոքր դատ դատեսցին ի ստորին պաշտօնատարայ. իսկ մեծագոյնք տարցին յատեան հաւատմատաբար ըստ կարգի վերագոյն պաշտօնէից. և հուսկ յետոյ՝ յորժամ բան ինչ մեծ և կարևոր լինիցի, հասուցանիցեն առ քեզ. և հանդիցես դու՝ և ժողովուրդ քո ընդ քեզ։

Հաճոյ Թուեցաւ մովսիսի այս խոհական խորհուրդ. և արար մովսէս զամենայն, զոր միանգամ ասաց նմա անել իւր. զի սովաւ ոչ միայն քաղա-

քական, այլև զինուորական իրողութիւնք արագ և ըստ կարգի և անչփոթ վճռելին։ Այս կարգ և անց յետոյ և յայլ ազգս. որ և մինչև ցայսօր պահի անխափան՝ի զինուորական դատակարգութիւնս առ ամենայն հրահանգեալ և կրթական ազգս։ Այս եւ զև յետ տալոյ յոթնօրեայ զայս կարևոր կարգ կառավարութեանն հաստատակութեանն երթայեցոյց՝ զարձաւ՝ի տունն իւր։

ԳԼՈՒԽ Լ.

Ա՝ռվնէս կացեալ՝ի գլուխ լերին սինայ ընդ այ, առնոյ զերկու ծածկէծ պատուական քարեղէնս պատանեաց պատուիրանաց։ Յիջանել նորա՝ի լեռնէն՝ պեսպել զդողվոյթն պաղտել զերկին յոլովածոյ, խորտակէ զպատուականն։ Այս պայ հոգարել՝ի բանակէն անդ երեք հազար ոգիս՝ի յորմոպաշտից անտի։

Յետ այսր ամենայնի չուեալ որդւոցն իսրայելի յաւարիդիմայ, եկին բանակիեցան յանապատն հանդէպ Սինայ լերին՝յամենեան երրորդի ելանելոյ նոցա յերկրէն եգիպտացւոց. և զպին ամ ողջոյն անդ կատարեցին։ Այլ մովսէս՝ի լեառն սինայ, ուր կոչեաց զնա ած՝ի գլխոյ անտի լերին. և խօսեցաւ առ նա՝ յուշ առնել ժողովրդեան զպատուիրանսն զոր արար վասն նոցա, և զբազուկն հզօր, որով փրկեաց զնոսա. և ասել ցնոսա, թէ կամի ուխտ հաստատութեամբ դնել ընդ նոսա. և առնուլ զնոսա իւր ժողովուրդ, և ժառանգութեամբ սեպհականն. և յամենայն ազգէ նոցա կացուցանել զինքեան ժողովուրդ՝ որ և ընտրեալ՝է թագաւորութեամբ և՝ի քահանայութեան։ Այլ ընդ սովին պայմանաւ, զի զպատուիրանս, զոր տալոց է՝պահեցեն. և օրինաց ուխտին, զոր հանդերձեալ է դնել՝նոա-

զանգեսցին։ Այլ Մովսէս՝ի լեռնէն. և Ժողովեալ զծերս Ժողովրդեան, ըսաց ամենայն եղ առաջի նոցա. զոր լուեալ նոցա, և՝ի միտ առեալ զամենայն բանս պատգամաւորութեանն Մովսիսի, ետուն պատասխանի ամենեքեան միահամուռ, խոստանալով արտի մնոք ընդունել և պահել, և հնազանդիլ ամենայնի, զոր ինչ ասացէ Աստ. և Մովսէս՝ի նմին աւուր դարձ արարեալ անդրէն՝ի լեառն, տարաւ առ Աստ զպատասխանի նոցա։ Այեծ է և աքանչելի բարութեանն և զիջումն այդ առ որդիս իսրայէլի. ո՛չ պահանջէ ինչ բռնութեամբ, ո՛չ խնդրէ ինչ իշխանութեամբ. ո՛չ՝ի կիր առնու զտիրական իրաւունս ծայրագոյն Աստուածութեանն, այլ վարի ընդ Ժողովրդեան իւրում գոդ իմն իբր ընդ դաշնաւորի հաւասարակեաց. զի մի տացի նոցա պատճառ ստրջանալոյ երբեք ընդ ուխտն, զոր եդին ընդ Աստ. յորում մեկն և յայտնի երևին ամենայն պայմանք վաւերացուցիչք դաշնադրութեանց. զի ոչ ետ նոցա Աստ զօրինս իւր, եթէ ոչ զկնի կամակար խոստման նոցա ընդունել և հնազանդիլ ամենայնի, զոր ինչ պատուիրեսցէ Աստ. նաև Մովսէս զկնի խօսելոյ նոցա, և տանելոյ առ Աստ զպատասխանի նոցա, ետ նոցա ժամանակ այլևս աւուրս երիս՝ խորհել՝ի վերայ բանիցն, զոր խօսեցաւ առ նոսա։

Ապա կամեցեալ այդ պէսպէս զգալի օրինակօք յայտնել Թանձրամիտ ժողովրդեան այնմիկ զնշոյլ իմն իւրումն Աստուածային ահեղ մեծութեան, առ տպացուցանելոյ՝ի սիրտս նոցա զերկիւղ իմն փրկական՝ի փոյթ պահպանութեան պատուիրանաց իւրոց, ասաց ցՄովսէս՝ իջանել՝ի լեռնէ անտի, և պատուէր տալ Ժողովրդեան լուանալ զձորձս իւրեանց, և՝ի կանայս չմերձենալ աւուրս երիս. և այնպէս մաքրել և սրբել զանձինս և պատրաստել վասն աւուր երրորդի. յորում հանդերձեալ էր Աստ իջանել՝ի լեառն։ Եւ նմին՝ ասաց Նմա, զգուշացուցանել զԺողովուրդն՝ի լեռնէ անտի. և շուրջ զտորոտով նորա դնել սահման, պատուիրելով ընդ պատժով մահու չանցանել ըստ սահմանն, և

մերձենալ ՚ի լեառն։ Զբար մովսէս զամենայն, զոր ինչ միանգամ պատուիրեաց նմա Տէր։ Իսկ ահա յաւուր երրորդի ընդ առաւօտն ամպ միգախառն Թանձրամած էջ ծածկեաց զլեառն. և ՚ի գագաթան նորա ծուխ մըրկեալ իբրև զծուխ հնոցի մեծի, և ՚ի նմա յոլմունք փայլակնացայտք, և որոտմունք զարհուրելիք. և գոչիւն փողոյ ՚ի սկզբանն մեղմաձայն, և ապա սաստկացեալ իբր մեծաձայն հնչումն փողոյ բազմոյ, լսելի լինէր ցհեռաւորս տեղիս. ՚ի նշանակ Թէ կամի Տէր զհրաւիրատակ լինի մեծ և կարևոր հրատարակել։

Յայնժամ առեալ մովսիսի զժողովուրդն՝ ելոհան մինչև ցնշանակեալ սահմանն, և կացոյց զնոսա շուրջ զատորոտով լերին սինայի. և ինքն եւ՚ի լեառն. ուր ասաց ցնա Տէր՝ իջանել՚ի վայր, և առեալ ընդ ինքեան զՀարոն՝ ՚ի միասին ելանել անդրէն՚ի գլուխ լերին առ Տէր։ Յայս վայր ոչինչ լուաւ ժողովուրդն, բայց միայն որոտումն և ահեղաձայն գոչիւն փողոյ, որ սաստանեցուցանէր զնոսա։ Յայնժամ հրեշտակն, որ զանուն և զդէմս Իւ բարձեալ կրէր, յօդաւոր և որոշ բարբառով հրատարակէ զտասնաբանեալ օրէնս. և որ ցայնժամ՚ի սիրտս մարդկան գրեալ կայր յարարչապետէ բնութեան, արդ կամի զի և՚ի տախտակս քարեղինս կացցեն ինասցեն արձանագրեալ։ Իսկ ժողովուրդն որ կայր յատորոտս անդ լերին, լսէր՚ի միջոյ որոտմանց և ձայնից փողոյ զյօդաւոր բարբառ հրեշտակին. այլ զկորհուրդն Իւ որ՚ի նմա, անորոշ ինն և չիմոթ իմանայր։

Իբրև խօսեցաւ Տէր ընդ մովսիսի և ընդ ահարոնի զամենայն օրէնս, որք գրեալ կան՚ի գիրս ելից՚ի քսաներորդ գլխոյ մինչև ցքսան և չորս, իջին երկոքեքն նորա՚ի լեառնէ անտի. և ըստ հրամանի նոցա եդին ժողովրդեան առաջի զամենայն պատգամսն զայնոսիկ. և նորա առհասարակ՚ի միձայն խոստացան հնազանդիլ սրտի մտօք, և առնել զամենայն, զոր պատուիրեաց Տէր։ Յայսմ վայրի գրեաց մովսէս որպէս Թէ զառաջինն մանն զա-

տաստանական և օրինական պատուիրանաց՝ որք տուան նմա յՅ. ըստ որոց պարտ էր վարել որդւոց իսրայէլի, և գտանել զամենայն դատաստան իւրեանց։ Այս ի հաստատութիւն ուխտին՝ որ ընդ Աբ, և ընդ ժողովուրդն իսրայէլի, շինեաց մովսէս սեղան ի ստորոտ լերինն յերկոտասան քարանց ըստ երկոտասան ազգաց որդւոցն իսրայէլի. և առաքեաց զերիտասարդս նոցա, այսինքն զանդրանիկս ցեղիցն՝ ածել և զնուռ որթս յողջակէզ և ի զոհ։ Եւ մովսէս առեալ յարեանէ անտի՝ մասն ինչ արկ ի սկաւառակ, և զմասն ինչ եհեղ առաջի սեղանոյն. և առեալ զգիր ուխտին զոր գրեաց՝ ընթերցաւ ի լուր ժողովրդեանն։ Եւ ի կրկնել նոցա հնազանդիլ ամենայն պատգամաց նոցա, յայնժամ ցանեաց մովսէս զարիւնն որ էր ի սկաւառակի՝ զժողովրդեամբն, ասելով. Ահա այս արիւն է ուխտին, զոր ուխտեաց Տէր ածՅ ընդ ձեզ, ըստ ամենայն բանիցս այսոցիկ։

Յետ այնորիկ առեալ մովսիսի զՀարոն, ընդ նմա և զերկու որդիս նորա՝ զնաբադ և զաբիուդ, և զեօթանասունն խորհրդականս ի ծերոց իսրայէլի, որպէս պատուիրեաց նմա Աբ, եւ նոքօք հանդերձ ի լեառն սինայ ցասհմանաւոր ինչ բարձրութիւն։ Եւ ասէ, Թէ տեսին նոքա զԱբ, ըստ սմանց մեկնչաց ի զգալի իմն կերպարանս իբրև ի ձև մարդոյ։ Այլ այս ընդդէմ ելանէ բանից մովսիսի. որ Ե. օրինաց. Ը. ւ. ասէ առ ժողովուրդն իսրայէլի. * Ո՛չ գուշացարուք յոյժ անձանց ձերոց, զի նմանութիւն ինչ ոչ տեսիք յաւուրն յորում խօսեցաւ ընդ ձեզ Տէր ի քորեբ լերինն ի միջոց հրոյն։ Այլ ասի այսորիկ՝ այլք լաւ ևս ասեն, Թէ տեսին նոքա զլուսափայլ իմն հրաշատեսիլ Ճառագայթ փառացն Աբ, յուսկայ ներկայութէ նորա. որոց նպաստակ և Թարգմանութիւնն եօթանասնից. սուբ ոչ ասի՝ Թէ տեսին զԱբ, այլ զտեղին՝ ուր կայր Աբ իսրայէլի, և ընդ ոտիւք նորա իբրև աղիւսաձև գործեալ շափիւղայ ակն երկնագոյն, յորժամ պարզ և պայծառ իցեն երկինք։ Այդ սոքա

Թէպէտև տեսին զփառս նոն, զոր ըստ հասարա-
կաց կարծեաց էր մարթ տեսանել և ապրիլ. սա-
կայն և այնպէս ոչ կորեաւ ի նոցանէ և ոչ մի. զի
ի նոսէ ընտրեցան և կոչեցան. այլ ամենեքեան ողջ-
անդամ դարձան ի քանակս, և կերան և արբին:
Այլ էին գործակիցք աշխարհի և ուրայ, զորս
Եթող մովսէս իբրև զնւր փոխանորդս. որպէս զի
որ ինչ վիճք և գաղք լինիցին ի ժողովրդեանն,
նոքա վճարեսցեն զամենայն:

Սակ ինքն մովսէս և յեսու պաշտանեայ նորա կո-
չեցեալք ի նոսէ ելին և եւս ի վեր ի լեառն ցլոս
սաւոր ամպն, որ ծածկէր զլեառն. և անդ կացին
երկոքին աւուրս վեց. իսկ յաւուր եօթներորդի,
դարձեալ կոչեաց նոճ զմովսէս միայն առ ինքն ի
գլուխ անդը լերին ի մէջ ամպոյն. և եկաց անդ
զքառասուն տիս, և զքառասուն գիշեր: Ամպն
հրաշալի էր նմա խորան ի ծածկոյթ. իսկ կերա-
կուր և ըմպելի բանն նոյ: Սակ յեսու նոսց ի տե-
ղին, ուր էին ընդ մովսէսի. զորմէ սաեն մեկնիչք
Թէ կերակրեցաւ անդ ի պտղոց տեղւոյն, և արբ
ջուր յաղբերէնն, զոր եգիտ անդ. զի ըստ որում
վկայեն բազումք, ի սահմանաւոր ինն բարձրու-
թեանն սինայ լերին կան ցայսօր ծառք պտղաբերք, և
աղբիւր ջրոյ: Վկայն մարթ է եւս ասել, Թէ յե-
սու պահեցաւ անդ մանաւոր ինն նախախնամու-
թեամբ նոյ՝ առանց մարմնաւոր կերակրոյ և ըմպելւոյ
ընդ այն քառասուն աւուրս:

Իբրև մինչդեռ նոճ ի լերին անդ աւանդէր
մովսէսի զձև և զօրինակ տապանակի ուխտին, և
խորանին վկայութեանն, և զտարազ զգեստուց քահա-
նայից, և զօրինս սրբազան ծխոյ, և զոհից և
ողջակիզաց, որով կամէր զի լինցի պաշտեցեալ յիս
բայէլացւոց. միանգամայն և զերկու քարեղէն
նձագիծ տախտակս տասնաբանեայ պատուիրանաց
տայր նմա. նոքա ի քանակի անդ խրեանց խոր-
հէին ի բաց Թողուլ զնճ, և զպաշտօն նորա դար-
ձուցանել առ կուռս ձեռագործս: Վանզի ձանձ-
րացեալ և նեղեալ ընդ այնչափ երկարաձիգ յա-

պաղումն ՚ի նմին տեղւոջ՝ լոկ սակս սպասելոյ դարձի մովսիսի, խումբք կազմեցին՝ դիմեցին կուտեցան զայրագնեալք ՚ի վերայ ահարոնի. և յանդուգն խիզախմամբ եդին նմա առաջի, թէ կամին ելանել ՚ի Հանապարհ. և ոչ ևս ինալ առն այնմիկ մովսիսի, որ եհան զնոսա յերկիրէ՝ և այժմ անեծեալ անուանեցաւ. և ահա որպես թէ յետ ածելոյ զնոսա յանապատ անդր, և զարհուրեցուցանելոյ զնոսա ՚ի լեռնէ անտի, լուեաց՝ ոչինչ այնուհետեւ հոգալով վասն նոցա: Այլ այսպէս Թողեալ լքեալ յայ՝ և ՚ի մովսիսէ, դեգերիմք ասեն աստէն վայրապար՝ անպատասպար և անառաջնորդ: Վասն որոյ բռնադատեին զահարոն՝ ստեղծուլ նոցա վաղվաղակի այլ ահա՝ ձեռագործ և երեւելի աչաց, որ լինիցի նոցա առաջնորդ՝ չուել ՚ի տեղւոջէն յերկիր բարւոյ և պարարտ:

Լսեալ ահարոն լուեալ զայն անկարծելի զանօրէնն պահանջումն նոցա, զարհուրեցաւ յանձն իւր՝ ընդդէմ այնչափ ապերախտութիւն, ընդ լըռութեն, և ընդ կուրութեն նոցա. բայց յահէ մնեցին ամենեքին, որք փեքը միւս ևս և քարկոծ առնէին զնա՝ ըմբռնեալ և շփոթեալ, տակաւացաւ զարժանն անձին խորհել՝ իշխանական արիութեամբ դիմագրաւ լինել նոցա. այլ ՚ի ժամուն եղոյց զինքնին ՚ի կամն նոցա. սակայն արդեամբք խորհէր հնարիւք ինչ խափանել զնոցիս նոցա: Այս առ այս համարեցաւ երից իրաց պէտս ունել. այսինքն ստանալ ժամանակ, որպէս զի Թերևս ժամանեսցէ մովսէս. ստանալ իւր կուսակիցս ընդդէմ ապստամբացն. և որպէս զմիտս նոցին իսկ մոլելոյ. զի ՚ի միտ առեալ գյիմարութեի իւրեանց՝ ինքնին ՚ի բաց կացցեն ՚ի խելագար տաղտկութենէ անտի: Այս զայս ամենայն խորհեցաւ միով առաջարկութեամբ վճարել. զի հրամայեաց նոցա կողոպտել զգինս ոսկիս յականջաց կանանց իւրեանց, և ուստերաց և դստերաց իւրեանց, և բերել, զի ձուլեսցէ անտի նոցա ՚ահ: Այս այսպէս մինչև ՚ի կողոպտել նոցա զկանայս ՚ի զարդուց անտի, և տանել առ

նա, և մինչև ՚ի չինել զգաղափար, և ձուլել, և զձուլեալն քանդակագործել, անցանելին աւուրք և շաբաթք. որով ստանայր ժամանակ։ Վասնեալ կարեր հաւատալ, Թէ հեշտեաւ զկնի անկելոյն կանգնել մերկանալ զկիր ՚ի զարդուց իւրեանց, այլ Թէ ընդ հակառակն ամենեքին զնեսցին ընդդէմ այնմ գործոյ, և կուսակից լինին ինքեան՝ ՚ի ջատնել յառաջ զկնգիր արանց և հարց իւրեանց, այլ առաւել զօրասցին ՚ի վերայ նոցա ողբանաք և արտասուօք, որպէս և երբեմն լուտանօք և լեզուաց գարուեցամբ իւրեանց. որք ազդողագոյն են քան զղէնս երկաթիս ՚ի յաղեցահարել զսիրտս արանց։ Վասն եթէ կանգնեալ յանձն առնուցուն զկիր ՚ի զարդուց անտի իւրեանց, խորհէր ահարն այսպիսի ինչ կուռս չինել, զի ինքնին ՚ի միտ առցեն զանպիտանութիւն նորա և զանկարութիւն լինելոյ նոցա առաքնորդ Ճանապարհի։ Վասն զի տեսեալ էր նոցա՝ Թէ ամենայն եգիպտոս պաշտէր զորթս, բայց սակայն այն ամբ նոցա չէղեն կարող ապրեցուցանել զպաշտօնեայս իւրեանց ՚ի ծովահեղձ լինելոյ, խորհեցաւ ձուլել արձան ՚ի ձև որթոյ. ակն ունելով Թէ ժողովուրդն տեսեալ զնմանութիւն այնց որթոյ՝ նոյնհետայն արհամարհեսցեն զնա իբրև առ ոչինչ պիտանացու. մանաւանդ զի ասի Թէ և ձև արձանին ոչ էր յընթացս իբր յառաջընթաց լինել չուոյ նոցա, այլ իբր կառեալ ՚ի տեղւոջ և պարապեալ ՚ի Ճարակիլ ՚ի նշանակ ոչինչ փոյթ ունելոյ հանել զնոսա ՚ի Ճանապարհ, և առաքնորդել նոցա։

Վասն այս ամենայն կարծեցեալ հնարք ընդունայն եղեն. զի ոչ բաւական ժամանակ ստացաւ. ոչ կանգնք դիմադարձ գտան, Թերևս ջերմագոյնք ՚ի կռապաշտութիւն քան զարս իւրեանց. և ոչ ձև անկենդան որթուն բաւական եղև զգաստացուցանել զժողովուրդն անմտագոյն քան զձուլարուեստն իւրեանց։ Վանդի իբրև տեսին զորթն ձուլեալ, և քանդակօք փազփազուն յօրինեալ, սկսան աղաղակել ՚ի մի բերան. * Վ.այս են աստուածք քո Իսրայէլ, որ հանին զքեզ յերկրէն եգիպտացւոց ։

և մնասցին նմա ազգակիցք և զոհս փրկութեան. և ի զոհից անտի խնջոյս յօրինեցին. և այսպէս չուայտեալք և արբեալք պարէին և կաքաւէին, ոտիւք դոփէին, և բերանօք գոչէին խառնաձայն, ի պաշտօն ինքնագործ աստուածոյ իւրեանց։ Իսկ ինչ նոքա զայս օրինակ ամպարշտէին ի բանակի անդ, ած ի լերինն խօսի առ Մովսէս, և ասէ ցնա. գնա՛ կիր գու ատի վաղվաղակի, զի անօրինեցաւ ժողովուրդն քո՝ զոր հաներ յերկրէն եգիպտացւոց։ Իսկ և նա կոչէ զնոսա իւր ժողովուրդ. զի որք այնչափ վայելեալ էին, և արդ ևս վայելէին ի խնամն աքանչելի բարերարութենէ իւրոյ, մոռացեալ զամենայն՝ յետսահիտ խորհրդով Թողչն զնա, և յարեցան ի պաշտօն անկենդան օրինաց։

Իջո՛ւ առեալ Մովսիսի զերկուս քարեղէն տախտակս տասնաբանեայ օրինացն, կո՛ւ ի տեղին ուր սպասեալ ինայր նմա յետս Հաւատարիմ պաշտօնեայ նորա։ Իսկ մինչ իջանէին երկոքեան ի լեռնէ անտի, լուան ի հեռուստ աղաղակ հնչեալ ի բանակի անդ ժողովրդեան. զոր յետս այր պատերազմող շռինդն իմն պատերազմի վարկանէր. բայց Մովսէս քաջ ծանեաւ՝ եթէ ոչ էր բարբառ զօրաց քաջամարտից, այլ ձայն խրախուսութենէ եւ գոյ անզգայելոց։ Իջա՛ւ իբրև մերձեցան ի բանակն, և ետես Մովսէս զօրթն, և զպարաւորսն՝ զի կաքաւէին զնովաւ, վառեցաւ բորբոքեցաւ իբրև զՀուր, և եթէ օրէն լեալ ասել՝ բովանդակ Հուրն սինեականն ժողովեցաւ ի վառարան սրտի նորա. յորմէ ի՛ ձեռ իմն սրտմտութենէ, և յարդար նախանձ ածային վառեալ, ընկեց ի գետին զձեռագիծ տախտակս, և խորտակեաց զնոսա. անարժան վարկանելով զժողովուրդն ապերախտ և ապստամբ այնմ ածային ձեռ քաղցր և հայրական պատգամաց. որով Համարէին բարեաք ունել Հնոյացուցանել զնոսա։ Իջա՛ւ առեալ զօրթն, և լուծեալ հրով ի մանր ձոյլս, ետ խարտել ի փոշի. զոր արկեալ ի ջուր՝ ետ ըմպել ժողովրդեան օրթ ապաշխարից. որպէս զի յորժամ ընդ յաւերժաձս որովայնի վա-

բեսցի արտաքս, ի միտ առցեն Թէ սրպիսի ինչ
ձր, զոր պաշտեին։ Աստամբեաց և զահարոն սատա-
կասցես. բայց միանգամայն և կարեկցութիւն ինն
վարկաւ զնա արժանի, իբր առ կարիս վտանգին
տարապայման երկիւղն՝ բերեալ յոյն ամպարշտու-
թիւն։

Այսպա կամեցեալ մովսիսի ըստ հրամանի նոն՝ և
յայտամբաց անտի առնուլ զվրէժ առ նոսա անօ-
րէնութիւն, եկաց առ դրան բանակին. և ի ձայն
ահեղ բարբառեալ ասաց, որ ոք իցէ յիմ ակոյին
կայս, առ իս մատիցէ։ Ժողովի գիտեր մովսէս,
զի ուր մեծ է բազմութիւն, ոչ աներեւոյթ ի նոյն
միտս են և ի նոյն խորհուրդ. բայց լուեն, ոմանք
առ երկիւղի. շատք ևս՝ զի չունին զոր ինքեանց
գլուխ և յառաջնութեաց, որ իշխեսցէ դիմագրաւ լի-
նել։ Որ և յայտ եղև ասա. զի հազիւ Թէ լսելի
եղև բարբառ մովսիսի ի բանակի անդ, ահա նոյն
ժամայն ամենայն որդիքն ղևեայ հասին առ նա
զինեալ. և ըստ հրամանի նորա, զոր առեալ էր
յոյ, անց և դարձ արարեալ նոցա ընդ միջ բանա-
կին ծագէ ի ծագ, կոտորեցին յայնմ աւուր ի ժո-
ղովրդենէ անտի որիթապաշտից երիք հազար այր։
Եւ այսպէս ահա ի դոյզն անհամբերութիւն սակս
յայտազանաց՝ ծնաւ ապստամբութիւն. յապստամբու-
թէ՝ կռապաշտութիւն. և անտի կորուստ երիք հա-
զար ոգւոց. միանգամայն և զրկումն կանանց ոչ
միայն յոսկի զարդուց, այլև յարանց իւրեանց.
որով ինքեանք այրիացան, և ուստերք և դստերք
նոցա որբացան. և յոսկեձոյլ ածն իւրեանց ոչ
վայելեցին։ Ի փոքրիկ սերմանց բուսանին տունկք
մեծամեծք, և ի դոյզն կայծակաց ընդարձակ
անտառք հրդեհին։ Յորմէ խրատիմք զորքերք և
զյարձակումն ախտաւոր կրից անդէն ի սկզբանն
նուաճել և շիջուցանել, ապա Թէ ոչ՝ մեծամեծ
չարիս սոսկալ է գործել։

Ի վաղիւ անդր մովսէս եդեալ առաջի աչաց
ժողովրդեան զանհնարին մեղս նոցա՝ ի պատրաս-
տել զնոսա յապաշխարութիւն, ինքն եւ անդրէն ի

լեառն՝ աղաչել զայծ Թողուլ նոցա զմեղսն : Իսկ ամենողորմ անյիշաչար Աստն Թէպետև զիջաւ յաղաչանս ծառային իւրոյ մխիթար, բայց պատուիրեաց նմա երթալ և ասել յԺողովուրդն խոտապարանոց, Թէ արդարև որպէս խոստացաւ՝ տանի զնոսա յերկիրն աւետեաց, զոր երդուաւ աբրահամու և սահակայ և յակոբայ տալ զաւակի նոցա : բայց ինքն ոչ երթայ ընդ նոսա, և ոչ ձանաչէ զնոսա իւր ժողովրդ : որովհետև նոքա մերժեցին զնա և ուրացան : Ա՛յլ տայ ասէ նոցա առաջնորդ ձանապարհի զհրեշտակ իմ, և նա մերժեսցէ զԵովեն ազգս . և տարցէ զնոսա յերկիրը նոցա, որ բղխէ զկաթն և զմեղր : Ո՛այս գոյժ դառնացոյց իբրև լուաւ ժողովուրդն, Ի սիրտ և Ի յոգի հարեալ՝ առ հասարակ յարտասուս լուծան . մերկացան զամենայն զարդս իւրեանց, և ոչ ևս արկին զանձամբք՝ ցորչափ կացին ինացին անդ յանդիման քորեբ լերին . սուգ առին, լային դառն արտասուօք, և աշխարէին Ի ցաւագին սրտէ . ամենամեծ պատիժ համարելով ինքեանց մնանել Ի ժառանգուն խոստացեալ երկրին, եԹէ ոչ ունկնդրին ընդ ինքեանս զնա : Ո՛ովսէս դարձեալ եմուտ ընդ մէջ . և ջերմ աղաչանօք՝ հանդերձ ցաւագին ապաշխարուԹ ժողովրդեանն՝ ցածոյց զսրտմտուԹիւնն Այ Ի նոցանէ :

Գլ. Ը.

Մովսէս արտասուոյ բանականին հարկանէ զխորանն վկայութիւն։ Կռիւն երկուս պատերազմս. ի վերստին ելանել ի լեառն սինայ՝ գրել զծ ի նոսա զնոյն պատուիրանսայ պարգեւս։ Ցեւանիկ մովսէս զքառասն այս. յորմէ երեսք նորա լուսաւորին։

Յետ այնորիկ առ հեռանալոյ յամբոխէ, և առ ի տալոյ նշանակ ահաւորութեն այ, առեալ մովսիսէ զխորան իւր, եհար արտաքոյ մեկուսի ի բանակէ ժողովրդեանն։ և կոչեցաւ այն՝ խորան վկայութե։ Ոչանգի անդ երթայր մովսէս խօսել ընդ այ վասն ամենայն իրաց զոր առնելոց էր։ նոյն պէս և ի ժողովրդենէ որ ոք խնդրէր ինչ ի նմանէ, անդ ելանէր։ Յորժամ երթայր մովսէս ի խորան անդր, ամենայն ժողովուրդն յարուցեալ յոտն կայր առ դրսւրս իւրաքանչիւր խորանի իւրոյ։ և դէտ ակն կալեալ հայէին ընդ մովսէս։ Այլ ի մտանել նորա ի խորանն, իջանէր սիւնաձև ամպ հրաշալի, և կայր ի պահպանութե դրանն։ Ովսէս խօսէր անդ ընդ այ, և ամբ ընդ նմա միջնորդութե հրեշտակի դէմ յանդիման, որպէս ոք ոք խօսիցի ընդ բարեկամի իւրում։ Յակ ժողովուրդն առ հասարակ ամենի մեծաւ երկիւղածութեն առ դրսւրս խորանի իւրեանց։ Ոչոք կարօղ էր մտանել ի խորան անդր, քայց միայն յեսու հաւատարիմ պաշտօնեայ մովսիսի, որ՝ յորժամ ելանէր մովսէս ի խորանէ անտի, ինքն միայր անդ իջր ի պահպանութե սրբազան տեղւոյն, և պարապէր յաղօթս և ի խոհմութիւն ածմանոց։

Յակ մովսէս ընկալեալ յայ զամենայն զոր ինչ խնդրեաց վասն ժողովրդեանն, դարձոյց ապա զխնդրուածս վասն իւր, որդիական ինն պատճառանօք աղաչելով զայծ յուցանել նմա զանձն իւր։

Որում պատասխանի արարեալ ՚ի՝ ասաց. մարդոյ կենդանւոյ ՚ի մարմնի՝ ոչ թէ մարմնոյ աչօք, այլև հոգւով իսկ յաղցաւոր կենցաղումս չէ հնար տեսանել զնա, և ապրիլ: Սակայն և յայսմ զիջաւ ա մեծագութ ՚ի ներ ընդուել ըստ հնարաւորութեանն զոք քաղձանս սիրելի ծառային իւրոյ: Վասնզի ասաց նմա կոփել երկուս տախտակս քարեղինս ըստ առաջնոց տախտակաց, և առեալ զայնս՝ ելանել դարձեալ ՚ի լեառն սինայ ինքն միայն: Օ՛որ և արար մովսէս. և եկաց անդ ՚ի գլուխ լերինն ընդ ամպով զքառասուն տիւ և զքառասուն գիշեր անսուաղ. և ՚ի ծ գրեաց ՚ի վերայ տախտակացն զտասնաբանեայ պատգամն, որք էին յառաջինն տախտակն: Յայնժամ ընդ ծերպ վիմի միոյ՝ եցոյց ՚ի՞ր մովսիսի զգեղեցկաշէն ինն յանհասանելի և յանձառելի փառաց ՚ի՞ծութեանէ իւրոյ, յորմէ երեսք մովսիսի արեգականափայլ լուսաւորեցան, մինչ չէր մարթ համարձակ հայել ՚ի նա:

Ապա տուեալ նմա ՚ի զտախտակն, և զայլ ևս պատուիրս զգուշացուցիչս վասն զանազան իրաց, որք պատմին ՚ի գիրս ելից. գլ. լբ. ՚ի 10. համարս ՚ի 27. արձակեաց զնա երթալ առ ժողովուրդն: Նա մովսէս յիշանել իւրում ՚ի լեռնէ անտի, ոչ գիտեր թէ տեսիլ գունոյ երեսաց իւրոց փառաւորեալ էին. բայց ահարոն և ամենայն որդիքն իսրայելի երկիւղ տեսին զնա, զարհուրեալ ՚ի փառաց երեսաց նորա՝ հեռացան ՚ի նմանէ, և ոչ իշխէին մերձենալ. մինչև ՚ի մովսիսէ քաջալերեալ և կոչեցեալ, դարձան առ նա՝ ահարոն և ամենայն իշխանք ժողովրդեանն: Նա նա եդ առաջի նոցա նախ զտասնաբանեայ պատուիրս բացօք երեսօք ՚ի մեծագոյն յարգութեի ՚ծագիր պատգամացն. և ապա առ ՚ի տալ համարձակուի և այլոց մնալ առ նա, արկ քօղ զերեսօք. և այսպէս եկին մերձեցան առ նա և այլ ամենայն որդիք իսրայելի. և նա պատմեաց նոցա զամենայն, զոր խօսեցաւ ընդ նմա ՚ի՞ր ՚ի լերինն սինայ: Ապա այնուհետև յորժամ ելանէր մովսէս խօսել առ ժողովուրդն, միշտ

ունէր զքօղ արկեալ զերեսաք . զոր յայնժամ և-
ելե բառնայր , մինչ մնանէր ՚ի խորանն խօսել ընդ
նմա : Իսկայն և առաջնորդն՝ որ հոյր է , պարտի
երբեմն ըստ բերելոյ պատեհութե՛ն՝ ծածկել զմե-
ծափառութիւնն իւր . որպէս զի հնազանդեալքն
կարասցեն համարձակ մատչել և մերձենալ առ
նա : Օի առաւել լոյսն ոչ ե փառք առն իշխա-
նաւորի , եթէ փոխանակ յինքն ձգելոյ՝ հեռացու-
ցանիցէ :

Յետ այսորիկ փութայր մովսէս ձեռն արկա-
նել ՚ի գործ շինուածե խորանին վկայութե , և տա-
պանակի ուխտին , և այլ ամենայն սրբազան կա-
հուց և կարասեաց ՚ի սպաս պաշտաման նո՛ն , ըստ
օրինակին՝ զոր նա՛ծ ինքնին մանրապատում մինչև
ցյետին փոքրիկ հանգամանս իւրաքանչիւր իրաց
ուսոյց նմա : Ա՛յսն որոյ ժողովեալ նորա զամե-
նայն ժողովուրդ որդւոցն իսրայէլի՝ նախ հրատա-
րակեաց առաջի նոցա զամենայն օրինական և զդա-
տաստանական օրինս , ըստ որոց պարտ էր նոցա
ուղղել և վարել զՏաճարակութի՛ն իւրեանց : Իսօսե-
ցաւ զինէ առ նոսա ոչ այնչափ ՚ի յորդոր , քան թէ
լոկ առ ՚ի յայտ առնել զկամն Հաւ՛ոյ՝ ոյ ընդ կա-
մակար նուէրս նոցա , որպէս զիարդ յօժարեսցի
այր իւրաքանչիւր ըստ իւրում կարի ընծայել ՚ի
պէտս խորանին պատուդ նո՛ն . զոր մի առ մի թուել .
այսինքն ոսկի , արծաթ , պղինձ , սար կապուտակ
կամ մանուշակագոյն , և ծիրանի , և կարմիր կրկին
անգամ՝ ներկեալ՝ նախ որպէս սար չև գործեալ ,
և ապա յետ նիւթեալ լինելոյ ՚ի թել , առ հաս-
տատագոյն լինելոյ գունոյն . վուշ աղինիւ նրբաթել ,
՚ի պէտս բարակամանն բեհեզոյ . և մազ այծեաց .
և մորթս խոյոց՝ կարմիր , և կապոյտ ներկեալ . և
փայտ անփուտ . և ձէթ ՚ի լապտեր լուսոյ . և իւղ
կազմեալ համեմաք ՚ի պէտս օծմանն , և խունկս բա-
զդրեալ և հանդերձեալ պէսպէս անուշահոտ
ծխանելեաք . և ականս սարդիոնս . և ականս յար-
մարս ՚ի քանդակ գրոյ , ՚ի զարդ վահասին և
պաճուճասրոյն , և տախտակին :

Ի սակաւ բանից անտի մովսիսի այնչափ վառեցաւ ժողովուրդն ի նուէրս առատագեղծնս, մինչև ստիպեցաւ մովսէս տալ քարոզ կարդալ ի բանակին և արգելուլ զերել այլ ևս ինչ։ Ի կարի յաճախեր ժողովուրդն բերել յամենայն իրաց առաւել քան զբաւականն պիտոյից գործոյն։ Այլ ոչ այս միայն, այլև ամենայն այր և կին հանձարեղ ձեռահմուտ, ըստ իւրաքանչիւր կարի՝ ինքնայօրդոր փութային մտանել և գործել։ Եւ ակ ձայնատարապետ և առաջնորդ գործոյս մեծի կացոյց ՚ած զբեսեղիել որբեան՝ յազգէ յուդայ, կարգեալ նմա գործակից զեղիաբ աքիսամայ յազգէ դանայ. և ելից զնոսա իմաստութիւ և հանձարով՝ խելամուտ լինել և արուեստաւորել զամենայն անվրէպ ըստ օրինակին՝ զոր եցոյց ՚ած մովսիսի։ Այլ կատարեցին նոքա զամենայն յանապատի անդ առ սինեկական լեառն. այսինքն զտապանակն ուխտին. զսեղանն հոգին առաջաւորութե. զաշտանակն եօթնաջահ հեան. զսեղանն խնկոց. զսեղանն ողջակիզաց. զնորանն վկայութե. և զամենայն կահ և գկարասի նոցա. որպես և զգեստս քահանայապետին և քահանայից. զորս ի առ ի յառաջիկայդ ատորա գրեսցուք։

Պատրաստութիւն պատարագին. Աղաւնոյ հայելն առաջաւորաց. Աղաւնոյ ոտից լուանալն. Աղաւնոյ նշխարք. Աղաւնոյ ողջակիզաց. Խորհուրդն վկայութիւն, և ամենայն հոգիք և հրաշեաց նորա։

Տապանակ ուխտին էր արկղ ՚ի կաթիր յանփուտ փայտից. յերկուց կանգնոց և ՚ի կիսոյ երկայնութեամբ նորա. և ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ լայնութեամբ նորա. նոյնպէս և բարձրութեամբն ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ։ Այլ էր պատեալ ներքոյ և արտաքոյ յոսկի թիթեղամբք, ունելով ՚ի վերայ առ շրթամբք ոսկի պսակ կռածոյ շուրջ շուրջանակաւ։ Այլ չորս օղամանեակս ոսկեձոյլս. երկու ՚ի միոյ կողմանէ, և երկու ՚ի միւսմ կողմանէ. և ՚ի նոսա կային ագուցեալ կամ անցուցեալ երկու լծակք կամ ձողք սասի և անսի յանփուտ փայտից՝ պատեալք նոյնպէս ոսկի թիթեղամբք, առ ՚ի բառնալ նոքօք զտապանակն. որք անշարժ հաստատեալ կային ՚ի տապանակ անդր։ Ոսկ ՚ի վերայ ունէր կափարիչ ՚ի մաքուր ոսկւոյ. երկայն յերկուց կանգնոց և ՚ի կիսոյ. և լայն ՚ի միոյ կանգնոյ և ՚ի կիսոյ։ Այլ յերկու գլուխս կափարչին էին երկու քերովբէք ոսկիք կռածոյք և յղկեալք՝ մի առաջի և մի անտի, իւրաքանչիւրն քառաթև. յորոց երկու առաջին թևք էին տարածեալ ՚ի վերայ կափարչին հովանի առնելով նմա. իսկ երկու վերինք տարածեալ ՚ի վերոյ, և կցեալ ընդ միմեանս։ Այլ էրեսք քերովբէիցն դիմընդ դէմ միմեանց. բայց աչք նոցա հայէին ՚ի խոնարհ ՚ի կափարիչն. որով զառաքազ լինն աթոռոյ ձևացուցանէին. յորմէ իբրև յաթոռոյ խօսէր ած ընդ մովսիսի ՚ի միջոյ քերովբէիցն, ունելով պատուիրան ոտից իւրոց զոսկի կափարիչն. զոր եօթանասունք քառասնից համ քառասան

Թագաւորն. Թերևս կամելով ցուցանել զնոճ նըս-
տեալ ՚ի վերայ քերովբէից իբրև ՚ի սեպհական
աթոռ լսել զաղաչանս և կատարել զխնդրուածս
ժողովրդեան իւրոյ: Ոչանգի և երբայական բառդ
ֆաքիօրէն, միօրինակ մատուցոր առ ձայնս կոփարէն,
և ֆառէլ, զերկաքանչիւրն ևս նշանակէ ըստ տեղ-
ւոյն: Այլ ՚ի մէջ տապանակին եդան երկու քարե-
ղէն տախտակք ուխտին. և ամենայն օրինական և
դատաստանական գրուածք մնվխսի: Ասատանօր
ելէց. էե. 22. ոչ չիշատակին սափորն ոսկի մնա-
նայեն, և ծաղկեալ գաւազանն ահարոնի. բայց
ունիմք ՚ի հեղն պօղոսէ. էբբ. ը. 4. Թէ և այսբերկ
եդան ՚ի տապանակի անդ: Այս տապանակ ահեղ
ինն էր առ երբայեցիս՝ իբրև սեպհական աթոռ
բարձրելոյն. յորմէ ելանէին ահաւոյին պատգամք.
որ և կոչէր սրբութիւն սրբութեանց. զի ահեղաբար
գումարեալ ամենայն ազգաց ՚ի ներքին կողմն խորանին բազմա-
կին վարագուրաւ առագաստեալ. ուր ոչ ոք կա-
րող էր մտանել, բայց միայն քահանայապետն, մի-
անգամ ՚ի տարւոջ. և զայն ոչ առանց արեան. զոր
մատուցանէր վասն իւր և վասն ժողովրդեանն առ
քիտութիւն, որպէս ասէ առաքեալ. էբբ. ը. 7:

Ահեղանն հայցին առաջաւորութիւն, կամ հայցին
երեսաց էր յանփուտ փայտից, երկայն ՚ի երկուց
կանգնոց, և լայն ՚ի կանգնոյ. իսկ բարձրութիւնն
նորա ՚ի կանգնոյ և ՚ի կիսոյ, հաստատեալ ՚ի վե-
րայ չորից ոտից. և պատեալ համակ մաքուր ոսկի
թիթեղամբք: Ունէր շուրջանակի ոսկեձոյլ շրջանս.
և ՚ի վերայ շրջանցն պսակ շուրջանակաւ չորս մատ-
նաչափ բարձրութիւն. և ՚ի գլուխ պսակին չորիս
ոտն քանդակագործ: Ունէր և չորս օղամանեակս
ոսկիս ՚ի ներքոյ պսակին և շրջանցն ՚ի չորեսին
կողմանս հաստատեալ ՚ի վերայ չորից ոտից ՚ի
ներքոյ շրջանցն. որք էին իբրև լամբք՝ անցուցանել
ընդ այնս ղձակս յանփուտ փայտից ոսկիապատս,
առ ՚ի բառնալ նոքօք զսեղանն: Իսկ կամ և կա-
րասի սեղանոյն էին խնկաղացք կամ ափսէք. Ելս.
է. 7. և տուփք կամ արկնակալք. էչց. ՀԷ. 16.

որք էին անօթք պնակաձեւք, յորս առնուին յարեանէ զոհիլ. և ձաշակք անօթք սկհաձեւք. և նուիրանոցք այսինքն կոնքք կամ տաշտք. ուր գնէին զհեղանուտ իրս ի նուիրել ՚ի նմա: Այս ամենայն անօթք էին ի մաքուր և յանխառն ոսկւոյ:

Այս սեղան կոչի հացի երեսաց, կամ առաջաւորումն. զի ի վերայ սորա նուիրէին երկոտասան հացս նուիրեալս յանուն երկոտասան ցեղից որդւոցն Իսրայէլի, ի խորանն առաջի վարագուրին ներքնոյ, որոյ ի ներքին կողմն կայր տապանակն սրբութիւն սրբոյ. վասն որոյ և էր անդ երբեմն առաջի երեսաց ՚ից: Հացքն էին անխմոր, և մեծաւմեծք, զի իւրաքանչիւրն՝ ըստ մեկնչաց՝ էր ՚ի վեշտասան լիտր ալերկ: Զև նոցա թոլորշի. իսկ ըստ եբրայեցւոց չորեքկուսի. ոսկի թերթիւք պատեալ, և եդեալ ՚ի վերայ միմեանց յերկուս անկիւնս սեղանոյն՝ վեց սատի և վեց անտի՝ ՚ի ձև երկուց սեանց: Յամենայն եօթնեկի յաւուր շաբաթու փոխէին. զհինս բառնային. զոր քահանայքն և ևթ ուտէին, զի չէր օրէն ուտել անտի այլոց, և նորս դեռ չերմն գնէին ՚ի տեղի նոցա: Ընդ հացին նուիրէին և աղ, և խունկ. ըստ ոմանց՝ նաև գինի. բայց ՚ոչ գիրն զաղ և զխունկ և ևթ յիշատակ:

Շատանակն էր համակ ոսկի ձախաթակեայ. ունէր վեց ազեղնաձև ստեղունս կամ շառաւիղս արձակեալ ՚ի կողմանց՝ երեք սատի, և երեք անտի. միաձոյլք էլեալք անգսաին ՚ի բնոյ անտի: Յե յիւրաքանչիւր ստեղան էին երեք գնտակք, ՚ի վերայ գնտակաց չուշանք, և ՚ի վերայ չուշանաց սկահակք ՚ի ձև ընկուզի կամ նշոյ յօրինեալ. և ձրագարան կամ լուսաձալ ՚ի նոսա, յորմէ տային զլոյս: Իսկ բուն աշտանակին ՚ի վերին կողմն ուներ չորս գնտակս, նմանչափ չուշանս և սկահաձևս և ձրագարանս. որով ընդ ամենայն էին եօթն ձրագք կամ լապտերք: Իսկ ՚ի ստորին կողմն ուներ երիս գնտակս հանդերձ նմանչափ չուշանաձև զարդուք ՚ի վերայ միմեանց. և յիւրաքանչիւր

գնտակէ ելանելին երկու ստեղծունք՝ մի աստի և մի տնտի. ընդ ամենայն վեց ստեղծունք։ ԿարձրուԹէ աշտանակին Թէպէտ ոչ նշանակի ՚ի ծը գիրս, այլ ՚ի գործոյն առ որ սահմանեալ էր՝ մարԹ է գուշակել, Թէ ոչ կարէր լինել աւելի քան զչորս և զվեց ոտնաչափ, այսինքն կանգուն երիս։ Ուր նէր և յարդարիչ, այսինքն միրատ ՚ի մաքուր ոսկւոյ ՚ի կարել զյաւելուած պատրուգի լապտերոյ, և յարդարել զծայր նոցա։ Կայլև անօթ ինչ, որ ելից։ ԻԷ. 38. նեցուկ կոչի. իսկ ՚ի ԼԷ. 17. յարդարիչ՝ նոյնպէս յոսկւոյ սըպ, ուր հաւաքէին զայրեցած ծայրս պատրուգաց։ Իսկ կշիռ ծանրուԹեան աշտանակին հանդերձ սովին գործեաք էր տալանդ մի ըստ կշռոյ սրբոյԹէ, որ ըստ ոմանց՝ առնէ 1500 ունկի, կամ լիտր հռովմայեցւոց 125։ Կայս եօԹնեակ լապտերք զդիշերն ողջոյն վառեալ կային առաջի վարագուրի ուխտին. զոր ահարոն կամ որդիք նորա յերեկորեայ լուցանէին։ Իմանք ՚ի բանից ասելն ՚ըզ գրոյն. ելից. ԻԷ. 20. * Օ՛ի եղիցի ձրագ հանապազորդ ՚ի խորանն վկայուԹե՛ ||, համարին Թէ զայգ և զցերեկ անչէջ կային։ Կայլ առաջինն առաւել հաւանելի է. մանաւանդ Թէ և իբր հաւաստի. որպէս յայտ է ՚ի բանից անտի ՚ը. Լեպ. Ք. 3. ուր ասի. * Կրնդն ձրագն ՚այ չևևս էր անցեալ. և սամուէլ ննջէր ||. որով ցուցանէ՝ Թէ դեռևս գիշեր էր։ Եոյնպէս և աստ ասի. * լուցանիցէ զնա ահարոն և որդիք իւր յերեկորեայ մինչև ցառաւօտ առաջի տեն ||. յորմէ յայտ է Թէ ՚ի լուսանալ առաւօտու չիջուցանէին։ Օնոյն է առանել և ՚ի ղեւտ. ԹՂ. 4։

Կեղտն խնկոց, կամ խնկակալ էր յանփուտ փայտից. երկայն ՚ի մի կանգուն, նոյնչափ և լայնուԹեն նորա. ուստի և քառակուսի. իսկ բարձ բուԹէին յերկուց կանգնոց. պատեալ բռնդակ ոսկի ԹիԹղամբ։ Կ՛ չորեսին անկիւնս ունէր չորս գնտակս, կամ եղջիւրս քրդաձեւս ոսկիապատս. և առ չԹամբք շուրջ շուրջանակի պսակ ոսկի վանդակագործ յօրինեալ։ Կայ ՚ի չորեսին անկիւնս ՚ի

հեբդոյ պատկին չորս օդալամբս . երկու՝ի մի կողմն , և երկու՝ի միս կողմն . ընդ որս երկու լծակք ոսկիապատք յանիրատ փայտից անցանելին բառնալ նոքօք զսեղանն : Այս սեղան եդեալ կայր՝ի խորանին վկայութեան , յանդիման նեբդին վարագուրին՝ի հանդիպոյ սեղանոյ հացին առաջաւորութեան . և ահարոն , կամ այլոք՝ի քահանայից որում հնար սաներ պաշտօնն՝ զօրհնապազ յառաւօտու և յերեկոյի ծխեր՝ի վերայ այսր սեղանոյ խունկս առնուշնս բաղադրեալս և կազմեալս՝ի զանազան ծխանելեաց : Այլ չեր օրէն հասարակ քահանային զայլ նուէրս մատուցանել՝ի վերայ այսր սեղանոյ , զորօրինակ հացի , կամ գինւոյ , և կամ արեան զոհի . զի միայն քահանայապետն միանգամ՝ի տարւոջ սրսկեր զարիւն զոհի՝ի չորեսին եղջիւրս կամ յանկիւնս սեղանոյ . զոր վասն մեղաց ժողովրդեանն յաւուր ընդհանրական քաւութեան մատուցանէր :

Սեղան ողջակիզաց եր՝ի ձև արկղ մեծի չանփուտ փայտից՝ պղնձապատ . հինգ կանգուն եր. կայուածի նորա , նոյնչափ և լայնութենին՝ կառաբեալ քառակուսի . և երեք կանգուն բարձրութենին : Սուներ զչորթամբք պատկ պղնձի . և՝ի չորեսին անկիւնս չորս եղջիւրս պղնձապատս : Եւ միջին տեղւոջ , այսինքն իբրև՝ի կէտն խորութենէ , գայր պղնձի գահաւորակ վանդակակերպ . այսինքն կառկարայ շարժական առակաեալ շղթայիւք , ի չորեցունց կողմանց չորիւք օղամանեկօք ագուցեալք ի եղջիւրս : Եւ վերայ այնր կապարայի այրեցեալ լինէին ողջակիզք ունելով հուր՝ի ներքուստ : Եւ չորեցունց կողմանց ուներ չորս ագոյս կամ օղս պղնձաձոյլս հաստատեալ՝ի միջին վայրի բարձրութենէ սեղանոյն՝ երկու աստի և երկու անտի . ընդ որս անցանելին երկու լծակք պղնձապատք առնբառնալոյ նոքօք զսեղանն : Սակ կաՀ՝ի պէտս այսր սեղանոյ էին նուագարան , այն է ծածկոց . և տաշտ , և մսահան , և կրակարան , կամ բուրվառ՝ համայն պղնձիք :

Լսոքանն վկայութենէ եր վրան կամ տաղաւար

մեծաշէն և փառահեղ. յորեքկուղեան առագաստ պատրաստել: Առաջին կամ նեղքին նուագարանին՝ որ ծածկէր զսրբութենն սրբութենէ, էր քեհեղեայ յապնիւ վէմ մանելոյ, առանփեղկեան՝ ի գոյն կապուտակ, ծիրանի, և կարմիր նեղկեալ. և նկարէն ծաղկայօրինուագրակ առընագործ, կամ անկուածոյ: Երկայնութեն իւրաքանչիւր փեղկի էր ի քան և ութ կանգնոյ, իսկ լայնութենն ի չորից կանգնոց: Հինգ փեղկք էին կցեալ և պնդեալ ընդ միմեանս. որոց լայնութենն միանգամայն էր ի քսան կանգնոյ, քաւականն ի ծածկել զկէս խորանին. նոյնպէս և այլ հինգ փեղկք պնդեալ ընդ իրեարս ի ձեռն ձարմանդից, այսինքն մետաքսեայ՝ կամ ասուեայ ժապաւինաց. զի ամենայն փեղկ ունէր կէզերս աստի և անտի չիսուն ժապաւէնս. և ի ծայրս նոցա օղս կամ աղխս ոսկիս. որով ժապաւէնք ընդ միմեանս աղխեալ, և նոքօք փեղկքն միաւորեալ, ծածկէին զմիս կէս խորանին. և այսպէս ձեւացուցանէին գնուագարանն՝ գոյր այլ ծածկոյ մագեղէն մետասան փեղկեան. երկայն յերեսունն կանգնոյ, և լայն ի չորից կանգնոց. նոյնպէս ի ձեռն ձարմանդից և պղնձի օղից պնդեալ ընդ միմեանս: Այս առագաստ գոլով մեծ քան զառաջինն, չորս կանգնաւ ընդ լայն, և երկու կանգնաւ ընդ երկայն, ծածկէր զնուագարանն յամենայն կողմանց, և զսպարուման այսինքն զդրօշակս նորա ատորինս՝ մինչև ի գետին. զի առաջին մեծամեծ առագաստն ըստ յովսեփոսի ոչ հասանէր մինչ ի գետին: Երրորդն էր ի շինկամարիւ մորթոց խոյոց՝ ունելով զսար ի վերայ. զոր Թարգմանիչքն մեր վիժակ կոչեցին. Թէպէտ զի ընդ սար լաւ ևս հոսեալ անձրևոյ ի խոնարհ, ոչ ընդմտանէ ի տամկացուցանել զնաշկն: Իսկ չորրորդն էր ի կապուտակ մորթոյ. որ կայր սփռեալ ի վերուստ ի վերայ այլոց երից ի բերդև ծածկոյթ և արտախուրակ խորանին:

Խորանն էր շրջապատեալ տախտակօք, կամ

ըստ Եօթանասանից՝ սիւնակօք, յանփուտ վայրէից ։ բարձրութիւն սիւնակաց ՚ի տան կանգնոյ ։ լայնութիւն ՚ի միոյ կանգնոյ և ՚ի կիսոյ ։ իսկ թանձրութիւն կէսուղկէսն, այսինքն չորս մատնաչափ ։ ՚Ի հիւսակողմն խորանին էին քսան տախտակք կամ սիւնակք ։ նոյնչափ և ՚ի հարաւակողմն ։ իսկ ՚ի ծովակողմն ընդ արեւմուտս յետուստ խորանին՝ վեց ։ և երկու բոլորաձև սիւնք յանկիւնս խորանին կանգնեալք ՚ի հաստատութիւն երկոցունց կողմանց ։ Սիւնակք կամ տախտակք կանգուն կային շարադասեալ առ միմեանս երկու երկու ծղխնեօք, կամ պարզունակօք ագուցեալ և սղոցեալ ընդ միմեանս, իւրաքանչիւր սիւնակաց կամ տախտակաց ունելով երկու նեբդնախարիսխս արծաթիս, և հինգ ապցս կամ օղս ոսկեձոյլս ։ ընդ որս ագուցեալ էին հինգ նիգք յանշարժութիւն և յառաւել ամրակազմութիւն տախտակամած որմոյն ։ որով իբրև միաստանի սրին երեւիլ ։ Եւ այս ամենայն նեբդուստ և արտաքուստ էր պատեալ ոսկի թիթեղամբ ։ նոյնպէս և նիգք և պահանդք ոսկիապատք ։ Երկայնութիւն խորանին էր երեսուն կանգուն, յերկու մասն բաժանեալ ։ առաջին մասն կամ նեբդին կոչին կոչիւր սրբութիւնց սրբութեանց ։ վերնագոգ անդ էր տապանակ ուխտին, անջրպետ առաջի իւր ունելով չորս սիւնս անփուտս ոսկիապատս ։ և խոյակք կամ վերնախարիսխք նոցա ոսկիք ։ իսկ նեբդնախարիսխք արծաթիք ։ զորոց առկախեալ կայր վարագոյր պատուական բեհեզեայ ՚ի կապուտակէ, ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ մանելոյ՝ հաւմանէ ծաղկեայ գեղազեղ աշխատագործ կամ անկուածոյ ։ Իսկ արտաքին կողմն կոչիւր սրբութիւն ։ անդ էր սեղանն հացին առաջաւորութիւն ՚ի հիւսիսային կողմն խորանին ։ և հանդէպ նորա ՚ի հարաւակողմն եօթնալոյս աշտանակն ոսկի, այլև սեղանն ինքնայ ։ Իսկ առ գոլս խորանին գոյր այլ վարագոյր բեհեզեայ ըստ առաջնոյն տարազու ՚ի կապուտակէ, ՚ի ծիրանւոյ, և ՚ի կարմրոյ նկարակերպ յօրինեալ և հաստատեալ ՚ի հինգ սիւնս յանփուտ վայրէից

ոսկիապատս. խոյակք նոցա ոսկիք. իսկ նեղքնա-
խարխսիք պղնձիք։

Այսրանն ունէր շուրջ զիւրև սրահ կամ դաւիթ
անյարկ՝ հարիւր կանգնաչափ ընդ երկայն յարևե-
լից յարևմուտս. և յիսուն կանգուն ընդ լայն ՚ի
հիւսիսոյ ընդ հարաւ։ Յերկաքանչիւր կողմն եր-
կայնութեան էին քսան սիւնք յանփուտ փայտից
պղնձապատառք ՚ի հինգ կանգնոյ բարձրութենէ. օղք
նոցա արծաթիք. և վերնախարիսիք պղնձիք ար-
ծաթի դրուագօք զարդարեալ. և նեղքնախարիսիք
պղնձիք։ Իսկ ՚ի յետին կամ յարևմտեան կողմն
էին տասն սիւնք, նոյնաձև ընդ առաջինոց, և հա-
մանման զարդու յօրինեալ։ ՚Ի համօրէն սեանց
աստի կայրն կախեալ մեծամեծ առագաստք կամ
վարագոյրք բեհեզեայք, որք յերից կողմանց պա-
տէին զսրահն բովանդակ։ Իսկ կողմն արևելեան՝
ընդ որ կայս հայկը երես խորանին և սրահին, էր
յիսուն կանգուն ընդ երկայն։ Յայնմ միջոցի քսան
կանգնաչափ էր դատարկ, թողեալ ՚ի պէտս դրան՝
ընդ որ լինէին ելևմուտք. և յերկոսին կողմանս
միջոցին վեց սիւնք՝ երեք աստի և երեք անտի
պղնձապատք արծաթի դրուագօք յերիւրեալ։ Այլ
քաց ՚ի վեց սեանց աստի՝ էին այլ ևս չորք ՚ի մէտս
անդր. զորոց կայր կախեալ վարագոյր ծաղկեայ
երկայն ՚ի քսան կանգնոյ, և լայն ՚ի հինգ կանգ-
նոյ. որ և փակէր զմուտս սրահին։ Մնացեալ կամ
և գործիք սրահին, որպէս և ցիսք հարեալք ՚ի գե-
տին, զորոց կապէին զլարս վարագուրացն, էին
պղնձիք։

Ահա այս էր տարազ և օրինակ խորանին վկա-
յութեան. զոր ըստ հրամանի տեն որ ՚ի ձեռն մովսի՝
կատարեցին բեսելիել Ձորտարապետ որդի
ուրայ, և եղիսաբ աքիսամայ ՚ի ցեղէ դանայ Ձար-
տար և հմուտ ՚ի գործ քանդակաց ՚ի փայտ և յոսկի,
յարծաթի և ՚ի պղինձ, և յականս. այլև ՚ի նկարա-
կերտուն՝ յօրինել գունակ գունակ ծաղկիս, և պէս-
պէս խայտաձամուկ նկարս ասղամբ և ոստայնանկու-
թիւ։ Այս ՚ի կատարել ամենայն կահուց և գոր-

ձեռայ խորանին վկայութիւն, տուաւ ղևտացւոց ձեռամբ ի թուականութեան որդւոյ ահարոնի կատարել զպաշտօն իւրեանց. որպէս հրամայեաց մովսէս։ Արդ ոսկւոյն, որ ծախեցաւ ի գործ խորանին վկայութիւն, եղև 29 տաղանդ, և 730 սիկղ ըստ սրբոյ սիկղ։ Իսկ արծաթոյ՝ եկեալ ի ժողովողեանէ, որք անցին ի հանդիսի ի քսանամենից և ի վեր՝ կարօղք զէն առնուլ, 603550. և եւտն առ գլուխ կէս սիկղ՝ մեծատունն և աղքատն, որպէս պատուիրեաց Տէր մովսէսի. ընդ ամենայն եղև 100 տաղանդ, և 1775 սիկղ։ Իսկ արձիւ պղնձոյն 70 տաղանդ, և 2400 սիկղ։ Ի հաշուէ աստի մարթի է ի միտ առնուլ զարժէք տաղանդոյն, այսինքն թէ մի տաղանդն ունէր լինել 3000 սիկղ. որովհետև վեցհարիւր և երեք հազար՝ հինգ հարիւր և չիսուն կէս սիկղք տան 301775 ամբողջ սիկղս. 300000 սիկղք առնեն 100 տաղանդ. 3000 սիկղ հաշուելով զմի տաղանդն։ Իսկ ըստ հաշուի դահեկանի, այսինքն ղուռուշի՝ մի տաղանդ ոսկւոյ արժէ իբր 55200 ղուռուշ. իսկ մի սիկղ ոսկւոյ 18 ղուռուշ. 48 ստակ։ Իսկ տաղանդն արծաթոյ արժէ իբր 4600 ղուռուշ. իսկ սիկղ արծաթոյ՝ 1. ղուռուշ. 64 ստակ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Պատրաստութիւն պէսպէս հագանոցաւոր զգեստոց։

Արդ՝ ինձ մեղ ստորագրել և զբահանայական զգեստս։ Զգեստք քահանայապետին, յորժամ քահանայագործէր՝ ըստ պատուիրելոյ Տեառն ի ձեռն մովսէսի, էին այսպիսի։ Ընդբաւարտիք կտաւեայ, որ ի միջոց հասանէր ցբարձս կամ ցծունկս՝ զգեցեալ անմիջապէս ի վերայ մարմնոյ

'ի ծածկոյթ մերկութեան: Ի վերայ այնր ապանէր փոխանակ շապկի պատմուճան երկայն պճնաւոր բեհեզեայ գործ անկուածոյ: Ապա վտաւակ, այն և պարեգօտ, որ հասանէր գրեթէ ցկից սրունից, համակ կապուտակ առանց թեզամանեաց՝ միատա նի. ունելով 'ի միջի ծակ բոլորակ, և օձիս անկուածոյս չուրջանակի, ընդ որ մուծանէր զգլուխն 'ի զգեստուն. և ընդ անթռովք յերկուց կողմանց բացեալ, ընդ որս հանէր զազուկս ապուցեալս թեզամանեօք յատաջասացեալ պարեգօտին: Եւ առ ստորոտով ունէր շուրջանակի փունջս նռնաձեւս 'ի կապուտակէ, 'ի ծիրանւոյ, և 'ի կարմրոյ յօրինեալ. և 'ի մէջ նոցա զանգակս ոսկիս. զի 'ի հնչիւն ձայնի նոցա աղգ սպասցէ քահանայապետն Ժողովրդեան զմտանել իւր 'ի խորանն վկայութեան. որպէս զի 'ի նմին ժամու և խրճեանք կայցեն յաղօթս: Եւ 'ի վերայ այսորիկ ունէր գօտի 'ի կապուտակէ, 'ի ծիրանւոյ և 'ի կարմրոյ գործ նկարակերպ խայտամամուկ և ոսկեթել. երկայն ըստ ոմանց ութերիկց եբրայեցւոց երկաւն և երկու կանգուն, և լայն երեք մատնաչափ: Այս գօտի կրէին և Տատարակ քահանայք. բայց գօտի քահանայապետին էր արհուամնութեամբ և ոսկեթել. իսկ նոցայն անկուած 'ի վզոյ և 'ի բրդոյ խառնելոյ ընդ մի միանս:

Ի վերայ վտաւակին ապանէր զվահան, եբրայերէն էփուտ. որ էր 'ի ձև բաճկոնի կանգնաչափ երկայն, որ զբովանդակ անձն պատեալ ի ներքս մինչև ցմէջս. ոսպայնանկեալ 'ի կապուտակէ, 'ի ծիրանւոյ, 'ի կարմրոյ մանելոյ, և յաղնիւ վզոյ բարակաման նիւթելոյ խառն ընդ ոսկեթելի, համակ ծաղկեալ իբրև ոսկեհուռն դիպակ: Եւ էր միատանի, ունելով 'ի լանջս պատառուած չորեքկուսի, 'ի վերեղէ 'ի նմա զտախտակն դատաստանոյ: Եւ առ օձեօքն էր բաժանեալ յերկուս. ընդ որ մուծանէր զգեցօղն զգլուխն. և այն էր կու մասունք կամ վերիք յատաջոյ և յետ կուսէ միանալին ընդ միմեանս 'ի վերայ ուսոց ասպի և

անտի ոսկի վահանակաւ կամ Ամբմանդիւ։ Եւ այսպէս ՚ի վերին կողմն գոլով բաժանեալ, էին իբր երկու վակասք յառաջոյ և յետ կուսի. և յոյս միտս ասի ելնէ. ԸԷ. 7. * Երկու վակասք ընդ միմեանս խառնեալք ։ Ոսկի ՚ի վերայ ուսոց վակասին կային հաստատեալ աստի և անտի երկու զամբուխտ ակունք ընդ ելս զեալք յոսկի. յորս էին քանդակեալ անուանք երկոտասան որդւոց իսրայէլի. վեց ՚ի միում, և այլ վեց յերկրորդումն, ՚ի նշանակ բառնալոյ քահանայապետին զծանրութիւն ժողովրդեան ՚ի վերայ ուսոց իւրոց. և բարեխօսել վասն նոցա առաջի Տեառն ։ Ունէր ՚ի վերայ եփուտին և գօտի ոսկեթել ։ Այս օրինակ սովորաբար ստորագրեն մեկնիչք զառարագ եփուտին, զհետ երթեալ ըստ մտին ՚ի գրոց, և ըստ մտին յովսեպոսի և փիլոնի ։ Ասացեալ են ոմանք, որք նեւթապէս առեալ ձգիւ զառան, որով ստորագրէ մովսէս զեփուտն, զայլ ինն ձև և տարազ ընծայեն նմա ։ Օ՛ի ասեն՝ Թէ էր ժապաւէն կամ երիզ ուրարձեալ ծաղկեայ ոսկեթել աղեղագործ, կամ անկուածոյ. զոր քահանայապետն արկանէր զուսովք. և ՚ի ներքոյ լանջաց խաչաձև բերեալ, կապէր առ սաեաստիք. և այսպէս եփուտն շրջապատէր զկապուտակ վառարկն կամ զպարեգօտն. որով լինէր միանգամայն և գօտի ։ Այլ այս կարի ինն օտար է ՚ի հասարակաց մտաց ։ Եփուտն էր սրբազան զգեստ սեպհական քահանայապետին՝ և այլոց հասարակ քահանայից. զայս ինչ և ևթէ խտիր ունելով, զի եփուտ քահանայապետի էր շքեղազարդ և մեծաճախ. իսկ այլոցն լոկ կտաւի. զոր զգենուլ ունէր և սամուէլ գեռևս մանուկ. իբր զի անդստին յարդանաւ նուիրեալ էր ՚ի պաշտօն Տեառն, և կարգեալ ՚ի քահանայապետութիւն ։

Ձախտակն դատաստանաց, որ յայլոց կոչի և լանջանոց, զի քահանայապետն կրէր զայն ՚ի վերայ լանջաց, էր անկուած ծաղկեայ՝ գործեալ ըստ օրինակի վահանին կամ եփուտին յոսկւոյ, ՚ի կապուտակէ, ՚ի ծիրանւոյ, ՚ի կարմրոյ մանեղէ, և

յաղնիւ վէրայ նիւթելոյ ։ Զև նորա չորեքկուսի. Թզաւ երկայն, նոյնչափ և լայն, երկկուղի կամ երկնատատկեալ ։ Այս էին ի նմա ընդելուզեալ և սա գուցեալ յատկի ակնակապիճն երկոտասան ակունք, ի չորս կարգս ։ Յառաջնում կարգի էին զմրուխտ, սարդիոն, և տոպազիոն ։ Յերկրորդումն կարկեհան, շափիղա, և յասպիս ։ Յերրորդում, գոճազմ, ակատ, և սուտակն ։ Ի սակ ի չորրորդն՝ յակինթ, բիւրեղ, և եղունգն. յորս կային գրեալ քանդակաւ անուանք երկոտասան ցեղահայրապետաց որդւոցն իսրայելի ըստ երիցութեանէ իւրեանց ։ Ի վերին ծագս կամ յանկիւնս տախտակին էին երկու օղք ոսկիք. յորս ագուցեալ կային երկու ոսկի շղթայագործ հիւսուածք, որոց ծայրքն յօգեալ ընդ երկու օղս ոսկիս՝ որ ի վերայ թիկանց վակասին յանդիման օղոյ տախտակին, զնաէին ի վերուստ զտախտակն ի վերայ վակասին առ լանջովք ։ Այնպէս և ի ստորին ծագս կամ յանկիւնս տախտակին կային այլ երկու օղք ոսկիք. և նոցա համեմատ այլ երկու օղք ի վակասն ի ստորին կողմն, ընդ որս անցուցեալ ժապաւէն ի նիւթոյ կապուտակէ՝ կապէին նովաւ զօղս տախտակին ընդ օղս վակասին, որով անշարժ և անզեղծ մնայր տախտակն ի վակասին ։ Այս տախտակ կոչեցաւ դատաստանաց, կամ զի ըստ ոմանց՝ յայտներ քահանայապետին զդատաստան և զկամս ՅՀ, և կամ զի էր իբր նշանակ դատաւորական իշխանութեանէ նորա ի վերայ երկոտասան ցեղից որդւոցն իսրայելի. զի ի ծանր ծանր իրս ած երբեք դատէր կամ վճռէր ինչ, առանց ուղղել ի վերայ իւր զայն տախտակ. յորոյ վերայ գրեալ կային այս երկու բառք. Յանդիմանութիւն և ճշմարտութիւն ։ Ընդ կալն ինն աշխատ արարին և առնեն զմեհենիչս, ի պատճառս բնագրին երբայեցւոց. որ ունի ուրիմ և թումմիմ. զոր յայլևայլ խմաստս մեկնեն ։ Այլ թողեալ զքննութիւն երբայական հոմանութեան բառիցդ, եօթանասունք, ընդ որս և մեր թարգմանիչք զայս խմաստ երևէին ակնարկել, այսինքն յայտնութիւն կամացն ՅՀ, և ճշմար-

առնել ապագային և գաղտնեաց, զոր յայտնէր Յոհ քահանայապետին ի ձեռն այնր խորհրդաւոր տախտակի. յոր սակս հրամայեաց դնել ի վերայ տախտակին. և ունել զայն միշտ ի վերայ լանջից, յորժամ մտանիցէ ի սրբուհին առաջի նոյն. Ելից. ԼԲ. 30։

Նոյնպէս խոյր քահանայապետին էր ի բեհեզոյ. այլ որովհետև մովսէս ինչ ոչ խօսեցաւ վասն ձևոյ նորա, պէսպէս ձևս ընծայեն նմա մեկնիչք։ Օ ի ոմանք ասեն, թէ էր սրածայր գրեթէ ըստ ձևոյ եպիսկոպոսական թագի. այլք թէ բոլորչի ի ձև փակեղան, և կէսք թէ եղջերաւոր կամ լուսնաձև. որպիսի դիւրաձևանայ՝ եթէ զեպիսկոպոսական թագի զդիրս փոխեսցես, զառաջակողմն և զկէտակողմն շրջելով յականջս կոյս։ Ն.ՀԼ զհարգ և իցէ, ունէր ի վերոյ թիթեղն ի մեջտեղ ոսկւոյ իբր երկու մատնաչափ լայնութիւն, գրեալ քանդակաձ ի վերոյ՝ Արբո-ՌԷ ՏՆ. և հաստատեալ ի վերոյ կապուտակ ժապաւենի. որով կապէին զնա ի ստորին սպառուածս խոյրին ի վերոյ ձախատուն իբրև սպարօշ պսակաձև. որ Է Ասաց. ԺԲ. 24. կոչի նաև։

Ն.յս ամենայն յառաջագրեալ հագմանց՝ հատուցեան յանապատի անդ առ լերամբ սինայի, ի լրանալ առաջնոյ ամի ելանելոյ որդւոցն իսրայէլի յԵգիպտոսէ. այն ամ էր՝ որ սկսաւ անհամբոյր տրանջանօք, յառաջեաց արշաւրօք յահեղ երեւութենից ի սինէականն լեառնէ, և միշտ որթ ապաշտուեցան, և կինքեցաւ ապաշխարութիւնք և ջերմ ապաշտուեցան. պսակեալ անընդհատ սքանչելիօք յահեղ քանէ ցկատարած։ Ն.պա յամին երկրորդի յամսեանն առաջնումն յամենամսի ամսոյն կանգնեաց մովսէս ըստ հրամանի նոյն՝ զխորանն վկայութեան. տաւ ի ներքս զտապանակն ուխտին, ձգեալ առաջի նորա զվարագոյրն անջրպետ։ Ն.ւ արտաքոյ վարագուրին ի տեղին սրբուհի եդ զսեղանն ոսկեայ առաջաւորութեան. և երկոտասան հացս ի վերոյ. և հանդէպ նորա զեօթնանկեայս աշտանակն ոսկեայ

կուռ. և զոսկի սեղանն խնկոց, և զաւազանն պղնձի. իսկ զսեղանն ողջակիզաց եդ առ դրան արտաքոյ խորանին։ Եւ օծ մովսէս զխորանն շուրջ ջանակի, և զսեղանս և զպահեստայն կահս նոցա։ Եւ ապա տարեալ զահարոն, և զորդիս նորա 'ի դուռն խորանին վկայութեանն, լուացեալ զնոսա ջրով. և զգեցուցեալ նոցա զգեստս քահանայութեանն ըստ հրամանի տեառն, օծ զնոսա 'ի գլուխ և 'ի ձեռս. և մատուցեալ ողջակէզ վասն մեղաց առ դրան խորանին զուարակ մի, առ յարենէ նորա, և մատամբ օծ զեղ ջիւրս սեղանոյն, և զինացեալն հհեղ առ յատակաւ նորա։ Աստղայ և երկու խոյս. զմի յողջակէզ տեն, զոր այրեաց 'ի վերայ սեղանոյ ողջակիզաց. իսկ զերկրորդն 'ի զոհ վասն քահանայից. և առեալ յարենէ նորա՝ օծ զբլթակս աջոյ ականջաց ահարոնի և որդւոց նորա, և զծայրս մատանց աջոյ ձեռաց և ոտից նոցա. 'ի նշան արթնութեան մտաց և խորհրդոց, և 'ի զգուշաւորութեան գնացից վարուց 'ի սպասաւորութեանն տեն։ Եւ 'ի մնացեալ արեանէ զմիան ինչ սրսկեաց 'ի վերայ ահարոնի և 'ի վերայ որդւոց նորա և 'ի վերայ զգեստուց նոցա, իսկ զյաւելեալն ցանեաց առ սեղանովն։ Եւ պատուիրեաց նոցա զեօթն օր չմեկնիլ 'ի դրանէ խորանին վկայութեան. այլ կալ մնալ 'ի խորանի անդ, մինչև կատարեսցի սրբութիւն նոցա, հակելով առաջի տեն։

'Ի կատարիլ այսր ամենայնի, էջ ամպ և ծածկեաց զխորանն ողջոյն ներքոյ և արտաքոյ, մինչև չկարել մովսիսի մտանել 'ի ներքս 'ի սաստիկ լուսոյ փառացն տեր որ 'ի ներքս անդ։ Իսկ ընդ երեկս՝ որպէս և ընդ գիշերն ողջոյն մինչ ցառաւօտ՝ ամպն այն երևեցաւ իբրև տեսիլ հրոյ 'ի վերայ խորանեն. որ լուսաւորէր զովմանդակ բանակն. և 'ի ծագել լուսոյ առաւօտու՝ փոխեցաւ անդրէն յամպ լըթագոյն։ Եւ այնուհետև հրաշալի ամպն այն անմեկնելի 'ի խորանէն՝ հանապազ երևէր 'ի վերայ նորա. 'ի տուէ իբրև ամպ՝ հովանի առնելով, իսկ 'ի գիշերի իբրև տեսիլ հրոյ՝ լուսաւորու լինել

լսէ առաջնորդ և ուղեցոյց լինէր որդւոյն խոսքից-
լի զցայդ և զցերեկ։ Այսն որոյ և ըստ շարժելոյ
ամպոյն շարժէին և նոքա. յորժամ վերանայր ամպն
՚ի խորանէն, և սկսանէր յառաջ խաղալ, չուէին
և նոքա. և ինչ զտեղի առնոյր ուրեք, անդ և
նոքա հարկանէ ընդբանակ իւրեանց։ Այլ երբ դէպ
լինէր ուրեք կալ ամպոյն անխաղաց ՚ի վերայ խո-
րանին ամօրեայ ժամանակ, և նոքա ընդ այնչափ
ժամանակս՝ անդ բանակէին անշարժ. դէտակն
կալեալ ՚ի նշան կամացն Այ, զոր ցուցանէր նոցա
՚ի ձեռն շարժուելոյ ամպոյն. քանզի հրամանաւ նո-
քանակէին, և հրամանաւ նորա չուէին. որ ՚ի ձեռն
ամպոյն առաջնորդէր նոցա։ Ըստ կատարի գիրք
ելից։

ԳԻՐՔ ԵՐԲՈՐԴ

ՑԵՍՈՒԹԻՒՆ ՂԵՒՏԱԿԱՆԻՆ

ԳԼ. Ա.

Պատուէր վանն պէսպէս ողջակիզից, և ապիկ ապիկ ընդէդ և պատարագաց. և հրեշտ և հանուն հապարմանն նոցա ի յետն ժահանայիցդ որդոցդն ընդէդ։

Ինչքա՞ն էր կանգնեալ խորանն վկայութե՛ն, ա՛ծ ոչ էր պատուիրեալ ինչ սահմանաբար վասն պաշտամանց քահանայից, որով կամէր զի պաշտեսցի ի նոցանէ. և ոչ վասն ողջակիզից և զոհից սահմանեալ ինչ։ Այլ երբե՞ւ կանգնեցաւ, և ո՞ւնագրեցաւ ի՛մէջ հրաշափառ ամպոյն ի վերայ նորա, որ էր նշանակ ներկայութե՛ն ա՛յ, յորմէ և մովսէս զահի հարեալ՝ ոչ իշխէր մերձենալ, քանզի ժամ կոչեաց զնա ա՛ծ ի խորանէ անտի, և խօսեցաւ ընդ նմա զդալն քարեաւով. տալով պատուէրս վասն զոհից և պատարագաց, և կանոնս, ըստ որոց պարտ էր կատարել։

Այդ՝ առաջին և նախապատիւ ի զոհս էր ողջակէզն. որ եթէ յարջառոց էր, պարտ էր լինել արու և անարատ. չունելով ներքին ախտակրութե՛ն, կամ արտաքին ինչ պակասութե՛ն։ Որ որ ո՛ր նորա ածէր առ դուրս խորանին. և զձեռն եդեալ ի վերայ գլխոյ նորա՝ ի նշան հրաժարելոյ ի ո՛ր ունէր նորա, յանձնէր ի ձեռս քահանայից. իսկ նոքա առեալ՝ անդէն առաջի խորանին զնէին.

և զարիւնն հեղեալ շուրջ զսեղանով ողջակիզին, հանիլն զմորթ նորա. և անդամ անդամ յօշեալ զմարմինն՝ դնիլն ՚ի սեղանն ՚ի վերայ փայտակու-տին պատրաստելոյ : Խակ զոտս և զիւորոտիս լուա-ցեալ դնիլն ընդ նոսա ՚ի վերայ զձարպ երիկամանց, և քաղբեթին տարածանիլն ՚ի վերայ. և ապա ՚ի վե-րայ ամենայնի դնիլն զգլուխն. և այնպէս այրիլն բովանդակ ՚ի պատիւ Տեն ՚ս : Յայն սակս կոչեցաւ ողջակէզ, իբր թէ ողջոյն կիզեալ. զի ոչ հանիլն անտի բաժին քահանայից. բայց միայն զմորթն, զոր տային զՀարսր քահանային : Ա՛յս այսմ օրի-նակի կատարելին և զողջակէզս ոչխարաց, և այծից, և գառանց, և ուլոց : Խակ զողջակէզ Թռչնոց, զորօրինակ աղաւնեաց կամ տատրակաց՝ այսպէս առնիլն : Ո՛չ առեալ քահանային զԹռչունն, ոլորելով կորզէր զգլուխն. և զարիւնն քամէր առ յատակաւ և առ շրթամբք սեղանոյն ողջակիզաց. և հանեալ զգրմանչն՝ հանդերձ փետրովք, որ-կանէր յետակայ սեղանոյն յարևելեան կողմն, ՚ի տեղի՝ ուր կուտէին զմոխիր. և ոլորեալ և ջախ-ջախեալ զթևս, դարձուցանէր զնոսա ՚ի վերայ Թիկանց, և ոչ ՚ի բաց հատանէր ՚ի մարմնոյն, և այնպէս հանեալ ՚ի սեղանն՝ այրէր զնա ողջոյն :

Երկրորդ ազգ զոհի, կամ պատարագի նուի-րելոյ Տեն ՚ս, էր յալերկ. որպէս նաշխ, կամ որ ինչ գործի ՚ի նաշխոյ. զորօրինակ կարկանդակ կամ քաքար, (այն է պողաչայ, և քեահի) եփեալ ՚ի Թոնրի, կամ ՚ի տապակի, և կամ ՚ի վերայ կաս-կարայից. այլև նոր հասկք ցորենոյ խարակեալ հրով, և փխրեալ ՚ի հատս, և մաքրեալ և ման-րեալ : Ընդ նոսա պարտ էր յարել միշտ և լուղ, և գինի, և աղ. այլև հնդրուկ կամ խունկ : Երեք առաջինքն էին սովորական հանդերձանք այսպիսի նուիրաց. իսկ խունկն լոկ յանուշահոտութեի յայ-րիլ նուիրացն ՚ի վերայ սեղանոյն : Ա՛յս նուիրեալ սահմանեցան, մի՝ վասն աղքատաց. որք չէին ձեռնհաս մեծագոյն ինչ ընծայել Տեն ՚ս : Երկրորդ ՚ի պարկն քահանայից. քանզի յամենայնի սակաւ ինչ,

զրօօրինակ ՚ի նաշխարհ բռամբ չափ և եթե , որպէս և ՚ի կարկանդակայ պատառս ինչ դնեը քահանայն ՚ի վերայ սեղանոյ և այրեը ՚ի զոհ ՚ետն . իսկ մնացեալն ամենայն էր բաժին քահանայից : Երրորդ՝ զի ոչ միայն անասնովք , այլև արմտիօք երկրի պատուեսցի ՚ած . զի և արմտիք՝ նորա տուրք են : Չորրորդ՝ զի զոհն՝ եթէ այսպէս մարթի լեզ ասել , եր իբր ձաշ պատրաստեալ ՚ոյ՝ զրօօրինակ աբրահամ հիւրընկալաւ զհրեշտակս ՚ի դիմաց ՚ոյ . վասն որոյ բաց ՚ի մսոյ՝ վայել էր և ալիւր , և որ ինչ յալեբի գործի , և իւղ , և գինի , և աղ , և կնդրուկ ՚ի հոտ անուշից : Երայց խմոր և մեղր ոչ մուսանէին յայս ամենայն նշանակեալ նուէրս . զի խմորն քացախուտ անյարմար էր և անվայել ՚ի բաղադրուածի ընդ իւղ՝ գինւոյ և աղի . իսկ յայլաբանական միտս հաստատեալ է նշանակ ապականութեան վարուց . որպէս և մեղր՝ նշանակ փափկութեան և հեշտութեան մարմնոյ , որք պիղծ են առաջի ՚ոյ : Այլ և յարգելոյ ՚ոյ զմեղր՝ կամէր այնու հեռացուցանել զրգիռն խորայելի ՚ի սովորութենէ հեթանոսաց , որք գրեթէ յամենայն զոհս կուռց իւրեանց զմեղր ՚ի կիր արկանէին : Սակայն արտաքոյ զոհից , ՚ի տալ քահանայից զառաջնապտուղս՝ մատուցանէին և մեղր , և հաց խմորուն , զոր սովորաբար ուտէին առաջնոյ ամենեցուն . քանզի նուիրեալ լինէր՝ ոչ զի այրեսցի ՚ի վերայ սեղանոյն ՚ի զոհ ՚ոյ , այլ ՚ի կերակուր քահանայից : Որպէս յայտ է ՚ի ղեւ . ե , 12 . ուր յարգելոյ ՚ոյ զամենայն խմորուն և զամենայն մեղրեալ չմատուցանել ՚ի զոհ , յարէ զկնի , այլ * Պատարագ պղղոյ մատուցանիցէք զոյն ՚ետն . բայց ՚ի սեղանն մի ելանիցէ ՚ի հոտ անուշից ՚ետն ||:

Երրորդ ազգ զոհի կոչի փրկութենէ , և խաղաղական , և գոհութենէ . զոր մատուցանէին ՚ի մաղթել հնարս ինչ ՚ի ՚ետն . կամ ՚ի գոհութենէ յաղագս ընկալեալ բարեաց . և կամ լոկ ՚ի պատճառս ՚ոյ ՚ի բարեպաշտութենէ ընծայողին մատուցեալ ձրիատուր պատարագ : Այս զոհ լինէր յարջառոց , յոչխարաց ,

'ի գառանց, յայծից և յոլուց. եթէ արու և եթէ էգ անխաիր, միայն անարատ. որով զանազանի յողջակիզից, զի անդ արու և եթէ մատչէր։ Օ՚ր մատուցանօղն տարեալ առ դուրս խորանին, և եդեալ զձեռն 'ի վերայ գլխոյ նորա, ընկենին զնայր. և զարիւնն տայր քահանային հեղուլ 'ի վերայ սեղանոյ ողջակիզին և չուրջ զնովաւ։ Լ՚ոյնպէս և զձարպ քաղեթին և փորոտւոյն, և երիկամանց, և զլերդաթոյթն հանդերձ երիկամամբք և մանամբք 'ի բաց կորզեալ, տայր քահանային այրել 'ի վերայ սեղանոյ ողջակիզին պատուղ 'ի հոտ անուշից տեն։ Լ՚ակ միսն լինէր քահանային. յորմէ ինչ առնոյր և մատուցանողն. զոր տարեալ 'ի տուն՝ ուտէր ընդ ընտանիս և ընդ բարեկամս իւր։ Լ՚այց յորժամ զոհն փրկութեան լինէր ընդ նա շիհ, կամ հաց, չուներ անտի բաժին տանել 'ի տուն։

Ձորրորդ ազգ զոհի էր վասն մեղաց ակամայից և անգիտութեան. զի աստ երկոքին 'ի նոյն հային. որպէս յայտ է 'ի ղեւտ. ե. 13. ուր երկոքեան 'ի միասին դնին, յասելն. * Լ՚սպա եթէ ամենայն ժողովուրդ որդւոցն իսրայէլի տգիտանայցէ ակամայ։ Լ՚ուդ՝ մեղաւք ակամայիկ կամ անգիտութեան իմանալ մնվասս զզանցառութիւնն և զանհոգութիւնն հետամուտ լինելոյ ուսանել զոր կարէր և պարտ կան էր ոք գիտել. նմին իրի կամաւոր էր գիւեզօրութիւն, կամ 'ի պատճառն. որ ոչ ազատէ 'ի մեղաց։ Լ՚հա այս զանցառութիւն է, յորոյ 'ի քաւութիւն հրամայի մատուցանել զոհ։ Յորժամ քահանայապետն մեղանչէր անգիտութիւն, յանցուցանէր ժողովուրդն վարդապետութիւն, կամ գայթակղական գործով, մատուցանէր զուարակ անարատ. զոր զենոյր առ դուրս խորանին առաջի տեն։ Լ՚ւ տարեալ զարիւնն 'ի խորանն վկայութեան, յանէր յարեւնէ անտի մատամբ իւրով եօթն անգամ առաջի վարագուրի սրբութեան սրբութեանց. և օծանէր զեղջիւրս սեղանոյ խնկոյ. և զմնացեալն զարիւնէն հեղոյր առ յատակաւ սեղանոյ ողջակիզից,

որ կայր առ դրան խորանին ։ Լուա զամենայն ներքին Ճարսպ զուարակին հանդերձ երիկամամբք և մանամբք այրեր ՚ի վերայ սեղանոյ ողջակիզաց ։ Լոկ զմարմին նորա հանդերձ մորթովքն, և գլխով, և ոտիւք, և քաղցեաւ, և ապաւառաւ հաներ արտաքոյ բանակին ՚ի տեղի մի որ, ուր զմոխիրը ողջակիզացդ կուտէին, և անդ ՚ի վերայ մոխրակուտին այրեին զայն բովանդակ. զի ողջակէզ էր ։ Այս ձեւ հանելոյ արտաքոյ բանակին զմարմին զուարակին՝ նկարագրեր զՔրիստիւ մեղսաքաւիչ պատարագ փրկչին մերոյ Յիսուսի. զոր հանդերձեալ էր կատարել արտաքոյ երուսաղէմ քաղաքի. ըստ ասելոյ առաքելոյն, * Վասն որոյ և Յիսուս՝ զի սրբեսցէ զաշխարհս իւրով զժողովուրդն, արտաքոյ դրան չարչարեցաւ ‖. Եբր. ԺԳ. 12 ։

Օնոյն առնել պարտ էր և յորժամ ժողովուրդն միահամուռ գործեր մեղս ինչ անգիտութեամբ կամ ակամայ ընդդէմ միոյ ՚ի պատուիրանաց տէրն ։ Որ վինն և եթէ զանազանութեամբ, զի յայնժամ գլխաւորքը կամ ծերք նոցա դնեին զձեռս ՚ի վերայ գլխոյ զուարակին յանուն համօրէն մեղուցելոց. և կտրեցի քահանայքն կատարէին զամենայն նախագրեալսն ։ Լոկ յորժամ իշխանն (որով իմանին ամենայն հրամանատարք ՚ի վերայ ժողովրդեան) մեղանչէր այսպիսի մեղս անգիտութեան, մատուցաներ նոխազ յայծեաց արու անարատ ։ Լոկ սոսկական ժողովուրդն մատուցաներ ալօղ, կամ էգ ոչխար, կամ գառն, կամ զոյգ մի տատրակաց, կամ երկուս ճագաս աղաւնեաց. և կամ չափ մի լոկ նաշհոյ առանց իւղոյ և կնդրկի ։ Օ այս ամենայն պարտ է իմանալ վասն թեթեւ մեղաց, կամ ըստ մեզ խօսելոյ՝ նեղբելեաց. քանզի վասն ծանուցից կան պատուիրեալ զանազան ծանր ծանր պատիժք. որպէս գոյ տեսանել ՚ի գիրս Ե. օրէն. գլ. ԺՁ. և յայլ բազում տեղիս ։ Յառանձնական զոհից աստի իշխանաց, և սոսկական ժողովրդականաց, ուներ բաժին և զոհարար քահանայն. զոր հրամայեալ էր նմա ուտել ընդ որդւոց իւրոց ՚ի տեղւոջ ՚ի գաւթի

անդ խորանին վկայութիւնէ. նախ սրբելով զանձինս օրինական լուացմամբ, որպէս և ղՀանդերձս, յորս սրսկեալ էր յարենէ անտի զոհին, պարտ էր լուա նալ անդ ՚ի յոր տեղւոջ։ Իսկ զանօթս յորս եփեալ էր զոհն, եթէ կաւեղէն էր, խորտակէին. իսկ թէ պղնձի՝ քերէին, և ապա լուանային ջրով։ Այս հրաման էր միայն վասն անօթոց աշխարհա կանաց. զի երբեմն և նոքա եփէին զմիս զոհից իւ րեանց ՚ի գաւԹի անդ խորանին. որպէս յայտ է ա. Խագ. Է. 13. Ե 14. զոր յետոյ ՚ի պէտս հասա րակ կերակրոց իւրեանց ՚ի գործ վարէին։ Այլ ոչ վասն անօթոց խորանին, զորս քահանայք հանա պազ ՚ի կիր արկանէին ՚ի գործ զոհարարութեանն։ Վասն որոյ եթէ նուիրօղ զոհին պարգևէր զայն խորանին, չէր այնուհետև հարկ խորտակել և ոչ քերել. զի սրբիւր մերձեցմամբ մնոյ զոհին։

Այլ այս ամենայն պատարագք և զոհք, զոր օրինք մովսիսի պատուիրէին վասն մեղաց անգի տութեան, և վասն այլոց մեղաց, ըստ ինքեանց ոչ քաւէին զմեղս. և ոչ զներքին տգեղութեան մեղաց քառնային ՚ի հոգւոյն. այլ միայն զարտաքին զո րինական կամ ծիսական մեղս կամ պղծութիւնս սրբէին. ըստ ասելոյ առաքելոյ, * Արիւն ցլոցն և նոխազաց . . . ցանեալ, զպղծեալսն սրբէր առ ՚ի մարմնոյ սրբութեան ։ ԵԲր. Թ. 13. ազատելով զնոսա ՚ի ժամանակեան պատժոց, զոր ՚ածէ կամ գատա ւորք ածէին վասն այսպիսի մեղաց։ Այլ հաւատ, յոյս, և սէր, և ներքին գղջումն ՚ի միասին ընդ զոհից՝ քաւէին զմեղս զօրութեամբ ընտրեալոյն քրի. որ պէս և առ մեզ ՚ի նոր օրէնս՝ խոստովանութիւնն հանդերձ ներգործութեամբ ապաշխարու թեան, սրբէն զՔրիստոս ՚ի մեղաց, և դարձուցանեն անգրէն ՚ի ընտրս ՚ոյ։

Օ կնի այսր ամենայնի աւանդին ՚ի գիրս ղևտաց ւոյ և զանազան կանոնք զոհից վասն օրինական պղծութեց. վասն անխոհեմ և անզգոյշ ուխտից հան դերձ երդմամբ. վասն նոցա, որք զիրս ինչ նուի րեալս ՚ոյ՝ անգիտութեամբ առ ինքեանս պահեալ

իցեն. վասն ակամայ վրիպանաց ՚ի ծիսական պաշտամունս. վասն անչէջ պահելոյ հանապազ զՀուր ՚ի վերայ սեղանոյ ողջակիզաց։ Որինք վասն ծխոյ հանապազորդ ողջակիզաց. վասն զոհից յաւուր հանդիսաւոր օծութեանն ահարոնի և որդւոց նորա ՚ի քահանայութիւն։ Պատուիրք վասն զոհից գոհութեան, և փրկութեան. վասն կամայական կամ ուխտական զոհից, զոր պարտ էր ուտել յաւաջնում և յերկրորդ աւուր. յորմէ թէ մնայր ինչ ցերեկորդ օր, զայն պարտ էր հրով այրել. ապա թէ ոք ուտէր անտի, մեղանչէր. և զոհ նորա խոտան և ապականտ լինէր։ Այլ և վասն չուաեալոյ զարիւն ամենայն անասնոց, և զձարպ։ Որմանք իմանան արգելուլ միայն զձարպ ողջակիզաց, և ոչ ընդհանրապէս զամենայն ձարպ կամ զպատարտութեան անասնոց սրբոց արտաքոյ ողջակիզաց։

Վասն ինչ յաղագս զոհից և կանոնաց կատարման նոցա. որք ընդարձակ և մանրապատում աւանդին ՚ի գիրս ղեւտացւոց՝ յաւաջին գլխոյ մինչև յումեքերորդ գլուխ, ուր աւանդի հանդէս օծութեանն ահարոնի և որդւոց նորա ՚ի քահանայութիւն. և պատուէրն՝ զկնի օծութեանն չելանել ՚ի դրանէ խորանին վկայութեանն զեօթն օր. մինչև լրասցին եօթն օրեայ կատարողութիւնքն քահանայապետութեան. զոր մեք ՚ի վեր անդր յաւարտ գրոցն ելից՝ հաւատառեցաք. ժամ է արդ դառնալ անդրէն ՚ի կարգ ղեւտական պատմութեանն։

Ի հարան ընկեալ ամենայնեցուն մատուցանել պատասխանի զհամ
ման էր, և ամեն ծողովրդեան։ Ընդ հրաշեալն ծա-
նել ընտրեա։ Ելեալ և աբեղաք որդիք ահարոնի հրահեղ-
ցոյց հրամանին։ Ապարեր առաջին պարկին չանապարհ անդ
ինոյ լերին։

Եւ կատարել ետձնորհեալ արարողութեանց օծու-
թեանն քահանայից, կոչեաց մովսէս զահարոն և զորդիս նորա զնորոգ քահանայացեալս, և զծերակոյտ ազգացոյն իսրայէլի առաջի խորանին վկայութեան։ Եւ պատուիրեաց ահարոնի առնուլ յանգուցեալ զուսա-
րակ մի ի զոհ վասն մեղաց իւրոց, և խոյ մի յողջակէզ, երկոքեան անարատս։ Եւ ցորենէս և ծերոց իսրայէլի ասաց ածել նոխազ մի յայծեաց՝ վասն մեղաց. և զուսարակ և գառն տարեւոր անարատ յողջակէզ. և այլ զուսարակ և խոյ ի զոհ փրկութեան. և նաշխի զանգեալ իւղով վասն ամենայն զոհից, առ ի սրբել նորքօք զանձինս, և պատարագել եհաւ սրութեան այ սքանչելահրաշ հրով։ Եւ պա ըստ հրա-
մանին մովսիսի՝ մատեաւ ահարոն առ սեղանն, և սպան նախ զիւր զուսարակն վասն մեղաց իւրոց, և վասն մեղաց տան իւրոց. և որդիք նորա մատուցին առ նա զարիւն զուսարակին, յոր թացեալ նորա զմատն, օծ զեղջիւրս սեղանոյն. և զմնացեալն եհեղ առ յատակաւ. և զձարպն և զերիկամունսն, և զլերդաբոյթն եհան ի սեղանն. իսկ զմիսն և զկաշին այրեցին արտաքոյ բանակին. որպէս պա տուիրեալ էր տէր մովսիսի յաղագս զոհից որ վասն մեղաց։ Եւ սպան և զխոյն յողջակէզ. զորոյ զա րիւնն ըստ նմին օրինակի մատուցին որդիք նորա առ նա. զոր եհեղ առ սեղանոյնի. իսկ զմիսն հան դերձ գլխովն, և ամենայն ներքինն մասամբք՝ եդ

'ի վերայ սեղանոյ ողջակիզին, լուացեալ նախ զքա-
ղերթն և զոտս ջրով։

Յետ այնորիկ եղէն զնախաղվամն մեղաց ժո-
ղովրդեան. և կատարեաց զայն՝ որպէս օրէնն էր
մեղաջանին. ապա մատոյց զողջակէզ նոցա ուրդն՝
այսինքն բաց 'ի յառաւօտին ողջակիզին, զոր յա-
ռենայն առաւօտու պարտ էր մատուցանել. և եդ
'ի վերայ սեղանոյն, յաւելեալ 'ի վերայ լի բառամբ
'ի նաշխոյ իւղով զանգելոյ։ Յաւ հնուկ յետոյ
սպան զղուարակն և զնայն զոհն փրկուածէ ժողո-
վրդեանն. զորոյ զձարպ, և զերիկամունսն, և
զլեղեպարկն, և զայլ ներքինն մասունս եդին 'ի
վերայ սեղանոյն. իսկ զերբեւծան և զերկին աջոյ՝
օրօշեաց ահարոն յայլոց մասանց, և նուիրեաց ա-
ռաջի տեն նուէրը զոհարար քահանային. որպէս պա-
տուիրեաց տէր մնվսիսի։ Յաւ այսպէս զեհեալ և
կտրատեալ 'ի մասունս զոհն և զողջակէզս, և
զետեղեալ 'ի վերայ սեղանոյ ողջակիզոյ, եմոյծ
մնվսէս զահարոն 'ի խորանն վկայութէ առնել զա-
ռաւօտին խնկարկութէ 'ի վերայ սեղանոյ խնկոյ.
զի այս խնկարկութէ լինէր միշտ նախ քան զառա-
ւօտեան զողջակէզն. միանգամայն և յարդարել
զլապտերս, և զՀացս առաջաւորութէ պատրաս-
տել՝ այլովքն հանդերձ։ Յայս եղեալ անտի ամ-
բարձ ահարոն նորապսակ քահանայապետ զձեռս
իւր 'ի վերայ ժողովրդեան, և օրհնեաց զնոսա։
Յաւ ահա յեղակարծ ժամու երևեցաւ բոց հրոյ ե-
լեալ 'ի խորանէն, և յական թօթափել կիզեալ
սպառեաց զամենայն որ ինչ կայր 'ի վերայ սեղա-
նոյ ողջակիզոյ. և ժողովուրդն առ հասարակ տե-
սեալ զսքանչելին զայն մեծ, զարհուրեցան յոյժ
յանձինս իւրեանց. և անկեալ ամենեցունն 'ի վերայ
երեսաց իւրեանց, երկիրպագին մեծվայելչութեան
սքանչելագործ տեն։

Վամեաւ տեծ զառաջին զնախընծայ պատարագ
ահարոնի հրաշական հրով պատուել. զի 'ի միա
ւագէ ժողովուրդն, թէ քահանայք առ 'ի նմանէ
ընտրեալք յիւր անմիջական սպասաւորութէ՝ սէր

բելի և յարդոյ են առաջի նորա. և աղօթք նոցա և պատարագք հաճոյ և ընդունական են նմա։ Այն հուր երկնառաք ի ձեռն մեծաքան խնամոց քահանայից հանապազորդ յաւելմամբ փայտից, ըստ պատուիրելոյ ՚ի նմա։ Ղ. 12. անչէք պահեցաւ մինչև ՚ի ժամանակս սողոմոնի։ Եւ յայնժամ իբրև կատարեցաւ տաճարն և նուիրագործեցաւ, նոր հուր առաքեաց ՚ի յերկնից, որ ծախեաւ զպա. ուեայ զողջակէզն և զզոհն. որպէս պատմի Է. Թագ. Է. 1. որ և անչէք պահեցաւ մինչ ցաւերուն տաճարին ՚ի քաղդէացւոց։ զոր յայնժամ պաշտօնասէրք քահանայք հետախաղաղ ծածկեաւ թագուցին ՚ի գաւթի անդ տաճարին։ Այս ՚ի դառնալ երբայեցւոց ՚ի գերութէ, գտին զայն ՚ի ջուր պարատ, ՚ի անձր, և դանդաղամած փոխեալ. որ և անդրէն վառեալ բորբոքեցաւ. որպէս պատմի Է. Մակ. Ը. 20. 22։ Եւ ասի թէ եկաց մնաց այն հուր մինչև ՚ի ժամանակս հալածանաց, զոր յարդոյ անտիւքոս ՚ի վերայ երբայեցւոց։

Յայնմ չքնաղ և պայծառազարդ աւուր, մինչդեռ ՚ի ծածկինն մովսէս և ընդ նմա ահարոն և որդիք նորա, և համբրէն ժողովուրդ որդւոց իսրայէլի՝ կային ՚ի խրախուճէ մեծի ՚ի ոչ և երկնային ցնծութէ առլցեալ, տեսանելով զնոճ քնակեալ ՚ի մէջ իւրեանց գերարհրաշ խնամողութէ, յորոյ ապացոյց երկնառաք հրով ընկալաւ զնուէրս պատարագաց իւրեանց. ահա յանկարծակաս պատահար լինի ցաւագին զայն ամենայն գեղեցիկ բարեկրութէ դարձոյց ՚ի սուգ տանն մովսիսի և ահարոնի, և յայ և յերկիւղ ժողովրդեան։ Այնպէս ընդ երեկս այնը աւուր՝ ՚ի հասանել ժամու երեկորեան խնկարկութէ, զոր քահանայից էր օրէնս առնել, նաբադ և աբիուդ երից որդիք ահարոնի փութաձեալ սկիզբն առնել գործոյ պաշտաման իւրեանց, յաւաւել ՚ի չպոյ շփոթեալ, անզդոյշ և անզգաստ մտօք եդին ՚ի բուրվառս իւրեանց հուր՝ ոչ ՚ի սրբազան հրոյ անտի նորոգ ի՛ջելոյ յերկնից ՚ի վերայ սեղանոյ ողջակիզաց, որպէս հրամայեաւ էր

ած. այլ՝ի հասարակ վառարանէ, որ էր՝ի գաւ-
թի անդ խորանին, ուր քահանայք հասուցանէին
զմիս զոհից՝ի կերակուր ինքեանց։ Եւ մնաու-
ցեալ՝ի սեղանն խնկոց, այն ինչ կամէին արկա-
նել խունկ առաջի նմա, եւ հուր՝ի սեղանոյ անտի.
կամ ըստ ոմանց՝ ելք չանթ յերկնից, և անդէն առ
սեղանովն եհար և ընդհատաւ արար զնոսա, և մե-
ռան, առանց այրելոյ կամ աղձատելոյ զմարմին
նոցա, կամ զպատմուճանս։

Յանցանք նոցա չերևիւ լինել այլ ինչ, բայց զի՝
հուր օտար, կամ անթե եդին՝ի բուրվառս իւր-
եանց. զի և ոչ՝ըե գիրք այլ ինչ յոռուվթի պատմեն
զնոցանէ, ոչ աստ, և ոչ այլուր, բաց՝ի վրիպա-
նոց աստի։ Իսր ըստ բազմոց մեկնչաց՝ Թուի պատ-
ճառեալ՝ի կարի ինն շտապելոյ նոցա՝ի գործ, ո-
րով մեռուցան, կամ չկարացին մտադիր լինել գոր-
ծոյն՝ որպէս պարտ էր։ Օր Թուի և՝ըե գրոյն
ակնարկել. զի Թէպետ՝ի մերում դնի հասարակ
բայիւ՝ առեալ չէ՛ըտչանչէ՛ըր բռնբվառս, բայց յայլում
Թարգմանութենէ ասի յափշտակել. իբր Թե խուճա-
պելով և շտապաւ առեալ։ Իանաւանդ զի ասեն՝ գո-
լով նոցա յայնմ՛ըաւուր քահանայացեալ, չէին գեռ-
ևս կիրթ՝ի գործ պաշտաման իւրեանց։ Այն ևս
ոմանք, որք զայն վրիպակ ասեն տարապայման եր-
կիւղի և պատկառանաց. իբր զի ասեն՝ երկեան
մերձենալ առ սեղանն ողջակիզաց և առնուլ՝ի
հրաշական հրոյն՝ գեռ ընդ գեռ ելիցէ յերկնից.
ընդ որ տակաւին կայրն՝ի սաստանման։ Այլ Թէ
այսպէս և Թէ այնպէս, ըստ բազմաց երևելի մեկ-
ցայ՝ չանցանք նոցա չերթեն մնահուշի. սակայն տա-
կաւին այսչափ խոստուվթիւ պատժեաց զնոսա Ած։

Ընդհաս են՝ի մէնջ խորհուրդքն այդ. բայց զոր
ինչ ըստ մերում մտածուվթէ մարթիմք՝ի Ած դրոց
իմնաստասիրել՝ այս է։ Ամենայն Ած ահարկու մե-
ծութեամբ իւրոց պաշտօնէից նախ՝ սաստանէցուցա-
նել զերիս և զխստասպարանոց ժողովուրդն, եր-
կիւղ, և յարգ գերագոյն, և ահաւոր ինն պատկա-
ռանս առ Ածային օրինս իւր տպացուցանելով՝ի

պերտս նոցա. և այնու արձունս և փութաջանս գործել զնոսա ՚ի պահպանութիւն ամենայն պատուական իրաց։ ՚Ւ.Ղանզի տեսեալ նոցա, թէ և յիւր անմիջական սիրելն պաշտօնեայս ոչ խնայեաց, սակս փոքր ինչ խոտորելոյ յօրինաց իւրոց, ՚ի բաւական առաւել պատուհաս ածիցէ ՚ի վերայ ինքեանց, եթէ յանցանիցեն ընդդէմ օրինաց նորա։ ՚Ւ.Ր. կրօղ՝ զի կամեցաւ ածել զուսյանել, թէ քանի՞ զգաստութիւն և սրբութիւն խնդրէ ՚ի պաշտօնեայս իւր՝ յորժամ մերձենան ՚ի տեղանն իւր պաշտել զնա. որով և երևեցոյց ըստ իմիք զգերամեծս սրբութիւն իւր, և զծածկետական մեծութիւնն, այսպիսի ձիւտ կատարումն օրինաց իւրոց պահանջելով մինչև ցյետն փոքրիկ նշանախեցս։ ՚Ւ.յս է զոր ասացեալ էր ՚ին առ մովսէս. * ՚Ւ. մերձաւորս իմ սրբեցայց, և առաջի ամենայն ժողովրդեան իմոյ փառաւորեցայց ։ Իբր ասէ, խստութիւն պատժոց պաշտօնեից իմոց՝ երևեցուսցիմ զսրբութիւն իմ, և զմեծութիւն փառաց ածութեան իմոյ։ ՚Ւ.յս քան ոչ ասաց և ոչ ՚ի նախընթաց գլուխս զևատացոց, կամ էլից գտանի ուրեք ուղղեալ առ ահարոն. բայց հանգիստ գէտ քանք գտանին ՚ի զանազան տեղիս. և այնքիկ են, զոր ասաց յիշեցուցանել մովսէս ահարոնի։ ՚Ւ.յսպիսի անաչառ վրէժխնդրութիւն ընդդէմ օրինադանցութեանց՝ կարևոր է առ հաստատութիւն և ՚ի յառաջադիմութիւն օրինաց, մանաւանդ եթէ նոր բոզ սահմանեալ իցեն. ապա թէ անպատիժ թողցին յանցանքն՝ թէպէտ և թեթև իցեն, չառնուն օրինք երբեք հաստատութիւն։ Օ այս ընթերնումք արտբեալ ՚ի և յայլ բազում դիպուածս. բայց ոչ երբեք առաւել քան զարժանն պատժելով։ Պրպտես և աստ. որ թէև ոմանց խիստ թուիցի, բայց յուշ ածեալ դյառաջագրեալ հետևանս, միանգամայն և զօգուտ մեռելոցն, յաւէտ պարգև ասելի է, քան թէ պատիժ։ ՚Ւ.Ղանզի թէպէտ կարձեաց ՚ինձ զժամանակեան զառօրեայ կեանս նոցա, բայց փոխանակ ընդ այնր ղյաւիտենականն պահեաց նոցա զկենդանութիւն։

Յետ ցասագին արկածիս՝ մովսէս Թէպէտ աղէկտուր էր ՚ի վերայ եղբօրորդւոց իւրոց, որք սիրելի էին նմա յոյժ, բայց գոլով խորհրդազգաց խորհրդոց կամաց Նո՛ր, սրտի մտոք խոնարհեաւ ՚ի հաճոյս նորա, մխիթարեցաւ, և մխիթարեաց զեղբայրն զահարոն, և զերկու որդիս որք մնացին նմա զեղիազար և զիթամար։ Վ՚իտեմ ասէ, զի սաստիկ է կսկիծ սրտից ձերոց, քան զոր ցաստկացոյն էր մարթ լինել, միանգամայն կորուսանել հօր զերկու որդիս, և եղբարց՝ զերկու հարազատս իւրեանց։ Ո՛չ յո՛չ լեցի ձեզ, զի օձեալ ո՛ն էք, և նուիրեալ ՚ի պաշտօն սեղանոյն ՚ա՛յ. Հանդերձք ձեր ուսուցանեն գձեզ արիանալ յածակոյս կողմն, և մի՛ ՚ի կարիս քնական աղեաց լուծանիլ։ Ո՛չ դատապարտե՛ ցաւ զարտմուԹիւն ձեր, և գնեղքին մարմնոյ և զսուգ. բայց ընդ պատժով մահու պատուիրէ, մի՛ կոծել, մի՛ աշխարել, մի՛ բառնալ զնոյր ՚ի գլխոց ձերոց, և մի՛ զՀանդերձս պատառել. և ՚ի դրանէ խորանին մի՛ ելանել։ Ո՛ղջ զի լացցեն եղբարք ձեր զլատացիք, և ամենայն տունդ իսրայէլ. իսկ դուք ունիցիք զսուգ ձեր ՚ի սրտի։ Ո՛պա կոչեաւ մովսէսի զմիսադայի և զեղիսափան զորդիս եղկէլի հօրեղբօր ահարոնի, պատուիրեաց նոցա բառնալ պատուով զմարմին մեռելոցն Հանդերձ քահանայական պատմուճանօք իւրեանց, և տանել Թաղել արտաքոյ բանակին։

Յայնմ աւուր պատահեցաւ և այլ դիպուած մի։ Վ՚անգի ընդ այլոց զոհից և ողջակիզաց ՚ի նմին աւուր մատուցելոց, ՚ի վերջոյ մատուցաւ և նոխազ մի պատարագ վասն մեղաց ժողովրդեան. զոր ըստ օրինաց պարտ էր քահանայապետին և որդւոց նորա ուտել ՚ի տե՛ղւոջ, և քաւել զմեղս ժողովրդեան։ Ո՛րդ՝՚ի խնդրել մովսիսի զնոխազն զայն, եւտես զի փոխանակ ուտելոյ՝ Թողին զնա այրիլ. ընդ որ ծանրացաւսուն լեալ, խստիւ կշտամբեաց զեղբօրորդիս իւր զեղիազար և զիթամար առաջի ահարոնի հօր իւրեանց, Թէ ընդէ՞ր ոչ կերան զայն, զոր ՚ած սահմանեաց ՚ի պէտս նոցա։ Ո՛ւ

պատասխանի ահարոն, և ասէ. զիաՀդ մարթ էր մեզ ուսել այսօր զվան մեղացն, գոլով մեր լեռաւ ցաւով և արտմութ֊ եամբ յայսպիսի անցից, որք անցին այսօր ընդ իս. և ո՞ վիտ գուցե չլինիցի Հանձն նոցա այսպէս թախծեալ ոգւով ուսել՝ի զոհից անտի. վասն այնորիկ այրեցին զայն ողջոյն՝ի պատիւ նոցն ՅՀ. ըստ որում պատուիրեալ էր ած մովսիսի՝ զաւեր լեալն յայսպիսի զոհից այրել, և մի թողուլ ցերեկոյդ օր։ Օ այս պատասխանի իրաւացի համարեալ մովսիսի, լռեաց։

Ա.պա խօսեցաւ ած ընդ մովսիսի, և հրամայեաց նմա պատրաստել զժողովուրդն, զի արասցեն զառաջին զատիկն անդ յանապատին սինայի. զոր և արարին՝ի չորեքտասաներորդ աւուր ամսոյն առաջնոյ յամին երկրորդի ելանելոյ նոցա յեգիպտոսէ՝ ըստ ժամանակին և ըստ ամենայն օրինաց և պայմանաց, որպէս պատուիրեաց նոր մովսիսի։ Ա.յս պատուէր ամի ամի առնելոյ զզատիկ՝ի սահմանեալ ժամանակին՝ պարտաւորէր ոչ միայն զընկէ երբայրեցիս, այլև զօտարս, որք Թլփատութեամբ եկեալ յարեալ լցեն՝ի նոսա։ Ա.այց արգելոյր խստիւ զպղծեալն արտաքին օրինական պղծութ֊ իւիք. որպէս մեռեալ մարդոյ՝ Թէպէտ և վասն Թազելոյ, առնել ընդ այլոց զզատիկ. կամ ուսել՝ի զոհից նուիրելոց ՅՀ. և կամ զայլ գործ ածայլին պաշտաման հրապարակաւ կատարել, յառաջ քան զլուանալ ժամանակի սրբու֊ Թե. որ տեւէր աւուրս եօԹն։ Ա.րդ՝ի նմին ժամանակի գտան ոմանք՝ի ժողովրդենէ անտի, որք պղծեալք էին յաղարկաւորութ֊ եամբ մեռելոց. ընդ որս և նոքա, որք Թաղեցին զերկու որդիս ահարոնի. և աւուրք սրբութ֊ եան նոցա չէին լեալ։ Ա.ման որոյ մատեան առ մովսէս իբրև առ հարաւոտ՝ Թարգմանն օրինաց Հն, Հարցանել Թէ զի՞նչ առնիցեն։ Ա.յր էր դիպուածն, զորմէ մովսէս չուներ գեռևս հրահանգ լինչ՝ի Հնէ. ուստի կայր՝ի տարակուսի. արձակել զնոսա առ այն մի նուազ չառնելոյ զզատիկ, կամ՝ հրաման տալ առ-

նել այնպէս պղծեալ յառաջ քան զլուանալ աւուրց սրբութեանն, չէր մսրթի. քանզի անմաքրելին էր հրամանն ըստ երկուցն ևս. իսկ մեկնել զօրինս և յայլ օր փոխադրել ըստ դատման իւրում՝ երբ կինչէր։ Յայր սակս ժամանակեաց նոցա, մինչև հարցանիցէ զՅն, տեսանել՝ թէ զինչ հրաման տայ ևս վասն այնր դիպուածոյ։ Այլ ահա յառաջ քան զհարցանել նորա, Յն ինքնին թարգմանեաց նմա զօրինս իւր. պատուիրելով նմա հրատարակել զօրվրդեան, թէ որ ոք ի ժամանակին սահմանեալ վասն տանի զատկին՝ գտցի անճոռ օրինական պղծութեամբ, կամ որք քնակութեամբ հեռի իցեն յազգէ իւրեանց, և ըստ ժամանակին ոչ կարիցեն ժամանել ի տեղին ընկարեալ յայր վասն զատկի, արասցեն զզատիկն ի յաջորդ ամսեան ի չորեքտասաներորդ աւուր նորին։ Այս հրաման, կամ պատգամ Յն կարգեցաւ ընդ այլ մշտնջենաւոր օրինս ազգին երբայեցւոց։

Կ. Ո.

Մովսէս զամ հրամանն Յն առնէ խօսեցաւ ի մէջ ամենայն անամաց չորքոտանեաց և նոտնոց և չխանց՝ զոմանս ուտել և զոմանս անուտել. ուսուի և ուսուցէ. իսկ զոմանս անուտել, զանս որոյ չուսուցէ։

Յետ այնորիկ արար մովսէս ըստ հրամանի Յն խօսեցաւ ի մէջ ամենայն անամանոց որոյ, և անասրոյ, կամ՝ի մէջ ուտելեաց և չուտելեաց։ Ամենայն չորքոտանիք (ասէ) թաթաւերձք և կճղակաբաշխք, որոց յերկուս բաժանեալ են թաթք, միանգամայն և որձան, որ են. վասն որոյ և ուտելի։ Իսկ յորս մի յերից հանգամանաց աստի պակաս իցէ, կամ զի որձայ, այլ ոչ է կճղակաւոր, և թաթին չէ

բաժանեալ, որպէս ուղտն, որ ունի ի ներքնում ոտից կաշի ստուար. կամ զի Թաթահէրձ է և կձղակաբաշխ, այլ ոչ սրոնմայ, որպէս խոզն. և կամ զի Թաթահէրձ է, այլ Թաթ նորա ի մագիլս բաժանեալ է, որպէս առիւծ, ընդ պիղծս դասի: Չկանգի չէ բաւական լինել Թաթահէրձ, այլ պարտ է զի Թաթն, կամ կձղակն յերկուս և ևս Թիկ բաժանեալ. որպէս Թաթ եզին, այծու, ոչխարի: Այսպէս և անասունք, որք Թէպէտ ջրքոտանի են, այլ գնան և կանգուն ի վերայ երկուց յետինն ոտից, զառաջինն ոտս վարելով երբեմն ձեռն. որպէս կապիկք, և արջք: Այս ամենայն տեսակք ջրքոտանեաց, որպէս և ամենայն միւս կձղակք անթք և պիղծ համարեալ էին. յոյր սակս արգելու զերբայեցիս ուտել ի նոցանէ, զի մի պղծեսցին:

Ի Թռչնոց, այն ամենայն որ չաղղակեր է, որպէս արծուի, անգղ, որոր, բու, Ջայլամն, բազէ, ագռաւ, և որ ինչ ըստ սոցա բերի զարս դիւրահանձ ջրքոտանի գազանաց, պիղծ է և անուտելի, Եւս ի Թռչնոցն զեռնոց, որք չորիւք ոտիւք գնան, որպէս մեղուք, ձանձք, պիղծ են. և Թէպէտ սոքա՝ զորս Հանասլազ տեսանեմք Թռչիլ առաջի մեր, վեց ոտս ունին, բայց երկու առաջինն ոտք են նոցա փոխանակ ձեռաց, որով սրբեն զաչս ի փոշւոյ, առնուն կերակուր, և այլ ևս ինչ ինչ առնեն նոքօք, որ ձեռաց է սեպհական: Այլ որք բաց ի չորից ոտից՝ ունին և երկուս սրունս կամ կարճս երկայնս, որով ոստոստեն. որպէս մարեխն, ջրեհակն և խարագուշն, և որ ինչ նման է նոցա, ևս համարեալ են և ուտելի:

Ի ձկանց, և յամենայնի որ ի ծովս, և ի գետս և ի լիճս են, որոց են Թևք, և Թեփք, ևս են. իսկ որք չունին զայսոսիկ, որպէս օձաձուկն, և այլ բազում տեսակք անթեւ, կամ անթեփ ձկանց (զի առ սրբուէն երկոքին ևս խնդրին), պիղծ են: Այսպէս և ամենայն սողունք, որ ի վերայ որովայնի սողին ի գետնի, Թէ ունիցին ոտս, որպէս մողէս, կո-

վաղիայ, խլուրդ, մուկն և այլն, և թէ չունիցին, որպէս ամենայն տեսակք օձից, և ձմեռայ, պիղծք էին, և պղծէին ոչ միայն զրօս ուտելիս՝ ի նոցանէ, այլև զանօթս և զկերակուրս և զըմպելիս, մինչ նաև զթռնիրս, և զկաթսայսն, եթէ ինչ ի՝ ի սորոցանէ անտի անկեալ սատակէր ի նոսա. ուստի զանօթս եթէ ի խեցւոյ էին՝ խորտակէին, զթռնիրս քակէին, զկաթսայսն եթէ երկաթի կամ պղնձի էին՝ քերէին, ապա լուանային. զկերակուրս և զըմպելիս՝ ի բաց հեղուին: Այս աղբիւրք ջրոց, և ջրհորք, և ջրակոյտք՝ թէպէտ և անկանէր ինչ՝ ի նոսա յասացեալ զեռնոցդ, ոչ լինէին պղծեալ. զի սակս անհանգիջելի հարկաւորութեանն ջրոյն՝ ի հանապազորդ պէտս ժողովրդեան և անասնոց նոցա յանապատի անդ, այսպէս սահմանեաց Աստ. Թէպէտ զի աղբիւրք ջուրց, և ջրհորք ինքնաբուղիք, անլցդհատ բղխմամբ և հոսմամբ ինքնին սրբին: Այլ ոչ այսպէս միայն, այլև եթէ ձորձ ուրուք ըստ գիպաց իմն մերձենայր և հպէր ի գի մեռեալ անասնոց՝ ոչ միայն պղծոց, այլև սբց և ուտելեաց, պղծեալ համարիւր. և ոչ կարէր ոչ ի տուն մտանել, և ոչ ի ժողովս այլոց՝ մինչև ցերեկոյ. զի յայնժամ լուացեալ զձորձս՝ սրբիւր:

Այս խորութեն անասնոց ի սբս և յանսբս՝ եբրեի ծանօթ լինել և առաջնոց քննակաց երկրի: Վասնզի ի պատուիրել Աստ նոյի առնուլ ի տապանն յամենայն տեսակաց ցամաքային անասնոց, դնել զայս որոշումն ի նոսա՝ սբս և անսբս կոչելով. առանց ցուցանելոյ՝ թէ ոչ սբք իցեն, և ոչ անսբք: Յորմէ յայտ է թէ այս ծանօթութիւն գոյր առ մարդիկ առ նովին ժամանակաւք. զոր գիտելով և նոյն, ըստ այմ հառ ընտրանաւք ի սբց եօթն եօթն զոյգս. յորոց մատոյց և ողջակէզ Նմն՝ իսկ և իսկ ընդ ելանել ի տապանէն. իսկ յանսբց մի մի զոյգ: Ցսոյն խորութենէ ընթեռնումք գոլ և առ եգիպտացիս առ ժամանակաւք յովսեփայ նահապետին. զոր գուցէ ունէին աւանդութիւն առեալ յորդւոցն քամայ. քանզի խորշէին ուտել հաց ի

մի սեղան ընդ երբայեցիս, առ պիղծս ուտելով զնոսա, յաղագս ուտելոյ նոցա զարջառս և զոչխարս, զոր նոքա պաշտէին։

Զի խնդրի՝ թէ կրնաչ իցէ հիմեալ այս խորհուրդն, զոմանս յանառնոց իբրև մաքուրս ուտել, և զոմանս իբրև անմաքուրս. որովհետև իւրաքանչիւր անասուն ըստ ինքեան և ըստ տեսակի իւրում մտածեալ՝ բարի է և կատարեալ. իբր զի ունի կազմուածս գործարանաց իւրում բնութեան համապատշաճս. առնու կերակուր յարմար իւրում խառնուածոյ. առնէ գործողութիս առ որ կարգեալ է՝ ի բնութենէ։ Ուստի ըստ այսմ մտածեալ՝ չէք՝ ի միում յաւէտ քան յայլսում նեղքին և բնական անմաքրութեն կամ պղծութեն. զի ամենայն գործք ոչ բարի են կրնքեանս և կատարեալ, մինչև ցմրջիւնս և ցկետին մէջզուկս։ Այս չգտանեմք՝ ի նոսա այլ ինչ բնական հինն այսր զանազանութեն, բայց զնեքքին որակութեն գոյացութեն նոցա. որով միս ոմանց ծանր է՝ պինդ և զզուելի. ուստի և անյարմար մնդեան և առողջութեն մարդոյ. և ոմանց թիւնաւոր և վնասակար, որպէս ժանտ սողոց։ Ուր ընդհակառակն՝ միս անասնոց, որք չոր կոչին, որք և լոկ խոտաբուստ ճարակաւք անանին, և կէղակաբաշխ և որոնայօղ են, բարի է և քաջայարմար խառնուածոյ մարդոյ։ Վասնզի ըստ բնականին՝ այս տեսակք չորքոտանեաց քառեակ ստամքս ունին աղխատելոյ ընդ միմեանս, յորոց իբր ընդ աստիճանս զգուան ծաւքեալ և կլեալ, մանն մանն անդրէն՝ ի վեր բերեն՝ ի բերանն, և դարձեալ ծաւքեն. և ապա անդրէն կլեալ՝ վերստին՝ ի վեր բերեն՝ ի բերանն։ Այսպէս դարձադարձ ծաւքմամբ և մարսողութեք կատարեալ եփի և հալի բուան և զարի. որով և չխի չըստակագոյն մնայց, յանօթագոյն արիւն, և՝ ի միս փափկագոյն, վասն որոյ և յաւէտ անդադար և ախորժական մարդոյ. որպէս և փորձ հաստատէն ազգայ կուգանէ։ Յորմէ երևի թէ այսպիսի անասունք բաղում մասամբ՝ ի կերակուր մարդ-

կան հաստեցան յարարչէն, քան յայլ պէտս գործոյ։

Այլ տակաւին խնդրի, թէ առ ինչ զայս խորհրդեցեալ ուսեալեաց և չուսեալեաց օրինադրեաց ՚ի իւրում ժողովրդեան. զի լոկ բնական լաւութեան և յառաջդիմութեան անատնոյ ՚ի կերակուր՝ չէ բաւական պատճառ առ այսպիսի ձիշտ որոշումն. զոր և մարդիկ ինքնին կարեն առնել. որպէս և առնեն իսկ բազումք ՚ի մարդկանէ այժմ ՚ի նոր օրինս, ոչ ՚ի հնազանդութենէ օրինաց, զի չիք այժմ այն խորհուրդ կան օրինք, այլ լոկ ՚ի բնական հանգամանաց առնանցին այնոցիկ, յորոց բնութենէ զզուին։ Այսու որոյ բազումք ՚ի հարց զայս խորհրդեցեալ անթեղ անառնոց բարոյապէս իմանան՝ իբր նշանակ եղեալ մեզ, յորոց պարտ էր նոցա խորշել. որպէս խոզ՝ նշանակ որկորաժետութեան. նապաստակ և շուն առատակուրթեան. աղուէս նենգաժոռութեան. ուղտ ոխակալութեան. սիրամարգ հպարտութեան, և այլք ըստ կարգի։ Այնուհանդերձ ասեն, կամէր Աստ սովին օրինադրութեամբ կրթել զնոսա ՚ի ժուժկալութեան, ՚ի հնազանդութեան, և ՚ի քաղցրաբարոյութեան. և նովին մարմնոյ օրինական սրբութեամբ ամրաւնալ զնոսա ՚ի Հոգւոյն և ՚ի բարձրագոյն հոգւոյ սրբութեան. զի լինիցին որ, որպէս և ինքն որ է։ Այս ամենայն և այլ սոցին սակի խորհրդաւոր մեկնութեանք բարի են. այլ իսկական պատճառ երևի լինել այն, իբր զի կամեցաւ Աստ զայս խաիր կերակրոյ անջրպետ՚ի մէջ արկանել ժողովրդեան երբայեցւոց՝ և այլոց ազգաց հեթանոսաց. և այնու զատուցանել զնոսա ՚ի կենաց կցորդութենէ նոցա. զի մի ընդ անխտիր կենակցութենէ, մնասա ունիցին ՚ի ժողովրդեան իւրում և օտար հեթանոսական բարք և վարք և սովորութիք, և մանաւանդ կռապաշտութիւն. առ որ կարի լիմն հակամէտ էին երբայեցիք։ Օ սոյն ակնարկէ և բանն որ գրեալ է ՚ի գիրս գՀատացուց գՂ. ՚ի. 24. 25. 26.* Այս եմ Աստ ձեր, որ մեկնեցի զձեզ յամենայն ազգաց. և զատուսջիք զանձինս ձեր ՚ի մէջ անասնոց սրբոց և անսրբոց, և ՚ի մէջ թռչնոց սրբոց և անսրբոց. և մի պղծիցէք

զանձինս ձեր անաստուածք և թուչնովք, և ամենայն սողնովք երկրի. զոր ես զատուցի ձեզ ի պղծութիւն։ Այլ եղիջիք ինձ սիրք, զի ես սուրբ եմ ես ամենայն ազգաց լինել ինձ։

ԻԱ. Ա.

(1) Ընդ այսոսիկ սրբուիլ և պղծուիլ անձինք. և այլ օրէնս վասն բորոտուիլ մարդկան։

Տուան խօսեալ ընդ Մովսէս և այլ զաղմադիմի օրէնսք յաղագս պղծութեան և սրբութեան։ Արդ ասէ ցքահանայսն զՀարովնայ որդիսն, զի ասասցեն ցամենայն ազգս իւրեանց. և ոչ մերձենասցէ կամ հպիցի մեռելոյ ի տան իւրում. կամ ուստեր և կենակցիլ ընդ ընտանեացն, և ոչ ընդ առն իւրում։ Այլ ընդ ազգականսն մերձեսցի, որ ինչ ազգականք իւր են, ընդ մայր և ընդ հայր, և ընդ որդի և ընդ դուստր, և ընդ եղբայր, և ընդ քոյր կուսական, որ ոչ ընդ առն իւրում։ Ընդ այս ազգս մերձեսցի, և ոչ պղծեսցի ի ժողովրդեան իւրում։ Եւ ոչ ածիցէ զգլուխ իւր, և զմօրուս ոչ սափրեսցէ, և զմարմին իւր ոչ ճղասցէ։ Սուրբ եղիցի Տեառն Աստուծոյ իւրոյ, և ոչ պղծեսցէ զանուն Տեառն Աստուծոյ իւրոյ, զի զպատարագս Տեառն և զհաց Աստուծոյ իւրոյ մատուցանէ, սուրբ եղիցի։ Կին պոռնիկ և պղծեալ ոչ առցէ, և կին ապականեալ ի նեղութենէ ոչ առցէ, և կին ատեալ ի նեղութենէ ոչ առցէ, զի սուրբ է Տեառն Աստուծոյ իւրոյ։ Եւ սրբեսցէ զնա, զի սուրբ է Տեառն Աստուծոյ քո։ Սուրբ եղիցի քեզ, զի սուրբ եմ ես Տէր որ սրբեմ զձեզ։ Եւ դուստր քահանայի եթէ պղծեսցէ զանձն իւր պոռնկութեամբ, զհայր իւր պղծեաց, հրով այրեսցի։ Եւ քահանայն մեծ որ ի եղբարս իւրոց, որոյ ի գլուխ իւր եղեալ իցէ իւղ օծութեան, և լցեալ զձեռս իւր իշխանութեամբ քահանայութեան, զգլուխ իւր ոչ ածիցէ, և զհանդերձս իւր ոչ պատառեսցէ։ Եւ առ ամենայն մեռեալս ոչ մտցէ, և ընդ հօր իւրում և ընդ մաւր իւրում ոչ պղծեսցի։ Եւ ոչ ելցէ ի սրբութենէ, և ոչ պղծեսցէ զսրբութիւն Աստուծոյ իւրոյ, զի սրբութիւն օծման Աստուծոյ իւրոյ ի վերայ է։ Ես Տէր։ Եւ զկին իւր ի կուսութեան առցէ։ Այրի և ապականեալ և պոռնիկ ոչ առցէ, այլ զկոյս ի ժողովրդենէ իւրմէ առցէ կին։ Եւ ոչ պղծեսցէ զսերմն իւր ի ժողովրդեան իւրում, զի ես Տէր որ սրբեմ զնա։ Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէս և ասէ։ Խօսեա ընդ Ահարոն և ասա ցնա. Ոչ ոք ի սերմանէ քումմէ ազգս ազգս, որ ունիցի պղծութիւն, մերձեսցի մատուցանել զհաց Աստուծոյ իւրոյ։ Զի ամենայն մարդ որ ունիցի պղծութիւն, ոչ մերձեսցի, մարդ կոյր կամ կաղ, կամ որ ունիցի զքիթ իւր պակաս կամ զականջս իւր, կամ որ ունիցի զձեռս իւր կամ զոտս իւր կամ զաչս իւր կամ զգլուխ իւր կամ զհոնգս իւր կամ զծունկս իւր կամ զամենայն ոսկերս իւր կամ զամենայն ազգս իւր, կամ որ ունիցի

այլևս աւուրս վաթսուն և վեց նստէր ի տան. ընդ ամենայն աւուրս ութսուն, կրկնապատիկ քան զառաջինն: Իսկ ի լրանալ աւուրցս սրբոյն Նորա ի վերայ ուստերն կամ դստերը, բարձեալ մօրն զմանուկն ի գիրկս՝ երթայր ի խորանն վկայութեան, մինչեւ էր կառուցեալ տաճարն, զի այնուհետեւ անդ պարտ էր երթալ. տանելով ընդ իւր գառն տարեւոր, կամ զոյգս աղաւնոյ, կամ տատրակի. զորս առ դրան խորանին յանձնէր ի ձեռս քահանային, մատուցանել առաջի՝ ան զգառն յողջակէզ. իսկ զաղաւնիս վասն քաւելոյ զնա յօրինական պըղծութենէ, և յախտաւոր ցանկութենէ, որ զուգընթաց է ընդ յղութեան. իսկ ըստ ումանց և վասն քաւութեան սկզբնական մեղայ մանկան ընդ մօրն: Այլ աղքատք, որք չէին ձեռնհաս առնուլ գառն, տանէին երկուս տատրակս, կամ երկուս ձագս աղաւնեաց. զմիոյն յողջակէզ, և զմիւսն վասն մեղայ:

Այլ թէ առ ինչ այս խոսիր կամ զանազանութիւն ի մէջ ծննդեան արուի, և իգի, խնդիր է դժուարին. որ բազումն աչխատ արար զմեկնիչս. այլ ցարդ ոչ ընթերցաք լուծումն լիով հանդուցիչ մեզ մնաց: Ամենք զնական սկզբամբ կամեցեալ լուծանել, ասեն՝ թէ արուն յղայեալ՝ վաղագոյն ընդունի զձև կերպարանաց, և զգօրութիւն շարժուղական քան զէգն. վասն որոյ և սովորաբար առաւել արագ և առաւել հեշտաւս ծնանի քան զէգն. նորին աղագաւ և մանրք ի ծննդեան արուաց վաղագոյն սրբին յարեանէ, չունելով պէտս երկար ժամանակի: Այլ ըստ ներհուն զնագետ բժշկաց՝ այս կարծիք ըստ երկուց մասանց ևս դեղեւի. քանզի ուստի՞ ունին հաւաստել, եթէ արուք վաղագոյն կերպանան յարգանդի քան զէգս, և թէ առաւել հեշտաւս ծնանին. ուր հանապազորդ փորձն (ասեն) ուսուցանէ մեզ՝ երկոցունց ևս միապէս բերել առ ծնունդ. իսկ դժուարութիւն ծնընդեան, կամ դժուարածին լինել՝ յայլ զանազան պատճառաց կախեալ կայ: Այսպէս և այն չէ հաւաստի, թէ երկարագոյն ձգիցի արտահոսումն մօր

զկնի ծննդեան իւրմէ՝ քան արուի. քանզի երբեմն
ընդ հակառակն լինի. զի այդ կախի զարամադրու-
թէ մօրն։ Լաւլը կամեցեալ ըստ խարակտն օրի-
նաց լուծանել զինդիրն, ասէն թէ այն կրկնա-
պատկեալ ժամանակ պղծուելոյ՝ի ծննդեան իւրմէ
մասամբ ինն հայր առ ծնեալն, և մասամբ ինն առ
մայրն։ Վասնզի արուն յուղերորդ աւուր թլփա-
տեալ՝ հեղմամբ արեան իւրոյ վճարել զմանն ժա-
մանակի մաքրութեան. որով մօրն մնայ վճարել ըզ-
կէտն ևեթ, այսինքն զեօթն օր։ Իսկ վասն ծնելոյ
դեռն իւրմէ, մայրն պարտաւորի վճարել զերկուան-
դակն. ուստի և կրկնապատիկ տևողութիւն ժամա-
նակի։ Լաւլ որպէս առաջինն, նոյնպէս և այս չու-
նելով հինն ինչ՝ի ձեռ դրոց, է անբաւական՝ի լու-
ծումն խնդրոյն։ Վասն որոյ չունիմք առ այս այլ
ինչ հաւաստիս, բայց զկամն օրէնսդրին. քանզի
ասել՝ թէ արուն նախապատիւ է քան զէգն, և
այլ այսպիսի ինչ, արտաքոյ է խնդրոյս։

Այդ օրէնք էին և յաղագս ամենական բղխման
արեան կանանց. որպէս և յաղագս արանց, որք
ծորումն՝ի մարմնոյ կրէին. զի և նոքա զեօթն օր
պիղծ լինէին, և այն ոչ ինքեանք ևեթ, այլև այն
ամենայն, յոր ինչ նոքա մերձենային. որպէս անկո-
ղին, յորոյ վերայ նստէին. տեղի՝ ուր նստէին,
հանդերձք, և ամենայն անօթք և կարասիք, զոր
շօշափէին, պղծեալ համարէին. մինչ զի և այլք՝
որք մաքուր էին, եթէ հպէին՝ի մարմին նոցա,
կամ յիւրս շօշափեալս՝ի նոցանէ մերձենային, պիղծ
լինէին մինչև ցերեկոյ. և ապա ողողեալ զհան-
դերձս, և զմարմինս իւրեանց ջրով լուացեալ,
սրբեալ լինէին յանմաքրութենէ անտի։ Այորին ա-
ղագաւ կանայք տեառատեաք՝ի ժամանակս դաշտա-
նի իւրեանց, և արք սերմնականաք՝ընդ այն եօթն
աւուրս մնաքրութեան, կային զատուցեալ յամենայ-
նէ, որպէս ասացաք՝ի վերոյ վասն աղտաբեր կա-
նանց։ Եւ ապա համարեալ աւուրս եօթն՝ի դա-
դարելոյ հոսման, յաւուր ութերորդի առնուին
երկուս տատրակս, կամ երկուս ձագս աղաւնեաց,

և տարեալ ՚ի դուռն խորանին վկայութեանն, տային ցքահանային մատուցանել նոն, զմին յողջակէզ, իսկ զմիւսն վասն քաւութեան ՚ի մեղաց պղծութեանն։

Ամէն օրինադրութիւն, որպէս և այլ սոյն նման խորհրդական օրինաց, կամէր ոճ ուսուցանել ժողովրդեան իւրում զպարկեշտութեան, և տպաւորացուցանել ՚ի միտս նոցա զծայրագոյն խորհուրդն և զգուշութեան յամենայն աղտեղութենց, ոչ միայն իրակա նաց, այլ նաև ՚ի կասկածելեաց։ Ամէն գիտէր գնոսա յօժարեալս ՚ի ներքնատ՝ ոչ ՚ի կռատպաշտութեան եւեթ, այլև յամենայն տեսակս ցոփութենէ և անառակութենէ. զորս չէր մտրթն այլազգ սանձել, և ՚ի տաճման ուղիղ քանակութենէ ցանկապատել, ևթէ ոչ խոստութեամբ օրինաց։ Ասէ երկրորդ՝ զի ընտրեսցէ գնոսա ՚ի յամենայն ազգաց, ուստի գնոսա իւր սեպհական ժողովուրդ, և առանձին գերդաստան. յորոց միջի կանգնեալ գնորսն վկայութեան որպէս տուն իւրումն քնակութեան, կայր հանապազ ընդ նոսա, խնամարկել և ուղղել գնոսա յամենայնի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Ասէ այնպէս ոչ միայն խորանն, այլև համբերն քանակեաղն նոցա սրբազան էր, վասն շրջելոյ ՚ի նմա. նմին իրի կամէր զի այնպէս կեցցեն նոքա ՚ի քանակի անդ, որպէս քահանայք ՚ի տաճարի։ Աման այնորիկ ըղկատարեալն խնդրեր ՚ի նոցանէ մնքրութեն. մինչ և ակամայ պղծութեն էներել. զի անպատուութեի մեծ էր այն ներկայութեն նորայն մեծվայելչութեն։ Օ սոյն ակնարկէ պատուերն ՚ի առ մովսէս և առ ահարոն, յասելն։ * Օ գուշացոյնս առնիցէք զորդիսն իսրայէլի ՚ի պղծութենէ իւրեանց. և ոչ մեռանիցին վասն անսրբութենէ իւրեանց, առ ՚ի պրղծել նոցա զխորանն իմ, որ է ՚ի նոսա ‖. ղևտ. ԺԶ. 31։ Ամէն զի այն լուացմունք և զգուշութիւնք օգտակար են յոյժ և մնրմնոյ առողջութեն։

Ասէ խոստացոյն քան զայս՝ էին օրինք ընդդէմ բորոտութենէ, յաղագս զգրութեն և տպեղութեն տախտին, և վասն տարափոխիկ լինելոյ՝ ՚ի միոյ ՚ի միւսն անցանելով։ Աման այնորիկ այնչափ զգու-

չութիք և մանրազնին դիտողութիք գնեին ոչ միայն գիսական բորս, այլև գհեռաւոր նշանս և գբիծս։ Օր յորժամ ի մարմնի ուրուք երևիր նշան սպոց, կամ բիծ, կամ պալար, կամ կեղ, և կամ գիարդ և իցէ արած, պարտ էր վաղվաղակի ցուցանել զանձն քահանային. որք թուի թէ կարի հմուտ էին յընտրութիւն այսպիսեացս. գի ըստ հրամանի նո՝ նոցա էր յանձնեալ դիտողութիւն և որոշումն այսպիսի կասկածաւոր արածից. այլ ոչ դարմանն բժշկութիւն. գի զայն ախտացեալն ունէր ինդրել ի ձեռն գեղոց և բժշկաց։ Այլ գկնի ամենայն զգուշութիք գնեելոց քահանային զարածն, եթէ իկարէր հաւաստեաւ որոշել՝ թէ իցէ այն նշան բորոտութիւն, կամ գևթ սկզբնաւորութիւն և պատրաստութիւն առ այն, զատուցանէր զախտացեալն մեկուսի յայլոց գեօթն օր. յորս մարթ էր ախտին յերևան գալ։ Այսպա յաւուրս ութերորդի վերստին գներ զարածն. զոր թէ գտանէր որպէս յառաջն՝ առանց նոր այլայլութիւն ինն գտանելոց ի նմա, գարձեալ պահէր գնա զատուցեալ այլևս գեօթն օր. և գկնի չորեքտասան աւուրց, եթէ տեսանէր գի չէր աձեցեալ արածն, և ոչ այլ գ ունէալ, և ոչ մազն որ ի վերայ նորա ի սպիտակ փոխեալ, վճռէր լինել պատահական ինն բիծ անցաւոր և անվնաս։ Այսան որոյ և հրամայէր նմա լուանալ զմարմին իւր և զհանդս ի ջուր. և այնպէս արձակէր գնա յորգ եղանայ զգուշութիւն։

Իսկ եթէ նշանքն գհակառակն ցուցանէին՝ իբր իսկական բորոտութիւն, կամ գևթ սկզբնաւորելոց, յայնժամ խոպատ որոշէր գնա յամենայն կենակցութիւնէ մարդկան. և այնուհետեւ բնակութիւն նորա լինէր արտաքոյ բանակին, նստեալ մեկուսի ի սուգ, գհանդերձս պատառեալ, զգլուխն գերծեալ, և զբերանն պատեալ, մինչև ապաքինէր։ Այս ամենայն արտաքին սգոյ կերպարանք ցուցանէին գնա պիղծ, ուստի և խորհելի. առ որ թէ ոք մերձենայր, կամ կենակիցք ընդ նմա, ի նոյն պատիժ անկանէր։ Այս օրինաք էին և վասն նոցա,

որք բորս , կամ այլ ինչ կեղտ , և խոցս ունէին ՚ի գլուխս և ՚ի մօրուս . յորս զնոյնօրինակ զգուշութիւն ՚ի կիր արկանէին : Օ ի գերծոյր քահանայն ըզմազն ողջոյն՝ բաց ՚ի տեղւոյ կեղտին . և զկնի երկուց եօթնեակաց ՚ի կրկին անգամ զնոյնէն զարածն , եթէ տեսանէր զայն տարածեալ , այնուհետեւ իբրև բորոտ զատուցանէր զնա յայլոց :

Ո՚ր բանիցն մովսիսի որ ՚ի ՃՃ . Ի՛ . Ղ՛ . ուր օրինադրէ վասն բորոտութեան մարմնոյ , հինգ նշանք բորոյ հաւաքին . Ա՚յսխ՝ բիծ կամ պաղատ սպիտակ ՚ի մորթ մարմնոյն խորագոյն քան զչորթակայ մորթն . և մազք նորա ՚ի շիկագոյն կամ ՚ի թխադոյն փոխեալ : Ա՚ղբորդ՝ պալարք ՚ի մորթն սրփռեալք կարմրագոյն յարմատն , բուսեալ ՚ի կեղդանի և յառողջ մարմնի , նշան են հնացեալ բորոյ : Ա՚ղբորդ՝ գնատակացեալ սպի ողջացեալ կեղոյ սպիտակ փայլուն լինացեալ . կամ կարմիր փայլուն , և գնստագոյն քան զչորթակայ մորթն , և մազք որ ՚ի նմա ՚ի սպիտակ փոխեալք : Ղ՚արբորդ՝ ՚ի գլուխն խորագոյն կեղտ . և հերք ՚ի խարտեաշ կամ ՚ի շիկագոյն փոխեալք : Հ՚ինգերորդ՝ ՚ի ձագատ գլուխ արած սպիտակ , կամ կարմրացեալ , նշան է թէ բորոտութեն կայ թաքուցեալ ՚ի կրնտութեն կամ ՚ի ձեղութեն նորա : Ի՚սկ նշանք ոչ էին միատեսակ , այլ բազմատեսակ բորոտութեց ցուցակ . որք թէպէտ թէ յառաջեալ էին յայնժամ առ եբրայեցիս , ըստ ոմանց՝ բերեալք ընդ ինքեանս յեգիպտոսէ . թերևս ՚ի ջերմութենէ օդոյ երկրին , և ՚ի խոշոր կերակրոց , և ՚ի գծուծ և յաղտեղի կենաց նոցա պատճառեալ . յորոց ապա կանի արիւնն , և անտի ՚ի վեր երևին այնպիսի կեղք զպիրք և փոխադրականք : Ա՚յլն իբր առ սրբեալց զնոսա յայնպիսի աղտեղութենէ՝ այնչափ ՃԻՀԴ խորութենիք կերակրոյ պատուիրեցան նոցա . և այնչափ լուացմունք , և զատուցմունք , և այլ բիւր զգուշութիւնք և մաքրութիւնք՝ ոչ միայն ՚ի մարմնոյս իբրեանց , և ՚ի հանդերձս , այլև ՚ի բանակին ողջոյն . զի մի աղտեղութեն ինչ երևեսցի ՚ի նմա :

ԳԼՈՒԽ Ե՛

Ողբևոյ վասն բորոտութեան Հանդերձից և պանոյ։

Յետ մաքրելոյ բորոտութենէ, աւանդէ Տէրն մովսէս պատուէրս և վասն բորոտութեան հանդերձից և տանց։ Եթէ ասէ, տեսանիցէ ոք ի մորճ ասուի կամ կտաւի, յառջ և ի թեզան, և յա մեհեան մաչկեղէն հանդերձ՝ արած կանաչացեալ և կարմրացեալ, կասկած բորոտութենէ է։ Ապա որոյ ցուցցէ զմորճն քահանային, և նորին հրամանաւ ղեւթեն օր զատուցեալ վակեալ պահեսցէ. և եթէ ընդ այն աւուրս արածն սփռեսցի ի մորճն, նշան է թէ զգածեալ է բորիս, ուստի և ի հուր այրեսցէ։ Ապա եթէ չիցէ սփռեալ արածն, լուասցէն զհանդերձն. և պահեսցէն ուրոյն այլեւս եօթն օր. և յետ այնորիկ թէ և արածն չիցէ տարածեալ, և ոչ տեսիլն փոխեալ, բայց եթէ տակաւին կայցէ, այրեսցի իբրև ալիղձ. զի հասատաւեալ է ի նմա արածն։ Իսկ եթէ տեղի արածոյն խոցաղոյն իցէ, այլ գոյն նորա և այլ հանգամանք չիցեն փոխեալ, և ոչ յայլ մասունս հանդերձին նոր արատ ինչ երևեալ, յայնժամ այն մասն ուր արածն է, ի բաց հատցի ի հանդերձէն, և այրեսցի։ Ապա եթէ ի լուանալ հանդերձին, եւանիցէ ի նմանէ արատն, դարձեալ կրկին լուասցի, և այնպէս ոչ ելցի։ Այս պատուէր է մովսիսի յաղագս բորոտութեան հանդերձից և ամենայն ասուեայ կամ կտաւի և կամ մաչկեղէն ձորձոյ. այլ թէ զինչ իմանայ այսու, դժուարին է դուշակել։

Ամենք իմանան զայն յաղագս ցեցակեր հանդերձից. զի ասեն՝ թէ ցեցն, որ է որդն կամ ձմի փոքրիկ, ի հանդերձէ անտի դայանայ, որպէս բոր ի մաքրելոյ. և ուսեալով մաչէ և ապականէ զհանդերձս, մանաւանդ զասուեայս, և որոց անկ-

ուած խառն էին ցաւուց և՝ ի կատուց։ Ոչ այս և դեռ, այնուհետեւ յարմարեն և զնոսա յիշատակեալս՝ ի մէջս իւրեանց։ Այլ՝ զի ցեղք ծաւալական են, և դիւրաւ փախադրին՝ ի միոյ յայլ։ Նա երկրորդ՝ զի տեղիք կերեալք՝ ի ցեղոյ յայլ գոյն փոխին՝ քան զառաջն մասունս հանդերձին. և արատն զնոտագոյն է իբր խանձեալ՝ ի հրոյ։ Այլ ոչ իբրև ասեն յերեւեալ՝ ի հանդերձս հաւասատի ինչ նշանի այնպիսի բորոտութեանն, հրամայէ զի այրեսցի վաղվաղակի. Թերեւս զի անհնար երեւէր այլազգ մաքրել՝ ի ձՀեաց անտի. Մանաւանդ յորժամ յաձախեալ իցեն՝ ի հանդերձն. որպէս Թուի Թէ լինելոր՝ ի ջերմագին գաւառսն յայնոսիկ։ Նա յայս այսպիսի մասն երեւի. Նախ՝ ի գոյն. զի մինչեւ կանաչեալ կամ կարմրացեալ ասէ. իսկ ցեցակերք արածք սովորաբար են՝ ի գոյն հանդերձին. այն զի և ցեցք իսկ՝ ի նոյն գոյն համակին. և ոչ Թէ զգոյն իւրեանց փոխեն, եԹէ ոչ յորժամ ենԹակայ նմին. Թոյն յայլ գոյն իցէ։ Երկրորդ՝ զի Թէպէտ արածն զնոտագոյն է. իբր զի ուտելով ցեցոյ զնորագոյն Թաւ մասունս չուխայիկ՝ խորանոյ տեղւոյն. բայց այնուհետեւ երբէք ոչ լնու և ոչ հաւասարի ընդ կայ մասանց. և ոչ անհետանայ, Թէպէտ և բազում անգամ լուասցի. ուր մինչեւ զայն նշան գնել սրբուԹեան և մաքրուԹեան, յորժամ ոչ ևս երեւեսցի բիծն։ Նա երրորդ՝ զի զայս զգուշուԹիւն պատուիրեաց մինչեւ, զի մի՛ ախան՝ ի հանդերձից փոխեսցի՝ ի մարդիկ. իսկ երբէք ոչ լուաք, Թէ ցեցք փոխեսցին՝ ի հանդերձից՝ ի մարմին մարդոյ. ուր ընդ հակառակն, ի զգենուլ մարդոյ զայնպիսի ցեցոտ հանդերձս, առանց այլ ինչ գործանոյ ինքնին անհետանան ցեցք՝ եԹէ կայցեն՝ ի նմա, լոկ՝ ի հոտոյ մարմնոյն։ Նա ևս՝ զի մինչեւ ընդ առուեայ հանդերձից յիշէ և զկտաւս, յորս սովորաբար ոչ գոյանան ցեցք։

Ասան որոյ առաւել յարմար և հաւանելի երևի կարծիք այլոց, որք զայս պատուէր իմանան յաղագս հանդերձից, զոր զգեցեալ իցեն քաղաքա-

մինաւանդ վասն շաւղի նոցա, որ անմիջապէս շշաւիղ զմարմինն. յորմէ արագագոյն փոխադրի ախտն յայլ՝ քան մերձենալով կամ հպելով ձեռամբ ի բորոտն: Այնպէս ժահր նեխեալ թարախոյ, կամ այլ հիւթ խիժային ժանտ և կծու սրբեալ ի մարմնոյ բորոտին, և ծաւալեալ և մածեալ ի հանդերձս՝ ընդ զամենայն ծակտիս նորա. և յայնժամ երևին ի նմա գոյնք նշանակեալք ի մոլսիսկ կարմրացեալ կամ կանաչացեալ և կամ դեղնացեալ. և կծուռթիւն ուտէ և մաշէ: Աստի և ի լուանալ զայնպիսի ձորձս՝ հաղիւ երբեք լինի չպատառիլ. և արատքն դժուարաւ մաքրին, եթէ այն ժանտալից հիւթք երկար կացեալ տարբացեալ իցեն ի նմա: Ասան այնորիկ հրամայէ մովսէս պրել զայնպիսի ապականեալ հանդերձս, զի մի ոք զգենուցու զայն, և հարցի ի բորոտութէ. քանզի սրդոսրև չէր բնաւ օգուտ բորոտին դարմանն, եթէ զնոյն շարաւանից հանդերձ միւսանգամ զգենոյր: Ոսոյն զայս զգուշութէն հանդերձէից առնէն և բժիշկք, ի բուժել զայսպիսի ախտացեալս, նորս զգեցուցանելով նոցա, զի մի ի հնոյն ախտն անդրէն դարձ արասցէ ի նոսա: Այսչափ ինչ վասն բորոտութէ հանդերձէից:

Իսկ յաղագս բորոտութէ տանց՝ այս էր օրէնն պատուիրեալ ի մովսիսէ: Ո ի յորժամ յորմն տան ուրուք երևէր անհաւասարութէն կամ երևիլ կասղագոյն կամ կարմրացեալ, պարտաւոր էր տուն տէրն վաղվաղակի ազդ առնել քահանային. և նորա եկեալ և զննեալ, հրամայէր ի բաց հանել զամենայն կահս և զկարասիս ի տանէ անտի. և զեօթն օր փակեալ պահել զտունն: Այսպէս յաւուր ութերորդի զննէր քահանայն միւսանգամ զտունն. եթէ տեսանէր զարածն տարածեալ և զխնան աձեղեալ, հրաման տայր քակել զքարինս՝ յորս արածն իցէ, և արտաքոյ քաղաքին յանդր տեղի ընկենուլ: Այնպէս և զձեփ որմոյն քերել. և ըզքերուածն ըստ նմին օրինակի արտաքոյ քաղաքին յանդր տեղւոջ ցրուել. և նոր քարինս դնել փո

խանակ այնց արատաւորը քարանց, և նորը կրով ծեփել ըղձմն: Ա.պա տանուտէրն առ՝ի սրբելոյ տանն մատուցանէր երկուս հաս կամ թռչուն կենդանիս սքօ առ քահանայն. և փայտ եղևնեայ, և կարմիր մանեակ, և ղսպայ. և զմի հաւն զենոյր քահանայն, և զարիւն նորա քամէր յամանն խեցեղէն՝ի վերայ կենդանի ջրոյ. ապա զկարմիր մանեակն և զղսպայն և զհաւն կենդանի հանդերձ եղևնեայ փայտիւ թաւայեալ՝ի ջրախառն արեան հաւոյն սպանելոյ, յանկը նոքօք զտաճկն եօթն անգամ. և աղօթս առնէր վասն տանն, և այնպէս մաքրեալ և սրբեալ լինէր տունն. իսկ զհաւն կենդանի արձակէր արտաքոյ քաղաքին՝ի դաշտ անդր: Ա.պա եթէ յետ այսր ամենայնի, անդրէն՝ի վեր երևէր արածն, նշան էր թէ խսպառ տարրայեալ է՝ի նմա բորոտութիւն. ուստի և այնուհետև սպիտան՝ի քնակութէն. վասն որոյ և՝ի հիմանց քակէին զտունն. և զաւերակս նորա բովանդակ հաներէին արտաքոյ քաղաքին՝ի տեղի անբեր: Ա.յս օրինք էին որդւոցն իսրայէլի ոչ վասն առաջնոյ վիճակի նոցա, զի չունէին նոքա յանապատի անդ տունս, այլ յաղագս ապագային, զոր հանդերձեալ էին ունել յերկրին քանանացւոց, ուր դէմ եգեալ երթային:

Ա.յս բորոտութէն տանց՝ ըստ որում մեկնեն ոմանք, ոչ այլ ինչ է, քայց յոռի իմն տրամադրութէն որմից պատճառեալ յաղի՝ի բորակոտ և՝ի ծծմբային մասնկանց. որք խոնաւութէք օդոյն լուծեալ, և ընդ նրբագոյն ծակտիս քարին անց ընդհատաբար՝ի ներքս սողոսկեալ, ուստեն և մնչեն զկակղագոյն զօդուածս մածուցիկս գոյացութէն քարին. որով կարծրագոյն մասունք նորա աւազանման փշրին: Ա.ւ յայնմանէ արածք կանաչք կամ կարմրացեալ ծաւալին յորմն, որպէս զոր՝ի մարմնի մարդոյ. և ծեփն թօթափի, և շոգիք ժանտք բորակային՝ք յորմոյ անտի սփռեալ՝ի ներքս՝ի տուն անդր, և ապականեալ զօդն, պէսպէս ախտս պատճառեն՝ի քնակիչս. թէպէտ զի և տունն

խակ վտանգաւորի, եթէ ընդհակառ Թագուհի անխնամ. մանաւանդ եթէ իւր ի ձախին և ի բորբոքուստ տեղւոջ. ուր առատութեամբ խնամոյ կարի լինն ներգործել՝ զանհնային ի փառս ի տանելով: Այս պատճառաւ ի բնական սկզբանց յառաջ քերան, ըստ որում և առ մեզ սովորաբար տեսանեմք պատահել. սակայն են ի մեկնեալ զրոց ոչ աննշանք ոմանք, որք որպէս զայլ զանազան նոբանչան հարուածս երբայեցւոց, նոյնպէս և զայս մանաւանդ լինն պատիժ համարին առաքեալ յիւ ի վերայ նոցա վտան մեղաց իւրեանց: Այս երեւի ակնարկել և նա ինքն ածայինն մովսէս, յասելն ի գլխոց ոչ. ղեւտ. ժէ. 34. * Յորժամ մտանիցէք յերկիրն քանանացւոց, զոր ես տաց ձեզ ի ստացուածս. և տայցեմ արած բորոտութիւն ի տունս երկրին ստացուածոց ձերոց: Այս երեւի թէ այն բորոտութիւնք այլ ինչ թէ նշանաւոր որակութիւնք էին, կամ ըստ արդի փիլիսոփայից ատացից՝ մանկուցնք, որք ոչ միայն յորմունս, այլև ի մարդ և ի կարասիս տանն կարօղ էին ներգործել զապականութիւն իւրեանց, որով և զնոտ փոխադրական պատճառել. յայլ սակս և հրամայէր մովսէս՝ զտունն ի հիմանց քակել. և զաւերակն չառնուլ ընաւ ի գործ. ոչ միայն զբաղնիս, այլև ոչ զիայտեղնոյն:

Նոյնպէս առ սրբեղոյ մարդկային բորոտութեանց այս էին օրէնք: Յորժամ ոք ապաքինեալ ողջանայր ի բորոտութենէ, էր օրէն նմա վաղվաղակի ինքնին երթալ մտանել ի քահանան: Այլ պարտապան էր ազգ առնել քահանային. որոյ երեսաց արտաքոյ բանակին և գնեալ գնա, իբրև գտանէր առնոյն իրօք մաքրեալ և սրբեալ, մինչև երեւել ի մարմնի նորա այնուհետեւ արած կամ կեղ լինչ, հրաման տայր նմա մատուցանել երկուս հաւս սքիս, և փայտ եղևնեայ, և կարմիր մանեալ, և զոպայ. և կատարեր նոքօք քահանայն զայն առնոյն, զոր ի վերոյ նշանակեցաք վասն սրբութեան տանց: Յետ այնորիկ լուանայր սրբելին գՀանդերձս իւր. և գերծայր զառնոյն մազ մարմնոյ իւրոյ. և լուա-

նայր ՚ի ջուր զմարմին իւր. և այնպէս ապա մնաս ներ ՚ի բանակն։ Այլ մնայր արտաքոյ տան իւրոյ այլևս ընդ աւուրս եօթն առ առաւել ապահովու-թեան. զի մի գուցէ մնացուածք ինչ բորոյ ծածկեալ կայցէ ՚ի նա, և ՚ի մերձենալ առ ընտանիս, և մա-նաւանդ առ կին իւր, նորոգեսցի բորն և փոխես-ցի ՚ի նոսա։ Այսպա յաւուր ութերորդի՝ դարձեալ գերծայր զամենայն մազ մարմնոյ իւրոյ, և զգլուխ և զմօրուս, և զյօնս. և վերստին ողողեր զՀան-դերձս, և լուանայր զմարմին իւր ջրով։ Եւ ապա մատուցաներ երկուս գառինս տարեւոս անարատս. և որոջ մի անարատ տարեւոր. ընդ նոսին և նաշիհ իւղով զանգեալ, և չափ մի իւղոյ ամանով։

Եւ առեալ քահանային զայրն սրբեալն և զնուէրս նորա՝ կացուցանէր յանդիման դրան խորանին վը-կայութեան. և զենայր զմի ՚ի գառանցն. զոր առեալ ՚ի ձեռին՝ ընդ նմին և զիւղն, և զնաշիհ զանգեալ իւղով, և ամբարձեալ ՚ի վեր, մատուցանէր առաջի Տեառն՝ վասն յանցանաց։ Յետոյ զենայր և զմիւս գառն որ վասն մեղաց ՚ի տե տեղւոջ ՚ի ձախակողմն սե-ղանոյ ողջակիզացն. ուր զենուին զվասն մեղացն, և զողջակէզն. և առեալ քահանային յարեւնէ նո-րա՝ օծանէր զլեթակ աջոյ ունկան սրբեցելոյն, և զբոյթ աջոյ ձեռին, և աջոյ ոտին նորա։ Եւ ար-կանէր քահանայն ՚ի ձախոյ ձեռին իւրում ՚ի նա-խագրեալ իւղոյն, և թացեալ ՚ի նմա զաջոյ մատն իւր, ցանէր եօթն անգամ առաջի վարագուրի սրբութեանն սրբութեց. և նովին իւղով օծանէր զլեթակ աջոյ ունկան, և զբոյթն աջոյ ձեռին և ոտին զօծեալս արեամբ. իսկ զմնացեալ իւղն որ ՚ի ձեռին իւրում՝ հեղոյր ՚ի վերայ գլխոյ սրբեցելոյն։ Յետ այնորիկ զենայր քահանայն և զողջակէզն. զոր հանէր ՚ի սեղան առաջի Տեառն. ընդ նմին և ըզ-ղոհն, այսինքն զպատաջադրեալ նուէրս նաշհեայ և իւղոյ։ Եւ այսու կատարէր հանդէս սրբեցելոյն ՚ի բորոտութենէ։ Իսկ եթէ սրբելին չայ քաւտաց ոք էր, շատ էր զի մատուսցէ գառն մի վասն յանցա-նայ. և երկուս տատրակս, կամ երկուս ձագս ա-

զանեաց, զմին վասն մեղաց, իսկ զմիւսն յողջակէզ. և իւղ և նաշխոյ զանգեալ իւղով ըստ վերոյգրելոցդ։

ԳԼՈՒԽ Ը.

Օրէնք վասն ծնկիդ Ահարկի. Պէնդէկոստէին. և Տաղաւարտահարաց։

Առաջին և նախապատիւ տօն երբայեցւոց էր Պասեք, կամ պասքա, այն է Ազատիկ, ի յիշատակ անցիցն եղելոց յաւուր անդ ելից նոցա և ազատութեանն ի գերութենէ եգիպտացւոց։ Այս տօն զառաջինն կատարէին յերկուտաս ի նմին երեկոյի, որոյ զմէջ գիշերաւ հարան և մեռան ամենայն անդրանիկք եգիպտացւոց. յորմէ ստիպեցան եգիպտացիքն վաղվաղակի գիշերայն արձակել զնոսա։ Ոմանք այնորիկ հրամայեցաւ նոցա զայն տօն ի յաւէժական յիշատակ մեծի բարերարութենէն կատարել ամի ամի ի չորեքտասաներորդն նիսան ամսոյն. (որ համեմատի ամսոցն Հռովմայեցւոց՝ ըստ մասին մարտի, և ըստ մասին ապրիլի.) զի ի նմին գիշերի եղև ելք նոցա։ Ուստի և այն ամիս եղև առաջին, զի անտի սկիզբն կալաւ Թուականն Եկեղեցական կամ սրբազան տարւոյ նոցա, ըստ որոյ կարգաւորեն զտօնս իւրեանց, և զամսագլուխս, և զՀամաճխութիւնս։

Ասկ օրինք տօնախմբութենէ զատկին այսպիսի էր։ Առաւր եօթն տօնէին. բայց առաջին օրն միայն՝ և եօթներորդն էին նուիրեալք և շբթ. յորս արգելեալ էր նոցա ամենայն գործ ծառայական, բաց ի կարևոր անձնական գործոց իւրաքանչիւր անձին։ Վանգն այն աւուրք զատկի չէին այն

պէս Ճշմիւ պարտաւորեալ, որպէս աւուրք շաբաթուց, յորս չէր օրէն և ոչ գնարևոր կերակուր աւուրն պատրաստել. որպէս յայտ է՝ ելից. ժԶ. 23։ Եւ սի Թէ զառաջինն օրն ՚ի պահէին ՚ի յիշատակ աղատութեանն յեգիպտոս. իսկ զեօթնեորդն ՚ի գոհութեանն երկրորդ փրկութեանն իւրեանց յընկղմման անդ փարաւոնի և ամենայն զօրաց նորա ՚ի ծովն կարմիր. որ եղև յեօթնեորդ աւուր զկնի ելից իւրեանց։

Եւ նախընթաց երեկոյէ անհետ առնէին ՚ի տանց իւրեանց զամենայն խմոր և զխմորեալ, զի յայն եօթն աւուրս քաղցրչ և եթ ուտէին, առ ՚ի յիշատակ շտապողական ելից իւրեանց, որով ստիպեցան առանց խմորելոյ բառնալ զզանդուածն կամ զալիւր իւրեանց։ Եւ իւրաքանչիւր տանուտէրն՝ Թէ միայն իւրովք ընտանեօք ՚ի սեպհական տան իւրում քնակեալ, և Թէ ընդ այլում, առնոյր գառն յօդեաց, կամ ուլ յայծեաց արու անարատ միամեան, կամ իթր ուեթամնեան և կամ լինամնեան, ըստ բաւականի կամ ըստ համեմատութեանն ընտանեայ իւրոց։ Եւ զի ոչ միշտ հաւասար է Թիւ արանց և կանանց ՚ի միում տան քնակելոց, վասն այնորիկ չաւել մնվսէս, Թէ ուր սակաւ իցեն ընտանիք, առցէ տանուտէրն և ՚ի դրացեայ իւրոց կամ չազգականաց, որչափ բաւական իցեն ուտել զգառն ողջոյն. զի մի ինչ չաւելցի անտի։ Ո Թիւ անձանց Թէ քանի իցեն, ոչ նշանակէ մնվսէս, բայց ըստ որում իմանալի ՚ի յովսեպոսէ, չէին պա, կաս ՚ի տասանց, և ոչ աւելի քան զքսան ՚ի մի սեղան. յայս հաշիւ ըստ ասելոյ ոմանց՝ ոչ մտանէին կանայք, և տղայք։

Եւ ընդ երեկս ամենուն չորեքտասանեորդի յինն ներորդ ժամու աւուրն՝ յերրորդ ժամու զկնի միջօրէի՝ զենուին զգառն. ՚ի սկզբան անդ՝ մինչև էր հաստատեալ ՚ի նոսա կարգ քահանայական, տանուտեարք, կամ անդրանիկք. այլ յետ այնորիկ քահանայից էր այն պաշտօն։ Եւ խորովէին հրով զգառն ամբողջ՝ հանդերձ գլխովն, և ոտիւք, և փա-

բոտեաք. և ՚ի նմին երեկոյի, յորում սկսանիր հնգետասաներորդ օրն նիսան ամսոյն, ուտիլն զգառն բաղարջ հացիւ, և դառնձմով. առանց ընաւ բեկանելոյ զոսկր ինչ՝ ՚Թէպէտ և փոքրիկ. զոր և ՚ի վաղիւ անդր այրեին հրով, որպէս և ՚ի մոյ ելիթ գոյր ինչ յաւելեալ. վն մի ինասցէ ինչ ընաւ ՚ի նմանէ: Յառաջնում զատկի, զոր արարին որդիքն իսրայէլի, և այլ ըսնազան արարողութիք հրամայեցան նոցա ՚ի մովսիսէ. որպէս արեամբ գառինն դրոշմել զերկուս սեամն և զդարաւարս տանց, յորս ուտիցեն զգառինն. և յայնմ գիշերի չելանել արտաքս ընդ դուռն տանց իւրեանց՝ մինչև յառաւօտ. և գօտիք ընդ մէջս, և կօշիկք յոտս, և ցուպ ՚ի ձեռին փութանակի ուտել: Ա.յս ամենայն արարողութիք էին նշան վաղ ընդ փոյթ ձանապարհորդութե. նմին իրի առ այն մի նուազ և ելիթ պատուիրեցան նոցա: Որ յայտ անտի է, զի յետոյ ՚ի խօսել մովսիսի յաղագս ծիսից օրինական զատկին՝ ոչինչ այսպիսի պահանջէ ՚ի նոցանէ. և ոչ յետ այնորիկ յառնել նոցա զզատիկ՝ ընթեռնումք ուրեք պահեալ զայսոսիկ, այլ յանապատին, և այլ յերկրին աւետեաց:

Զառն զատկական անարատ՝ զենեալ ՚ի ջրեքտասանն նիսան ամսոյն, ընդ երեկս կիսներորդ ժամ մուտ աւուրն, և ՚ի շամիրոյ անցուցեալ, և խորովեալ և կերեալ ամբողջ առանց ոսկր ինչ բեկանելոյ, եր նախանկար օրինակ քոի փրկչին մերոյ: Որ եր ՚ոչ անմեղ անարատ զատեալ ՚ի մեղաւորաց, մանաւանդ Թէ ինքն սրբութի սրբոց, ՚ի հնգետասանն նորին նիսան ամսոյ ելեալ ՚ի խաչ. և հրով տանջանաց խորովեալ, և կիսներորդ ժամու աւուրն աւանդեալ զոգին, ողջակէզ և զոհ կատարեալ յաղագս մերումս փրկութե. պատուական արեամբ իւրով ազատեալով զմեզ ՚ի գառն գերութէ, և ՚ի յաւիժական դատապարտութէ: Որ և ետ զմարմին իւր կերակուր հաւատացելոց ՚ի խորհուրդ հաղորդութե. ուր ընդ նուաստ և ապականացու տեսա կօք ձուշակեմք զինքն ողջոյն հանդերձ ամենայն

մասամբք, առանց ոսկը բեկանելոյ, կամ յաւելուած ինչ թաղելոյ։

Օրինի տանի զատկին հանդիսանայը տօն Պինտեկոստէի (որ է յուսնարկին լիսներորդ) լիսուն աւուրքը լեռոյ. քանզի ըստ հրամանին մովսիսի գլ. ԻԳ. ւ՟. սկսանելին յերկրորդ օրէ շաբաթուն՝ այսինքն տանի զատկին, կամ բազարջակերաց՝ թուել եօթն եօթնեղորդս. կամ ըստ բնագրին երթայեցւոյ՝ եօթն շաբաթ աւուրս զայս օրինակ։ Օ առաջին շաբաթ օրն՝ որ գայր զկնի առաջնոյ շաբաթու, այսինքն զկնի երկրորդ աւուր տանի զատկին, կոչէին երկրորդ շաբաթ առաջնոյն։ Օ երկրորդ շաբաթ օրն կոչէին երրորդ շաբաթ առաջնոյ. այսինքն զկնի առաջնի շաբաթու։ Օ երրորդ շաբաթ օրն կոչէին չորրորդ շաբաթ զկնի առաջնոյն. և այսպէս ըստ կարգի եօթն շաբաթս կամ եօթնեակս համարէին, ընդ ամենայն աւուրս քառասուն և ինն. որոյ յաջորդ լիսներորդ օրն էր տօն պենտեկոստէի։ Ա՟յս կեզանակ թուելոյ զեօթնեակս ի զատկէ մինչև ցպենտեկոստէ, գոյր և ի ժամանակս առաքելոց. որպէս ընթեռնումք յաւետարանի. ղուկ. է. ւ։ * Եւ եղև ի շաբաթու երկրորդում առաջնոյն անցանելն նմա (յոհ) ընդ արտորայս։ այսինքն երկրորդ շաբաթ աւուր զկնի տանի զատկին։

Ցօն պենտեկոստէին սահմանեցաւ առ ի լիշատակ օրինացն, որք տուան յոյ ի սինեական լերին զկնի լիսուն աւուրց ելանելոյ որդւոց իսրայէլի յեգիպտոսէ. որ և էր նախատիպ օրինակ հնորհացն օրինացն, որ տուաւ ի քրմամբ Հոգւոյն սրբոյ ի վերայ առաքելոց աբանչելահրաշ նշանօք յաւուր պենտեկոստէի ի նոր վերնատունն։ Ի սոյս պարզապէս ի նոր գիրս, թէ արդեօք և զպենտեկոստէն եօթնօրեայ տանէին որպէս զզատիկն և զտօնն տաղաւարաց, եթէ միօրեայ և եթէ. քանզի մովսէս զայս յայտնի ոչ նշանակէ։ Ա՟յլ քանզի և սա մի էր ի գլխաւոր տանիցն հրեից, նմին իրի բազումք համարին, թէ որպէս զայնս՝ նոյնպէս և

զայս եօթնօրեայ տանկին ։ Ինչպէս որպէս տեսաք նեմք ի նբ գիրս՝ հրկայք լեր ի բազում ի մեծամեծ հանդիսասէր տանս մատուցանելին զառաջնապտուղս արդեանց երկրի իւրեանց . որպէս զառաջաւոր որպէս գաբեաց ի զատկին , որ սովորաբար ի սկիզբն հնձոյ գաբեաց անկանէր . նոյնպէս և զառաջաւորս ցորենոյ ի տանի պենտեկոստին նուիրէին . զի թէ և հունձք ցորենոյ յառաջ քան զտանն սկսանէր , բայց չէր օրէն ուտել ի նոր ցորենոյ ամսի , մինչչև էր նախ նուիրեալ ՚ին ի տաճարին ի տանի պենտեկոստէի . յորմէ յայտ է թէ և զայս եօթնօրեայ տանկին ։

Տան տաղաւարահարաց սահմանեցաւ ի մատուցանել ոչ գոհութեի յաղագս պտղաբերութեէ երկրին , որ ամի ամի ընօրհեալ լինէր յառատաձիր պարգեւաց նմ . միանգամայն և ի յաւէժական յիշատակ քառասնամեայ ՚ճանապարհորդուե ընդ անապատս՝ ի խորանս կամ ի տաղաւարս բնակելով ։ Այս տանն ըստ պատուիրելոյ մովսիսի՝ ամի ամի կատարէին յամենայն եօթնեւորդի զինի զատկին , որ յետոյ թշրին կոչեցաւ . (որ համեմատի ըստ մասին սեպտեմբեր տանոյն հռովմայեցւոց , և ըստ մասին հոկտեմբերի .) որ և էր առաջին ամիս քաղաքական տարւոյ նոցա . որոյ ի հնգետասաներորդ աւուր սկսանէին զտանն , զինի ժողովելոյ զամենայն արդիւնս յանդաստանաց ։ Այ եօթն օր տանէին . այլ ի ծառայական գործոց՝ միայն յառաջնում և յեօթնեւորդում աւուր հրաժարէին . և զայն վերջին օր մեծագոյն հանդիսիւ տանախմբէին իբրև կատարումն տանին . զոր օր յովհաննէս աւետարանիչ կոչէ * Վերջին օր մեծի տանին ։ գլ· է· 37 ։

Ընդ այն եօթն աւուրս ամենեքեան ի տաղաւարս բնակէին , լինելով ի թաւ ոստոց ազգի ազգի տերևախիտ ծառոց . և ի ձեռս իւրեանց կրէին ոստս գեղեցիկս հանդերձ պտղովք ընտրեալք հատեալ ի պտղաբեր ծառոց ։ Այլ ձեռս բազուկ մի յարմարեալ պտղալից , և երիս ոստս ի մրտե-

նեաց, և մի յուռեննեաց ի միասին կապեալ. իսկ ի ձախոյ ձեռս՝ ոստ մի նարնջենւոյ հանդերձ պտղով. զորս ստէպ երկու ձեռամբն առ միմեանս բերեալ՝ շարժէին, և կնքէին ի չորս կողմն աշխարհի: Այլ այնպէս երթեալ ի տաճարն յաւուրն միանգամ ընդ բազմանգակ ժամանակին տանին, շուրջ պատէին զսեղանով ողջակիզաց. իսկ որք հեռի էին բնակութեամբ յեղեմայ, ի ժողովգանոցն երթային, ուր շուրջ եկեալ զամսիոնն՝ ուրախութիւն օրհնէին զնոճ ովսաննայ երգովք: Այլ յաւուր եօթներորդի՝ բաց ի հանապազորդ սովորական զոհից և ողջակիզաց, զոհէին զուա րակս երկուս, և խոյ մի, և գառինս եօթն. և նո խաղ մի վասն մեղաց. թող զնուերս նաշխոյ, իւղոյ, կնդրկի, և այլն: Այս այնու կնքելով զհան գէս տանին՝ երթային իւրաքանչիւր ի տեղիս իւ րեանց:

Յայգուննակ և զառաջին օր յառաջասացեալ ամսոյն եօթներորդի տանէին առաւել հռչակաւ, և պանծագոյն հանդիսիւ և ցնծութիւք, քան զայլ ամսամուտս. իբր զի այն օր էր տարեգլուխ քա ղաքական տարւոյ նոցա: Աստի և յայնմ գատար կանային յամենայն ծառայական գործոց. զոր հնչմամբ փողոց ազգ առնէին ժողովրդեան. վասն այսորիկ կոչեցաւ տօն, կամ յիշատակ փողոց. ղեւ. ԻԳ. 24: Այս քայ ի հանապազորդ զոհից և ողջակիզաց, յայնմ աւուր մատուցանէին հանդերձ հնչմամբ փողոց՝ և մնասաւոր զոհս և ողջակէզս. զուա րակ մի յանդուայ, խոյ մի, և գառինս տարեւորս անարատս եօթն. և ընդ նոսին նաշիհ զանգեալ իւղով. և գինի, և իւղ, և աղ, և կնդրուկ սահմա նեալ չափով, և նոխազ մի յայծեաց վասն մեղաց: Ոչ նշանակէ մնվախս զպատճառն, յորս սակս այս տօն եղև սահմանեալ Ասկայն երևի թէ ի գո հութիւն այ յաղագս ընկալեալ բարերարութեց տարւոյն անցելոյ. միանգամայն և յաղագս նոր ևս բա րերարութիւնս մաղթելոց վասն առաջիկայ նոր տարւոյն: Իսկ հնչմունք փողոց, որք յայնմ աւուր

ստեպ լինելին, ըստ Թէոդորեանայ էր՝ ի յիշատակ փայլակնոյ և որոտընդոստ հնչմանց ձայնից, որք եղեն՝ ի սինեականն լերին յիջանել անդր՝ ոյ տալ մովսիսի զօրէնս։

Գ.Լ. Ի.

Ո՞րքան ժամ տօնի Վարդավառին։

Տօն քաւութեան, ըստ եբրայեցւոց Վերինոյ առացեալ, յամին միանգամ անկանէր՝ ի տասնեւրորդ աւուր թշրին ամսոյ. որ է եօթնեւրորդ ամիս եկեղեցական տարւոյ նոցա, և առաջինն՝ քաղաքական տարւոյն։ Այս տօն, որ ըստ պարապետ լոյ յամենայն ծառայական գործոց սկսանէր յերեկոյէ կորեայ իննեւրորդ աւուր, և՝ ի հետեւեալ երեկոյի աւուր տասնեւորդի լռանայր, սահմանեցաւ նախ՝ ի պատիւ և՝ ի յարգութիւն խորանին վկայութեան, առ՝ ի քաւելոյ՝ ի նմանէ զանարգանս և զանպատուութիւնս, որ հասանէր նմա՝ ի մեղաց ժողովրդեան, զոր յանդիման նորա գործէին՝ ի քանակին։ Երկրորդ՝ վասն մեղաց քահանայապետին. որ յայնմ աւուր ևեթ մտանէր՝ ի սրբութիւն սրբութեանց արեամբ զուարակին, զոր մատուցանէր վասն իւրոց մեղաց և տան իւրոյ։ Ա. երրորդ՝ ի քաւութիւն մեղաց համօրէն ժողովրդեան։ Օ այն օր քաւութիւն փափուկ յոյժ ունէին եբրայեցիք իբրև զմի՝ ի նախատապատիւ տօնից իւրեանց. զոր կոչէին Շաբաթ շաբաթուց, կամ Շաբաթ հանգստեան, այսինքն հանգիստ հանգստեան։ Օ՛ի որպէս ասացաք՝ յառաջնոյ երեկոյէ իսկսառ հրաժարէին ոչ միայն յամենայն ծառայական գործոց, այլև յուտելոյ՝ յըմպելոյ, ի լուացմանէ, և յօծմանէ և յայլ ամենայն մարմնոյ սպասաւորութիւնէ. զօրն ողջոյն անսուաղ

անցուցանելով, և ի ջերջ և յապաշաւ համակեալ. զի էր օր ասպաշնարութեանն և հանգրաման քաւութեան։

Իսկ հանդէս աւուրն զայս օրինակ կատարիւր։ Մեծ քահանայապետն լուանայր ոչ միայն զձեռս և զոտս, որպէս յայլ աւուրց սովորական զոհագործութեիս, այլև զմարմին իւր ողջոյն. ապա զգենոյր պատմուճան կտաւի. և գօտի ածէր զմիջով, և խոյր ի գլուխն նոյնպէս կտաւի, լոկ իբրև զմի ի սոսկական զևտացւոց, չունելով բնաւ ի վերայ անձին ինչ ի քահանայապետական զարդուց։ Եւ այնպէս տխրագգեստ մատուցանէր զզուաբանին՝ վասն իւր, և վասն ամենայն զևտացւոց. և նախ՝ եդեալ զձեռս իւր ի վերայ գլխոյ նորա՝ խոստովան լինէր զմեղս իւր, և ապա զենոյր զնա։ Յայնժամ ժողովուրդն ածէր առ դուռն խորանին վկայութեան երկու նոխազս յայծեաց. և քահանայապետն արկանէր վիճակ ի վերայ նոցա, թէ ո՞ր յերկուց անտի առցի ի տէր նն, և ո՞ր արձակեսցի յազատութեան։ Ի լինել այսմ, մերկանայր յանձնէ զպատմուճանն կտաւի, և զգենոյր զիւր քահանայապետական մեծագին զգեստս հանդէրձ ամենայն զարդու. և առեալ լի բուրվառաւ կաթսակուռն ի հրոյ սեղանոյն ողջակիզից, և լցեալ զձեռս իւր պեսպես խնկովք անուշիւք մանր ածեալ ներքուստ, խոկոյն ընդ մտանել իւրում ի ներքս ի սրբութիւնն սրբութեաց՝ արկանէր նոյն ժամայն ի վերայ հրոյ. զի յորդութիւն թանձրամած ծխոյն լցցէ զտեղին, և մի լիցի ինքեան պարզ և յոտակ աչօք հայել ի քաւութիւնն, որ էր համարեալ աթոռ ողորմութեան։ Այնպիսի խնկարկութեամբ՝ ելանէր արտաքս, և առեալ յարենէ զեղեալ զուարակէն՝ տանէր ի ներքս, և թաց եալ զմատն յարեան անդ՝ ցանէր եօթն ագամ ընդ առջ տապանակին և վարագուրին, որ անջրպետէր զքն ի սրբութենէ սրբութեանց։ Եւ ապա դարձեալ ելանէր ի դուրս, և զնոխազն վիճակեալ նն զենոյր ի կողմն միսեղանոյ ողջակիզից. և առեալ յարենէ նորա, անց

գրէն ՚ի ներքս մտանէր, և ըստ առաջնումն օրի-
նակի մատամբն ցանէր եօթն անգամ զարիւնն ընդ
դէմ տապանակին և վարագուրին։ Եւ ապա ելեալ
արկէր յարեւնէ անտի նախագին ընդ խորանն ողջոյն
շուրջանակի. որպես զի սրբեացի յամենայն պղծու-
թենէ և յանիրաւութենէ ժողովրդեանն խորանն
սրբուեսցի, որ կայր կանգնեալ ՚ի միջի նոցա. և
մինչ նա զայս առնէր, էր օրէն ումեք ՚ի քահա-
նայից կալ յայնժամ ՚ի գալթի անդ։ Եւ պա մա-
տուցեալ ՚ի սեղանն ողջակիզաց, օծանէր արեամբ
զուարակին և նախագին զեղջիւրս նորա շուրջանա-
կի. և մատամբ սրսկէր յարեւնէ անտի եօթն ան-
գամ ՚ի վերայ նորա։

Ձեռ զայս օրինակ սրբելոյ զսրբութենէն, և զխո-
րանն, և զսեղանն, հրամայէր քահանայապետն
ածել զառաջեաւ զնոխազն, որում վիճակեցաւ
ազատութիւն. և եդեալ զերկու ձեռս ՚ի վերայ
գլխոյ նորա, խոստովան լինէր զամենայն մեղս և
զամենայն անօրէնութիւնս ժողովրդեան. աղաչէլով
զնա՝ զարժանահաս պատիժ նոցա կուտել ՚ի գլուխ
նախագին այնորիկ։ Եւ պա տայր զնա ՚ի ձեռս առն,
որ առ այս գործ կայր անդ պատրաստական՝ տանել
և արձակել զնա յանկոխ յամայի անապատ։ Ձեռ
այնորիկ քահանայապետն իբրև անկը սակս ջոջա-
փելոյ զնոխազն, մտեալ ՚ի խորանն վկայութեան,
մերկանայր յանձնէ զհանդերձս. և լուացեալ զմար-
մին իւր ջրով, զգենոյր վերստին զառաջին կուսէ
պատմուճանն, ըստ սմանց՝ զքահանայապետական
հանդերձս. և զենոյր զերկու խոյս յողջակէզ՝ զմին
վասն իւր, իսկ զմիւսն վասն ժողովրդեան։ Եւյն-
պէս և զձարպ առաջնոյ նոխազին վասն մեղաց մա-
տուցեալ ՚ի զոհ՝ հանէր ՚ի սեղանն ողջակիզաց.
իսկ զմնացեալն զամենայն, այսինքն զմորթ, զմիս,
զոտս, և զամենայն ներքին փորոտիս հանէին ար-
տաքոյ բանակին. և անդ կայր մի ոմն կարգեալ,
որ այրէր զնոսա. բայց ինքն պղծեալ լինէր. վասն
որոյ ոչ կարէր դառնալ անդրէն ՚ի բանակն, եթէ
ոչ՝ նախ լուացեալ զմարմին իւր և զհանդերձս։

Օ նոյն պատճառան էր առնել և այրն, որ տանէր զնոխասէն յանապատ։ Այս ամենայն ծէսք և արարողութիւք՝ որք լինէին ի տօնի քաւութեանն, մեծի խորհրդոյ նշանակք էին, կատարումն աշխարհակեցոյց պատարագին քրիստոնէից նկարագրելով. որպէս գրէցիկ պարզաբանէ մեզ առաքեալն. Եբր. Թ. 11. և գկնի։

Ի նմին տօնի քաւութեանն զենուէին ամի ամի և երիցք մի կարմիր արտաքոյ բանակին. զոր մինչեւ թեպետ ասաւ ի գլուխ. ծշ. ոչ յիշէ. բայց ի գիրս Թուոց գլ. ծԹ. ընդարձակ ստորագրէ։ Ունոյր քահանայն, կամ ըստ ոմանց քահանայապետն՝ ի ժողովրդենէն երիցք մի կարմիր, անարատ, յորում ոչ գուցէ բիծ ինչ, և ոչ իցէ մտեալ լուծ, երկեմեան, կամ իբր երեմեան. և հանէր զայն արտաքոյ բանակին։ Իւր այլ քահանայք զենուէին զնա յանդիման քահանայապետին. որոյ առեալ ի սակառ յարենէ անտի երիցոյն, և դարձեալ յարև մուտս ի կողմն խորանին վկայութեան, յանէր մատամբ զարիւնն ի սեղանոյն անտի եօթն անգամ դէպ ի խորանն։ Այս ապա յօշեալ զերիցոյն, և եդեալ ի վերայ փայտակուտին պատրաստելոյ՝ հանդերձ մորթովն և ամենայն ներքինն փորոտեօք, հուր լուցանէին ի ներքոյ։ Յայնժամ քահանայն զոհարար արկանէր եղևնափայտ, և զոսպայ, և կարմիր մանեալ ի բոց անգր այրեցեալ երիցոյն իբր ի հանդերձանս այնր մատնաւորս զոհի. որպէս յայլ սովորական զոհս օրհնութեան, կամ ի յողջակէզս ի կիր առնուին խունկ, աղ, իւղ, գինի, և կարկանդակս. որք և յայն սակս կոչէին զոհ կամ պատարագ ի հոտ անուշից։ Այս քահանայն զոհարար անսուրբք լինէր մինչև ցերեկոյ. և ապա ողողեալ զհանդերձս, և լուացեալ զմարմին իւր ջրով, այնպէս մտանէր ի բանակն։

Օ մխիր երինջոյն ժողովէին բազում զգուշութիւբ, և դնէին ի պահեստ. որ և լինէր այն ժողովրդեան որդւոց իսրայէլի ջուր սրսկման ի սրբութիւն, զի ի մխրոյ անտի սակաւ մի արկանէին

'ի ջուր, զոր սրսկեալ 'ի վերայ անձին՝ որ էր պղծեալ մերձեցմամբ 'ի դի մարդոյ, սրբէին զնա։ Եւ դիւք ոչ նշանակէն ինչ, թէ ուր պահէին զայն մխիթ. արդեօք 'ի խորանն Աեթ, եթէ և յայլ տեղիս։ Այլ 'ի գործածութենէն երևի՝ թէ միշտ չգեռ յանապատի անդ էին, 'ի խորանն պահէին. զի գիւրին էր ամենեցուն, որք 'ի բանակի անդ պղծէին, երթալ 'ի խորան անդր՝ որ էր 'ի միջի նոցա, և սրբել։ Այլ զկնի ժառանգելոյ նոցա զերկիրն աւետեաց, և սփռելոյ 'ի զանազան քաղաքս, թուի թէ ոչ 'ի խորանն Աեթ պահէին. կամ յերուսաղէմ 'ի տաճարն զկնի շինութենէ նորա, այլ բաշխէին յամենայն քաղաքս։ Ոչ որովհետև ոչ դոյր այլ եղանակ կամ միջոց սրբելոյ յասացեալ պղծութենէ, կարի ինն գժուարին էր յամենայն դիպուածս 'ի խորանն կամ 'ի տաճարն դիմել 'ի խընդիր այնր մխիթոյ, առանց սրոյ էր օրէնն կենդանի ընդ այլոց, կամ զգործ քաղաքական գործել, և կամ սրբազան իրաց մասնակցիլ։

Լսակ եղանակին գործադրութենէ այսր մխիթոյ էր այսպիսի. Յորժամ ոք մերձենայր 'ի մարմին մեռեալ, կամ 'ի վիրաւոր, կամ յոսկր մարդոյ 'ի դաշտի կամ 'ի գերեզմանի, անդր լինէր զեօթն օր. այլ յաւուր երրորդի պարտական էր երթալ առ քահանայն. և նա առեալ յաման մի ջուր կենդանի, այսինքն 'ի գետոյ, կամ յաղբերէ, այլ ոչ յանձրևոյ կամ 'ի լճէ. և արկեալ 'ի նմա զմխիթ կարմիր երինջոյն, նուաւա սրսկէր 'ի վերայ պղծելոյն։ Ոնոյն առնէր և յաւուր եօթներորդի, որ էր վերջին օր սրբութենէ. և այնպես լինէր սրբեալ։ Այլ թէ ոք անհոգանայր յաւուր երրորդի մատչել առ քահանայն և սրբիլ, այն երեք աւուրք ընդունայն անցանէին. վասն որոյ և անտի սկսանէին թուել այլ աւուրս երիս վասն առաջնոյ սրսկման, որ անկանէր յօրն վեցերորդ. ապա 'ի տասներորդումն լինէր երկրորդ և վերջին սրսկումն կատարեալ սրբութենէ, փոխանակ եօթներորդի աւուր։ Այնպես յորժամ 'ի տան միուտ ոք մեռանէր, անդր

լինէին զԵովթն օր՝ ոչ միայն ընտանիք տանն ; և այլք յարտաքսոյ որք մտանէին ի տուն անդր , այլև ամենայն ինչ որ կայր ի տան անդ , հանդերձք , անօթք և ամենայն կահ և կարասի . բայց յայնց անօթոց՝ որոց բերանք խիեալ , կամ սերեւկաւ փակեալ էին :

Այլ յաւուր երրորդի քահանային , կամ որպէս Թուի՝ այլոք այր ՚ի պղծութենէ՝ եկեալ ցաներ ՚ի մխոբախառն ջրոյ անտի զոպսիս զտամբն և զկահ հիւն , և զամանուքն , և զանձամբք որք կային ՚ի տան անդ : Օդնոյն սրսկուհն կրկնէր՝ և յԵովթնեւորդ աւուր , ըստ սմանց հասարակ ջրով . և այնպէս սրբեալ լինէր տունն և բնակիչք նորա ՚ի պղծութենէ մեռելոյն : Այլոց նա որ սրբէրն՝ անոք միայր մինչև ցերեկոյ . և ապա ողողեալ զհանդերձս , և զմարմին իւր լուացեալ ջրով , ազ լինէր և ինքն : Օի այնչափ էր ջրոյն այնորիկ սրբութենէ , զի և սրբք չէին կարող մերձենալ ՚ի նա , առանց զարատ լինն ձգելոց յանձինս : Ուստի նոյն ջուր , որ զանազաս սրբէր , անոք կացուցանէր զոմս , որք ՚ի կիր արկանէին զնա ՚ի սրբութիւն այլոց . յորմէ չհատ սրբեալ լինէին որոշմամբ մինչև ցերեկոյ ՚ի կենակցութենէ այլոց , և ՚ի մասնակցութենէ ազ իրաց . և լուացմամբ հանդերձից և մարմնոյ իւրեանց , որպէս ասացաք : Այս այնչափ սաստիկ հրամանաւ պատուիրեալ էր նոցա , մինչ զի եթէ ոք պղծեալ շօշափմամբ մեռեալ մարդոյ , կամ յուշարկաւորութենէ մեռելոյ , առանց սովին սրսկմամբ սրբելոյ՝ մատչէր ՚ի խորանն , կամ՝ ՚ի սրբազան իրս ինչ մերձենայր , զպարտուպատշաճ պատիւն ոչ լուծանէր , և զսրբութենս նորա պղծէր : Վասն այնորիկ մեղս էր արժանի , կամ՝ ՚ի դատաւորաց , եթէ չայտ լինէր առնէն նորա զայն չարհամարհութենէ օրինացս . և կամ չոր , յորժամ գաղանի էր արհամարհութենէն : Որպէս յայտ է ՚ի բանից սատի մովսիսի . * Այ՛ , որ մերձենայցէ ՚ի մեռեալ անձն մարդոյ . . . և ոչ սրբեսցի , զնորանն պղծեաց . սատակեսցի անձն այն յիսրայէլ . զի ջուրն սրսկման ոչ սրսկե-

ցաւ ՚ի վերայ նորա, անոքա է. զի պղծութեն իւր ՚ի նմա է ։ Եռ. ծբ. 13։

Ա՚յն պատարագ կարմիր երկնչցին՝ որ յամին միանգամ մատչէր, եր նախատիպ օրինակ կենսաբեր անօրինութեանց քոց փրկչին մերոյ։ Ինքն երկնչէն նշանակէր զմարմին փրկչին ՚ի հողեղէն գոյացութէ առեալ։ Ա՚նարատ պարտ եր լինել և անբիծ ամենևին, ՚ի նշանակ անսահման սրբութեն և անմեղութեն քոյ, և ՚ի գոյն կարմիր՝ յօրինակ արիւնաթաթաւ մարմնոյն քոյ ՚ի չարչարանսն։ Զկեր մնեալ ընդ լծով, ՚ի խորհուրդ ազատ և կամաւոր յանձնառութէ քոյ զնախատինս և զչարչարանս. և իշխանութէ նորա առ ՚ի դնել զանձն, և վերստին առնուլ զնա, որպէս և կամէր։ Ա՚րտաքոյ բանակին հանելին զնա, և անդ զեհուին և այրէին ողջոյն ամենայն մասամբք. քանզի և քո Ձմարտութէն արտաքոյ երուսաղէմ քաղաքի հանդերձեալ եր մեռանել, և բովանդակապէս ՚ի հաճոյս և ՚ի փառս հօր իւրոյ երկնաւորի ողջակէզ լինել։ Ա՚ոց հրոյ երկնչոյն՝ յարութէ քոյ նշանակ. որպէս և ծուխն որ ՚ի վեր յերկինս ելանէր, նորայն ձեւապէս համբարձման։ Խոկ մեսսեալ մխիթն, որ սրբէր յօրինական պղծութէ, զնորհուրդ ապաշխարութէ ստուերագրէր. զոր եթող քո յեկեղեցւոջ իւրում, սրբիլ նովաւ հաւատացելոց ՚ի մեղաց զինի մկրտութէ գործելոց։ Ձին աւանդութիւն գոյր առ եբրայեցիս, զոր յիշէ և սէն հերոնիմոս, թէ զկնի շինութէ սողոմոնեան տաճարին, զկարմիր երինջն ՚ի վերայ լերին ձիթենեաց զնուին և այրէին. զի անդ հանդերձեալ եր քո զտագնապ մահու կրել, և արեան քրտամբք զերկիրն ոռոգանել զթապեալն երբեմն արեամբ երինջոյն։ Յայս վայր գիրք վկայեց։

ԳԻՐՔ ՀՈՐՄԻՐ

ՅԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԹՈՒՈՑ

Գ԰Լ. Ը.

Հանդէս, կամ լուծ համարոյ երկոտասան ցեղիցդ որդւոցն Իսրայէլի՝ ի հասանելն ի յերկիրն Քանանացւոց և ի վեր։ Այս առաւելն համար որդւոց ղևեայ արտաքոյ հանդիսի համարոյ այլոց երկոտասան ցեղից։

Յորժամ կարգաւորեալ հաստատեցաւ հասարակութիւն որդւոցն իսրայէլի ամենայն օրինաւոր կարգօք և կանոնօք կրօնի Աշխարհիս ածպաշտութեան, և օրինօք քաղաքական իրաւանց և դատաստանաց, այն ինչ մերձենայր ժամանակ չուելոյ նոցա յանապատէ անտի սինեականս երկրին, ուր կային մնացին ընդ ամմի ողջոյն, խօսեցաւ Աստ ընդ մովսիսի՝ ի խորանն վկայութեան յառաջնում աւուր ամսեանն երկրորդի յամին երկրորդի ելանելոյ նոցա յերկրէն եգիպտացւոց։ Այս հրամայեաց Տանդիս առնել զամ ժողովրդեան՝ ի քսանամենից և՝ի վեր՝ ցայն հասակ, յոր կարօղ է մարդ այնուհետև զէն առնուլ, և՝ի մարտ մտանել. Թողեալ՝ի համարոյ անտի՝ ի բաց զկանայս, զաղջկունս, զմանկունս, զպատանիս և և այս հասեալս՝ ի հասակ քսանամեայն, զծերս, և զամենայն օտարականս, կամ զեկամուտս և զգերիս։ Այս առ վաղագոյն և հեշտեաւ վճռել զիրան, ուսոյց նմա ածէ ինքնին և զեղանակ Թուելոյ. բաժանելով զհամօրէն ժողովուրդն ըստ

երկոտասան ցեղից. զցեղս՝ ըստ տոհմից, զտոհմս՝ ըստ տանց, իսկ զտունս ըստ գլխոց կամ ըստ արանց։ Այս ետ նմա օգնական զահարոն, և զիշխանս ցեղից ըստ իւրաքանչիւր տոհմից. զորոց ոմանք առեն՝ թէ էին անդրանիկք կամ երիցագոյնք իւրաքանչիւր ցեղից ուղղդ գծիւ ի ջեռալ յառաջնոյ նահապետէ. այլք՝ թէ եղեն ընտրութիւն, իւրաքանչիւր ցեղի ընտրելով յերկմի զյարմարագոյնն. որ և կարի հաւանելի երևի։ Արդէս արար և մովսէս ի կացուցանել զդատաւորս ի վերայ ժողովրդեան՝ ըստ խրատու յեթրովայ անեղոյ իւրոյ, ոչ ինչ հայեցեալ ի կարգ անդրանկութեանէ կամ ծննդեանէ, այլ ի կարողութեի և ի բաւականութեի անձանց առ այն գործառնութեի։

Այս այսպէս ցեղին Ռուբինի կացուցաւ իշխան Եղիսուր որդի սադիւրայ։ Ի մնասեի՝ սաղամիէլ որդի սուրիսադայի։ Յուդայի՝ Նաասոն որդի ամինադաբայ։ Իսաքարայ՝ Նաթանայէլ որդի սուգարայ։ Զաբուղոնի՝ Եղիաբ որդի քելոնայ։ Ի Փրեմի՝ Եղիսամաս որդի եմիուդայ։ Ի Մանասեի՝ գամալիէլ որդի փադասուրայ։ Ի Բենիամինի՝ աբիդան որդի գեդեոնի։ Դանայ՝ աքիեզէր որդի ամիսադանայ։ Ի Եփթաղիմայ՝ աքիրէ որդի Ենանայ։ Ասդայ՝ Եղիսափան որդի ռագուէլի։ Ի Սերայ՝ փագիէլ որդի եքրանայ։ Ահա Էին գլխաւորք իւրեանք, կամ ըստ արդի սովորութեանն ասելով՝ սպարապետք անցնելոյ ցեղից՝ ունելով ի ներքոյ իւրեանց հարիւրապետս, և յիսնապետս, զգլխաւորս իւրաքանչիւր տոհմից և տանց։ Ի յասիսի գեղեցիկ կարգադրութեի փութով եղ ի գլուխ հաւատ ամենայն արուաց ի քսանամենից և ի վեր, որք կարօղ էին գտանիլ ի բանակի զօրաց Համօրէն երկոտասան ցեղիցն իսրայէլի։ Ի ցեղէն Ռուբինի անդրանկանն իսրայէլի՝ գտան 46500. Ի մնասեի՝ 59300. Յուդայ՝ 74600. Իսաքարայ՝ 54400. Զաբուղոնի՝ 57400. Ի Փրեմի՝ 40500. Ի Մանասեի՝ 32300. Ի Բենիամինի՝ 35400. Դանայ՝ 62700. Ի Եփթաղիմայ՝ 53400. Ասդայ՝ 45650. Ի Սերայ՝

41400։ Այս համարին թիւ ՚ի միասին գումարեալ առնի 603550։ Հաւասար համարոյ հանդիսին, զոր արար մովսէս իբր եօթն ամսոյք յառաջ. Ելից. Ը. 25. ուր և մերս թարգմանութիւն դնի նոյնպէս. իսկ ասա՝ Ռոով. ա. 46. Ա Ը. 32. Հարիւր ամ յաւելու յայս բոլորական թիւ այսպէս. 603650. ըստ ամենայն օրինակաց հասելոց ՚ի ձեռս մեր. (որ չ՚ վրիպակ նոր գրչաց, այլ առաջնոց, թերևս չփոթելով զվեցհարիւրն բառդ նշանակեալ ՚ի սկզբան՝ ընդ հինգհարիւրն գրելն զկնի. իբր զի գուցէ փոխանակ գրելոյ ՟ՇՀ՚, և գ՚, և ՟ՀՀ՚. դնի ՟ՇՀ՚, և գ՚, և ՟ՀՀ՚):

Այս թիւ եթէ յաւելցին և կանայք և մանկունք ցբանաերորդ ամ հասակի, և ծերք գԼԹ ՚ի վաթսամենից և ՚ի վեր, ապաքէն գումար բոլորեցուն ելանէ ցմիլիոնաւոր։ Ա՚ւ այս հաստատութիւն մեծ և կարծեաց, զոր ՚ի վեր անգր յառաջ բերաք, Թէ ՚ի մոից յակոբայ յեգիպտոս մինչև ցելս որդւոցն իսրայէլի անտի՝ անցին ամք չորեքհարիւր։ Ա՚նգղի անհաւատալի երևի ՚ի միջոցի 216. ամաց՝ ՚ի միոյ առնի, զորօրինակ ՚ի յուդայէ՝ որոյ ցեղ առաւել քան զայլոցն բազմանթիւ է, այնչափ բազմանալ, մինչև լոկ զինուորականաց հասանել ց՚ 174600. յոր թէ յաւելցին և կանայք և մանկունք, յայտ է թէ յաճախ յոյժ յոյժ թիւ սերնդոց նորա։ Ա՚նդգունակ և որդիք կահաթու անցեալք ՚ի հանդէս մէ ՚ի քսանամենից, այլ լոկ ՚ի քսան և հինգ ամենից մինչև ցյիսնամեանն, որպէս ունիմք փոքր ի ոտոր զնշանակել, գտան 2750։ Ա՚պա որչափ էին ՚ի վայր քան զքսան և հինգն, և որչափ ՚ի վեր քան զյիսունն։ Ա՚պա այս հաշիւ նոյն օրինակ հաստատ, Թէ կահաթ էր հայր ամրամայ, այլ նախահաւ. ապա թէ ոչ՝ որդիք նորա այժմ չգտանէին այդչափ բազմութիւ։

Իբրև վճռեցաւ հանդէս համարոյ, կամեցեալ ՚ի կարգաւորել զայնչափ խառնամթերս բազմութիւն, առ բառնալոյ ՚ի նոցանէ զպատճառս կռուոյ և շփոթուիթ, պատուիրեաց մովսիսի հաստատել

'ի նոսա կարդ և դասաւորութիւն 'ի մէջ ցեղից և ցեղից. զի ըստ այնմ շարժեսցին՝ թէ 'ի չուս, և թէ 'ի բանակել իւրեանց. և զնոյն կարգ պահեսցեն և 'ի ժառանգել նոցա զերկիրն աւետեաց: Ասեն որոյ և մովսէս արար զամենայն, զոր ետծ ինքնին մի առ մի ուսոյց նմա: Օ՛ի զերկոտասան ցեղս համօրէն՝ բաժանեաց 'ի չորս մասինս կամ մեծամեծ բանակս. զորս դասաւորեաց 'ի չորեսին կողմանս խորանին վկայութիւն, յարևելս, յարևմուտս, ընդ հարաւ, և ընդ հիւսիս. և խորանն 'ի միջի նոցա: Ընդարաքանչիւր բանակի էին երեք ցեղք, յորս առաջինն և նախապատիւն ունէր զմիջին տեղի. իսկ այլ երկու ցեղք յաջմէ նորա և յահեկէ. և անցնելիւն ունէր սեպհական իշխան կամ հաւզարապետ. և ընդ նովաւ զայլ ստորին պաշտօնաւարսն իւր հարիւրապետ և չիսնապետ և տասնապետ: Այս 'ի վերայ ամենեցուն սոցա մի ոմն մեծ սպարապետ և հրամանատար. որ էր իշխանն վերոյասացեալ նախապատիւ ցեղին. որումն անսայլին հազարապետք այլոց երկուց ցեղից: Ի չուել իւրեանց 'ի մէջ առնուին զկանայս, զմանկունս, զծերս, զգերիս, զսայլս, և զՀօսս և զանդեայս՝ իւրաքանչիւր ցեղ զիւրն, պատսպարեալ զնոսա յարաբին թշնամեաց: Ամենայն ցեղ ունէր իւր սեպհական նշան կամ դրօշ. այլ բաց յայնցանէ նախապատիւ ցեղն իւրաքանչիւր չորից բանակաց ունէր զայլ ինն դրօշ զանազան յայլոց. որումն զՀետ երթային երեք ցեղքն, որք կացուցանէին զրա նակն:

Առաջին և նախապատիւ բանակն էր յուդայի ընդ իսաքարայ, և զաբուղոնի: Ցեղն յուդայի ունէր զմիջին տեղի. իսաքար յաջմէ նորա. իսկ զաբուղոն յահեկէ: Այս նահաոն որդի ամինադաբայ էրբև իշխան ցեղին յուդայի՝ էր մեծ սպարապետ և հրամանատար այսոցիկ երից ցեղից: Այս բանակ կոչիւր գունդ կամ բանակ յուդայի. բազմութիւքան զայլս, զի ընդ ամենայն էին 'ի նմա 186400. որ բանակէր յարևելեան կողմն խորանին, հան-

դէպ մեծ կամ դրան նորա հայելով ՚ի դրանէ անտի խորանին։ Եւ ՚ի ժամ լուծ սա Տոդան տայր այլոց, որպէս և ՚ի բանակել ուրեք՝ սա զառաջինն հարկանէր զբանակ իւր ՚ի սահմանեալ տեղի ընդառաջնորդութիւն նասաոնի։

Երկրորդ բանակն, որ բանակէր ՚ի հարաւակողմն տարածեալ ընդ երկայն, էր ցեղին ռուբինի ընդ շմաւոնի, և գագայ։ Ցեղն ռուբինի ըստ սրսւմ նախասպատիւ քան զայլ երկուս, ունէր զմիջին տեղի. յաջմէ նորա շմաւոն. իսկ ՚ի ձախմէ գագ։ Եւ այս բանակ կոչիւր բանակ ռուբինի. և մեծ սպարապետ հրամանատար երից ցեղից միանգամայն՝ էր եղիսուր իշխան ցեղին ռուբինի. և ՚ի լուս երթայր զկնի բանակին յուդայի. Թիւ զօրաց նորա ընդ ամենայն 151450։

Երրորդ բանակն, որ բանակէր յարեւմտեան կողմն խորանին, էր ցեղին եփրեմի, մանասէի, և բենիամինի։ Ցեղն եփրեմի իբրև առաջին ՚ի նոսա՝ դրաւէր զմիջին տեղի, ունելով յաջմէ զմանասէ, և ՚ի ձախմէ զբենիամին։ Այր սակս և համօրէն բանակին կոչիւր բանակ եփրեմի. և մեծ սպարապետ նորա էր եղիսամա իշխան ցեղին եփրեմի։ Եւ Թիւ զօրաց նորա անցելոց ՚ի հանդիսի 108100. յայս գումար մերս ընթերցուած յաւելու հարիւր մի, դնելով 108200. համեմատ նախանշանակեալ տարբերութեանն։ Իսկ չորրորդ բանակն, որ և էր յետին՝ և վերջապահ համօրէն իսրայելեան գնդին, էր դան, նեփթաղիմ, և ասեր. որք թէպէտ հսկ բազատ որդիք էին յակոբայ, և քան զայլս ոմանս յորդւոց նորա երիցագոյն ծննդեամբ. այլ զի ա. զանճաճինք էին, նմին իրի յետոյ դասեցան։ Ցեղն այսր բանակի էր ընդ հիւսիսակողմն խորանին. և կոչիւր բանակ դանայ. քանզի ՚ի մէջ երից ցեղից նորա ցեղն էր առաջին. վասն որոյ և էր ՚ի միջի նոցա, ունելով յաջմէ զասեր, և յահեկէ զնեփթաղիմ. և աբիեզեր իշխան ցեղն նորա մեծ սպարապետ բանակին. որոյ զօրք անցեալք ՚ի հանդէս 157600. իսկ բոլորական գումար չորից բա-

նակացս, ըստ մերումն Թարգմանութեանն, որ հաւրիւր մի յաւելու ՚ի բանակին Եփրեմի՝ որպէս ասացաք, է 603650։ Յայսոսիկ չորեքին բանակս առաջինն իբրև յառաջապահ, և վերջինն իբրև վերջապահ, ըստ գինուորական կանոնաց առաւելուն Թուով, քան զերկու միջինս, իբր պատուար պլշեդակազմ յառաջոյ և յետոյ ՚ի պատսպարութիւն հաւրիւրիւն իսրայելեան գնդին։

Յայս հանդէս համարոյ ոչ մուծաւ ցեղն ղեւեայ. զի ՚ի սկզբան անդ պատուիրեաց Ած մովսիսի զազգն ղեւեայ չհաւնել ընդ երկոտասան ցեղս ՚ի հանդէս, և զհամար նոցա չառնուլ ՚ի մէջ որդւոցն իսրայելի. քանզի պահէր զնոսա ՚ի սպասաւորութիւն խորանին վկայութեան։ Այս այսու որպէսզի բաւ ժամանակ Ած զժողովուրդ որդւոցն իսրայելի յերկու մասն, կամ ՚ի ժողովուրդ. զմին կարգեալ առ արտաքին և ՚ի քաղաքական գործառնութիւնս, իսկ զմիւսն առանձինն ՚ի պաշտօն և ՚ի սպասաւորութիւն իւրոյ մեծավայելչութեան։ Գնդին մովսէս որ ՚ի ցեղէն ղեւեայ՝ գլուխ էր և առաջնորդ համօրէն ժողովրդեան որդւոցն իսրայելի. ահարոն եղբայր նորա քահանայապետ զոհամատոյց նոն. նաբադ և աբիուդ, եղիազար և իթամար քահանայք օծեալք. յորոց երկու երիցագոյնք մեռան անորդի. և մնաց միայն եղիազար և իթամար ընդ հօր իւրեանց. որք էին բառական ՚ի սպասաւորութիւն յոգնադիմի գործոց խորանին։ Այս զի էր ՚ի չահ ՚ի սոսկական աշխարհականաց առնուլ անխիղճ յայն գործ սրբազան, նմին իրի յերկոտասան ցեղից անտի զայս մի միայն ցեղ փոքրագոյն քան զայլ ամենայն ցեղս ընտրեաց Ած. և առ իւր բաժին և փրկանս՝ փոխանակ ամենայն անդրանկաց նոցա, զորս պահեաց և ապրեցոյց յորժամ եհար և սպան զամենայն անդրանիկս եգիպտացւոց. * Օ՛ի իմ է (ասէ) ամենայն անդրանիկ. յաւուր յորում հարի զամենայն անդրանիկ երկրին եգիպտացւոց, սրբեցի ինձ զամենայն անդրանիկս իսրայելի. ՚ի մարդոյ մինչև յանասուն՝ իմ լինիցին. զի ես եմ Տէր ։ Խոսոց. Գ.

15։ Իբե եղեն զևատօղքը առ եբբայեցիս յեկեղեցսա կան կարգի, որպէս առ մեզ ատօրին աստիճանաւոր կղերիկոսաք։

Ա ամն այսօրիկ 'ի վճարիլ հանդիսի Համարոյ երկուտասան ցեղից, արաբ մնվսկս հանդէս ուբոյն և ցեղին զևեայ, որպէս պատուիրեաց նմա Տէր, ըստ տանց նահապետաց նոցա, ըստ գուննդս իւրեանց, և ըստ ազգս իւրեանց, ամենայն արուի 'ի միոյ ամսոյ և 'ի վեր։ Գ ևեայ երեք որդիք եղեն. Գևեթան. (ըստ ոմանց՝ գերսոն.) Կահաթ. և Մերարի։ Տուն կամ ազգ գեթանի յերկուս ազգս բաժանեցաւ ըստ երկուց որդւոց իւրոց՝ Գ ոբնեայ և Մեմեայ։ Տուն կահաթու 'ի չորս ազգս, ըստ չորից որդւոց իւրոց, այսինքն Ամրամայ, Մահաոայ, Իզեբրոնի, և Ոզնիէլ։ Խակ տուն մերարեայ յերկուս. այսինքն յազգ մողեայ և մուսայ։ Զան գես տանն գեթանի ըստ Թուոյ ամենայն արուի յամսոյէ և 'ի վեր՝ գտաւ 7500. Կահաթուն 8300. խակ մերարեայն 6200։ Որոց բոլորական գումար առնէ 22000։ Այս բնագիր երբայեցւոյ, որպէս և վուլգատայն լատինացւոց յաւելու յոր գիան կահաթու այլևս 300. այսպէս ունելով. * Որքա են գունդք կահաթու ըստ Թուոյ անուանց իւրեանց ամենայն արուի 'ի միոյ ամսոյ և 'ի վեր 8600 ‖։ Խակ զգումար բոլորեցուն գնեն հաւասար մերում 22000։ Այս անհամեմատութի Թուոց ոչ սակաւ տագնապ զմեկնիչս։ Ամենք ասեն, Թէ երեքհարիւր էին անդրանիկքն զևատացւոց. որք սակս անդրանկութէ իւրեանց արգէն նուիրեալ և սեպհականեալ էին Տեր, ուստի և ոչ կարէին լինել փրկանք այլոց անդրանկաց որդւոց իսրայէլի. վասն այնորիկ 'ի բաց Թոզան 'ի բոլորական գումարէ անտի։ Խայց այս մեկնութի չունի հիմն 'ի նոր գիրս. Թէպէ զի գժուարին իմն Թուի, Թէ 'ի մէջ 2230 մարդկան երեք հարիւր ևեթ անդրանկիք գացին։ Վասնզի յայտ է փորձիւ, զի չիք տուն՝ ուր իցեն վեց, եօթն, և ուիթ կամ նաև տասն ոգիք, յորս ոչ գայցէ անդրանիկ։ Այլ իբր

այլք վիճակ գրեցաք համարին սպրդեալ՝ ի համար անդր որդւոյն կահաթու։

ԳԼՒ Ր.

Հանդերձ անդրանկաց ամենայն արուի համօրէն ցեղից, ընդ որս և ցեղին ղեւեայ։ Մովսէս որդիք չխարփ և ղէորճ ղեւտացւոց. սրբէ զնոսա և զառաքէ՝ ի պաշտօն խորանին։ Լուսանւոյ ամենայն ցեղից ընծայաբերք լինին ՚ին։

Յետ այնորիկ հանդիպ արար մովսէս՝ ըստ հրամանի ՚ին՝ նաև անդրանկաց ամենայն արուի համօրէն որդւոցն իսրայէլի յամսօրիկ և ՚ի վեր. և գտան 22273. առաւելեալ քան զամենայն արուս ղեւտացւոց երկերիւր և եօթանասնեան և երիւք. որոց ասաց ՚ին մովսէսս առնուլ փրկանս հինգ սիկղ ըստ գլուխ. որ ընդ ամենայն արաբ 1365 սիկղ ըստ սրբոլեցէ սկեղ. զոր ետ մովսէս ահաւրանի և որդւոց նորա. որպէս հրամայեաց ՚ին։ Օ արմանք են թէ զիարդ այսչափ սակաւ էր թիւ արուաց ցեղին ղեւեայ առ համեմատութիւն այլոց ցեղից։ Այր նոցա արուք ՚ի քառասնամենից և եւթ ՚ի վեր ՚ի թիւ արկան. իսկ սորայս յամսօրիկ. սակայն և այնպէս թիւ սոցա ոչ հաւասարեցաւ և ոչ փոքրագոյն ցեղին։ Այժմ անհամեմատութիւն չունիմք այլ ինչ պատճառ հանդուցիչ մտաց, բայց զկամն վերին անտեսութիւն, որ ընտրեաց զայս ցեղ ՚ի մերձեցուցանել ՚ի պաշտօն և ՚ի սպասաւորութիւն իւրումն մեծ վայելչութիւն. և ոչ ՚ի բազմացուցանել քանակիչս յերկրին քանանացւոց։

Այսպա և սոցա՝ որպէս այլոց նախագրեալ գնդից որոշեաց մովսէս տեղի ՚ի բանակին շուրջ զխորանն՝ նաև վկայութեան՝ զընդարձակ վայրն, որ ընդ միջ խորանին՝ և բանակաց երկոտասան ցեղից. սրբ

իբր մղնաւ չափ հեռի ՚ի խորանէն կային բանա-
կեալ, Թողեալ զմիջին վայրն զևտացւոց. զի նոցա
հաւատացեալ էր պահպանութի՛ն խորանին։ Ցունդ
գԵթսոնի բանակէը յարևմտեան կողմն խորանին
հանդէպ ցեղին Եփրեմի. ցունդ կահաթու ընդ
հարաւ առաջի ցեղին ռուբենի. իսկ ցունդ մե-
բարեայ ՚ի հիւսիս ՚ի մէջ սրահին և ՚ի մէջ ցեղին
դանայ։ Լևիան գնդին գԵթսոնի էը եղիասափան
որդի գերիշայ. իշխան գնդին կահաթու եղիասափան
որդի ոզիելի. իսկ իշխան գնդին մերարեայ սու-
րիել որդի աբիքեայ։ Եւ ՚ի վերայ սոցա ամենե-
ցուն ոստիկան և վերակացու էը եղիազար որդի
ահարոնի. բայց տիրապես հսկէը ՚ի վերայ որդւոց
կահաթու. քանզի ՚ի չուա՝ նոցա էը յանձնեալ տա-
պանակն սրբուՒԹ, և այլ նէրքին սրբազնագոյն
սպասք։ Իսկ որդիք գԵթսոնի և մերարեայ էին
ընդ անմիջական հրամանատարուՒԹ էԹամարայ։
Մովսէս իբրև զևտացի, և իբր գլուխ համօրէն
որդւոց իսրայէլի. նոյնպէս ահարոն իբրև ՚ի նոյն
ցեղէ, և իբրև քահանայապետ հանդերձ որդւովք
իւրեանց, ունէին զպատուականագոյն տեղի ՚ի բա-
նակին՝ ՚ի մէջ ցեղին յուդայի, և արևելեան դրանն
խորանին։ Եւ այսպէս համօրէն զևտացիք բոլորս
վին որոշեալ զատուցեալ էին յայլոց ցեղից. որոց
ընդ պատժով մնոյ արգելեալ էը երԹալ խառ-
նիլ ՚ի բանակն զևտացւոց։

Յետ զայս օրինակ դասաւորելոյ Մովսիսի զցեղն
զևեայ ՚ի բանակին, ասպա ըստ հրամանի տեառն՝ որ
չէ զգործ իւրաքանչիւր նոցա շուրջ զխորանաւն ՚ի
չուա բանակին։ Ցունդ կահաթու ԹԷպէտ եը
կրօրդ էը կարգաւ ՚ի մէջ այլոց երկուց ցեղից,
այլ ՚ի պատիւ Մովսիսի և ահարոնի, որք էին ՚ի
նոյն գնդէ, առաջին դասեցեալ ՚ի գործ սպասաւո-
րուՒԹ խորանին։ ՎԱնգի սոքա կարդեցան քառ-
նալ և տանել զտապանակն սրբուՒԹ, և զսեղանս
զառաջաւորի, զնմկոցն, և զողջակիզեալ։ և զամե-
նայն սպասս և զկահս նոցա։ Յորժամ սիւն ամպոյն
շարժէը ՚ի տեղւոջէն, որով տայը նշան չուելոյ, և

փողք աղեցուածք հնչեցուցանէին, ահարոն և եր-
կու որդիք նորա էղիազար և իթամար առանձին
տնօրինմամբ նոյ իբր՝ ի սակս ծանր հարկաւորու-
թեան՝ մնանէին՝ ի սրբոլթիւն սրբոլթեանց,
և իջուցեալ զվարագոյր նորա, ծածկէին նովաւ
զտապանակն. և ապա պատատէին զնովաւ զծած-
կոյթն մաշկեղէն զկապուտակ. և յետոյ արկանէին
՝ի վերայ զձողս համակ կապուտակ՝ի վերուստ. և
ագուցանէին զձողսն: Ապա նմին օրինակի ծած-
կէին, բայց ոչ այնչափ զգուշութիւք և բազմապատ-
կեալ պատանօք՝ վասն այն հոյակ առաջաւորութեան,
զաշտանակն ոսկի, զսեղանն խնկոց, և զոսկեայ
զաց և զամենայն գործիս և զկարասիս նոցա: Զայլ
մեծապէս պատուիրեալ էր Աստ քահանայիցն զգու-
շանալ, զի մինչեւ իցէ նոցա ծածկեալ զտապա-
նակն ըստ ամենայնի, և զայլ ամենայն ինչ պատ-
րաստեալ, մի մտցեն՝ի ներքս որդիք կահաթու-
թեանցն զի մի ըստ դիպաց իմն տեսանիցեն
զտապանակն անծածկելի, և մեռանիցեն: * Այլ
մտցեն (ասէ որդիք կահաթու) վայրապար տես-
նել զսրբութիւն սրբութեացն, զի մի մեռանիցեն ||.
Թուոց. դ. 20:

Վարձ գնդին գերեմանի էր բառնալ զվերնա-
փեղկս խորանին, և զծորանն վկայութեան, և զար-
տախուրակս նորա, և զվերնասպատակեալ մաշկեղէնն
նուաստանս կապուտակեայս որ՝ի նմա՝ի վերուստ
կողմանէ, և զվարագոյր խորանին, և զառագաստս
սրահին, և զապարումն, և զամենայն կահ սպա-
սուն: Եւակ գործ որդւոց մերարեայ՝ էր բառնալ
զհոյակս խորանին, զնիգս, և զսիւնակս նորա, և
զհաերիսս, և զսիւնս կամ զտախտակս սրահին
շուրջանակի, և զայլ ամենայն կազմածս փայտե-
ղինս և պղնձիս խորանին, և չրջապատ սրահին,
և զապաւանդակս վարագուրացն:

Այս յետ այսպէս կարգելոյ զայս ամենայն, եր-
կրորդ անգամ հանդէս արար մովսէս այսց երից
գնդից ցեղին ղեւեայ. ոչ ևս յամսօրէից, այլ մի-
այն՝ի քսան և հինգ ամենից և՝ի վեր մինչև յայնա-

մեանս, որք կարօղ էին զյառաջագրեալ գործս խորանին տանել ՚ի գլուխ։ Եւ գտան յազգէն կահաթու 2750. յազգէն գեղսոնի 2630. և յազգէն մերարեայ 3200. ընդ ամենայն 8580. որք կարօղք մտանել յամենայն գործս խորանին վկայութեամբ։ Եւ յայսմհետէ գեղեցիկ կարգաւորութիւն պաշտօնէից՝ ամենայն ինչ արագ և անչփոթ վճարիւր. մանաւանդ զի և կազմածք խորանին՝ և այլ ամենայն կարասեաց որ ՚ի նմա, այնպիսի աքանչելի արուեստիւ շինեալ և ամենայն իրաք յարմարեալ էին, մինչ զի պաշտօնեայքն կարգեալք առ այն՝ ոչինչ գժուարութիւն կրէին ոչ ՚ի քակել, ոչ ՚ի բառնալ, և ոչ ՚ի կանգնել անդրէն զամենայնն ըստ կարգի։

Եւ պա կամեցեալ մովսիսի ըստ պատուիրելոյ տեառն սրբել և նուիրել զնոսա ՚ի պաշտօն տիրական, հրամայեաց նոցա գերծուել զամենայն մազ մարմնոյ իւրեանց, և զհանդերձս լուանալ։ Յետոյ տալ բեալ զնոսա առաջի խորանին վկայութեամբ, ժողովեաց անդ զժողովուրդ որգուցն իսրայէլի, մանաւանդ զիշխանս նոցա և զծերս ժողովրդեան. որք եդեալ զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխացուց՝ ինքնայօժար կամաք յիւրեանց կողմանէ նուիրեցին զնոսա ՚ի սպաս պաշտամանն տեառն, զամենայն իրաւունս և զիշխանութեամբ՝ զոր ունէին ՚ի վերայ այնր ցեղի, փոխագրելով առ ած. որով և հաստատեցին զփոխանակութեամբն զոր արարին նմա՝ ՚ի հատուցումն փոխանակ անդրանկաց իւրեանց։ Յայնժամ սրսկեաց մովսէս ՚ի վերայ նոցա զջուր սրբութեամբ մխոցոյ կարմիր երինջին, զորմէ ՚ի վեր անդր խօսեցաք, սրբել զնոսա ՚ի մեղաց անգիտութեամբ, և յամենայն օրինական պղծութեանց, զոր անգիտութեամբ ձգեալ իցեն յանձինս։ Եւ բերեալ զուարակ մի յանդուստ, և որթի տարեւոր անարատ, և եդեալ զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյ նոցա, զենին զնոսա. զմին վասն մեղաց, և զմիւսն յողջակէզ տեառն հանդերձ իւրաքանչիւր նաշխարհ քաւել վասն նոցա։ Եւ պա առեալ զնոսա մովսիսէ, և կա-

ցուցեալ առաջի ահարոնի և առաջի որդւոց նորա, եւ նոցա ի պարգև զնոսա, փոխանակ ամենայն անդրանկաց որդւոցն իսրայէլի սպասաւորել նոցա նեն վկայութեանց ընդ հրամանատարութեանն նոցա. և աղօթել և քաւել վասն ժողովրդեան։ Այս ապա մնին զնացիքն ի պաշտել զպաշտօն իւրեանց ի խորանին վկայութեանց ըստ հրամանի և ըստ կարգելոյ ահարոնի և որդւոց նորա։ Այս վարին զայն պաշտօն ընդ ամ քսան և հինգ, այսինքն մինչև յկիսանեըորդ ամ կենացս իւրեանց. և այնուհետև ազատ լինիցին ի ծանր ծառայ որդ խորանին. առ որ յաջորդիցին եղբարք նոցա. բայց ոչ ի ծառայութենէ՝ զոր վայր կալ զօրութեանն նոցա հասանիցէ. որպէս կալ ի պահպանութեանն խորանին և ամենայն սպասուց և կարասեաց նորա. միանգամայն՝ և ըստ օրում հմնագոյն, ուշադիր լինել գործոց նորամուտ զևտացւոց. զի ամենայն ինչ ըստ կարգի լինիցի։

Ի վճարել այսր ամենայնի, այն ինչ մնա ի վերայ հասեալ կայր ժամանակ չուելոյ ի սինեականդեռնէ անտի, իշխանք ցեղիցն հաստատեցին ի մէջ իւրեանց ոչ ևս յաստղել զնոսեր ընծայից մատուցանել նոն, զոր եգեալ էին ի մտի։ Այլ զուգաւորք համարին թէ ընծայաբերութեանն իշխանաց իցէ ընկեալ անմիջապէս զկնի կանգնելոյ խորանին վկայութեանն, և օծութեանն ահարոնի և որդւոց նորա յառաջուայ աւուր ամենեցուն առաջնոյ՝ յամին երկրորդի ելանելոյ որդւոցն իսրայէլի յԵգիպտոսէ. որ պատմի ի գիրս ելից. ՚ի. և գլուխ. ՚ի. և ՚ի. իբր զի ՚է ա. գլ. Թուոց. ասէ. * Այս եգև յաւուր յոբուամ կատարեաց մնալոյս առ ի կանգնելոյ զխորանն, և օծ զնա, և զամենայն սպասս նորա... մնատուցին իշխանք ցեղիցն... զընծայս իւրեանց։. որպէս թէ զկնի կանգնելոյ խորանին, անմիջապէս ի նմին աւուր սկսեալ էին ընծայաբերութենէ իշխանաց։ Սակայն պարագայքն երևցին յայտնի ցուցանեն, թէ եգև զկնի հանդէս առնելոյ մովսիսի ժողովրդեան որդւոցն իսրայէլի։

Ա՛յսր՝ զի մովսէս ՚ի Է. գլ. Ղեւտ. խօսեալով զկշռանացդ, որք ընծայաբեր եղեն, կոչէ զնոսա իշխանս ցեղիցդ, որք կային ՚ի վերայ ոստիկանուԹեան. և այս ոստիկանուԹեան որոշումն եղեւ ՚ի ժամանակի Համարելոյ զԺողովուրդն. նախ իբրև այլ ԹարգմանուԹիւնք կոչեն զնոսա յայտնապէս իշխանս այնոցիկ, որք մնին ՚ի հանդէս Համարոյ. իսկ հանդէսն այն եղեւ յաւաջնում աւուր ամսեանն երկրորդի. Ղեւտ. ա: Ա՛ր կրկրդ՝ զի յայն ընծայսն եղեն և սայլք և եզինք մատուցեալք առ ՚ի դիւրուԹիւն բառնալոյ և տանելոյ զինչ զինչ ՚ի կարասեաց խորանին. զորս նոյն ժամայն յանձնեաց մովսէս զևատացւոց, ըստ չափու ՀամեմատուԹեանն բեռանց իւրաքանչիւրոց: Ա՛պա յայտ է ԹէՀ զևատացիք յայնժամ սրբեալ էին, և նուիրեալ ՚ի սպասաւորուԹիւն խորանին. որ ըստ որում տեսաք ՚ի վերոյ՝ եղև զինի ՚ի Համար արկանելոյ զԺողովուրդն: Ա՛րկրորդ՝ զի կարգն, որով իշխանք ցեղից մատուցանեն զընծայս, սՀ կարգ է ծննդեան նոցա, և ոչ կարգ իշխանուԹիւն կամ նախատուԹիւն. այլ լոկ այն, ըստ որոյ դասուցեալ բեաց զնոսա ՚ած ՚ի բանակին շուրջ զխորանաւն: Ա՛րդ՝ այս դասաւորուԹիւն եղև զինի ԹուէլոյԺողովուրդն, այսինքն իբր միով ամսով կետոյ քան զօծումն խորանին: Ա՛պա զնախագրեալ բան գլխոյն պարտ է լայնաբար խմնալ. որպէս ԹԷ ասէ՝ յայն աւուրս, յորս կատարեցաւ շինուԹիւն խորանին և ածումն նորա: Ա՛րԹ է և իմնալ զայն բան իբրև սկզբնաւորուԹիւն պատմուԹեանն ընծայաբերուԹիւն իշխանաց. զոր կամեցեալ մովսէսի պատմել, դնէ նախ զկատարումն խորանին իբր նորոգ վՀարեալ. առ որ մատուցան ընծայքն:

Ա՛րդ՝ եղեալ զայս մեկնուԹիւն, ընծայաբերուԹիւն զայս օրինակ կատարեցաւ: Ա՛րկոտասան իշխանք ցեղից որդւոցն իսրայէլի մատեան առ մովսէս յայտ առնել նմա զյօժարուԹիւն իւրեանց ՚ի մատուցանել ընծայս ՚ած: Իսկ մովսէս, որ երկիւղած էր և զգուշաւոր յոյժ յամենայն ՚ի գործս իւր,

մինչև չառնել ինչ բնաւ առանց հրամանի, ժամանակ կեաց նոցա, մինչև հարցանիցէ զնոսա։ Այլ ասէ՝ յառաջ քան զհարցանել նորա՝ ասաց նմա առնուլ զամենայն, զոր ինչ և մատուցանիցեն։ Եւ առ բառնալոյ զամենայն չիտեմուէիսն, պատուիրեաց նմա մի մի օր սահմանել վասն իւրաքանչիւր ցեղի, և գնել ՚ի նոսա կարգ, ըստ որոյ բերիցեն զնա ծայս իւրեանց, և մատուցանիցեն զղջհս ՚ոյ. որ եղիցի երկրորդ նաւակատիք խորանին, և կատարեսցի յերկոտասան աւուրս ըստ Թուոյ որդւոցն յակոբայ։ Օ՚այս ամենայն ՚ի միտ առեալ իշխանաց գնացին. և նախ ամենեքեան միաբանեալ՝ բերին առ Մովսէս վեց սայլս պատրաստեալս ամենայն կարևոր գործեօք և կարասեօք, և երկոտասան եզինս. իւրաքանչիւր՝ մի եզն, և երկու ցեղք ՚ի միասին՝ սայլ մի։ Օ՚որս առեալ Մովսէսի՝ ըստ հրամանի նոյն Հ՚ետայն ետ ցղևտացիս. սայլս երկուս և եզինս չորս ետ յորդիսն գեթսոնի, որք ունէին բառնալ զառագաստս սրահին, և զվարագոյրս և զծածկոցս խորանին. և սայլս չորս՝ և եզինս ութ ետ յորդիս մերարեայ, զի նոցա բեռն առաւել էր. քանզի նոցա յանձնեալ էր բառնալ զսիւնս, զսիւնակս կամ զտախտակս, և զպեղպս և զայլ ամենայն փայտեայ և պղնձի կազմածս։ Ա՚յլ զի տակաւին չէին բաւական սայլքն՝ ո՛չ սոցա, և ո՛չ որդւոցն գեթսոնի, վասն որոյ բաղում ինչ մնայր նոցա անձամբ բառնալ և տանել։ Ա՚սկ որդւոցն կահաթու ոչինչ ետ Մովսէս. զի նոցա բեռինք էին սրբութիւնք սրբութեց, զոր յուսս իւրեանց պատ էր նոցա բառնալ։

Ա՚պա սկսան իշխանքն իւրաքանչիւր մատուցանել զընծայս իւրեանց ըստ կարգին, որ եդաւ նոցա ՚ի բանակին։ Եւ առ բառնալոյ զպատճառս նախանձու ընդ միմեանս և անափառութենէ մի քան զմի գերազանցելոյ ՚ի պարգեւս, որոշեցաւ, զի ա մեկնեցուն ընծայք լինիցին հաւասար ըստ քանակին, ըստ արժէից, և ըստ տեսակի իրաց։ Ա՚րդ՝ յառաջ հնում աւուր նաասոն որդի ամինադաբայ իշխան ցե-

ղին յուդայ մատոյց կնիք մի արծաթի ՚ի հարիւր և յերեսուն սկեղ. և տաշտ մի կամ սկահ արծաթի յեօթանասուն սկեղ. երկոքին լի նաշխուով ցանգելով ընդ իւղով՝ ՚ի զոհ։ Այլ ղն այսօրիկ էին արծաթիք, միայն ՚ի պէտս սեղանոյ ողջակիզացն ծառայէին. քանզի ՚ի սրբութիւն արծաթի անօթս մուծանել չէր օրէնն, բայց միայն ոսկիս։ Այսն այսօրիկ չաւել նասասն և տուփ մի ոսկի ՚ի տասն դահեկանի, կամ սկեղ լի խնկով, ՚ի սպաս սեղանոյ խնկոցն և սեղանոյ հացին առաջաւորութիւնէ։ Այնգ սոսա և զուարակ մի յանդուց, և խոյ մի, և գառն տարեւոր յողջակէզ. և նոխազ մի յայծեաց վասն մեղաց. որոյ մասն մի այրեր, իսկ մնացեալն լինիր զոհարար քահանային։ Իսկ ՚ի զոհ փրկութիւնէ կամ խաղաղականի մատոյց երինջս երկուս. խոյս հինգ, նոխազս հինգ, և որոջս տարեւորս հինգ։ Այ զոհից աստի ըստ նմին օրինակի զմասն ինչ այրէին. իսկ զչաւեւեաւն բաժանէին ՚ի մէջ իւրեանց քահանայք և ժառայիք. տային անտի մասն և մատուցանողին. զի ուրախ լինիցի ընդ ընտանիս իւր։

Այս ամենայն՝ և այլ ամենայն իշխանիք մի առ մի նոյն օրինակ մատուցին ըստ կարգի իւրեանց։ Այանգի զնի նասասնի մատոյց նաթանայէլ իշխան ցեղին իսաքարայ. ապա եղիաք իշխան որդւոցն զաբուղնի. ապա եղիսուր իշխան որդւոցն ռուբինի. սաղամիէլ իշխան որդւոցն շմաւնի. եղիսափան իշխան որդւոցն գադայ. եղիսամայ իշխան որդւոցն եփրեմի. գամալիէլ իշխան որդւոցն մանասէի. աբիդան իշխան որդւոցն բենիամինի. աքիեզեր իշխան որդւոցն դանայ. ապա փագիէլ իշխան որդւոցն ասերայ. հուսկ յետոյ աքիրան իշխան որդւոցն նեփթաղիմայ։ Այս էն ընծայք երկոտասան ցեղից որդւոցն իսրայէլի. Այնու համարին արծաթի սպասուց եղեւ 2400 սիկղ. կշիռ ոսկի տփոց ընդ ամենայն 120 սիկղ. Թմղ զանասունս՝ զոր մատուցին յողջակէզ, և ՚ի զոհ վասն մեղաց և փրկութեն։

Յետ այսորիկ, կամ ըստ ումանց յառաջ քան ՚ի

համար արկանել զղեւտացիս, որպէս մովսէս ըստ հրամանի տեառն՝ երկուս փողս արծաթիս ի զանազան պէտս, և նախ զառաջինն՝ յաղագս ազգ առնելոյ նոքօք ժողովրդեան զչուս իւրեանց, զի մի խառնիխուռն, այլ ըստ կարգին, զոր եդ ի նոսա մովսէս, չուեցեալ։ Վասնզի յորժամ սիւն ամպոյն, որ առաջնորդէր նոցա, ելեալ ի խորանէն վկայութեն սկսանէր խաղալ ընդ արևելս ի վերայ բանակին յուդայի, որով տայր նշան չուելոյ, քահանայքն հարկանէին զերկու փողս միանգամայն երկար, ուժգին և որոտաձայն. յայնժամ յառնէր բանակն յուդայի, և սկսանէր ըստ պետութեան գասակարգութեն յառաջ խաղալ. իսկ այլ բանակք կային մնային անշարժ ի տեղիս իւրեանց մնալով նշանի փողոյն։ Այլ ի հնչել փողոյն երկրորդ անգամ նոյնօրինակ երկար և սաստիկ, ելանէր բանակն ռուբենի ի հարաւոյ խաղալ զկնի առաջնոյն։ Իսկ ի հարկանել երրորդ անգամ, յառնէր յարևմտից բանակն եփրեմի։ Յուսկ յետոյ ի հնչել չորրորդ անգամ, շարժէր ի հիւսիսոյ բանակն դանայ վերջապահ համարէն իսրայէլեան գնդին։ Իսկ այսու ընդ միջ իւրաքանչիւր բանակի մնայր միջոց ընդարձակ հարկաւոր՝ առ ըստ կարգի և անշփոթ չուելոյ բանակացն։

Վասն փողքն ի սկզբան անդ երկու և եթ արարան. մի զի ի նմին ժամանակի բազական էին ոչ միայն յաղագս արարութեան չուոյ, այլև ի ժողովել նոքօք զժողովուրդն ի դուռն խորանին, յորժամ ուսանէր մովսէս յայտնել ինչ նոցա։ Երկրորդ՝ զի յայնժամ դեռևս երկու միայն էին քահանայք եղեալք և եթ ամոր. որոց և եթ օրէնս էր հարկանել զփողոն. քանզի և փողք էին ի սակի այլոց սրբոց զան անօթոց խորանին վկայութեն։ Այլ զկնի ժամանակաց ի բազմանալ քահանայից՝ իբրև տեսին որդիքն իսրայէլի, զի էին բազական երկու փողք, մանաւանդ ի ժամանակս պատերազմի ի մտանել նոցա յերկիր թշնամեաց իւրեանց, յաւելին և եւս. որպէս առ յեսուաւ յաւելաւ ցեօթն. և

առ սողմոնիս և ևս բազումս։ Զոր ՚ի կիր արկանէին ոչ միայն ՚ի պատերազմունս, այլև յամենայն գլխաւոր տօնախմբութիւնս. որպէս ՚ի յիսնամեան յոբելեան ազատութիւնս, ՚ի տարեգլուխս, յամանամուտս և յայլ ամենայն տօնս երևելիս և ՚ի հանդիսաւոր ղօհաբերութիւնս։

Գ.Լ. Գ.

Նլանէն որդին էսրայէլ ՚ի սինեական լեռնէ առաջնորդեաւ սեան ամօրէն։ Տրուանջէ նոցա, և պատիճ։ Մովսէս ըստ հրամանին Այ հաւատացանէ եօթանասուն դասաւորս օծնականս անչէն։ Մարիամ քոյր մովսէսի պատիճ եղեալ վասն բամբասելոյ ղեղբայրն իւր մովսէս։

Երբև վճարեցան ամենայն նախադրեալքդ այսպիսի սիրալի ճաշակիւն տնտեսութեամբ, յամին երկրորդի ՚ի քսանեերորդ աւուր ամսեանն երկրորդի՝ վերացաւ սիւն ամպոյն ՚ի խորանէն վկայութեանն, և գնացեալ եկաց ՚ի վերոյ խորանին յուդայի ընդարևելս։ Յայնժամ ահարն և երկու որդիք նորա մտեալ ՚ի խորանն վկայութեանն պատրաստեցին զամենայն սպաս և զկահս նորա բազում զգուշութեամբ. ըստ որում ՚ի վեր անդր նշանակեցաք. իսկ ղևատացիք եկին կացին առ դրան անդ խորանին կազմ և պատրաստ ՚ի բառնալ զայն ամենայն։ Այնգունակ և յուդայեանքն յարեան վաղվաղակի, և եղեալ ՚ի կարգի զբանակ իւրեանց, ՚ի նայիս առաջնոյ նշանի փողոյն չու առնել։ Ապա երբև սկսան քահանայք հարկանել զփող ազդեցութեանն, մատուցեալ մովսէս առ տապանակին սրբութեանն, զոր որդիք կահաթու արդէն բարձեալ ունէին յուսս իւրեանց, ասէ.* Ելի՛ տէր, և ցրուեսցին թշնամիք քո. փախիցեն ամենայն ատելիք քո։ Նոյոյ. Ժ. 35։

Այլ եւ տապանակն ՚ի ձանապարհ զկնի ամպոյն ՚ի գլուխ մեծի քանակին. և մնային և ահարոն, և երկու որդիք նորա ընդ նմա։ Զկնի նոցա անմիջապէս փոքր մի ՚ի բացեայ չուեաց ցեղն յուդայի, ոչ միանման ընդ այլոց երկուց ցեղից գնդի իւրոյ՝ խաբարայ և զաբուղոնի, այլ չափաւոր ինն միջոցս զատուցեալ ՚ի նոցանէ. ունելով յաջմէ զխաբար, և յահեկէ զզաբուղոն ՚ի մի գիծ դասաւորեալ։ Այլ զևատացիք որդիք գեթսոնի, և մերարեայ, որք բարձեալ տանէին զամենայն խոշոր կահս և զկարասիս խորանին, չոքան զհետ նոցա պաշտպանեալք ՚ի գնդէ անտի յուդայի։ Ապա ՚ի հնչել երկրորդ նշանին, ամբարձաւ բանակ ռուբինի, զնոյն կարգ և զնոյն միջոց հեռաւորութեամբ պահելով. ռուբէնն երթայր ընդ մէջ զհետ շաւղաց յուդայի. յաջմէ ունելով զչմաւոն, որ երթայր զկնի գնացից խաբարայ. և ՚ի ձախմէ զդադ զկնի զաբուղոնի. և զհետ նոցա զևատացիք որդիք կահաձու, որք բարձեալ յուսս իւրեանց տանէին զբերքազան կահս։ Յետոյ ՚ի հնչել երրորդ և չորրորդ նշանին չուեցին նովին կարգաւ երկու բանակք՝ եփրեմայ և դանայ ընդ այլոց երից ցեղից գնդի իւրեանց։

Այս չու էր մեծ, յորում լոկ պատերազմականք առաւել էին քան զվեցհարիւր հազար. իսկ այլովքն հանդերձ՝ անցանէին զերկու միլիոնիս։ Որ և կանոնաւոր վայելուչ դասաւորութեբն, և առ հեղախրոխտ գնացիւք, հրաշալի ինն՝ միանգամայն և ահարկու տեսարան ընծայեցուցանէր աչաց, եւ լեալ ՚ի սինեականս լեռնէ՝ ունելով առաջնորդ զամպն աքանչելի հովանի ՚ի տուէ, և սիւն լուսոյ ՚ի գիշերի. և զմանանայն պատուական անխափան զօր ամենայն. և այնպէս ամենայն իրօք ինամեալ և պաշտպանեալ ՚ի հայրապետէն ինամողէ։ Ապա կայր հանդերձ այսու ամենայնիւ, հազիւ թէ սակաւ ինչ ձանապարհ արարեն՝ երեքօրեայ հանդարտաբայլ գնացիւք. զի ընդ ժամս ժամս հանգիստ առնուին ՚ի կազդուրումն և ՚ի նիւթ, և ահա յաւուր

երրորդի եւ խռովութիւն մեծ ի ժողովրդեան, մանաւանդ ի վերջապահ մասին քանակին։ Օ՛ի նեղեալ և տաղտիացեալ յաշխատութենէ երկար ձանապարհորդութենէ, որ ոչ ևս տանելի թուէր նոցա, սկսան որոնիլ չարաչար ընդդէմ նմա. որպէս թէ վայրապար յածեցուցանիցէ զնոսա լսկ ի տանջել յամայի յանդն անապատս։ Ընդ այսպիսի գժոխային յանդգնութենէ ապաչնորհ յետասիտ ժողովրդեանն բարկացեալ նմա, առաքեաց Հուր ի նոսա, որ կիզեալ սպառեաց զոմն մասն քանակին տրամօղաց։ Յորմէ զահի հարեալ այլոց, դիմեցին աղաղակելոյն առ մովսէս. և նա աղօթիւք ցածոյց զբարկութիւն նոցա. և դադարեաց հուրն։ Այս անուն տեղւոյն կոչեցաւ Հրայրեաց, ի զարհուրելի արկածից անտի։

Ապա երբեմն սկսան ի նմին աւուր յառաջ խաղալ ընդ ձանապարհ իւրեանց, ընդ երեկս եկաց սիւն ամպոյն, ի նշան դադարելոյ անդէն. վասն որոյ և մովսէս կանգնեաց անդ զխորանն վկայութեան. և որդիքն իսրայէլի հարին զվրանս իւրեանց։ Այս չև էին անցեալ ժամք յօրովք զկնի վերադրեալ ահարկու պատուհասին, ահա անդրէն արծաթեցաւ արտունջ սաստիկ նախ ի խառնիճաղանջ եղիսպացիս և ի ծառայս, որք յարեցան ի յերբայեցիս յետնել նոցա յեգիպտոս. և ի նոցանէ վաղվաղակի տարածեցաւ ընդ բանակն ողջոյն, ոչ ևս վասն աշխատութենէ կամ երկարութենէ ձանապարհի, այլ ի պատձառս պորտոյ և որովայնի։ Ունել ունէին զօրհնապազ կերակուր պատուական զմանանայն յերկնից մատակարարեալ նոցա, քաղցր և հաճելի երբեմն զհոտիսխ իւղոյ և մեղու. այլ քիմք և ձաշակ նոցա սովորեալ ի բիբտ և ի խոշոր կերակուրս՝ ի նոյն էին սիրտք նոցա. և անհամանայր մանանայն ի բերանս նոցա, այն՝ յոր չէր հարկ աշխատ առնել և զատամունս։ Վասն որոյ նստեալ առ դրան վրանաց իւրեանց՝ լացին ըստ անիւտ մանկանց, յիշելով անյագ ցանկութիւնք զմիս, և զձուկն զոր ուտէին յեգիպտոս ցյագ. և

զսեխեն, և զալրասն, և զսոխն, և զևստորն. ո՞տա-
ցէ մեզ ասէին զմիս ուտելոյ. և զայն խնդրելին
Թախանձանօք ի մովսիսէ, որպէս խեղ և տա-
հակ մանկունք ի մօրէ. տուր մեզ միս ասելով,
զի կերիցուք։

Ա՛յս ապառուամ հետուելիւն խստապարանոց
ժողովրդեան յաւելեալ ի վերայ նախընթաց ապըս-
տամբութեան, որ դոյզն ինչ յառաջ հրակէզ պա-
տուհասիս վճարեցաւ, ի վերջ հասոյց զանապատա-
երկայնմտութեն, և զանխորտակելի արիութեն ած-
այնոյն մովսիսի. մինչև չզօրել այլևս բառնալ
զծանրութեն նոցա։ Այսպէս որոյ անկեալ առաջի
ՏԵՌՆ՝ ազաչէր ինքնանուէր հպատակութեբ Թեթևա-
ցուցանել ի նմանէ զծանրատաղտուկ բեռն զայն,
զոր միայն չէր կարօղ բառնալ. ապա Թէ ոչ՝ եթէ
այնպէս հաձոյ լոյր մեծավայելչութեն նորա, արասցէ
նմա ողորմութեն, և հանցէ զնա ի կենաց աստի.
զի ազատեսցի ի հանապազորդ չարչարանաց տե-
սանելոյ զապստամբութեն նոցա, և զարժանահաս
պատիժ կոտորածի նոցա։

Վասնզի՝ ոչ ի ծառայն իւր հաւատարիմ,
ասաց նմա ժողովել եօթանասուն այր յաւագան-
սոյն իսրայելի, զոր ձանաչէր Թէ ընտիրք էին. և
հանել զնոսա ի խորանն վկայութեն։ Այնպէս կա-
մէր ինքնին անմիջապէս կացուցանել զնոսա իշ-
խանս օգնականս մովսիսի, ընդարձակագոյն իշխա-
նութեբ, և ոչ որպէս զորս նա ինքն մովսէս իբր
ամաւ յառաջ՝ մինչ էին յառաքելիսն՝ կացուցեալ
էր ըստ խրատու յեթովրայ՝ դատաւորս ի վերայ ժո-
ղովրդեան. որք սակաւ կարէին օգնել նմա. մի՝ զի
էին նորա անմիջապէս չոյ կացուցեալ. վասն որոյ
չունէին այնչափ յարգ յաչս ժողովրդեան. և երկ-
րորդ՝ զի իշխանութեն նոցա փոքր էր՝ չիբս մանուսա
ևեթ ամիսս մի։

Այբար մովսէս՝ որպէս հրամայեաց նմա տէր,
ընտրեալ եօթանասուն այր ի միջոյ դատաւորացն
այնոցիկ. և կացոյց զնոսա շուրջ զխորանսն։ Այս-
ահա էջ ած ծածկեալ ամպով ի խորան անդր. և

զկնի խօսելոյ ընդ մովսիսի բաժանորդ արար զնա սա Հոգւոյն իմաստութեան և հանճարոյ, որով լցեալ էր զմովսէս. լինել և նոցա հանդոյն մովսիսի իմաստուն և հանճարեղ՝ի խորհուրդս, երկայնամիտ և արի՝ի նեղութիւնս, մարդասէր, քաղցր և կարեկից՝ի գործս, որպէս վայել է իշխանաւորաց։ Այլ ահա նոյնժամայն յարիշատակեալ մեռաք չծծայինս, սկսան աղդմամբք Հոգւոյն մարգարէանալ. այսինքն երկեալ զօրհնութիւնս նոր, և խօսել բանս լի ածպաշտութեամբ և իմաստութեամբ։ Ոչ այս արար հած, որպէս զի այսու արտաքին նշանաւոր փոփոխութեամբ նոցա՝ի միտ առցէ ժողովուրդն զնեղքին իշխանութենին, զոր էառ նոցա. որով և՝ի պատուի ունիցին զնոսա, և հնազանդեսցին նոցա։

Երկու յեօթանասնից անտի ընտրելոց եղբաղ և մեղբաղ կոչեցեալք, ոչ գտան՝ի նմին ժամու ընդ այլոց՝ի խորանի անդ. կամ զի ոչ ծանեան զժամանակ ժողովելոյ նոցա, և կամ առ խոնարհութեամբ և պատկառանաց ոչ իշխեցին երևիլ՝ի մէջ այլոց։ Այլ Հոգին ՝այ՝ որ չէ կապեալ ոչ՝ի ժամանակ, և ոչ՝ի սահմանաւոր ինն տեղի, հանդեաւ և՝ի վերայ նոցա՝ի բանակի անդ ուր էինն. յորս սակս և նոքա նոյնպէս սկսան մարգարէանալ անդ առաջի բազմութեամբ. ուստի պատանի մի ընթացեալ՝ պատմեաց մովսիսի զմարգարէանալ նոցա։ Իսկ յեսու նաւեայ պաշտօնեայ մովսիսի, որ միշտ կայր առ նմա, դժպատեհ համարեալ զմարգարէանալ նոցա մեկուսի՝ի խորանէ, և թերևս ապստամբութեամբ, կամ նուազութեամբ իշխանութեանն մովսիսի զնոսա վարկուցեալ, ասաց ցնա արգելուլ զնոսա՝ի մարգարէանալոյ։ Այս պատասխանի մովսէս՝ իբր սաստելով նմա. մի գրգռեր դու զնոս՝ի նախանձ. կամ ըստ այլ թարգմանութեամբ, մի լինիր այդպիսի նախանձախնդիր փառաց իմոց, զի մի վրխրեսցիս՝ի ձնմարտութեամբ. պարտ էր քեզ խնդալ ընդ այդ, որպէս եաս խնդամ, և ցանկամ թէ ամենայն ժողովուրդ սրգոյն իսրայէլի լինէր ընդունակ Հոգւոյն ՝այ և մարգարէանալոյ։ Այս պատասխանի

մեծ լսելեցուած եղև յականջս յեսուայ. որով ծանեաւ զնչմարիտ կնիք մեծութե՛ն ոգւոյ իշխա-նաւորի՝ լինել հաղորդական, և մի տարապայման նախանձու ինքնիշխանութեան զամենայն անձին սեպհականել։

Ա՛պա գնաց մովսէս և ընդ նմա նորոգ ընտրեալ ծերքն իսրայելի՛ ի բանակն. և պատուիրեաց ժողովրդեան սրբել զանձինս, կալ պատրաստ, զի առ վաղիւ տացի ասէ ձեզ՝ ամ ըստ ցանկութե՛ն սրտից ձերոց՝ ուտել մի՛ զմի օր, կամ երկուս, կամ տասն կամ քսան, այլ զամսօրեայ աւուրս։ Եւ ահա՛ ի վաղիւ անդր յարոյց՝ ամ հողմն արևմտեան, և խաղացոյց յայս կոյս՝ ի ծովէ լորամարգի չոր ոչ ոք ոչ ոչ ոչ զաւազ ծովու. և ամ չուրջ զբանակաւն ըստ միոյ աւուր ճանապարհի յամենայն կողմանց իբրև երկու կանդնաչափ թանձրութե՛ն երկրի. կամ ըստ այլ թարգմանութե՛ն, որք իբրև երկուս կանդունս և երի՛ն ի վեր երկրի։ Ոչ այն տեսեալ մնամոլ ժողովրդեան, նայն ժամայն յարձակեցան սպառեցան՝ ի դատ անդր, և ժողովեցին անյագաբար, ոչ գիտեալ՝ թէ անէծս ժողովեն, որչափ և կամեցան և կարացին. որ սա կաւ ժողովեաց՝ տասն քոռ. և ազէկին և ապխտեցին իւրեանց ապուխտս չուրջ զբանակաւն։ Եւ զաւուրս երեսուն կերան անյագ որկորատութե՛ն, մինչև ելանել ընդ ռընդունս նոցա. քանզի չև էր սպառեալ միսն յատամունսն նոցա, ահա եղ բարկութե՛ն ամ՝ ի վերայ նոցա, և եհար զնոսա հարուածս մեծամեծս. որով մեռան բազումք։

Եւ նշանակէ՛ ասբ գիրն, թէ զի՞նչ էր հարուածն. նմին իրի այլևայլ կարծիք են զպատմանէ. ոմանք ասեն լինել ժանտամահ, կենաց ախտ ծիւրական. այլք՝ հուր, յերեալ՝ ի բան սաղմոսին ՀԷ. 21. ուր յետ յիշելոյ զարտուղութ վասն կերակրոյ, յարէ զկնի. * Եւ ան այսորիկ լուաւ զայս ասբ, և հուր բորբոքեցաւ՝ ի յակոբ. և բարկութե՛ն եղ՝ ի վերայ իսրայելի ։ Դայց տեսանեմք, զի յամենայն տեղիս ուր ուրեք պատժեաց ամ հրով զարտուղութ որդւոց

իսրայէլի, եթէ գիրն որոշ նշանակէ զայն. ուստի և ոչ ասաւ զանց առնէր։ Իսկ բան սաղմոսին զայլ ինն տրտունջ ակնարկէ, որ եղև յառաջ քան ըզպարգևել Ոյ զմանանայն։ Այս տեսակ հարուած ծոյն անյայտ է. որպէս և Թիւ մեծելոցն. սակայն երևի Թէ բազում եղեն յոյժ. որք առհասարակ անդ Թաղեցան. յորմէ և տեղին զկեղտ անուն նոցա ժառանգեաց, զի կոչեցաւ գերեզմանք ցանկութեան։ Ուր արժան է ի միտ առնուլ, զի ոչ ամենեքեան գտան համակից դժնդակ մեղայ եղբարց իւրեանց, վասն այնորիկ և ոչ պատժոյն եղեն մասնակից. բայց ամենեքեան գտան բաժանորդ լորամարգեաց առատաձեռն պարգևացն ՅԱՀ. յոր վայելեցին գոհութիւն և համեստ պարկեշտութիւն. և եթէ հանգոյն սոցա պարկեշտանային և այլք, ոչ արդեօք անդ Թողեալ էին զոսկերս իւրեանց։

Իբրև Թաղեցին զմեռեալս, չուեալ ի գերեզմանաց անտի ցանկութեան՝ իբրև միօրեայ գնացիւք, եկին յասերովթ. և անդ հարին զբանակ իւրեանց. Թերևս այսպէս անօրինելով Ոյ, զի մի յաշխատութիւն երկար գնացից գործեալ պատճառս առցէ ժողովուրդն տրտնջելոյ՝ յանտանելի վիշտ իւրումն ծառայի մովսիսի։ Սակայն և այնպէս չէղև նմա և անդ անհնազանդեալ ի վշտաց. զի ուր ժողովուրդն ի հնորոգ հարուածոյ անտի սասանեալ՝ կայր ի հանդարտութեան, խռովութեան ի տան նորա վառեցաւ։ Զանգի հազիւ Թէ հասին յասերովթ, մարիամ և ահարոն՝ քոյր և եղբայր մովսիսի՝ բամբասեցին զնա ի պատճառս կնոջ նորա. զի ըստ որում յոյժ ցանկ բնագիր եբրայեցւոց, որպէս և մերս Թարգմանութիւն, կին այլազգի առ մովսէս. կամ մանաւանդ՝ զի զոր Թողեալ էր միանգամ, յորժամ ըստ հրամանին Ոյ եկն առ ժողովուրդ իւր հանել զնոսա ի գերութենէ, յետոյ անդրէն ընկալաւ, մինչ յոթոր աներ նորա այծ զնա յանապատ անդր։ Այլ գիրն եթէոփալացի կոչէ զնա. իբր ոչ եթէ՝ զի բնիկ եթէոփալացի էր, յաշխարհէն ափրիկոյ. այլ զի՝ որպէս յայտ է, դուստր էր նա յոթորայ քրմին

մագիանապետ, որք բնակէին յայս կոյս կարմիր ծո-
վուն, և երկիր նոցա ի ծո գիրս սովորաբար կոչի
Վռոշ. զոր եօթանասունք, որպես և վուլկատայն
լատինացոց Թարգմանեն Բնեռվոլիս. յայսմանէ և
կինն մովսիսի կոչեցաւ եթէոպացի:

Բայց այս բան չերևի բաւական պատճառ այսը
նորոգ բամբասանաց. զի մովսէս ոչ եթէ յայն
ժամ ընկալաւ զկինն իւր, այլ ի դարձուցանել յո-
Թորայ բազում ամօք յառաջ. ընդէ՞ր է ապա
այժմ քրթմնջել ընդդէմ նորա, և ոչ յայնժամ:
Հասարակ յայս է թէ նոր ինչ աւելի գժտութիւն ան-
կեալ եցէ ի մէջ. որ ըստ որում երևի ի բանից
մարիամայ՝ այս ինչ էր: Օ՛ի սեփորա մեծամտեալ
ընդ մեծութիւն իշխանութիւն առն, և ընդ մտերիմ
ընտանութիւն նորա ընդ այլ սպարծանօք բարձրացեալ
գնա գէր ի վերոյ քան զամենեսին. յոր և ինքն
վատահացեալ՝ խնդրէր զգերակայութիւն ինն ունել
ոչ միայն ի վերայ այլոց կանանց, այլև ի վերայ
մարիամայ. և այսպէս իբր տիկին մեծի օրհնադրին
նախասպատիւ երևիլ ի մէջ ամենեցուն: Այլ զի
յայսպիսի վիճս, ուր մտանէ բաղդատութիւն նախա-
պատուութիւն և նուաստութիւն, դժուարին է յայ-
լեալ, և տանել՝ մանաւանդ կանացի տկարութիւն,
թէպէտ և աջ էցէ. նմին իրի և մարիամ առ ի
ցուցանել զինքն և զահարոն զերջայր իւր՝ թէ ոչ
որպես հասարակ, սակայն և ոչ կարի ի վայր առա-
ջի ևս, ասաց, միթէ ընդ մովսիսի՞ միայն խօսեցաւ
ևս, ոչ ապաքէն և ընդ մեզ խօսեցաւ. որում
ձայնակից գտաւ և ահարոն. այլ ոչ այնչափ ջեր-
մութիւք, որչափ մարիամ. վասն որոյ և պատիժն ի
վերայ մարիամայ անկաւ:

Վասնզի նոյնժամայն էջ ամպով առ գրան
խորանին վկայութիւն, և կոչեաց անդր զահարոն
և զմարիամ. և ածային ահաւոր իշխանութիւք ցու-
ցեալ նոցա զգերազանցութիւն մովսիսի քան զնոսա,
և քան զամենայն մարգարէս՝ որք յետոյն գալոց
էն, և կշտամբեալ խստիւ զնոսա, թէ զիա՞րդ ոչ
երկեան բամբասել զայնպիսի սիրելի ծառայն իւր,

որպէս թէ դարձոյց զԵիկունս, և գնաց բարկու-
թիւ, ոչ միայնով պատասխանւոյ նոցա. ընդ նմին
և ամին վերացաւ ի խորանէն. իսկ մարիամ միաց
անդ լն բորոտութիւք իբրև զձիւն. պատիժ դառնա-
գոյն և խնարհեցուցիչ կանայի քնուԹիւ՝ քան զա-
միենայն պատիժս։ Այլ Թէպէտ մովսէս հեզն և ա-
նոխակաբն քան զամենայն մարդիկ աղաչեաց զնոճ
վասն քեռն իւրոյ, համառօտել զպատիժն. սակայն
և այնպէս հարկ եղե նմա միալ արտաքոյ բանա-
կին զԵօԹն օր զատուցեալ կամենայն մարդկանէ.
և ապա յաւուր ուԹերորդի՝ որպէս սքանչելեօք
հարաւ բորոտութիւք, նոյնպէս սքանչելեօք ողջա-
ցեալ սրբեցաւ բոլորովին. և դարձաւ ի բանակ
անդր. յայնժամ վերացաւ և ամին, տուեալ նշան
չուելոյ։

ԳԼ. ԳՈ

Ա՛ռաջ մովսէս յանապատէն փառանու ծէ լրտեսս լերբ-
պեսել զերկիրն աւետեաց։ Յաղովսէրդն ածաբելել ի լա-
բալար լերոյ պաւանոյ լրտեսաց՝ հեսուէն հրամանի ՅԱՆ. վասն
որոյ և դաւաճնէին ի ՅԱՆԷ ամենէնն՝ որ ի խառնաւենից և ի
վեր ելին յեգիպտոսէ, ուշ կոխել յերկիրն աւետեաց։

Ապա չուեալ յասերովթայ, եկին յանապատն
փառանու, և բանակեցան ի լուսաժամս և ի կա-
դէս բառնեալ. որք ոչինչ կարի ի բացեալ են յի-
րեարաց ի նմին փառան անապատի. զորս աստ զանց
առնէ մովսէս յիշել. բայց ստորև նշանակէ զեր-
կոսին իսկ յանուանէ՝ զառաջինն՝ Խոռոց. ԼԵ. 18.
իսկ զերկրորդն՝ Է. օրին. ա. 19։ Այս երկու տեղիք
էին առ սահմանօք երկրին քանանացւոց, անդր բ-
պետ ի միջի ունելով զլերինս ամովրհացւոց. ընդ
որս եԹէ անցանէին յայնկոյս, ընդ առաջ ունէին
լինել դաշաք ցանկացեալ երկրին աւետեաց, ուր

դէմ եղեալ երթային։ Աբդ՝ իբրև բանակեցան՝ի կապէս քառնեայ, ժողովեաց մովսէս զորդիսն Իսրայէլի, յայտ առնել նոցա զկամս Տեառն. որ կամէր անաի անմիջապէս տանել և մուծանել զնոսա յերկիրն խոստացեալ հարց նոցա. որպէս պատմի. Ե. օրին. ա. 20։ Ահա եկիք ասէ՝ մինչև ցլեառն ա մովրհացւոց, որ է առաջին ժառանգութիւն, զոր սահմանեաց Տէր տալ ձեզ. արդ՝ ժամ է ձեզ ելանել և ժառանգել զնա. որպէս ասաց Տէր Տէր հարցն ձերոց՝ ձեզ. մի երկնչիցիք և մի զանգիտիցէք. զի մանանեայ զնա Տէր՝ի ձեռս ձեր։

Մովսէս ակնուներ թէ յայսպիսի ուրախասիրտ հաւատոյ աւետեաց առհասարակ զուարթացեալ քաջալերեալ, փութասցին նոքա հետայն աներկիմիտ վստահութիւն ձեռն՝ի գործ արկանել։ Այլ վերոյիշեցեալ յակնկալութիւնն. զի թէպէտ նոքա յայտնի դիմադարձութիւն ինչ ոչ ցուցին, բայց պնդոիսի ինն շաւիղ կալան յապաղել զգործադրութիւնն, զոր և մովսէս ոչ իմացաւ։ Աւանդի մատեան առ նա գլխաւորք նոցա, և խորհուրդ ետուն, յառաջագոյն քան զմիոիլ իւրեանց՝ի մարտ՝ առաքել լրտեսս, դիտել զերկիրն, և զհանգամանս ձանապարհացն ընդ որ ելանիցեն, և զքաղաքացն, զորս նախ ուղղին առնուլ. զի մի յանդէտս և կոյր զկուրայն յարձակելով՝ ձախող ելից դիպեսցին։ Այս խորհուրդ նոցա՝ի վերին երեսս երևի կատարեալ խոհեմութիւն, համաձայն ուղիղ կարգի զինուորական օրինաց. բայց թէ քաջ զինուցի արմատն, յորմէ յայդ խորհուրդ բերեալ եղեն նոքա, գոյի լինել կատարեալ թերահաւատութիւն և մանկական երկիւղ. որպէս և ելք իրացն հաւաստեցին. զի ամենայն թշուառութիւք, որք յետ այնորիկ հասին նոցա, ասաի կալան զծագումն։ Ապաքէն հանդերձ այսու ամենայնիւ՝ հաճոյ թուեցաւ առաջի մովսիսի բան նոցա. զոր այլազգ ինչ ոչ կարեմք իմանալ, բայց եթէ թոյլտուութիւն Տեառն. որ՝ի պատիճ անհաւատութեան նոցա՝ թոյլ ետ, և ասաց Մովսիսի առնել ըստ բանի նոցա։

Ա՚ման որոյ յիւրաքանչիւր ցեղէ ընտրեցան մի մի զօրապետք, որք առաւել յաջողակք՝ զգաստք և աչալուրջք թուեցան։ Ի՚ ցեղէն ռուբինի սա զամիել որդի աքսուրայ. ի՚ ցեղէն շմաւնի՝ սափատ որդի սուրեայ. ի՚ ցեղէն յուդայ՝ քաղէբ որդի յեփոնեայ. ի՚ ցեղէն իսաքարայ՝ գաղամ որդի յովսեփայ. ի՚ ցեղէն եփրեմայ՝ յեսու որդի նաւեայ. ի՚ ցեղէն բենիամինի՝ փաղտի որդի ռափուայ. ի՚ ցեղէն զաբուղոնի՝ յուդիէլ որդի սուդիայ. ի՚ ցեղէն մանասէի՝ գադդի որդի սուսայ. ի՚ ցեղէն դանայ՝ ամիէլ որդի գամալի. ի՚ ցեղէն ասերայ՝ սաթուր որդի միքայէլի. ի՚ ցեղէն նեփթաղիմայ՝ աբի որդի յաբեայ. ի՚ ցեղէն գադայ՝ գուդիէլ որդի մակբեայ։ Ա՚յ միայն ցեղն ղեւեայ մնաց արտաքոյ այսը արշաւանաց, որ ոչ առաքեաց ղոք. մի՝ զի զևատայիք էին կարգեալ ի՚ սպասաւորութիւն խորանին. և երկրորդ՝ զի ի՚ բաժանման երկրին աւետեաց, զոր հանդերձեալ էին առնել, չունէին նոքա բաժին ժառանգութեամբ. վասն որոյ և ոչ պարտաւորութեամբ ի՚ մարտ մտանելոյ։

Օ՚ երկոտասանեսին զսոսա առաքեաց մովսէս յանապատին փառանալու ի՚ կադէսբառնեայ հանդերձ մանրամասն հրահանգութեամբ, թէ զիարդ և զինչ ինչ ունին դիտել, մանաւանդ յերկրին քանանացւոց. զի այն լինելոց էր գլխաւոր ասպարէզ պատերազմի նոցա. և բերել ինքեան զոյց։ Ա՚սաց նոցա ելանել ի՚ գլուխ հարաւային լերանց. և ի՚ բարձանց անտի՝ ուսոտի երևիլն գաշտք երկրին քանանացւոց, դիտել և զննել զհանգամանս երկրին՝ թէ քարո՞ւտ իցէ և աւազուտ, եթէ հողախառն և ջրաբեր։ Կա՛ւ զինչ ժողովուրդ ի՚ նմա, բազմա՞թիւ իցեն և զօրաւոր, եթէ սակաւ և անզօր. երկի՞ւղ իցեն և անաւապ, եթէ արիք և քաջասիրտք։ Կա՛ւ ձանապարհք զիա՞րդ իցեն, արահե՞տք և դիւրագնալիք, եթէ առասպար և դժուարաքայլ. և իցեն զգուշացեալ պահպանութեա՞ք պահակերպ։ Կա՛ւ զինչ իցեն քաղաքք՝ յորս նոքա բնակեալ էն, պարսպա՞ւք, եթէ անպարիսպ. զի՞նչ ամուրք և

քերդք նոցա, և զհարդ ամբացուցեալ։ Եւ զհարդ էին երկիրն արգաւանդահող, և ոչ պակս մշակեալ. կայցեն ի նմա ծառատունկք պտղաբեր ծառոց, և անտառք փայտի, եթէ նուազեալ էին ի փայտից։ Օ այս ամենայն պատուիրեալ նոցա և քաջալերեալ, արձակեաց զնոսա. յանձնելով բերել ինչ ինչ ի պտղոց երկրին առհասարակ արգասաւորութեան նորա։

Եւ՝ յորժամ անկեալ նոցա, և անցեալ ընդ ասպատան սին, չորեցան ընդ բովանդակ երկայնութեն երկրին քանանացւոց՝ կալեալ Յանասպարհ ըստ ընթացից յորդանանու՝ մինչև ցրոոբ քաղաք, որ էր առ ոտս լերանանու լերանց, ցհիւսիսային եզր սպառուածոյ պաղեստինեայ, ընդ Յանասպարհ՝ որ հանի յեմաթ. (ուր առ մեզ գրի՝ ի մուտս Եփրաթայ, փոխանակ գրելոյ՝ ի մուտս եմաթայ)։ Եւ նոքա ընդ միջ երկրին անցեալ, դարձ արարին քերելով առ սահմանօք սիդոնացւոց, և փշտացւոց. և առ իջանելոյ ի բանակն իւրեանց՝ ելին ի քերբոն, տեղի հուլակաւոր ի բնակչաց հակացից որդւոց Ենակայ։ Եւ անտի անցեալ ընդ ձորն ողկովզոյ՝ հատին ուղ որթոյ, և ողկոյզ մի խաղողոյ ի նմա այնչափ մեծ, զի հարկ եղև արանց երկուց բառնալ զայն լծակաւ. յորմէ և զտեղին անուանեցին ձոր ողկովզոյ. առին անտի և նուռն և թուզ. և յետ աւուրց քառասնից դարձան անդրէն ի բանակն ի փառան կադէս։

Եւ զամենայն զոր տեսին՝ պատմեցին ստուգութեա՛, բայց անխոհեմութե՛. իբր զի պատմեցին ի լուր համարձակ ժողովրդեան. ուր պարտ էր նոցա նախ՝ առանձինն մինչեւ միայնոյ յայտնել զամենայն. և ի նմանէ ուսանել թէ զինչ ինչ պարտ էր յայտնել բազմութեն՝ և զիարդ, և զինչ ինչ ծածկել ի նոցանէ։ Եւ՝ անգի՝ բազում այն է, զի չէ պարտ հպատակաց գիտել զամենայն, զոր պարտի գիտել իշխանն և առաջնորդն։ Այ՝ ամենաւոր տեղեկութիւնք յայտնեալք յականջս իշխանին, նպաստեն բազում անգամ՝ ի բարիոք և՝ ի գեղեցիկ

անտեսութեի՛ և՛ ի բարեկարգութեի՛. բայց յառաջ քան զդէպ ժամանակն հասեալ յունկին բազմութեի՛, չէն առ այլ ինչ պիտանացու, եթէ ոչ՝ աղմուկս և շփոթս յարուցանել. որպէս եղև այս ամ գամ՛ ի բանակին իսրայելացւոց։ Վանդի՛ ի բանից անտի նոցա աղմուկ մեծ անկաւ՛ ի մէջ ժողովրդեան. զոր ևս քան զևս վառեալ բորբոքեցին տանեքին վատասիրտ յուսահատութ լսեսք, ահարկու ինն նկարագրութի՛ դնելով առաջի ժողովրդեան զՀանգամանս քաղաքաց և ազգաց բնակչաց երկրին, զոր լրտեսեցին։ Երկիրն ասէն բարի է, որ բղխէ կաթն և մեղր. բայց ազգն բնակեալ՛ ի նմա սաստիկ և ահաւոր. քաղաքք նոցա մեծամեծք և ամրապարիսպք, պահեալք յարանց զօրաւորաց։ Ցեսաք ասէն անդ զազգն Ենակայ, որք յաղթահասակք. որոց լոկ տեսիլ դիտակի լուծանէ զլջիլս արիագունից՛ ի մէնջ։ Ամաղեկացիք էն բնակեալ ընդ հարաւակողմն. քետացիք և խեւացիք, և յերբուսացիք և ամովրհացիք ընդ արևելս և ընդ հիւսիս. և ման մի քանանացւոց առ ծովեզերբն, և առ յորդանանու. վասն որոյ և ամենայն ձանձռալարքն փակեալ էն, ընդ որս չէք հնար անցս գտանել։

Յոսիսի ահընկէց խռովայոյզ տեղեկութիւն ելից զամբոխն արհաւրջոք. որք իբր՛ ի քնէ գոլով յար պատրաստական՛ ի տրտունջ և յակաստամբութեի՛, յարեան մեղկնաբար՛ ի վերայ մովսիսի, չարաչար տրտնջելով զնմանէ, եթէ՛ ի կորուստ տանի զնոսա։ Յայնժամ քաղէբ զօրավարն բարեփառ, որ մի էր յերկոտասան լրտեսաց անտի, այլ օգար յակաստամբ խօրհրդոց յետսամիտ տասանցն, յառաջ մատուցեալ՝ գունն գործեր միխեթար և քաջալեր բանիւք խրախուսել և սրտապնդել զսասանեալ ամբոխն, զոյս հաւատոյ յաղթութե՛ հզօր ձեռամբ ամենակալին դնելով նոցա առաջի։ Այլ՛ ի զուր. քանզի վատախորհուրդ ընկերքն նորա ընդհատեալ զնոսա՛ ի բերանոյ նորա, և ևս սաստկացուցին զերկիւղն ոչ միայն բնակչօքն՝ հակառակ յաղ-

Թահասակս ահագնատեսիլս ասելով զնոսա, առ որովք ասէին՝ երևեաք իբր մսրախս չբուախս, այլ և երկրաւն խոկ, կռչելով զնա երկիր մարդածախս բնակչաց իւրոց. իբր ասել՝ ասպարէզ է երկիրն մշտամարտ մաքառանաց գազանամիտ աղգացն՝ի ծախել զմիմեանս. իսկ մեզ զինչ արասցեն, եթէ յանդգնեցիմք յարձակիլ՝ի վերայ նոցա։ Լուեալ քաղեք, տեսեալ զի՝ի սնոտիս վաստակի։

Այսպա՝ի մերձենալ երեկոյին, խորհեցաւ մովսէս տալ ահաբեկ ամբոխին ժամանակ զոյն գիշեր, թերևս հանդարտեսցին մինչև ցառաւօտ. վասն որոյ արձակեաց զժողովն, և ինքն մեկուսացաւ՝ի խորանն իւր։ Այլոց ընդհակառակն եղև. զի նոքա անյոյս՝ի խնամոյն ՚ով՝ զգիշերն զոյն ողջոյն՝ի հեծութեէ և՝ի լալուն անցուցին, յուշ առեալ զարիս զանցեալս զոր կրեցին, և զառաջիկայ մահաբեր վտանգ՝ յոր հանդերձեալ էին անկանիլ. ոչ՝ի միտ ածելով զոյնչափ մեծամեծ սքանչելիս ՚ով, զոր այնք խոկ տեսին. և զանսուտ խոստմունս նորա, որ երդմամբ խոստացաւ տալ նոցա զերկիրն զոյն։ Այլ մեծաձայն աղաղակաւ տարբունջէին զմովսէսէ և զահարոնէ. լաւ էր ասէին, եթէ մեռեալ էաք յերկրին եգիպտացւոց, կամ թէ առտէն խոկ յանապատի սատ սպանցեն զմեզ. ոչ կամիմք ելանել յերկիրն յայն, անկանել մեզ սրով թշնամեաց մերոց, և կանայք և որդիք մեր լինիցին՝ի յափշտակութիւն։ Այնչ ամբոխն զայս օրինակ աղաղակէր, գվնասօրք նոցա խօսէին ընդ միմեանս՝ տալով իրաւունս քրթմնջանաց ամբոխին, վասն ո՛րոյ և խորհէին ապստամբիլ՝ի մովսէսէ, կացուցանել ինքեանց նոր զօրավար, և դառնալ անդրէն յԵգիպտոս։

Օ այն իբրև ծանեաւ մովսէս, և գիտաց եթէ վճռեալ են չարիքն առ՝ի նոցանէ, անկաւ ինքն և ահարոն յերկիր՝ի վերայ երեսաց իւրեանց առաջի ամենայն ժողովրդեան, զի թերևս յայնչափ խոնարհութենէ նոցա և յողբգական աղերսանաց մեղմասցին յապստամբութէ՛ն անտի։ Այսպէսյր յե-

սու՝ մի յերկոտասան լծեսաց, երեւի թէ լուին կայր, գիտելով թէ ոչինչ անասցեն նմա, եթէ ոչ գոլով նորա ներքին պաշտօնեայ մովսիսի, ունէին ասել թէ խօսի ըստ խրատու և ըստ թելադրութեանց նորա, և ոչ ձշմարտութիւն. բայց այժմանվեհերը յառաջ մատեան, և քաղիք ընդ նմա. պատուէրեցին երկոքեան զհանդերձս իւրեանց, և զաշխատաւորսն լինելիս քաղցր և հեշտալիր բանիւ խաղաղել զերեսաս իւրեանց, և զընդունայն երկիւղն զարհաւիրս փարատել՝ի սրտից նոցա, և յուսալ յաղթութիւն քաջալերել, երաշխաւորս ապահովութիւն զանձինս կացուցանելով: Ա.յլ նոքա փոխանակ հանդարտելոյ և անսալոյ յուսադիր քաջալերութեանց երկուց հաւատարիմ արիասիրտ զօրավարաց, եւս առաւել մոլեգնեալ՝ աղաղակ բարձին քարկոծ առնել զնոսա:

Ա՝ինչուէ ցայն վայր թոյլ եւս ոճ կատաղութիւն նոցա զօրանալ՝ թերեւս՝ի փորձ համբերութիւն և երկայնմտութիւն ծառայի իւրում մովսիսի: Ա.յլ իբրեւ ետես՝ի ծայրն հասեալ զապստամբութեան նոցա, յայնժամ ապա երեւեցոյց զիշառս իւր՝ի սիւն ամպոյն, որ կայր՝ի վերայ խորանին վկայութիւն՝ յանկարծ ելին՝ի քոյ կայծակինացայտ հրոյ փոխեղոյն զնա, ՝ի նշան իւրումն ոճայնի բարկութեան. զոր տեսեալ մոլեգնեալ ամբոխին, լռեցին՝ լցեալ սարսափմամբ: Ա.յս բարուց որդւոցն իսրայէլի յառ և նմանն էր ստահակ գերեաց. յորժամ աներ-կիւղ էին՝ի մեծատուր պատժոյ, ստահակութիւնն նոցա անցանէր քան զչափն. և ընդ հակառակն՝ ՝ի տեսանել զառաջինն նշան բարկութեան և սպառնալեաց պատժոյ, իսկոյն ընկճեալ նկուն լինէին: Ա.ւ խօսեցաւ ՝ի հրոյ անտի ընդ մովսիսի՝ ՝ի դէմն ածելով զապստամբութիւնս ապաշնորհ ժողովրդեան. յոյր սակս և սպառնայր անդէն և անդ սատակել զնոսա. և զնա ինքն զմովսէս խոստանայր և եւս մեծացուցանել, գլուխ և առաջնորդ այլում մեծի ժողովրդեան՝ և քան զդոսա լաւագունի կացուցանելով: Ա.այց հայրագութ սէրն

մովսիսի առ Ժողովուրդ իւր, որով աղեկիզիւր հա-
նապազ ՚ի վերայ նոցա, չէիցող զնա լքանել ընկե-
նուլ ՚ի խնամոց իւրոց զնոսա. Թէպէտև հանա-
պազորդ վիշտ էին նոքա նմա, և տանջանք անբե-
րելի։ Այլ ան որոյ յերեսս անկեալ պաղատեր ՚ըզ
ինն և մեծերիմ համարձակութիւնբ առ ՚ի, և աղաչէր
Թողուլ անտես առնել զմեղս Ժողովրդեան իւրոյ
ըստ մեծի ողորմութեան իւրում. որպէս ներեցեր
դոցա ասէ յԵգիպտոսէ մինչև ցայժմ. որք բազում
անգամ հեստեցին բանից քոց, և բարկացուցին
զքեզ։

Ո՛չքաւ ՚ուծ յաղաչանս մովսիսի ոչ անգէն առ-
ժամայն սպանանել զնոսա. բայց հրատարակեաց
զվերջին աղէտսըն դատաւկնիք իւր ՚ի վերայ նո-
ցա, թէ յայնչափ բազմութենէ, որք ելին յԵգիպտո-
սէ ՚ի քսանամեայց և ՚ի վեր, և տեսին զփառս
նորա և զնշանս զոր արար յԵգիպտոս և յանապատի
անդ, ոչ ոք տեսցի զերկիրն խոստացեալ հարց նո-
ցա. բաց ՚ի յեսուայ և ՚ի քաղեբայ, որք յամենայնի
հնազանդ և հաւատարիմ գտան առ ՚ի։ Այլանզի
փոխանակ քառասուն ամուրց, յորս անտի ՚ի կա-
դեսբառնեայ հանդերձեալ էին մնանել յերկիրն
աւետեաց, թափառեսցին ասէ մոլորական այլևս
ամն երեսուն և ութ՝ ցլուսին քառասուն ամաց,
մինչև ամենեցուն ոսկերք անկցին յանապատի անդ
՚ի պատիժ մեղաց իւրեանց։ Այս ապա որդիք նո-
ցա, որք ոչ գիտեն զբարի կամ զչար. զորոց ասէին
Թէ լինիցին ՚ի յափշտակութենէ, նոքա մտցեն և ժա-
ռանգեսցեն զերկիրն, յորմէ լինքեանք տատակա-
ցան։ Այնդ առաջին փորձ դատաւկնքոյս անցին
տասն լըտեաք՝ որք հաւքաւ չար հանին զերկրէն,
և տրտնջեցին զմովսիսէ. քանզի մեռան անդէն ա-
ռաջի խորանին վկայութենէ։ Այս ասաց ՚ուծ առ վա-
զիւ դառնալ նոցա յետս, չուեալ յանապատէ ան-
տի ընդ Ձովսապարհ, որ հանէ ՚ի ծովէն կարմիր։

Այս դատաւկնիք ՚ուն իբր սլաք սպրասուր կա-
բեալքը խոցեաց զսիրտ ամբոխեալ Ժողովրդեան.
զի յայնժամ բացան աչք նոցա, և տեսին, զի որ

հասեալ էին իբր յերկը ձմեռապարհի իւրեանց, և փոքր միւս ևս և մնանել ունէին ՚ի դէմ եդեալ տեղին, կինքեցաւ վասն նոցա դառնալ յետս, և այլևս ընդ սմն երեսուն և ութ թափառիլ յանշէն անապատի անդ՝ հանդերձ անբերելի տառապանաք ՚ի պատիժ ապստամբութեանն իւրեանց, և ՚ի կատարածի ոչ ժամանել ՚ի ժառանգութիւն ցանկալի եղեալ երկրին։ Այսոքիկ սուգ առին և լացին յոյժ զդիշերն զայն ողջոյն. և կամեցեալ ուղղել զառաջինն անմիտ հետութիւնն, նոր ապստամբութիւն յաւելին։ Օ՛ի կանխեալ ընդ առաւօտն՝ գունդ կազմեցին, և հաստատեցին ելանել ՚ի լեառն, զի անտի ընդ կարճոյ ձմեռապարչ՝ սակաւ արշաւանօք մտցեն և ժառանգեսցեն զերկիրն քանանացւոց զխոստացեալն ինքեանց ՚ի հայր։ Այլ մնվախս ինայեցաւ ՚ի նոսա, պատուիրեաց մի ելանել. քանզի ամպրկ և քանանացին պնդակազմ զինուորութիւն պահէն զանցս այնր ձմեռապարհի. և զի ասէ՝ ՚ձր ոչ է ընդ ձեզ. փոխանակ զի անցիք զբանիւ նորա. վասն որոյ և անկանիցիք սրով թշնամեաց ձերոց։

Այլ նոքա ոչինչ միտ եդեալ բանից նորա, ելին յանդգնութիւն առաւել իբր դասալիք փախըստականք ՚ի քանակէն, քան թէ կարգաւորեալ զինուորք դիմեալք ՚ի մարտ։ Այլ ոչ տապանակ հան, ոչ մնվախս, ոչ զևտացիք, և ոչ այնոքիկ, որք տեղեակ էին զինուորական օրինաց, թէ առաջին օրինք պատերազմի՝ ե հնազանդութիւն առ զօրագլուխ զօրուն, և առաւել յայնմ զօրուի, որում ՚ձն ինքնին առաջնորդէ, ոչ շարժեցան ՚ի բանակէ անտի։ Այլ նոքա անդ լուխ և անառաջնորդ գրոհ տուեալ դիմեցին ՚ի լեառն. այլ վաղվաղակի ատելեցան թիկունս դարձուցանել. քանզի զինի առաջնոյ յախուռն յարձակմանն՝ ամենեքին պարտեալ դարձան ՚ի փախուստ, հալածեալք մինչ ՚ձաւ հարուածովք յամնղեկայ և ՚ի քանանացւոց մինչև ցտեղին, որ յետոյ կոչեցաւ Հերմա. լցեալ զձմեռապարչն բովանդակ դիակամբք իւրեանց. և հալիւ սակաւք ոմանք մնացեալք դար-

ձան ՚ի բանակ անդր ։ Յայս Հարուած՝ որպէս և ՚ի մահ տասանց լըտեսաց՝ յայտ յանդիման ունելիք տեառնել զսկզբնաւորութիւն գործադրութեան գատաստանիցն ՚ի նախընթաց աւուր Հրատարակելոյ ՚ի Տէրէ ։

Յետ այնորիկ ՚ի խաղալոլ ամբոխին՝ ամբաստան բանակին ՚ի չոլ, և Թոզեալ ՚ի Թիկանց զերկիրն ուր դիմեալն էին, որպէս Թէ փախուցեալ անտի՝ չուէցին ընդ հարաւ, և բանակեցան ՚ի նմին անապատին կադէսոյ, ուստի կարի բացագոյն ՚ի տեղւոջէն, ուր էին Ա՛յր գժուարին է՝ չասացից Թէ անհնարին, որոշ և Ճշդիւթ ստորագրութիւն նշանակել զամենայն զդիւրս տեղեաց, զհեռաւորութիւն նոցա ՚ի միմեանց, զկարգ ժամանակի, զչափ աւուրց չուելոյ և բանակելոյ ՚ի զանազան իջևանս, զոր արարին որդիքն իսրայէլի յայն երեսուն և ութ ցաւալի ամս պատժոյ յանշէն անապատս արաբիոյ ։

Ա՛րդարև կան նշանակեալ անուանք տեղեացն բանակելոյ նոցա՝ Թէպէտ պլպլութիւնք լինի ՚ի զանազան տեղիս ՚ըստ գրոց ։ բայց այն՝ որ առ մովսիս էր դիւրիմաց, առ մեզ է յայժ գժուարիմաց ։ ինչ զի չէ մարթ հաւաստի լինչ նշանակել ։ Գիւտեալ զի կամեցան ոմանք զայն երեսուն և ութ ամաց Ճանապարհորդութիւն որդւոցն իսրայէլի կարգաւ ստորագրել ըստ ամաց, ըստ աւուրց, և ըստ իւրաքանչիւր իջևանաց նոցա ։ բայց բովանդակին է ընդ կարճեօք, գուցէ և մոռացաճին, չունելով հաւաստուն հիմն ՚ի ՚ըստ գիրս ։ Օ՛այս հաւաստի ունելիք, Թէ յետ յառաջագրեալ Հարուածոյն, ընդ երկար ժամանակս Թափառեցան յանապատի անդ՝ որ Հանրական անուամբ կադէսբառնէայ կոչէր, մերթ ՚ի դաշտին յառնամայ բանակ Հարեալ, և մերթ յայլ զանազան տեղիս յայնմ անապատի ։

Յետ այնորիկ այլևս աւուրս բազումս չգիտեցան ՚ի վեր և ՚ի վայր զսկիզբ լերամիջ առ սահմանօք եդոմայեցւոց, միշտ մերձենալով ՚ի ծոյլն կարմիր՝ ըստ սրտմ առաջնորդելոյ նոցա ՚ըստ ։ մինչև Հասին

յելաթ և՝ի գասիոնգաբեր՝ի նաւահանգիստս կաթ-
միր ծովու։ Այս անտի դարձ արարեալ, և ուղղեալ
ընդ հիւսիս առ լերամբք եդովմայեցւոց, ուր ու-
րեմն հասեն՝ի ձորն զարեդ. զոր անցին յերեսունե-
րորդ և ութերորդ ամի ելանելոյ իսրեանց՝ի կա-
դէսբառնեայ. մինչև մեռաւ ամենայն ազգ արանց
պատերազմողաց՝ի բանակէ անտի, ըստ վճռոյ
Տեառն ցոյ։ Այս այնուհետև սկսան որդիքն իսրայէլի
տիրել տեղեաց Թշնամեաց իւրեանց։ Ջայս ու-
նիմք հաւաստեալ՝ի մովսիսէ. Բ. օրէն. Բ. 14. ուր
ասէ. * Այս աւուրք՝ որչափ անկան մեզ՝ի գնալն
մեզ՝ի կադէսբառնեայ՝ մինչև անցաք ընդ ձորն
զարեդ, երեսուն և ութ ամ՝։

ԳԼՈՒԽ Ե.

Վաթիճ լինէ այրն՝ որ յաւուր ընթեռնու գաղէր ֆայս։
Սրբել ես գարան և աբէբոն գեղանասոյղ ընկնէին։ Ծաղկի
գուսպանն ախարոնի՝ ի հասարակութենէ ընտրութենէ նորա՝ ի
գահանայութենէ առ յայ։

Ընդ այն երեսուն և ութ ամն զանազան անցք
անցին ընդ որդիսն իսրայէլի, զորս պատմէ մով-
սէս. բայց ոչ նշանակէ ոչ ժամանակն, և ոչ ըզ-
տեղին, թէ երբ, և ուր գտբծեցան. զորս մեք
ասասի սկիզբն արասցուք պատմել։

Արդ՝ յետ նախագրեալ անցից՝ պատմի՝ի գիրս
Թուոց ԺԵ. 32. եթէ ոմանք՝ի ժողովրդենէ ան-
տի նահանձախնդիր պահպանութենէ օրինաց՝ գտին
այր մի, որ քաղէր փայտ յաւուր շաբաթու, որպէս
երևի՝ի նմին անապատի կադէսբառնեայ. կալան
զնա և ածին յատեան՝ առաջի մովսիսի և ահարոնի
և առաջի իշխանաց ժողովրդեան, զի մի և ինք
քեանք յանցաւոր և պատժապարտ գտցին, եթէ

ոչ զեկուցեն առնէի զյանցաւորն ընդդէմ օրէնսդ։ Այլ Թէպէտ օրէնքն ընդ միահատորաւԹԵ պատժով արգելուին զամենայն գործ ծառայական յաւուր շաբաԹու, սակայն և այնպէս ոչ նոյնհետայն դատակնքեցին զնա ՚ի մահ, այլ առ ժամն եդին ՚ի կալանս, մինչև հարցանիցէ միմիսս ցոր վասն պատժոյ նորա. զի կամ ոչ գոյր տակաւին յօրինս ըստ բաւականին բացայայտեալ, ԹԷ որով մահուամբ պատժեսցի այս ազգ յանցաւորն, և կամ ՚ի յանցանս առնս այսորիկ էին պարագայք լինչ աՃեցուցիչք կամ նուազեցուցիչք ծանրաւԹԵ և չարաւԹԵ մեղացն. զոր ՚ըզ ոչ յայտնէ։ Ընդ յառաջ քան զվարչանել միմիսիմ՝ ՚ած լինքնին կանխեաց և արար նմա պատասխանի, ԹԷ քարամբք քարկոծեսցի յամենայն ժողովրդենէ. զոր և վաղվաղակի կատարեցին։

Յետ այսորիկ պատմի անդ ՚ի գիրս Թուոց. գլ. ԺՀ. ահարկու լինի դիպուած ապստամբուԹեան ՚ի բանակի անդ որդւոցն խորայելի յարուցեալ ընդդէմ միմիսիմ և ահարոնի։

Կորիս երից որդի սահատայ՝ Թոռն կահաԹու որդւոց ղևեայ, ոչ կարելով հանդուրժել, զի քահանայականն պատիւ՝ տանն և ԵԹ ահարոնի իցէ սեպհականեալ, իսկ լինքն և որդիք իւր, որպէս և ամենայն ցեղն ղևեայ՝ իցեն միանձնապէս զբաղեալ անտի, և կարգեալ լոկ ՚ի ծառայական սպասաւորուԹիւն խորանին ընդ իշխանուԹԵ ահարոնի և որդւոց նորա, յարոյց ապստամբուԹիւն մեծ հակառակ միմիսիմ և ահարոնի։ Օ՛ի որսացաւ իւր համախոհս արս երկերիւր և լիսուն ՚ի գլխաւոր և ՚ի նախապատիւ խորհրդականաց անտի ժողովրդեան ցեղին ղևեայ. որք նոյնպէս սկսեալ իրաւունս առ քահանայուԹԵ՝ որպէս ահարոն. ընդդէմ ապա նմա միաբանք սեպհականեսցի ասեն այն պատիւ։ Այլ զի գիտէր կորիս, ԹԷ դժուարին է հանել զահարոն յիշխանուԹԵ անտի, յորմէ առ ընԹերը իւր ունիցի զմիմիսիս զեղբայր իւր, վասն այնորիկ խորհեցաւ որսալ և զդադան, և զաբիրոն, և զանան

(որ և՝ այլն) վիշտանաս յերկին ուրբինէ. և յարու-
յանել վնասս ընդդէմ մովսիսի։ Եւ որ չէրեն
պիտք բազում աշխատութեց, զի նոքա արդէն ինք-
նաշարժ էին ի նոյն ապստամբութէն, դնելով ի
մոլ իւրեանց՝ որպէս թէ մովսէս քանի կալեալ
իւէ ընդ այնչափ ժամանակս զայն գերագոյն իշ-
խանութէն ի վերայ ժողովրդեան. որ որպէս թէ
ըստ իրաւանց անդրանկութէն ինքեանց անկանէր։
Եւ թէ արդարև երեքին նոքա էին այնգեալ զհետ
քահանայութէն, յայտ է յընթացից պատմութէս,
զի ոչ գտան նոքա ի խմբի անդ ապստամբաց, որք
ընդ կորխայ դիմեցին ի վերայ մովսիսի, և ոչ յի-
շատակի անդ, թէ՝ և նոքա արարեալ իցեն բուր-
վառս։

Եւ ընդ՝ իբրև այսպէս յերկուց կողմանց ամբա-
ստոյց կորխ զապստամբութէն, առեալ ընդ իւր
զերկերիւրս և զյիսուն իշխանս զևտացւոց՝ դիմեաց
ի վերայ մովսիսի և ահարկանի. և ինքն իբրև գլուխ
և բերան ապստամբաց՝ խօսել սկսաւ յանդուգն
ժպրհութէ, և ասէ. Ընդէ՞ր է ձեզ միայն եր-
կուց եղբարցդ տիրել ի վերայ ժողովրդեանն այ-
մեծ դուք միայն սքք իցէք և ընտրեալք յայ. ոչ
ապաքէն ամենայն ժողովուրդս նոքա է, և արժանա-
ւոր քահանայութէն, և ոչ ի միջի նոցա. իսկ դուք
զամենայն իրաւունս նոցա յափշտակեալ՝ միայն
կամիք բռնանալ ի վերայ նոցա. շատ լիցի ձեզ՝
զի ընդ այսչափ ժամանակս տիրեցիք. այսուհետև
կամիք և մեք քահանայանալ։ Տեսեալ մովսիսի
զայն կատաղի բազմութիւն ի վերայ կուտեալ, և
լուեալ զայնդգնական բանս կորխայ, անկաւ ի
վերայ երեսաց իւրոց, խնդրելով ի սրտի իւրում
զօգնութէն ի նմանէ յայն ծանր և ի վտանգաւոր դի-
պուած։ Եւպա հանդարտ և խաղաղական ոգւով
պատասխանի տուեալ ասէ. ի վաղիւ ցուցցէ Տր՝
թէ ո՛ք իցեն սքք, և ո՛ք նոքա զորս ընտրեաց և
մերձեցոյց առ ինքն։ Իսկ դուս և ամենայն ժողո-
վուրդդ որ ընդ քեզ՝ առջ՛ք լուրաքանչիւր զբուր-
վառ ձեր, և դիջ՛ք ի նոսա հուր և խունկ, և առ

վաղիւ երևեսջիք առ դրան խորանին վկայութե-
անդ յայտնեսցի որ զկամն իւր։ Եւ դու կորիս
և որդիք ղևտացի գնեալ ի քէն յոյժ. միթէ փոքր
պատիւ իցէ ձեզ այդ՝ զի զատցայ զձեզ ասե՞ւ ի ժո-
ղովրդենէն իւրմէ, և մերձեցուցայ առ ինքն՝ պաշտել
զպաշտօն խորանին Տեառն փոխանակ ամենայն ժո-
ղովրդեան. արդ քահանայապետանալ եւս խնդրես.
և ոչ է ահարոն զի յառուցեալ էք ի վերայ Տեառն.
միթէ անձամբ անձին էառ զքահանայապետու-
թիւն, ոչ ապաքէն ասէ ինքնին ընտրեաց զնա, և
կացոյց յայն պաշտօն. վասն որոյ ապստամբութիւն
ձեր ոչ է ընդդէմ ահարոնի, այլ Տեառ։

Օ այս ասացեալ առ նոսա՝ առաքեաց կոչել և
զդաթան և զաբիրոն. իսկ նոքա անսաստեալ՝ ոչ
կամեցան գնալ, այսպիսի պատգամ յղեալ նմա.
միթէ փոքր իցէ այն, զի եհան զմեզ յերկրէն՝ որ
առնայն բարեաց առատացեալ էր, սպանանել յան-
ձին յանբեր անապատիս, ուր չիք այլ ինչ տեսա-
նել, բայց միայն թշուառութիւն. և դեռևս կամի
իշխել և բռնանալ ի վերայ մեր. ոՀր են բանք նո-
ա, զոր ասէր՝ տանել զմեզ յերկիրն որ բղխէ ըզ-
կաթն և զմեղր. և տալ մեզ անդ ժառանգութիւն
անդաց և այգեաց. արդ ոՀր են այն այգիք և
անդք, թէրևս հողմայոյզ աւազ անապատիս. եթէ
զաչս մեր բրեսցէ, ոչ գնասցուք առ նա. այսու-
հետև հրամայեսցէ այնմ՝ որ կամիցի հնազանդել
նմա, այլ մեզ ոչ եւս. երթայք այսպէս ասացէք
նմա։ Օ այս պատասխանի ընկալեալ մովսէսի՝ ծան-
րացաւաւմն եղև յոյժ. այլ առ ժամն լռեաց, կա-
մեցեալ ի գլխերն խօսել ընդ նոյն, և խմանալ
զկամն նորա։

Իսկ ի վաղիւ անդր՝ միւսանգամ մովսէս և ահարոն ի
սահմանեալ ժամուն ելեալ կային ի դուռն խորա-
նին վկայութե, ունելով ահարոնի զբուրվառն իւր
ի ձեռին, և հուր և խունկ ի նմա, ահա եհաս
անդր կորիս և երկերիւր և չիսանհնգ ընդ նմա. ու-
նելով իւրաքանչիւր ի ձեռին զբուրվառ իւր, և
ընդ նոսա ամբոխ բազում յոյժ, և կացին առ դրան

խորանին վկայութիւն։ Այլ դադան և աբիրոն չէին անդ, այլ կային հեռի առ դրան վրանաց իբրեանց՝ հանդերձ կանամբք և մանկամբք իւրեանց, և դիտաւին կալեալ հայեին տեսանել զկատարած իրացն կորիայ. որպէս զի թէ յայլոզեսցի նմա առնուլ զքահանայապետութիւն յահարոնէ, յայնժամ ապա և ինքեանք յարձակեսցին ի վերայ մովսիսի, մերկացուցանել զնա յիշխանութենէ իւրմէ։ Եւդ յորժամ աչխարհաժողով այն բազմութենէն կուտեալ կային ի դուռն խորանին, էջ սիւն ամպոյն ի վերայ խորանին, և խօսեցաւ ընդ յամպոյ անտի ընդ մովսիսի և ընդ ահարոնի՝ հրամայելով նոցա մեկնել հեռանալ ի ժողովրդենէ անտի, քանզի կամէր զամենեսեան անդէն և անդ սատակել։ Յայնժամ մովսէս և ահարոն անկեալ ի վերայ երեսաց իւրեանց՝ ջերմ աղերսանօք աղաչեցին զնոր, մի վասն միոյ մարդոյ զպնչափ բազմութենէն կորուսանել։ Ուստ որ աղաչանաց նոցա, և ասաց պատուիրել ժողովրդեանն զատանիլ հեռանալ ի համախոհից անտի կորիայ և դադանայ և աբիրոնի, զի մի ընդ նոսա կորիցեն։ Եւ մովսէս յարուցեալ գնաց առ դադան և աբիրոն ի գործադրութենէ վճռոյն ոյ ի վերայ նոցա. գնացին ընդ նմա և ամենայն իշխանք իսրայէլի, որք չէին միաբանեալ ընդ նոսա՝ լինել ահանատես վկայ չարաչար օրհասի նոցա։ Եւ խօսեցաւ մովսէս ընդ ժողովրդեանն, և ասէ. մեկնեցարուք ի վրանաց արանց խստասրտացդ այդոցիկ, և մի մերձենայցէք յինչ ի դոցա, զի մի կորնչիցիք ընդ ամենայն մեղս դոցա. զի թէ ըստ սովորական մահու ամենայն մարդկան մեռանիցին դոքա այսօր, ապա զնս որ ոչ առաքեաց. իսկ եթէ նորանշան մահուամբ սեռանիցիք զդոսա կորնչիս, զի պատառեալ երկրի ընդ ոտիւք դոցա՝ և կենդանւոյն կլանիցէ զդոսա, և զտունս դոցա, և զամենայն ինչ դոցա իցէ, գիտասջիք, զի առաքումն իմ ի նմանէ է. և դոքա բարկացուցին յոյժ զնոր։

Յերև կատարեաց մովսէս զբանն իւր՝ նոյն ժա-

մայն բացաւ երկիր, և եկուլ զնոսա և զվրանս նո-
ցա, և զմարդկին որ էին ընդ կորխայ՝ և զանաս-
սունս նոցա։ Յահարկու տեսլեան անտի՝ և՝ի զար-
հուրելի ձայնէ, ապաշակի նոցա ահաբեկեալ ամե-
նայն ժողովրդեան որ չուրջ զնոքօք էին՝ խուճա-
պելով փախեան. զի համարէին թէ գուցէ կլանիլ-
ցէ և զնոսա երկիրն. ՚ի նմին ժամու և՚ի խորա-
նէն վկայութեան եղ Տէր, և կիսեալ յաշխեն
զարձոյց զերկերիւր և գյիսունս, որք յանդգնե-
ցան խուսկ մատուցանել. զորոց զուարճացաւ ըստ
հրամանին ՚ի առեալ մովսիսէ և եղիազարու որդ-
ւոյ ահարոնի ՚ի միջոյ այրեցելոց, արարիչն ՚ի նո-
ցանէ գրուագս կռածոյս ՚ի ծածկոյթ սեղանոյ
ողջակիզաց։ Նոցա որդիք կորխայ զերծան ՚ի պա-
տուհասէ անտի. որպէս ասի ՚ի գլ. ԽԶ. 10. և 11.
յորմէ յայտնի երևի, թէ չէզեն նոքա կամակից
ամբարշտութեանն Տոր իւրեանց։ Որպէս և յաղագս
աւնանայ որդւոյ փաղեթայ որդւոյ ռուբինի՚ն նոյն
միտս են ոմանք, եթէ և նա չկոյ գհանապատգիալ
ընդ դադանայ և աբիրոնի. վասն զի յետ միան-
գամ յիշելոյ զնա մովսիսի ՚ի սկզբան անդ ասպա-
տամբութեանն, այնուհետև չառնի յիշատակ քնաւ
զնմանէ ընդ բոլոր պատմութեանն ընդ այն՝ ոչ ընդ
ապստամբս, և ոչ ՚ի պատուհասի անդ նոցա. յոր-
մէ առնուն հաւանական լինն նշան, եթէ ստրջա-
ցեալ նորա յառաջնի ապստամբութենէն անտի,
հեռացեալ կոչ յայլոց, և հանդիպեալ ողորմու-
թենն ՚ի։

Երևէր թէ այսպիսի նորանշան պատիժ խա-
զաղացուցեալ կոչ զայլ առնոյն ամբոխեալսն.
բայց չէզև այնպէս։ Վասնզի ՚ի վաղիւ անդր կու-
սակիցք մեռելոցն նոր խռովութիւն յարուցին, չա-
բաչար որանջելով զմովսիսէ և զահարոնէ. որպէս
թէ նոքա եղեն պատճառ կորստեան այնչափ բազ-
մութեանն մարդկան։ Տեսեալ մովսիսէ և ահարոնի՚
զի ապստամբութիւնն զօրանայ, և խուժանն կու-
տի ՚ի վերայ ննքեանց, խոյս ետուն ՚ի խորանն
վկայութեանն, որ էր նոցա սովորական և անքոյթ

ամբոխ յերեսաց սմենայն այսոցիսի արկածից, և սիրեն ամենքն իջեալ ծածկեաց վնասս. ընդ նմին եդ հուր յերկինից, և սկսաւ իբրև հեղեղ ընթանալ ի քանակի անդ, և սատակել զժողովուրդն։ Մովսէս հրամայեաց ահարոնի դնել վաղվաղակի հուր ի բուրվառն ի սեղանոյ ամսո ողջակիզաց և խունկ, և ընթանալ փութանակի ի բանակ անդր առ ի քաւել վասն ժողովրդեան։ Եւ այնպէս Մովսէս ջերմ աղօթիւք, իսկ ահարոն խնկարկութիւք կացեալ ի մէջ մեռելոց և կենդանեաց, դադարեցոյցին զսատակումն ժողովրդեան. սակայն և այնպէս յայնմ աւուր մեռան անձինք չորեքտասան հազար և եօթն հարիւր, քայ ի մեռելոցն ի նախընթաց աւուր ընդ կորխայ։

Ապա տեսեալ Տէն Ա՝, զի քրթմնջիւն և տըրտունջ նոցա ընդդէմ Մովսիսի և ահարոնի ոչ առնուն վախճան. որպէս թէ նոքա անձամբ անձին յափշտակեալ իցեն զայն իշխանութիւն, զրկելով զայլս. նմին իրի կամեցաւ նոր ազանչելիօք յայտնի առնել ամենեցուն, թէ քահանայապետութիւնն ի՛ ի Մովսիսէ, այլ յիւրմէ տեառէ ահարոնի, որպէս զի այնուհետեւ ոչ ոք ունիցի ինչ ասել։ Հրամայեաց, զի իշխանք ամենայն ցեղիցն գրեսցեն զանուն իւրեանց ի վերայ միոյ միոյ գաւազանի. իսկ ի ցեղին ղեւեայ գիցի գաւազանն ահարոնի՝ գրեալ ի վերայ զանունն նորա. և գիցեն զամենայն գաւազանսն ի խորանին վկայութիւն յանդիման տապանակի Տն. և ի՛ր գաւազան ծաղկեսցի, այն լինիցի հաւատարիմ վկայութիւն, թէ զնա ընտրեաց Ած քահանայապետ։ Ապարին այնպէս. և ի վաղիւ անդր մտեալ Մովսէսի և ահարոնի ի խորանն վկայութիւն, տեսին զի ահա գալարացեալ էր գաւազանն ահարոնի, և արձակեալ ոստս և ծաղկեալ, և ի միջի ունէր ընկոյզ։ Զայն տեսեալ ժողովրդեան, ամենեքեան գլուխ խոնարհեցուցին. և ոչ ոք այնուհետեւ իշխեաց լերան բանալ կամ ձիկ հանել ընդդէմ ահարոնի։ Իսկ զծաղկեալ գաւազանն ըստ հրամանի Տն եդ Մովսէս ի տապանակին

սրբութեանն ՚ի պահեստ ՚ի նշանակ որդւոցն անհնազանդից։

ԳԼՒ. Ը.

Ա՚արեամ ՚ասէր մովսէսի վասն ՚ճանապարհին ։ Ա՚ովսէս և ահարոն վասն երկմտելոյ ՚ի ջուրսն Լուսոյ իշխանութեանն յապաւաճառ վրկմ՝ ուր մահացանէին զծողովրդեանն յերկիրն աւետեաց ։ Ա՚ըտայն երովմայ ուր պայ անցս որդւոց իսրայէլի ընդ երկիրն եդոմ ։ Ա՚հարոն վախճանի ՚ի հովր լերին ։

Ա՚պա ՚ի քառասներորդի և վերջին ամի ՚ճանապարհորդութեանն որդւոցն իսրայէլի՝ յամսեանն առաջնում եկին յանապատն սինայի ՚ի կադէս. ուր և բանակեցաւ ժողովուրդն ։ Ա՚յս տեղի սկզբ է ՚ի համանուն սին անապատէ, որ ըստ կարգի իջևանացդ որդւոց իսրայէլի զկնի ելից նոցա յերկիրս իսկ՝ եղև ուղեորդք բանակեցեալ յառաջ քան զժամանել նոցա յանապատն սինէական լերին. և այս յայտ է նախ՝ զի ՚ի բնագրին եբրայեցւոց այս տեղիք այլևայլ տառիւ գծագրին. առաջինն՝ Ակն. իսկ այս՝ Յին կամ Ո՛ւին. և երկրորդ՝ զի և դիրք նոցա, և դիպուածք որք եղեն ՚ի նոսա՝ այլևայլ են, որպէս պատմի ելից. ԺՀ. ւ ։ Ա՚սա վախճանեցաւ մարիամ քոյր մովսիսի և ահարոնի իբր հարիւր և երեսուն ամաց. պահեալ՝ ըստ ոմանց ՚ի սէց հարց, զկուսութիւնն մշանջենաւոր. զոր վասն այնորիկ նախատիպ օրինակ դնեն ամենօրհնեալ կուսին մարիամու. զորոյ և զսիրալի անունն կրեաց նա կանխաւ. և ՚ճշմարիտն անեռութիւնք գործակից եղև ըստ իւրոց ինչ ազատութեանն որդւոց իսրայէլի, ջանացեալ զի մանուկն մովսէս հանեալ ՚ի ջրոյ՝ ակնարկութիւնք գտաներ փարաւոնի տացի մօր իւրում ՚ի մնուցանել ։ Ա՚ր խորհրդաբար նշանակեր զսի-

բամբռն գործակցութեի ընդ նմն ի փրկութեի մարդկան ազգի, ծնանելով և մեռանելով զփրկիչն աշխարհի. և փախստեամբ ապրեցուցանելով զնա ի ցասմանէ հերովդէի, զոր նախանշարեր փարաւոն։

Պէտ էր մարիամ ոչ միայն ի մէջ որդւոց խաբայէլի, այլև առաջի նոյ. որ և պարագ լուխ եղեալ կանանց իսրայէլացւոց՝ երգեաց Թմբկաք զօրհնութեի նմն զփրկութեի որդւոց իսրայէլի ի ձեռաց փարաւոնի։ Ահնէր և զոգի մարգարկուեի, զի և ընդ նմա խօսեցաւ ած, որպէս ընդ մովսէսի. և ի գիրս միքայ մարգարէի ի յիշատակել նոյ զերախտիս բարերարութեց, զոր արար ժողովրդեան իւրում, ընդ մովսէսի և ընդ ահարոնի ի մի կարգ դասէ և զմարիամ. * Առաքեցի (ասէ) առաջի քո զմովսէս, և զահարոն, և զմարիամ‖. ՚ղ. 4։ Յայսմանէ պատճառս առեալ Թէոդորետոսի՝ համարի զնա առաջնորդ և օրինադիր կանանց իսրայէլի, որպէս մովսէս արանց։ Այլ Թէպէտ մեղաւ նա միանգամ, յորմէ սակս և բորոտեցաւ և զատաւ ի բանակէն, բայց և այն գեղեցիկ իմն խորհուրդ նախանշարէր. զի էր նա օրինակ հին եկեղեցւոյն կամ եբրայական ժողովրդեան, որ բամբասեաց և ուրացաւ զՀմարիամն մովսէս՝ զառաջնորդն կենաց իւրոց. վասն որոյ և ի բաց ընկեցաւ ի նորին եկեղեցւոյ. այլ զօրօրինակ մարիամ իբրև սրբեցաւ ի բորոտութեէ, դարձաւ ի բանակն. նոյնպէս և ժողովուրդն իսրայէլեան ի վախճան ժամանակաց, մինչ լրումն հեթանոսաց մտցէ, հաւատացէ ի քո, և դարձցի և մտցէ յեկեղեցի նորա. հռովմ. ՟ժ. 25։

Ասէ զոր անդ ի կագէս ջուր ըմպելոյ ժողովրդեան, իսկ նորա փոխանակ խոնարհ աղերսալ նոքա դիմելոյ առ մովսէս և առ ած, զորոյ զմեծաւ աքանչ իննամութեէն ի վերայ իւրեանց զօրհնաւպազ աչօք բացօք տեսանէին, ի սովորական սրբոտունջ ձեռն արկին։ Կուտեցան ի վերայ մովսէսի և ահարոնի, և դառնացեալ ոգւով աղաղակէին, թէ ընդէր հանիք զմեզ յերկրէն եգիպտացւոց, և

ածիք յանքերը յամայի անապատ այսը կատորել զմեզ և զանասունս մեր : Որով ցուցին յայտնի՝ Թէ քանի՛ մեծ է բռնութիւնն հնացեալ չար սովորութիւն. զի Թէպէտ ընդ ամն երեսուն և հինն զվարձ առին, Թէ այսպիսի տրտունջք և ապստամբութիւք միշտ կորստեամբ յոգնաթիւ բազմութիւն մարդկան վճռբեցան, սակայն և այնպէս գոլով նոցա սովորեալ 'ի նոյն՝ ոչինչ զգօնացան : Զ.մն զի՝ առ վերջին կատաղութեան յայտ արարին, զի ցանկային Թէ մեռեալ էին և ինքեանք 'ի կորստեան եղբարց իւրեանց 'ի գերեզմանս ցանկութիւն, կամ՝ 'ի սատակմանն կորնչայ : Ո՛րովհետև և ահարուն տեսեալ զմեղեցին խուժանն դիմեալ 'ի վերայ իւրեանց, խոյս ետուն 'ի խորանն վկայութիւն. և անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց, աղաչէին զնո՛ր վասն նոցա տալ նոցա ջուր : Յօսեցաւ ՚ած ընդ մովսիսի և ասաց առնուլ զգաւազանն և զահարոն ընդ իւր, և յանդիման բազմութիւն ժողովրդեանն բարբառել երկոցուն 'ի վերայ քարաժայռ վիմին որ կայր անդ, զի ելցէ ջուր 'ի վիմէ անտի յորըսիմն ժողովրդեան և անասունց նոցա :

Ո՛տ մովսէս զգաւազանն յերեսաց Տեառն Թէ ծանրացաւսումն լեալ ընդ ժպիրհ յանդգնութիւն ժողովրդեանն՝ խռովեցաւ յոգի իւր. յորմէ և յերկբայս անկաւ՝ ո՛չ ընդ կարողութիւնն ոչ, որպէս Թէ չելցէ կարօղ 'ի ժայռէ անտի ջուր բղխեցուցանել, այլ ընդ կամն նորա, խրթնացեալ Թէ գուցէ 'ի պատիժ չարաչար ապերախտութիւն յետասիտ ժողովրդեան՝ ո՛չ կամիցի ցուցանել յայնժամ զողորմութիւնն իւր 'ի վերայ նոցա : Ո՛յս յայտ առնէ սաղմոսերգուն յասելն 'ի ձ'է. 30. * Խարկացուցին զնա 'ի վերայ ջուրցն հակառակութիւնե. չարչարեցաւ մովսէս վասն նոցա. զի դառնացուցին զոգի նորա ‖ : Վասն այնորիկ ընդ երկուանօք ասաց. * Վ՛րթէ ՚՚ի վիմէ՞ս յայսմանէ հանիցեմք ձեզ ջուր ‖. ուր այնպէս խօսի, որպէս Թէ ձեռն ՚ած չէր յայնժամ ընդ նմա : Ո՛ւ ևս ՚ած ասաց նոցա բարբառել միայն 'ի վերայ վիմին, զի ասցէ

զՔուրս իւր. եւկնորա ոչ բարբառէցան, այլ եհար մովսէս զվէմն գաւազանաւն միանգամ, եւ ոչ էլ Քուր. զի յաւիտեան ՚ած՝ ասէն ՚ցե հարը՝ զգործ աքանչելեացս վասն երկմտութեանն նոցա. վասն այնորիկ ստիպեցաւ մովսէս երկրորդ անգամ հարկանել, եւ ապա բղխեաց Քուր յորդառատ։ Լ՚ըդ՝ վասն այսր երկուանցս նոցա՝ որով նուազուեցին իմն կարողութենէն ՚ոյ յուսոյն յայնմ ժողովրդեան, միանգամայն և յաղագս չհատարելոյ նոցա զպատուէր ՚ոն Ձեռիւ՝ ըստ որում ասաց նոցա քարբառել ՚ի վերայ վիմին, ոչ մնծին նոքա զԺողովուրդն ՚ոյ յերկիրն աւետեաց. ՚ի տիպ հնոյ օրինաց, որ ոչ արդարացոյց զմարդիկ, և ոչ եմոյծ ՚ի ժառանգութենէ երկնից արքայութեան. որոյ կատարումն պահել էր նոր օրինաց հաւատովք յոմն քրիստ։

Վադէս էր առ սահմանօք երկրին եդովմայեցւոց. ընդ որ անցեալ՝ սակաւ իջևանօք լինէր մնալ յերկիրն աւետեաց, առանց անցանելոյ ընդ յորդանան գետ. որ ինայր յարևելս յաջակողմն Ճանապարհի նոցա։ Վ՚ան այնորիկ առաքեաց անտի մովսէս հրեշտակս՝ առ արքայն եդովմայ խընդրել հանդերձ ամենայն կարևոր պայմանօք՝ անցս ժողովրդեան իւրում ընդ երկիրը նորա։ Ընդ հրեշտակքն, որք առ յօժարեցուցանելոյ զարքայն ՚ի կատարումն խնդրոյ իւրեանց, ՚ի սկիզբն բանից՝ յիշեցուցանեն նմա զազգակցութենէ իւրեանց ընդ եդովմայեցիս. * Լ՚ղբայր քո ասէն՝ իսրայէլ ‖. զի այնպէս խրատեալ էին ՚ի մովսիսէ։ Լ՚սա պատմեն նմա զտառապանս կրեալ յեգիպտոս և ՚ի ճանապարհորդութենէ իւրեանց մինչև ցայնգր՝ առ ՚ի շարժել գնա ՚ի կարեկցութենէ։ Լ՚ուրջն առնեն նմա զձեռնկալութենէն ՚ոյ, որ հզօր ձեռամբ եհան զնոսա յեգիպտոսէ. և թէ այժմ բանակ նոցա հասեալ կայ անդ առ սահմանօք նորա. որպէս զի առանց յայտնի սպառնալեաց՝ փոքր լինչ երկիւղ արկանիցեն նմա։ Յուցանեն և զՀարկաւորութենէն անցից, զոր և խնդրեն աղերսանօք. խոստանան ոչ անցանել ընդ անդս և ոչ ընդ այգիս նոցա. և ոչ

մտանել ուրեք ՚ի տունս ըմպել ջուր ՚ի ջրհորոց նոցա. և ոչ խոտորիլ յաջ կամ յահեակ ՚ի հասա բակաց Ճանապարհէ. և զամենայն որոց իրաց պիտա ունիցին՝ մինչ նաև զջուր ըմպելոյ ևնթեանց և անասնոց իւրեանց՝ գնոյ առնուլ։

Զեա այսպիսի արդար պայմանաւք, որով մարթէ և խնդրել անցս զօրաց ընդ երկիր օտար Ճրուէթէ, երևէր թէ չնայր արքային եդովմայ զայլ ինչ պա հանջել ՚ի նոցանէ. բայց միայն չմոռանել ՚ի քա ղաքս, չմերձենալ յամրոցս, չանցանել միագունդ, այլ բաժանեալ ՚ի փոքր փոքր խումբս, զի մի երկիւղ ինչ արկանիցեն բնակչաց. և առ առաւել յայ պահովութի՝ առնուլ ՚ի նոցանէ պատանդս, մինչև անցանիցէ ամենայն զօրն։ Այլ նա ոչինչ այսպիսի պահանջեաց, զի ոչինչ իւրք զնջաւ ՚ի խնդիր նոցա. Նոքա դարձեալ կրկնեն զաղաչանս գնթ առ լե բամբք նորա անցանել. իսկ նա միշտ զոչն պնդէ. * ոչ անցանիցէք ասէ ընդ իս ։։ և արձակեաց գնոսա սպառնալեօք՝ պատերազմաւ ելանել ընդ դէմ նոցա. զոր և արար իսկ. քանզի վաղվաղակի ել ծանր ամբոխիւ և հզօր ձեռամբ, և կալաւ զե զերս սահմանաց երկրի իւրոյ։

Վարի ինն ծանր թուեցաւ մովսիսի այսպիսի յա մառ խոստութիւն արքային եդովմայ. և որովհետև ոչ զնջաւ նա այսպիսի արդար պայմանաւք տալ նոցա անցս խաղաղութիւ, կարօղ էր մովսէս բռնութիւ իսրայէլեան զինուց բանալ ճանապարհ. բայց պատուէր ունէր ՚ի տեառնէ՝ * մի դրդռիլ ՚ի պա տերազմ ընդ որդիս եսաւայ. զի ոչ տաց ասէ՝ ձեզ յերկրէ նոցա և ոչ քայլ մի ոտին. քանզի վիճակաւ ետու եսաւայ զլեառն սէիր. ։։ Բ. օրին. գլ. Բ. 5։ Վասն այնորիկ ելեալ ՚ի կադէսայ՝ և եկեալ ընդ հարաւ, բանակեցան առ հովը լերամբ ՚ի սահմանս երկրին եդովմայեցւոց։ Վնդ՝ ըստ հրամանի տեն, առեալ մովսիսի զահարոն զերզայր իւր, և զեղիա զար զորդի նորա, եհան զնոսա ՚ի հովը լեառն յան դիման ամենայն ժողովրդեան, և մերկացուցեալ յահարոնէ զամենայն քահանայապետական հան

դերձս, զգեցոյց զնոսա եղիազարու որդւոյ նորա. որով և զքահայապետութեն ետ նմա. և ահարոն աչօք իւրովք տեսեալ զորդին իւր 'ի սրբազան զգեստս քահանայապետութե, ննջեաց խաղաղութե 'ի մէջ բազկացն մովսիսի հարիւր և քսան և երից ամաց, 'ի քառասներորդ ամի ելանելոյ որդւոց իսրայէլի յերկրէն եգիպտացւոց յառաջնումբ աւուր ամսեանն հինգերորդի։

Յա մովսէս հանդերձ նոր քահանայապետիւ էջ 'ի բանակ անդր, և հրաամբարակեաց զվախճանել ահարոնի. ընդ որ սուգ առին ամենայն որդիք իսրայելի, և լացին զնա աւուրս երեսուն։ Ոգին որ մեծամեծ գործովք եթող մեզ զահարոնէ 'ի գիրս մաղաքիայ մարգարէի. գլ. Բ. 4. * Յա ծանիջիք՝ եթէ, ես առաքեցի առ ձեզ զպատուիրդ զայդ՝ լինել ուխտի իմոյ առ զևատացիսն (առ ահարոն և առ որդիս նորա) ասէ տէր ամենակալ։ Ուխտն իմ որ ընդ նմա՝ կենաց և խաղաղութե. ես ետու նմա երկիւղ երկնչել յինէն, և յերեսաց անուան իմոյ խորշել. օրէնք ճշմարտութե էին 'ի բերան նորա. և անօրէնութե ոչ գտաւ 'ի շրթունս նորա. խա՛ղաղութե և ուղղութե գնաց ընդ իս, և զբազումս դարձոյց յանիրաւութե։ Ո՛ի շրթունք քահանային զգուշասցին գիտութե, և զօրէնս խնդրեսցեն 'ի բերանոյ նորա, զի հրեշտակ տէն ամենակալի է։

ԳԼՈՒԽ Լ

Ա՛ռաքեա զսա հրամանին ա՛ն կանգնէ ՚ի վերայ հողւոյ օֆ պղնձի , յոր հայեցեալ հարեալսն ՚ի յօֆէն՝ ղերս առաքեսցեն ՚ի պատիժ արդեանցդաց , ընդ որս ՚ի հարուածոցն : Որդիքն եսբայելի հարեանէն զբոլոր ազգսն արտաքս եսբեռնայ , և զովք արտաքս բառնոս . և տերեն երկրէ նոցա :

՚Ի կատարել երեսուն աւուրց սգոյ վասն մահուան ահարոնի՝ յարուցեալ որդւոցն իսրայելի ՚ի հսկմը լեռնէ , գարձան ընդ ձանապարհ , որ տանի ՚ի կարմիր ծովն , ընդ որ ՚ի քորեբայ եկեալ էին ՚ի կադես . և աւուրս բազումս պատեցան զսկիզբ լերամիջ առ հարաւային սահմանօք երկրին քանանացւոց : Ոս եղեւ արքային արադայ՝ որ ի կր ՚ի թագաւորացն քանանացւոց , եթէ խորհեալ եկն եհաս ՚ի սահմանս նորա , և կամի արշաւել յերկիրս նորա ընդ ձանապարհ ատարինայ , այսինքն լրտեսաց . (զի էբրայական անունդ ատարիմ՝ ՚ի մեզ լրտեսք լսի . և թերևս ընդ այս ձանապարհ մտին լրտեսքն կանխաւ առաքեալք ՚ի մովսիսէ) : Ոյսմանէ այնորիկ աձատարեաց արքային արադայ , և եղ պատերազմաւ ընդ առաջ իսրայէլացւոց , և վանեալ զնոսա՝ կալաւ գերիս ՚ի նոցանէ : Ա՛յլ ոչ երկաբեաց ուրախութիւն յաղթութեանն նորա . քանզի իսրայելացիքն դիմեցին առ ՅՀՏ . ուխտեցին զոհել նմա զանձնային երկիրն , եթէ մանեսցի զնա ՚ի ձեռս իւրեանց : Ուաւ ՚ուր ձայնի նոցա . և նորա օգնականութիւք ամենազօր ձեռին նորա կատարեցին զուխտ իւրեանց . քանզի հզօր պատերազմաւ յարձակեալ ՚ի վերայ թագաւորին՝ ՚ի սուր և ՚ի հուր մաշեցին զամենայն երկիրն նորա . մինչև չթողուլ կենդանի նորա կամ ՚ոչ քաղաք , ՚ոչ ամրոց , և ՚ոչ ՚ի բնակչաց նորա կամ յանասնոց նոցա կենդանի . զի չունէին կամն բնաւ կուռքն ինքեանց հաստատել անդ , զոլով արտաքոյ

երկրին աւերեաց, և դժուարին ի պահել յա-
ղագս հեռաւորութեն: Ապա այնուրիկ խոստա-
նալն ամպի արարին զնա, զի մի այնուհետեւ ու-
նիցին ինչ երկիւղ յայնմ կողմանէ, ի ժառան-
գելն նոցա զերկիրն աւետեաց:

Այսպա Թոզեաւ զմանապարհ կարմիր ծովուն,
և խոստացեալ ի կողմն սահմանաց մովաբացւոց
եւլին ի սելմինա. անտի չուեալ բանակեցան ի
փենով. Թուոց. Լ. 41: Այս գարձընթաց ձանա-
պարհորդութիւն փոխանակ դէպուղիղ ածելոյ ի
դմեդեաւ տեղին, Թուէր յաւէտ հեռացուցանել
անտի: Ապա այնուրիկ ժողովուրդ ասաժոյժ վա-
տակեալ յերկար ձանապարհորդութէ, անդրին
սկսան դառնացեալ ոգւով որանջել ընդդէմ ոյ
և մովսիսի, որպես Լիէ հանեալ իցէ զնոսա յեգիպ-
տոսէ լոկ ի տանջել և ի կոտորել յանապատս ի
ծաթաւոյ և ի քազցոյ. փոխանակ կարևոր հացի
որ հաստատէ զսիրտ, զնոսոի զանզօր մնանայն
և եթ ասեն դնեալով յարժամ մեր առաջի, յոր-
մէ տաղակացեալ են անձինք մեր: Այսպիսի տըր-
տունջք՝ որպէս ասացաք՝ ոչ երբէք Թոզան անպա-
տիժ. յոր սակս զկնի այսչափ փորձոյ, ոչ ևս
ակն ունէր մովսէս լսել զայդպիսիս ի բերանոց նո-
ցա: Ապայ կէն դեռևս ի նոսա ծերք և պառա-
ւունք հնացեալք յայս ախտ, զոր չէզև երբէք հնար
խլել արմատաքի ի սրտից նոցա. ուստի յայսմ
վայրի կամեցեալ ոն ոյ ի վերջ հատուցանել զնո-
սա, և սրբել զանակ ժողովրդեան իւրոյ ի քա-
ցախաւտ խմորոյ անտի, առաքեաց ի նոսա օձս
էրաթեղինս. որոց հարուած կիզողական՝ բորբոք
հրատապ ներգործեալ ի մարմինս, անբերելի ցա-
ւովք սպանանէր զազգսն. զթիւ մեռելոցն Թէ-
պէտ ոչ նշանակեն՝ ըզ գիրք, բայց երևի Թէ բա-
զում եղև յոյժ:

Յայս ահարկու զօրաց բարկութէ ամենակալին՝
զարհուրեալ որդւոց իսրայէլի, ապաշակեցին առ
մովսէս՝ խոստովան լինելով զմեղս իւրեանց, և
աղաչելով զնա կալ յաղօթս առ ոն, զի բառնայ

յԷ ՚ի նոցանէ զօձս կոտորէր : Այսպէս՝ որ միշտ և յամենայն ժամ պատրաստ էր յօգնութիւն հասանել յանցուցելոց, յառաջին նշան անդր ապաշաւանաց նոցա՝ կատարեաց վազվազակի զինդրուածս նոցա : Այլ ըստ պատուիրելոյ նոցն՝ արար օձ պղնձի. զոր հաստատեալ ՚ի վերայ ձողոյ, կանգնեաց ՚ի բարձրադիտակ տեղւոջ ՚ի նշանակ ողջմուխթիւնն ոչ և փրկութԷ ժողովրդեան. զի ամենայն որ հարկանիւր յօձից անտի, հայեցեալ յայն օձ պղնձի՝ դառնէր զբժշկութիւն : Այսպիսով օրինակ փրկչին բարձրացելոյ ՚ի վերայ քառաթև խաչին . յոր ամենայն որ հայի մտաւոր աչօք կենդանի հաւատոյ, բժշկի ՚ի մահաթոյն հարուածոց հնոյ օձին :

Այսպս չուեալ ՚ի փենուվայ՝ եկին բանակեցան յաթոռվթ կամ յոթոռվթ. անտի ուղղեալ ընդ հիւսիս, և թողեալ յարևմուտս կոյս զլեառն սեյիր, եկին յաքեղգայի, մծա ՚ի սահմանս մովաբայ յարևելից կողմանէ . ուր չէ յայտ թէ երբեմն ժամանակս կացին . և անտի չուեալ եկին և անցին ընդ ձորն զարեդ յերեսանեբորդ ուԹերորդ ամի գլխի ելանելոյ նոցա ՚ի կանդնաբառնեայ, յորժամ ոչ ևս գոյր ոք կենդանի ՚ի նոցանէ, զորոց սահմանեալ ՚ած տապատա անկանիլ յանապատի անդ . կամ գիԹեԹէ եին սակաւք ոմանք, մեռան և նոքա ՚ի ձնառապարհի յառաջ քան զժամանել նոցա ՚ի ձորն առնոնեայ : Ձորն կամ հեղեղատն առնոնեայ ելանէր ՚ի հիւսիսոյ՝ և իջանէր յարևելից յարևմուտս մինչ ՚ի ծովն մեռեալ, առ որով բնակէին մադիամացիք . իսկ առ հեղեղատաւն առնոնեայ յարևելից ընդ երկայն՝ բնակէին ամովաբացիք որդիք զուժայ . և ՚ի վերոյ քան զնոսա եղբարք նոցա ամմոացիք ՚ի հարաւոյ ընդ հիւսիս : Ի մէջ սոցա և յորդանանու յարևելեան կողմն՝ սկսեալ ՚ի բերանոյ անտի նորին գետոյ, ընդ որ իջանէ ՚ի ծովն մեռեալ, մինչև մծա յաքեղնոա՝ գոյր երկիր ընդարձակ արգաւանդ և գեղեցիկ, որ էր մանն ամ երկրին խոստացելոյ որդւոց իսրայէլ . ուր ընդ այն ժամանակս բնակէին ամովրհայիք սերունդք քանանու , բաժա-

նեալք յերկու թագաւորութենս. մի՝ ի հարաւակողմն՝ ուր թագաւորէր սեհոն արքայ եսեբոնայ. երկրորդն՝ ի հիւսիս ընդ իշխանութիւն ոգայ թագաւորին բասանու։

Լ.դ՝ ի ձմնապարհորդել որդւոց իսրայէլի յաքզգայեայ մինչև ի ձորն առնոնի՝ քերելով ուրեք ուրեք առ արևելեան սփամբք մեռեալ ծովուն, անցին առ սահմանօք մադիանացւոց, ոչինչ ի շնամութենէ ցուցեալ նոցա, զի էին որդիք աբրահամու ի քեռւրայ։ Այնպէս և ոչ ընդդէմ մովաբացւոց և ամմնացւոց որդւոց զոմտայ. քանզի ոճ յայտնի պատուիրեալ էր մովսիսի՝ չգրգռել ընդ նոսա պատերազմ, զի ոչ տայ ձեզ ասէ գերկիր որդւոցն ամմնայ։ Այստ նմին օրինակի էին կամք մովսիսի թշնամանալ և ընդ սեհոն արքայ եսեբոնայ՝ թէպէտև քանանացի էր նա, և երկիր նորա պարփակեալ ի մէջ սահմանացն, զոր խոստացեալ էր ոճ տալ զաւակին աբրահամու ի գետոյն եգիպտացւոց՝ մինչև ի գետն մեծ եփրատ. ՃՆ. ԺԵ. 18։ Այսպէս և այնպէս գէթ առ ժամն ոչ կամէր մովսէս տիրել երկրի նորա. զի միտք իւր էին ի վերայ քանանացւոց յայնկոյս յորդանանու. և զի առ ի ժամանել ի յորդանան՝ հարկ էր անցանել ընդ երկիրն եսեբոնայ, նմին իրի առաքեաց մովսէս յանապատէն կեդմովթայ հրեշտակս առ սեհոն արքայ խնդրել անցս ընդ երկիր նորա՝ նովին խաղաղական և իրաւացի պայմանօք, որով յառաջագոյն խնդրեալ էր յեդովմայեցւոց. որք թէպէտ չետուն նոցա անցս, սակայն Թողին ընդ աւուրս քաղումն շրջիլ որդւոց իսրայէլի առ սահմանօք իւրեանց զսէյիր լերամբք. և ընդ այն ամենայն աւուրս ետուն նոցա գնոյ արծաթոյ՝ զամենայն որոյ կարիս ունէին։

Այայց սեհոն արքայ առաւել քան զեդովմայեցիս տմարդի գտեալ, խստացաւ ի կամս իւր, քանզի վճարեալ էր ի ձեռն վասն նորա. զի ոչ միայն զլացաւ զոդ և զձնապարհ ընդդէմ աղգային իրաւանց՝ որդւոց իսրայէլի, որք խաղաղութեամբ խնդ-

բէին անցանել առանց ջնաս և ոչ մի հասուցանելոյ, այլև ժողովեալ նորա զամենայն ժողովուրդ իւր յանապատի անդ, խաղաց ընդ առաջ որդւոց իսրայէլի մինչև 'ի սիասար՝ տալ պատերազմ ընդ նոսա։ Յայնժամ ըստ հրամանին Ցայ անցեալ խրայէլացւոց զձորն առնոնիայ՝ յարձակեցան 'ի վերայ սեհոնի արքային, հարին զնա և զամենայն ժողովուրդ նորա կոտորմամբ սրոյ. և կալեալ զամենայն քաղաքս նորա, սատակեցին զամենայն բնակիչս նոցա 'ի կանանց ցմանկունս. մինչև չթողուլ ապրեալ 'ի նոցանէ. և առեալ յաւարի զանասունս նոցա, և զամենայն կապուտ կողոպուտ քաղաքաց նոցա, տիրեցին երկրին յառնոնիայ մինչև ցյաբոկ, և ցյաղեր. որ էր սահման որդւոց ամմնայ։ Այս եղև սկիզբն տիրապետութեանն որդւոց իսրայէլի երկրին քանանացւոց։

Ցայն գայս արարին և ովգայ արքային բասանու. զի յետ հարուածոյ եսեբոնայ, առաքեաց մինչև գունդ մի սպառազինեալոց լրտեսել զերկիրն աղերայ. որոց երթեալ և անպատասպար գտեալ զաղեր և զաւանս և զդեօղս նորա, անաշխատ տիրեցին նոցա. և զամենըցայիս զբնակիչս նոցա կէս մի կոտորեցին, և կէս մի որք անձնատուր եղեն նոցա՝ գերի վարեցին։ Այսպա գարձան եկին ընդ Յանապարհ 'ի բասան. որ ձգեր 'ի վերոյ քան զեսեբոն 'ի հարաւոյ ընդ հիւսիս՝ մինչև մօտ յահունս յորդանանու։ Ցայն իբրև լուաւ ովգ արքայ բասանու, ժողովեաց զամենայն զօրութիւն իւր, և կազմեալ բանակ մեծ և ահաւոր, և ինքն 'ի գլուխ բանակին եկ ընդդէմ իսրայէլացւոց մինչև յեդրայիմ կամ սեդրայիմ։ Այս ովգ արքայ բասանու միայն մնացեալ էր 'ի յապրիայոց անտի հսկայից. գահոյք նորա կամ մահիճք էին երկաթիք. ինն կանգուն երկայնութիւն նորա, և չորս կանգուն լայնութիւն. ուր բնագիր երբայեցւոց երևի առնուլ զհասարակ կանգուն մարդոյ յարմնկանէ ցծայր միջամատին։ Այդ՝ ըստ այսմ առեալ, ինն կանգունն առնէ հնգետասան ոտնաչափս, և չորս և կէս մատնաչ

չափս. և զի մահինձք սովորաբար փոքր ի երկայն են քան զՀասակ մարդոյ, ապա մնրթի է ասել՝ Թէ բարձրութիւն ովգայ արքային հասանէր ցչորեքհասան սանդաչափ, կամ փոքր ի աւելի և ս. որ է արդարև Հասակ հսկայաձև, բազմօք դերազանցեալ զմեծու-Թիւ մարդկան մերում ժամանակի. զի բարձրա-գոյնքն ի նոսա հազիւ ցվեց ոտնաչափ բարձրու-Թեն ժամանեն։

Այսպա տեսիլ ևեթ գիտակին բաւական էր ահ արկանել խորայելացւոց. բայց ուր ահ մարտնչի, չիք անդ երկիւղ և ոչ մի ի մարդոյ. մի երկնչիցիս ի նմանէ, ասաց ահ ցմովսէս, զի ի ձեռս քո մատ-նեցի զնա և զամենայն ժողովուրդ նորա և զամե-նայն երկիրը նորա. և արասցես նմա, որպէս արա-րեր սեհոնի արքային ամովրհացւոց. որ և փութով կատարեցաւ։ Վասնզի որդիքն իսրայելի երկնաւոր օգնութեամբ զօրացեալ, հարին ի սայր սուսերի զովգ արքայ բասանու և զորդիս նորա, և ոչ թողին նմա զաւակ ի վերայ երկրի. և զժողովուրդ նորա զա-մենայն՝ զայր, զկին, և զծեր և զտղայ առ հասարակ կատարեցին, մինչև ամենևին չմնալոյ ի նոցանէ մնաց-ուրդ։ Իսկ ի նոցանէ և քաղաքս վաթսուն, ամենեքին բաձրապարիսպ և ամրափակ. Թող զբազ-մութեն անպարիսպ և անպատսպար քաղաքաց և ա-ւանից. և զամենայն ինչս նոցա՝ զոսկի, և զար-ծաթ, և զանասունս առին յաւարի, տիրելով ի հա-րաւոյ ընդ հիւսիս յայնկոյս յորդանանու ի ձորոյն առնոնեայ մինչև ցահերմոն լեառն, ի սիդոնացւոց սանիովը կամ սարիոն կոչեցեալ, իսկ յամովրհայ-ւոց՝ սանիր։ Իսկ այսպէս երկու պատերազմաւ բար-ձեալ ի միջոյ զերկու թագաւորութիւնս, կալան զերկիրը նոցա. զոր յետոյ բաժանեցին ի մէջ իւ-րեանց, միացուցեալ ընդ այլոց սահմանաց երկրին քանանացւոց։

ԳԼՈՒԽ Ը

Հաղագս աբգայ մովաբացւոց էոլէ ղբաղաամ անէծանել ղԻսրայէլ։ Իսկ նա ի հինանակ անէծանելոյ օրհնէ ականայ կամօքս Բայց նրարդե՛ ես ղբաղակ՝ պալ պատճառս իսրայէլի պատռնըկռուիք ես կռապաշտուիք։ Ալամն այնր մեղայ էոտորին չիսրայէլի չսան ի երբ հալարբ։

Յետ այսց կրկնակի յաղթութեանց՝ ած մովսէս և բանակեցոյց զժողովուրդ որդւոցն իսրայելի ի դաշտավայրս մովաբացւոց յարևմտեան կողմն՝ առ յորդանանաւ յանդիման երիքովի։ Այս դաշտաւայր կոչի մովաբու կամ մովաբացւոց, իբր ոչ եթէ զի մովաբացիք տիրէին նմա յայնժամ, այլ զի յառաջագոյն ընդ նոցա իշխանութիւն էր. զոր յետոյ առին ամովրհայիք. ապա ի ջնջել որդւոցն իսրայելի զամովրհացիս, և ի տիրել երկրի նոցա, կաւլան և զայս տեղի. ուր և բանակեցանն ի տեղին կոչեցեալ սատտիմ. որպէս զի անտի անմիջապէս վաղագոյն անցեալ զյորդանան, մոցեն յերկիրն քանանացւոց՝ առանց անցանելոյ ընդ երկիր մովաբացւոց, ընդ որս խաղաղութիւն էին. քանզի և ոճ իսկ պատուիրեալ էր մովսիսի չգրգռել ընդ նոսա պատերազմ. որպէս տեսաք ի վերոյ։ Այնմ իրի և բազակ որդի սեպիովրայ արքայ մովաբացւոց ընդ այնչափ առուրս՝ յորս պատեցին որդիքն իսրայելի առ իւրովք սահմանօքք, կայր հանդարտեալ՝ ոչինչ նշան թշնամութեան տեսեալ ի նոսա, բայց և այնպէս չէր անհսկած։ Այլ իբրև տես զբեթ առաջի աչաց, զի ի սակաւ աւուրս սպառ սպառ ջնջեցին նոքա զերկու զօրաւոր թագաւորութիւնս իւր սահմանակիցս, զսէհ հարաւ յոյժ, թէ գուցէ զնոյն արասցեն և նմա։

Յայն սակս վաղվաղակի դաշնադրեալ ընդ մեդիանացիս իւր սահմանակիցս, կոչեաց զՔեղաամոյա

կամ զնչհանաս նոցա ՚ի խորհուրդ. և առաջի սրար նոցա զվերահաս վտանգն և զհարկաւորութիւն դիմագրաւ լինելոյ. ապա թէ ոչ՝ ասէ, արդ լիցուն ժողովուրդս այս զամենայն որ չուրջ զմեզ են, որպէս լնուցուն արջառ զդեզ դալար ՚ի դաշտի։ Այլ առ բառնալոյ զամենայն տարակոյս ընթերցողաց, թէ զիարդ մտանեն աստ մագիանացիք, որովհետև ՚ի կարգի պատմութեանն չէ տրտուր թողաք զնոսա այնչափ իջևանօք հեռի՝ բազում անուսոտից ընդ մէջ անկանելով, կարևոր վարկաք յուշ առնել աստանօր, եթէ ՚ի նմին ժամանակի երկու էին մագիամք, և գաւառք մագիանացւոց. մին էր հանդէպ եզիպտոսի յարևելեան կողմն կարմիր ծովն. ուր փախեաւ Մովսէս յեգիպտոսէ, և անդ իւր կին, և եկայ առ նոսա ամն քառասուն։ Իսկ երկրորդն էր այս ՚ի մէջ երկուց ձորոց կամ հեղեղատաց զարեդայ և առնոնիայ, ձգեալ առ մեռեալ ծովն՝ սահմանակից մովաբացւոց. ընդ որս չունէր մովսէս առնել ինչ՝ ոչ չար, և ոչ բարի. բայց զպին ոչ գիտէր բազակ արքայ, և մարտիւ ընդդէմ ելաս նել այնպիսի ահաւոր պատերազմականաց՝ ոչ իշխէր։ Ոմանց որոյ խորհեցաւ սատանայական հնարս առանց պատերազմի նահանջ արկանել իսրայէլացւոց, կամ վատթարել զնոսա։

Ոչնու ժամանակաւ էր այր մի ՚ի միջագետս քնաքեալ առ եփրատ գետով կոչեցեալ բազաամ որդի բէովրայ, հռչակաւոր յոյժ յարուեստ մոգութեան. յորոյ վերայ երկու միմեանց հակառակ կարծիք են վարդապետաց։ Ոմանք հաստատին զնա գուսպաշտ և մոգ դիւանուէր, ըստ որում՝ զի բերն Հարցուակ կոչէ զնա. և յամենայն տեղիս՝ ուր ուրեք յիշատակէ զնա, իբրև զառնչ լցելոյ ամենայն անօրինութեան խօսի զնմանէ։ Այլք պետրոս զմեծեղեանն մեզաւորս նմա համեմատ. Է. պետ. Է. 15. 16։ Յուդա առաքեալ ընդ կայենի և ընդ կորխայ ՚ի մի կարգ դասէ զնա. 11։ Ոմանք հաստատեն և զորձոդութիւնքն հրամայեալք ՚ի նմանէ բազակայ արքայի՝ կանգնել եօթն բագին կամ սեղան ՚ի վե-

քայ բարձանց քահաղու, և զոհել ՚ինոսա. որպէս և խորհուրդն գիւտական՝ զոր ետանման, ՚ի պղծութե մարմնոյ և ՚ի կռապաշտութե ձգելոց զժողովուրդ նոն: Այս Թէպէտ ճշմարիտ ՚ած էր, կամ հրեշտակ որ խօսէր ընդ նմա ՚ի գիմաց ՚ոյ, և զնէր զանուս մարգարէութե ՚ի բերան նորա. բայց նա ՚ոչ զած ճանաչէր ասեն, և ՚ոչ զմարգարէութիւն իմանայր. այլ համարէր Թէ գիւն զոր պաշտէր՝ խօսի ընդ նմա, որում և զզոհս մատուցանէր: Այս միտս էն նախնի հարք գրեթէ առ հասարակ: Ապա էն էս ոմանք, որք հայեցեալ ՚ի բանս մարգարէութե նորա՝ որ վասն հանդերձեալ երջանկութե որդւոց իսրայէլի, և վասն խորին խորհրդոյ մարդեղութե որդւոյն ՚ոյ, ոչ համարին գնա մնգ, այլ մարգարէ ՚ոյ, Թէպէտ ամպարիշտ: Վասնզի ասեն՝ սովոր է ՚ած հաղորդել երբեմն զպարգև մարգարէութե և ամպարշտաց, ոչ վասն ինքեանց, այլ յօգուտ այլոց: Այս ժամանակօք սկզբն հերետիմանի գոյր աւանդութե, Թէ սա իցէ եղիսա որպէս բաբելի յորդւոց արամայ՝ մի ՚ի ծանօթիցն յոբայ և ՚ի բարեկամաց նորա՝ ՚ի սկզբանն ձգ և մարդ արէ ՚ոյ, այլ յետոյ կատարեալ մգ և կախարդ, մատնեալ զանձն յագահութե և յամենայն ամբարշտութիս. որով և անկեալ յառաջին իշխանութե ան տի իւրմէ:

Այդ՝ ահա առ սա առաքեաց բաղակ արքայ մովաբու հրեշտակս ՚ի գլխաւորաց անտի մովաբացւոց և մագիանացւոց՝ աղաչել գնա գալ և անիծանել զժողովուրդ որդւոց իսրայէլի. զի այնու Թերևս մարԹասցի հարկանել զնոսա և վանել յերկրէ իւրմէ: Այս զի չէր անտեղեակ փառամոլ և արծաԹասէր բարուց առնն, էտ տանել նմա օգնչ բաղում, միանգամայն և բանս եդ ՚ի բերանս պատգամաւորաց անուշակս՝ շողմարաբս և մարդահաճոյս առ յանկուցանելոյ զնա, ասելով. շատ է ար քայն մերոյ լոկ գալուստ քո, և բան բերանոյդ. զի գիտէ Թէ զոր դու օրհնես՝ օրհնեալ է, և զոր անիծանես՝ անիծեալ է: Ոչգան նորա առ բաղա-

սա՛, և խօսեցան ըստ բանիցն՝ զոր պատուիրեաց նոցա արքայն. իսկ նա զգուշաւոր՝ ի չկորուսանել զանուն իւր յայս դիպուածս վտանգաւոր, ասաց նոցա ագանել անդ զայն գիշեր, մինչև հարցանիցէ յա՛յ. այլ թէ գշխմարիտն ած խմանայր, եթէ զգևն, չէ՛ յայտ. բայց հաստատի է՝ թէ ած խօսեցաւ ընդ նմա՝ ի ձեռն հրեշտակի, և պատուիրեաց նմա չերթալ և չանիծանել զժողովուրդն։ Այս այնպէս դարձան պատգամաւորքն ընդունայն. բայց խոստմունք նոցա մեծապէս ներգործեցին՝ ի թիւրեալ սիրտ ամպարշտին, որ ամենայն իրօք յօժարեալ էր առնել զայն ձանապարհ առ՝ ի չկորուսանել զվարձս անիրաւութե՛ն. նմին իրի ո՛չ ասաց, թէ ո՛չ կամիմ գալ, այլ թէ ած ոչ թողու. ուստի և միայր անձկանօք միւսանգամ դարձին պատգամաւորաց. որ և եղև իսկ։ Վանգի բազակ ահիւ մեծաւ պաշարեալ չերեսաց ժողովրդեանն իսրայէլի, և մի միայն հնարս վանելոյ զնոսա զանէծս նորա համար բերելով, դարձեալ առաքեաց զայլ պատգամաւորս պատուականագոյնս քան զառաջինան, խոստանալ լով պատիւս և պարգևս մեծամեծս որչափ ինչ կա՛ մեսցի։ Այս երկրորդ հրեշտակութե՛ն տեսեալ բաղաամայ, ուրախ եղև, և առաւել մինչ եռես զի թոյլ ետ նմա ած երթալ ընդ նոսա. բայց պա՛տուիրելով նմա չառնել ինչ բնաւ, եթէ ոչ՝ զայն, զոր ինքն ած խօսեսցի ընդ նմա։

Այս պատուէր առեալ բաղաամայ, չարեաւ ընդ առաւօտն, և հանդերձեալ գ՛էշն իւր, գնաց ընդ իշխանսն. որք յընթացս ձանապարհին յառա՛ջեցին քան զնա. և ինքն երթայր հանդարտաքայլ ընդ երկու սպասաւորս իւր՝ վառեալ ցանկութե՛ն վարձուց անիրաւութեան, մինչև դարձուցանել գմիտս ոչ և նս հնազանդիլ ա՛յ, այլ ո՛րպէս և իցէ հաձեցուցանել զարքայն. ընդ որ բարկացաւ սրտմտութե՛ն ած։ Ո՛ան որոյ մինչ նա այսպիսի խորհրդով երթայր գձանապարհ իւր, ահա հրեշտակն ա՛յ սուսեր մերկ՝ ի ձեռին՝ եկաց ընդ մէջ ձանապարհին առաջի նորա. զոր տեսեալ էշոյն և շրտու-

ցեալ, խուսեաց յաւղոյն խոտորեալ ՚ի դաշտ անդը. և ՚ի հարկանել զնա գաւազանաւ բաղաամու դարձուցանել ընդ ուղղորդն, եմուտ էշն յանձուկ տեղի ընդ մէջ երկուց ցանգոց կամ սրմոց այգեաց. ուր վերատին տեսեալ իշոյն զհրեշտակն յանդիման իւր, խոյս ետ ՚ի կողմն սրմոյն, և ձմլեաց յորմն անդր զոտն բաղաամու: Եւ նա ոչ դիտելով զպատճառս այսպիսի նորանշան և անսովոր գործոց իշոյն իւրոյ, սաստկացոյց ՚ի վերայ նորա զհարուածն: Ապա ուրեմն եկեալ յանձկագոյն տեղւոջ ուրեք, ուստի ոչ գոյր խուսել յաջ կամ յահեակ՝ ետես երրորդ անգամ էշն զհրեշտակ տեառն առաջի իւր նոյնպէս սուսերամերկ. և նստաւ ՚ի գետնի հանդերձ բաղաամու. ընդ որ այնչափ բարկացաւ նա, մինչ յետ չարաչար գանակոծ առնելոյ զղջորմելի էշն, անդէն սպանանէր զնա, եթէ ոչներ սուր ՚ի ձեռին:

Յայնժամ արձակեաց ՅԱՀ զլեզու իշոյն՝ եդեալ բան ՚ի բերան նորա՝ առ ՚ի արդարացուցանել զինքն. իսկ մարդն բանաւոր յառաւելութիւն կապտաղութեանն անբանացեալ, ոչինչ հրաշացաւ ընդ յայտնի սքանչելիսս, այլ տայր պատասխանի անբանին, և խօսէր ընդ նմա իբրև ընդ իւր համակեցակ կենդանւոյ: Ասէր ցբաղաամ էշն. զի՞նչ չար արարի քեզ ասէ, զի հարեր զիս այս երիցս անգամ: Նա պատասխանի բաղաամ, փոխանակ զի խազ արարեր զիս. և եթէ էր սուր ՚ի ձեռին իմում, արդ և խոցեալ էր իմ զքեզ: Նմանէ էշն. ոչ ես այն եղ եմ քո՝ յորում հեծանելիր միշտ մինչև ցայսօր ժամանակի, մի թէ արարի քեզ երբեք այսպիսի ինչ. ասէ բաղաամ. ոչ: Նա ահա ՚ի նմին ժամու եբաց ՅԱՀ զաչս նորա, և ետես զհրեշտակն տեառն սուսերամերկ ՚ի ձեռին կանգնեալ առաջի իւր. որ և ասաց ցնա, ընդէ՞ր հարեր դու զէշդ՝ այս երիցս անգամ. ահա ես եղի քեզ ընդդէմ. և տեսեալ զիս իշոյդ՝ խուսափեաց յինէն. ապա թէ ոչ՝ արդ իմ զքեզ սպանեալ էր, և զդա ապրեցուցեալ. զի ոչ է խորհուրդ քո զոր խորհիս՝ ուղիղ առաջի

իմ : Խակ թաղաւամ զարհուրեալ, անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց առաջի հրեշտակին, և խոստովան եղև զմեղս իւր, և եղոյց զանձն պատրաստ դառնալ յետս, եթէ այնպէս հաճոյ իցէ նմա. այլ հրեշտակն Թոյլ ետ նմա երթալ, բայց զգուշացոյց զնա մեծապէս՝ զայն միայն խօսել, զոր ինչ ինքն դնիցէ 'ի բերան նորա : Իշխանքն որք ոչ գիտէին զպատճառ յամելոյ նորա, զտեղի առին միաւորիւ նմա. ապա 'ի հասանել նորա, առին զնա 'ի մէջ իւրեանց, և զնացին 'ի միասին :

Լուեալ բաղակայ արքայի զգալուստ նորա, զնաց անձամբ ընդառաջ նորա մինչև ցեղը սահմանաց երկրի իւրոյ. և բազմահարկի մեծարանօք ընկալեալ զնա, արար խրախուճէ մեծ նմա, և իշխանաց որ ընդ նմա 'ի միում 'ի սահմանագլուխ քաղաքաց իւրոց, (որ 'ի մերումն Թարգմանութեանն քաղաք հանգրուանաց,) զենեալ արքառս ետ ոչխարս, իբր հաւաստի ակնկալութիւն հասանել վախճանի իւրոյ. այլ վրիպեցաւ 'ի յուսոյն : Վասն զի հանեալ զբաղաւամ 'ի զանազան գլուխս լերանց, ուստի կարէր տեսանել զբանակ որդւոցն իսրայէլի, ուրեք ըստ մասին, և ուրեք ըստ բոլորին. և յամենայն տեղիս կանգնեալ եօթն բադինս կամ սեղանս, և զոհեալ 'ի նոսա զուարակս և խոյս ըստ հրամանի բաղաամու, այն ինչ միայր լսել 'ի նմանէ անէծս և նզովս ընդդէմ ժողովրդեան իսրայէլի, տեսանէր զի յամենայն տեղիս՝ ուր և տանէր զնա, զի Թերևս տեղափոխութիւնն ըստ հեթանոսական աւետարդապաշտութեան՝ առցէ նմա փոխել զբարբառ իւր, նա ընդ հակառակն՝ և աս քան զևս յաձախէր զօրհնութիւնս : Վասնզի ած ուղղէր զնեզուս նորա, և տայր նմա օրհնել և մարգարէանալ վասն հանդերձեալ բարձրութեանն, Ձոխութեանն և երջանկութեանն որդւոցն իսրայէլի. և վասն բարձմանն ընդակայ ազգաց և Թագաւորութեանց, որ կատարեցաւ 'ի ժամանակս դաւթի և սողոմոնի, և որ հրաշափառագոյնք, նաև վասն գալստեան մեսիային 'ի ցաւակէնն յակոբայ, զոր ակնար-

ի՛կ աստեղն յակոբայ. զի քո՛ւ էր չնմարիտ աստղ յակոբայ՝ ծագեալ յարևելից՝ ի զաւակին դաւԹի. նմին իբր և՝ ի ծո՛ւխս գիրս քաղեմ ուրեք մեսիայն անուամբ աստեղ նշանակի։ Ա՛րդարեւնայ և վասն մեծամեծ գործոց նորա. որ հանդերձեալ է առնուլ յաւար զոըդիսն սեԹայ, այսինքն զհաւատացեալս իւր, և հնազանդեցուցանել հօր իւրոյ երկնաւորի։ Յայնժամ՝ բարկացեալ բաղակայ՝ ծափ զծափի հարկանէր որպէս՝ ի հենգնել զնա, և՝ ի խափանել՝ ի մարգարէուԹէ. անիծանէ ասէ զԹշնամիս իմ կոչեցի զքեզ, և ահա օրհնելով օրհնեցեր զնա՝ այս երիցս անգամ. և բարկուԹի՛ արձակեաց զնա։ Ա՛ի գիրն ոչ նշանակէ յայտնի զտեղին, ուր գնաց բաղաամ. այլ՝ ասէ, ԹէՀ գնաց՝ ի տեղի իւր. զոր մարԹ է խմնալ յաղագս իջևանի իւրոյ. յորմէ որպէս երևի՝ էանց առ մադիանացիս. վասն զի զինի սակաւուց գատանեմք զնա առ նոսա, ուր և ընդ նոսա անկանի՝ ի բերան սրոյ երբայեցւոց։

Ա՛յլ յառաջ քան զմեկնիլ իւր՝ առ էկորուսանելոյ զվարձս անիրաւուԹե՛ խոստացեալ նմա՝ ի Թագաւորէն, եդ՝ ի մտի խորհուրդ մի տալ նմա, զի առանց շառաչման զինուց նորա պարտեսցին խորայելացիք։ Ա՛նդր քաջ ծանեաւ ամպարիշան, ԹէՀ ոչ ոք կարօղ է յաղԹել նոցա, ցորչափ նոքա հաւատարիմ լցեն՝ ՚ցյ, և ուՀիցին զնա ինքեանց մարտակից։ Ա՛յլա կարևոր է ասէր՝ ի մտի՝ գտանել հնարս ինչ առ՝ ի բաժանել զնոսա յ՚ՙյ, և ձգել՝ ի հատապաուԹիւն, ոչ բանուԹի՛ զինուց, այլ քաղցր և անուշակ փաղաքշանօք. ոչ սպառազէն զօրօք, այլ լիտի անամԹի կանամբք։ Ա՛ւ զի խաղաղուԹի՛ էին յայնժամ երբայեցիք ընդ մադիանացիս և ընդ մովաբացիս, խրատ ետ բաղաամ՝ նոցա արձակել զդստերս իւրեանց երԹալ և գալ՝ ի բանակ անդր երբայեցւոց իբր յայցելուԹի՛ և՝ առ կանանց նոցա. և այնպէս ընտելացեալ սիրով ընդ նոսա, միանդամայն և ընդ արս նոցա, և ընդ իշխանս, և ընդ զօրապետս, հրաւիրել զնո-

սա՝ի տօնս և՝ի խրախուճեիս իւրեանց. և փաղաքշական գգուանօք վարելով ընդ նոսա, որսալ զնոսիրտ նոցա. և՝ի բորբոքիլ նոցա՝ի գործ տուփանացս, մի տայցեն տեղի, մինչև ոչ խոստանայցեն հաւասարիլ ինքեանց՝ի պաշտօն կուռց իւրեանց։ Զայս դիւական խրատ ետ անօրէն մարգարէն, գիտելով զեբրայեցիս հակամէտ՝ի պոռնկութիւն և՝ի կռապաշտութիւն. որ և յաջողեցաւ նմա։

Իսրայէլացիք, որք տակաւին կային բանակեալ՝ի սատտիմ, ոչ գիտելով զնորհուրդ բազակայ, և ոչ զորոգայթն զոր լարեաց նոցա, ինքնարշաւ ըմբռնեցան՝ի նմա. մնացին համարձակ՝ի վրանս իւրեանց զգաստերս մադիամացւոց, և մի վաթացւոց, և պոռնկեցան ընդ նոսա. չոգան՝ի տօնս և՝ի զոհս նոցա, կերան՝ի դիւանուեր զոհից նոցա, և երկիրպագին և նուիրեցան բէլփեգովրայ կռոց նոցա, զի զայն պահանջէին գաստերք մադիամու՝ի կապէնս պոռնկութիւն իւրեանց։ Այս գործ պղծութեան այնչափ յամախեաց՝ի բանակի անդ եբրայեցւոց, մինչև կանգնել վրանս պոռնկութեն նաև շուրջ զնորանսն վկայութիւն, ի պէտս դրսեորեալ իշխանացն մադիամու և մովաբայ, առ որս մնանէին իշխանք ժողովրդեան եբրայեցւոց։ Ընդ այսպիսի անօրէնութիւն նոցա անհնարին սրտմտութիւն բարկացեալ նոն այ, վաղվաղակի երևեցոյց զարդար դատաստան իւր՝ի վերայ մեղաւորաց, պատուիրելով մովսիսի կախել զփայտէ զիշխանան զայնոսիկ, որք եղեն առաջինք յայն մեծագործն գործ պղծութիւն, զոր արարեալ մովսիսի, ասա հրամանն ետ զնոսիրտ կռոցն կոտորել իւրաքանչիւր՝ի հպատակաց իւրոց զայնոսիկ, որք նուիրեալ էին բէլփեգովրայ։

Ընդ նմին ժամու ահա այր մի իսրայէլացի գայր ածէր զզամբրի զորդի սաղովմայ իշխան տան ազգին շմաւոնի՝ի վրան անդր քազբեայ դստեր սուրայ միոյ յիշխանաց անտի մադիամու՝ յանդիման ամենայն մովսիսի, և ամենայն ժողովրդեան, որք չեղեն մանակից յայն գործ անօրէնութիւն, որք և կա-

ցեալ առ դրան խորանին վկայութիւնէ լսելին ընդ կորուստ եղբարց իւրեանց։ Օգոյն տեսեալ փեներեսի որդւոյ եղիազարու՝ վառեցաւ ի նախանձ վրէժխնդրութեանէ փառաց ՚ին, և յարուցեալ նոյն ժամայն ՚ի միջոյ ժողովրդեան գեղարդն ՚ի ձեռին՝ եմուտ ՚ի պռնկոյ անդր, և խոցեաց զերկոսին զայրն և զկինն ընդ արգանա, և անդէն սատակեաց զնոսա։ Այս արիական նախանձ ՚ինչպարտութեանէ փենեհեսի մեծապէս հաճոյ եղեւ ՚ին, որպէս ինքն ՚ինչ վկայեաց՝ ասելով յամվսէս, թէ փենեհես որդի եղիազարու ցածոյց զսրտմտութենէ իմ յորդւոց իսրայէլի. որով և առժամայն դադարեցոյց զՀարուածն, յորում մեռան քսան և չորք հազարք ՚ի ժողովրդենէ անտի ամբարշտեալք։ Այս ՚ի վարձ այսպիսի գովելի քաջագործութենէ փենեհեսի՝ եառ ՚ին նմա ուխտ խաղաղութեան, հաստատելով զքահանայապետականն պաշտօն ՚ի նա՝ և ՚ի զաւակս նորա յաւիտեան. այսինքն ընդ ամն յոլովս, ըստ սովորական ոճոյ ՚ինչ գրոց։ Այս թէպէտ զկնի մահուան հեղեայ բարձաւ քահանայապետութենէն ՚ի տանէն փենեհեսի, և անց ՚ի տունն իթամարայ. այլ ՚ի մերժել սողոմոնի զաբիաթար ՚ի քահանայապետութենէ, կացուցանելով ՚ի տեղի նորա զսադովկ յորդւոց փենեհեսի, դարձաւ քահանայապետութենէն անդրէն ՚ի տունն նորա. և ինաց ՚ի նմա մինչև ցհերովդէս և ցքո։

Պատուիրէ ամէն մովսէսի ընկել գմարտիանպես։ Մովսէս երբորդ անգամ հանդէս առնէ ժողովրդեան։ Խաչանկ ի նոսա վիճակաւ ղերկերն՝ զոր հանդերձեալ էին ժառանգել։ Պատերբ սալղատրա ըստ նոր հրամանի ցն մտանէն ի ժառանգութիւն հօր իւրեանց։

Ընդ՝ եթէ ըստ արդար դատաստանացն ոչ այնպիսի սհարկաւ պատիժս պարտաւորեցան լուծանել մեղուցեալքն յորդւոց իսրայէլի, քանի՞ դժնդակագունից արժանի էին նոքա, զոր այսչափ չարեաց պատճառք եղեն նոցա։ Զան այնորիկ պատուիրեաց ամէն մովսէսի, մինչեւ մեռեալ իցէ՝ առնուլ զվրէժ ի մոդիանացւոց. ոչ յիշին ասա մովաբացիք, եթէպտ ոչինչ ընդհատ ի մոդիանացւոց մեղապարտ էին և նոքա, մանաւանդ եթէ և առաւել՝ իբր սկզբնապատճառք համօրէն չարեացս. այլ զի փոքր ի յառաջ պատուիրեալ էր ամէն մովսիսի չմնասել ինչ նոցա՝ վասն զոմեայ հօր իւրեանց, ոչ կամեցաւ առ ժամն դարձուցանել զպատուէրն զայն, զի չև ևս էր նոցա լցեալ զչափ մեղացն իւրեանց։ Զյառաջ քան զձեռնարկել ի պատերազմ ընդդէմ մոդիանացւոց, ասաց ամէն մովսիսի և եղիազարու քահանայապետի առնուլ զհամար ամենայն ժողովրդեան ի քսանամենից և ի վեր ըստ տանց նահապետաց իւրեանց։

Այս է երրորդ հանդէս որդւոց իսրայէլի զկնէ ելանելոյ նոցա յերկիրատոմ։ Առաջինն արարաւ յանապատին սինայի ի վեցերորդ ամսեան եւից նոցա. ելից. լբ. 25։ Երկրորդն նոյնպես ի նմին անապատի իբր եօթն ամսօք զկնի առաջնոյն. թուոց. ա. 1։ Իսկ երրորդս այս արարաւ ի դաշտին մովաբու առ յորդանանու յանդիման երիքովի՝ եբեսուն և ուէք ամօք զկնի նախընթացին, ի քա-

ասանեբորդ և՝ի վերջին ամի Ձմնասարհորդութեն նոցա ընդ անապատս, յետ մեռանելոյ ամենեցուն, որք՝ի նախընթաց երկու հանդիսս մտին՝ի համար՝ բաց՝ի քաղեբայ որդւոյ յեփոնեայ, և՝ի յեսուայ. սակայն և այնպէս զանազանութին Թուոյ անձանց որ՝ի մէջ նախընթաց և այսմ համարոյ՝ սակաւ է առ համեմատութե այնչափ հազարաւոր մեռելոց. զի՝ի նախընթաց հանդիսի համարոյ գտան ոգիք՝ի քսանամենից և՝ի վեր 603650. իսկ յայսմ 601730. ուստի և զանազանութին է 1920. վասն զի յայն երեսուն և ութ ամն եղև ազատումն Թուոյ անձանց՝ի ցեզսն, Թէպէտ ոչ յամենեսին, որք լցին զտեղի մեռելոց. բայց ցեղն շմատնի նուազելցաւ յոյժ. զի յառաջնում հանդիսին Թիւ մարտակայ նորա էր 59300. իսկ յայսմ գտաւ 22300. երեսուն և եօթն հազարաւ նուազ: Յայսմանէ երևի Թէ յայս վերջին հարուած քանն և չորս հազարաց՝ի պատճառս կռապաշտութե բէլփեգովրայ՝ առաւել՝ի շմաւս նեանց անկան, քան յայլոց. օրինակ ունելով ինքեանց ամպարշտութեան զղամբրի զիշխանն տան ազգի իւրեանց, զոր յանուանէ յիշատակէ ինքն՝ի յաւէժական ուսմանն իշխանաց և առաջնորդաց, եթէ քանի՛ չարեաց պատճառ լինին ժողովրդեան՝ անկարգ գնացիւք իւրեանց:

Այս ամենայն բազմութե ժողովրդեան իրաց էլն, որք՝ի մեծ հանդերձեալ էին մտանել՝ի ժառանգութե երկրին խոստացելոյ հարց իւրեանց, էէս մի էին նոր ծնեալք յանապատի անդ՝ի քառասնամեայ Ձմնասարհորդութեան իւրեանց. և էէս մի մանուկ հասակաւ էլեալ էին յերկոսեան. նորին աղագաւ ոչ գոյր՝ի նոսա ծեր՝ի յիսուն և ութամենից՝ի վեր. ուստի և ամենեքին կարօղք զէն առնուլ և մտանել՝ի պատերազմ: Այսոսա առաց ՅՃ մովսիսի բաժանել զժառանգութե երկրին քանանացւոց, տալով իւրաքանչիւր ցեղի վիճակաւ յաւէտ և նուազ բազմամարդութե ցեղիցն: Այայ առ՝ի կանոնաւորել զսահմանս իւրաքանչիւր ցեղի

ըստ համեմատութեանց բազմութեանց անձանց, կացոյց ամէն զեղչեալսը քահանայ և զկնի նուաճեան. և զի ծանր էր և դժուարին այս գործ, եւ նոյա օգնական երկոտասան իշխանս՝ մի մի յանցնիւր ցեղէ. զորս և յանուանէ որոշեաց։ Եւ զի պիտասցին ոմանք զտարածութեանն երկրին՝ զոր հանդերձեալ էն ժառանգել, նշանակեաց ամէն և զսահմանս նորա ըստ ջրից կողմանց աշխարհի. որ ընդ լայն յարևելից յարևմուտս պարագրէր զամենայն երկիրն, որ անկանի ի մէջ յորդանանու և մեծի ծովուն, կամ միջերկրականին, մղոնս իբր 150. իսկ ընդ երկայն ի հարաւոյ ընդ հիւսիս՝ի հեղեղատէ եգիպտոսի և՝ի ծովէն աղոյ մինչև ցլերինս լիբանանու, որ՝ի մէջ ասի լեռն լեռնացն, մղոնս աւելի քան 210. ի մէջ առեալ և զերկիրն զոր կալան յայնկոյս յորդանանու։

Լ՚որդ՝՝ի անօրինել մովսիսի՝ի դիմաց ամենայն զայս օրինակ զբաժանումն ժառանգութեանց երկոտասան ցեղից, երկու տարակոյսք կարևորք ելանէին առաջի. որք պէտս ունէին որոշման, զի մի յետոյ լինիցին ժողովրդեան պատճառ վիճից և հակառակութեանց։ Լ՚առաջինն կարէր ծագել՝ի լուսնէ՝ի օրինադրութեան զոր տուաւ մովսէս՝ի ժառանգութեան հօր իւրեանց, յորժամ չիցէ նա թողեալ արու զաւակ։ Լ՚երկրորդն էր նմին ժամանակի գտաւ՝ի մէջ իսրայէլի տուն մի՝ի սոյն դիպուածոյ. այն է՝ տունն սաղպատայ դու՝ի ցեղէն մանասէի, որ մեռաւ յանապատի անդ, թողեալ դստերս հինգ. որոց անուանք էին մաղա, նուա, եգղա, մելքա, և թերսա. իսկ ուսար և ոչ մի։ Եւ զի ըստ սովորութեանէ երբայեցւոց՝ զստերքն ոչ մնանէին՝ի ժառանգութենէ, նմին իրի և սոքա զի մի անբաժին մնասցին յերկրէն, զոր ունէին ժառանգել, մնաւցեալ՝ի զուտն խոբանին վկայութենէ՝ առաջի արարին մովսիսի և եղիազարու՝ի ժողովն իշխանաց ժողովրդեան զդէմ իւրեանց. ցուցանէլով թէ սաղպատ հայր իւրեանց մեռաւ անորդի յանապատի անդ՝՝ն՚՝ի պատիժ սրտնջանաց ընդդէմ ՅՀ, և ոչ՝ի կորստեան

կորեայ և ժողովրդեան նորա, ոչ գոլով նորա մաս նակից ապստամբութեանն նոցա. այլ ըստ սահմանեալն ՚ի Երեսուն և ութ ամաք յառաջ վասն համաբերն ժողովրդեան՝ որք ՚ի քսանամենից և ՚ի վեր էլինէին գերիպատոս։ Պա զի մի ջնջեսցի անուն հօր իւրեանց ՚ի միջոյ ցեղի իւրոյ, առ ՚ի չգոյէ նորա ուստեր, աղաչեն տալ և ինքեանց բաժին ժառանգութենէ ՚ի մէջ եղբարց հօր իւրեանց՝ զայն որ հասանէր նմա՝ եթէ կենդանի էր, կամ եղբօր իւրեանց՝ եթէ գոյր. որպէս զի ունելով կալուածս յանուն հօր իւրեանց, և նովին ժառանգութիւն լինելով առն, յօժարեսցին որք նոցա յարուցանել զանուն սաղպատու հօր իւրեանց, զորոյ ժառանգութենէն վայելէին։

Ովսէս Թէպէտ լուսաւորեալ էր յՅ, սակայն և այնպէս յորժամ ընդ առաջ լինէին նմա իրք ծանունք, որք հայէին ՚ի քոլոր հասարակութենէ ժողովրդեան, ոչ իշխէր սահմանել ինչ առանց հարցանելոյ յՅ։ Ոմանն որոյ ըստ սովորութենէ իւրում մտեալ ՚ի խորանն վկայութենէ, միտոյց առաջի նմին զդատաստան նոցա. իսկ նա ոչ արար պատասխանի, թէ խնդիրը դատերացն սաղպատու ուղիղ է և արդար. ուստի և տացին նոցա կալուածք ժառանգութենէ ՚ի մէջ եղբարց հօր իւրեանց. զոր և կալեալն նոքա իրաւամբ հայրենի ժառանգութենէ։ Օ՞այս մանաւանդ դիպուած այսպէս որոշեալ Յ, պատուիրեաց Մովսիսի հրատարակել առաջի ժողովրդեան ընդհանուր օրէնս յաջորդութենէ ՚ի ժառանգութենէ՝ ըստ այսմ կարգի։ Եթէ կնոջ ուրուք այր լիսբայելի մեռանիցի, և ոչ գուցէ նորա ոչ ուստր և ոչ գուստր, և ոչ գոցի որ ՚ի մերձաւորաց առն նորա առնուլ զնա կին առ ՚ի յարուցանել զանուն մեռելոյն, ժառանգութենէ նորա տացի եղբօր մեռելոյն. և եթէ չունիցի եղբայր, տացի հօրեղբօր նորա. իսկ եթէ և ոչ հօրեղբարս ունիցի, յայնժամ ժառանգութենէն անցանիցէ ՚ի մերձաւոր ազգէն ազգականս ՚ի ցեղէ մեռելոյն. զի մի վոխեսցի ժառանգութենէն ցեղէ ՚ի ցեղ։

Այլ՝ ի պատճառս վէճին՝ որ տուաւ ի նախատ դատերայն սաղմոսադու, երկրորդ խնդիր ծագե ցաւ. զոր իշխանք ցեղի որդւոյն դաղաադու՝ ի ցեղէ որդւոյն մնասածի առաջի արարին մնվսխսի՝ ի ժողովն իշխանաց։ Պիտէմք ասէն ցմնվսխս՝ զի ետ ՝որ հրաման Տէրն մեզ մերում բաժանել զերկիրն ժառանգութեամբ վիճակաւ. և ընդ այլոց՝ տալ կալուածս ժառանգութեամբ և դստերաց սաղմոսադու եղբօր մերոյ զբաժինն, որ անկ էր Հօր նոցա. ընդ որ հաճեալ հաւանեալ եմք. սակայն եթէ տայի նոցա ազատութեամբ ամուսնանալոյ ընդ ումբ և կամիցին ըստ հաճոյից իւրեանց, գուցէ ընտրեսցեն նոքա այլ յայլմէ ցեղէ. և այնպէս որդիք նոցա ծնեալք ի հօրէ օտար ցեղի՝ ժառանգելով զկալուածս յանուն հօր իւրեանց, ի բաց բառնայցեն զայն իսպառ ի վիճակէ ժառանգութեամբ ցեղին մնասածի, և յաւելուցուն ի քնիկ հայրենի ժառանգութիւն իւրեանց. որ այնուհետև և ոչ յամին յոբելեանն Թողութեամբ դառնայցէ առ ցեղն մնասածի։ Վասն զի նոքա իրաւամբ որդեութեամբ կալան զայն կալուած. որով և ընդդէմ օրինադրութեամբ նոցա՝ ժառանգութիւն փոխի ցեղէ ի ցեղ. յորմէ և ծագիցի շփոթումն ժառանգութեանց, և խառնակութիւն ցեղից։

Վասն զի հաւանեալ ընդ առաջարկութեամբ նոցա, յետ հարցանելոյ զնոսա՝ ետ պատասխանի որդւոյն դաղաադու՝ ասելով. Դստերքդ սաղմոսադու եղիցին կանայք որոց հաճոյ թուիցի յաչս նոցա. բայց առ խորհելոյ յանտեղութիւն՝ զոր դուք առաջի արարիք, մի՛ լիցի նոցա ազատութեամբ ընտրելոյ ինքեանց արս յայլմէ ցեղէ, քանզի միայն ի ցեղէ հօր իւրեանց յորդւոց մնասածի։ Այսպէս և ըստ այսմ օրինաց՝ հնդեբին նոքա եղեն կանայք հնդից եղբարց՝ որդւոց կամ թոռանց հօրեղբօր իւրեանց։ Այս քանզի պատճառ այսր օրինադրութեամբ հայեր՝ ի բովանդակ ազգն որդւոց իսրայէլի, նմին իրի և օրինադրութեամբ եղև ընդհանուր վասն ամենայնի ցեղից. զի դստերքն նոցա, որք իցեն ժառանգառ

'ի չգոյե նոցա եղբօր, մի՛ ամուսնասցին ընդ այլում, բայց որ էին 'ի ցեղէ և յազգէ հօր իւրեանց. իսկ այլք որք չէն ժառանգ, կարեն ամուսնանալ և արտաքոյ ցեղի իւրեանց ընդ ումէ և հաճեսցին։ Այսուհանդերձ այսոցիկ զհատացիք, զի չունելին ժառանգութիւն 'ի մէջ որդւոց իսրայէլի, կարօղ էին առնուլ և տալ կանայս արտաքոյ ցեղի իւրեանց։ Ոչ ևս էին ինչ զարմանք՝ որբուհւոյն եղիսաբեթի որ էր 'ի ցեղէն զևեայ, լինել ազգական ամենաքոյ կուսին եղելոյ յազգէն յուդայ. զի կարէ լինել, թէ մայր կամ հանի որբուհւոյն եղիսաբեթի լեալ էր յազգէն յուդայ. որպէս և ընդ հակառակն՝ մայր կամ հանի սրբ կուսին 'ի ցեղէն զևեայ։

ԳԼՒ ԺԲ.

Արդեաւ 'ի ծերչեալ վախճանել էրոյ, ըստ հրամանի տն հայոցանէ 'ի փեղէ էր առաջնորդ ծաղկեբերեան պչեռս։ Տայ ապաստութեամբ էոթոբել զմարթեանցիս։ Ուռնու հմար առաքին զոր առաբեղին 'ի նոցանէ։

Յետ պատուիրելոյ մովսիսի՝ ըստ հրամանին տն՝ զայսոսիկ և զայլ բազում կարևոր օրինադրութիւս ժողովրդեան որդւոց իսրայէլի, երթալով երթայր և մերձենայր վախճան կենաց նորա՝ ըստ վճռոյ տն, զոր իբրև ամենայն միով յառաջ ազգ առնմ 'ի կադէս 'ի սին անապատին՝ չմոռանել յերկիրն աւետեաց, այլ մեռանիլ յանապատի անդ՝ որպէս մեռաւ ահարոն եղբայր նորա, յաղագս թերահաւատութեան, զոր ցուցին առաջի որդւոցն իսրայէլի 'ի վերայ ջուրցն հակառակութեան։ Այլ զի գոն հարևանցի իմն տեսութիւ վայելեսցէ զերկիրն զայն ցանկալի, յոյր սակս ամն քառասունն առաւելեցաւ ընդ ժողովրդեան տն, ասաց նմա տն

ելանել ՚ի լեառն նաբաւ, որ կոչի և աբարիմ. և բարձրագոյն գլուխ կամ կատար նորա՝ կոփածոյ, որ էր ՚ի ձախակողմն յորդանանու յանդիման երիքովի. և անտի ասէ՝ հայեցեալ ընդ չորեսին կողմանս, ընդ ծովակողմն, ընդ հիւսիս, ընդ հարաւ, և ընդ արևելս, տես աչօք քովք զամենայն երկիրն. քանզի ոչ անցանիցես ընդ այդ յորդանան, այլ յաւելցիս առ ժողովուրդ քո։

Իբրև գիտաց մովսէս՝ եթէ հասեալ է վախճան իւր, և ժողովուրդն ՚ի, որում առաջնորդեաց հայրական գթով ընդ այնչափ ամս՝ կարօտ է խիստառն առաջնորդի, ոչ խորհեցաւ կացուցանել ՚ի տեղի իւր իբր յաջորդական ժառանգութիւն զոք յորդոց իւրոց. և ոչ յեղբօր որդւոց, կամ զայլ ոք ՚ի մերձաւոր ազգականաց կամ ՚ի բարեկամաց։ Այլ զանգի քաջ գիտեր եթէ երջանկութիւն ժողովրդեան կարի ինն կախեալ կայ զգլխոյն և զառաջնորդին։ Վասն իրի աղաչեաց զՅԾ, որ քննէ զսիրտս մարդկան, և գիտէ զամենայն, և տեսանէ զամենայն, զի ինքն ընտրեսցէ այր արժանաւոր ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ, որ գիտիցէ արդարութիւն և խիստութիւն առաջնորդել նմա. զի մի լինիցի իբրև ոչխար, որոյ ոչ գուցէ հովիւ։ Իսկ ՅԾ ասաց ցնա առնուլ զԵսու որդի նաւեայ, որում էտ զՀոգին Ջի ամենայն պարգեւօք կարեւորօք առ ուղիղ առաջնորդութիւն, և կացուցանել զնա առաջի եղիսաղարու քահանայի յանդիման ամենայն ժողովրդեան. և դնել զձեռս ՚ի վերայ նորա ՚ինչան ընտրութիւն նորա. և տալ նմա յանուն ՅՆ առաջի եղիսաղարու և առաջի ժողովրդեան զօրինս և զիրաւունս կառավարութիւն. և հաղորդել նմա զիշխանութիւն իւր և զամենայն շքեղութիւն։ Զի ժողովուրդն ամենայն ծանիցէ զնա իշխան ընտրեալ և կացուցեալ ՅՆ, և հնազանդեսցի նմա. բայց ուր ուրեք չիցեն նմա յայտնի կամքն ՅՆ, հարցանիցէ եղիսաղարու քահանայի. և ըստ յայտնութեանցն որ լինիցին նմա ՚ի ՅՆ՝ ինքն և ամենայն ժողովուրդն վարեսցին յամենայն գործս իւրեանց։

Մովսէս իբրև կատարեաց զայս ամենայն ըստ պատուիրելոյ նմա, եմուտ ի խորանն վկայութեան տալ վճռաւոր ժամ. և ապա ըստ հրամանի նորա վճռել զինեան իւր։ Այլ խօսեցաւ նմա Աստ և ասէ, չե՞ս տակաւին հասեալ ժամն այն. այլ կամիմ զի միւսանգամ առնեալ խօսես, առ ինձ զվճիռ իմ յորդւոց մարդկանէ։ Դու գիտես զանօրէնութիւնն, զոր անօրինեցան նորա ինձ, և զարիս զոր հասուցին ժողովրդեան իմոյ. արդ՝ կատարեա և զայս վերջին գործ առաջնորդութեանդ ի փառս անուան իմոյ, և ի խրատ եղբարց քոց, և յահ և յերկիւղ Աստուածեայ իմոյ, և ապա յանդիման ի ժողովուրդ քո։ Այսմ խօսեցաւ մովսէս ընդ ժողովրդեան, և հրամայեաց վասն ի ձակատ ընդդէմ մարդկանացուց, լուանալ արեամբ նոցա զանօրէնութիւնն զոր գործեցին ընդդէմ նմա։ Եւ այս էր առ այն նուագ՝ երկոտասան հազար պատերազմողաց, զոր իբրաքանչիւր ցեղ կարող էր հանել. այլ զի մի փառք յաղթութեն ինոյ և եթէ ցեղն տացի ի գժտութիւնն և ի դրդիռ նախանձու այլոց ազատեան ցեղից, հրամայեաց մովսէս յամենայն ցեղից մի մի հազար ելանել։ Եդ սոքա վաղվաղակի վառեալք և կազմեալք՝ երկին յանդիման եղեն մովսէսի. և նա կացոյց ի վերայ նոցա զօրավար զփենեհէս որդի եղիազարու քահանայի, որպէս ասեն՝ ի վարձ ածայնն նախանձու և արիական քաջագործութեանն, զոր եցոյց ընդդէմ երբայեցւոց եզբարց իւրոց, որք չոգան զհետ բեղփեգովրայ. և այնպէս արձակեաց զնոսա։ Եւ որք զօրավար այսմ պատերազմի գնեն գլեսու. զի ըստ որում նորոգ ընտրեալ գլուխ ժողովրդեան ոչ, նմա ասեն անկ էր այն պաշտօն. իսկ զփենեհէս համարին լուկ պատճառան սրբազան սպասուց և փողոց։ Այլ անհաւրեն երեւի՝ թէ լուեր մովսէս զանուն յեսուայ՝ եթէ արդարև գտեալ էր նա յայսմ մարտի. զի ոչ աղջամուխ պատմութեան ստուգապէս զպատերազմ առանց յիշելոյ զանուն զօրավարին. իսկ ի պատմութես յայսմիկ չէք ուրեք յիշատակ յեսուայ,

ոչ յաւաջ՝ և ոչ զկնի գարձին ՚ի պատերազմէ, յորժամ մնալոյս և եղիազար ելին ընդ առաջ յաղթական զօրուն։ Այս երևի Թէ յետս ոչ գտաւ յայնժամ ՚ի բանակին, Թերևս առանձնացեալ ուրեք պարապիլ ընդ Այ։

Այդ՝ վառեալ փեներէսի նախանձու ճաճային վրէժխնդրութեանն, և երկոտասան հազարք իւր ընդ նմա՝ անվեհեր յարձակեցան ՚ի վերայ մնդխանացւոց, և ՚ի սայր սուսերի կոտորեցին զամենայն արու. ընդ որս և զՆոգեսին Թագաւորս կամ զիշխանս նոցա, զեվին, զսուր՝ զՀայր քաղքեայ մեղսակիցն զամբրեայ իշխանին տանն շմաւոնի, և զբռկոմ, և զուր, և զոզոզը։ Այնդ և բազաւոր ընկալաւ զարժանաւոր վարձս իւրոյն ամպարիշտ խորհրդոյն՝ սատակեալ սրով վրէժխնդրութեանն որդւոց իսրայէլի։ Այս սփռեցան ընդ երկիրն, և զամենայն ինչս նոցա և զստացուածս, զոսկի և զարծաթ, և զանասուն առին յաւարի. իսկ զքաղաքս, և զաւանս, և զամրոցս՝ զոր ոչ կարացին բառնալ՝ հրձիգ արարին։ Այլ այնպէս ՚ի սակաւ աւուրս սպառնսպուռ անասլատ անչէն և անմարդի արաբեալ զամենայն երկիրը մնդիամոս, առանց և ոչ միոյ ուրուք անկանելոյ ՚ի նոցանէ, զարձան յաղթական փառաք և ցնծութեամբ՝ հանդերձ մեծագանձ աւարաւ, և բազմութեամբ գերեաց, ակնունելով լիաբերան գովութիւնս և օրհնութիւնս լսել ՚ի մնվսիսէ. այլ վրէպեցան. զի փոխանակ գովութեանն՝ կշտամբանս լուան։ Այանզի կամ առ բնական աղէտից գթացեալ ՚ի կանայս և ՚ի մանկունս իբր անկարօղս ՚ի դիմամարտութեանն՝ ապրեցուցեալ զնոսա գերելին ընդ իւրեանս, կամ սակս շահասիրութեան առ ՚ի բազմացուցանել գերիս, և կամ առ ՚ի պահել զսովորական օրէնս օրինաւոր պատերազմի, ըստ որոյ խնայելի են մանկունք և կանայք. իբր զի նոքա ոչ մնանեն՝ ոչ ՚ի քաղաքական և ոչ ՚ի զինուորական գործառնութիւնս. ուստի և չեն համարեալ մանն հաւասարակութեանն թշնամւոյն։ Այլ ոչ այնչափ զմնաւ, Թէ այս չէր պատերազմ թշնամւոյ ընդ

Թշնամի, այլ պարծագրուելի՝ ամենայն արդարութեամբ ընդդէմ այնոցիկ՝ որք զժողովուրդ նորա ձգելոյն ի կռապաշտութիւն. յորում առաւել յանցաւոր էին կանայք՝ ուսեալ և պարտաւորք մնալոյ. նոյնպէս ջնջելի էին և մանկունք իրրև սերունդք քրէական ամբաստանեալ ծնողաց։

Ապա որպէս յորժամ մռնչես եղեալ ընդառաջ եկելոց ի ձակատէ պատերազմին արտաքոյ քանակին, և ընդ նմա եղիազար քահանայ, և առնոյն իշխանք ժողովրդեան, տեսեալ զբազմութիւնն կանանց և մանկանց, բարկացաւ ի վերայ ոսոխականաց զօրուն՝ հազարապետաց և հարիւրապետաց. և ասէ ցնոսա. ընդէ՞ր ապրեցուցէք զկին կռապարիշտ կանայսդ. ահ գիտէք՝ զի դաքա էն, որք ըստ անօրէնն խորհրդոյ բազմամբ՝ մոլորեցուցին զորդիս իսրայէլ, և ձգեցին զնոսա ի պղծութիւն և ի կռապաշտութիւն բեղփեղովրայ. որով քան և չորք հազարք կորեան յեղբարց ձերոց. արդ՝ լեա այսչափ չարեաց արժանի իցեն դաքա կենաց։ Այլ հրամայեաց անդէն վաղվաղակի կոտորել զամենայն արուս մանուկ, և զամենայն կին, որպ գիտացեալ է զայր. իսկ զաղջկունս՝ որք տակաւին կոյս էին, ապրեցուցանել։ Ձեղեն պէտք մնար և երկար քննութեան որոշելոյ զնոսա. քանզի ամ որ կամէր ի միջոյ ամենայն կանանց՝ զկոյս և եթ պահել կենդանի, ի կոտորել զինուորաց զկանայս՝ առաջնորդեր ձեռաց նոցա ինքնին որոշել զնոսա անվրէպ ի միմեանց. և պատան երեսուն և երկու հազար աղջկունք կոյսք. որք բաշխեցան ի տունս եբրայեցւոց չաղախնութեամբ։ Ապա հրամայեաց նոցա կալ արտաքոյ բանակին զեօթն օր, մինչև ըստ օրինացն սրբեսցին ինքեանք և գերիք նոցա, և առնոյն հանդերձք և անօթք նոցա. զորինակ սրբելոյն ուսոյց նոցա եղիազար քահանայ, այսինքն զամենայն անօթ յոսկւոյ և յարծաթոյ, ի պղնձոյ և յերկաթոյ, և յայլ նիւթոյ՝ որ ի հրոյ ոչ եղծանի, ընդ հուր անցուցանել. իսկ զայլ ամենայն որ չնասի ի հրոյ՝ ջրոյն սրսկման սրբել. ապա և ինքեանք յաւուրն եօթներ-

տրդի լուացեալ ջրով զհանդերձս և սրբեալ՝ մաքուր
՚ի բանակն։

Եւ այսորիկ մնասցէ և եղիազար քահանայ-
պետ ըստ հրամանի տեն առնն զհաշիւ ասարի մար-
դոյ և անասնոյ, զոր ասարեցին յերկրէն մադիա-
մու. և գտաւ ոչխար 675000. եզն կամ արջառ
72000. էշ 61000. և կոյս աղջիկ 32000։ Ո՛չ այն
առնեայն արարին յերկու մասն. կէսն տուաւ ա-
նոց երթելոց ՚ի պատերազմ. որոց անկաւ ոչխար
337500. էշ 30500. արջառ 36000. իսկ կոյս աղ-
ջիկ 16000։ Եւայս առնեայնէ հանաւ բաժին տեն մի
՚ի հինգհարիւրոց՝ ՚ի մարդոյ և յանասնոյ. և ան-
կաւ հաս տեն աղջիկ 32. էշ 61. արջառ 72. և
ոչխար 675. որք տուան եղիազարու քահանայա-
պետին և այլոց քահանայից։ Իսկ ծնեալ կէս
ասարին բաշխեցաւ ՚ի մէջ առնեայն ժողովրդեան.
յորմէ մի ՚ի հինգ հանեալ տուաւ ղեւտացւոց.
որք պահէին զպահպանութիւն խորանին տեն. իսկ
ոսկի և արծաթի անօթք և զարդք և հանդերձք
մեծապինք և այլ այսպիսի առնէեան կողոպուտք
ՈՒՂ մտին ՚ի բաժանումն, այլ զայն առնեայն կալան
պատերազմողքն իւրաքանչիւր՝ զոր ինչ կարաց ՚ի
ձեռս բերել ՚ի մարտի անտ. բայց և անտի զաղ-
նուագոյն մասն հանին նուէր տեն։ Վասնզի յետ
այսր առնեայնի կալեալ զօրապետացդ զհամար զօ-
րուն, գտին զի և ոչ մի ՚ի տակաւաթիւ բանակէ
իւրեանց ծախեցաւ ՚ի պատերազմի անտ. վասն
որոյ ՚ի գոհութիւն այնր մեծի բարերարութեանն՝ հա-
զարապետք և հարիւրապետք, որպէս և տոսկական
զինուորք իւրաքանչիւր, առ որում գտանէր ոսկի
մեհեանդ, կամ ապարանջանք, և փողշուկ ընդե-
լուզեալ, և այլ տոյին առի ոսկեղէն զարդք՝ մա-
տուցին ընծայ տեն, յանձնեալ ՚ի ձեռս մովսիսի և
եղիազարու քահանայապետին՝ կշիռ ոսկւոյ վեշտա-
սան հազար և եօթն հարիւր և չիսուն սիկղ. զոր
նոքա տարան ՚ի խորանն վկայութե, յիշատակ առ ՚ի
յորդւոցն իսրայէլի առաջի տեն։

Եւ հարկանեալ յորդւոց իսրայէլի զամենայն

քայ եսեբոնայ, և զովք արքայ բաստանու, և տիրե-
լոյ երկրի նոցա, և յեա խորտակելոյ զմադիամ, և
ահ և երկիւղ արկանելոյ մովաբու և ամենայն շըր-
ջակայ ազգաց, էիւսյր այլ ինչ առ 'ի մտանել նոցա
յերկիրն քանանացւոց երկիր աւետեաց, բայց մի-
այն անցանել զյորդանան: Եւ այն ինչ 'ի տոյն
խորհրդեան էին, եկին իշխանք որդւոցն ռուբինի
և որդւոցն գադայ առ մովսէս և առ եղիազար քա-
հանայ 'ի ժողովն իշխանաց ժողովրդեան, և քա-
զում խոնարհութիւբ յաղերս մատուցեալ՝ աղաչեն
զմովսէս՝ զի թոյզ զնասա ինալ 'ի տեղին ուր
էինն. քանզի տեսանեմք զերկիրս խոտաւէտ
և անասնածոյց. և մեր բազում է ոչխար և անա-
սուն՝ առաւելեալ յոյժ քան զայլոցն. ապա տացէ
երկիրս այս մեզ 'ի կալուած, և մի անցուցաներ
զմեզ ընդ յորդանան: Ո՛ այս էբրև լուաւ մովսէս,
երկնեաւ ՚ի սիրտ նորա, թէ գուցէ
պարձեալ զնոյն չփոթութիւն յարուսցեն սոքա 'ի
ժողովրդեան, զոր յարուցին լսեսեքն հայդնաբատ
նեայ. յոյր սակս արտաքոյ իւրուանց ընդաթոյս հե-
զութեբ բարկացեալ ածասկս՝ ասէ. եղբարք ձեր
երթայցեն 'ի պատերազմ, և դուք նստիցիք աստ
անպարծ՝ լինել օրինակ չարեաց և այլոց 'ի խոտո-
րեցուցանել զսիրտ նոցա չանցանել յերկիրն զոր
ետր տալոց է նոցա: Եւ յառաջ բերեալ զանցս վաս-
անուն լսեսեացն, թէ քանի՛ չարեաց պատճառք
եղեն լքուցիչ բանից իւրեանց, արդ՝ դուք սակ
սերունդք մարդկան մեղաւորաց յարուցեալեք փո-
խանակ հարց ձերոց յաւելուլ միւսանգամ զսրտ-
մտուխն բարկութեբ ածն 'ի վերայ ժողովրդեան:

Ո՛ այսպիսի դառն կշտամբանս լուեալ նոցա,
ոչ խռովեցան. և ոչ բան անզգամութեբ ել 'ի բե-
րանոյ նոցա, այլ առ լաւագոյն յայտնելոյ նմա
զմիտս իւրեանց՝ յարդական պատկառանօք մերձե-
ցեալ առնա՝ ասեն. ոչ խնդրեմք զերկիրս զայս առ
'ի չանցանել զյորդանան, և չմարտնչել ընդ եղ-
բարս մեր. այլ առ թեթևանալոյ 'ի հոգւոյ այն-
չափ բազմութեբ կանանց և մանկանց և անասնոց.

զի Թէ հնարհնացի մէջ խնդիր մէր, վաղվաղակի
շինեսցուք դադարս անսանոց մերոց. և զքաղաքս
ամրհայեցոց ամիացուսցուք յերեսաց շրջակայ բը-
նակեաց, և 'ի նոսա զետեղեալ և ապահովացու-
ցեալ զկանայս և զամենայն աղխս մեր, վառեսցուք
առաջի նոն յառաջապահ երթեալ որդւոցն իսրայէլի
անցանել ընդ յորդանան. և ո՛չ 'ի բաց դիցուք 'ի
ձեռաց մերոց զղէնս, և ո՛չ դարձցուք 'ի տունս մեր,
մինչև ամենայն ցեղք որդւոց իսրայէլի ոչ զետե-
ղեսցին յիւրաքանչիւր ժառանգութիւն իւրեանց
յերկրին զոր խոստացաւ նոր տալ հարց մերոց: Եւ
փոխարէն աշխատութեանց մերոց ո՛չ խնդրեսցուք մեզ
ժառանգութիւն 'ի մէջ նոցա, շատացեալ վճա-
կաւն, զոր ունիցիմք յայս կոյս յորդանանու յար-
եւելից:

Օ այս ամենայն պատճառս նոցա լսեալ մով-
սիսէ նուիրն խաղաղական ունկնդրութիւք և մտա-
դիւր քաղցրութիւք, որով արժան է իշխանաց և ա-
ռաջնորդաց՝ լսել իւրեանց հպատակաց, իբր զի
չսկսեալով յառաջին կարծիսն զոր կալան միան-
գամ, կամիցին գործել ըստ ուղղութեան արդար
դատաւորի, ոչինչ անպատեհ համարեցաւ անձին,
և ոչ նուաստութիւն կամ անշքութիւն իշխանութեն՝
փոխել զբայսական վճիռն իւր 'ի ստորասութիւն
'ի նոյն համախոսմբ ժողովի իշխանաց, ուր արար
զառաջնին բացատական: Օ՛ի պանծագոյն փառք
մարդոյ այն է, լինել իրաւասէր և անսացօղ բա-
նի. ո՛չ կորուսանէ, այլ աճեցուցանէ զփառս՝ յոր-
ժամ թողու զիւր կարծիս, առ 'ի չհետ երթալ
թերադրութիւն բանի: Եւ այսպէս երկու թագա-
ւորութիւք սեհնի արքայի ամուրհայեցոց, և ով-
գայ արքային բաստանու տուան 'ի ժառանգութիւն
ցեղին ռուբինի, և ցեղին գադայ. բայց հանդերձ
սաստկապահանջ պայմանօք կատարելոյ զխոստումն
իւրեանց. զոր և կատարեցին նոքա ամենայն հա-
ւատարմութիւք:

Վ՝ինչդեռ այս իրագործութիւք լինէին 'ի ժո-
ղովի իշխանաց ժողովրդեան, իշխանք որդւոցն մա-

քերայ որդւոյ մանասէի գրուհ տուեալ ՚ի գաղաադ , Հարին կոտորեցին զամիվրհայիս , որք քնա-
կեալ էին ՚ի նմա . և կալան զգաւառն գեղեցիկ ։
զոր մովսէս պատշաճ վարկաւ տալ նոցա իբրև ար-
ժանաւորաց ։ Ա.յլ քանզի փոքր էր , ուստի և ան-
բաւական համարէն ցեղին , վասն այնորիկ զցեղն
մանասէի բաժանեցին յերկուս ։ կիսոյ ցեղին տու-
աւ այս գաւառ , որ էր ի մէջ գաղաադու , զոր
չևևս առեալ էին որդիքն իսրայէլի ։ որ յայտ ան-
ի է՝ ալ Ես. ։ 26 ։ գաղաադ կոչի համօրէն
երկիրն , զոր ժառանգեցին որդիքն իսրայէլի յար-
ևելեան կողմն յորդանանու ։ իսկ մնացեալ կիսոյ
ցեղին յետոյ ետուն կալուած յերկրին աւետեաց
՚ի մէջ այլոց ցեղից ։ Ա.յս այսու օրինակաւ այս
հարուածիք որք էին արտաքոյ երկրին աւետեաց ,
յաւելան ՚ի նմա . և եղեն բաժին ժառանգութեան
որդւոցն իսրայէլի ։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա.

Արեգակն հասեալ ի վախճան կենաց իւրոց՝ պահեցին և պատուիրեցին ցնա, զոր ընդ ժամանակս ժամանակս առանձինս, երիցորդէ ի լուր ամենայն ժողովրդեան։ Այս ասեն այնորիկ այս հինգերորդ գիրս նորա կոչեցաւ Երիցորդութիւն օրինաց, կամ Երիցորդ օրէնս։

Արեգակ հաւատարիմ պաշտօնեայ ետն ոյ յետ կատարելոյ անվրէպ գամենայն, զոր ինչ միանգամ պատուիրեաց նմա ետծ, գիտելով զի ըստ ահմանելոյն ոյ հասեալ է վախճան կենաց իւրոց, կարևոր համարեցաւ՝ մինչև մեռեալ իցէ, զօրհնս և զպատուիրանս ետն՝ զոր ընդ քառասնամեան ձա նապարհորդութիւնն ընդ ժամանակս ժամանակս մասն մասն քարոզեաց ժողովրդեան որդւոցն Իսրայէլի, երկրորդ անգամ հրատարակել նոցա զայն ամենայն միանգամայն, և ի առ մի յիշեցուցանել զամենայն անցս և զգործերարութիւնս ետն հանդերձ պատգամաւքն, առ սնդագոյնս տպացուցանելոյ զնոսա ի սիրտս նոցա։ Արանաւանդ զի ամենեքեան նոքա որք կային յայնժամ, որք և ի մեռոյ հանդերձեալ էին անցանել զյորդանան, և ժառանգել զերկիրն խոստացեալ՝ նորք էին յանապատի անգ ծնեալք, կամ մանկահասակ եղեալք յեղիսպատե։

որք առ տհասութեան հասակին՝ չէղին բաւական լինել խելամուտ լինելոյ օրինացն և պատուիրանաց նոցա. և ոչ զաբանելի խնամոյն էր, զոր անընդհատ հայելով ցուցանէր ի վերայ նոցա՝ արժանապէս ի միտ առնուլ. այն գի շատք ևս այնք էին, որք զհրաշափառագոյս ի սքանչելեացն՝ որք յեգիպտոս և ի կարմիր ծովեզն գործեցան՝ ոչ տեսին. որպէս ծնեալքն յանապատի անդ։

Այսուհետև որոյ յառաջնում աւուրք ամենեքին միատանեքորդի ամին քառասներորդի յետ ելանելոյ նոցա յերկիրն յեգիպտոս, մինչ դեռևս կային բանակեալ անդ ի դաշտին մովաբու, յայն կողս յորդանանու յանդիման երիքովին, ժողովեաց մովսիսի զամենայն որդիսն իսրայելի՝ իսկ առ նոսա. և սկիզբն արարեալ յելից յերկիրն յեգիպտոսէ, համառօտեաւ զգլխաւորսն անցս որք անցին ընդ նոսա յայն քառասնամեայ ժամանակս, մինչև հասին յայն տեղի։ Այս առ ի զարթուցանել ի սերտս նոցա զերկիւղ նորա, յիշեցուցանել զդատապարտութիւն հարց նոցա չմանանել յերկիրն աւետեաց, յաղագս ապստամբութեանն, զոր արարին ի կադեսբառնեայ. զի անսալով սուտ համբաւոյ վատախոհուրդ լրտեսաց, հեատեղին պատուիրանի նորա՝ չառեալ յանձն գնալ առնուլ և մտանել յերկիրն քանանացւոց, զորս մատնեալ էր նոցա ի ձեռս նոցա. ուր ի դէմս ածէ նոցա մովսէս և զբարաւոր տրտունջն նոցա ի սկզբանէն ի վերայ ջրոյն բամբասանաց. որով և պատճառ եղեն և ինքեանք զրկիլ ի մտից այնր ցանկալի երկրին։ Այսպա ի քաջալերել զնոսա ի յոյս ածէ յայն հանութեան, յուշ առնէ նոցա զերկու մեծամեծ յաղթութեանն, զոր պարգևեաց նոցա ի վերայ սեհոնի ազգասին եսեբոնի, և ի վերայ ովգայ արքային բասանու. և զժառանգելն զերկիրն նոցա. զոր ետուն ցեղին ռուբինի, և ցեղին գադայ. և զմի մասն գաղաադու՝ կիսոյ ցեղին մանասէի։ Այս ամենայն աւանդէ յերիս առաջին գլուխս երկրորդ օրինացն։

Յե ասայ ՚ի ՀԼ. Ը. բարձրացուցեալ մովսիսէ զբաբրառ իւր՝ աղաղակէ ասելով. Յե այժմ լուր իսրայէլ իրաւանց և արդարութեանց, զոր ես ուսուցանեմ քեզ այսօր. զոր Թէ առնիցէք՝ կեցջիք և մտանիցէք ժառանգել զերկիրն, զոր խոստացաւ Տէր Ած Հարց ձերոց։ Ահաւասիկ մի մեռանիմ, զնաւ Թէ դատաստանաց, զոր արար ՚ի վերայ այսոցիկ, որք պահնկեցան ընդ կանայս մադիանացիս, և զգան զՀետ բեղփեգովրայ, զիարդ սատակեաց զնոսա. իսկ դուք որք կենդանի եք յաւուր յայսմիկ յաղագս յարելոյ ՚ի Տէր Ած ձեր, զի մի ունիցիք պատճառել զոգիս Թէ, եթէ խոտորիցիք երբէք յՅՀ ձերմէ, տեսէ՛ք զի ահա ուսուցի ձեզ զամենայն իրաւունս և զդատաստանս, զոր պատուիրեաց ինձ Տէր. այնպէս պահեսջիք և արասջիք զնոսա, որպէս զի ամենայն ազգք երկրին, յորում դուք մտանիցէք ժառանգել զնա, լսիցեն զայդ բարեկրօնութեէ ձերոյ. և ասիցեն, ահա ժողովուրդ իմաստուն և հանճարեղ քան զամենայն ազգս։ Յե արդարև՝ որ ազգ կայցէ մեծ, որոյ իցէ Ած մօտ ՚ի նոսա՝ ըստ զաղօթս նոցա, և փութալ յօգնութէն նոցա, որպէս Տէր Ած զոր դուքդ պաշտէք։ Կամ որ ժողովուրդ ՚ի վերայ երկրի, որոյ իցեն օրէնք և իրաւունք և դատաստանք արդարք ըստ ամենայնի իրաւանցս այսոցիկ, զոր ետու ձեզ, և զոր այսօր առնիմ գնել առաջի ձեր. զգո՛ւշ լերուք ամենայն արԹնութէ՛ն և սրտի մտօք պահել զնոսա, և ուսուցանել որդւոց ձերոց։

Յուշ լեալ ձեզ մեղն և խաւարն և մառախուղն և Հուրն կայծակնացայտ, և որոտն ահեղաձայն սինհէական լերինն՝ յորժամ տուան պատուիրանքն գրեալք մատամբք նոն ՚ի ձերոյ ՚ի տախտակս քարեղինս։ Եւ երևեցաւ ձեզ յայնժամ Տէր Ած նմանուԹէ իւիք, զի մի յետ ժամանակաց մոլորեալ առնիցէք ձեզ դրօշեալս ՚ի նմանուԹէ մարդոյ, կամ այլ ինչ իրաց զոր տեսանիցէք յերկինս կամ յերկրի, և պաշտիցէք զնոսա։ Օ՛ի Տէր ձեր Հուր է, և ՚ն՛ըստ աստուածոյ ազգացն՝ անկենդան նմանուԹէ

պատկերի առն կամ կնոջ, կամ նմանութեի ջրբուսանեաց, թռչնոց, և սողնոց, և ոչ միոյ երի՝ի լուսաւոր երկնային մարմնոց: Այս է որ ետան զձեզ յերկաբեղէն հնոցին եգիպտոսի, առնել ի նա սեպհական ժողովուրդ ընտրեալ և զատուցեալ յամենայն ազգաց: Օ ջոյր լերուք ինձ առնական զուարճանս՝ ես ձեր՝ զոր ուխտեաց ընդ ձեզ, և չառնել ձեզ դրօշեալ. ապա թէ ոչ՝ ունիմ ձեզ վկայ այսօր զերկինն և զերկիր, զի թէ դուք կամ որդիք ձեր առնիցէք ձեզ դրօշեալս, և պաշտիցէք զնոսա, կորսեալ կորնչիցիք յերկրէն յոր դուք անցանէք ընդ յորդանան ժառանգել զնա: Օ՛ի ածէ ձեր Տէր ծախիչ է, ած նախանձոտ. վրէժխնդրութեի նորա երթիցէ զՀետ գնացից ձերոց ուր և գնայցէք. և չըրուեսցէ զզաղմութեի ձեր, և եղիջիք սակաւ թուով՝ի մէջ ազգաց, և պաշտիցէք զկռտօսատարութիս՝ի կործանումն և՝ի կորուստ ձեր և որդւոց ձերոց: Սակայն և այնպէս՝ յորժամ այս ամենայն չարիք հասանիցեն՝ի վերայ ձեր վասն անօրէնութեց ձերոց, եթէ դառնայցէք և խնդրիցէք զՏէր ած ձեր յամենայն սրտի ձերմէ և յամենայն անձնէ, դատնիցէք զնա. զի զԹած է և բազում ողորմ. ոչ թողցէ զձեզ՝ի տարապրութեե ձերում, և ոչ սատակեսցէ ուր և իցէք. յիշեսցէ զուխտն, զոր ուխտեաց ընդ Հարս ձեր, և դարձուսցէ զձեզ յերկիրն՝ զոր խոստացաւ նոցա վասն ձեր:

Այլ յիշեցուցեալ զմեծամեծ բարութիւնս զոր արար նոցա ած, զպանծչելիսն եգիպտոսի, և սինեականն լերին. զամենակարող զօրութեի նորա՝ի ջընջել առաջի նոցա զազգս մեծագոյնս և հզօրագոյնս քան զնոսա, և ժառանգեցուցանել նոցա զերկիրը թիւնամեաց, ինքեն կրկնելով զասացեալսն յիւրմէ բազում անգամ, զի՝որ ած քո՝ նա է ած յերկինս՝ի վեր, և յերկիր՝ի խոնարհ. և չիք այլ ոք բաց՝ի նմանէ: Այս ապա խոստանայ նոցա՝ի դիմաց այդ զամենայն բարիս և զերջանկութիս, եթէ գտցեն հաւատարիմ՝ի պահպանութե պատուիրանաց նորա: Յետ այսր առնաքանութե, որ էր իրը հա-

մառօտութիւն և բովանդակումն այլոց, զոր հանդերձ ձեռաւ եր խօսել, որոշի յանուանէ ըստ հրամանին Աստուծոյ զվերին քաղաքս ապաստանի յայն կոյս յորդանանէ. նու. յանապատի ի դաշտին ի բաժնին ռուբինի զբոսոր. ի գաղաադ ի մասին գադայ՝ զռամոթ. և ի բասան ի վիճակին կիսոյ ցեղին մանասէի ըզգաւղնին. և արձակէ զժողովն։

Ա՛պա զկնի աւուրց ինչ գարձեալ կոչեաց մովսէս զամենայն ժողովուրդ որդւոց իսրայէլ. և վերստին հրատարակեաց ի լուր նոցա զպատուիրա տանաբանեայ օրինացն նոն, որք տուան ի սինայական լերին. յաւելեալ ի նոսա ձոխ և ընդարձակ բացատրութիւն, առ ի խելամուտ առնել այսօրիկ զբազմութիւն ծնելոցն յանապատի անդ զկնի սկզբ հանդիսական ուխտի նոն այ, զոր ուխտեաց ի քո րեբ ոչ այնչափ հարց նոցա, քան թէ այսօրիկ որք կենդանի էին յայնժամ։ Ա՛պա ազդու և ահաւոր իմն եղանակաւ բացատրէ նոցա զմեծ և զգլխաւոր պատուէր օրինաց, ասելով. Լուր իսրայէլ, որ ես մեր որ մի է. սիրեսցես զայ քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ. զի նա է միայն սիրելի վասն իւր, և վասն անսպառ բարերարութեան իւրոց։ Կրեսջիք ի սիրտս ձեր զօրէնս նորա, զոր ես պատուիրեմ ձեզ այսօր. և ուսուսջիք զնոսա որդւոց ձերոց։ Խղիսցին ձեզ կանոն և առաջնորդ ի համայն գործս ձեր զամենայն աւուրս կենաց ձերոց. զնոսա խորհեսջիք մինչ նստիցիք ի տանս առանձին, և մինչ ձանապարհ առնիցիք. և յարժամ երթայցիք ի ննջել՝ այն եղիցի վերջին մտածութիւն ձեր, և առաջին խորհուրդ՝ ի զարթնուլ և ի յառնել։ Կանիցիք զնոսա գրեալ ի ձեռս ձեր ի նշան հնազանդութեան, և անշարժ առաջի աչաց ձերոց՝ ուղղել նոքօք զգենացս ձեր։ Կանդակեսջիք զնոսա նաև ի վերայ սեմից տանց ձերոց իբր չքնաղ գոյն իմն զարդ. կամ լաւ ևս իբր հրապարակական խոստովանութեան դաւանութեան ձերում։

Ցեսջիք, զի որ ձեր հանդերձեալ է ընդ

հուպ տանել զձեզ յերկիրն, զոր երդուաւ Տէրն
ձերոց աբրահամու, և իսահակայ, և յակոբայ. և
տալ ձեզ քաղաքս մեծամեծս և պեղեցիկս, զոր ոչ
շինեցիք. և տունս լի ամենայն բարութիւ՝ զոր ոչ
ժողովեցիք և ոչ լցիք. և ջրհորս ջուրց՝ զոր ոչ փո-
րեցիք. և այգիս և ձիթենիս, զոր ոչ տնկեցիք։
Այլ զգոյշ լերուք, զի մի այս ամենայն բարու-
թիւք լինիցին ձեզ թոյն սատակիչ, տալով ձեզ մո-
ռանալ զբարեգործն ձեր, և ապստամբեալ ի նմա-
նէ՝ պաշտիցէք զայծս օտարս. քանզի ահա նախան-
ձոտ է Տէր ահ ձեր, որ նովին ձեռամբ՝ որով պա-
հէ զՀաւատարիմ պատուիրանապահս իւր, սատակէ
զերախտամոռաց ամպարիշտս։ Այլ որպէս զի նաև
որդիք ձեր ուսցին երկնչել ի նմանէ, և զգուշաս-
ցին պահել զամենայն իրաւունս զայսոսիկ, պատ-
մեսջիք նոցա զբարութիւն զոր արար ձեզ Տէր մե-
ծամեծ սքանչելեօք, և զբազմապատիկ խոստմունս
բարեաց, զոր խոստացաւ պատուիրանապահացն։

Այլ դիտելով մանկիսի գլեղեցուկ բարս ժո-
ղովրդեան իւրոյ, և գհակամիտութիւն նոցա ի
կռապաշտութիւն, վասն որոյ և երկուցեալ թէ
ի մոռանալ նոցա յերկիրն քանանացւոց՝ առնիցեն
ընդ նոսա բարեկամութիւն և ընտելութիւն,
որով և ձգեսցին ի պաշտօն կռոց նոցա, պատու-
իր նոցա սաստիկ հրամանաւ ի դիմաց ՅՀ՝ չառնել
քնաւ ինամութիւն ընդ նոսա. չդնել ուխտ խաղա-
ղութեան ընդ նոսա. և չողորմիլ նոցա, այլ կոտոր-
մամբ սրոյ եղծանել և սատակել զնոսա. զբազ ինս
նոցա կործանել, և զարձանս փշրել, և զանտառս՝
ուր սովոր էն հեթանոսք պաշտել զկուռս՝ կոտո-
րել, և զգրօչեալս այրել։ Այլ այնպէս սպառա-
սպուռ անհետ առնել զնոսա, զի մի երբէք լինիցին
նոցա ի դայթակղութիւն։ Այլ քաջալերէ զնոսա
յերկնչիլ ի բազմութենէ անտի ապագայ. զի թէ հա-
ւատարիմ լինիցին առ Յծ, նա ինքն երթայցէ ա-
ռաջի նոցա, և պատերազմեսցի զպատերազմ նոցա,
և կործանեսցէ զժողովուրդս մեծամեծս զայնմ-
դամն և զհզօրս։ Այլ ի հաստատութենի բանից նա

թոց՝ յոյժ առնէ նոցա զոր լինչ արար ՚ած յերկիր-
տոս ընդ փարաւոն և ընդ ծառայս նորա. և զմե-
ծամեծ սքանչելիս, զոր գործեաց յետ ելից նոցա
յերկիրտոսէ մինչև ցայն օր. զՀոգւոյն երկնային պատ-
րաստեալ ձեռամբ հրեշտակաց, զի յայտ արասցէ
թէ ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն
բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ ՚ած. զաղբիւրս հան-
եալ ՚ի ժայռից. զչինեալ նոցա անհանդերձ և ան-
կօշիկ ընդ քառասնամեայ ժամանակս յանապատի
անդ. զյաղթութիւնն զոր արար. զխոստումն ար-
գաւանդահոդ երկրին՝ որ բղխէ զկաթն և զմեղր,
զոր հանդերձեալ է ժառանգեցուցանել նոցա:

Այլ զի ծանիցէն՝ թէ ո՛չ վասն արգարութե՛ իւ-
րեանց և ամբծութեան սրտից ՚ած նոցա զսյն ամե-
նայն, յիշեցուցանէ նոցա մի առ մի զմեղս նոցա,
զապստամբութիւնս, զխեռութիւնս, զչարաչար
սրտմտութիւնս ընդ այն բովանդակ ժամանակս ՚ի
պարհորդութե՛ իւրեանց. որով և այնչափ բարկա-
ցուցին զնա զբարերարն իւրեանց, մինչև երկիցս
սպառնալ սատակել զնոսա առ հասարակ, և ջնջել
զանուն նոցա ՚ի ներքոյ երկնից. ես ասէ աղաչեցի
առաջի ՚ած վասն ձեր կրկին քառասնօրեայ մտսուա-
զութ՚ե և ջերմ պաղատանաւք, մինչև ցածեաւ ՚ած ՚ի
բարկութե՛: Այդ բառնալով բառնայ ՚ած յերեսաց
ձերոց զազգն զայնոսիկ, նա՛ և՝ զի լցեալ է չափ
անօրինութե՛ց նոցա. երկրորդ՝ և ՚ի հաստատել
զուխտն զոր երդուաւ ՚ած հարց մերոց աբրահամու
և իսահակայ և յակոբայ: Այլ ոչ բառնայցէ զնո-
սա միանգամայն, այլ առ սակաւ սակաւ ըստ հա-
մեմատութե՛ աձելութե՛ ձերում՝ ՚ի լնուլ զերկիրն.
զի մի ամայի ՚ի բնակչաց մնացեալ, բազմանայցեն
գազանք կատաղիք ՚ի վերայ ձեր: Այլ ապա յետ
կրկին և կրկին զգուշացուցանելոյ զնոսա ՚ի կա-
պաշտութե՛, և յորդորելոյ ՚ի սէր և ՚ի պաշտօն ՚ած
յամենայն սրտե և յամենայն անձնե, և ՚ի պահպա-
նումն պատուիրանացն նորա, հանդերձ խոստմամբ
մեծամեծ բարեաց՝ եթէ անսայցեն. և սպառնալ-
եաք մեծամեծ պատուհասից՝ եթէ ապստամբեսս

յին չայ, վերջ տայ բանին։ Այս առենայն զոր ասա համառօտեցաք, առանձին է գլ. ե. գնալ է ձէ։ Այս որպէս երևի, զկնի այսր երկար հրապարակախօսութեանց՝ առ ժամն արձակեաց մովսէս զժողովն երթալ հանգչել, և խոկալ առանձինն զամենայն զոր լուան։

ԳԼ. Ի.

Շ արաւնակուն բանիդ մովսէսի է երթալ և է գիշերանակ ոդորոցն իսրայէլի՝ հանդերձ պէսպէս օրինադրութեամբ։

Զկնի առաւօտուն երրորդ անգամ կոչեաց մովսէս զժողովուրդն. և յետ վերատին պղծացուցանելոյ զնոսա է դիւահարնար սովորուն հեթանոսաց՝ որք յամենայն լեռնային անտառս խիտ տեղիս անխտիր կանգնէին քազիս դից, և զուստերս և զգաստերս իւրեանց մատուցանէին նոցա ողջակէզ. առ է հեռացուցանել զնոսա յայնպիսի հեթանոսական պղծութենէ, կանխաւ զեկուցանէ նոցա, թէ է ժառանգել նոցա զերկիրն աւետեաց, հանդերձեալ է ամէ ընտրել սեպհական լինի տեղի է մէջ նոցա կանգնել զխորանն և զտապանակն ուխտի և զսեղանն իւր. և անդ միայն՝ և ոչ այլուր մատուցցեն զողջակէզս իւրեանց, և զզոհս, և զտասանորդս, և զուխտս զոր ուխտիցեն ասեն, և զանդրանիկս արջառոց և ոչխարի. և անդ կատարեսցեն զտօնս, և կերիցեն է զոհից իւրեանց հանդերձ ընտանեօք, և ուրախ լինիցեն համատուրէք առաջի տապանակի տեառն։ Այսպէս եթէ կամիցին զենուլ անասունս ոչ է զոհ այ, այլ է հասարակ կերակուր ինքեանց և ընտանեաց իւրեանց, հրաման տայ զենուլ յամենայն քաղաքս ևր և գոցին իւրաքանչիւր ըստ կարողութեանն և ըստ

պոյից , և ուտել ՚ի միասին , ոչ միայն որք սեք էին յօրինական պղծութենէ , այլև որք թեթև պղծու թիս էին յանձին ձգեալ էին . զի փորը պղծու թէն թեպէտ արգելու ուտել ընդ այլոց ՚ի նուի բեալ գոհից , այլ ոչ ՚ի հասարակ մսոյ . զի այսպիսի փորը պղծութէն ոչ անցանէր ՚ի սեղանակից յա սարակ սեղանոյ . բայց մեծապէս պատուիրէ ջու տել քնաւ զարիւն անասնոց , այլ յերկիր հեղուլ իբրև զջուր . և առաւել չարհել զուստերս և զդստերս իւրեանց : Այլ և թէ յայնպիսի ինջոյից իւրեանց մի անմահն թողուցուն զղևւտացիս , որք կարգեալ են ՚ի սպասաւորութէն խորանին . որով հետև չունին նոքա բաժին ժառանգութէն ՚ի մէջ եղբարց իւրեանց :

Այլ ապա յարկ զինի , չգնել ՚ի մտի՝ թէ ՚ի մնանել նոցա յերկիրն աւետեաց այնպէս ունկնդիր պահել զամենայն օրէնս զոյգ ընդ ծխսականս , որ պէս պահէին անդ յանապատի , ուր իւրաքանչիւր զոյն և եթ առնէր , որ ինչ հաճոյ էր առաջի իւր , զանց արարեալ զպլորվք ըստ կամի . այլ պարտին պահել զամենայն անվրիպ . վասն այնորիկ մեծա պէս հրամայէ նոցա զգուշանալ առնել զամենայն զոր պատուիրէ նոցա . մի յաւելուլ ՚ի նա , և մի հատանել ինչ ՚ի նմանէ : Այլ եթէ և մարգարէ կամ երազահան ոք յարուցեալ ՚ի միջի նոցա՝ ցուցա նիցէ զանձն յոյ առաքեալ , և առնիցէ հրաշս առա ջի աչաց նոցա , և գուշակութիս գուշակեսցէ , որք կատարեսցին , սակայն եթէ հնարեսցի ապստամբե ցուցանել զնոսա յոյ իւրեանց , և ձգել ՚ի պաշտօն աստուածոց օտարաց , մի անսալ նմա . զի խոբեբայ է և սուտ մարգարէ . ուստի և իբրև մահապարտ սպանանել զնա . զի կամեցաւ ասէ ապստամբեցու ցանել զձեզ յոյ ձերմէ : Այնպէս եթէ եղբայր ուրուք , կամ ուստր , կամ դուստր , կամ բարեկամ զոր ըստ անձին սիրիցէ , և կամ կինն՝ յորդորիցէ գաղտաբար երթալ պաշտել զաստուածս օտարս , մի լսել նմա , և մի թագուցանել զնա , այլ ծա նուցանել որոց անկ է . և նախ՝ նա ինքն հայցն ,

կամ քարեկամն կամ այլն կնոջ իբրև առաջին ա-
կանջալուր վիպ՝ ասկէ քար ի նա սպանանել գնա.
և ապա առնային ժողովուրդն. որպես զի լինիցի
օրինակ և իրատ այլոց չժպրհիլ յայն գործ սա-
պարշտութեանէ:

Այնգունակ եթէ քաղաք լինէ ողջոյն ի քաղա-
քաց անտի, զորս ասացէ Նոցա Աստ, ապստամբեա-
ցին յիմ, և դառնայցէ ի պաշտօն կռոց, հրամայէ
քննել և յուզել. և յորժամ հաւաստեաւ ի յայտ
գայցէն իրքն, եթէ ապստամբեալ էցեն յիմ, և
մոլեալ ի պաշտօն կռոց, ժողովեսցին ի վերայ քա-
ղաքին այնորիկ, և ի սայր սուսերի կոտորեսցեն
զամենայն բնակիչս նորա, մինչև չինալ ի նոցանէ
և ոչ միոյ, և զանասունս նոցա առհասարակ սպան-
ցեն. և զաւար և զկապուտ նոցա հաւաքեալ ի
հրապարակ քաղաքին հրով այրեսցեն. ընդ նոսին
և զքաղաքն ողջոյն յաշիւն գարձուսցեն, ըստ հրա-
մանի Տեառն Այ. և զպարիսպս նորա կործանեսցեն.
և կացցէ անուն նորա Թաղեալ ընդ աւերակօք,
և մի՛ ևս շինեսցի յաւիտեան. և մի՛ ոք իշխեսցէ
առնուլ ինչ և պահել յաւարէ անտի անիծեալ
քաղաքին: Եթէ այս կարևոր խստուն վրէժխնդ-
րութիւնք էր պահել ի մէջ իսրայէլի, և գտրուվե-
լի նեղողութիւն կամ անհոգուտի էր փոխանակեալ
գտեղի նորա, ապաքէն էին զեղեալ և յորդեալ
զնոքօք այնչափ թշուառութիւնք, գերութիւն, սով,
մահ, և սուր ի սրբել զազգն գրեթէ ողջոյն յամ-
բարշտութենէ, զոր որք անօրինք և սուտ մարգա-
րէք աներկիւղ ի պատժոյ՝ ժպրհեցան սերմանել
ի նոսա յապականութիւնն և ի կորուստ համօրէն
ազգին և հայրենեաց:

Յետ այսորիկ ՝է գԼ. ՅԲ. ՅԵ. Ա ՅՀ. երկրորդ
առ նոսա վերստին զպատուէրս, զորս յառաջմէ
Մովսէսէն աւանդեալն էր: Ա՛ն արտաքին նշա-
նաց սգոյ՝ չառնել ըստ հեթանոսական սովորու-
թեց՝ ցտել և հարկանել զձակատ ի վերայ մեռե-
լոյ: Ա՛ն խարանաց ուտելի և չուտելի անասնոց.
ուր յաւելու և առանձին պատուէր, չեփել զդառն

'ի կաթն մոր իւրոյ . զոր ունկնդր ըստ ձառին իմա-
նան՝ զմիս գառին մի՛ եփել կաթամբ մօրն . և
ունկնդր թէ չզենուլ զգառն կաթնկերբ , մինչև
սկսեալ զնոտ ձարակել : Այլ այլք լաւ ևս զայս
պատուէրբ իմանան միայն յաղագս զատկական գա-
ռին . որում պարտ էր լինել հատուցեալ 'ի ստեն .
որպէս պատուիրէ ելից . ՃԲ . 5 . * Ոչխար կատա-
րեալ արու տարեւոր ‖ . իսկ յայլ զոհս մարթ էր և
զկաթնկերն մնատուցանել . ըստ այնմ , * Ոչ ըջառ
կամ ոչխար , կամ այծ յորժամ ծնանիցի , կացցէ
զեօթն օր ընդ մարբն . և յօրէն ուրեբորդէ և
անգր՝ ընդունելի լինի 'ի պատարագ ընդունելի
ՅՈՒ ‖ . ղեւտ . ԻԲ . 26 :

Ոչ ևս խօսի վասն տասանորդաց յամենայն ար-
մտեաց , և իւղոյ և գինւոյ . և վասն անդրանկաց
արջառոյ և ոչխարի ամ ըստ ամէ գենուլ և մա-
տուցանել 'ի տեղւոջն զոր ընտրեսցէ Տէր . և անդ
ուտել և ուրախ լինել առաջի Տեառն , ունելով սեղա-
նակից զղևտացիս , և զորբս , և զայրիս : Այս
թողութեց եօթնեբորդ ամի , որ կոչի և ամ շաբա-
թական՝ վասն հանգստեան դադարելոյ յերկրա-
գործութենէ 'ի նմին ամի . ուր մեծապէս պատուիրէ
յաղագս եղբայրսիրութենէ , և կարեկցութենէն առ
կարօտեալս . և առաւել առ համազգիս՝ լինել
առատաձեռն առ նոսա . տալով փոխ ձրիական , և
յամին թողութենէ թողուլ նոցա և զփոխն . և զկնի
տրոյն մի տրամիլ և մի տարջանալ 'ի սրտի , զի ըն-
կալցին զօրհնութենէն Տեր յամենայն գործս իւրեանց :

Յօսի և վասն գլխաւոր տօնախմբութենց նո-
ցա , զատկի , պենտեկոստէի , և տաղաւարահա-
րաց . ասանդելով միանգամայն և զհանգամանս տօ-
նախմբութենէ , և զտեղին , ուր պարտ էր նոցա ժո-
ղովիլ յայն աւուրս տօնից . զի էր օրէն 'ի քաղաքս
բնակութենէ նոցա տօնել , այլ միայն 'ի տեղւոջն ուր
հանգերձեալ էր Տէր կանգնել զնորանն վկայութե ,
մինչև իցէ չինեալ տաճարն . և յետ այնօրիկ այն
միայն լինելոց էր նոցա տեղի զոհից և ամենայն
պաշտամանց և տօնախմբութենէ նոցա :

Պարձեալ խօսի և յաղագս դատաւորաց, զորս պարտ էր նոցա կացուցանել յամենայն քաղաքս իւրեանց. ուր առաւելապէս վասն երկուց կարևոր իրաց ազդ առնէ։ Ի՝ վասն գերագոյն ատենի ազգին. և պատուիրէ ժողովրդեան, զի յորժամ ծանր և դժուարին խնդիր ծագեսցի ի մէջ նոցա ի նիւթ քաղաքական, կամ արեան, և կամ կրօնի, յորում դատաւորք քաղաքաց ոչ կարիցեն միաբանիլ և սահմանել ինչ, երթիցեն ի տեղին՝ զոր ընտրեսցէ Տէր անուանել զանուն իւր անդ՝ առ քահանայս. որոց գլուխ է քահանայապետն այ կենդանւոյ. և նա լուսաւորեալ յայ՝ լուծցէ զամենայն տարակոյս, և տացէ զվերջին վճիռ ամենայն խնդրոց. որում անպիտանդարձ անսայցեն դատաւորաւքն ընդ պատժով գլխապարտութեան։ Այրկրորդ՝ հոգւով մարգարէութեն գուշակէ, թէ ի ժառանգել նոցա զերկիրն աւետեաց, զկնի ժամանակաց հանդերձեալ են տաղտկանալ ի քաղցր կառավարութենէ հասարակապետութեն, որում ած ինքնին առաջնորդէր, և խնդրել ինքեանց թագաւոր ըստ օրինակի այլոց շրջակայ ազգաց։ Այս նոցա հրաման առ այն. բայց զընտրութեն թագաւորին՝ այպահէ, զո աք և կամիցի ընտրել՝ ոչ յօտարաց, այլ յազգէ և յեղբարց նոցա. որով յուցանէ՝ թէ թագաւորն ոչ այլ ինչ է, բայց թէ սպասաւոր այ, և նորայն պատուիրանաց գործադրիչ։ Ասան որոյ օրէնս դնէ նմա, ըստ որոյ ունի վարել զթագաւորական պաշտօն իւր. մի բռնանալ ի վերայ ժողովրդեան իւրոյ ըստ թագաւորացն հեթանոսաց. յիշելով եթէ չէն նոքա ստրուկ կամ գերիք գերեալք պատերազմաւ, այլ եղբարք իւր. զորս յաւէտ հայրաբար՝ քան տիրական իշխանութեամբ պարտի կառավարել։ Այն մի անպիտանութեն աղագաւ յանձախեսցի իւր երիվարս ընդ պատրուակաւ քաշմանելոյ հեծելոց ելանելոյ ի վերայ եգիպտացւոց ի հանել զվրէժ խոշտանգանաց հարց նոցա. քանզի ի լուր ձեր ասէ պատուիրեաց ած, թէ մի և յաւելուցուք դառնալ ընդ նոյն ճանապարհ։ Այլն

պէս և կանայս մի՛ կարի բազմացուսցէ, զի մի՛ սիրտ նորա՛ ի նոսա յարեալով, ցրտասցի և խոտորեսցի՛ ի խնամիզական անտեսումէ ժողովրդեան, գուցէ և չայ իւրմէ. միանգամայն զի մի՛ ի պատճառս բազմութ կանանց և երիվարաց՝ ի ծախս ծանուննս բռնագատեսցի՝ ի ծանրաբեռնութէ ժողովրդեան. նմին իրի և զտարապայման յաձախութէ արծաթոյ և ոսկւոյ արգելու. զի աւելորդ հարստութէ թագաւորին՝ բայց ի ծանրութէ ժողովրդեան, (որով. հետև չէ մարթ լինել այնմ առանց ձնշելոյ և կեղեքելոյ զնոսա,) նաև՝ ի թագաւորն իսկ մնուցանե զմեղկութէ, զլեղկութէ, զգուռզուռութէ, զամբարտաւանութէ, և զանգթութէ, որք մնհաբերը են ոչ միայն թագաւորին, այլև համարկեն թագաւորութէ: Այս առ ըստ կարգի և ըստ օրինաց վարելոյ թագաւորին զգործ իւր, պատուիրէ նմա զայս երկրորդ օրինաց գիրս տալ քահանայից վերացոց գրել վասն իւր, և ընթեռնուլ զնա զամենայն աւուրս կենաց իւրոց. զի ուսցի երկնչել ի՛ տնէ՛ այ իւրմէ, և պահել զամենայն պատուիրանս զայսոսիկ. և առնել իրաւունս, և զի մի՛ հպարտանայցէ սիրտ նորա՛ ի վերայ եղբարց իւրոց:

Այս՝ է գլ. ծբ. առաջի առնէ ժողովրդեան զերաւունս քահանայից, թէ զինչ լինչ անկանի նոցա՛ ի զոհից և յամենայն զենլեաց ժողովրդեան, եթէ արջառ իցէ և եթէ ոչխար, և յամենայն արդեանց երկրի. միանգամայն և պատուիրէ զևատացւոյ, որք կայցեն՝ ի պաշտօն խորանին, զի յորժամ որք՝ ի զևատացւոց, որք իցեն յայլևայլ քաղաքս որդւոց իսրայէլի, գայցէ՛ ի տեղին ուր իցէ խորանն՝ ի սպասաւորել, նոքա որք անդ կան՝ ի սպաս խորանին, մարդասիրութէ ընկալցին զնա, և բաժանորդ առնիցեն ամենայն բարեացն՝ զոր այլք վայելեն՝ ի տրոց ժողովրդեան, և կերիցէ ընդ նոսա և նա: Այս առ՝ ի հեռացուցանել՝ ի նոցանէ զամենայն պատճառս կռապաշտութեան, սաստիկ պատուիրանաւ արգելու նոցա զամենայն աւելորդա պաշտօնեայս և զամենայն տեսակս կախարդուեց,

դիւթուԹեց և հմայուԹեց՝ որ յաձախեալ էին յոյժ առ քանանացիս ։ Այլ զի գիտէր մովսէս, Թէ քանի՛ հետաքննին են մարդիկ իմանալ և գիտել զապագայս, զի մի՛ ասիցեն՝ ապա զիարդ կամ ուստի՞ կարասցուք մեք իմանալ ինչ յաղագս հանդերձելոյ՝ Թէ զինչ ունիցիմք առնել, խոստանայ նոցա Հաւաստեաւ՝ Թէ ոչ պակասեսցին ՚ի նոցանէ, որք յայտնեսցեն նոցա զկամս Ա՛ստուծոյ. զի փոխանակ դիւԹից և մոգուց՝ առաքեսցէ նոցա Ա՛ծ Ձշմարիտ մարգարէս, զորս լուսաւորեսցէ պատմել նոցա զամենայն, զոր ինչ պարտ իցէ նոցա առնել. որք և եղիցին յառաջընԹացք մեծի մարգարէին, զոր յաւուրսն ասէ Ձեզ Տէր Ա՛ծ յերեքորդ ձերոց երբեւ զիս՝ մարգարէ, օրէնսդիր, Թագաւոր, միջնորդ ընդ Ա՛ծ և ընդ մարդիկ, և գլուխ ժողովրդեան Ա՛յ. նա ուսուսցէ Ձեզ զամենայն զկամս Ա՛յ. որովհետև Թէ ոք ոչ լսիցէ և ոչ հնազանդեսցի, Ա՛ծ ինքնին լինիցի վրէժխնդիր. որով յայտնապէս գուշակէ զգալոց մեսիայն ։ Այս մարգարէութիւն ՚ի ժամանակս քրիստոսի հաւաստի էր նաև առ հրեայսն իսկ, մինչ զի Պետրոս ոչինչ երկեաւ ՚ի սրահին տաձարին ՚ի լուր յոգնախուռն ժողովրդեան յառաջ բերել զայն և հաստատել ՚ի վերայ քրիստոսի, ասելով. * Ովսէս ասաց ցհարսն մեր, Թէ մարգարէ յարուսցէ Ձեզ Տէր Ա՛ծ Ձեր յերեքորդ ձերոց երբեւ զիս, նմա լուիջիք՝ ըստ ամենայնի, որ ինչ խօսեսցի առ Ձեզ։ Այլ եղիցի ամենայն անձն՝ որ ոչ լսիցէ մարգարէին այնմիկ, սատակեսցի ՚ի ժողովրդենէն ‖ . գործ. Գ. 22։ Ոնոյն հաստատէ և սբն ստեփաննոս յառաջինն քահանայապետին. գործ. Է. 37։ Այս ապա ղգուշացուցանի գնոսա ՚ի սուտ մարգարէից. տայ և գնշան Ձանաչելոյ գնոսա. Եթէ բանք նոցա անապայման մարգարէացեալք ոչ կատարեսցին. կամ յանուն աստուածոց օտարաց խօսիցին, և ՚ի պաշտօն նոցա կամիցին Ձգել, հրամայէ զայնպիսիս բառնալ ՚ի կենաց, զի մի՛ խոտորեցուսցեն զժողովուրդն յայլ իւրեանց։

Ա՛ռաջելաւ Տաճառաւոր Խրատ, և օրէնք պէտք։

Յետ այսորիկ կամեցեալ մովսիսէ զառաջս առնուլ անտեղուածից, յորոց մարթ էր խանգարուիլ առնուլ ուղիղ կառավարուածէ, և խաղաղական կենաց ժողովրդեանն, աւանդէ պէսպէս օրէնս յաղագս մանր և անհատական դիպուածոց։ Այնպէս՝ առ ի հաստատել ի նոսա զայս և զապաւինուածէ յամենազօր օգնականուածէն ՚ի՛ն՚ այ, քաջալերէ զնոսա՝ յելանել ՚ի պատերազմ ՚ի վերայ թշնամեաց՝ չզանգիտել ՚ի բազմութենէ երիվարաց և ՚ի պնդակազմ պատրաստուածէ կառաց նոցա. զի ՚ա՛ծ որ էհան զնոսա յերկրէն եգիպտացւոց, երթայ առաջի նոցա. և նա պատերազմեսցի վասն նոցա ընդ թշնամիս իւրեանց։ Այսն որոյ պատուիրէ, զի քահանայ մի ՚ի զնացուցց միշտ գոցի ՚ի բանակի նոցա առ ՚ի քաջալերել և խրախուսել զնոսա ՚ի մարտ յուսով պատրաստական օգնականուածէ ա՛մենակալ ՚ա՛ն։ Այս հրամայէ, զի մինչեւ լցեն ըստկիզբն արարեալ պատերազմի, դպիրքն քարոզ կարդայցեն ՚ի ժողովրդեանն, և ասասցեն, թէ ամենայն՝ որոյ լցեր չինեալ տուն նորա՛ն, և չիցէ առբարեալ նմա նաւակատիս և քնակեալ ՚ի նմա. և որոյ տնկեալ լցեր այգի, և չիցէ վայելեալ ՚ի պտղոյ նորա, որ լինէր ՚ի հինգերորդ ամի. որպէս յայտ է. ղՀ. ՚ի՛. 24. և որոյ խօսեցեալ լցեր կին, և չիցէ առեալ զնա, մի՛ երթայ ՚ի պատերազմ, այլ դարձցի ՚ի տուն իւր։ Այնպէս և երկիւղած և վատասիրտք, որք երկնչէին ՚ի վատնգաց, ՚ի բաց կացցեն ՚ի բանակէ պատերազմողաց, զի մի՛ և զայլս զանգիտեցուսցեն, և զձեռս նոցա լքուսցեն ՚ի մարտին։ Յայս ՚ա՛ուի թէ հաչին և նախընթաց երեք պայմանք. քանզի այնպիսիք սովորաբար առաւել

նկրտին խոյս տալառ ի ապրեցուցանել զանձինս ,
քան Թէ արիաբար միջամուխ լինել ի վտանգս
պատերազմաց :

Եւ ևս պատուիրէ , զի յորժամ պաշարեսցեն
զքաղաք լինչ , որ չիցէ ի նղովեալ քաղաքաց անտի ,
նախ կոչեսցեն զքաղաքացիս ի խաղաղութիւն՝ լինել անձնատուր . եթէ հաւանեսցին և բացցեն
խաղաղութիւնք առաջի նոցա զդրունս քաղաքին , մի
քնաւ ինչ հասուցանիցեն նոցա . այլ կացուսցեն զնոսա հարկատու լինքեանց : Իսկ եթէ
ընդդիմ դառնայցեն և կամիցին պատերազմիլ ,
յայնժամ սաստկացուսցեն ի վերայ նոցա զպատերազմ , և առեալ զքաղաքն՝ զոր ոք մանեսցէ ի
ձեռս նոցա , զամենայն արու ի սպր սուսերի կոտորեսցեն . զկանայս և զմանկունս գերի վարեսցեն . իսկ զանասուն և զամենայն ինչս նոցա յաւար առնուցուն : Իսկ յաղագս նղովելի քաղաքաց քանանացւոց և պլոց ազգաց , զորոց զերկիրն սահմանեալ էր ոճ տալ նոցա ի ժառանգութիւն , հրամայէ
կոտորել զամենայն որ ունիցի շունչ կենդանութեան ,
զսպր և զկին՝ զծեր և զմանուկ , և զանասուն առհասարակ . և մի քնաւ խնայել խիղճ զի մի լինիցեն նոցա քար գայթակղութեան հրապուրել ի կռապաշտութիւն , և յայլ մեղս մեծամեծս ընդդէմ Տեաց :
Այլոց զծառատունկ պտղաբեր ծառոց , որք կցեն
յանդիման քաղաքին զոր պաշարիցեն , պատուիրէ չհատանել , զի վասն պտղաբերութեանն կարևոր
են նոցա . այլ եթէ կամիցին շինել պատնէշ զքաղաքաւն , հատցեն զծառս վայրենիս անպտուղս ,
զի առ այլ ինչ չեն պիտանացու :

Պատ զկին զոր օրինակ կարգադրելոյ վասն քաղաքացն Թ հնամեաց , դարձեալ առնու մտիկս զմանաւոր դիպուածս ի ձեռին , որք պատահին ի մէջ
ժողովրդեան : Ասէ և պատուիրէ , զի Թէ ի
դաշտի ուրեք գտցէ մարդ վիրաւորեալ և մեռեալ ,
եւ լցեն դատաւորք և չափեսցեն շուրջ զվիրաւորսն զվայրս քաղաքացն . և որ առաւել հեռու իցէ
ի վիրաւորն , տացէ երկնք մի՝ որ չիցէ մեռեալ ընդ

գործ. զոր իջուցեալ ՚ի ձոր ապառաժուտ և ան-
գործ, կարեմակոտոր արասցեն և սպանցեն. և
ծերակոյտ քաղաքին այնորիկ մատուցեալ լուասցեն
զձեռս իւրեանց ՚ի վերայ գլխոյն. և երդ-
նուցուն, թէ ձեռք իւրեանց ոչ հեղին զարիւնն
զայն, և ոչ աչք նոցա տեսին զսպանօղն. և ապա
մատիցեն քահանայք զևտացիք. և ասասցեն,
* Վաւեր զժողովուրդ քո զիսրայէլ, զոր փրկե-
ցեր տէր. զի մի եկեսցէ արիւնս անպարտ ՚ի վերայ
ժողովրդեան քոյ իսրայէլի ‖: Յորմէ յայտ է թէ
քանի մեծեղեռն ամբարշտութիւն համարեին զկա-
մայական մարդասպանութիւն. և որչափ երկնչէին
զի մի պատուհասեսցէ նոցա զգաւառն ողջոյն յա-
ղագս անպարտ արեանն հեղման յերկրի անդ. զոր
հարկ էր արեամբն անարատ երկնչել սրբել և քաւել:

Ամայր տայ մովսէս իսրայէլացւոց զկին գերեալ
՚ի պատերազմի առնուլ ՚ի կնութիւն, բայց հանդերձ
պայմանօք ինչ. զի տայցեն նմա ժամանակ միոյ
ամսոյ սգալ զգերութիւն իւր և զզրկումն ՚ի ծնողաց,
կտրելով զվարսս գլխոյն, և հատանելով զեղջիւ-
գունս. և ապա առնուցու ոք զնա ՚ի կին, եթէ
յանձն առցէ կինն դառնալ յօրինս եբրայեցւոց:
Իսկ եթէ զկնի ամուսնութիւն ոչ հաճեսցի այրն
ընդ նա, մի վաճառեսցէ արծաթոյ այլում, այլ ար-
ձակեսցէ ազատ: Այսպէս թոյլ տայ առն արձա-
կել զօրինաւոր կին իւր, եթէ զկնի ամուսնութիւն
գտցէ ՚ի նմա զերևելի ինչ արատ, կամ անտա-
կրութիւն. տալով ՚ի ձեռս նորա զգիր ապահարզա-
նի, որով կարօղ իցէ կինն լինել առն այլում. բայց
եթէ այրն վերջին մեռանիցի, մի կարասցէ այրն
առաջին առնուլ զնա անդրէն իւր կնութիւն: Յայս
վայր զիջանի մովսէս յանժուժութիւն՝ մինաւանդ
թէ ՚ի խստասրտութիւն ապառաժ ժողովրդեանն,
առ խորշելոյ ՚ի մեծագոյն չարեաց անգթութիւն և
պղծութիւն. ապա թէ ոչ՝ մարթ էր նոցա ՚ի բիւր
չարագործութիւնս թաթաւիլ: Սակայն զպոռնկութիւնն,
զկնութիւնն, և զաղգապղծութիւնն յառաջնում աստի-
ճանի ընդ երկրորդին՝ անհնարին խստութիւն ար-

դելու. յորոց զանազան դիպուածս յառաջ բերէ. և ըստ առաւելութեանէ և նուազութեանէ յանցանացն՝ զչափ պատժոյն սահմանէ, մահ, կամ տուգանս արծաթոյ։ Ա. Այլ՝ի բաց հանել յօրինաց անտի ազգապղծութեան, զոր՝է ղեւտ. ԺԸ. 17. աւանդեաց, զդիպուածոն կարևոր, յորժամ լցեն եղբարք բնակութեանք՝ի միում տան կամ՝ի քաղաքի, և մի՝ի նոցանէ մեռանիցի անորդի. քանզի յայն դիպուածի այսպէս առնել հրամայէ. գլ. ԽԵ. 5. * Ա. Թէ բնակեսցեն եղբարք՝ի միասին, և մեռանիցի մի ոք՝ի նոցանէ և զաւակ ոչ լցէ նորա, մի լինիցի կին մեռելոյն արտաքոյ առն ումեք, որ մերձաւոր չիցէ նորա. այլ եղբայր առն իւրոյ...առցէ զնա իւր կնութիւն։ և անդրանիկն ծնեալ՝ի նմանէ անուանեսցի յանուն վախճանելոյն իբր հարազատ որդի նորա. զի մի՛ ջնջեսցի անուն նորա յիսրայէլ. և Թիւ ԻԵ.ից և տանց մի նուազեսցին, և ժառանգութիւնք նոցա մի՛ խառնակեսցին։ Ա. պա Թէ ո՛չ կամիցի այրն առնուլ զկին եղբօր իւրոյ, ելցէ կինն՝ի դուռն քաղքին առ ծերակոյտն, ուր կոչեսցի և այրն. և մեղադրեսցեն զնա առաջի ծերոց՝ Հանդէպ զկոչիլ մի յոտանէ առն՝՝ի նշան մերկացուցանելոյ՝ի նմանէ զկիրառումն ժառանգութեանէ եղբօրն, փոխանակ զի ոչ կամեցաւ մնանել և ժառանգել, յարուցանելով զաւակ եղբօրն մեռելոյ. և առ՝ի նախատինս Թքցէ յերեսս նորա, և ասասցէ. * Ա. Այսպէս արասցեն առն, որ ոչ շինիցէ զտունն եղբօր իւրոյ։ և անուանեսցի տունն անորիկ կոչեսցի տունն քակացելոյ՝ի մէջ իսրայէլի։

Յաձախ պատուիրէ մովսէս վասն սիրոյ ընկերին, և կարեկցութեան առ կարօտեալս, զանազան դիպուածս աստանօր յառաջ բերելով։ Ա. Թէ՝ ասէ, այր կամ կին եբրայեցի՝՝ի յետին կարօտութենէ բռնագատեալ՝ վաճառեսցէ ումեք յեբրայեցւոց զանձն, կամ զուստր և կամ զդուստր իւր, զվեց ամ ծառայեսցէ նմա. և յամին եօթներորդի արձակեսցի ազատ. բայց ո՛չ ունայնաձեռն, այլ առնսյն կարևոր պաշարօք կերակրոյ և հանդերձից խնա-

մեալ. զի զվեց ամ ծառայեաց նմա։ Ապա եթէ կամիցի մնալ առ նմա, ասէ նորա ծակեսցէ զունկն նորա ՚ի վերայ սեմին դրանն. և այնուհետև եղիցի նմա ծառայ կամ աղախին զամենայն կեանս իւր։ Նմանապէս պատուիրէ, զի թէ տեսցեն զարջառ կամ զոչխար ուրուք մոլորեալ ՚ի դաշտի, միանտես առնիցեն զնոսա, այլ դարձուցեալ ածիցեն առ տէր իւրեանց. իսկ եթէ տէրն հեռի ուրեք իցէ, կամ անծանօթ, ժողովեսցեն զնոսա ՚ի տուն իւրեանց, մինչև յայտնեսցի տէրն. և ապա տացեն ցնա։ Ասաց նմին օրինակի արասցեն, յորժամ գտցեն իրս ինչ կորուսեալ յումեքէ։ Այսպէս եթէ տեսցեն զէշ կամ զէշ անկեալ ՚ի ձանապարհի, զոր տէր նորա միայնակ մնացեալ ոչ կարիցէ յարուցանել, մի զանց առնիցեն զնոքօք. այլ օգնեսցեն եղբօրն ՚ի յարուցանել, և ՚ի հանել ՚ի ձանապարհ։

Երգելոյ առնուլ վաշխ կամ տոկոսիս յեղբօրէ եբրայեցւոյ՝ թէ վասն դրամից, և թէ յաղագս ցինչևիցէ իրաց, զորօրինակ ցորենոյ, գինւոյ, ելզոյ, ևլն. այլ տալ լոկ իբրև ՚ի փոխ ՚ի նպաստ կարօտութեանէ եղբօրն, և ոչ ՚ի շահ անձին աւելի քան զտուեալն պահանջելով ՚ի նմանէ։ Այլ յայլազգեաց թոյլ տայ առնուլ տոկոսիս, ոչ իբրև վաշխ, քանզի զայն ամենայն ուրեք արգելու, այլ իրաւամբ ստացման. զի ածէ որ տէր է ամենայն մարդկան՝ զնորութենէ ամենայն ընչից նոցա դարձոյց առ որդիս իսրայէլի յերեխատս և յերկրին քանանացւոց։ Ի փոխատուութենէ դրամից կարէին պահանջել դրաւական, ոչ այնչափ վասն ապահովութենէ փոխատուին, քան թէ առ ի փոյթ պարտապանին ՚ի հատուցումն. բայց զընտրութենէն գրաւոյ պարտ էր թողուլ ՚ի կամս փոխառուին, տալ զոր ինչ կամիցի. և չէր կարօղ փոխատուն մտանել ՚ի տուն նորա առնուլ զայս ինչ կամ զայն ինչ ըստ հաճոյից։ Լոկ եթէ աղքատ էր փոխառուն, որ չունելով զայլ ինչ գնել ՚ի գրաւ, բայց եթէ կամ զհանդերձս՝ զոր օրինակ զվերմակ, կամ զայլ այսպիսի ինչ, որով ննջէր ՚ի գիշերի. և կամ զգործիս ինչ, որով

գործէը ՚ի ցերեկի, յայնժամ պարտական էր փո-
խառուն յանենայն երեկոյի դարձուցանել ջհան-
դերձս, և յառաւօտու զգործիսն առ փոխա-
ռուն. և ապա անդրէն առնուլ և պահել։ Այլ մի-
առ մինչ հրամայի այս հանապազորդ յետադարձուի
գրաւոյ ընդ երեկոյս և ընդ առաւօտս, պատասխա-
նի տայ սէնն օգոստինոս։ զի պարտաւոն տայի պատ-
ճառ ՚ի վար արկանելոյ զգործ ողորմածութեան.
իսկ պարտապանին ստիպումն առ ՚ի փութալ ՚ի
հատուցումն արծաթոյ օտարին։ Այս ևս պատուի-
րէ չյամեցուցանել զվարձս օրբստօրեայ գործա-
ւորաց մինչև ցառաւօտ վաղուեան աւուր. այլ յա-
ռաջ քան զմտանել արեգական հատուցանել, զի
այն է առօրեայ պարէն նորա. զի մի՛ ասէ՝ բողոք
հարկանիցէ զքէն առ Ն։

Ընդ ողորմածութեէ, և կարեկցութեէ, պատուի-
րէ նովին սաստկութէ և զարդարութէն և զերա-
ւունս պահել ՚ի դատաստանի. քանզի թէպէտ բա-
րի է ողորմիլ և գթալ՝ մանաւանդ յաղքատն և ՚ի
տնանկն, բայց այնպէս զի արդարութէն և իրաւունք
մի՛ անկցին ՚ի գետին։ Այլ՝ իբրև պատուիրէ մի-
պէս չառնուլ ակն կամ աչառել ՚ի դատաստանի՝
այլ մեծատան, և այլ աղքատի. միոյն չյաղագս մար-
դահաճութեան կամ վանն կաշառաց. իսկ միւսոյն
վանն ողորմութէ. զոր չայսոսիկ ևս աւանդէ
՚ի գիրս ելից. է. 3. սահմ. * Ո՛ի ողորմեսցիս
անանկին ՚ի դատաստանի ‖, այլ իբրաքանչիւրոյ ար-
դարութէ առնել իրաւունս. զարդարն և՝ զան-
պարտն մի՛ սպանանել. և ընդ հակառակն՝ զամպա-
րիշտն, զգողն, զաւազակն, և զմարդասպանն մի՛
ապրեցուցանել. զի այնպիսիք թէնաման են հասա-
րակաց. վասն որոյ ողորմիլ նոցա՝ է անիրաւիլ ընդ-
դէմ անմեղաց մարդկային հասարակութէ։ Ի սա
նմին օրինակի պատուիրէ և չառաւտուս մի՛ վարել
երկաթեսակ կշիռս և չափս, մեծ և փոքր, արդար
և թերի, ծանր և թեթև. զի գողութէ է այն,
ուստի և մեղք. և պարտաւորէ ՚ի հատուցանել.
զորմէ ասէ սողոմոն. առակ. է. 10. * Կշիռ մեծ

և փոքր, և չսուի կրկին՝ սիրտ են առաջի նոր եր. կոքին ։

Օ Նոյն հաւատարմութիւն պատուիրէ ունել և յուխտս և ի խոստմունս որ առ Աստ. * Կամր ոք այլ եթէ ուխտիցէ ուխտ նոր, կամ երդնուցու երդումն սահմանաւ, կամ սահմանիցէ ինչ վասն անձին իւրոյ, մի արասցէ ապական զբան իւր. այլ զամենայն ինչ, որ ելանիցէ ի բերանոյ իւրմէ՝ արասցէ ։ Թուոց. Ե. 3 ։ Օ Նոյն կրկին և աստ յերկրորդ օրէնսն. * Եթէ ուխտիցես ուխտ նոր այ քում, մի յամեցես հատուցանել զայն. զի պահանջելով պահանջեսցէ նոր առ ի քէն. և լինիցի քեզ ի մեղս ։ Այս թէ ոչ կամիցիս ուխտել, չլինիցի քեզ մեղք։ Որ ինչ ելանէ ընդ շրթունսդ, զգո՛յշ լինիցիր և արասցես որպէս ուխտեցեր այ քում, զտուրսն զոր խոստացար բերանով քով ։ Ը. օրէն. Է4. 21 ։ Կանգի կամաւոր ուխտ կամ երդումն հաստատեալ են ի բնական սկզբունս հաւատարմութեան, որք զամենայն մարդիկ պարտաւորեն առ կատարումն ։

Այլ թէպէտ չէմարիտ է, թէ ոչ մի ինչ կարեմք մեք խոստանալ այ, որ չիցէ նորա, կամ ի նմանէ. սակայն չէմարիտ է և այս, թէ կարեմք վասն փառաց նորա պարտաւորել զանձինս առ իրս ինչ՝ որ լաւագոյն իցէ, և կատարելագոյն քան զայն, զոր պահանջէ ի մէնջ ըստ խոստումն պատուիրանաց իւրոց ։ Այսպէս յորժամ զայսպիսի ուխտ կամ երդումն առնեմք, յայտ է թէ ի բնական հաւատարմութէ պարտական եմք կատարել. ապա թէ ոչ՝ մեղանչեմք մեղս ուխտազանցութէ և անհաւատարմութէ առ Աստ ։ Այլ ի նիւթս ուխտից է ինչ՝ որ ի բնական իրաւանց է, և է ինչ՝ որ ի դրական իրաւանց. առաջինն հաստատուն է և անփոփոխ և միշտ պարտաւորէ. իսկ երկրորդն կարէ ընդունել զմեղկութէն և զթուլացումն ինչ. զորօրինակ յորժամ որ առանց բաւական մտախոհութեան պարտաւորէ զանձն առ իրս ինչ՝ որ չէ լաւագոյն բարւոյ, կամ որ չիցէ յիշեցութէ իւրում, յայնժամ

օրէնքն տան իշխանութեն այնոցիկ՝ որք ՚ի քնութեն իւրեանց դատաւոր են ուխտելոյն, քննել զհանգամանս ուխտին, և սահմանել, թէ արդեօք պարտ էիցէ պահել, եթէ զնոյն առնել. կամ փոխել յայլ ինչ բարեգործութեն։

Յայս օրէնս հաստատի իշխանութեն հարց ՚ի վերայ ուխտից որդւոց, և արանց ՚ի վերայ ուխտից կանանց իւրեանց. և ընդհանրապէս ամենայն տնօրինմանէ ուխտից, որք լինին յեկեղեցական իշխանացդ, որք յօրինաց, կամ ՚ի սովորութենէ ունին զայն իշխանութեն։ Այսպէս այսմ կանոնի սահմանեալ վասն ուխտից դստերաց և դստերացդ՝ որք տակաւին ՚ի տան հօր իւրեանց էին, և կնոջ՝ ՚ի տան առն իւրոյ։ Այնէ ասէ աղջկիկ որ ուխտիցէ ուխտ ինչ ՚ի տան հօր իւրոյ, (ուր խնամի և որդին.) կամ կին ՚ի տան առն իւրոյ. և հայրն, կամ այր կնոջն յաւուրն յորում լսէ և խնամայ զուխտն՝ լուէ, որով ցուցանէ հաւանիլ, հաստատուն է ուխտն և պարտաւորէ զուխտօղն. իսկ եթէ ոչ հաւանեսցի և ապախտ առնիցէ, նանրանայ ուխտն, ուստի և ոչ պարտաւորէ։ Այսպս եթէ անցանիցէ օրն, և չէտ այնորիկ ընդդիմանայցէ և արգելուցու պահել զուխտն, ուխտօղն Թէպէտ ոչ մեղանչէ, զի ոչ իւրով կամաւ անցանէ զուխտիւ, բայց հայրն՝ կամ այր կնոջն մեղանչեն մեղս ուխտազանցութեն. որպէս մեղանչեին ուխտօղքն՝ եթէ չպահէին զուխտ իւրեանց. ըստ այնմ, * եթէ զանցուցանելով զանցուցեսցէ այրն նորա չէտ աւուրն յորում լուաւ, ընկալցի զմեղս իւր ‖. Թուոց. Ե. 16։

Պռվասէս պատուիրէ չմուծանել ՚ի ժողովուրդն զնեբքինի, չայտ է թէ զարարեալն ՚ի մարդկանէ. * մի մտցէ (ասէ) մաւեացի և կրճատեալն յեկեղեցի ‖. Բ. օրին. ԻՓ. 1. այսինքն չառնուլ և չհամարել զնա ՚ի Թիւս ժողովրդեան քնիկ երբայեցւոց, որք են սերեալ յերկոտասան նահապետաց. ուստի և չկացուցանել զնա իշխան ՚ի վերայ ժողովրդեան, և չտալ նմա դատաւորական պաշտօնատարութեն։ Այս պատճառ այսը արգելման

Թուի, նախ՝ զի ներքինին անկարօղ գոլով ՚ի սե-
րունդ զաւակաց յառնուին ժողովրդեան այ, չէ ար-
ժան նմա վայելել յաղտաւելիսն ժողովրդեան։
Երկրորդ՝ զի անպատեհ լիմն է ժողովրդեան այ ու-
նել իւր իշխան և դատաւոր զայնպիսի կիսայր։ Եւ
երրորդ՝ զի ներքինիք սովորաբար ժանտաբարոյք
են և անգութք, յոյր սակս և անյարմարք առ դա-
տաւորական պաշտօն։ Երդելու և պոռնկորդւոց
վարել իշխանութիւն ՚ի մէջ ժողովրդեան այ մինչև
ցտան ազգ։ Օրէնս պատուէր բազումք իմանան
վասն այնոցիկ, որք յայլազգութիւն եկեալ մտեալ
իցեն ՚ի կրօնս երբայեցւոց, չմտանել ՚ի պաշտօն
ինչ քաղաքական, մինչև սրբեսցի ՚ի սերնդոց նորա
կեղտ անուն, զոր յաղտի անդ իւրեանց ունէին.
և ոչ վասն բնիկ երբայեցւոց. զի ահա յեփթայէ
որդի էր կնոջ պոռնկի, սակայն յաղագս արիական
քաջութիւն իւրոյ, կարգեցաւ իշխան և դատաւոր
ժողովրդեան իսրայէլի։

Օրամինացիս և զմովաբացիս արտաքս փակէ ՚ի
ժողովրդենէ իսրայէլի իսպառ մինչև ցյաւիտեան։
Օրառաջինսն յաղագս մեծի ապերախտութիւն և
խստասրտութեան նոցա առ որդիս իսրայէլի. զի
դիտելով թէ որդիքն իսրայէլի պատուէր ունէին
՚ի ՚ի ձեռն խաղաղութիւն անցանել առ նոքօք, և չը-
գործել ընդ նոսա պատերազմ, սակայն և այնպէս
լոկ ՚ի չարութիւն կամաց՝ չետուն նոցա գկարեւոր
պարէն, և ոչ գհնդ ջուր գնոց արծաթով։ Երկ
յետինքն ՚ի վերայ այնր յաւելին և այլ մեծագոյն
անօրէնութիւն, կուչելով զբազասամ անիծանել գնո-
սա. բնդ նմին հնարեցին ձգել գնոսա ՚ի պոռնկու-
թիւն և ՚ի կռապաշտութիւն, և այնպէս սպանանել
գնոսա ՚ի հոգի. որ չար ևս է քան զմահ մարմնոյ։
Երայց վասն եդոմեցւոց, որպէս և յաղագս
եգիպտացւոց հրաման տայ, թէ յերրորդ ազգի
կարիցեն մտանել ՚ի ժողովուրդ նոցա, և վարել
զամենայն քաղաքական պաշտօն. զի եդոմեցիք
թէպէտ կամեցան պատերազմիլ արգելուլ զանցս
նոցա, այլ զի համահայր և համամայր եղբարք են՝

արժան է ընդունել զնոսա : Այսպէս և եգիպ-
տացիք Թէպէտ չարչարեցին զնոսա ընդ ժամանակս
ոչ սակաւս , սակայն ՚ի սկզբան անդ բազմեալ էին
մարդասիրութեանն ցուցին նոցա , տալով զամենայն
ընդարձակութիւն , որով և բազմացան անդ յոյժ
և հարստացան ընչիւք . ապա կամի մովսէս , մնա-
ւանդ Թէ ած , զի զառաջինն բարութեանն յիշելով
մոռանայցեն զվերջինն նեղութեանն :

Գ.Լ. Գ.

Զև օրհնութիւն ՚ի վերայ օրինապահաց , և անէծից ՚ի վերայ
անօրինելոցն :

Յետ ամենայն պատուիրանաց , զոր ցոյս վայր
առանդեաց մովսէս ժողովրդեան իւրում , (յորոց
ինչ ինչ լեալ յառաջ բերաք ,) և յետ բազմապա-
տիկ յորդորանաց մեծամեծ խոստմամբք և սպառ-
նալեօք ՚ի հնազանդութեանն և ՚ի պահպանութեան սիրոյ
ամենայնի , երկուցեալ Թէ գուցէ լոկ անցք նոցա
զյորդանանաւ , կամ դէթ առաջին յաղթուն ընդ-
դէմ Թշնամեաց , ջնջեսցէ ՚ի սրտից անհաստատ և
չեզնչեզուկ ժողովրդեան իւրոյ զամենայն պատ-
ուէրս , զոր ընդ այնչափ աւուրս անխնայ երկրոր-
դեաց յականջս նոցա . պատուիրէ , զի յանցանել
նոցա ընդ յորդանան , խոկ և խոկ ՚ի նմին աւուր
կառուսցեն սեղան ՚ին այ ՚ի վերայ գերեզ լերին
՚ի մեծամեծ անտաշ և անկոփ քարանց . և բռեա-
ցեն զնոսա շուրջանակի բոլով . և գրեսցեն ՚ի վե-
րայ նոցա խոշորագիր գիւրընթեռնուի զգլխաւոր
պատուէրս օրինացս վասն ծածպաշտութեանէ , վասն սի-
րոյ ընկերին , և վասն այլոց բարոյական պարտա-
ւորութեանց . և հանել ՚ի վերայ սեղանոյն ողջակէզս
՚ին այ . և ապա զենցեն անդ անասունս , և ինքեանս

յօրինեսցեն, և կերիցեն առաջի տապանակի նոյն, և ուրախ լինիցին գոհանալով զնոսին վասն փրկութեան իւրեանց։

Ա՛պա պատուիրէ, զի երկոտասան ցեղք որդւոցն իսրայէլի որոշեսցին յերկու դասս հաւասարս։ Այս ցեղ, այսինքն շմաւոն, ղեւի, յուդա, իսաքար, յովսէփ, և բենիամին կացցեն ի լերինն գարիզին։ Այս վեց ցեղ, այսինքն ռուբէն, գադ, ասեր, զաբուղոն, դան, և նեփթաղիմ ի լերինն գեբաղ։ Եւ կացեալք բարձեալք զտապանակ ուխտին, և ընդ նոսա ղեւտացիք կացցեն ի ձոր անդը առ ոտս երկուց լերանց ասի և անտի։ Ա՛պա քահանայք դարձուցեալ զերեսս իւրեանց ի լեառն գարիզին՝ ասասցեն բարձրաձայն զերկոտասան օրհնութիւնս, զայս օրինակ. * Օրհնեալ լիցի մարդն՝ որ ոչ արար դրօշեալս և ձուլածու։ և այլն. և տայցեն պատասխանի վեց ցեղք ի գարիզին լեառնէ, * Ամէն։ Յաւարտիլ երկոտասան օրհնութեանց, գարձուսցեն քահանայք զերեսս իւրեանց ի լեառն գեբաղ. և ասասցեն նոյնպիսնակ մեծաձայն զերկոտասան անէծս՝ այսպէս. * Անիծեալ լիցի մարդն՝ որ արասցէ դրօշեալս և ձուլածոյ, զի պիղծ է նոն ձեռագործ Տարտարի։ և այլն. և պատասխանի տացեն միւս վեց ցեղք ի գեբաղ լեառնէ, * Ամէն։ Այս երկոտասան ձևս անիծից բովանդակին մեղք կատարտուեցեն, մարդասպանութեցե, անիրաւութեցե, զրկանաց, յափշտակութեցե, և պէսպէս եղեռնական պղծագործուեց։

Ա՛պա որպէս զի անջնջելի տպաւորեսցին ի միտս նոցա բարիք մեծամեծ խոստմանց, և խրատուեցին զի սպասնալեաց, առ ի յուսով բարեացն յորդորիլ ի պահպանութեցե պատուիրանաց, և երկիւղիւ սպասնալեաց զգուշանալ ի չարեաց, մինչև նոր իմն եռանդեամբ վառեալ խօսի առ ժողովուրդն։ Ուարծուք ինձ ասէ որդիք իսրայէլի, և ընտրեցէք զնի յերկուց ասի, զոր հրամայեն ընկալայ ի նոնէ գնել ձեր առաջի։ Արեգ պահիցէք զպատուիրանս նոն, զոր ես պատուիրեմ ձեզ այս

օր, լինիցիք դուք մեծ, փառաւոր, և երջանիկ քան զամենայն ժողովուրդ որ ի վերայ երկրի. և եկեսցեն ի վերայ ձեր ամենայն օրհնութիւնքս այսոքիկ և գտցեն զձեզ։ Օրհնեալ լինիցիք ի քաղաքի, և օրհնեալ ի դաշտի. օրհնեալ լինիցիք բազմաւորութիւն որդւոց, և բեղմնաւորութիւն արջառոց և հօտից ձերոց. օրհնեալ լինիցին շտեմարանք ձեր զեղեալ արդեամբք, և այլք ձեր առատացեալ պտղովք. օրհնեալ լինիցիք յամենայն առ ամենն գործառնութիւնս ձեր, և ի վնասուորական քաջութիւնս. թշնամիք ձեր բազմութիւն դիմեսցեն ի վերայ ձեր ընդ մի ճանապարհ. և ամենայն ճանապարհք ոչ լինիցին նոցա բաւական փախստեան յերեսաց ձերոց։ Հաստատեսցէ զձեզ Տէր ած ձեր իւր ժողովուրդ սբ. և երջանկութիւն ձեր պատահեսցի առ ամենայն ազգս՝ եթէ ժողովուրդ Տ՚ք դուք, և անուն նորա կոչեցեալ է ի վերայ ձեր. և ամենայն ազգք որ ի ներքոյ երկնից՝ խոնարհեսցին ձեզ, և երկիցեն յերեսաց ձերոց։ Ցանձք երկնից բացցին ի վերայ ձեր, յօդ և անձրև տալ ըստ ժամանակին յաւուրս ձերոց։ Ընչք օտարաց ի ձեռս ձեր անյանիկեն, աւարօք նոցա դուք մեծանայցէք. ամենայն գործք ձեռաց ձերոց յաջողեսցին. դուք տայցէք փոխ բազմաց, և ոչ առնուցուք յայլոց։ Ա՚ք զպարծեսցի յաղթանակաւ ի վերայ ձեր. այլ դուք իշխեսջիք բազմաց. և լինիցիք գլուխ և իշխան ազգաց, և ոչ ծառայ և սորուկ։

Ա՚այս են խոստմունք Տ՚ն առ որդիս իսրայէլի եթէ կայցեն հաւատարիմ Տ՚ն Տ՚ իւրեանց. ապա թէ ոչ՝ յարէ զկնի զսպառնալիս՝ ասէ Տ՚ն։ Եթէ ոչ լսիցէք Տ՚ն Տ՚ ձերոյ՝ պահել և առնել զամենայն պատուիրանս նորա, եկեսցեն ի վերայ ձեր անէծքս այսոքիկ։ Անիծեալ լինիցիք ի քաղաքի և ի դաշտի, ամենայն մթերք և եղ ձեր և վաստակք՝ դատարկ և ընդունայն։ Անիծեալ՝ որդիս ձեր, յանդեայս արջառոց, և ի հօտս խաշանց ձերոց, ի շտեմարանս և ի համբարս և յարդիւնս երկրի. զանդս

ձեր մարախ կերիցէ. զայգիս ձեր որդն սպառեսցէ. և ձիթենիք ձեր թափեսցին։ Յառաքեսցէ ձեզ տեր նուաղութիւն և կարօտութիւն, և զանյաջողութիւն յամենայնի յոր միսեռիք զձեռս ձեր։ Երկինք որք տեղային բարիս ի վերայ գլխոց ձերոց, եղիցին վասն ձեր պղնձիք, և երկիր որ բառնայր զձեզ՝ երկաթիւ. փոխանակ ցօղոյ և արգիւնաւորութեան անձրեւոյ՝ իջցէ յանդս ձեր փոշի հրացեալ. և այնպէս քաղց և ծարաւ, ցուրտ և տօթ, ժանգ և խորշակ, և օդոց ժանտութիւն և ամլութիւն երկրի միաբանեսցին ի վերայ ձեր առնուալ զվրէժ ուխտի ձերոյ։ Յապարտութիւն մատնեսջիք առաջի թշնամեաց ձերոց. ընդ ի ձանապարհ ելանիցէք ի վերայ նոցա, և ընդ եօթն ձանապարհ փախիջիք յերեսաց նոցա գանեալք և հարուածեալք, և մեռեալք ձեր կերակուր թռչնոց երկնից և գազանաց երկրի. և եղիջիք ցանեալ և ցրուեալ ընդ ամենայն թագաւորութիւնս երկրի։ Հասցէ ի ձեզ տաղտկագոյն հաբուածք եգիպտացւոց՝ կեղ, խաղաւարտ, թանչք, քոս զայրացեալ անբժշկելի ի թաթիխ ոտից մինչև գլուխս ձեր։ Յօ լիմնարութիւն, և տաղտութիւն մտաց և շլացութիւն, զի ի միջօրէի զլոյս խնդրիցէք, և խարխափիցէք որպէս կոյր ի խաւարի։

Յկեսցէ ի վերայ ձեր ազգ ի հեռաստանէ ի ծագաց երկրի, ազգ զոր ոչ գիտիցէք դուք և ոչ հարք ձեր. ազգ ժպիրչ երեսօք, զորոյ ոչ իմանայցէք զլեզու նորա. որ ոչ ակառիճ երեսաց ծերոյ, և ոչ ողորմեսցի տղայոյ. և եղիջիք յայծամ զբերկեալ և յափշտակեալ և խորտակեալ. և ոչ ոք իցէ որ օգնիցէ ձեզ և պաշտպանեսցէ։ Յանուցեալք կանայս, և այլք հանցեն զնոսա ի ձէնջ. ծնանիցիք ուստերս և դստերս ոչ վասն ձեր, այլ ի բազմացուցանել զգերիս օտարաց. քանզի երթիցեն ի գերութիւն. և դուք կկոցեալ աչօք հայիցիք զկնի նոցա, և ոչ լինիցիք ձեռնհաս առնել ինչ։ Օ ծերնուդս արջառոյ և խաշանց ձերոց, և զերս երկրի՝ և զամենայն վաստակս ձեր կերիցէ ազգ զոր ոչ գիտիցէք։ Յհն և օտարն, և կռապաշտք յորոց

վերայ ունէիք տիրել, նոքա տիրեսցեն ձեզ, և նուաճեսցեն զձեզ. նոքա եղիցին գլուխ, և դուք եղիջիք սաղուկ։ Այլ փոխանակ զի ոչ կամեցայք պաշտել զՅՈՒ ՅԱԾ ձեր ուրախութեամբ ՀՇմարիտ սրբոյ՝ լցեալք զեղեալք ամենայն բարութեամբ յառաջ քան զիր պարգևսն նորա, պաշտեսջիք զԹշնամիս նորա և ձեր, բայց պաշտեսջիք ՚ի սով ՚ի ծարաւ, ՚ի մերկութիւն և ՚ի նուաղութիւն ամենայնի։ Լծոյ երկաթի դիցէ ՚ի պարանոցի ձերում, մինչև սատակեսջիք։ Հարձրացեալ պարիսպք քաղաքաց ձերոց, և ամրքդ յորս յուսացեալ էիք, կործանեսցին. և դուք թաղեսջիք ընդ աւերակօք հաստակառոյց տանց ձերոց։

Լսեսիցէք պաշտպանել անձանց, այլ զսուր նեղչաց ձերոց առ դրունս ունիցիք, և զսով ՚ի ծոցս ձեր. սով յետին, որպ հասասար չէզվե եբ-բէք ՚ի վերայ երկրի. զի ուտիցէք զՅՈՒՆՈՒՆՑ որդւոցն ձերոյ. զմիս ուստերացդ և դստերացդ ձերոց, զոր զՅՈՒՆՈՒՑՔ ձեռամբ ձերով, առ ՚ի արեամբ նոցա շիջուցանել զծարաւ յանձկութեան ձերում։ Վախկոտեր որկորեաւք՝ որք բազմախորիկ սեղանոյ ոչ չատնային, յափշտակեսցեն ՚ի ձեռաց կանանց իւրեանց զմիս արիւնաշաղախ մանկանց, զոր պահեալ էին մորց վասն իւրեանց։ Վասնայք գիրգ և փափուկք որք հազիւ իչխէին առնել քայլ մի ոտին ՚ի վերայ կորդ գետնոյ՝ առ կարի քնքշութեամբ ոտից իւրեանց, թագուսցեն ՚ի սովել արանց ինքեանց ՚ի կերակուր ինքեանց՝ երկայնել նաև փորք մի զուսայտեալ կեանս իւրեանց. զի յետանել անդ զաւակին յորովայնէ, փոխանակ դիեցուցանելոյ՝ սուր ՚ի սիրտ նորա մխեսցեն. զի անդրէն ՚ի սովել աղիս իւրեանց արկցեն զինա։ Կատ զուսմ և այլ յոգնագին նորանշան հարուածք առ հասորք, և ցաւք չարաչարք գանձեալ պահին ՚ի բարկութենէն ՏՈՒ ՅՈՒ ածել ՚ի վերայ ձեր, և ՚ի վերայ որդւոց ձերոց, մինչև սատակեսջիք։

Ասէ որդիք իսրայէլի ժողովուրդ ընտրեալ և

բարձրացեալ, որ Հիք իբրև զաստեղս երկնից բազմութի՛ւ, մնասջիք Թուով սակաւ, Թշուառք և նըկունք, վերծուցեալք ՚ի սրոյ ոչ առ կարեկցութե՛ն, այլ սակս արհամարհութե՛ն և առ չմարդիս ունելոյ զձեզ։ Այլ եղիցի որպէս ուրախ եղև ՚ի ձեզ Տէր բարի առնել ձեզ, նոյնպէս ուրախ լինիցի ՚ի ձեզ խոնարհեցուցանել և մերկացուցանել յամենայն բարեաց, և հանել զձեզ յերկրէն, յոր մտանելոց էք ժառանգել զնա, և ցրուել ընդ ամենայն ազգս ՚ի ծագաց երկրի մինչև ՚ի ծագս նորուն. և ծառայեսջիք անդ աստուածոց օտարաց՝ փայտից և քարանց, զորս ոչ գիտէիք դուք և Հարքն ձեր։ Այլ վրէժխնդրութի՛ւն ՚ի երեսից զկնի ձեր ՚ի տեղիս տարագրութե՛ն ձերոյ, և անդ ոչ գտջիք հանգիստ. ամենայն կեանք ձեր լի երկիւղիւ և սրտաւրք. աչք ձեր յարաժամ արտասուալից. և անձն ձեր ընկղմեալ ՚ի ծով տրտմութե՛ն անմխիթար. միշտ ընդ սրով Թշնամեաց ձերոց՝ մնայցէք յամենայն ժամ մահացու հարուածոյ. ընդ առաւօտս ասիցէ՛ք, արդեօք տեսանիցե՞մք զերեկոյ. և ընդ երեկոյս ո՛չ վստահացջիք տեսանել զառաւօտս։ Պարձուսցեն զձեզ անդրէն յերգիպտոս ընդ Ճանապարհ, զորմէ ասացաւ ձեզ՝ Թէ ոչ ևս յաւելու ցուք տեսանել զնա, ընդ նոյն Ճանապարհ ածցեն զձեզ՝ վաՃառել նախնի տերոց ձերոց. բայց և անդ եղիջիք մերժեալք և արհամարհեալք. զի ոչ ոք իցէ որ գնիցէ։ Ոչ այսոսիկ և զայլ սոցին սակի սպառնալիս, որք առաւել մարգարէութիւնք էին քան լոկ սպառնալիք՝ Աստուածեղն ըստ ամենայն մանս հոչակաւոր պաշարմունք սամարիոյ, և երուսաղէմի. և այլ բազմադիւի Թշուառութի՛ք՝ որք ընդ ժամանակս ժամանակս հասին ՚ի վերայ որդւոցն իսրայէլի, յահէտ և նուազ աճարկուք ըստ համեմատութե՛ն յահէտ և նուազ հետեւութե՛ն նոցա և ամպարշտութե՛ն, զոր ամպարշտեցան ընդդէմ Տեն այ իւրեանց։

Գլ. Ե.

Եւ ասաց Տէրն առ Յովնան՝ եթէ ընդէ՞ր բարկացար դու ցայսօր։ Եւ ասաց Յովնան՝ բարկացայ ես մինչեւ ցմահ։

Յետ այսորիկ դարձեալ կոչեաց մովսէս զամենայն ժողով որդւոց իսրայէլի՝ ոչ միայն զիշխանսն եւ զցեղապետս եւ զամենայն այր, այլ կամեցաւ զի եւ կանայք եւ մանկունք, եւ եկք բնակեալք ի մէջ նոցա, եւ ծառայք ի փայտակոտրէ մինչեւ ցքրքեր գոցին անդ. եւ խօսեցաւ առ նոսա՝ վերստին յիշեցուցանելով զնշանս եւ զարուեստս մեծամեծս, զոր արար ընդ եգիպտոս. եւ զսքանչելի խնամեդութեն, զոր եցոյց ի վերայ նոցա. զի ի քառասնամեան ձանապարհորդութեն նոցա ընդ տապախարչ աւազուտս յանբեր անապատի՝ ոչինչ ի կարեւորացն պակասեաց նոցա. ոչ հանդերձ անձանց, եւ ոչ կօշիկք ոտից. եւ թէպէտ հաց ոչ կերան, այլ փոխանակ այնր հաց երկնաւոր ջամբեցաւ նոցա։ Յառաջ քերն եւ զնշանաւոր յաղթութենն, զոր ետ նոցա ընդդէմ երկուց թագաւորաց սեհոնի եւ ովգայ. եւ զժառանգել զերկիր նոցա, ուր կային ի նմին ժամանակի։ Ո այսոսիկ եւ զայլ բազմապատիկ մեծագործութենս ընդ այլ ձերոյ՝ աչք ձեր ասէ տեսին. յորմէ պարտ էր ձեզ ի միտ առնուլ զամենակարող զօրութեն նորա, եւ զհրաշալի հայրական խնամն տեսչութեն ի վերայ ձեր։ Այլ թէպէտեւ տեսին աչք, և լուան ականջք ի պատմելոյ այլոց, բայց այնպէս, որպէս թէ քնաւ չէին տեսեալ և ոչ լուեալ. զի աչք նոցա շլացան և սիրտք ծանրացան. նախ իբրի մինչ ի խնամն նորա վայելէին, նոր ամբարշտութեն ընդդէմ բարերարին իւրեանց յառնէին, չարաչար արտանջմամբ, հեստութեն և ապստամբութեն։ Այսպէս յորդորէ ըզնոսա նոր ուխտիս պարտաւորել զանձինս ի հնա-

զանդուածէ և՛ի պահպանուածէ պատուիրանաց Տեառն, զանձն երաչխաւոր եդեալ, թէ՝ ած անտես առնէ զանցեալ ապստամբութիւնս նոցա, իբր մեզս մանկուածէ և անգիտութիւն, և ուխտէ նոցա վերստին կացուցանել զնոսա իւր ժողովուրդ. և լինել նոցա Ած, ոչ միայն որոց այժմ կան անդ առաջի Տեառ՝ այլև որդւոց նոցա և թոռանց որք առ յապային լինելոց էն, որպէս երդուաւ Տէր նոցա աբրահամ և իսահակայ և յակոբայ, եթէ հաւատարիմ գտցին՛ի պահպանուածէ պատուիրանաց նորա։

Այլ կասկածիմ ասէ, թէ գուցէ և այժմ իսկ մինչ խօսիմս առ ձեզ, իցէ որ՛ի ձէնջ այր կամ կին, կամ ազգ, կամ ցեղ, որոյ միտք իւր խոտորեալ իցեն՛ի Տենէ՝ այ իւրմէ, երթալ պաշտել զգիս ազգացն ամենեցուցոյ, և ամենապատոյ. սուտ յուսով եդեալ՛ի սրտի իւրում թէ անպատիժ մնայցէ. և այսպէս ինքն մեղաւոր և ամպարիշտ արմատ դառնուածէ՛ի վեր բուսեալ, լինիցի պատճառ կորստեան և այլոց անմեղացա՛ի նոյն կատարածէ ձգելով զնոսա։ Այլ մի՛ քննաւ վստահացին յայն, քանզի մինչ ոչ կարծիցեն, բորբոքեսցի բարկուածէ Տեառն և նախանձ նորա. և ամենայն հեղեղք նզովից և պատուհասից, որք գրեալք են՛ի գրի օրինացս այսոցիկ՝ հասցեն՛ի մարդն յայն, կամ՛ի ցեղն և յազգն, սպառ սպառ ջնջել զնոսա՛ի ներքոյ երկնից. որպէս զսոդոմ և զգոմոր և զայլ քաղաքս, որք՛ի հուր և՛ի ծծումբ կորեան, և հող երկրի նոցա վասն ամպարշտուածէ քննակացն յանձինս փոխեցաւ, և անպիտանացաւ. այնպէս եղիցի և նոցա. մինչև ազգաց որք գայցեն զկնի, տեսեալ զվարուածս երկրին այնորիկ, զարմացմամբ հարցանել, առ ի՞նչ այն պատուհաս. և լսել պատասխանի, զի թողին զուխտ հարցն իւրեանց, և պաշտեցին զաստուածս օտարս։

Այսպա ընդհատեալ մովսիսէ զընթացս բանից սպառնալեացս, ցուցանէ նոցա, թէ այն ամենայն զոր խօսեցաւ մարգարէութէ՛, խորհուրդ էին առ Ած՝ ծածկեալ՛ի հարց նոցա և յամենայն ազգաց,

զեր այժմ ՚ի ձեռն իւր կամեցաւ ՚ած յայտնել նո-
ցա. որպէս զի երկիւղիւ այնչափ պատուհասիցէ՝
կացցեն ՚ի սահմանի հաւատարիմ ՚ի պահպանութիւն
պատուիրանացն ՚ին: Վասն զի պատուիրեաբս այս
(ասէ) զեր ես պատուիրեմ ձեզ այսօր, ոչ ծանր
բաբեռն ինչ է, զի ասիցէք, ո՛չ կարեմք բառնալ.
և ո՛չ հեռի ՚ի ձէնջ յերկինս ծածկեալ, թէ ասի-
ցէք, ո՞վ ելանիցէ յերկինս և առնուցու և պատ-
մեսցէ մեզ, և ըստ այնմ արասցուք. և ո՛չ յայն
կոյս ծովու, թէ ասիցէք, ո՞վ հատանիցէ զայնչափ
ձանապարհ երթալ և ուսանել զօրինս և զպատ-
ուիրանս ՚ին. այլ մերձ առ ձեզ են քահանայք և
դպիրք օրինացն որք ուսուցանեն ձեզ. և այլ ինչ
ոչ միայ ձեզ, բայց հանապազ ունել զայն ՚ի բե-
րան, և տպացուցանել ՚ի սրտի, և կատարել գոր-
ծով: Ո՛չ հաւաղիկ ասէ եղի այսօր առաջի ձեր
զհնազանդութեի պատուիրանացն ՚ոյ, որ ի կեանք.
և զաղաստամբութեի ՚ինմանէ, որ ի մահ հոգւոյ և
մարմնոյ. այսուհետև ձեզ միայ ընտրել զբարի,
սիրել զ՚ած ձեր, պահել զկերաւունս և զպատ-
ուիրանս նորա. զոր թէ առնիցէք, կեցջիք, և բա-
զում լինիցէք. և օրհնեսցի զձեզ ՚ած ձեր յա-
մենայն երկիրն, յոր մտանէրց ՚ք ժառանգել
զնա: Իսկ եթէ զբարն ընտրիցէք՝ երթալ պաշտել
դաստուածս օտարս, դարձեալ կրկնեմ ձեզ, զի
կորստեամբ կորնչիցէք, և սպառեսջիք յերկրէն,
յոր դուք անցանէք ընդ յորդանան ժառանգել
զնա: Ո՛ւնիմ ձեզ վկայ այսօր զերկինս և զերկիր,
զի ոչընչ ծածկեցի ՚ի ձէնջ. եդի առաջի երեսաց
ձերոց զկեանս և զմահ, զօրհնութեի և զանէծս:
Ո՛խտեմ զի անցանիցէք զուխտիս, զոր ուխտեցէք
ընդ ՚ած ձերոյ. վասն որոյ և հասանիցեն ՚ի վերայ
ձեր ամենայն անէծքս այսոքիկ. և յրուեսցէ զձեզ
՚ած յամենայն ազգս. սակայն և յայնժամ մի ևս
պատ հատանիցէք զյոյս ձեր ՚ի ՚ած ՚ոյ ձերմէ. զի
գթած է նա և բազումողորմ: Ո՛չթէ ՚ի տարագրու-
թեե անդ կալջիք զերջ ՚ի սրտի ձերում, և դառ-
նայցէք առ նա յամենայն սրտի ձերմէ, և յամե-

նայն անձնէ, դուք և զաւակք ձեր սիրել զնա, և լսել ձայնի նորա ըստ ամենայնի, զոր ես պատուիրեմ ձեզ այսօր, զի աւսցի ի վերայ տառապանաց ձերոց, և թժշկեսցէ զձեզ և ողորմեսցի ձեզ։ Այլ եթէ խոչք ցանեալ և ցրուեալ յամենայն ազգս ի ծագաց երկրի մինչև ի ծագս նորին, և անտի ժողովեսցէ զձեզ, և ածցէ յերկիրն, զոր ժառանգեցին հարք քո. և օրհնեսցէ զձեզ, և ամեծցուսցէ. և տացէ ձեզ և զաւակաց ձերոց սիրտ սիրել զնա. և դարձցի ի ձեզ քաղցրութիւն ուրախ լինել ձեօք ի բարութիւն, որպէս ուրախ եղև հարցքն ձերովք. և զնղովս զայսոսիկ դարձուսցէ ի թշնամիս ձեր և յատելիս։ Այս ժողովումն եբրայեցւոց ըստ մասին կատարեցաւ ի դառնալ նոցա ի գերութիւն բաբելացւոց. իսկ լրումն ըստ ամենայնի՝ հանդերձեալ է լինել ի վախճան աշխարհի, յորժամ լրումն հեթանոսաց մտցէ, ըստ առաքելոյն. հռ. ժա. 25. զի յայնժամ լուսաւորեսցին աչք հոգւոց նոցա. և ծանիցեն զյն քն, զոր խաչեցինն՝ Հմարիա ած և փրկիչ աշխարհի։

Յետ այսորիկ կոչեաւ մովսիսէ զքահանայս և զղեւտացիս որք կրէին զտապանակ ուխտի տն, պատուիրեաց նոցա, զի յամենայն եօթնեւրորդ ամի տարւոյն թողութիւն ի տօնի տաղաւարահարաց, ի ժողովիլ որդւոցն իսրայելի վճռանգիման լինելոյ տն ի տեղւոջն, զոր ընտրեսցէ տր, ընթեռնուցուն զօրէնս զայս ի լուր ամենայն իսրայելի՝ արանց, և կանանց, և մանկանց, և եկաց որք իցեն ի քաղաքս նոցա. զի ուսցին առնել զամենայն պատգամս օրի նայս այսոցիկ։ Այս ապա զմատեանն օրինաց, զոր նա ինքն մովսէս գրեաց ի սկզբանէ ցկատարած՝ նախ ընդարձակ, և ապա ամիոփեաց զայն ի հատմառօտ, որ և երկրորդ օրինք կոչեցաւ, աւանդեաց ի ձեռս զնատացւոց. պատուիրելով գնել զգուշութիւն ի տապանակ անդր ուխտին, ի կողմանէ ածագիծ տախտակաց պատուիրանի. զի լինիցի անդ միշտ ի վկայութիւն։

Յետ այսորիկ դարձեալ հրատարակեաց մովսէս

'ի լուր որդւոց Իսրայէլի զվճիռն ոչ վասն իւր՝ և
անցանել ընդ Յորդանան, այլ անդէն յերկրին մո-
վաբացւոց կինքեալ զկեանս իւր։ Եւսեբ և կռչեաց
զԵսու, և յանդիման ամենայն ժողովրդեան՝ երկ-
րորդ անգամ յանձն արար նմա զիշխանութիւն իւր
բովանդակ, լինել գլուխ, զօրավար, և առաջնորդ
որդւոցն Իսրայէլի. և ժառանգեցուցանել նոցա
զերկիրն զոր խոստացաւ Ած տալ նոցա։ Ապա առ-
եալ Մովսէսի զԵսու՝ գնացին երկոքեան ըստ հրա-
մանի Նո'ի խորանն վկայութեան. և էջ ամր սեամբ
ամպոյ 'ի խորան անդր. և եկաց սիւն ամպոյն առ
դրան խորանին։ Երբեմն թէ այսու կամեցաւ Ած
պատուել զվախճան առաքնորդութենն Մովսէսի, և
զսկսուած իշխանութենն Յեսուայ. այսպիսի փառա-
ւոր և ահեղ յուցակաւ վկայելով սրբութեանն արգա-
րութենէ և ուղղութենէ, որով վարեաց Մովսէս զպաշ-
տօնն զոյն զամենայն աւուրս իւր յերեքտասն, և
յանապատի մինչև ցայն վայր. և առ 'ի տալացուցա-
նել 'ի միտս ժողովրդեան զգերազոյն իմն յարդ, և
'ի սիրտս նոցա երկիւղ և պատկառանս առ Յեսու,
որպէս զի հնազանդեսցին նմա։

Եւ խօսեցաւ Ած ընդ Մովսէսի 'ի լուր Յեսուայ՝
ասելով զամբարշտութենն, զոր ամբարշտե-
լոց էր ժողովրդոյն զկնի մահու նորա, յերկրին
յոր մտանելոց էին ժառանգել զնա, երթեալ
զհետ աստուածոց օտարաց. ընդ նմին յայտնէ և
զպատիժն, զոր հանդերձեալ է ածել 'ի վերայ նո-
ցա։ Ապա պատուիրէ Մովսէսի և Յեսուայ գրել
զերգ օրհնութենէ, որ եղիցի իբր համառօտութիւն
իմն երկրորդ օրինացն. և ուսուցանել որդւոց Իս-
րայէլի առնուլ 'ի միտ, և միշտ երգելով ունել 'ի
բերան. որպէս զի ինքեանք բերանով իւրեանց
մարգարէասցին զկործանումն իւրեանց, և վկայե-
սցեն Աչմարտութենէ պատգամաց նոցա. և մի կարիցեն
բողոքել, եթէ հարկանէ զնոսա առանց յառաջա-
գոյն ազդ առնելոյ և սպառնալոյ՝ առ 'ի զգուշա-
նալ. որ և եղիցի 'ի բերան նոցա հանապազորդ
յանդիմանութենէ ինքեանց, և վկայութենէ սրդարու-

թէ ոչ ի մէջ սրտից իսրայէլի, և առաջի ամենայն աշխարհի։ Ոչ այս այսպէս պատուիրեաց նա, զի ոչ գոյր այլ պատճառանդն միջոց պահելոյ նոցա ի մեռ զամենայն, զոր խօսեցաւ մովսէս յերկրորդ օրէնս, քան թէ համառօտաւել յերգ վերածել զայն ամենայն. և ուսուցանել նոցա, զի մի մոռասցի ի բերանոց նոցա, և ի բերանոց զաւակի նոցա։

Զսաւր մովսէս զօրհնութիւնն ըստ ազգեացութիւն հոգւոյն սրբ. և ժողովեալ զիշխանս ցեղիցն, զվարդապետս և զհնաստունս, խօսեցաւ մեծաւ եռաց-մամբ յականջս ամենայն եկեղեցւոյն իսրայէլի։ Զսրդ՝ սկիզբն արարեալ բացագարձուելոցն ձևով կոչ զերկինս և զերկիր՝ զհրեշտակս և զամենայն արարածական անեղծ բնութիւս ի վկայութիւն պատգամաց բերանոյ իւրոյ. կենդանի և ազդու առաքօք առաջի դնել նախ զմեծաբանչ խնամն ոյ ի վերայ նոցա. ապա զյետին ապերախտութիւնն նոցա։ Ակիզբն առնել յառաջնաստեղծ լինելութէ աշխարհի, յորժամ արար ած զմնորդն առաջին. և բազմացուցեալ զորդիս նորա յազգս բազումս՝ սփռեաց զնոսա յայլևայլ կողմանս երկրի, իբրաքանչիւր ազգի կացուցեալ սահմանս։ Զի թէ ոչ սրպէս առանձինն յիշեաց և զնորայել. և մինչև երծնեալ յաշխարհի, ընարեաց զնա յամենայն ազգաց առնուլ իւր ժողովուրդ սեպհական. նմին իրի հաստատեաց և վասն նորա սահման զերկիրն, յոր ի սկզբան անդ բնակեցոյց զեօթն ազգս քանանացւոց, ոչ իբրև տեսաս, այլ իբրև աւանդապահս. տալով նոցա չափ տարածութէ երկրի ըստ թուոյ իսրայէլի. այսինքն սրչափ հանդերձեալ էր բաւական լինել երկտասան ցեղից նորա։ Զի ապա անդստին ի ծննդենէ զամենայն գութ և զնամ եցոյց ի վերայ նորա. զոր առակ ի գութ արծուոյ, որ քան զայլ թռչունս յաւէտ խնամածու է ձագուց իւրոց. մինչ փոքր էն՝ թևատարած ծածկեալ տածէ ջերմելոյն. և իբրև տեսանէ զնոսա մեծացեալ և բաւական ի թռիչս, հանէ ի վերայ բունոյ և սաւառնեալ թևօքն ուսուցանէ զնոսա թռչել, և ի

վաստակել նոցա՝ բառնայ ի վերայ միջնորայ իւ-
րոց, և բերէ ի բոյնն ի հանդիստ : Այսպէսնակ
արար Աստ. զի մինչ մանուկ էր իսրայէլ, ի սակաւ
հովիւս ոմանս բովանդակեալ, որ չէր խակ ի հա-
մար ազգաց և ժողովրդոց, չկարէր բնաւ տեղի
բնակութեան, և ոչ իսկ անուն, այլ թափառական
յօտար յերկրի, պաշտպանեաց նմա, և պահեաց
իբրև զբիբ ականն յամենայն վտանգաց և ի միտս
սուց : Իսկ ապա իբրև բազմացաւ և մեծացաւ և
իբր թէ եհաս յերիտասարդութեն, մինչև բաւական
լինել կացուցանել ազգ մի և ժողովուրդ, բարձեալ
զնա ի թևս ամենակարող զօրութե իւրոյ՝ մեծամեծ
աքանչելեօք եհան զնա յանապատ. ուր ընդ ամն
քառասուն խրատեալ պատուիրանօք և օրինօք, և
կարգաւորեալ քաղաքական կարգօք, արար զնա
ազգ և ժողովուրդ մեծ՝ պատկառելի և ահարկու
ամենայն ազգաց. եհար և վանեաց զթշնամիս ա-
ռաջի նորա, և զմեծամեծ և զամուր ամուր քաղաքս
և զերկիրն նոցա լցեալ զեղեալ ամենայն բարութիբ
ժառանգեցոյց նմա. և կաթամբ և կոգւով և մե-
ղու ամենապատիկ զրդմանօք մնոյց զնա :

Այսպա նովին մարդարէական հոգւով յառաջ
բերէ զյետին ապերախտութիւն իսրայէլի. զի ոչ
ծանեաւ զբարերար ձեռն, որ փրկեաց զնա, և մո-
ծացոյց և հելից ամենայն բարութիբ. այլ եկեր ասէ՝
յակոբ և յագեցար, յօրացար և անկուշեաց զսի-
բելին. գիրացար, ստուարացար և լայնացար և
եթող զիբ ծած զարարիչ իւր. և չոգաւ զհետ գի-
ւաց, քարի և փայտի զոհելով : Վասն այսորիկ և
ծած գարձոյց զերեսս իւր ի նոցանէ. և այնուհետև
ամենայն չարիք կուտեցան ի նոսա, գերութիւն,
կապանք, սով, մահ, սուր սատակիչ, հուր վառիչ,
գիր, և այլն. զի ազգ թիւր են, որդիք յորս ոչ գոն
հաւատք. վասն այսորիկ սպառնայ ծած ջնջել խոպան
զյիշատակ նոցա ի մարդկանէ. բայց ոչ արասցէ
զայն առժամայն, զի մի թշնամիք նորա հպարտա-
ցեալ պարծեսցին, եթէ ինքեանք զօրութիբ իւ-
րեանց արարին զայն ամենայն, նուաձելով զիս-

բայէլ. զի աղգ խորհրդակորոյս են ասէ Նոքա. և ոչ գոյ ի նոսա իմաստութիւն՝ ի միտ առնուլ զայս, թէ ած մատնեաց զիսրայէլ ի ձեռս նոցա. ապա թէ ոչ որպէս չէ հնար միոյ զհազարս հալածել, և երկուց զբիւրս, եթէ ոչ ինք մատնեացն. նոյնպէս և Նոքա ոչ կարէին քնաւ նուաճել զիսրայէլ, եթէ չէր նոքա մատնեալ Աստուած։

Ցետ այսորիկ մխիթ զմարգարէական պատգամն դարձուցանէ ի վերայ Թշնամեաց, զորս կոչ ած ի ձեռին գաւազան ի պատժել և խրատել զորդիս իւր։ Որք Թէպետև յանցաւոր գտանին առաջի Նորա մեծամեծ մեղօք, մինչև լինել արժանի ծանր ծանր պատժոց, այլ զի որդիք Նորա են, և անդրանիկ որդիք, տեսեալ զնոսա լուծեալս և լքեալս ի դառն գերութիւնէ ընդ լծով անգութ և անողորմ ազգաց, որք ի ներքին չարութիւնէ սրտից իւրեանց և և յաւելուն ի տանջանս ժողովրդեան իւրոյ, իբրև հայր բազմագորով զթասցի ի նոսա, և դատեսցէ զդատաստան նոցա, և առցէ զվրէժ ի Թշնամեաց նոցա, խոստագոյն և պատժելով զնոսա քան զիսրայէլ։ Վասնզի սրեաւք զսուսեր արդարութեան իւրոյ, որ իբրև զվիպալակն, և իբրև զշանթ երկնից արագ հառանիցէ սատակել զնոսա. և զնետս սրամտութեան իւրոյ արբեցուսցէ յարիւնէ վիրաւորաց. և սուր նորա կերիցէ զմիս նոցա՝ որք գերեցին զիսրայէլ. և բարձցէ զձագ ի գլխոց իշխանաց նոցա։ Օ քոյց ահարկու և սքանչելի, որ առաւել ասէ, քան զոր ինչ մարթի էր յաւելուլ առ ի ընդլայնել զայն. որ զանհնարինն յաստուծն ոչ ընդդէմ հեթանոսաց հալածչաց իսրայէլի յայտ առնէ։

Օ կնի այսորիկ՝ որպէս թէ նոր ազգաւոյն մարգարէական առեալ մխիթի վասն հանդերձեալ բարութեանէ որդւոց իսրայէլի, յանկարծ իւն ընդհատանէ զընթացս բանից սպառնալեաց, և փոխեալ զբարբառ իւր՝ ձայնէ յերկինս ուրախ լինել ընդ իսրայէլի. կոչէ և զազգս հեթանոսաց խնդակից լինել նոցա վասն սքանչելի փրկութեան նոցա. զի

սրբեսցէ ամէն ի նոցա յամենայն աղտեղութենէ
մեղաց ժողովրդեան իւրոյ, և ի պղծութենէ հեթա-
նոսաց, յորժամ առնուցու զվրէժ ի հրէից և ի հե-
թանոսաց։ Այսուհետև հնչելով մովսիսի զմարգարէա-
կան օրհնութիւնն իւր, որ և լրիւ համաստատութիւն
կամ բովանդակութիւն պատմութիւնն սրդւոց իսրայե-
լի, պատուիրէ նոցա զգուշութիւն առնուլ ի միա
զայս ահարկու մարգարէութենէ, և ուսուցանել որդ-
ւոց իւրեանց և թոռանց, յազգէ ազգ պահել և
առնել զամենայն բանս օրինացս այսոցիկ. որ և
կեանք հոգւոյ և մարմնոյ։ Այս յերեսի, զի մինչ
զգուշանային պահպանութենէ պատուիրանացս այսո-
ցիկ, յամենայն երջանկութենէ վայելէին ընդ հայ-
բագութիւն խնամոք տեառն իւրոց. և իբրև ամբարշտա-
ապստամբէին ի բարերար տեառնէ, ամենայն չարիք
հասանէին ի վերայ նոցա. մինչև հուսկ ուրեմն
մեղս ի վերայ մեղաց յաւելեալ ի վերջին ծայր
հասուցին զանօրէնութիւն իւրեանց, զբնաստա-
ղծմարիտ թագաւոր իւրեանց ուրանալով. յոր
սակս և ամենայն ապստամբիք մարգարէական եր-
գս այս հասին ի վերայ նոցա։

Գլ. Զ.

Ա Էրէին կաթ մովսէսի առն աստուծոյ իսրայէլի ըստ
ցեղից ցեղից, և խոնարհ իւր յաշխարհէ,

օրհնութեանէ յիշատակէ զմեծասքանչ փառաւորութիւն՝ յերևելի նորա ահեղահրաշ նշանօք ՚ի տալ զօրինս ՚ի սինեականն լերինն։ Ապա ըստ օրինակի նահապետին յակոբայ կարգէ զբանս օրհնութեան առ իւրաքանչիւր ցեղ. գուշակելով առաւելս և պակասութիւնք զաւակին երկրին, զոր ՚ի մօտոյ հանդերձեալ էին ժառանգել յերկրին աւետեաց վինձակաւ. և զայսդայ գլխաւոր դիպուածս անցնիւր ցեղի։

Եւ ասէ Մովսէս. կեցցէ Ռուբէն, և մի մեռցի. որով յայտ առնէ, թէ յաւել յակոբայ առ նա՝ * Երբեմն զջուր մի եռասցիս ։ ՃՂՒ. Խե. 4. ոչ եթէ զբառնալ ցեղի նորա գուշակէ. այլ թէ մնասցի, բայց ոչ լինիցի այնպէս բարգաւաճեալ բազմութիւն որգւոց, որպէս լինելոց էր ըստ որում անգրանիկ, եթէ չէր անօրինեալ առ հայրն ազգապղծութիւն. իսկ յասել եօթանասնից՝ որպէս և մերս Թարգմանութիւն, * Եւ եղիցի քաղմաւոր՝ Թուով։ կամի ասել՝ թէ բազմութիւն ցեղին նորա եղիցի Թուով, այսինքն չափաւոր։ Եւ յուդա խօսելով, գուշակէ զկղզի զօրութիւն ցեղին նորա ՚ի պատերազմի, և զիաւաւորութիւնն, զոր հանդերձեալ էր ունել ՚ի թագաւորաց իւրոց. ՚ի յաղթահարել նոցա և ՚ի նուաճել օգնականութիւն նոցա զնշանակեալ ժողովրդեան նմա. միանգամայն և զթագաւոր թագաւորաց ակնարկէ, որ գալոց էր ՚ի ցեղէ անտի յուդայի։ Եւ ցեղն իւր զնեայ հաստատէ զիշխանութիւնն քահանայական, պատմել և քարոզել զօրէնս և զիրաւունս նմա ժողովրդեան, և խնկով և զոհիւք ցածուցանել ՚ի ժողովրդենէ զպարկութիւնն։ զոր և աղաչէ հաձութիւն ընդունել, և օրհնել զգործս ձեռաց նոցա, և խորտակել զնհնամիս։ Լևենիամին դի գուշակէ ունել զտաձար նմա ՚ի բաժնի իւրում, աւր բնակեսցէ նա, և պաշտպանեսցէ նմա զամենայն աւուրս։ Զանգի քաղաքն երուսաղէմ էր սահմանագլուխ ՚ի մէջ ցեղին յուդայ և բենիամինի. վասն որոյ առ երկոսին հայէր. Հարաւային մասն առ յուդա, իսկ հիւսիսայինն առ բենիամին. նմին

իրի և ՝ի՛ գիւղք ուրեք բենիամինի տան, և ուրեք յուդայի։

Ա՛ւ տուն յովսեփայ, որ բաժանեալ էր յերկու ցեղս ըստ երկուց որդւոց նորա եփրեմի և մանասէի, ընդարձակ մնային հանդերձ յակոբայ զբանս օրհնութեանն վասն զօրութեան և քաջութեան նորա՛ի վանել զնշանախ, զոր առակի կեղջիւր միեղջերուի. և վասն առատապէղ արգասաւորութեան ժառանգութեանն նոցա, և բազմաւորութեանն զաւակաց։ Օ՛ աթոռոյնի գուշակ վիճակիլ ժառանգութեանն առ ծովեզեր մեծի ծովուն, և հարստանալ ծովային շահավաճառութեամբ. քանզի առ զաթուղն հայի գրեալն գինի անուան խաւքարայ. * Օ՛ մեծութեան ծովու դիեցուսցէ քեզ, և զշահավաճառաց առ ծովեզը բնակելոց»։ Օ՛ խաւքարայ ասէ անվրդով միաբ՝ի բնակութենանս իւր՝ տալով զանձն խաղաղութեամբ՝ի մշակութիւն երկրի. ըստ առաջելոցն՝ի յակոբայ, * Ցեսեալ... զերկիրն՝ գի պարարտ էր, եւ զուսիւբ աշխատել. և եղև այր արգիւնաբար»։ ՅՆ. ԽՆ. 15։ Ա՛ման գաղայ ասէ. օրհնեալ որ ընդարձակեաց գաղայ. այս օրհնութիւն երևի հայել՝ի յեփթայէ. որ զօրութեամբ իւրով ընդարձակեաց զսահմանս ցեղին գադայ։ Ա՛ւ դան ասէ, դան կորիւն առիւծու. մարգարէանալով վասն սամփսոնի եղելոյ՝ի ցեղէն դանայ. որ պատառեաց զառիւծ, և կոտորեաց զփղշտացիս։ Օ՛ն եվթաղիմայ ասէ, թէ վիճակ նորա եղիցի զուարճալի և արգաւանդաւոր առատացեալ իբրև զծով աւենայն բարեօք։ Խոկ ասեր եղիցի ասէ բազմաբեղուն, ընտիր և գեղեցիկ զաւակօք, սիրելի եղբարց. ձոխ ընչիւք, և հզօր. զոր առակի՝ի կոշիկ երկաթի և պղնձի։

Ա՛յլ զարմանք են, զի մնային յայսմ մարգարէական օրհնութեանն մի մի յիշատակի զամենայն ցեղս որդւոց իսրայէլի, իսկ զշմաւոնէ լռէ բնաւին. ուր նա երիցագոյն էր քան զայլս՝ երկրորդ զկնի անդրանկին ռուբինի, ծնունդ լեայ, և ՚ի աղախնոյ։ Ա՛յս լռութեն չերևի անպատճառ. զոր

մէ պէսպէս են կարծիք վարդապետաց . ոմանք ասեն՝ Թէ օրհնուածն շմաւոնի փակի յօրհնուածէ անդ յուզայն . զի ժառանգուածն նոցա վիճակեցաւ սահմանակից միաւանց , և ցեղն շմաւոնի եմուտ և խառնեցաւ ՚ի բաժնի երկրին ցեղին յուդայի . որով ՚ի մէջ երկոցունց ցեղից եղև սերտ միաբանութիւն և կցորդութիւն . որպէս յայտ է . ՅԵՒ . ԺԸ . ւ . * [1] եղև ժառանգութիւն նոցա (որդւոց շմաւոնի) ՚ի մէջ վիճակի որդւոցն յուդայի ‖ : [1] Այլք ասեն՝ յաղագս անօրինութեանն , զոր անօրինեցաւ շմաւոն ՚ի յովսէփ՝ առաջին լինելով չամբարիշտ խորհրդեանն սպանանելոյ կամ վաճառելոյ զյովսէփ . բայց ՚ի պատմութենէ անդ անցիցն յովսէփայ ոչ գտանեմք ուրեք յանուանէ յիշատակեալ զշմաւոն . գուցէ զայս գուշակեն ՚ի կապելոյ յովսեփայ զշմաւոն , յորժամ ընդ եղբարցդ իւրոց գնաց յեգիպտոս առ յովսէփ վասն ցորենոյ : [1] Այլք՝ որպէս երևի , լաւ ևս ասեն՝ լռել մովսիսի զշմաւոնի , ՚ի պատիժ ա պատմելոյ ապստամբութեան ցեղին նորա . որք յամենայն չարաչար տրտունջս և ՚ի հեստութիւնս յանապատի անդ ընդ ամն երեսուն և ութ՝ միշտ յանդգնագոյն գտան . ևս առաւել ՚ի փորձութենէ անդ գտերայն մադիամու և մովաբայ , օրինակ ունելով կռապաշտութենէ և պղծագործութենէ զգամբրի զիշխան ցեղի իւրեանց . նմին իրի և Հարուածք ՚ի ՅՈՒՆԷ առաւել չապէս ՚ի նոսա զեղան . որով ցեղն շմաւոնի նուազ զեցաւ յայժ , որպէս ՚ի վեր անդր նշանակեցաք . վասն այնորիկ և մովսէս լաւ ևս վարկաւ լռել , քան Թէ ընդ այլոց օրհնելով և զնա՝ երևիլ քերել զմեզս նորա , կամ յիշատակելով զմեղսն՝ հրապարակաւ նշաւակել անդ ՚ի վերջին հրաժարական աւետաւոսութենէ իւրում :

Յետ խօսելոյ մովսիսի զայս ամենայն իբրև կատարեալ նահապետական , և իբրև պատգամ մարգարէական , լռեաց . անպատեհ այնուհետև համարելով խօսիլ ՚ի լեզու մարդոյ . զի գիտէր Թէ հասեալ է ժամ նորա փոխիլ առ Ա՛ՆՆ : Վասն որոյ ըստ հրամանի Ա՛ՆՆ ուղղեաց զինացս դէպ ուղիղ ՚ի

լեառն նաբաւ լերկրին մովաբայ. և ամենայն ժո-
ղովուրդն դէտակն կալեալ հայէր զկնի նորա ցա-
ւագին հեծութեբ, և յորդահոս արտասուօք. զի ոչ
գոյր ումբք հրաման անձամբ յօղարկել զնա: Ա՛պա
մովսէս միայն ընդ միայն եւ 'ի լեառն, զմիքայէլ
հրեշտակապետն ունելով իւր ուղեկից. զի ըստ
հաստատագոյն կարծեաց վարդապետաց, նա էր՝
որ յամենայն ժամանակս երևեալ խօսեր ընդ մով-
սիսէ 'ի դիմաց Ա՛յ՝ իբր նորին անմիջական պատ-
գամաւոր, ուստի և ՅՃծոգետական իշխանութեբ.
որպէս և ասաց՝ նա ինքն ցուցեալ մովսիսէ զերկիրն
աւետեաց ամենայն մասամբք, ասաց 'ի դիմաց Ա՛յ.
* Ա՛յս է երկիրն, զոր երդուայ աբրահամու և սա-
հակայ և յակոբայ . . . ցուցի աչօք քով, և անդր
մի մտցես ‖. Ե. օրին. լբ. 4. և անդ մեռաւ մովսէս
աւանդեալ զհոգին 'ի ձեռս Ա՛յ, և զմարմինն Թո-
ղեալ 'ի ձեռին հրեշտակին:

Ա՛հա զայս օրինակ վախճանեցաւ մեծն այն, և
գերահռչակ օրէնսդիրն՝ նախամարգարէն մովսէս, և
ննջեաց յանդորր խաղաղութեբ. զի և ո՛չ ախտա-
կրութեբ ինչ, կամ բնածին զօրութեբ նուազութիւն բաղմ-
ամեան հասակին եբարձ 'ի նմանէ զառոյգ և զան-
ցաւ կեանս նորա: Էարբիւր և քսան ամաց էր,
բայց այնպէս քաջառողջ էր և կորովի, զի ոչ աչք
նորա վատեցին, ոչ ատամունք նորա անկան կամ
խախտեցան. և ոչ ծնօտք նորա խորշոմեցան:
Ա՛ահ նորա եղև հանդարտիկ անյաւտութիւն սրբաս-
նեալ հոգւոյ նորա յառողջ մարմնոյ. զի այնպէս էր
հրաման Ա՛յ: Լ՛ակաց ամն քառասուն յարբունիս
եգիպտոսի իբրև արքայորդի, և ուսաւ զամենայն
իմաստութեբ եգիպտացւոց. այլ միշտ խոնարհ հա-
մեստ և 'ի չափու ունելով զանձն: Ա՛յնպէս և
իբրև մարդ սոսկական ամն քառասուն եկաց 'ի
ծառայութեբ անեբոյ իւրոյ 'ի հալուեբ զհօտ խա-
շանց նորա, այլ յանապատի անդ կրեբեր զանձն 'ի
մեծագոյն պաշտօնատարութեբ, ունելով միշտ միտս
աղնուականս, և ոգի իշխանական: Վարձեալ ընդ-
ամն քառասուն եղև իշխան և առաջնորդ անհա-

մաը Ժողովրդեան . այլ ոչ երբեք եգիտ ՚ի սիրտ նորա մուտ գնել զայն ինչ կայծակն մնափառու-թեն կամ ամբարտաւանութեն ։ ՚Ի ձեռս իւր էր ընտրել զմի յերկուց աստղ , այսինքն կամ զաջա-րանս տառապեալ աղգատոհմին երրայեցւոց , որ ծնաւ զնա , և կամ զիշխանաշուք վիճակն որդե-դրութեն գետերն փարաւոնի . սակայն լաւ համա-րեցաւ չարչարակից Ժողովրդեան ազգին իւրոյ լի-նել , քան վայելել ՚ի փառս թագաւորութեն եգիպ-տացւոց ։

Այլև այր հեզ քան զամենայն մարդիկ աշխար-հի . բայց և փութաջան քան զամենեսեան և արի ՚ի կառավարութեն . հեզութեն նորա ոչ երբեք փո-խեցաւ ՚ի գարովելի մեղկութեն . և ոչ անդամադաղ արիութեն նորա արար զնա դահավիժ յանխորհուրդ ձեռնարկուն ։ Այլ երբեք եղև վրէժխնդիր անիրա-ւութեց ընդդէմ անձին . և զզօրաւոր գաւազանն , զոր ՚ի ձեռին նորա , չայլ ինչ երբեք ոչ վարեաց ՚ի գործ , բայց միայն ՚ի հարկանել զքննա-միս ՚ի՝ զընդդիմամարտս հասարակաց բարւոյ , և ՚ի դիւրել Ժողովրդեան իւրոյ ։ Իբրև դատաւոր՝ դատակնքեաց ՚ի մահ վերիս հազարս առ մի նուագ . և քան և չորս հազարս այլ անգամ . բայց իբրև աղերսարկու փաստաբան ապրեցոյց զբիւրաւորս մեղուցելոց ։ Այլև մեծ առ կենդանութեն . զի ՚ի մանուկս ընդհայ ՚ի՝ եղև քահանայապետ , և օրհնեալ իմաստուն , մանաւանդ թէ կենդանի և հոգեթափեալ օրինք զամենայն աւուրս կենաց իւրոց . և մարգարէ , որոյ զուգական ոչ ևս եկաց մարգա-րէ ՚ի մէջ իսրայէլի , զոր ծանեաւ ՚ի՝ դէմ յանդի-ման՝ ասէ հոգին սբ , յայտ արարեալ զառանձին հաճութեն և զսէր ՚ի՝ առնս ։ Այլև թագաւոր յոգ-նաթիւ Ժողովրդեան . բայց ոչ երբեք մոռացաւ ունել ՚ի վերայ իւր գերագոյն ՚ի՝ զօծ . զամենայն ՃԻգն անձին ՚ի կիր արկեալ առ ՚ի զպարտս մեծի պաշտաման իւրոյ անթերի տանել ՚ի գլուխ ՚ի փառս նորա , և յօգուտ և յուղղութեն ՚ի սրբութեն և յեր-քանկութեն Ժողովրդեան իւրոյ ։ Այլև մեծ և զինչ

մահուան · վասն զի ՚ի կենդանութեան եղև ձըգ-
մարիտ ծառայ ՚ին, և հաւատարիմ յամենայն ՚ի
տան նորա, գոլով ձախացեալ ամենայն հանգա-
մանօք վայելչականօք ձչմարիտ ծառայի ՚ին· զի
եղև քաղցր, բարեբար՝ մարդասէր՝ արդար, սո-
կեղծ, համբերօղ՝ երկայնամիտ, նախանձախնդիր
բարեաց, և անոխակալ· և միանգամայն ասել՝
եղև կատարեալ պատկեր, և մեքենայիլ օրինակ
ամենայն թագաւորաց և իշխանաց։

Օ կնի մահուան մովսիսի եղև հակառակութիւն
մեծ ՚ի միջ միքայելի հրեշտակապետին և բանասար-
կուին սատանայի· սա ամենայն զօրութիւք պնդէր
փոխադրել զմարմին նորա յերկիրն աւետեաց· զի
ամենեքին ըստ ժամանակին ձգել նովաւ զորդիս իս-
րայելի ՚ի կռապաշտութիւն, տալով նոցա զինծայինն
պաշտօն ընծայել նմա։ Իսկ միքայել աւետանելով
զվտանգն մեծ՝ ընդդէմ եկայ նմա, և ոչ իշխեալով
ինքնին կամ իւրով իշխանութիւք մերժել զայն չար,
անուամբ ՚ին սատանայ նմա՝ ՚ի բաց հալածեաց
զնա· և զսրբասանեալ մարմինն զայն թաղեաց ՚ի
ձորն մովաբայ մերձ ՚ի տունն փոգովրայ· և այն-
պէս անհետ արար զգերեզմանն նորա, զի ոչ ոք ՚ի
մարդկանէ գիտայ երբեք զայն՝ մինչ յայնժամ և ոչ
յետոյ մինչև ցայսօր։ Իսկ որդիքն իսրայելի լացին
և սուգ առին ՚ի վերայ մովսիսի աւուրս երեսուն։
Արդ՝ մեռաւ մովսէս՝ որպէս երևի, ՚ի վերջին
աւուր ամենեցուն մատաղորդւոյ ամին քառասուն-
րորդի ելից իսրայելի յեգիպտոսէ· յամի աշխարհի
ըստ կաղինոսի ՃՁՂՃ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԳԼՈՒԽ Ի·

Տեառնէ պաճուճեցաւ երանելւոյն Յոբայ պատմուց, առ ձամանաիսւոյ մովսէսի ։

Զկ մարթի հաւաստեաւ հաստատել զժամանակի յոբայ · վասն զի ոչ գիտեմք զժամանակ ծննդեան և մահուան նորա · այլ զի ՚ի գիրն երրորդ ասէ զնա լեսուայ , և հինգերորդ յաբրահամ՝ ՚ի ոչ արկեալ զաբրահամ ՚ի Թիւ , հաւանական երևի Թէ եկաց նա յայնմ դարու յորում որդիքն իսրայէլ լեգիպտոս պանդխտէին ։ Վ ասն որոյ հայեցեալ ՚ի կարդ ժամանակին , յարմարագոյն տեղի նորա էր յառաջ քան զելս նոցա լեգիպտոսէ · այլ կամեցեալ անընդմիջահատ աւանդել զամենայն անցս որդւոցն իսրայէլի մինչև ցվախճան մովսիսի , և ցմուտ նոցա յերկիրն աւետեաց , ՚ի գէպ դատեցաք աստ յիշատակել զպատմուԹիւն անցից նորա՝ որչափ ինչ ունիմք ՚ի ՚ձեռ գրոց ։ Վ այլ ՚ուր և դիցի , յամենայնի գտանիցէ վերս արժանաւոր տեղի այս այլ աքանչելի , որ ՚ի վեր քան զօրինեան առաքինացաւ , և հաղարաւոր ամաց յառաջ քան զաւետարանին՝ փայլեցոյց յանձն իւր զաւետարանական առաքինուԹիս ։

Վ ասդ Յոբ , որ՝ ըստ որում ունիմք ՚ի ԹարգմանուԹենէ եօԹանեանից , յառաջին կոչէր յոբաբ , էր որդի զարՀի որգւոյ եսաւայ · և քանակեր յերկրին աւստացւոց , (կամ ըստ ակիւզասայ և ոսկեբերանի՝ յերկիրն Հուս ,) այսպիսս կոչեցեալ յասելդ գլխաւոր քաղաքին , որ էր յաշխարհին եդոմացւոց · զոր նշանակէ և երեմիա յողբսն , յասել անդ · * Ցնծա՛ դու և ուրախ լեր դուստր եդոմացւոց ,

որ բնակեալք ես յերկրիդ աւստացւոց ։ ՈՂԲ. Ը. 21 ։ Այլ էր մի յիշխանաց անտի երկրին, զորս պիրն Թագաւորս կոչէ. ՅՈՒՆ. ԼԲ. 33. քաղմնհաբուստ ընչիւք, զի էին նորա խաչինք եօթն հազար. ուղտք երեք հազարք. լուծք եզանց հինգ հարիւր. և միանգամայն ասել՝ մեծ և ազնուական ըստ աստուածային գրոցն, քան զամենայն արևելեայսն՝ սկսեալ յեդովմայեցւոց մինչև ի հայաստան. վասն որոյ եղև ասել ոմանց զնա յաշխարհին հայոց լինել։

Յայն ամենայն մեծութիւնս իւր էր այլ կատարեալ ամենայն բարեմասնութիւք, անարատ, արդար, ճշմարիտ, ածապաշտ, մեկնեալ յամենայն իրաց չարութենէ մեզայ՝ առ Աստ, և առ մարդիկ. ի մանկութենէ յարեալ սիրով առ Աստ, որում յամենայն գժդնդակ փորձութիւնս անխորտակելի արիութիւք եկաց մեծաց միւռ հաւատարիմ։ Այն նորա ուստերք՝ ըստ ոմանց՝ եօթն. զոր թերևս առնուն յեօթն ուստերաց, որք յետ փորձութեացն ծնան նմա. զի յառաջ քան զայն՝ չէք ուրեք նշանակեալ թիւ ուստերացն, այլ միայն դստերացն՝ թէ էին երեք ։ Որդիք նորա միաբանեալ առնէին խրախութիւնս. ոչ ընդ օթասս, այլ ընդ միմեանս՝ իւրաքանչիւր ի տան իւրում՝ ի սահմանեալ աւուրսն որք անկանէին նոցա, առեալ ընդ իւրեանս և զերեսին քորս իւրեանց ուտել և ըմպել ընդ նոսա ։ Երբև յանգ ելանէին աւուրքն խրախութեանց, յղէ հայր նոցա առաքեր ըզ երեկս և կոչէր զնոսա առ ինքն սրբել զնոսա. և յարուցեալ ընդ առաւօտս մատուցանէր վասն նոցա զոհս ըստ թուոյ նոցա զուարակ մի. քանզի կասկածէր թէ գուցէ յայն խրախութեան իցեն ինչ յանցեալ ընդդէմ Աստ՝ թէ ոչ գործով, գէթ խորհրդով։ Այսպէս երկիւղած էր և զգուշաւոր այրն սուրբ։

Այլև երբեմն, զի մինչդեռ հրեշտակք պահապանք տան յոբայ խորհուրդ ի մէջ առնուին՝ թէ զնմանէ ունկնկին վարիլ ընդ նմա ի փորձութեան, որ ընդ հուպ հանդերձեալ էր հասանել ի վերայ առն արդարոյ՝ զոր Աստ յայտնեալ էր նոցա, ահա

Էին անդ և սատանայ ։ Եւ ՚ի գովել նախագահ հրեշտակին , որ կայր անդ ՚ի դէմս ՚ին , զդեղեցիկ ծածկոյտութիւն յոքայ , եւս պատասխանի սատանայ. Ահեղ ձրի պաշտիցէ յոք զնո . ո՞ւր դու ամրացուցեր զարտաքին և զներքին տան նորա , լիացուցանելով զնա առնոյն բարեօք . արդ բարձ դու միանգամ ՚ի նմանէ զառնոյն ինչս նորա , և տեսցես՝ զի չերեսս իսկ անիծանիցէ զքեզ ։ Եւ ՚ի տալ նմա հրեշտակն ՚ի կողմանէ ՚ին՝ հրամայեաց ՚ի վերայ առնոյն ընչից նորա , բայց ՚ի մարմնոյն , մնկնեցաւ անտի սատանայ . և ահա վաղվաղակի սկսան դուժկանք միմեանց զկնի հասանել առ յոբ ։

Առաջինն եղև ի նմին չեզնաւարաց անտի , որ եկեալ հեկեկալով ասէ ցյոբ ցոր իւր . մինչդեռ հարկիք եզանցն վարէին զերկիր , և էշ մատակք արածէին առ նոքօք , ահա եհաս խուժք ի աւազակաց , և առեալ յափշտակեցին զնոսա և տարան . և զչեզնաւարան կոտորեցին առ հասարակ . ինձ միայնուի յաջողեցաւ փրկել զանձն իմ ՚ի ձեռաց նոցա , գալ և գուժել քեզ զդիպուածն ։ Այնչափ եր նորա ասարտեալ զբան իւր , եհաս երկրորդ գուժարկուն դողուիթ , և ասէ բեկբեկելով զբան իւր . ահա եղ յանկարծակի ահաւոր մրրիկ , յորմէ կարկտաբար թօթափեալ հրաւառն յանդիպ երկնից , հարին և այրեցին զհօտսն , զնդ նոսին և զհովիւսն . ես միայն զերծայ կենդանի , զի եկից և պատմեցից քեզ ։ Եւ մինչդեռ սա խօսէր , եհաս ՚ի վերայ երորրդն , և ասէ . ասպատակաւորք հասին առ մեզ , որոց բաժանեալ յերիս առաջս , պատեցին զուղտսն և տարեալ գերեցին զնոսա . և զմնացեալսն որք գխմակալ եղեն նոցա՝ կոտորեցին սրով. Ես միայն ՚ի նոցանէ ապրեալ՝ եկի պատմել քեզ ։ Զևս էր սորա գադարեալ ՚ի պատմելոյ , ահա եհաս և չորրորդն գուժաբեր գառնագոյն քան զերիս առաջինն , և ասէ . մինչդեռ ուստերք քո և դստերք քո ուտէին և ըմպէին առ երիցս եղբօր իւրեանց , հողմն մեծ յանկարծակի եկեալ յանապատէ՝ եհար զչորեսին անկիւնս տանն . և անկաւ տունն և ամե-

նեքեան մեռան. եւ միայն ասլբեալ՝ եկի պատմել քեզ իբրև ականատես վկայ։

Այս ամենայն կորուստ միանգամայն հասեալ ի վերայ յոբայ, չեղեն բաւական քան ի անհամբերութեանն հանել ի բերանոյ կամ ի սրտէ անյաղթելի նահատակին։ * Այլ յայսմ ամենայնի անցս (ասէ գիր) որ անցին ընդ նա, ոչ մեղաւ յոբ առաջի տեառն, եւ ոչ եղեւ անզգամութիւն ։ Այլ յարուցեալ յոբ յաթոռոյ՝ պատառեաց զհանդերձս իւր, եւ կարեաց զվարսս գլխոյ իւրոյ ի նշան սգոյ. եւ անկեալ ի գետին՝ երկիր երպագ ծածկին անտեսութեանց, խոստովանելով զանձն կատարեալ սրտիւ հնազանդ յամենայնի կամացն ։ Եւ որպէս սիրէր զնա իբրև առատապարգեւ՝ յորժամ մեծացուցանէր զնա , նոյնսիրելեակ սիրեաց և իբր տէր բառնալոյ զայն ամենայն , զոր եբարձ ի նմանէ ։ * Ելը եղաւ , և ոչ եղեւ. որպէս տէն հաճոյ թուեցաւ , նոյնպէս և եղև. եղիցի անուն տեն օրհնեալ ։

Այս անգամ ոչ մերձեցաւ սատանայ ի մարմին սրբոյ նահատակին. զի չունէր առ այն հրաման. բայց զկնի սակաւուց ընկալաւ ի տենէ և զայն ։ Վասն զի լեռ այս ամենայն հարուածոց երևեալ ի սատանայէ առաջի հրեշտակի տեն. և ի հարկանել հրեշտակին յերեսս նորա զառաքասլարտ ղեսլարտութիւնս զոր արար գյոբայ, զի ահա ասէ լեռ այն ամենայն չարեաց զոր հասուցեր նմա, նա տակաւին կայ ինայ անդրդուելի յիւրում հաւատարմութեանէ առ տէն. եւ սատանայի սատանայ. այդչ ինչ մեծ. վասն զի ամենայն ինաքն այնպիսիկ են արտաքոյ մարմնոյ նորա. յորժամ զրկի մարդ յընչից իւրոց, միայն թէ անձն նորա անվնաս պահեսցի. ասալ թէ ոչ անկ հրամանն տուր ինձ արկանել ձեռն զսակերաք և զմարմնով նորա, եթէ ոչ յայտնի իսկ հայհոյեսցէ զքեզ ։ Եւ նմա հրեշտակն ի դիմաց ոչ և զայն հրամայեաց. բայց պատուիրեաց չքատնալ զկեանս նորա ։ Եւ ահա նոյն ժամայն ելաւ մարմին երանելի նահատակին չարաչար ժահահոտ թարախալից կեղտով յոտից մինչև

ցգլուխ. մինչ զի առ անհնարին նեխոյ չէր հնար մարդոյ մերձենալ ի նա: Ապա որոյ ելեալ ի քնակութէ, նստէր յաղբեւս արտաքոյ քաղաքին. և առեալ խեցի ի ձեռին՝ ինքնին քերէր զկէղն, քանալ էլս փտեալ որդնալից թարախոյ:

Յակ կին նորա՝ թէպէտև բարի, որպէս վերջին երջանիկ ելք հայուածոցն յոբայ ցուցանէն, սակայն յայնչափ մեծութէ և յերջանկութէ յանկարծ ինն յայն յետին թշուառութէն հասեալ, մինչ ոչ ևս ակնունել ուստեք օգնութէն, ընդ մեծութեան կորուանելով և զորդիս յորս ունէր յուսալ, մանաւանդ զաբեպաշտութէն իւր. և այսպէս չկնելով յաւ թափել զդառնութէն սրտի իւրոյ՝ յարձակեցաւ ի վերայ սրբոյ նահատակին, յայսմ մասին և ինքն լինելով գործի սատանայի: Օ՛ի (որպէս ունին Հոթանասունք, որ սկսեալ ի լատինն) ասէ. մինչև յերբ ժուժկալեալ սիցիս, թէ ահա համբերեցից՝ տակաւին սակաւ ինչ ժամանակ ակնկալեալ փրկութէ իմոյ: Այս զինչ ակնկալուն կայցէ քեզ, զի ահա որդիք և դստերք՝ իմոյ որովայնի երկունք, և տան քո նեգուկք հաստատութէ՝ կորեան. որով և յիշատակ քո բարձաւ յերկրէ: Դու ինքնին ի զազրութէ որդանց նստիս օթևպայեալ բացականս. և ես մնայրեալ և հարկահար տուն ի տանէ, և տեղի ի տեղւոջէ, սպասեմ թէ երբ մտանիցէ արեգական, զի հանգեայց ի տառապանաց իմոց: Մինչև ցաստ լռեաց յոբ. տեսեալ զի ի գառնութէ սրտին խօսի. այլ իբրև սկսաւ յորդորել զնա բանս տրտնջանաց խօսել ընդդէմ Ա՛ստ, որպէս զի հարցէ զնա ևս և մեղցի, յայնժամ զայրագին աչօք հայեցեալ ի նա յոբայ՝ ասէ. իբրև զմի ի կանանց անզգամաց խօսեցար. եթէ զբարիսն ընկալաք ի ձեռանէ Տեառն, չարեացս ոչ համբերիցեմք. և լռեաց կինն, զի յամոթ եղև. այլ առաւել ամենով լցաւ սատանայ: Այն որք ասեն թէ կինն ցանկայր մահուն յոբայ, որպէս զի ինքն ազատացեալ յամուսնական կապոյ՝ կարիցէ լինել առն այլում, և այսպէս գտանել անձին պատսպարութէն. զի հատեալ էր զայս իւր ի յոբայ:

Լուր դժնդակ արկածից առնս մեծի վաղվա-
ղակի սփռեցաւ ի շրջակայ սահմանս երկրին. զոր
իբրև լսեան երեք բարեկամք նորա՝ եղիփազ ար-
քայ Թեմիացւոց, բաղդատ բռնաւոր սահեցւոց, և
սովփար արքայ մինեցւոց, եկին յիւրաքանչիւր աշ-
խարհէ առ նա միաբան միխթարել և սփոփել զնա.
յորս յետոյ յաւելաւ և չորրորդն. նա է եղիուս
բարաքիելի բուզացի: Լուեալ զնա ի բացուստ
յայն ողբմալի վիճակ, ոչ կարէին ձանաչել. յայն-
ժամ բարբառ արձակեալ՝ լացին մեծաձայն. և պա-
տառեցին իւրաքանչիւր զպատմուճան իւր, և ցա-
նեցին հող զլխով իւրեանց, և նստեալ առ նովաւ
ի գետին զեօթն օր և զեօթն գիշեր սաստկմամբ
մեծաւ, ոչ ոք ի նոցանէ զօրեաց բան մի խօսել
առ նա: Լուեալ ապա ուրեմն ինքն յոբ եհատ զեօթն
օրեայ լռութիւն՝ բանիւք, որք ի բերան նորա ցո-
ցանէին ցաւ և դառնութիւն ընդ ծննդիլ իւր յաշ-
խարհ, անիծանելով զօրն յորում ծնաւ: Յայնժամ
և բարեկամք նորա սկսան խօսել. և որք եկին
միխթարել զնա, դարձան նմա ոսոխք. և փոխա-
նակ սփոփելոյ և միխթարելոյ՝ ի պայքար բանից
բռնադատեցին զնա: Վանգղի տարապայման նա-
խանձայուզութիւք ջանային ածել զանձին ի զեղջ
և յասպաւէս ի վերայ մեղայ իւրոյ. պնդեալով հա-
ւանեցուցանել նմա զայն ինչ, որ սուտ էր, թէ
ահա ոչ երբեք առաքէ ումեք վիշաս, եթէ ոչ ի
պատիժ մեղայ:

Սակ յոբ ընդդէմ նոցա պնդէր զայն՝ որ ամե-
նայն իրաւք ձշմարիտ էր. որում քաջ վկայէր և խիղճ
մտաց նորա, թէ ոճ յաստի կեանս առաքէ վիշաս
ոչ միայն մեղաւորաց, այլ նաև արդարոց. և զայն
առնէ ըստ իւրոյ անքննին եռ և միշտ երկրպագելի
խորհրդոյ: Ի տանջել զարդարս յաստի կեանս՝
տայ զարհուրիլ մեղաւորաց, ցուցանէ զամենակա-
տար հրովրէին իւր ի վերայ ամենայն մարդկան,
առնէ՝ զի փայլեսցի յաչս աշխարհի հաւատարմու-
թիւն և հաստատութիւն իւրոյ սիրելեաց. տայ նոցա
պատճառս մեծամեծ վարձուց. և քաջ գիտէ պատ-

կել զարհական համբերութեի նոցա ի հանդերձեալ աշխարհի. և թէ այս է ապացոյց՝ զի կայ և այլ կեանք անզգաւ յետ այսր անցաւոր կենաց։ Այս թէ ոչ՝ ըստ արդար դատաստանի իւրում ոչ տայր ամ աստ յաջողութեի իւրոց հնազանդից, և ոչ տա ռասպանս իւրոց սիրելեաց, եթէ վասն սոցա, և վասն նոցա չունէր պատրաստեալ յայլում աշխարհի զարժանակշիռ հատուցումն։ Այս ևս՝ եթէ նեղու թիքն գայեն միայն ի պատիժ մեղաց, ինքն վկայու թիւ խլէի մնաց իւրոց կարօղ էր ի դատ մնանել ընդ ոմ, և յուցանել թէ հարուածք իւր մեծ են յոյժ քան զյանցաւածս իւր. առ որ և զմեծ իսկ կոչէ վկայ։ Ասկայն ինքն երկիրպագանէ ամենայն նախախնամութեին. և ամենայն խոնարհութիւ սրտի և հպատակութիւ յանձն առնու զայն ամենայն տա ռասպանս. բայց հաւաստի է, թէ չէ այն հասեալ ի վերայ անձին ի պատիժ մեղաց ինչ նորա։ Յանդիմանէ զբարեկամն, զի եկեալ առ նա ի միխիթարել, և փոխանակ պատրաստական կամն ցուցանելոյ ըստ օրինաց բարեկամութե՝ օգնէի ինչ տալ նմա յայն յետին տառապանս նորա, վիշտս ի վշտաց վերայ յաւելուն՝ անդադրիմ վարելով ընդ նմա իբրև ընդ մեծի մեղաւորի։ Ի ինչ երկիցեն, զի ինչ ոչ խնդրէ ի նոցանէ. զի չէ կարօտ օգնութե նոցա ապրեցուցանել զնա ի թշնամեաց. այլ զի եկին ի միխիթարութիւն՝ նստիցին հանդարտեալ, և իրա ւանց ուշ ունիցին. զի ոչ գոյ ի լեզուի իմում ասել անիրաւութե։

Ել առնոյր վախճան վէճն. այլ ահ եմուտ ի մէջ. մեղմով ինն կշտամբեաց զոյր, որ առ արդա րացուցանել զանձն՝ ասաց ինչ ինչ համարձակա գոյնս։ Ցուցանել նմա՝ թէ չէ կարօղ ածային կա րողութե և խնաստութե լինել հասու. յառաջ բերէ լով զպանական արարածս, և զնոցին պէսպէս յատկութե, և զայլևայլ գործս հրաշալիս յերկինս և յերկրի, և ի ջուր, յորս լուսափայլ նորին ամենակալ զօրութե և խնաստութե։ Այլ ի վերայ ամենայնի յայտ արար ածի ի քաջալերութե յոբայ,

Թէ այս ամենայն անցք անցին ընդ նա ի հանգիս արդարութեանն նորա առաջի տիեզերաց. զի այս է ասէրն. * Ի համարիլը այլազգ արարեալ առ քեզ յայտնութեանն, բայց եթէ զի երևեսցին արդար ։ Յոր ձանաչէ յետին խոնարհութիւնն գյանցումն տկարութեանն իւրոյ, խոստովան լինելով թէ բանք ինչ առաւել քան զարժանն ընդմանեցի ելին ի բերանոյ նորա, զմեծամեծս՝ որոց ոչ էր լուալ խելամուտ՝ խօսելով ։ Այս ապաշաւեալ ասէ, յառաջագոյն ի լսելոյ ձանաչելի զքեզ. բայց արդ ի տառապանս իմ աչօք իսկ հոգւոյս իմոյ տեսի զանսահման մեծութիւնդ քո, և զքեզ անձին իմոյ. վասն որոյ խոստացի զանձն՝ և հալեցայ. և համանիմ զանձն իմ հող և մխիթր ։

Յայնժամ ասա դարձոյց ՚ած զբան իւր առ եղկեփազ Թեմանացի, և առ երկու բարեկամն նորա, կշտամբելով զնոսա, զի զբաղ տարտաղարտուց զպատարեցին զյոբ, որպէս թէ վասն մեծամեծ մեղաց նորա հասեալ իցեն այն հարուածք ի վերայ նորա. որով և մեղան ։ Այսն որոյ ասաց նոցա առնուլ եօթն զուարակս և եօթն խոյս, և տանել առ ծառայն իւր յոբ, զի նա ողջակիզս մատուսցէ, և աղօթիս արասցէ վասն նոցա. զի թէ ոչ նմա ակնառեալ էր ասէ, կորուսեալ էր իմ արդեօք զձեզ. և արարին որպէս պատուիրեաց նոցա ՚ած. և ելոյծ զմեղս նոցա վասն յոբայ ։ Այսն չորրորդ բարեկամին, որ նա ինքն էր եղիուս բարաքիելի բուզացի, ջերմագոյն քան զայլս, որ ոչ միայն գյոբ, այլև զայլ երիցագոյն երիս բարեկամս խոտոռգոյնս յանդիմանեաց իբր անկարօդս առ պատասխանի բանից յոբայ, չիք յիշատակ ոչ աստ, և ոչ ի վերոյ՝ ուր խօսեցաւ ՚ած առ երեսին բարեկամս. յորմէ երևի թէ կամ մեկնեալ էր անտի յառաջ քան զնոսօսել ՚ած, և կամ եկաց մնաց յիւրում մեծամտութեանն և ի գոռոզութեան ։

Ի լինել այսմ այսպէս, նոյնհետայն անկան կեղք ի մարմնոյն յոբայ. և գտաւ նա ժիր՝ առ ոյդ, բարեհեսիլ և վայելուչ առաւել քան զոր

էրն յառաջագոյն ։ Այլ լուեալ առնոյն մերձաւոր քոյ և ազգատոհմի նորա զամենայն անցս որ անցին ընդ նա , եկին ամենեքեան ՚ի խնդակցութիւն ընդ նմա . և ուրախութիւն կէրան և արքին առ նմա . և միխիթարեցին զնա . ետուն նմա իւրաքանչիւր մէն մի ոսկի , և չորեքդ բաճկան մի ոսկի անգիր . (ըստ լատ . գինտ մի ոսկի) ։ Յայսմ ինչ էին այն պարգեւք առ հաստատութիւն այնորիկ՝ զոր ետնմա ՚ին . զի քանզ ՚ի կալուածոց երկրին նորա՝ զոր ոչ կարացաւ սատանայ յափշտակել և տանել . հատոյց նմա ՚ին կրկին քան զոր կորոյս . ոչխարս տասն հազար և չորեք հարիւր . (ըստ լատ , չորեքտասան հազար .) ուղտս վեց հազար . լուծս եզանց հազար . էշ մատակ արօտական հազար ։ Այլ կինն նորա ծնաւ նմա ուստերս եօթն , և դստերս երիս . և ոչ գտան՝ ասէ գիրն՝ հաճելիս դստերացն յոբայ աշխուս դոյնք ՚ի ներքոյ երկնից . և յիրաւի՝ զի էին վարձք գերազանց համբերութենն յոբայ ։ Յայսմանէ ուսնիմք խմանալ , թէ կինն յետ լսելոյ զայնդիմանութեն առն իւրոյ յոբայ , ՚ի միտս եկեալ ապաշխարեաց վասն մեզաց անհամբերութենէ իւրոյ . և դարձաւ անդրէն ՚ի հնորհս ՚ին . յորմէ և ընկալաւ նոյնչափ զաւակս , որչափ կորոյս ։ Այլ՝ մարթ է ասել , թէ և յայսմ մասին ետ ՚ին յոբայ կրկին . զի գիտէր յոբ՝ թէ առաջինքն թէպէտ մեռան , բայց ոչ կորեան . գնացին յաշխարհ հեռի , յառաջելով քան զնա . ուր գայցէ օր՝ զի և ինքն երթայցէ զկնի նոցա , և գտցէ զնոսա անդ . և ցնծասցէ ընդ նոսա յանզրաւ կեանն ։

Այն որք յերկարաձգէն զժամանակ տառապանացն յոբայ ընդ ամս եօթն . բայց առանց հաստատուն հիման ։ Այլ թէ խնամով ընթերցցուք զնոր գիրն , գտանեմք ընդ սակաւ ամիսս երկարեալ ։ Յորուստ առնոյն ընչից և որդւոց նորա ՚ի միում աւուր եղև . զկնի սակաւուց յաջորդեաց և կորուստ ողջութենէ մարմնոյ ։ Ուրն սոսկալի անցից առն մեծի և հռչակաւորի չէ մարթ թէ անագանեալ իցէ սփռիլ և հասանել յականջս բարեկա-

մաց նորա . ելին և եկին նոքա վաղվաղակի . և
յետ եօթնօրեայ լուռեն՝ մանն ի վէմ, զոր յիշա-
տակեցաք : Այս վէմ վերջացաւ մտանելով ՚ի
ՀՆ . ընդ նմին վերջ եղև և տառապանացն յոբայ :
Այս կարգ գործոց, առեալ՝ որպէս պարտ է առ-
նուել ըստ բնական ընթացից երից , ոչ գրաւել մե-
ծագոյն ժամանակ՝ քան թէ ամիսս ինչ սակաւս :
Այլ չէ ինչ ընդդէմ այն , որ ըստ եօթանասնից ասի
թէ երբեմն բազում ժամանակ անցանէր ՚ի վերայ ,
ետ կինն զայն ամպարիշտ խորհուրդ առնուն , զոր
փոքր ի յառաջ նշանակեցաք : Վանզի հիւանդու-
թին այսպիսի դժնդակ , բարդայական և ըստ մարդ-
կան խօսելով, որպէս խօսի աստ ՚որ գիրն , թէ-
պետև երիս կամ չորս ամիսս միայն երկարեալ լիցի՝
իրաւամբ կոչի երկար : Այ ասն ամենայն մարդոյ որ
ընդ երիս կամ չորս ամիսս այսպիսի սարսափելի
ախտակրութիւք հիւանդացեալ լիցի , ձշմարտութիւն
ասի թէ եկաց հիւանդ բազում ժամանակս :

Յետ հարուածոյն եկեաց յոբ երանելին՝ համ-
բերողացն նախատիպ՝ կատարեալ յաջողութիւք ասն
հարիւր եօթանասնոն . (ըստ լատ . հարիւր քառա-
սուն .) և ամենայն ամք նորա յառաջ և ղկնի հար-
ուածոյն եղեն երկերիւր քառասուն և ութ . և
եսես զորդիս իւր՝ և զորդիս որդւոց իւրոց ազգ
չորրորդ : Այլ գիտելով մեր զամ ծննդեան նորա ,
ոչ կարեմք գիտել հարևանցի ինչ դուշակել՝ թէ յո-
րմէ ամի աշխարհի եղև պատուական մահ նորա :
Այս այն է մեզ կարևոր՝ յուշ առնել անձանց զգե-
րահրաշ գովութիւն արդարոյս ՚ի համար արկելոց ընդ
մարդարէս , զնշանակեալն ասեմ ՚ի յակոբայ առա-
քելոյ յօրինակ մեզ՝ զոյգ ընդ օրինակի փրկչին . զի
ասէ . * ( ) ելինակ առեք եղբարք՝ չարչարանաց և
երկայնմտութեան զմարգարէսն , որք խօսեցան յա-
նուն տն . ահաւասիկ երանեմք համբերողաց .
զհամբերութիւն յովբայ լուարուք , և զվատարումն
տն տեսեք ‖ . յակ . ե . 10 . 11 :

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՅԵՍՈՒԱՅ ՈՐԴՒՈՅ ՆԱՒԻԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Յորժամ լսէր իսրայէլ առաջնորդութիւնն յեսուայ անցանել ընդ յորդան՝ ելոյծ զայրդանան։ Առնու յեսու սպանչելիօք զերիքով։ Պատրէ պաշինայն ընկալուս որ ’ի նմա, և պատաղն և որ էին ’ի նմա՝ այրէ հրով։ Օրհնեաւ Հեբեր ապրեցուցանէ վանն պահելոյ նորա զլբպեսս։ Եւ նղովս էարդայ այնմ որ վերանփամ շինեսցէ զերիքով։

Յետ վախճանելոյն մովսիսի ծառայի տեառն՝ յեսու որդի Նաւեայ ’ի ցեղէն եփրեմի կարգեցաւ ’ի տեղի դլուխ և առաջնորդ մեծի ժողովրդեան որդւոցն իսրայէլի փոխանակ մովսիսի։ Եւ ասէ նովին մատենիս ընտանութեանն՝ որով վարէր ընդ մովսիսի՝ խօսելով ընդ յեսուայ, քաջալերէ զնա զօրանալ. և խոստանայ նմա յաղթութիւս ընդդէմ ամենայն թշնամեացն. և զերկիրն նոցա համարէն տալ նմա, մինչև ուր ուրեք հասանիցեն գնացք ոտից նորա. և զօգնականութիւն իւր անմիկնելի ուղղել ’ի նմանէ։ * Եհա պատուիրեմ քեզ (ասէ տեառն յեսուայ) զօրացիր և քաջ լեր. մի զանգիտիցես, և մի երկնչիցիս. զի ընդ քեզ է տէր ամենայն տեղիս՝ ուր և երթայցես ‖. յես. ա. ց։ Եւ նոյն յեսուայ յառաջամէ էր ոմն կիմ եսու, այսինքն փրկիչ

այլ Յեսոյ խորհրդով կոչեցաւ ՚ի մովսիսէ Յեսու-
ուածով միոյ յովսէ՝ յովսէ, կամ Յեսու, այսինքն
փրկիչ ՚ին. իսկ նոյն ընդ երկրպագելն անուան
փրկչին մերոյ Յիսուս, իբրև օրինակ նորա բազ-
մապատիկ խորհրդով։

Յեսու յառաջագոյն յորժամ ըստ հրամանի մով-
սիսի չոգաւ լրտեսել զերիքովն քանանացւոց, տե-
սեալ էր զնա. և իբր քաջ և հմուտ զօրավար
գնեալ էր զամենայն հանգամանս նորա. վասն
այնորիկ դիւրին եղև նմա այժմ ընտրել՝ թէ ո՛ւր
արժան իցէ ՚ի սկզբան անդ զետեղել զբանակն.
և ուստի՛ սկսանել զպատերազմ և զիրապետուել։
Տեսեալ էր և զերիքովն՝ որ Յեսոյ գաղտաղտ կո-
չեցաւ, յարևմտեան կողմն յորդանանու՝ դաշտա-
վայր ընդարձակ և արգաւանդ և զուարճալի. վասն
որոյ հաստատեաց ՚ի մտի՝ յանցանել գյորդանան,
անդ իբրև ՚ի քաջադէպ տեղւոջ զետեղել զբազ-
մութիւն կանանց և մանկանց, և զխուժանն անպէ-
տան ՚ի մարտ պատերազմի, և զանասունս և զա-
մենայն աղխս նոցա. և ինքն ընդ պատերազմող
զօրաց յառաջ խաղալ։ Այլ որպէս զի մարթասցի
պահպանել զտեղին սակաւաթիւ զօրօք, և յապա-
հովացուցանել յերեսաց թշնամեաց, կարևոր էր
նախ առնուլ զերիքով և զգայի. երկոքեան բերդա-
քաղաքք ամրակառոյցք. այլ երիքով հպազոյն էր, և
զօրաւորագոյն քան զգայի, ուստի և հարկ էր ան-
տի առնել սկիզբն պատերազմին։

Այմն իրի առաքեաց Յեսու գաղտ երկուս երի-
տասարդս ընտիրս լրտեսել զերիքով, զամրութիւնս
նորա, զթիւ բնակչաց, զզօրութիւն նոցա, և
զզօրացս որք յածելոցն ՚ի բերան քաղաքացւոց։ Այս
նոքա հասեալ ՚ի քաղաք անդր ընդ երեկս՝ կալան
օթևանս ՚ի տան կնոջ միոյ, որումն անուն էր Ռա-
խաբ. զոր եթ գիրք պոռնիկ կոչեն. այլ քանզի
երբայական անունդ Օնամ, զոր աստ ՚ի կիր ար-
կանէ բնագիր երբայեցւոց, թէպետև սովորաբար
վարի փոխանակ պոռնիկ կնոջ, բայց նշանակէ և
կին վանատուր համ պանդոկապետ՝ որ տայ օթե-

վանս օտարաց, և վաճառէ կերակուր արծաթոյ. վասն այնորիկ քաղցուք յայս միտ մեկնեն զնախադրեալ անուանդ. զոր և ցուցանեն պէսպէս հատանելն պատճառաւք, որպէս մարթ է տեսանել առ մեկնիչս նոր գրոց: Ոչդ՝ ի վաղիւ անդր կեաց շրջելոյ նոցա ընդ քաղաքն խմանալ զելևմուտ նորա, յորժամ ընդ երեկս անագան դարձան մտին՝ ի տուն կնոջն, կասկած կալան ումանք՝ ի քնակեալ գնացանն՝ թէ իարայելացիք էին. զոր և ազդ առին թագաւորին. և նա նոյն հետայն առաքեաց ըմբռնել զնոսա: Իսկ կինն հնարագիւտ իրրև լուաւ զդրդիւն ոտից առ դրան տան իւրոյ, աճապարեաց և եհան զարն՝ ի տանից անդր, և գիտաց այնպէս թագուցանել զնոսա ընդ մեծադէզ խրձամիք կտաւոյ, զի զանհնայն սրատես աչս կարօղ էր խաբել: Ոչպա ելեալ առ խնդրական՝ որք եկեալ էին խնդրել՝ ի նմանէ հանել զարսն արտաքս, ետ պատասխանի համարձակ և անչիմն, մինչ ոչինչ կասկած ստուգէ տալ զանձնէ. արդարև ասէ մինին առ իս արք երկու՝ զորս ոչ ճանաչէի, և ոչ թէ ուսուի էին. այլ յայսմ երեկոյի ընդ աղջամուղջս մերձ՝ ի փակիլ դրան քաղաքին, ելին արտաքս. և ոչ գիտեմ թէ յո՞ գնացին. այլ եթէ փութանակի սպրեսջիք զկնի նոցա, կարելի է թէ հասանիցեք: Ոչ նաքա թողեալ զորսն՝ զոր ուշեին՝ ի բերան, սկսեցան զկնի նոցա ընդ ճանապարհ յորդանանու՝ ի հունն, գտանել անդ, ուր ոչ էին. և այնպէս կարծելով ընթանալ զհետ փախստից՝ ետուն նոցա դիպողութէ անվտանգ զերծանելոյ՝ ի ձեռաց իւրեանց:

Իսկ կինն իմաստուն քանզի լուեալ էր զանցս եգիպտոսի, և զկարմիր ծովուն, և զերկուց թագաւորաց ամովհացւոց սեհոնի և ովգայ. միանգամայն տեսանէր զարհաւիրս և զապշութէն իւրոց քաղաքակցաց, ուսոի և անտարակոյս գուշակէր զկորուստ իւրեանց, արձնամիտ խորհրդականուն թէ փոյթ կալաւ այսպիսի բարեյաջող պատեհու. թէ ապրեցուցանել զանձն և զիւրսն: Իբրև գնա-

ցին խնդրակից, և փակեցաւ դուռն քաղաքին, եւ կինն 'ի տանիս, ուր էին լուեալքն Թաքուցեալ, մինչեւ 'ի քուն մտեալ էր նոցա. և փոխարէն բա-
րեարուեստին՝ զոր արար նոցա ոչ մատնեալ 'ի ձեռս խնդրողաց, խնդրեաց 'ի նոցանէ երդումն, և նշան
կնիք, զի 'ի մատնել՝ ոչ զքաղաքն 'ի ձեռս նոցա, արասցեն ողորմութիւն ընդ նմա և տան հօր իւրոյ, ապրեցուցանել զհայրն և զմայրն և զեղբարս և զքոյս
իւր, և զամենայն ինչս նոցա: Երդուան նորա. Եւ նշան՝ լար կարմիր կախել զպատուհանէ՝ ընդ որ իջոյց զնոսա, յորոշումն տան նորա յայլոց.
և պատուիրեցին նմա, զամենայն ազգատոհմն իւր ժողովել առ իւր 'ի տունն հայր. զի մի՛ ոք գտցի արտաքս, յորժամ զօրք իսրայէլի մտցեն 'ի քաղաք
անդր. ապա թէ ոչ՝ * մեք առեն քաւեալ լիցուք երդմանիդ քումիկ յայդ մանի ||, եթէ չար ինչ պատահիցի քեզ և քոյդդ: Ապա իջոյց զնոսա կինն
չուանաւ ընդ պատուհանն արտաքոյ պարսպին. զի տունն նորա 'ի վերայ պարսպին էր. պատուիրեալ էրթալ ընդ սովորական ճանապարհ, ընդ որ
խնդրակքն դնացին. զի մի պատահիցեն նոցա. այլ ունել զլեռնային ճանապարհ. և Թաքչիլ անդ 'ի լերինս աւուրս երիս, մինչեւ դարձցին նոքա: Ան-
պէս արարին. և յետ երից աւուրց Թաքստեան իջեալ 'ի լեռնէ անտի, և եկեալ յայն կոյս, հա-
սին յաջողութիւ 'ի բանակն. և պատմեցին յեսուայ զամենայն անցս, որ անցին ընդ նոսա:

Եւ յեսու կանխեալ ընդ առաւօտն՝ եդ 'ի չաւ զամենայն բանակն 'ի սատիմայ, և եկին ցյորդա-
նան. ուր նստան աւուրս երիս. և պատուիրեաց յեսու դպրաց մտանել 'ի մէջ բանակի ժողովե-
դեանն, և հրամայեն տալ ամենեցուն պատրաստել պաշար, զի յետ երից աւուրց ունիմ անցանել ընդ
յորդանան: Եւ յայնպէս հրամայեն ետ քարոզ կարդալ 'ի բանակին 'ի ձայն փողոյ, Թէ յորժամ տեսանի-
ցեն զքահանայսն բարձեալ զտապանակ ուխտին տէ-
րանալ 'ի գետ անդր, ամենեքեան էլցեն 'ի տե-
ղեաց իւրեանց, և երթիցեն զհետ նոցա, բայց եր-

կու հաղար կանգնաւ բացագոյն ՚ի նոցանէ, զի մարթասցին ՚ի հեռուստ տեսանել զՀանապարհն, ընդ որ ունէին անցանել յայն կողմն գետոյն։ Յայնժամ խօսեցաւ ընդ ուրիշն, և ընդ դա դայ, և ընդ կիսոյ ցեղին մնասուէ, յիշեցուցանէ լով նոցա զպայմանադրութիւնն, զոր արարին ընդ մովսէսի. ուստի և ըստ այմ պայմանադրութեան հրամայեաց նոցա զննել անցանել յառաջագոյն քան զամենին. և ըստ պատերազմական օրինաց երթալ յառաջապահ նման։ Եւ այսպէս ՚ի կարգի եղեալ յետոյ զամենայն զօրանին, հրամայեաց քահանայից, որք բարձեալ ունէին զտապանակ տէն, մտանել ՚ի յորդանան, և կալ ՚ի ջուր անդր։

Յայնժամ՝ ոչ կամեցաւ բարձրացուցանել զմովսէս աբանէլեաք կարմիր ծովուն, բարձրացոյց և զյետս զյաջորդ նորա ՚ի ջուրսն յորդանանու առա ջի ամենայն որդւոցն իսրայէլի։ Վասն այն ինչ փոքր ի յառաջ խաղացին քահանայք ՚ի գետ անդր, մինչ և ոչ ՚ի ծունկս նոցա հասանէին ջուրքն, ահա յան կարծ լինի իբր սրով ընդ մէջ հատաւ գետն. զի ջուրքն որք իջանէին ՚ի վերուստ յորդեալ որպէս յաւուրս գարնանոյ, կացին արձանացան անշարժ. և ալիքն յետոյ եկեալ դարիւ և դարիւ, այս է լցեալ զգետեզերս ողջոյն աստի և անտի, զտեղի առնուին և ամբառնային լերանաձև ՚ի վերայ առաջնոց. և այնպէս հետ զհետ եկեալ, և ՚ի վերայ միմեանց դիզացեալ, երևէին ոչ ըստ բնական բերմանն եկաւորեալք ՚ի հոսիլ, այլ ընթացեալք ցայն վայր և եթ՝ փափաքանօք տեսանելոյ զՀրաշագործ տապանակ տէն, որ բռնի ՚ի վեր կալեալ ունէր զնո սա յօդս։ Իսկ ատորին ջուրք անջրպետեալք ՚ի վերնոց անտի, և ըստ բնական ընթացից հոսեալք ՚ի վայր կոյս, իջին ՚ի ծովն մեռեալ, մինչև խոպան նուազեցան. և ցամաքեցաւ բովանդակ ծոցն յորդա նանու յադամիտս քաղաքէ մինչև ՚ի ծով անդր։ Վասն այն վերին լերանացեալ ջուրք, որք երևէին իբրև միաձոյլ պարիսպս բարձրացեալ, չիշխէին և ոչ իսկ զթաթիս ոտից քահանայից ողողանել. որոց

հասեալ ՚ի մէջ յորդանանու , զեղէգն առնն անդ ՚ի վերայ ցամաքի , որպէս պատուիրեաց նոցա յեսու , և ոչ շարժեցան յառաջ , մինչև բազմամբոխ ժողովուրդ որդւոց իսրայէլի հանդերձ առնային անասունովք և աղխիւք իւրեանց անցին ընդ ցամաք չոյն կոյս :

Ա. պա ըստ հրամանի տեառն , զոր պատուիրեաց յեսուայ , երկոտասան իշխանաք ընտրեալք մի մի յիւրաքանչիւր ցեղէ՝ բարձին յոսւս իւրեանց երկոտասան քարինս , իւրաքանչիւր ոք քար մի ՚ի միջոց յորդանանու՝ ՚ի տեղւոջէ ուր կային ոտք քահանայից , և տարեալ ՚ի բանակն՝ կանգնեցին անդ կարկառակոյտ ՚ի յիշատակ յաւիտենից աքանչելեացն ՚ի մէջ որդւոց իսրայէլի : Ո նոյն արարին և ՚ի մէջ յորդանանու . զի և անդ ուր կային ոտք քահանայից , կանգնեցին երկոտասան քարինս առ յիշատակ . ապա անցին և քահանայք հանդերձ տապանակաւ տեառն : Ա. յսպիսի ժողովուրդն որ քառասուն ամաք յառաջ էանց ընդ կարմիր ծովն առանց նաւուս , այժմ անց զյորդանան առանց կասչելի : Ե նդ այսորիկ ջուրն որ ընդ այնչափ ժամանակ դիղացեալ ամբարձեալ կայր յօդս՝ արձակեալ ՚ի կապանաց վերին հրամանի , քնաւոր ծանրութիւնն դիմեաց ՚ի տեղի իւր , և գնայր որպէս յերեկն և յեռանդն ընդ ամենայն յաւակս յորդանանու , առանց ՚ի դուրս ելանելոյ ՚ի գետեզերաց և հեղեղելոյ զչրջակայ դաշտս :

Ե այնժամ ցեղն ռուբինի և գադայ և կէս ցեղին մանասէի , ըստ խոստմանն զոր խոստացան Մովսէսի՝ կազմեալք , և ընդ նոսա այլևս արք քառասուն հազարք ընտրեալագունք վառեալք ՚ի կռիւ , անցին առաջի որդւոց իսրայէլի , և բանակեցան ՚ի դաշտին երիքով քաղաքի ՚ի պաշտպանութիւն ժողովրդեան , առ ՚ի դիմի հարկանիլ Թշնամեաց՝ եթէ յանդգնեսցին յարձակիլ ՚ի վերայ : Ա. մենայն բազմութիւն որդւոց իսրայէլի և անասունքն նոցա կային բանակեալ զաւուրս ինչ ՚ի դաշտի անդ ՚ի գաղգաղաղ , ՚ի պատձառս Թլփատութեանն զոր պատուիր-

եաց ՚ի՛ր յԵսուայ ։ ՚Վանզի ամենեքեան նոքա , որք ընդ ամս քառասուն ծնան ՚ի Հանապարհի անապատին՝ ոչ էին թլփատեալ . և առ ՚ի չգոյէ յարմարաւոր գործեաց արար յԵսու ըստ պատուիրելոյն ՚ի՝ սուր ՚ի գայլաքաղ վիմէ . որ չէր ինչ ընդհատ ՚ի յԵսանաստուր երկաթոյ . և նովաւ ետ թլփատեալ զամենայն արու անթլփատ՝ ՚ի տեղւոջն , որ յայմմանէ կոչեցաւ * բլուր անթլփատից ‖ . և Հանդարտութեի կալեալ նոսան անդէն ՚ի բանակին , մինչև ողջացան ։ Ապա արարին զզատիկն ՚ի չորեքտասաներորդ աւուր ամսոյն յերեկոյեան . և կերան ՚ի վաղիւ անդր ՚ի ցորենոյ երկրին բաղարջ և նոր Հասկս խարակեալս . և այնուհետև դադարեաց մանանայն , և ոչ ևս իջանէր , զկնի ուտելոյ որդւոց իսրայէլի ՚ի պտղոյ երկրին . զի ՚ի տարւոջն յայնմիկ ինքեանք ժողովեցին զպտուղ երկրին ։

Որ ինչ կայր ժողովրդոյն Հանդարտեալ ՚ի դաշտի անդ , յԵսու ինքնին միայն եւ արտաքոյ բանակին , որպէս երևի՝ երթալ ՚ի մծտոյ զննել զդիրս երիքով քաղաքի , և զամրութիւն նորա , և գՀանգամանս շրջակայ վայրոց . քանզի իբրև ՀՀմարիտ ՀԱծած պաշտ թէպետև վստահ էր օգնականութիւնն ՚ի՝ առնուլ զնա , բայց և այնպէս չէր անփոյթ՝ առնել զամենայն Հոգւոյն իւրում , որ ինչ անկ է իմանալոյն և զգուշաւոր սպարապետի ։ Երբև մերձեցաւ ՚ի քաղաք անդր , ահա ետես զօրական մի սուսեր մերկ ՚ի ձեռին , որ կայր որպէս թէ ՚ի պահպանութիւն . և մերձեցեալ յԵսուայ՝ ասէ ցնա , ՚ի մերոց զօրաց ես դու , թէ ՚ի թշնամեաց . ետ պատասխանի զօրականն , ոչ ՚ի միոյն եմ , և ոչ ՚ի միսոցն . այլ զօրավար եմ զօրու ՀՀն . և այժմ եկի յօգնականութիւն բանակիդ ։ Որ այսպէս պարզէ աչքն եղիչէ . * Պատարագիս եմ ասէ զօրաց մերոց ՀՀն . յայս արար և եցոյց , զի երկոտասան բիւր հրեշտակաց եկեալ Հասեալ էր յօգնականութիւն երկոտասան ազգին . և նա վերագոյն քան զբազմութիւն գնդիցն զանձն իւր ցուցանէր ‖ ։ Յայնժամ անկաւ Յեսու ՚ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ . և

ասէ ցնա, ՚որ զինչ հրամայեսցէ ծառայել քումհ. ասէ ցնա զօրավարն ՚ոն, լ՚ըծ զկօշիկս յոտից քոց, և տա՚ւր պատիւ տեղւոյդ՝ յորում կաս, զի ՚ոչ է ։ Ա՚նդ ուսաւ յեսուս ՚ի հրեշտակն, որ ՚ի դիմաց ՚այ խօսեր առ նա, զամենայն զկարգն, զոր կալաւ ՚ի պաշարման անդ երիքովի. և զեզանակն, որով չեօթներորդ աւուր հանդերձեալ էր առնուլ զնա։ Ա՚յնի իրի չէզև հարկ ակն հատանել, ոչ պատնէշ կանգնել, և ոչ այլ ինչ զինուորական մարտ մղել. այլ միայն շուրջ պատել զքաղաքաւն աւուրս եօթն ամենայն բազմութի՚ւն ։

Ա՚յնի իրի կազմեցին իբրու թափօր մեծ՝ ըստ օրինակիս ըստ այսմիկ. ամենայն մարտիկք որդւոց իսրայէլի վառեալք, և ՚ի գունդս գունդս կարգեալք՝ երթային առաջի. զկնի նոցա քահանայք որք բարձեալ տանէին զտապանակ ուխտի ՚ոն. և ընդ նոսա եօթն քահանայք, որք ունէին զեօթնափողսն եղջերեայս յորելէան. և զհետ սոցա ամբոխն ամենայն երթայր լուին ամենևին. զի յանհամար բազմութե՚ն անդ չլինէր քնաւ լսելի բարբառ մարդոյ, ըստ պատուիրելոյն յեսուայ. այլ միայն հնչումն եղջերեայ փողոց, զոր ուժգին հնչեցուցանէին քահանայքն՝ որպէս սովոր էին հարկանել յամն յոբելէի։ Ա՚յսպէս արարին աւուրս վեց. քանզի այդ գուն այգուն յարուցեալ ամենայն բազմութի՚ւնն՝ շուրջ պատէին զքաղաքաւն, ծանր գնայիւք երբ զինուորական նազելի ՚ձեմութեամբ. և դառնային անդրէն ՚ի բանակն. իսկ քաղաքացիք որք ՚ի պարսպաց, և ՚ի տանեաց տանց իւրեանց տեսանէին զայն ամենայն, կային հիացեալ, ոչ կարէին լսել խմնալ զնորհուրդն. և ոչ ՚ի մարտ ձեռնարկել իշխէին յանհնարչին երկիւղէ՝ որով պաշարեալ կային։

Ա՚յլ յաւուրն եօթներորդի զատոյգն խմնացան կորատեամբ իւրեանց, յորժամ վաղագ՚ն քան յայլ աւուրս՝ տեսին զնորայելացիս առ պարսպօք. զի յայնմ աւուր կանխեալ ընդ ծագել առաւօտուն, պատեցին զքաղաքաւ ըստ նմին օրինակի եօթն ան-

գամ։ Եւ լեռնեցորդումն հարիւն քահանայք զիողոս սա ստակագոյնս քան զառաջինն, որոց ձայնակցեցան և փողք յառաջապահ մարտակաց. և այլ ամենայն բազմութիւն արձանացան ՚ի տեղոջ ուր կային՝ դարձուցեալ զերեսս ՚ի քաղաք անդր. և իբրև լուան զձայն փողոցն, աղաղակեցին ամենեքին առ հասարակ մեծ և ուժգին աղաղակաւ։ Եւ ահա նոյն ժամայն անկան ՚ի վայր հոսեցան ինքեանք պարիսպք և ամրուխք քաղաքին, և լցին աւերակօք զԵրսաղէմ, պատրաստելով կամուրջ որդւոց իսրայէլ. որք սուր ՚ի ձեռին միախուռն յարձակեալ ՚ի քաղաք անդր, զամենայն որ ունէր շունչ կենդանութիւն՝ զայր և զկին, զծեր ՚և զտղայ, զարջառ և զոչխար, զձի և զէշ, արկին ՚ի բերան սրոյ. մի միայն տունն ոսխաբայ ապրեցաւ ՚ի սպառսպուռ կոտորածէ անտի։ Ի՚Նանդի ՚ի ընորհս ողորմութեանն, զոր արար Երկուց երիտասարդաց լրտեսից, պատուիրեաց յեսու նոցա՝ զի ըստ երդմանն զոր երդուան նմա, անձամբ երթեալ՝ հանցեն զնա, և զՀայր և զմայր և զեղբարս և զքոյր և զամենայն աղգատոհմ նորա, և զինչս նոցա. զոր և արարին, և բերեալ զետեղեցին զնոսա ուրոյն արտաքոյ բանակին՝ բարւոք պահպանութեամբ, մինչև վճարեցաւ գործադրութիւնն երիքովի. և ապա այս բոլոր ազգատոհմ յարեցաւ ՚ի ժողովուրդ որդւոց իսրայէլի։ Իսկ ոսխաբ սակս մեծագործութեանն ապրեցուցա նեղոյ զլըտեսս, այնչափ աղնուացաւ յաչս համբերն զօրուն իսրայէլի, զի սաղմոն որդի նաասոնիսի էառ զնա յիւր կնութիւն. և ահա սա է ոսխաբն կամ՝ Հաւեքաբն մայր բոոսի, որ արժանաւորեցաւ՝ զի անուն իւր յիշատակեսցի ՚ի կարգս ծննդաբանութիւնն փրկչին աշխարհի։

Յետ հանելոյ ՚ի քաղաքէ անտի զոսխաբ, և զամենայն աղգատոհմն նորա, հրամայեաց ետ յեսուս հրձիգ առնել զքաղաքն։ Եւ զի այս յաղթութիւնս երիքովի էր նախասկիզբն և առհաւատեայ առ յապայ յաղթութեանց յայս կոյս յորդանանու, որ և ըստ ամենայն մասանց եղև գործ տէր ՚ի վան այնորիկ

կամեցաւ ՅՃ, զի բովանդակ քաղաքն, և ամենայն որ ինչ ի նմա էին, ինքեան նուիրեսցի երկնաւոր պատուոյ յաղթութեանն. ամենայն ոսկի և արծաթ, պղինձ և երկաթ ի գանձ խորանին մտցէ. իսկ ՅԻսուայեանն բովանդակ լուսի ձարակ հրոյ. և մի ոք բնաւ իշխեսցէ ընդ գլխատարութեան յանցանաւք առնուլ ինչ և պահել յիւրաց նզովեալ քաղաքին ինչէն ցասեղ մի: Այլ այնպէս ամենայն տունք և շինուածք՝ ընդ նոսին և դիակունք կոտորելոց լիզաջինք եղիցին ի հրոյ: Այլ կարդայ յիսուս ՅՃաւասատ անկծս այնմ, որ ոք երթիցէ յանդգնեցի կանդնել անդրէն և շինել զքաղաքն երիքով:

գ.լ: Ր•

Էին Ընջելոյ զբրէովէ, առաւէ յեսու գունդ ի երից հազարաց ի վերայ գայեայ: Պատայեւ վանեն պնոսա վասն գաղանի գողութեանն ի նզովեալ իրաց երիքովէ: Յեսու ըսպառնալոյ ՅՃն վերձակաւ գաղանի պճռին. և պայ ոչխարճ առնել պնա և զրդիս նորա, և ըսուն և զանեայն սպառ յոչնչա նորա հրով այրել: Այլ ապա դիւանգամ ելեալ ի վերայ գայեայ՝ կոտորեն զամենայն էնակիչս նորա. և պճղաչն այրեն հրով:

Ա այս առաջին յաղթութիւն մեծասքանչ յաջողութիւնք վճարեալ, առաքեայ յեսու յերիքովէ արս ըստեսել զգայի քաղաք. որ իբր երկոտասան մղոնաւ հեռի էր յերիքովէ ի հիւսիսակողմն. որոց երթեալ, և որպէս երևի՝ վեր ի վերոյ գնեալ դՀանդ ամենս քաղաքին, դարձան և ասեն ցյեսու, մի աշխատ առնել վայրապար զամենայն ժողովուրդն. զի շատ են երկու կամ երիք հազարք ի նուաճել զայն քաղաք: Այսպէս խօսեցան, զի արտաքուստ ևեթ գնեալ, թերևս տեսին զի

պարիսպք նորա ահար էին. բայց ոչ քննեցին և ոչ
իմացան զներքինն զօրութիւն նորա, յորում էին քնա-
կիչք երկոտասան հազար. յորս թէ չորք հազարք
և եթ կամ հինգ հազարք գտանէին կարօղք զէն
առնուլ, յանդգնութիւն մեծ էր երեք հազարօք յար-
ձակիլ ի վերայ ամբացելոց ի պարսպապատ քաղա-
քի. եթէ ոչ՝ գուցէ վստահացեալ ի սքանչելիս
այ՝ որպէս արար յերիքով. և զայն ոչ գիտէին,
թէ յայս նուագ չէր օգնելոց նոցա այ վասն գաղա-
նածածուկ յանցուածոյ դիպելոյ յերիքով. որ և
այսու պատճառաւ էին ի չայտ։ Ընդ անլուր կամ
օտար ինչ ի զօրապետաց և ի զօրաց իսկ՝ զկնի
նորոգ վճարելոյ մեծաւ չաջողութիւք զմեծ ինչ և
ծանր չաղթութիւն՝ վստահանալ չանձինս և ի վե-
րայ երկրորդին նոյն օրինակ հանդիսանալ, մա-
նաւանդ եթէ դիմակալն փոքր և տկարագոյն իցէ
քան զնախընթացն. բայց դէպ լինի երբեմն վրի-
պիլ, որպէս վրիպեցան այս անգամ և իսրայէլացիք։

Վ՚ասզի ելեալ ի բանակէն երից հազարաց
աներկիւղ համարձակութիւք, այն ինչ մերձեցան ի
գայի, ահա զօրք պահապանք քաղաքին խուռն քաղ-
մութիւք չարձակեցան ի դուրս այնպիսի ուժգնու-
թիւք, մինչ զի զօրք իսրայէլացւոց առ հասարակ
չփոթեցան. և ոչ զօրեալով գէթ ժամ մի դիմակա-
լել, թիկունս դարձուցին խայտառակութիւք ի
փախուստ խուճապելով. իսկ գայացիք զչետ նոցա
պնդեալ՝ հալածեցին զնոսա ընդ զառ ի վայրս
լերին, և կոտորեցին ի նոցանէ արս երեսուն և
վեց, և զոմանս վիրաւորեցին։ Կոտորածն չէր ինչ
մեծ. բայց չեսուայ և ամենայն իշխանաց ժողովր-
դեան էր հարուած մահաբեր, տեսեալ՝ զի կորու-
սին զանուն անյաղթելի քաջութեան զինուց իւր-
եանց։ Կորուն երիքովի սասանեցոյց զամենայն
չըջակայ աշգս, իբր անյաղթելի ցուցանելով զիս-
րայէլ. իսկ այս չաղթութիւն գայացւոց, որք առ
հասարակ չաւելացոյց թէ՝ մարթ է չաղթել նոցա,
եթէ արիութիւք մարտիցին։

Յեսու և ամենայն իսրայելի դիմեցին առ ամենահնար դաւմանն ամենայն էին բեաց. եբր զի պատառեալ զհանդերձս, և արկեալ հող զլխովք՝ անկան ի վերայ երեսաց իւրեանց առաջի տապանակին տեն ջերմ պաղատանօք առ նա մինչև ցերեկոյ: Յուսկ ուրեմն արար պատասխանի նա, թէ ոչ էս կարիցեն որդիքն իսրայելի կալ առաջի թշնամեաց իւրեանց. զի ոչ էս յաւելուցու օգնել նոցա, մինչև ոչ բառնայցեն զնա, որ անց զուխտիւ իւրով, և գողացաւ ի նզովից անտի, զոր ինքեան պահեալ էր: Պա ասաց յեսու՝ արկա նել վինձակս, զի նովաւ ինքն նա յայտնեսցէ զյանցաւորն: Եւ ի վաղիւ անդր ընդ առաւօտն արարբեն՝ որպէս հրամայեաց նա. զի մատոյց յեսու զգնդովրդն ըստ ցեղից իւրեանց, և յանդիմանեցաւ ցեղն յուդայի. և մատուցաւ ցեղն յուդայի ըստ առհմից, և յանդիմանեցաւ տունն զարայի. և մատուցաւ տունն զարայի ըստ արանց, և յանդիմանեցաւ զաբդի. և ի մատուցանել զտուն նորա ըստ արանց, յանդիմանեցաւ աքար որդի քարմեայ որդւոյ զաբդեայ: Եւ նոյն ժամայն ածաւ քարմի յատեան առաջի յեսուայ և ծերոց իսրայելի. և խոստովան եղև զանցուածս իւր՝ ասելով. Եւ զդաբև ես մեղայ առաջի տեն ոյ իսրայելի. տեսի յաւարին ամեղն մի, այսինքն վերարկու ծիրանի ծաղկենկար, ըստ ոմանց՝ ոսկեթել, գեղեցիկ և մեծագին. և երկերիւր երկդրամեան կամ սիկղ սրծաթոյ, և լեզու մի ոսկեայ՝ յիսուն երկդրամեան կշիռ նորա, այսինքն իբրև քսան և հինգ ունկի. ցանկացեալ նոցա՝ առի և պահեցի ի ծածուկ. և ահաւանիկ թաքուցեալ կան ընդ հողով ի վրանի իմում:

Ա՛ա եղոյց զամենայն նշանս անկեղծ և ճշմարիտ ապաշխարութեե, ծանեաւ զմեղս իւր, զոր յաւաջին հարցումն անդ խոստովան եղև. ետ փառս տի՝ նովին հրապարակական խոստովանութեե դաւանելով զնա ամենաւեր, որ կարօղ է հրամայել ըստ իւրոց հաճոյից. անքաւելի, որ տեսանէ զամենայն.

ամենակարօղ, որ կարէ զամենեսեան պատժել. ամենևին արդար, որ պատժէ ամենայն ուղղութիւն և արդարութիւն: Այսպէս այնորիկ բաղումք ի վարդապետաց բարէյոյս են ի վերայ յաւիտենական փրկութեան նորա վասն անկեղծ խոստովանութեանն և կամակար յանձնառութեան մնհուան ի քաւութիւն մեղաց իւրոց: Զկնի խոստովանութեան նորա՝ առաքեաց յհսուս արս ի վրան նորա՝ ի բանակ անդր. որոց հանեալ զամենայն գողոնն՝ բերին առ յհսուս և առ ծերսն իսրայէլի. և առեալ զայն ամենայն, ընդ նմին և զաքար և զուստերս և զդատերս նորա, և զաղջամբ և զոչխարս նորա, և զվրանն և զամենայն ինչս նորա, հանին ի ձորն նաքովոյայ. և անդ յանդիման աչաց ամենայն ժողովրդեան որդւոց իսրայէլի քարկոծ արարին զնոսա, և հրով այրեցին. ապա ի վերայ խանձողեալ ոսկերաց նոցա կուտեցին կարկառ մեծ քարանց, ի մշտնջենաւոր յիշատակ և ի նախատինս մեղաց և արժանահաս պատժոց նորա, և յերկիւղ ամենայն իսրայէլի առ ի զգուշանալ ի զանցանելոյ երբէք զպատուիրա նաք ետն նմա:

Եւ այսպէս բարձեալ զնախատինս նմա ի ձեռն սաստկապահանջ վրէժխնդրութեան ընդդէմ յան. ցաւորին, ննայր բառնալ և զնախատինս զինուց իսրայէլի ի գայեացւոց յաղթանակողաց: Զնոքինին ուսոյց յհսուայ զեղծմնակ մարտին. հրամայեաց նմա հանել՝ ոչ երկու կամ երիս հազարս, որպէս զառաջինն, այլ զամենայն արս պատերազմող. և գունդ մի կացուցանել դարանամուտ զկնի քաղաքին, խոստանալով տալ ի ձեռս նորա զքաղաքն. ասաց առնել ընդ նմա, զոր օրինակ արար յերիքովայ, զամենայն մարդ ի ծերոց մինչև ցտղայս ի բերան սրոյ կոտորել. իսկ զանասուն նոցա և զամենայն ինչս առնուլ յաւարի: Յարեաւ յհսուա և ամենայն ժողովուրդ պատերազմել ընդ նմա՝ ելանել ի գայի. ընտրեաց ի նոցանէ երեսուն հազար արս զօրաւորս զօրութիւն. յորոց զատոյց գունդ

մի հինգ հազարաց, և առաքեաց զնոսա գիշերային դարանամուտ լինել յետուստ քաղաքին. և ինքն քան և հինգ հազարօք յառաջ խաղայ հանդիպ քաղաքին յարևելից կողմանէ. և զինեաց[եալ] զօրս կարգեաց 'ի ձև լուսանի. որպէս զի մինչ յառաջապահ գունդք մերձենային 'ի քաղաքն 'ի հիւսիսոյ կողմանէ, նոքա իբրև վերջապահք խաղասցին 'ի կողմն արևմտից, զի 'ի լինել հարկէ՝ կարիցեն հասանել յօդնութիւն դարանամտից։

Յեսու ինքնին կալաւ զառաջնորդութիւն յառաջապահ գնդին. քանզի ունէր փորձել փորձ՝ որ գԱժուարին է և վտանգաւոր. այսինքն կեղծել 'ի վերին երեսս թիկունս դարձուցանել, որ յաչս թշնամեաց երևիցի փախուստ. և անչափ պահեալ միշտ զկարգ զօրուն, խաբեսցէ զթշնամին արաւքին նշանօք երկիղի, որպէս եթէ խառնեալ և շփոթեալ իցեն։ Լ.յսելիսն խորհրդով կանխեալ յեսուայ ընդ առաւօտն՝ յանկարծ իմն երևեցաւ հանդերձ գնդաւք իւրով 'ի վերայ բլրոյ միոյ յանդիման քաղաքին, ուր ընդ միջ ինքեանց և քաղաքին գայր անջրպետ ձոր մեծ. և 'ի գիշերին յայնմիկ էջ յեսու 'ի ձոր անդր՝ ցուցանելով գիմել 'ի վերայ քաղաքին։ Օ.այն տեսեալ թագաւորն գայեայ և զօրք նորա, յանդգնեալ նախընթաց յաղթութեն՝ ելին յարձակեցան 'ի վերայ իսրայելացւոց. իսկ յեսու իբր առ երկիւղի սկսաւ զառաջինն փոքր փոքր յետս ընդ կրունկն խուսել, առ 'ի տալ համարձակութիւն ելանելոյ համօրէն ժողովրդեան գայեայ զհետ նոցա։ Լ.և իբրև համարեցաւ յեսու՝ թէ ելեալ իցեն ամենայն մարտիկք 'ի քաղաքէն, սկսաւ այնուհետև երագել զփախուստն առ 'ի հեռացուցանել զնոսա 'ի քաղաքէ անտի, բայց միշտ պատրաստութիւն անդրէն դարձուցանելոյ զձեռնասն։

Լ.այս դաւադրութիւն զինուորական ձարտարութեամբ յաջողութիւն ելեալ 'ի գլուխ. քանզի գայեացիք համարեալով զնուաստութիւն զօրն իսկական փախուստ, ուստի և ամենայն ժողովրդեան սկսեալով զհետ կարճեցեալ փախստէից, թողին դատարկ զքա-

զաքն ՚ի պահապանաց՝ պատրաստական որս գարա-
նամտից։ Յայնժամ ըստ հրամանին ոչ յամբառնալ
յեսուայ զձեռս իւր ետկական զոր ունէր ՚ի ձե-
ռին ՚ի վերայ քաղաքին, եւ ինքն վազվազակի գարա-
նակալքն ՚ի տեղւոջէ իւրեանց, եւ մտին առանց
ինչ դիմամարտութեան ՚ի քաղաք անդր, եւ հուր հա-
րին զնովաւ։ Հայեցեալ գայեացս ՚ի թիկունս
իւրեանց, եւ տեսեալ զծուխս քաղաքին ելանել
մինչեւ յերկինս, այն ինչ սկսան դառնալ յետս առ
՚ի պաշտպանել նմա, տեսին զինքեանս պաշարեալ
յամենայն կողմանց. զի գարանամուտքն ելեալ
՚ի քաղաքին՝ կալան զառաջս նոցա. յեսու իւրով
յառաջապահ գնդաւ գարձեալ ընդ կրունկն՝ կա-
լաւ զվերջ նոցա. իսկ մնացեալ ժողովուրդ որդւոց
իսրայէլի, զորս լուծառձև կարգեալ էր յեսու ըստ
ասացելոցս, յաջմէ և յահեկէ պատեցին զնոսա.
և ոչ ևս ուրեք գոյր նոցա փախուստ՝ այսր կամ
անդր։ Եւ այնպէս ՚ի մէջ առեալ զնոսա, ձերբա-
կալ արարին զթագաւորն կենդանւոյն, և աճին
առ յեսու. իսկ զայլս առ հասարակ հարին կոտո-
րեցին՝ մինչև չմնալոյ ՚ի նոցանէ ապրեալ և փախս-
տական և ոչ մի. ապա գարձեալ ՚ի քաղաքն՝ կո-
տորեցին և անդ զամենեսին. և եղեն անկեալք
յաւուր յայնմիկ յառնէ մինչև ցկին երկոտասան
հազար. զի ամենի թիւ բնակչաց գայեայ։

Ընդ բովանդակ ժամանակն այսր կոտորածի
յեսուա միշտ վերամբարձ կալաւ զձեռն իւր նիզա-
կաւ, և ոչ երբեք իջոյց, մինչև ամենայն բնակիչք
գայեայ սպառեցան։ Ո թագաւորն կախեցին զերկ-
ձիւղ փայտ. մնաւին նորա մնաց ՚ի վերայ անարգ
փայտին կախեալ մինչև ցերեկոյ. զոր ՚ի մտանել
արեգական իջուցեալ՝ ընկեցին ՚ի գուբ առ դրան
քաղաքին. և կուտեցին ՚ի վերայ նորա կարկառ
քարանց։ Այսպէս արարին ընդ թագաւորն երի-
քովի. այսպէս արարին յետ այնորիկ և ընդ այլ ա-
մենայն թագաւորս, որք կենդանւոյն անկան ՚ի
ձեռս որդւոց իսրայէլի, ցորչափ վարեաց յեսու զա-
ւաջնորդութեն նոցա։ Այլ էր այս անգթութեն յե-

սուսայ, այլ էր գործադրութիւն վնասոյ վերնոյն. որ թէպէտ երեւեր անցանել ՚ի վեր քան զօրինս զինուորացն, բայց էր հրամայեալ նմա զինուորութենէ. զի լցեալ էր չափ անօրինութենէ նոցա, որոց համբերեաց ցայն վայր երկայնմտութենէ: Զետ կոտորեալ զամենայն քնակիչս գայեայ, առին յաւարի զանասունս և զամենայն ինչս նոցա ըստ հրամանի նմա, և ապա զքաղաքն ողջոյն սպառսպուռ այրեցին և արարին հողաբլուր. քանզի ՚ի սկզբան անդ ՚ի մի միայն կողմն նորա արկին հուր առ ՚ի նշան, և ոչ յերծումն բոլոր քաղաքին:

Ապա շինեաց յեսու սեղան ՚ի գերագոյ լերինն յանկոփ քարանց. և անդ եհան ողջակէզ ՚ի նմա և զոհս փրկութեան. և գրեաց ՚ի վերայ քարանց սեղանոյն զգլխաւոր պատուէրս օրինացն. կամ զհամառօտուԹիւն երկրորդ օրինացդ զոր ասացեալ յօրհնութիւնս և յանէծս: Զետոյ ամենայն ժողովուրդն որոշեցաւ յերկու դասս. կէս ՚ի նոցանէ կացին ՚ի լեառն դերզագոյ, և կէս ՚ի լեառն գարիզին: Իսկ քահանայք բարձեալ յոյս իւրեանց զտապանակ ուխտին Տեառն, կացին ընդ դնտացուց ՚ի միջի. և ՚ի կարդալ նոցա զօրհնութիւնն և զանէծս՝ դարձուցանէին զերեսս մերթ ՚ի մի լեառն, և մերթ ՚ի միւսն, նոքա որք կային ՚ի վերայ լերանց, տային պատասխանի, եղէ՛ն. առ իւրաքանչիւր օրհնութի՛ և անէծս. որպէս պատմեցաք ՚ի վախճան հնգամատեան գրոցն Մովսիսի: Այս ապա ընթերցան զամենայն բանս օրինացս այսոցիկ՝ զօրհնութիւնս և զանէծս ըստ ամենայն գրելոցն յօրէնսն Մովսիսի՝ յականջս ամենայն ժողովրդեան իսրայէլ, արանց և կանանց և մանկանց և եկաց յերեսս կիսրայէլ, ըստ պատուիրեցն Մովսիսի: Այս այսպէս նորոգեցաւ ուխտն՝ որ եդաւ առ սինեական լերին. զի որովհետև քաղուք, մանաւանդ թէ առաւելագոյն մանն նոցա՝ որ գտան յառաջնում ուխտի անդ, մեռեալ էին, որդիք նոցա աստ նորոգեցին զիշատակ այնր առաջնոյ ուխտին, և նովին պայմանօք պարտաւորեցին զանձինս ՚ի պահպանութի՛ ամենայն օրինացդ:

Յետու պապրնալ ի գաբառնայուց՝ ուխա խաղաղուներ դնել ընդ նոսա, և կարգել զնոսա ի ծառայուներ խորանին։

Երբև սփռեցաւ համբաւ մեծահռչակ յաղթութեան որդւոց իսրայէլ ի վերայ երիքովի և գայեայ, ամենայն թագաւորք յայս կոյս յորդանանու ի սէյիր լերանց ընդ հարաւ՝ մինչև ի լերինս լիբանանու ի հիւսիսոյ, և ի յորդանանէ յարևելից ընդ արևմուտս՝ ցծովն մեծ, այն է ծովն միջերկրեայ, որ անկանի յարևմտեան կողմն յորդանանու. այսինքն ամենայն թագաւորք քետացւոց, ամովրհացւոց, քանանացւոց, գերգեսացւոց, փերեզացւոց, խևացւոց, յեբուսացւոց, և այլք որք շուրջ զնոքօք, ժողովեալ՝ միակամ միախորհուրդ դաշնադիր եղեն ընդ միմեանս, ամենեքեան առհասարակ ի միասին ելանել տալ պատերազմ ընդդէմ իսրայէլացւոց ի վանել զնոսա յերկրէ իւրեանց։ Ա՛ի միայն գաբաւոնացիքն յամենեսեան ի նոսա գտան իմաստնագոյն և զգուշագոյն. քանզի լուեալ էր նոցա, զոր ինչ արար Յեսու ծծին իսրայէլի ընդ եգիպտոս, ընդ ծովն կարմիր, և ընդ երկու թագաւորսն ամովրհացւոց յայն կոյս յորդանանու. էր զնոսին ի նոցանէ և նորոգ անցք երիքովի և գայեայ։ Վասն ենէ և զայն, թէ խոստացեալ է Յաստուածեալ տալ որդւոց իսրայէլի. ապա անմտութեամբ համարեցան ընդդէմ կալ կամաց այնպիսի մեծաշուք Յաստուածի. Թէպէտ զի միաբանութիւնք թագաւորաց սովորաբար չէն երկարատեւ. ի միայն շահատոր առաքարկութեի հաշտութեամբ ըստ միոյ կողմանն՝ կարօղ է քակել զմիաբանութեին դաշնակցաց։

Այսոսիկ զմտաւ ածեալ ծերոց գաբաւոնի, հաստատեցին փութանակի արձակել հրեշտակս առ Յեսու՝ Յաղտատ հնարիւք, քայց կամակար մտօք՝

ուխտ խաղաղութեանն հաստատել ընդ նոսա։ Այլ զկին հրեշտակքն այնպիսի հանդերձանօք հրեշտակութեան, որպ նման գուցէ ոչ տեսաւ յառաջնումն, և ոչ զկնի տեսցի երբէք ուրեք՝ ի գլուխս արքունիս։ Հանդերձք նոցա հնացեալք և քձքձեալք. հողմ. Թափք կարկատունք և տղմաշաղախք. պաշարք հացի իւրեանց չորացեալք և ձմեկերք՝ ի քուրձս հինս՝ ի վերայ ուսոց իւրեանց. տիկք գինւոյ պատառատունք և կարկատեալք՝ անպիտանք այնուհետև՝ ի պահել զգինի։ Այսպիսի հանդերձանօք հրեշտակք գաբաւոնացւոց երևեցան՝ ի քանաին երբայեցւոց՝ ի գաղղատ։ Այս մնափառութենն տկարացաւ առ խորագիտութեանէ, որ ուսոյց նոցա զայն հնարս, որով և յաջողութեանէ զհրեշտակութենէ իւրեանց՝ ի գլուխս տարան. զի ոչ շուքն, և ոչ արտաքին պերձութիւնք փառաւոր առնեն զհրեշտակութենէն, այլ ճարտարութենէ հրեշտակայն՝ ի հասանել վախճանի իւրեանց. առ որ մեծապէս նպաստաւոր եղեն նոցա այն պատառատուն կերպարանք. որով յաւէտ կարեկցութենէ էին արժանի, քան թէ հպատականաց խաբէութենէ. Սակայն և այսպէս՝ ի մերձենալ նոցա՝ ի բանակ անդր խրայէլացւոց, և յասել ցարն, որք կային՝ ի պահպանութենէ յերկիրս բանակին, թէ յերկրէ հեռաստանէ եկին, խնդրել զի ուխտ խաղաղութենէ դնիցեն ընդ նոսա, նոքա կասկած ինն կալան, թէ՝ ի մօտաւոր բնակչաց երկրին այնորիկ իցեն. ընդ որս ոչ կարէին դնել ուխտ և առնել բարեկամութենէ. զի պատուէր ունէին՝ ի նոնէ չդնել ուխտ խաղաղութենէ ընդ քանանացիս։ Սա այնորիկ ասէն. * Ցնծ գուցէ առ իս բնակեալ իցես. և զիարդ դնեմք ընդ քեզ ուխտ։

Այս ածին զնոսա առ յեսու և առ իշխանս ժողովրդեանն. եհարց զնոսա յեսու, թէ ուստի իցեն. եւտուն պատասխանի՝ թէ յերկրէ հեռաստանէ չոյժ եկեալ էն. առ որոյ սպասցոյց՝ ցուցանէին զհացն չորացեալ և ձքձեկեր. զոր ասէին ջերմ առեալ՝ ի տանէ. և զձորձս և զկօշկս մաշեալս, և զտիկս գինւոյ պատառեալս՝ ի բազմութենէ

Ճանապարհին։ Պատմեցին և զպատճառն, յորմէ իշխանք Իսրեանց չարժեալ՝ առաքեցին զնոսա ՚ի հրեշտակութե՛ն ՚ի գիմաց ամենայն ժողովրդեան ընծայել յեսուայ հնազանդութե՛ն, և խնդրել ուխտ խաղաղութե՛ն և բարեկամութե՛ն դնել ընդ նոսա. զի գիտէին՝ թէ իսրայէլացիք յորժամ ուխտեն ինչ յանուն ՚ի Տեառնէ Իսրեանց, ոչ անցանեն զնովաւ, թէ պէտ և վրիպանօք ինչ ուխտեալ իցեն։ Իշխեցին որպէս գիտակք ՚ի լոյ, և զոր ինչ արար ՚ի ծիր ընդ եգիպտոս, ՚ի կարմիր ծովն, և ընդ երկուս Թագաւորս ամովրհացւոց եւթերանի և բասանու. բայց զանցից երիքովն և գայեայ լուեցին ամենևին. զի մի՛ ՚ի վեր ելցէ խաբեութե՛ն իսրեանց, որ կէզձէին զանձինս ՚ի հեռաւոր աշխարհէ եկեալ, յոր յայնմ սուղ ժամանակի անհնար էր ժամանել համբաւոյ անցից երիքովի նորոգ վձարելոյ։

Յաւատայ յեսուս բանից նոցա, և առանց հարցանելոյ զնո՛ր ՚ի ձեռն քահանայապետին և իմանալոյ զկնի նորա, արար ընդ նոսա խաղաղութե՛ն, և ուխտեաց նոցա ուխտ ապրեցուցանել զնոսա. և իշխանքն առին զպաշար նոցա, և ձաշակեցին ՚ի միասին ընդ նոսա ՚ի նշան խաղաղութե՛ն և բարեկամութե՛ն ըստ հնոյ սովորութե՛ն, որ գոյր գրեթէ առ ամենայն ազգս. և երդուան նոցա։ Այս հաշտութե՛ն ոչ եղև լոկ վասն գաբաւոն քաղաքի, այլ վասն ամենայն գաւառի նորա. ուր էին այլևս եւթեք քաղաք անուանեալք կեփիրոն, և բերովթ, և կարիաթարիմ։ Այլ յաւուր երրորդի յետ ուխտելոյ նոցա զուխտն՝ եկին ՚ի յայտ խաբէութիւնն. այն զի՝ էր իսկ հնար և ևս մնալ ՚ի թաքուն, որովհետև զօրքն իսրայէլի ուղղեցան յառաջ խաղալ ՚ի գաբաւոն. նմին իրի ստիպեցան հրեշտակքն պատառել զպատրուակն, և խոստովանել Ճշմարտութե՛ն՝ յանուանէ յայտնելով յեսուայ զքաղաք իսրեանց գաբաւոն. զոր ցայն վայր ոչ երբէք առին ՚ի բերան. ապա թէ ոչ՝ ընդունայն լինէր հրեշտակութե՛ն նոցա. զի ՚ի ժամանել անդ զօրաց իսրայէլի, և ոչ գիտելով թէ վասն այնր տեղւոյ ուխտե-

ցին իշխանք իւրեանց, զամենայն բնակիչս գաւառին՝ի սուր սուսերի կոտորէին։ Ընդ այս վտիտակ յեսուայ և իշխանացն գժգոհեցաւ ժողովուրդն ամենայն, և տրանջէին զնոցանէ, սակս ուխտին զոր եդին ընդ գաբաւնացիս. այլ տրտունջ նոցա էր լոկ յաղագս շահասիրութեան. զի ոչ ևս կարէին ջնջել զնոսա և տիրել քաղաքաց և ընչից նոցա։ Այլ փութով խաղաղացան. զի առանց անցանելոյ զգուխաւ, այլ ինն ձանապարհաւ հաձեցոյց յեսուս զնոսա, սառնալով զգաբաւնացիս՝ի ծառայութիւն։

Ա. Յն զի՝ տիրապետս խօսելով, ոչ կարէր յեսուս զլանալ նոցա զխաղաղութեան. քանզի թէպէտ պատուիրեաց ածս չդնել ուխտ խաղաղութեան ընդ քանանացիս, և չառնել երբէք բարեկամութեան ընդ նոսա. բայց այն պատուէրն ոչ էր ընդհանուր և անպայման, այլ՝ պայմանաւք սահմանաւորեալ. վասն որոյ՝ի դնել պայմանացն՝ կարէին դնել ուխտ խաղաղութեան ընդ ուժմ և իւէ. զորօրինակ եթէ խոստանայցեն հրաժարել՝ի կռապաշտութենէ, և ընդունել զօրէնս երկրագործ, և լինել նոցա հնազանդեալ և հարկատու, և այլն. որպէս ասէ ։ օրէն. ։ ։ * Լինել մերձենայցես՝ի քաղաք տալ պատերազմ ընդ նմա, կոչեսցես զնոսա՝ի խաղաղութեան. և եղիցի՝ եթէ տայցեն խաղաղութեան պատասխանի, և բացցեն քեզ, եղիցի ամենայն ժողովուրդն, որ գտանիցին՝ի նմա՝ հարկատուք և հնազանդեալք քեզ։ Այսպէս այս հաստատի և այսու որ գրեալ է՝ի գիրս յեսուայ. ։ ։ ։ * Լաւ ոչ էր քաղաք զոր ոչ մատնեաց տէր (ըստ այլ թարգմ. որ ոչ լինէր անձնատուր) որդւոց իսրայէլի, բայ՝ի խևացուցին՝ որ բնակեալ էր՝ի գաբաւոն. զամենեսեան առ պատերազմս. զի՝ի տեղ կարծրանային սիրտք նոցա պատահել պատերազմս իսրայէլի՝ զի սատակեսցին. և ոչ տայի նոցա ողորմութեան, այլ զի սատակեսցին։ Ոմանք յայտ առնէ, զի թէ և այլք՝ի ժողովրդոց անտի յանձն առեալ էին հնազանդել և հարկատու լինել, գտեալ էր արդեօք և նոցա

ողորմութեանէ, որպէս գտին գաբաւոնացիքն։ Այս
թէ և ձշմարտութիւն յայտնեալ էին հրեշտակք գա-
բաւոնացւոց զուխան իւրեանց, սակայն՝ ի խնդրել
նոցա խաղաղութեան յանձնառութիւն պայմանաց ա-
ռաջարկելոց, յայտ է թէ ընդունէր զնոսա յեսու։

Այլ զի խաբէութիւն եառն նմա ուխտել և
երդնուլ, նմին իսկ վարեցաւ ընդ նոսա իբրև ընդ
կալանաւորս ՚ի պատերազմի. կոչեաց անդրէն զնո-
սա զառաջեաւ իւրով, և յանդիման միահամուռ
զօրուն ՚ի գէմս ածեալ նոցա զնաբէութիւնն՝ անէծ
զնոսա, կացուցանելով ՚ի նուաստ և ՚ի տաժանա-
կան ծառայութիւն խորանին վկայութիւն և ժողովրդ-
դեան՝ լինել փայտակոտոր և ջրկիր ՚ի պէտս զտիից
և զանազան օրինական լուացմանց, և յայլ գործս
անարգս և ծանունս ծառայել ընդ ձեռամբ վե-
տացւոց. և այնու լցուցանել զծառայութիւնն, զոր
ամենայն իսրայէլ պարտական էր առնել տանն Այ.
գուցէ զայս ակնարկէ ՚ըզ գիբն, յասելն.* Այս կա-
ցայց զնոսա յառաջ յայնմիկ փայտակոտորս և ջրը-
կիրս ամենայն ժողովրդեան և սեղանոյն Այ մինչև
ցայսօր ‖. այսինքն փոխանակ ժողովրդեան՝ ծա-
ռայել սեղանոյն Այ որդւոց յորդիս։ Ընկալան գա-
բաւոնացիք յօժարութիւն զամենայն պայմանս զայ-
սոսիկ. և յետ այնորիկ միշտ հաւատարիմ հպա-
տակ ընծայեցուցին զանձինս եբրայեցւոց. այն զի՝
երևի թէ ընկալան նոքա և զօրինս մովսիսի. որով-
հետև գտանեմք՝ զի յետոյ համարեցան ՚ի կարգս
ստորին պաշտօնէից տաճարին ՚ի ներքոյ զևտացւոց
անուամբ նաթինացւոց. որք յիշատակին ՚ի գիրս
Ե. Եզր. Ը. 7. Ն Ը. 10։

Զ նմին աւուր յորում վճարեցաւ այս պայմա-
նադրութիւն, հատուած մի ՚ի զօրուն իսրայէլի ելին
՚ի գաբաւոն, և սիրեցին նմա և քաղաքաց նորա.
այլ ոչինչ փոփոխութիւն արար յեսու ՚ի քաղաքական
տնտեսութիւնս նոցա, ոչ յիշխանս և ոչ յայլ կարգս
նոցա. մնաւանդ թէ տեսեալ զի կարէ վստահ-
նալ ՚ի հաւատարմութիւն նոցա, ոչ եթող անդ ՚ի
պահպանութիւն քաղմութեն զօրաց, զի մի լինիցին

նոցա բեռն՝ի կերակրել զնոսա. իսկ ինքն դարձաւ անդրէն՝ի գաղգաղա, ուր կայր բանակեալ ժողովուրդն ամենայն՝ հանդերձ անասնովք և ամենայն կարասեօք իւրեանց։

Գ.Լ. Գ.

Յետս խորտակէ Աբինգ Նագաւոբս գոմարքեալս՝ի վերայ գաբաւոնացոց։ Ցայ ոչանչելօք պնայ առնուալ աբեգաւան և լուծանի յընկալեալ իւրեանց, դնելն՝ի գլուխ հանցէ պաղեստինեայն՝ի վերայ ընտանեացն։

Այս գործ՝ զի անձնատուր եղեն գաբաւոնացիք իսրայելի, յաւէտ վերկիւղ և զկասկած Թագաւորացն ամովհայոց. քանզի գիտէին, եթէ քաղաք մեծ է գաբաւոն՝ որպէս զմի՝ի մայրաքաղաքաց Թագաւորացն, և ամենայն արք նորա զօրաւորք։ Ադոնիբեզեկ Թագաւորն երուսաղէմի տեսեալ զԽուրն Ճարակեալ առ իւրովք սահմանօք, զարհուրեցաւ յանձն, փութացաւ արձակել հրեշտակս առ շրջակայ Թագաւորս, առ Ելամ՝ արքայ քեբրոնի, և առ քերամ՝ արքայ յերիմուԹայ, և առ յեփիե՝ արքայ լաքիսայ, և առ դաբիր՝ արքայ ողողմայ, գալ վաղվաղակի յօգնութիւն նմա՝ի հնուաձել զգաբաւոնացիս, մինչեւ էսկ նոցա ամրացուցեալ զքաղաքս իւրեանց. քանզի կարևոր յոյժ երևէր արագ պատուհասել զնոսա, որպէս զի և այլք երկիցեն ապստամբել՝ի Թագաւորայ իւրեանց, և անցանել առ իսրայէլացիս։ Գումարեցան շտապալ Թագաւորքն հրաւիրեալք, և՝ի միասին ընդ ադոնիբեզեկայ ելլին համագունդ՝ի վերայ գաբաւոնի, և պաշարեցին զնա։ Իսկ բնակիչք գաբաւոնի անբաւական դատելով զզօրութիւն իւրեանց առ՝ի զդեմ ոչնել հնգից Թագաւորաց, ա-

ռաքեցին վաղվաղակի առ Յեսու ՚ի բանակն Իսրայէլի ՚ի գաղգաղ՝ գալ օգնել և ապրեցուցանել զնոսա։

Եւ Յեսու և ամենայն զօրն պատերազմող ընդ նմա, և ամենայն որ կարօղ էր զօրուիլ. և զգիշերն ամենայն երագեալ յընթացս, ընդ այգն յանկարծակի եհաս ՚ի վերայ բանակին ամմէորհացւոց՝ այնպիսի ահագին ուժգնուիլ, մինչ զի յառաջին յարձակմանն անդ վեր ՚ի վայր խառնակեաց զամենայն բանակ նոցա. զի և ՅԱՀ արկ ՚ի նոսա արհաւիրս. որով թագաւորք և զօրավարք ոչ ևս գիտէին հրամայել, և ոչ զինուորքն մարտնչել, այլ, ՚ի փախստական լեալ փութալ։ Յայնմ մեծի շփոթումն առ մի ինչ միայն ուշադիր եղեն ամմէորհացիք. այն է՝ ուղղել զփախստական ընդ անձուկս լերանց, ընդ որ դժուարին էր իսրայէլացւոց բաժանիլ զհետ այնմիսի նոցա ընդ նեղ և ընդ առապար անցս. որպէս զի ՚ի կոտորիլ վերջնոցն՝ գնան յառաջընթացքն գտանիցեն ժամանակ ապրեցուցանելոյ զանձինս. որ Թերևս յաջողէր նոցա, եթէ ՅԱՀ զօրուիլ ոչ էր պատերազմեալ խառն ընդ իսրայէլի։

Ապա Յեսու Թիպէտ փորձ և քաջակիրթ էր ՚ի պատերազմական հրահանգս, հանձարեղ և խելամուտ յամենայն գործս, և գլուխ և զօրավար քիւրաւոր արանց զօրաւորաց, սակայն ոչ երբէք եղև ապաստան ՚ի խորհուրդ և ՚ի զօրուիլն իւր. զի ոչ միայն յառաջ կամ ՚ի սկիզբն մարտին, այլ նաև ՚ի գործ անդր պատերազմի՝ մերթ ընդ մերթ ամբարձեալ զմիտս ՚ի վեր՝ խնդրէր զօգնուիլն ՚ի ՅԱՀ զօրուիլեց. յորմէ կախեալ կան ամենայն յաղթութիւնք։ Ոնոյն արար և ասա, զի մինչ ինքն գնդաւ իւրով զՀետ մնեալ այնր մասին ամմէորհացւոց, որք փախչէին ընդ Ճանապարհ զառ՚ի վայրին բեթհորոնայ՝ յանկնայ կոտորէր զվերջապահս ամմէորհացւոց, խնդրեաց ՚ի ՅԱՀ ՚ի նմին ժամու, որպէս վկայէ սիրաք. Եշ. 6. Հարկանել զյառաջապահս նոցա. խնդրեաց, և լսելի եղև. զի տեղայ ՅԱՀ յերկնից

'ի վերայ փախստէից կարկուտ քարեղէն տաստիկ յոյժ. մինչ զի կարի առաւել եղև թիւ մեռելոց 'ի զարհուրելի կարկտէ անտի, քան 'ի սրոյ որդւոցն իսրայէլ, և այնպէս ամենայն Ճնշապարհն 'ի բեթաւրոնայ մինչև գյազեկայ լցաւ քարամբք և դիակամբք։ 'Ի նմին ժամանակի այլք 'ի զօրացն իսրայէլի կոտորէին զամաւսիկ, որք փախչէին 'ի կողմն մահետայ. բայց սիւն էր տարաժամեալ, և արեգական մերձ 'ի մուտս. և յաղթութիւն չևաւս վճարեալ։

Յայնմ պահու Ցեսուա ոչ միայն խնդրէ 'ի նմանէ, այլև հրամայեաց տալ իբրև 'ի բերանոյ նոյ նմա, և ասէ. կացցէ արեգական հանդիպ գաբաւնի, և լուսինն հանգիպ ձորոյն եղոնայ. այս է յիւրաքանչիւր տեղիս, ուր գտան 'ի նմին ժամմանէ։ * Ցեսու յետ (ասէ սքեն եղիշէ) զնոճ վերադոյն քան զարեգական և զլուսին, որ և հաստեալ կայր նոցա յօդնականութեան. քանիւ զանուանս լուսաւորացն հրամանաւ 'ի մէջ բերէ յեսու, այլ մնօք զնոյն (կարդայ) լուսաւորացն՝ հրամայեաց տալ, զի կացուսցէ։ Եւ անգէն կատարեցաւ խնդրելին. քանզի նոյնժամայն ակնարկութեամբ նմա կատեաց անշարժ յընթացից զերկու լուսաւորս մեծամեծս, * մինչև ցկատարումն աւուրն միոյ (ասէ գիրն). և ոչ եղև այսպիսի օր՝ ոչ յառաջ, և ոչ յետոյ։ 'Ի վերայ այսորիկ զանազան կարծիք են. ոմանք զօրն իմանան աստ միայն փոխանակ տուրնջեան. և համարին, թէ եկաց արեգական յարևմտեան կողմն առ հորիզոնաւ ժամն ԺԲ. ուստի այն տիւ երկայնեցաւ ժամն իբր ԻԲ։ Այլք բռնադատին գնել թէ ընդ արեգական և ընդ լուսնի կացին անշարժ և այլ ամենայն երկինք և աստեղք. ապա թէ ոչ՝ մեծ այլայլութիւն և խառնակութիւն լինէր 'ի դիրս ամենայն երկնային մարմնոց, եթէ չէր և նոցա զտեղի առեալ։ Այլք իմանան աստ զօրն քնական կամ լցացեալ, փոխանակ քան և չորս ժամուց տևողութեան. ուստի ըստ սոցա տիւն այն եղև իբրև լՂ. ժամ. և 'ի սոյն միտս առնուն իրաւամբք գասելն սիրաքայ. * Եւ մի օրն եղև իբրու երկու։

Եշ. 5։ Ա՛յս կարծիք առաւել հաւանելի երևի՝ մի՝ զի ոչ բռնադատին դադարեցուցանել յընթացից զայլ երկնային մարմինս. և այնպես անպատճառ բազմացուցանել զհրաշս. քանզի ասեն, թէ՝ի կալ արեգական ընդ քնական օր մի ողջոյն, այլ երկինք և աստեղք շարունակեցին զօրական շրջաբերութիւն իւրեանց. զոր՝ի միջոցի 24. ժամուց լրացուցեալ՝ ժամանեցին արեգական, որ կայր՝ի քնական կէտն իւր. յայնժամ և նա անդրէն կալաւ զիւր սովորական ընթացս, նոր օր սկսանելով։ Այլ երկրորդ՝ զի յետ դադարման արեգական, այնչափ երագործութիւք պատմին եղեալ՝ի նմին միջոցի, զորս ոչ եթէ յերկոտասան, այլև՝ի քսան և չորս ժամս գլխովին բազում աշխատութիւք և առանց վայրկեան մի ժամնանկի կորուսանելոյ հասիլ մարթի էր տանել՝ի գլուխ։

Զանգի զկնի կալոյ արեգական, որպիսի իսրայէլի ոչ դադարեցան՝ի սնդելոյ զհետ ամենից հայոց և՝ի կոտորելոյ զնոսա, յորմէ յայտ է թէ կային դեռ ևս բազումք. զի թէ սակաւք ոմանք եւեթ ցանևցիր ապացեալ էին, չէ հաւանելի թէ յեսու իմաստուն և երկիւղած զօրավար իշխեալ էր զայնպիսի մեծ աքանչելիս խնդրել՝ի նոսէ։ Ապա՝ի նմին աւուր ընդ ժամ ինչ դեռևս հարին որպիքն իսրայէլի զԳնամիս՝ մինչև սպառել զնոսա։ Ապա իբրև կամէր յեսու իւրովքն հանդերձ դառնալ՝ի բանակն՝ի գաղգաղա, ազդ եղև նմա, թէ հինգ թագաւորքն կան թաքուցեալ յայրին՝ի մինկետա։ Ա՛յս լուր ետ նմա փոխել զխորհուրդ իւր. վազվազակի առաքեաց նոր հրամանս զօրաց իւրոց խաղալ՝ի մանկետա քաղաք, և առնուլ զնա. և զհատուած մի՝ի զօրաց անտի արձակեալ երթալ փակել զբերան այրին մեծամեծ քարամբք. և կալ անդ՝ի պահպանութիւն։ Ա՛ռին զմանկետա, և կոտորեցին զամենայն քնակիչս նորա, և զամենայն անասունս նոցա, մինչև չմնալ՝ի նմա ապրեալ և ոչ չոչն մի. իսկ զթագաւոր նորա կենդանի բռնեալ՝ կախեցին զփայտէ։ Ի միաբանեալ զօրաց

անտի ամենևին ոչ ոք, եւ ամենայն ժողովուրդ ի
խեան ասա և անդ, և ամենայն յամուր ամուր
քաղաքս։

Եւ յայնմ ամենայն ժամու ելին միա-
ցան ի դաշտին Մակեդոնացւոց. և հրամայեաց
Տանել զՆաւպղեան Թագաւորն յայրէ անտի. և առ
ի քաջալերել զզօրս իւր ընդդէմ Թշնամեաց իւ-
րեանց, և զարհուրեցուցանել զբանանացիս, հրա-
մայեաց զօրապետաց իւրոց դնել զոտս ի վերայ
պարանոցաց նոցա յանդիման ամենայն զօրուն. և
անդ ի գետնի սպանանել զնոսա. և զմարմինս նոցա
եւս կախել զփայտէ։ Եւ յայնմ ամենայն գործ կատա-
րեցան ի նմին աւուր զկնի կալոյ արեգական. և
դեռ ևս մնացին քանի մի ժամք մինչև ցերեկոյ.
որպէս ցուցանէ որ գիրն. «Եւ կայնի ասէ՝ կա-
խեալ զփայտին մինչև ցերեկոյ». և ապա ընդ
մուտս արեւու՝ ըստ պատուիրելոյ օրինաց՝ հրամայ-
եաց յեսուէ իջուցանել զնոսա, և ընկենուլ յայրն՝
ուր էին Թագուցեալ, և Թաւալեցուցանել քա-
րինս մեծամեծս ի վերայ այրին։ Եւ մինչ այսչափ
նշանաւոր իրաց այնր աւուր՝ մինն եղև այն, զի
յայնչափ ահաւորկու կոտորածոց միջի ոչ ոք անկաւ
յորդւոց Իսրայէլի, և ոչ իսկ ոք վիրաւորեցաւ.
վասն զի բանիւ զրոյն ասացից՝ ոչ կռնչեաց լեզ-
ուաւ իւրով։

Եւ ձարեալ յեսուայ զայս մեծ յաղթութիւն, ոչ
եւս հանդիստ զօրաց իւրոց, զի մի տացի Թշնամեաց
ժամանակ զօրանալոյ նոր դաշնակցութիւք ընդ մի-
մեանս։ Եւ ասն որոյ իբրև եւս զմակեդա, վաղ-
վաղակի խաղաց ամենայն զօրաք ի ղեբնա. որ էր
ի հիւսիսակողմն մակեդայի ոչինչ կարի բացագոյն
ի նմանէ։ Եւ անդր հարկ էր նախ զսա առնուլ,
զի մի ունկնդրել ի Թիկանց Թշնամի. որ կարէր նե-
ղութիւն բազում հասուցանել բանակի իւրեանց, եւս
փանեղով զվարէն, զոր ի գաղգաղայէ տանէին
ընդ Յանապարհ գաբաւոնի։ Եւ ղեբնա. ի
այր սուսերի կոտորեցին զբնակիչս նորա, և զա-
մենայն հնչասոր որ ի նմա. իսկ զթագաւոր նորա

կախեցին գիայտե. զոր օրինակ արարին ընդ Թա-
գաւորն Երիքովի: Նոյնժամ դիմեցին ընդ արևմուտս՝
ի պաշարումն զաքիսայ. զոր գտեալ անպատրաս-
պար ի զօրաց, զի ընդ Թագաւորին իւրեանց կո-
տորեցան ի պատերազմին գաբաւոնի, առին զնա
անաշխատ յաւուր երկրորդի. և արարին ընդ նմա
որպէս ընդ ղերնա, տալով ի բերան սրոյ զամե-
նայն հնչաւոր որ ի նմա: Ընդ Հարին կոտորեցին
և զեղամարքայ գաղերայ. որ գայր գնդաւ իւրով
յօգնութիւն զաքիսայ: Նոյնժամ գարձ արարեալ յետս
կոյս յարևմտից ընդ արևելս՝ բայց միշտ ընդ հա-
րաւ խոտորելով, առին և զյողոզամ, գտեալ և
զնա առանց Թագաւորի և Թափուր ի զօրաց,
որք անկան ի մարտին գաբաւոնի: Նոյնժամ խաղա-
ցին ի քեբրոն. ուր եդեալ էին նոր Թագաւոր ի
տեղի Թագաւորին, որ մեռաւն ի մահեգդա. այլ
առ սղութիւն ժամանակին չէղև ձեռնհաս զօրա-
ժողով լինել. վասն որոյ ի քաղաքի անդ իւրեանց
կոտորեցին զնա և զամենայն ժողովուրդ նորա:
Նոյնպէս անցս կրեաց և նոր Թագաւորն դաբիրայ և
ժողովուրդ նորա, զոր կրեցին քնանկիւք նախնե-
Թայ քաղաքաց: Ի քեբրոնէ դիմեցին ընդ Հարաւ
ի լեռնակողմանս՝ տիրելով ամենայն քաղաքաց և
աւանաց որք էին ի կողմանան յայնոսիկ. և այնպէս
կալան զամենայն երկիրն գոսոմայ, որ անկանի ի
հիւսիսակողմն սեղիր լերանց Հանդեպ կադէսբառ-
նեայ, որ է յայն կոյս լերանցն այնոցիկ ի Հարա-
ւակողմն: Պա յերկրէն գոսոմայ գարձան ընդ արև-
մուտս. և տիրապետելով ամենայն տեղեաց ընդ
որ անցանէին, Հասին ցգազա. և անտի գարձան ի
գաղգազա, ուր կայր բանակ ժողովրդեան, առ-
նուլ Հանգիստ ի բազմավաստակ աշխատութենէ իւր-
եանց:

Ամենայն իրագործութիւնք ցայսմայր պատմեալք՝
պրեղէտ միով անընդհատ պատերազմաւ, կամ բա-
ւիւ գրոյն ասացից՝ Փանգամայն վճարեցան աքանչելի
յաջողութեբ. վասն զի ոչ ած իսրայէլի համագունդ
հաւատք ընդ իսրայէլն. որ նա ինքն է մի միայն ոչ

տերանց, և Թագաւոր Թագաւորաց ամենազօր. որում ոչինչ արարածական զօրուն կարօղ է զդեմ ունել: Վակայն և այնպէս յԵսու արի խմաստուն և եթ զօրաւոր ոչ երբեք հեղգացաւ յիւրմէ կողմանէ արթնամիտ ուշադրութիւն զամենայն գործս հանճար և խմաստուն ի կիր արկանել: Երկիրն Շատահուե իւրոյ Թէպետև փոքր էր. զի ըստ առաւել հաւանելի տպաւ՝ տարածութիւնն որ ի մէջ յորդանանու և միջերկրեայ ծովուն, ի լերանց լիբանանու՝ մինչև ցլերինս սէլիրայ ընդ լայն՝ չէր ինչ աւելի, քան երբ 60. մղոն իտալական. իսկ ըստ երկայն երբ 250. բայց առատաբեր և արգաւանդ յոյժ. ուստի և կարի բազմամարդ. և Թագաւորք բազումք ի նմա. եօթն Թագաւորք քանանացւոց, հիւնգ փղշտացւոց, բազումք ամովրհացւոց, խեւացւոց և փերեզացւոց. ըստ այսմ և այլոց շրջակայ ազգաց. որոց անցինքն Թէպետ փոքր էր, բայց միացեալք ընդ միմեանս՝ զօրութիւն մեծ կացուցանէին: Երբև հնչեցաւ լուր անցիցն գայեայ զոր էառ յեսու, և կոտորեաց զԹագաւոր նորա հանդերձ համբրն քնակչօք երկրին, ըստ նախագրելոցս այն ամենայն Թագաւորք վաղվաղակի հրեշտակս Թէս արձակեալ առ միմեանս գումարեցան ի ժողով, և դաշնագրեալ միաբանեցան ընդդէմ եբայեցւոց: Իսկ յեսու աճապարեալ արագընթաց արշաւանօք՝ նախորացոյց ըստ մասին զնորհուրդ նոցա. զի յայնմ առաջնում մարտի ի միջոց այնչափ Թագաւորաց դաշնակցաց, հաղիւ հինգ Թագաւորք ամովրհացւոց գամագիւա եղեն միանալ. զորս յեսու արտաքոյ կարծեաց իւրեանց՝ յեղակարծումն հասեալ ի վերայ, կոտորեաց միահաղոյն, որպէս Թէ էին միացեալ և եկեալ ոչ առ ի մարտ, այլ առ ի զննումն. Իսկ զայլս մի առ մի ջնջեաց ի միջոյ, առանց տալոյ գուլ և դադար զօրու իւրում: Եւ այսպէս յայնմ առաջնում ամի կոտորեաց տասն Թագաւորս, և առ զերկիրն նոցա:

ԳԼՈՒԽ Ժ.

Յետոյ էոտորէ չյաբէին աբչայ ասուբայ, և զայլ ամենայն
խափառուս պիբանեալս ընդ նմա։

Յետու յայս ամենայն պատերազմունս զամենայն հանձար և զհնարս իւր ՚ի վար արկանէր՝ հատանել, որչափ ինչ մարթ էր, զհաղորդակցութիւն դաշնակցեալ Թագաւորաց. որպէս զի բաժանեալ զնոսա ՚ի միմեանց՝ տկարացուսցէ զզօրութիւն նոցա։ Ա՛ման այնորիկ այսպիսի խորհրդով միշտ ուղղէր զգնացս իւր. ՚ի սկզբան անդ խաղաց ՚ի գաղգաղայէ ընդ գայէ և ընդ գաբաւոն մինչև ՚ի զաքիս, և յծուխ միջերկրեայ. անտի դարձաւ յետս, քայց ոչ ընդ նոյն շաւիղ, այլ փոքր մի ՚ի վայր խոտորեալ ՚ի զաքիսայ մինչև ՚ի քեբբոն։ Ա՛նտի խոտորեցաւ ընդ հարաւ մինչև ցերկիրն դոսոմայ. և անտի դարձ արարեալ վերստին յարևմուտս՝ դիմեաց ՚ի գազա և ՚ի ծովակողին։ Ա՛ռաջին արշաւանօք բաժանեաց զհիւսիսային Թագաւորս ՚ի հարաւայնոց. երկրորդումն անջրպետեաց զմանն ինչ արևելեայց ՚ի մտնել անտի՝ որ կցորդէր ընդ արևմտեայս. իսկ երրորդումն արկ անջրպետ ՚ի մէջ պաղեստինացւոց և ամմինացւոց. զի Թեպհտև սոքա չէին ՚ի Թշնամեաց անտի, քայց կարէին լինել կասկածաւոր։ Օ՛այս զգուշութիւն արար յետս առաւելապէս ՚ի լեռնային կողմանս. ուր յառնուլ նորա զքաղաքս՝ զնաւակիչս նոցա սպառ սպուռ կոտորեր, և զամենայն ինչս աւար հարկանէր. քայց զքաղաքս ոչ կործանէր՝ և ոչ այրեր. զի էին ամրակառոյցք և զօրաւորք, վասն որոյ և պիտանի իսրայէլացւոց։ Ա՛ւ ընդ հակառակն՝ զքաղաքս և զդեօղս դաշտայինս առ հասարակ քանդէր և հրձիգ առնէր, և զերկիրն անշէն ամայի Թողոյր. զի մի ստիպեսցի կարգել անտանօր ՚ի զօրաց իւրոց պահապանս, և տկարացու-

ցանել զբանակ իւր ընդդէմ լեռնականաց։ Եւ այնպէս զարշաւանս լեռնայնոց խափանէր զօրութեբ զինուց. իսկ զդաշտայինսն պահպանութեբ պահրելոյ, առ ի չկարելոյ յօդնութեն հասանել միմեանց։

Այս ամենայն իբրև լուաւ յաբէն արքայ ասորւոց, որ էր նախասահիւ և զօրաւոր ի մէջ ամենայն թագաւորութեց, որք տիրէին ի հիւսիսային կողմանս երկրին քանանացւոց, երկեաւ թէ այն հզրէհ վաղ ընդ փոյթ հասանիցէ և ի կողմանսն յայնոսիկ։ Եւմին իբր վաղվաղակի արձակեաց հրեշտակս առ ամենայն թագաւորս, կամ լաւ ևս ասել՝ իշխանս այնր կողմանն, և ի մի գումարեաց զնոսա. որք և անթիւ անհամար զօրօք, և կառօք և երիվարօք եկին բանակեցան առ ծովակաւն մառոնայ՝ տալ մարտ պատերազմի ընդ իսրայէլ։ Այլ մինչև էր նոցա կարգեալ և կազմեալ զբանակ իւրեանց՝ առ ի սկիզբն առնել մարտին, ասաց ՅՅծ ցյեսու՝ կանխել և հասանել ի վերայ նոցա. և մի ինչ երկնչել, զի ի վաղիւն ի տոյն ժամու խօսել իմ ընդ քեզ, զայն ամենայն բազմութեբ գումարելոց, և զկառս նոցա և զերիվարս տայ ասէ ի ձեռս քո։ Այլ պատուիրեաց, զի մի ագահեսցէն ի կառսն և յերիվարս թշնամեաց՝ պահել զնոսա ի սէտս զինուորութեն խրայէլի, այլ յօծ միայն դիցեն զապաւինութիւն իւրեանց. վասն որոյ ասաց, զամենայն երիվարս՝ որ ի ձեռս անկանիցեն, կարթահատոր առնել, այս է զի ի ջլոյ ի ներքոյ ծնգաց հատանել, զի առ այլ ինչ մի իցեն պիտանացու, բայց միայն ձգել աղօրիս, և բառնալ բեռինս կաղաքայլ. օրպէս և զկառս տայց այրել հրով։

Այս պատուէր առեալ յեսուայ, միանգամայն և ապահովացեալ վասն յաղթութեբ, ել ինքն և ամենայն զօր պատերազմող ընդ նմա, որք առ հասարմատուութբ թշնամեաց սակաւք էին. և յանկարծ ընդ հասեալ ի վերայ նոցա՝ խռովեաց զամենայն բանակ նոցա, և ի փախուստ դարձոյց զնոսա յան-

խնայ կոտորմամբ։ Ի՝ջ Թև զօրուն յեսուայ հալա-
ծական արար զՔենաիմիս կոտորելով մինչև ցմահ ե-
րեփուվԹամպիմ, այսինքն ցծովեզերեայ աղահանս
մնասերեփուվԹայ. և ձախոյ Թևն մինչև ցսիդոն.
իսկ միջին գունդն մինչև ցդաշտն մնասերիայ, աւերէ
քան վաԹսունն մղոն իտալական հալածելով և կո-
տորելով, մինչև չմնալոյ յայնչափ բազմաԹիւնէ ա-
պրեալ. և զերիվարս նոցա կարԹակոտոր արարին,
ըստ պատուիրելոյ նոցա. և զկառսն այրեցին. և զա-
մենայն աւար նոցա բաժանեցին ի մէջ իւրեանց
յաղԹական զօրք որդւոց իսրայէլի։ Ապա արքայն ա-
սուրայ, որ գումարեաց զայլ Թագաւորս և յարոյց
ի մարտ ընդդէմ իսրայէլի, կամ ոչ գտաւ ինքն
ընդ այլոց ի մարտի անդ, և կամ առաջին եղև ի
փախստեից, և ամրացաւ յատովը քաղաք իւր ամրա-
կառոյց ի վերայ լերին. բայց ոչինչ ամրուԹիւնն
զօրի ընդդէմ զօրաց, որոց ած է օդնական։ Ապա
յեսուա զքաղաքն, և զԹագաւորն հանդերձ համա-
րիչն քնակչօքն ի սուր սուսերի սատակեաց, և
զքաղաքն այրեաց հրով։ Զայլ լեռնային քաղաքս
ամրացուցեալս հողապատ ամրակուռ պատնէշք՝ ոչ
այրեաց, որպէս ի վեր անդր նշանակեցաք, բայց
զայս միայն. Թերևս վի չունէր յեսու զօր բաւական
ի պահել զայնչափ տարածուԹիւն երկրի, կամ սակս
առաւել խստասրտուԹ Թագաւորի նորա. վի ոչ ինքն
միայն եղ մարտիս ընդդէմ իսրայէլի, այլ ի նոյն
գործս եաց և զայլ Թագաւորս. վասն այնորիկ հո-
գալուր արար յեսու զքաղաք նորա. վի մի երբէք լի-
ցի տեղի ապաստանի քանանացւոց վերջ ելոյց ի սրոյ
որդւոց իսրայէլի։ Ոչ դադարեցաւ յեսու ի պա-
տերազմելոյ, մինչև եբարձ զամենայն Թագաւորս,
և զծովովուրդս, ընդ որս և զենակիմն զհսկայս
ի լեռնակոյն քեբրոնի և դաբիրոյ. որք խստացան
ի սիրտս իւրեանց չլինել անձնատուր որդւոց իս-
րայէլի, և գտանել ողորմուԹիւն, որպէս գտին գա-
բաւոնացիք. այլ անդեցին պատերազմիւ պատա-
հել նոցա, վի ամենեքեան սատակեսցին. քանզի
լցեալ էր չափ չարուԹեանց, որով անօրինեցան յած։

Յայս ամենայն պատերազմունս՝ եբարձ Յեսու քսան և ինն, կամ ըստ այլ Թարգմանութեան, երեսուն և մի Թագաւորս. որք մի առ մի նշանակին ի գիրս Յեսուայ. գլ. ձբ: Ա.ՀԼԹԷ ընդ քանի՛ ամս արար Յեսու զայս ամենայն, ՚ըր գիրն աստէն անդրադարձ Թողու, զայս և եթէ ասելով. * Այս աւուրս բազումս արար Յեսու ընդ ամենայն Թագաւորսն ընդ այնոսիկ պատերազմ ‖. յեսու. ձա. 18: Վասն յայլոց բանից գրոց ուսումն խնամալ՝ Թէ պատերազմն Յեսուայ ձգեցաւ ընդ ամ իրրև եօթն: Վասն զի քաղեբ քառասնամեայ էր, յորժամ առաքեցաւ քեաց զնա մինչս ի կադէսբառնեայ լրտեսել զերկիրն քանանացւոց. իսկ ի վերջանալ պատերազմին էր ամաց ութսուն և հնգից. որպէս ինքն իսկ ասէ վասն իւր. * Վառասնամեայ էի ես, յորժամ առաքեաց զիս մովսէս . . . . և արդ ահաւասիկ եմ ես այսօր ամաց ութսուն և հնգից. և կամ ըստ եմ այսօր՝ որպէս և յայնժամ. . . . . մտանել և ելանել ի պատերազմ ‖. յեսու. ձգ. 7: Ա.ՐԴ՝ եթէ ի յութսուն և ի հնգից հանցին քառասուն ամքն՝ զոր ունէր, յորժամ առաքեցաւ ի մովսիսէ. և երեսուն և ութ ամքն զորս լետ այնորիկ անդ ցայգ յանապատի՝ մինչև անցին զյորդանան, միանգամ եօթն ամք, զորս ծախեաց լեսու ի ջնջել զքանանայիս:

ԳԼՈՒԽ ՀԱ

Յետս հանգիստ առնու՝ ի պատերազմ : Լաճանէ
զերկիրն Հանանացւոց՝ ի փառն ցեղս որպոյն Եսայեայ :

Յետ եօթն ամաց պատերազմի՝ Յեսու ոչ ևս կամելով ընդարձակել զսահմանս որդւոց Իսրայէլ, և չունելով այնուհետև Թշնամի մերձաւոր, որ իշխեսցէ անհանգիստ առնել զնա. և ինքն հարիւր և եօթն ամաց ծերացեալ, ետ հանգիստ անձին և ժողովրդեան՝ ի պատերազմէ : Այս սկսաւ բաժանել զերկիրն վիճակաւ իննեցունց ցեղիցն և կիսոց ցեղին մնասեհ. զի ցեղն ռուբինի և գադայ, և կէս ցեղին մնասեհ՝ արդէն ունէին զժառանգութիւն իւրեանց յայնկոյս յորդանանու ընկալեալք՝ ի Մովսիսէ յերկրին ամովրհացւոց : Յայնժամ մատեաւ քաղեբ յեփոնեայ առ Յեսու, մինչ տակաւին՝ ի գաղգաղա էր բանակն, և յիշեցուցեալ զնոստուհին մովսիսի, խնդրեաց խնայարհութիւն տալ նմա զնահապետին քեբրոնի, որք էին միագօտի լերինք. և զանազան քաղաքք ամրակառոյցք՝ ի նոսա. յորոց զոմանս յառաջնում պատերազմի առեալ էր Յեսու. այլ յետոյ՝ ի մեկնիլ անտի իսրայէլացւոց, ենակիմք բնակիչք լեռնական կողմնացն այնոցիկ՝ արք յաղթանդամք և զօրաւորք՝ անդրէն մտեալ ամրացեալ էին՝ ի նոսա : Ոմանց որոյ կասկածելով քաղեբայ, թէ գուցէ զծերութիւն հասակին պատճառեալ Յեսուայ, անբաւական դատիցէ զնա առ այն ծանր գործառնութիւն, ինքն կանխեաց կալաւ զառաջս ընդդիմութեանն. յուցեալ թէ ծերութիւն հասակին ոչ նուազեցոյց զոյժ և զզօրութիւն նորա. քանզի և այսօր կարող եմ ասէ մտանել և ելանել՝ ի պատերազմ, որպէս՝ ի քառասնամեայ հասակի իմում, մինչ առաքեցայ՝ ի կադէսբառնեայ. վասն

որոյ աներկմիտ յուսով ապաւինեալ յամենազօր
օգնութէն նմա՝ վստահանայր սատակել զնոսա։

Հաձեցաւ Յեսու ընդ խնդիրս նորա, գովեաց
զհմաստութէն նորա և զարիւթէն. օրհնեաց զնա,
խնդրելով ՚ի նմանէ յաջողել զխորհուրդ նորա ՚ի
բարի կատարած։ Այլ այնպէս խնդիրն քաղեալ
նոյն ժամուն կատարեցաւ. բայց մարտ նորա և տի-
բապետութէն լեռնակողմանցն քեբրոնի՝ զկնի մահ-
ուան Յեսուայ եղև. զոր յիւրում տեղոջ նշանակես-
ցուք։ Այնդ ՚ի գաղգաղայ ետ Յեսու և ցեղն յու-
դայի, և եփրեմայ, և կիսոյ ցեղին մանասէի զա-
ժին ժառանգութէն իւրեանց վիճակաւ ՚ի հարա-
ւային կողմանս երկրին քանանացւոց. և միացին
հիւսիսային կողմանքն բաժանելի յեօթն միացեալ
ցեղսն, որոց չև ևս էր առեալ զբաժին ժառան-
գութէն իւրեանց։

Այ նմին ժամանակի խորանն վկայութէն և տա-
պանակն ուխտի, ընդ նմին և մեծ ժողով որդւոց
իսրայելի ՚ի գաղգաղայ փոխադրեցան ՚ի սելով՝
քաղաք ամուր ՚ի վերայ լերին. մի՝ զի դիւրին լինի
ժողովրդեան յամենայն կողմանց երթալ անդր.
քանզի սելով էր գրեթէ ՚ի միջակէտ անդր երկրին
պաղեստինոյ. իսկ գաղգաղա ՚ի մի ծայր սահմա-
նաց նոցա նորա. և երկրորդ՝ զի հեշտեաւ ևս մարթա-
ցին ՚ի գլուխ տանել զձեռնարկեալ բաժանումն հիւսի-
սային կողմանց, առաւել հպատոր գոլով։ Այդ՝
եթէ յեսու ցարդ երևեցոյց յանձին արիւթէն և
հանճար զինուորական իբրև քաջ զօրավար, ասա
՚ի բաժանման երկրին փայլեցոյց զարդարութիւն՝
իբրև իշխան արդարակորով. և զսէր՝ իբրև հայր
գորովական առ որդիս. զի յամենայնի յայտնեալ
այնպէս վարեցաւ, մինչև չթողուլ զնաև տեղի կաս-
ծիս անգամ ակնառութէն յումեքէ։ Այ ուաւել փու-
թայր նա տալ իւրաքանչիւր նոցա զժառանգութէն,
քան թէ նոքա առնուլ. յանդիմանէ զնեղգութէն
նոցա. * Այ՝ինչև ե՞րբ սակ մեղկիցիք չմտանել
ժառանգել զերկիրն ‖. և զի գուցէ երկնչէին ՚ի
միացուածոց անտի քանանացւոց, քաջալերէ զնոսա

ոչինչ զանգիտել, զի ՚ի՛ճ հարց իւրեանց ետ նոցա զերկիւղն զայն։ Այսո՛ր որոյ ոչ ևս հայեցեալ ՚ի դանդաղումն նոցա, առաքեաց վաղվաղակի երկբայափս չափել զամենայն երկիրն. և գրել ՚ի մի՛ տեղի զչափ տարածումն նորա, և զքաղաքս, և զամենայն հանգամանս իւրաքանչիւր տեղեաց, և բերել առ նա։ Այս առ բառնալոյ զամենայն կարծիս խաբէութեա՛ն և անհաւատարմութե՛ան, պատուիրեաց եօթնից ցեղից ընտրել արս երիս յիւրաքանչիւր ցեղէ, և տալ նմա. զորս և առաքեաց ՚ի միասին ընդ երկրաչափից։

Այս վձարեալ նոցա զգործան, եկին մատուցին յեսուա ՚ի բանակն ՚ի սելով, և նա միաբան ընդ եղիազարու քահանայի արկ վիճակ առաջի խորանին վկայութե՛ան ՚ի վերայ եօթնից բաժնի ըստ եօթն ցեղից. և բաժանեաց նոցա զերկիրն։ Այտ յեսու և հնդեցունց գատերայ սաղալատաց բաժին ժառանգութե՛ան ՚ի մէջ եղբարց հօր իւրեանց. ըստ որում՝ հրամայեալ էր ՚ի՛ մովսիսէ. զի մի՛ ջնջեսցի անուն հօր իւրեանց ՚ի միջոյ սեպհական ցեղի իւրոյ՝ առ ՚ի չգոյէ արու զաւակի. բայց այսու պայմանաւ, զի մի՛ լինիցին կանայք արանց յօտար ցեղէ, այլ միայն ՚ի ցեղէ հօր իւրեանց. զի մի՛ փոխեսցի ժառանգութի՛ւն որդւոց իսրայէլի ցեղէ ՚ի ցեղ։ Այացոյց յեսու և զքաղաքս ապաստանի ըստ հրամանի տ՚ն, փախչել անդր սպանողին, որ ոք սպանանիցէ զընդկեր իւր ակամայ յանգիտս։ Այայն կոյս յորդանանու՝ զբոսոր ՚ի գաշտին ռուբինի. զգամնվե՛ ՚ի գաւազան՝ ՚ի բաժնին գադայ. և զդաւդմե՛ ՚ի բասան ՚ի մասին կիսոյ ցեղին մանասէի. զորս յառաջագոյն որոշեալ էր և զատուցեալ նա ինքն մովսէս. է. օրէն. է. կւ։ Այսկ յայսկոյս յորդանանու՝ սահմանեաց զկադէս՝ ՚ի գալիլեա՛ ՚ի լերինն նեփթաղիմայ, և ըզքեբրոն ՚ի լերին յուդայ. այս երկու քաղաք էին իբր յերկու ծագս երկրին պաղեստինայ. և զսիւքեմ, որ էր իբր ՚ի մէջ երկուց այն քաղաքաց ՚ի լերին ՚ի վիճակի եփրեմայ։

Այպա մինչև էր արձակեալ ժողով իշխանացն

խորայելի, եւ ասուն և զնաացեալոց քաղաքս քնակու-
թե, քաց 'ի վերայդրեալ վեց քաղաքաց ապաստա-
նի, պլնս քառասուն և երկու, ընդ ամենայն՝ քա-
ռասուն և ութ քաղաքս, հանդերձ շրջակայ վիճա-
կաւ իւրեանց՝ արտաքոյ պարսպաց չափեալ երկու
հազար կանգունս տարածութե յամենայն կողմանց
շուրջանակի. որ առնե իբր հազար քայլ երկրաչա-
փական ըստ հին հռովմայեցւոց, սփիւռ ընդ ամե-
նայն կալուածս ժառանգութե որդւոցն իսրայելի:
Ա[illegible]անզի կամեցաւ Տ՝ զի զնաացիք պաշտօնեալք
իւր, միանդամայն և վարդապետք և օրհնուսոցք
և դատաւորք ժողովրդեան սփռեսցին 'ի մէջ ամե-
նայն ցեղից, զի 'ի ծագել դժուարութե կամ
խնդրոց 'ի վերայ բանից օրինաց, դիւրին իցէ ա-
մենեցուն դիմել առնոսա, և ուսանել 'ի նոցանէ
զճարտարատ իմաստ օրինաց. և ըստ տնօրինելոյն
Տ՝ ցեղին կահաթու, յորմէ էր առնին քահա-
նայից, վիճակեցաւ քնակել 'ի կալուածս ժառան-
գութեան ցեղին յուդայի. ուր յետոյ շինեցաւ
տաճարն Տն:

Ընդ այսր ամենայնի կոչեաց յեսու զորդիսն
ռուբինի, և զորդիսն գադայ, և զկէս ցեղին մա-
նասէի, և գովեաց զվիամիտ հնազանդութե նոցա,
զի ունկնդիր եղեն բանից նորա ըստ ամենայնի՝
զոր պատուիրեաց նոցա, և զքաջութե և զեռանդ-
սիրութե՝ զի ոչ թողին զեղբարս իւրեանց զայն-
չափ աւուրս, մինչև հանդոյց Տր ած զնոսա, զգու-
շացոյց մեծապէս զնոսա հաւատարիմ լինել յամե-
նայն ժամ առ Ած. պահել զօրէնս և զպատուի-
րանս նորա. պաշտել զնա և սիրել յամենայն սրտէ,
և յամենայն անձնէ: Յետ ապա օրհնեալ զնոսա, և
տուեալ նոցա յաւարէ անտի թնդամեաց զբաժին
իւրեանց անասուն բազում յոյժ, և ոսկի և արծաթ,
և պղինձ, և երկաթ, և հանդերձս անթիւս, աւե-
ձակեաց զնոսա, ոչ իբրև զբազալոխս զբօս իւր,
այլ իբրև հայր գորովական զսիրելի որդեակս իւր
'ի գրկաց՝ երթալ ժառանգել զվիճակ կալուածոց
իւրեանց, զոր ետ նոցա մովսէս ծառայ Տն յայն-

կոյս յորդանանու։ Այլ այնպէս օրհնուԹ՚ի և լիա ցեալ ընչիւք գաբաէն գնացին։ Այլ յաւուրսն քան զանցանել իւրեանց ընդ յորդանան, կամեցեալ ինչ մի որպէս գործ ածպաշտուԹ՚ի գործել, փոքր միւս ևս և զամենայն ժողովուրդն ի կռիւ արիւնըհեղուԹ պատերազմի յարուցանէին։ Վանդղ շինեցին սեղան մեծ յոյժ երևելի ի հեռուստ ի վերայ բլրոյ առ եղերբ յորդանանու յարևմտեան կողմն յերիքովն քանանայեցոց, կամ ըստ յովսեպոսի և այլոց ոմանց՝ ի միւս կողմն ի յերիքովի իւրեանց։

Այս քան իբրև լու եղև յականջս տասն ցեղից որդւոցն իսրայէլի, խռովեցան յոյժ, յայտնի ապստամբուԹիւն յայ վարկանելով զայն գործ։ Վանդղ սաստիկ պատուիրանաւ արգելեալ էր ածէմատուցանել ողջակէզ կամ զոհ փրկուԹեան յայլ տեղի, կամ՝ ի վերայ այլ ինչ սեղանոյ, բայց միայն ի վերայ սեղանոյ տէն այ՝ որ է առաջի խորանին վկայուԹ՚ե։ Մանգամայն և հրամայեալ էր նոցա, զի ԹԷ երբէք լսիցեն՝ ԹԷ ելիցն ուրեք ի նոցանէ արք անօրինք, որք ապստամբեցուցանիցեն յայ, և ձգիցեն ի պաշտօն աստուածոց օտարաց, կոտորմամբ սրոյ սպառսպուռ ջնջեսցեն զնոսա և զամենայն ստացուածս նոցա։ Այլ իբրև որդիքն իսրայէլի ի կատարումն այսր պատուիրանի տէն՝ առ ժամայն ի զէն վառեցան, ելանել տալ ընդ նոսա պատերազմ. բայց յառաջ քան զձեռնարկել ի գործ՝ ժողովեցան ի սելով իշխանաք ժողովրդեանն ի խորհուրդ. ուր հաստատեցին չլինել գահավիժ ի գործ, առանց նախ լսելոյ և միտս կոցմանն և իմանալոյ զխորհուրդ նոցա։ Այրին աղագաւ առաքեցին հրեշտակս ի գիմաց ամենայն ժողովրդեան տասն այր յիշխանաց, մի մի իշխան ի նահապետաց յամենայն ցեղից իսրայէլի, և գլուխ առմենեցուն զփենհէս քահանայ՝ յածակոյս կողմանէ։ Վնացին նոքա. և փենհէս իբրև գլուխ հրեշտակուԹ՚ե վառեալ ածային նախանձու, խօսեցաւ առ նոսա խստագոյս ի գիմաց ամենայն ժողովրդեան տէն, ԹԷ զիաՉդ իշխեցին առանձին սեղան

կանգնել արտաքոյ սեղանոյ խորանին, և ասլստամբել կայ։ Յուշ առնելով նոցա զարթասիւելն Հարուածս՝ որ եղև ի նոսե ի վերայ ամենայն ժողովրդեան վասն մեղաց կռապաշտութեանն եւ վրդովմանն, յորմէ չեմք ասե սրբեալ մինչև ցայսօր։ Եւ դուք նոր ամպարշտութեանդ դարձեալ կամիք զարհուրանել զսրտմտութեանն բարկութեանն ի վերայ ամենայն խորհելն։ Յիշե և զմեզ աքարայ զբայեան։ որ նա միայն մեղաւ, և զայն գաղտ, չուենելով զոք յայլոց եւ մեղսակից։ սակայն և այնպես բարկութեանն եղև ի վերայ ամենայն ժողովրդեան։ ապա քանի՞ առաւել չարեաց վտանգ կասկածելի է ի յայտնի և ի հանրական անօրէնութեանդ ասել։ Արդ այս ծանր իցէ ձեզ ասել, զի հեռի եք ի խորանին վկայութեան, և դժուարին ի հասարակաց տանախմբութեանս գալ ի սելով, ուր հարեալ է խորանն նոսե՝ անջրպետ ի մէջ ունելով զորդանան, անցիք յերկիր կալուածոց մերոց, և ժառանգեցէք ի միջի մերում, և մի՛ լինիք ապստամբք ի նոսե, և մի՛ ի մէնջ ապստամբիցէք։

Նայիլ թէ կատարեաց փենհէս զպատճառս ժողովրդեան առ նոսա, եւտուն նորա պատասխանի միաբան երդմամբ յանուն նոսա՝ թէ ո՛չ չինեցաք զսեղանն զայն՝ առնել ի վերայ նորա ողջակէզ կամ զոհ փրկութեան. այլ միայն զի լինիցի ի վկայութեան ասեն ընդ մեզ և ընդ ձեզ որդւոց յորդիս, պաշտել մեզ զմի հասարակաց տեր ած իսրայէլի ընդ ձեզ. որպէս զի թէ որդիք ձեր յապագայ ժամանակս կամիցեն արգելուլ զորդիս մեր մատուցանել զոհս և ողջակէզս ի վերայ սեղանոյ տեառն ի խորանին վկայութեան, և ասիցեն ոչ գոյ ձեզ բաժին ի տեառնէ, և օտարացուցանիցեն զմեզ ի ձէնջ իբրև ժողովուրդ օտար, և իբրև պաշտօնեայ այլ հին աստուածոյ, սակս անջրպետ լինելոյ ընդ մեզ և ընդ ձեզ յորդանան գետոյ, սեղանդ այդ կանգնեալ ի մէնջ ի գետափն ի վերայ սահմանի ձերոյ՝ լինի մշտնջենաւոր վկայութեան, թէ որպէս դուք, նոյնպէս և մեք միապէս պաշտեմք զպաշտօն տեառն մեր

իսրայէլի ընծայիւք և պատարագօք մերովք և զո-
հիւք փրկութեանն մերոյ։ Այնժամ կամեցաւ էր մեր
շինել սեղան զոհի առ ապստամբելոյ ՚ի ձէնջ, ա-
պաքէն շինեաք յերկրի մերում յայս կոյս գետոյն
մեռ առ մեզ, և ոչ ՚ի սահմանս ձեր գետով անջատ-
եալ ՚ի միջ. զոր միւտ դիւրին էր ձեզ քակել։
Այլ քան լինի մեզ ապստամբիլ ՚ի ձեռն այսօր. և
մատուցանել նմա ողջակէզ, կամ զոհ փրկութեան
՚ի վերայ այլ սեղանոյ, բայց միայն ՚ի վերայ սե-
ղանոյ, որ է առաջի խորանի նորա։ Այս ան-
կեղծ խոստովանութեն որդւոց ռուբէնի և որդւոցն
գադայ լուեալ փեղկէսի և ամենայն իշխանաց որ
ընդ նմա, հաճեցան և ուրախ եղեն յոյժ, զի
յայտնեցաւ ստուերն կասկածանաց իւրեանց. և
դարձան ՚ի սելով և պատմեցին ժողովրդեան զպատ-
գամն նոցա. ընդ որ հաճեցան և խնդացին որդիքն
իսրայէլի և օրհնեցին զնծ։ Այս սեղանն այն ան-
ուանեցաւ. * Վկայութեն է ՚ի մէջ նոցա, թէ
Տէր՝ նա է նոցա ‖։

Արժանաւոր արժան է զարմանալ, թէ զնա՛րդ
այս քաժանութեան ժառանգութեանց՝ որ ծանր կնճ էր,
և սովորաբար պատճառ խռովութեանց և տրտնջա-
նաց, մանաւանդ առ եբրայեցիս, որք ՚ի բնէ յա-
ճարեալ էին յաղմուկ և ՚ի խռովութեն, այսպիսի
խաղաղական հանդարտութեն վճարեցաւ. մինչև
ոչ ումեք ՚ի նոցանէ տրտնջել կամ ձիկ հանել.
միայն որդիքն յակնածեալ վարանէին, և ՚ի նոսա առա-
ւելապէս ցեղն մանասէի, որում առ համեմատու-
թեն բազմութեն իւրոյ՝ կարի ինն անձուկ թուե-
ցաւ վիճակն տուեալ նմա։ Սակայն և նոքա ոչ
աղմկաւ և յանդգնական տրտնջանօք՝ որպէս յայտ
է ՚ի պատասխանւոյն՝ առաջի արարին զինդիր իւ-
րեանց. զոր և յետու իրաւացի համարեալ, անդէ
մոռացմ ընդհեաց նոցա։ Այլ զի կալուածք երկ-
րին քանանացւոց արդէն բաժանեալ էին, չէր
արժան զվիճակս այլոց կրճատել և տալ նոցա.
նմին իրի ասաց նոցա յետու հատանել զանտառս
խիտ մայրիս ՚ի լերանցն եփրեմայ, կամ գեղ-

բուայ, և անդ ընդարձակել զսահմանս իւրեանց, լինել տունս և քաղաքս. և զի բազմաթիւ են և զօրաւոր, իջանիցեն անտի 'ի ձորն յեզրայելի, և սրով իւրեանց սատակելով զինացորդս քանանացւոց, ժառանգեսցեն զերկիր նոցա. և առ քաջա-լերելոյ զնոսա ասէ, Թէպէտ և երիվարք ընտիրք իցեն նոցա, ըստ որում ասէք, և զօրագոյն քան զձեզ իցեն, սակայն և այնպէս դուք յաղթահարեսջիք զնոսա։ Օ կնի տալոյ ամենեցուն ժառանգութիւն, իրաւունք էին՝ նա զի և հրաման ետն՝ տալ և յեհուայ ժառանգութիւն քաղաք ընդ որ հաձեսցի. և ընտրեաց նա զթամիասաքար քաղաք գեղեցկագիւղ հայեցուածով 'ի լերինն եփրեմայ. զոր և ամրացոյց և վայելչացոյց, և 'ի նմա բնակեցաւ, և 'ի նմա վախճանեցաւ։

ԳԼՈՒԽ Լ

Եղե՛ւ ասա՛ ցերկեցեալ ՚ի վախճան հինգ՝ պայ ծաղովբրեան դարձեալ նոր ուխտադրութիւնք խոստանալ պաշտել զնի ճշմարիտ։ Լա՛ւ ինն կապարէ զհեանա երբ լի արդեամբ։

Բայց յառաջ քան զվախճան իւր ժողովեաց յեսու զամենայն ծերսն իսրայէլի, և զիշխանս նոցա, և զդպիրս և զդատաւորս առաջի խորանին վկայութե՛ ՚ի սեղալ, և խօսեցաւ առ նոսա լի ածայնի հոգւով քանզ զօրաւորս, զոր իբրև վերջին կատակ ասանդեաց նոցա։ Յուշ արար նոցա երկայն քանիւք զմեծամեծ և զբազմապատիկ բարերարութիւն, զոր արար նոցա ած, սկսեալ յառաջագոյն անտի նահապետին աբրահամու մինչև յայն վայր։ և զոր հանդիձեալ էր յաւելուլ ՚ի վերայ առաջնոց երախտեաց, եթե գնացեալ էր նոցա ուղղութե՛ սրտի յամենայն ՚ի պատուիրանս նորա։ Պատուիրեաց նոցա մեծապէս՝ կալ միալ հաստատուն ՚ի պահպանումն ամենայն գրելոց ՚ի գիրս օրինացն մովսիսի, չխոտորել անտի յայլ կամ յահեակ։ Ո գուշացոյց զնոսա ՚ի չըջակայ ժնացեալ ազգաց հեթանոսաց, չառնել ընդ նոսա խնամութե՛, կամ բարեկամութե՛, և կամ քնաւ իսկ ընտանութե՛։ զի մի մխըրեսցին ընդ նոսա ՚ի պաշտօն աստուածոց օտարաց, յոտոտանայ ղօկնութե՛ և վհատամարկութե՛ ՚ի նմա ՚ի վերայ նոցա, եթե երկնչիցին ՚ի նմանե, և պաշտիցեն զնա ուղղութե՛ և արդարութե՛։ և ընդ հակառակն՝ սպառնայ լքանել զնոսա ած ՚ի ինամոց իւրոց, և ածել ՚ի վերայ նոցա զամենայն չարիս, եթե ապստամբիցեն ՚ի նմանե։ և որպէս յարդ՝ ամենայն ինչ զոր խօսեցաւ ած՝ կատարեցաւ ՚ի վերայ նոցա, և ոչ սխալեցաւ քան մի, որպէս աջոք իսկ իւրեանց տեսին, նոյնպէս ծանիցեն և գիտասցեն, եթե և զոր այժմ խոստանայ և սպառ-

հայ, եկեսցեն հասցեն անվրէպ ՚ի վերայ նոցա ։ Այսպէս իւր ինչ ոչ խօսեցաւ Յեսու. որպէս թէ ոչ ինչ գնաւ բարւոքիս արարեալ էր նոցա. զայս և եթէ բան ասաց, եթէ ծերացեալ է և մերձեալ ՚ի վախճանել զկեանս իւր. և ապա դարձաւ վերստին յորդորել զնոսա ՚ի պաշտօն ՅՀ ։

Եւ կամեցեալ ՚ի բերանոյ նոցա առնուլ վկայութիւն, եթէ ՚ի կամս նոցա ընտրել՝ թէ զո՞ կամիցին պաշտել, զՅՀ հաւրցն իւրեանց, եթէ զաստուածս ամովհացւոցն. և ամենայն ժողովուրդն միաբան խոստացան և ուխտեցին երկիցս և երիցս՝ պաշտել զմի միայն զՅՀ ՅՀ հարցն իւրեանց, որ էհան զնոսա յերկրէն եգիպտացւոց, և ձայնի նոցա լսէր և հնազանդէր։ Այս խոստովանութիւն առեալ յեսուայ ՚ի բերանոյ նոցա, ընդդէմ ուխտի և ուխտադրութեան՝ ՚ի նոցանէ. և ասաց զնոսա, զոր պահանջէր ՅՀ ՚ի նոցանէ. և ասաց վիմայն որ ինչ կատարեցաւ ՚ի ժողովի անդ, գրեաց յեսու ՚ի գիրս մովսիսի, ըստ ոմանց՝ ՚ի կատարած գրոցն երկրորդ օրինացն։ Եւ առեալ վիմ մի մեծ յոյժ, գրեաց ՚ի վերայ զնիշատակարան այսր հանդիսաւոր ուխտադրութեանն՝ ժողովրդեանն՝ լինել միշտ հաւատարիմ առ ՅՀ. և կանգնեաց զվէմն անդ ՚ի ներքոյ բևեռինսն առաջի խորանին վկայութիւն, լինել տեսանելի ամենեցուն, որք երթային և գային ՚ի խորան անդր։ Յերթև կատարեաց յեսու զայս ամենայն, արձակեաց զժողովուրդն. և ինքն մեկուսացեալ ՚ի թամնասարքար կամ թամնասարա քաղաք ժառանգութիւնն իւրոյ, անդ մեռաւ ամաց հարիւր և տասանց, և անդ թաղեցաւ. և եղին ընդ նմա առ կիշատակի ըզսուրս քարեղէնս, որովք թլփատեաց զորդիսն իսրայէլի ՚ի գաղգաղա։

Եւ վախճանել յեսուայ՝ ելիջաւ ընդ նմա և տուն նորա. զի չէք ուրեք ՚ի սե գերս կիշատակ յաղագս հնոջ, կամ որդւոց նորա. յորմէ ունիմք ՚ի միտ առնուլ, եթէ անկին կեանս վարեաց նա զամենայն աւուրս իւր. կարի ՚ի դէպ պաշտաման

իւրոյ, չանել զբաղումն ի հոգ և ի խնամս կնոջ և որդւոց. որով կարօղ եղև անարգել նուիրել զանձն գլխովին ի ծառայութիւն ՚ի, և զամենայն խորհուրդս մտաց և գործարութեան սրտին ի բարին հաստարակաց. Վաղուց էր և համքոյր բարուք, և մարդասէր, բայց առ ի հնազանդիլ ՚ի, և ծառայել հաստարակաց օգտութեանց, յանձն առ առաջի ամենայն ազգաց օտարաց իբր խիստ և անողորմ երևել: Յամենայն պատերազմունս իւր ոչ եղոյց գութ և կարեկցութիւն. քանզի և ինքն թագաւորս զբռամբ ածեալ, զձագ նոցա փոխանակեաց ընդ անարգ փայտի՝ զորմէ կախեաց գնոսա. բայց զայն ոչ գործեր սիրան, այլ ձեռքն սպասաւոր արգար գատաստանաց ՚ին ՚ի: Ինչ անկասկած և աներկիւղ մարտեաւ. վասն զի միշտ բազկակից իւր ունէր զՅՀ: ՅՀ երբեք ամբարձաւ սիրտ նորա ՚ի վերայ իւրոյ յաղթութեանց, քանզի միշտ ծանեաւ զձեռն ամենազօր, որ տայր զյաղթութիւնն ՚ի ձեռս նորա. մեծ վարկաւ գլխնել հաւատարիմ պաշտօնեայ ՚ի՝ քան զՀրամանատար իշխանութիւնն ՚ի վերայ անհամար ժողովրդեան: Յամենայն ժամանակս առաջնորդութեանէ իւրոյ՝ չարար երբեք նոր օրէնս ինչ, շատ համարեալ անձին լինել գործադրիչ և պահապան օրինացն առաջնոց: Պահեաց անվրէպ զամենայն պատուիրեալսն ՚ի մովսիսէ. և չէղև երբեք լսել ՚ի նմանէ, «Ա՛յսպէս կամիմ, այսպէս հրամայեմ». այլ՝ սովորական հրամանաւ տրութիւն նորա էր, «Ա՛յսպէս պատուիրեաց մովսէս. այսպէս կամի ՚ած»: Ա՛յսպիսի խոնարհ, բայց միանգամայն և արիական ոգւով եղև յահ և յերկիւղ թշնամեաց. և հայրագութ առաջնորդութիւնէ սիրելի ժողովրդեան իւրոյ, այնչափ՝ զի ոչ ընթեռնումք, թէ յապառնաւ ժողովրդենէ անմի անսաստեալ լցեն ոք ընդդէմ նորա, կամ ՚ի պատուիրանաց ՚ին ՚ի հեռանալ յաւուրս նորա:

Ձի յայտ ՚ի ՚ի՞նչ գրոյ, թէ յեսու յետ անցանելոյ զյորդանան՝ ՚ի՞րչափ կեցեալ լցեն. վասն այնորիկ ոմանք երկարէն զկեանս նորա, և ոմանք համա-

ասեն. յայսմ գրեթէ ամենեքեան միաբան էն, համ գէթ բազումք, թէ պատերազմ նորա ձգեցաւ ընդ ամս եօթն. որպէս ցուցաք ի վեր անդր. այլ ինդիր է, թէ յետ այնորիկ քանի՞ ամս ապրեցաւ խաղաղութիւն, մինչև վճարեցան նախադրեալ բաժանմունք երկրին քանանացւոց։ Այլ գիրքս զայս հանգուցանելոց ենն զնոսբայէլ յամենայն ընչաւառաց նոցա շուրջանակի, և յետս ծերացեալ։ յեսու էֆ. 1։ Արդ՝ ցաւրբան բաղմա հանգուտեան յետ եօթնամեան պատերազմին՝ ոմանք դնեն լինել ամն 23. ոմանք 20. այլք 10. և հուսկ ուրեմն ոմանք ի վերջնոցս 3. կամ 4. ամն, բաւական համարեցաւ առ կատարումն բաժանման երկրին զայնչափ միջոց ժամանակի։ Այսու՝ զի ասեն, ոչ գտաւ նեմք թէ զկնի եօթն ամաց պատերազմի՝ առ կենդանութիւն յեսուայ՝ որդիքն իսրայէլի արարեալ ի ցեն պատերազմ, կամ ստացեալ նոր երկիր։ Արկրորդ՝ գտանեմք ասեն, զի յեղն դանայ գոլով ի նեղ անձուկս լերանց ի վիճակի իւրում, ոչ ընդարձակեաց զսահմանս ժառանգութիւն իւրոյ, եթէ ոչ զկնի մահուանն յեսուայ։ Երրորդ՝ զի քաղիբ յետ մահուան յեսուայ կալաւ զքերբրոն. և չէ հաւանելի, թէ նա արդէն այր ծերացեալ ուիթաստն և հինդ ամաց՝ այլ եւս ամն բազումս յամեցուցեալ իցէ առնուլ զերկիրն զայն, զոր այնչափ անձկաձանձրեաց։ Այն որոյ տեսեալ յետին մեկնիչացս, թէ ընդ երիս ամն մարթ էր առնել զայն ամենայն, որ արարաւ ի խնդրելոյ անտի քաղիբայ զբերբրոն մինչև ցմահն յեսուայ, կարի հաւանելի և սքր գրոյ համաձայն վարկանին, թէ յեսու զկնի եօթնամեան պատերազմի ոչ ապրեցաւ աւելի քան զամս երիս կամ չորս։

Ասի առ նախանշանակեալ քան գրոյն տան պատասխանի, թէ նաև երեք կամ չորք ամք հանգուտեան կարեն ասիլ առ բաղմա. որով հետև ի նախընթաց ամին հանապազ ի պատերազմի էին առանց տալոյ գէթ դոյզն ժամանակ հանգըս-

տեան. օրինակ լինի, եթէ իցեմք ասեն սովորեալ զօր ամենայն տեսանել՝ի ծովու նաւարտակս, և ասա՝ եթէ ընդ ամիսս հինգ կամ վեց ոչ երևեսցին, ասեմք, աւուրք բազումք են՝ զի ոչ երևեցան։ Սակայն ասեն՝ եթէ կամեսցի ոք այլևս ամն ինչ յաւելուլ, շատ է թէ արասցէ զայն համեմատու-թիւն ամաց անիշխանութեանն, յորժամ առաջնորդու-թիւնն էր՝ի ձեռս ծերակուտին կամ ցեղապետաց. այսպէս զի ժամանակ առաջնորդութեանն յեսուայ, և ժամանակ իշխանութեանն ծերակուտին ընդ ամե-նայն մի անցանիցեն քան զամն քսան և չորս. քան-զի և ժամանակ անիշխանութենն չիք ուրոյն նշա-նակեալ՝ի սէք գիրս. զորմէ լիցի բան և՝ի սկիզբն յաջորդ պատմութեանդ Դատաւորաց։

Վ. Ր. Խ Ա Ր. Ն

ԱՒԱՋԻՆ ՀԱՏԱՐԱՑ

ՅԱՆԿ ԳԼՈՒԽՈՑ

Ա. ՀԱՏՈՐՈՑ.

ԳԻՐՔ Ա.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԿՆՆԴՈՑ

էրես.

Ա. Ի սկզբանէ արարչագործեալ աշխարհի. 1.

Բ. Ի ծագումն արեգական. եւ ի մայրամուտն նորա՛ է դրախտն: Ընդունդ հայելն եւ հարեալ: Պատուհանք հայելոյն. եւ մահ նորա. 7.

Գ. Ընդունդ Աբելայ եւ այլոց նահատակեալ ինելո՛ է Կայէ: Պատուհէր այ առ նոյ շինել տապան վասն ջրհեղեղին. 14.

Դ. Ջրհեղեղ. 19.

Ե. Աբր. Ընդ Աբիմաւար. Կայնան. եւ Ասղայ. 25.

Զ. Ի ծաղանումն մարդկան: Ընդարձակութիւնն. եւ տերպետութիւնն նեբրովթայ. 30.

Է. Ընդունդ Աբրահամոյ. 35.

Ը. Աբրահամ երթայ յերկիրն Քանանացւոց. եւ դարձ եղէօրդւոյն նորա ընդ նմա: Ասպա դարձ ինչ՛ է նմանէ. եւ գնայ բնակի՛ է ատդոմ: Որ վարէ՛ է գերբռնի՛, եւ աբրահամ ազատէ զնա. 42.

Թ. Աբրահամ առնու երկիրդէն կին ազգաւ ազականէն ասրբայի, ծնանի՛ է նմանէ զհամայել: Հետապնդաւ աճապա՛ նմա սրդի՛ եւ՛ ասրայէ որ ամուլ էր: Հերբելէ զհամայել զերկիրն հրեշտակն: Որդոյ եւ գոմոր եւ այլ երեք քաղաք երկնաւորեալ հրով էորնէն. 48.

ԺԹ. Ծնունդ եսահակայ։ Աբրահամ՝ է քսան հնգե՛ է
ամենե երկրի ղեսայել ընդ ափթաս տօր երոյ։ Ա-
պուցանե ղեսահակ պապարտ բեառն. այլ պահեցի
նորա լցուցանե երոյ պապարտեալ՝ է ղերկին անդ՝ է
բեառնե։ 56։

ԺԱ. Ա՞ահ սաբրայե՝ Աֆռատուրե՞ եսահակայ ընդ ռե-
բեկայ։ Աբրահամ ըստ ասծայնի ապրեցուրե՞ առնու
կին ղքեառնրա։ Ա՞ահ աբրահամ. 62։

ԺԲ. Ա՞ղբեկա ծնանի երկուրեակս ղեսաւ և ղյակոբ.
եսաւ վաճառե գանդրանիութիւնն յակոբայ, զոր յակոբ
երապուտ տօրն հանճարեցե հնարե՞ պայ եսահակայ
հապապարել՝ է վերայ երա օրհնութիւնե՞ անդրանիութիւնն։ 68։

ԺԳ. Յակոբ երբայ՝ է ղիմգեբա պարբոդ աա լաբան
տօրեղբայր երա։ Աընդ առնու երա՝ է ղիութիւնե՞ աչեա
և գապարել զդպերբս լաբանա, և ղերկու ասծիղպա
նոցա. որ ծնան նմա անդ ղեպասան որդիս, և
դուսար ղի. 73։

ԺԴ. Յակոբ դառնայ՝ է գանան։ Աընդ որ անցին ընդ
նա զճանապարհին ընդ եսաւայ եղբօր երոյ։ Գօ-
պեմարպութիւնե նորա ընդ հրե գապին. 81։

ԺԵ. Ա՞ահ եսահակայ. բառնաբարութիւ՞ ղինայի դպեր
յակոբայ. հոգորաթ սիկիմացոց։ Ա՞ահ ասաբելայ. 86։

ԺԶ. Յովսէփ վաճառե յեգիպտոս։ Ա-
սր և ծնունդ ափթսե և զարայի որդուց յոգոյ
՝է ևամարայ։ Գէսաղես անդ՝ որ անցին ընդ յովսէփ
՝է գան պէպափբեայ. 91։

ԺԷ. Յովսէփ ելանե՝ է բանպե. ղինե պերազս ֆարա-
ոնե. հացուցանի՝ է փարաոնե ղոհաբարայ՝ է վերայ
համօբզե եգիպտոսե։ Աընբաբե պարձե վաճե եօվնա-
գնան սովոտե։ Գաճ պասնեգին եղբարբ՝ նորա աա նա
վաճ ղորձնոյ, և յովսէփ օպարանայ՝ է նոցանե. 98։

ԺԸ. Գաբչեալ առաքե յակոբ զորդիս երբ յեգիպտո-
աա յովսէփ վաճ ղորձնոյ. ընդ որս ակամայ էմօտ
արչակե և պերնեհաղն։ Աչա անգամ յայսգնե յովսէփ
պաճչ եղբարբ երոյ. և հրամանե պայ ածել ընդ-
հայրն հանդերձ ամենայն ընտանեօտ և ապացուածովք
երբեանց. 105։

ԺԹ. Յակոբ ելանե յեգիպտոս։ Ի վերջին ծերութիւնե

էրուսաղէմ օրհնեալ ընդ ամենայն աշխարհս, եւ
ընդ ամենայն ազգս հաւատացելոց անուանդ քո
սուրբ, նահատակելոց մարտիրոսաբար ընդ
քեզ ի քրիստոնէութեան. 112։

Ժ. Յակոբ հասեալ չէր դիտել՝ թէ ոչ ընդ մարգա-
րէական օրհնութեանդ որդւոց էրուդ։ Եւ պատուիրէր
նաեւ ընդ մահուամբն իւր ի վերայ յերկրին
խոնարհացուդ։ 119։

ԺԱ. Յովսէփ ընդ հրեշտակն գոյակ պանդխտեցաւ յա-
նապատ հօր իւրոյ յերկրէն խոնարհացուդ, եւ նաեւ
յայրէն դիմեաց։ Այսպիսեացդ ընդ ամենայն
ընտանիս հաւատաց ինչ դիմեալ ի նմանէ։ Ոչ այլ հրամայ
վասն ոսկերաց իւրոյ. միայն արբունիք։ 124։

ԺԲ. Ազգածին գծագրութենէն որ ի խոնարհութիւդ վե-
ցերորդ գլխոյ ծննդոց ընդ առաջ ելանէ ի վերայ
նորոյ անչանց՝ որ ընդ յակոբայ մտին յեգիպտոս. 128։

ԳԻՐՔ. Բ.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԵԼԻՑ.

ՃԻ. Ծնունդ Մովսէսի, եւ անունդ նորա եւ գաւակու-
թեանն յարմարութիւն գեղեցկացոյց ար-
տայէ. 132։

ՃԲ. Մովսէս գխլէն յերկրէ մարդեանց։ Ընդ գե-
ամայնոյ չրվին կամ երկանութեանցոյ։ Երկու
նմա հրեշտակ ասի ի վերոյ բոցապատ մորենւոյ. և
առաջէ գնա հանել ըստգնա երայելի ի ծառայու-
թենէ եգիպտացւոց. 140։

ՃԳ. Տանեակ հարցմունք աջնելոյ յայ ի յեհան մովսէսի
և ահարեկ ի վերայ եգիպտացւոց վասն խոստաստ-
ութեանն գործանեն արտայն նորա. 146։

ՃԴ. Ժամանակ ամոյ պանդխտութենէ որդւոցն իսրայելի
յեգիպտոս. 159։

ՃԵ. Երկ որդւոցն իսրայելի յեգիպտոսէ։ Ընդ ոչ նոցա
ընդ ծովէն կարմիր. և ծովահեղեղոյն հրամա գործ-
ութեան և զօրաց նորա. 172։

ՃԶ. Մովսէս ընդ երկար գայրէ հաղորդութեանէ զգաստ-
չար ի վերայ։ Ընդ ընտրեալ պայ ծողո-

վըբրբեան իւրաքանչիւր հայ հրաշալեան ջանանայ։
Ա՝ովսէս հրաշափորձ գաւազանաւն ջուր յորդառատ
եղեռնօրացանէ յաղագաւ վէմն։ Լ՚ամպեկ ելեալ մար-
գիս ընդդէմ իսրայէլի՝ իւրաքանչիւր բեղկապարած աղը-
ւէսոկ մովսէսի։ Հոլոր անէր մովսէսի գայ առ նա
ածելով ընդ իւր ղէնին մովսէսի և ղերկու որդիս նո-
րա։ Ա՝ովսէս ըսա խրատու աներոյ իւրոյ հեգու-
ցանէ պաղատնեայս օգնականս անչին ՚ի պնդեսուէնն
ծողովրդեան։

177։ Հ. Ա՝ովսէս կացեալ ՚ի գլուխ լերին սինայ ընդ այ,
առնու ղերկու ասծափեծ պանդակս փաթղէնս պա-
նաբանեայ պատուիրանաց։ Հիլանել նորա ՚ի լճանէ՝
պեսել զծողովուրդն պաղրել զրրին յուլծոյ,
խորտակէ պաղպաղանս։ Լ՚ա պայ կոտորել ՚ի բանակէ
անդ երեք հազար ոգիս ՚ի յորելասպազրեց անտի։ 185։

Ը. Ա՝ովսէս արտասոյ բանակին հարկանէ պլուրանն
վէմսյուէ։ Կոգէ երկուս պանդակս փաթղէնս. և
՚ի վերային ելանել ՚ի լճառն սինայ՝ գրել ասծ ՚ի նոսա
զնոյն պատանաբանեայ պատգամս։ Ցեանէ մովսէս
զբառան այ. յորմէ երեսս նորա լուսաւորին։ 195։

Թ. Պորաձերսուէ պապանակին. Ելեանոյ հայնն ա
ռաջնորդուէ. Հաւէյոյլ աղրանակին. Ելեանոյ
բնդեղ. Ելեանոյ ոդևակիլայ. Լյորսնին վէմսյուէ,
և ամենայն հաւիղ և իւրաքանչ նորա։ 199։

Ժ. Պորաձերսուէ պէսպէս դահանայական գգեստուց։ 207։

ԳԻՐՔ Գ.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԴԵՒՏԱԿԱՆԻՆ։

ա. Պատուէր վասն պէսպէս ողջակիզացն, և ապրէ
ապրի գոհիլ և պատարագել. և ճարտ և կանոն ըս-
պասման նոցա ՚ի չեան դահանայիցդ որդւոցն ղևսեայ։ 214։

բ. Լ՚ահարան պղնի դահանայանալոյ մատուցանել պատա-
ղին պղծ վասն իւր, և վասն ծողովրդեան։ Հնուր
հրաշալեան ծախէ պնոսա։ Լյաբար և աբեղուր որդիք
ահարանի հրահրելոյդ ղեռասին։ Պապարի առաջին
պարիցն յանապատ անդ սինայ լերին։ 221։

ԵՒ. Ա՝ովսէս ըսա հրամանէ գան առնել խորանս ՚ի վրչ
ամենայն անասունս երկրապանեաց և ի ծովուց և ՚ի ձկանց՝
զոմանս սէս ի ծովէրովն, ուսորի և ուսրելի. խոկ զոմանս
անսէս, վասն որոյ չոտրելի. 228։
ԵԳ. Օրէնս յաղագս արբունեաց և պղծաւորելոյն մարդ-
կան. և այլ օրէնս վասն բորոտութեաց մարդկան. 233։
ԵԴ. Օրէնս վասն բորոտութեան հանդերձից և տանց. 239։
ԵԶ. Օրէնս վասն ծնելոյ Ա՝ապէն. Պենտեկոստէն.
և Տաղաւարահարսն. 245։
ԵԷ. Օրէնս վասն ծնելոյ Ա՝ատուածեան։ 251։

ԳԻՐՔ Գ.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԹՈՒՈՑ.

Ա. Խանդեաց, ևմ ընդ հասարոյ երկրապասան ցեղիդ
որդւոցն իսրայէլ ՚ի չանապհունդն և ՚ի վեր։ Ա՝ա-
ռաջնոյն համար որդւոյ ղևեայ արտաչոյ հանդիսի
համարոյ այլոց երկրապասան ցեղից. 258։
Բ. Խանդեաց անդրանկաց ամենայն արուս համօրէն ցե-
ղից, ընդ որս և ցեղին ղևեայ։ Ա՝ովսէս որոշէ
զնոսիկ և զգործ ղևապաշտոյ. արբեն զնոսա և զոտիրեր
՚ի պաշտօն խորանին։ Իշխանք ամենայն ցեղից ըն-
ծայասբեր լինին գան։ 265։
Գ. Ա՝յսուհետև որդւոցն իսրայէլ ՚ի սինեաքան լեռնէն ա-
ռաջնորդութեամբ սեան ամպոյն։ Տրոտունջ նոցա, և
պատիժ։ Ա՝ովսէս զոհ հրամանին ա՝յ կացուցանէ
եօթանասնոցն դատաւորս օգնականս անձին։ Ա՝ա-
րեամ չոյր մովսէսի պատճէ բորոտութեամբ վասն բամ-
բասելոյ զնեղբայրն իւր զմովսէս. 274։
Զ. Ա՝ռաջի մովսէս չանապատին գատանս ձիր լրտես
լրտեսել զերկիրն սեսեսոյ։ Ծողովուրդն ահաբե-
կեալ ՚ի լսելոյ լրոյ պատմոյ լրտեսացն՝ հեսպին
հրամանի գան. վասն որոյ և դատապարտին ՚ի գանգ ան-
նէրեին՝ որպ ՚ի չսանապհունդն և ՚ի վեր եղեն չեգեպտո-
սէ, ուր կոսեալ չերկիրն սեսեսոյ. 282։
Է. Վարձիոճ լինի այրն՝ որ չասուր զաղբեսու չաղերը
գայս։ Կորն և դարան և սբերան գեղանասոյզ

ներկնէին: Ձառէին գառապանն ահաբեկ ի հասա-
պատումէ ընդբռնելոյ նորա ի դահանապետէն առ յայ. 292
Ձ. Ա՛րեաւ դոյր մովսէսի վանճանել: Ա՛ովսէս և
ամբարն վասն երկմտելոյ ի հաւատս ևս էլ հաստա-
նել յաղագաւ վիմի՝ ուր մահճանեն պահպանեցաւ յեր-
կիրն աստեղաց: Ա՛բրայն երդուվաւ ուր պայ անցս
որդւոց իսրայէլ ընդ երկիր երթ: Ա՛հարոն վանճա-
նի ի հովիւ լերին. 299
Հ. Ա՛ովսէս ըսա հրամանին ան հանգնէ ի վերայ յոդղ
օձ պղնձի, յոր հայեցեալ հաւելոյն ի յօշից ղերս
առաւելաց ար ի պարթևք արքունի, բժշկին ի հար-
ուածոցն: Ա՛երդին իսրայէլ հարկանեն զարձեալ ա-
բաթայ, և զսենեան արձայ եաբոնաց, և զվէմ ար-
ձայ բաանոս. և տերեն երկիր նոցա. 305
Ը. Ի՛աղակ արձայ մովաբացոց էուէն զբաղամ անիծա-
նել զիսրայէլ: Ի՛սկ նա փոխանակ անիծանելոյ օրհնէ
ակամայ կամօք. բայց խրատէ և զբաղակ՝ փակ պատ-
ճառս իսրայէլի պատնէշումբէ և իւռապաղատումբէ:
Ա՛ման այնր մեղայ էոորբէն յիսրայէլ չուան և էորձ
հապարձ. 311
Թ. Պատուիրէ ամ մովսէսի ընկնել վմարիանայիս:
Ա՛ովսէս երրորդ անգամ հանդէս առնի զողովրդե-
դեան: Ի՛ածանէ ի նոսա վէճակաւ զերկիրն՝ զոր
հանդերձեալ էին ժառանգել: Պատերբ աւլպատ-
պու ըսա նոր հրամանի ան տպանեն ի ժառանգումբէ
հօր իւրեանց. 320
Ժ. Ա՛ովսէս ի վերջինալ վանճանի իւրոյ, ըսա հրա-
մանի ան էացուցանէ ի պեղի իւր առաջնորդ ժողո-
վըրդեան զյեսու: Տայ սպառազգաւս էոորել վմա-
րիանայիս: Ա՛ռանս հանդեր աւարբին զոր աւարեցին
ի նոցանէ. 325

ԳԻՐՔ· Ե·

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ:

ՃԱ. Ա՛ովսէս հասեալ ի վանճանի կենաց իւրոյ՝ պահե-
նայն օրէնս և պպատուիրանս ան, զոր ընդ ժամա-

նախ քահանայ աստուածոյ, երէցորդէ ի լոր ամենայն քաղաքացեան: Ապա այնորիկ այլ հին երէցորդ գիր նորա հուշեցուս Երէցորդուս օրինաց, կամ Երէցորդ օրէնք. 334:

ՔԱ. Ճարտասանութիւնք բանից մովսէսի ի խրատ և ի պատուիրանս որդուոյն իսրայէլի՝ հանդերձ պէտից օրինադրութեամբ. 341:

ՔԲ. Պարզեալ մատանաւոր խրատ, և օրէնք պէտից. 348:

ՔԳ. Զի օրինաւորութիւն ի վերայ օրինապահից, և անէծից ի վերայ անօրինելոցն: 357:

ՔԴ. Խոտ մովսէսի առ քաղաքացիսն հմայելն, և առ չափանայսն ոտրոյն. և երգ օրհնութեան մարգարէական: 363:

ՔԵ. Ալ երկին կամ մովսէսի առն այ առ որդիսն իսրայէլի ըստ ցեղից ցեղից, և գոհանալ ի նմանէ. 371:

ՅԱՒԵԼՈՒԱԾ:

Ի. Տեսութիւն պատմութեան Յովսէի արգարոյ, առ քահանայս մովսէսի. 378:

ԳԻՐՔ. Ը.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՅԵՍՈՒԱՅ ՈՐԴՒՈՅ ՆԱՒԻԵԱՅ:

Ա. Քաղաքացիսն իսրայէլի առաջնորդութիւն յեսուայ անցանել ընդ յորդանան: Լրտեսք յեսուայ առաքելոցք պէրիով: Պատրաստ պահպանին ընկալուցս որ ի նմա, և պատասխանի և որ ինչ ի նմա՝ այրք հրովք: Հաստատ հետ ասրեցուցանի վասն պահելոյ նորա պէրիով: Անցանել յորդանանայ ընդ առաջ պատրաստեալ ընդ ամենայն զինեալս պէրիով. 388:

ԲԱ. Ընդ կնքելոյ պէրիով, առաքէ յեսուա գտանել զերկոսին լրտեսսն ի վերայ գայեայ: Պատասխանի վանիցն ընտա վասն գաղտնի գողութեանն ի նորովիկ իրաց երէրովի: Յեսուա ըստ առաջնորդելոյ ամենայն ժողովրդեանն ի վերայ յորդանանայ

[135n.]

440
գոհանէ զՔեզնն. և պայ չարիճ առնել զնա և զըր-
դիս նորա, և զսուտ և զամէնայն ապացուածս նո-
ցա հրով այրել: Եւ ապա դեսանգամ ելեալ՝ ի վե-
րայ գայեակ՝ հոտորէն զամէնայն էնակիէս նորա. և
զպաղատն այրէն հրով. 397:
Ը. Յետու պարբեալ՝ ի գաբաոնացոց՝ ուխտ խաղա-
ղուելոյ ընդ նոսա, և երթեալ զնոսա՝ ի ծառայ-
ութիւն խոռանին. 404:
Ը. Յետու խորտակէ զինեգ լեգեառս գոմարելա
՝ի վերայ գաբաոնացոց: Տայ ահանէլեօ զէնայ
առնուլ արեգական և լուսնի յընկառոյց երբանց,
զինչև՝ ի գլուխ հանցէ զյաղթութիւնն՝ ի վերայ ընդա-
ձայ գին. 409:
Ը. Յետու հոտորէ զյաբէն արտայ ասուրայ, և զայլ
ամենայն լեգեառս զմաբանելս ընդ նմա: 416:
Ի. Յետու հանգեալ առնու՝ ի պարերայմայ: Բա-
ժանէ զերկիրն զանանացոց՝ ի փոն ցեղս որդոցն
իսրայէլի. 420:
Ի. Յետու վերչերեալ՝ ի վախճան կենաց՝ պայ ծողովել
զեան զարչեալ նոր ուխտադրութենէն խոսպանալ
պաշտել զմի զհայն աջն ճշմարիտ: Եւ ինչն կապա-
րէ զչեանս իւր լե արդեամբ. 428:

9Ц Фибр 8Р
135-00
22-05-88
21602/888
"Айпирк"
АУКЦИОН
№ 10
6